

Ուղերձների ութերորդ շրջան (մարտ – հուլիս, 2008 թ.)

* * *

Ճատ մարդիկ խնդրանքով դիմում են ինձ, որպեսզի իմ գնահատականը տամ այս կամ այն հոգևոր ուսուցչին կամ դաստիարակին. կամ էլ խնդրում են դիմել Վեհապետներին, որպեսզի նրանք տան իրենց մեկնաբանությունը: Սակայն Վեհապետները չեն քաջալերում ինձ, երբ ես նրանցից գնահատական կամ տեղեկություն եմ խնդրում այս կամ այն հոգևոր առաջնորդի վերաբերյալ:

Նրանք ասում են, որ իմ խնդիրն ընդամենն իմ միջոցով տրվող Ուսմունքը որքան հնարավոր է մաքուր տեղ հասցնել է:

Այնուհանդերձ այսօր, ներխուժման ժամանակ, երբ ես հրապարակված հարցերով դիմեցի իմ Ուսուցիչ Սանատ Կումարային, Նա անսպասելի կերպով Ուղերձ տվեց, որը և ներկայացնում եմ ստորև:

Տաղյանա Միկուշինա
Լույս և Մեր

Սանատ Կումարա
13 մարտի, 2008 թ.

Ձեզ հետաքրքրող որոշ հարցերի պատասխանները

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը... Եկել եմ, որպեսզի ձեզ համար պարզաբանեմ որոշ հարցեր, որոնք վերաբերում են դեսպանորդությանն ու ուրիշ մարդկանց հետ դեսպանորդի ունեցած փոխհարաբերություններին, ներկայի ու անցյալի հոգևոր ու կրոնական այս կամ այն գործչի հետ նրա հարաբերությանը:

Յուրաքանչյուր դեսպանորդ որոշակի առաքելություն ունի: Այդ առաքելությամբ է նա աշխարհ գալիս և նախապատրաստվում է այդ առաքելությանը հարյուրավոր տարիների ընթացքում:

Եվ ահա, երբ մեր ներկայացուցիչը մարմնավորվում է և սկսում իր աշխատանքը, այդ պահին ծագում են այլազան հարցեր, թե ինչպես է մեր տված Ուսմունքը համակցվում այն ամենի հետ, ինչը տրվում է այլ մարդկանց միջոցով: Յուրաքանչյուր դեսպանորդ միայն իր առաքելության տերն է: Եվ նրա խնդիրը չէ մեկնություններ տալ այն ուրիշ ուսմունքների դրույթների վերաբերյալ, որոնք ֆիզիկական աշխարհ են մուտք գործում ուրիշ մարդկանց միջոցով:

Իմացեք, որ ձեր աշխարհը կարմայական աշխարհ է: Դա նշանակում է, որ ձեր աշխարհում լույսն ու ճշմարտությունը միախառնված են ոչ ճշմարտացի պատկերացումների հետ: Ձեր աշխարհում ամեն ինչ հարաբերական է: Եվ ոչ ոք համարձակություն չի կարող ունենալ պնդելու, թե ներկայի կամ անցյալի մեր որևէ ներկայացուցիչ լիովին տիրապետում է կամ տիրապետել է Աստծո ամբողջ ճշմարտությանը:

Իմացեք նաև, որ միևնույն ճշմարտությունը տարբեր ժամանակներում տրվում է մարմնավորման մեջ գտնվող մարդկանց տարբեր կատեգորիաների համար, և ամեն անգամ՝ մի փոքր տարբեր բեկվածքով:

Եթե համարում եք, որ մենք պետք է մեկնություններ տանք ուսմունքի այն դրույթների վերաբերյալ, որոնք տրվել են այլ մարդկանց միջոցով, ապա սխալվում եք: Այն պարզ պատճառով, որ պետք է ապրել «այստեղ և հիմա» սկզբունքով և իրագործել այն առաքելությունը, որի համար մարմնավորվել եք, այլ ոչ թե ժամանակ վատնել անվերջ վեճերի շուրջ, թե ով է ճիշտ կամ սխալ եղել հարյուր, երկու հարյուր և ավելի տարիներ առաջ:

Դուք կարող եք հետազոտել և իրար հետ համադրել անցյալի ու ներկայի տարբեր ուսմունքների դրույթները: Սակայն ճշմարիտը կլինի այն, որ իրականացնեք ձեր աստվածային առաքելությունը. իսկ դրա համար մշտապես պետք է բարձրագույն աշխարհների հետ համալարվածություն պահպանեք:

Հենց որ կանգնում եք դատապարտելու և գնահատականներ տալու ուղու վրա, իջեցնում եք ձեր թրթռանքները: Աստվածային մակարդակից իջնում եք մարմնական խելքի մակարդակին: Եվ արդեն չեք տեսնում ու չեք զանազանում Աստծո ճշմարտությունը, քանզի այն հենց ձեր գիտակցության մակարդակն է՝ Բարձրագույն Իրականության հետ ձեր համահնչունության աստիճանը:

Ես կցանկանայի շոշափել նաև այն հարցը, որը վերաբերում է մեր Հիերարխիային և այն պաշտոններին, որոնք Հիերարխիայում զբաղեցնում են ձեզ հայտնի Վեհապետները:

Այո՛, մենք ժամանակին որոշակի պատկերացում տվել ենք, թե ինչպես է կառուցված մեր Հիերարխիան: Սակայն այդ պատկերացումը ևս տրվել է ձեր գիտակցության այն մակարդակի

համար, որը համապատասխանում էր զարգացման որոշակի փուլի: Իմացե՛ք և փորձե՛ք հասկանալ, որ մեր աշխարհը չի կարող ճշգրիտ կերպով համապատասխանել ձեր աշխարհին, և մի՛ փորձե՛ք ձեր աշխարհում գոյություն ունեցող կառույցները վերագրել մեր աշխարհին:

Փորձելով հասկանալ մեր աշխարհակառույցը՝ երբեք մի՛ ջանացե՛ք ընդհանուր տպավորություն կազմել մեր աշխարհի մասին: Այն մարդիկ, ովքեր անցում են կատարում մեր աշխարհ, հայտնվում են մեր աշխատակիցների հոգատար ձեռքերում: Եվ, հավատացե՛ք ինձ, նրանք երբևէ չեն մտածում այն մասին, թե մեզնից ով ինչ պաշտոն է զբաղեցնում Հիերարխիայի կազմում: Նրանք պարզապես ըմբռնվում են մեզնից ճառագավոր Լույսը և իրենց երջանիկ են զգում, որ հայտնվել են մի վայրում, ուր Սիրո, հոգածության ու խնամքի պակաս չեն զգում: Իրենց երկրային կյանքի ամեն մի դրվագը հաճում է նրանց առաջ նոր լույսով: Բոլորդ դասեր եք առնում ձեր սխալներից:

Եթե իրենց ողջ հրաշափառությամբ հանդերձ Համբարձյալ Վեհապետները ստիպված լինեին մարմնավորվել և ապրել այն պայմաններում, որոնք այժմ գոյություն ունեն Երկրի վրա, ապա դուք երբեք չէիք հավատա, որ ձեր առջև Համբարձյալ Վեհապետներն են: Արդ, Երկրի վրա Համբարձյալ Վեհապետների մարմնավորվելու ժամանակը դեռ չի հասել:

Սակայն մեզնից շատերն իրենց ներկայությունը պահպանում են այն անհատների մեջ, որոնք շատ հարյուրամյակների ու հազարամյակների ընթացքում մեր աշակերտներն են եղել:

Արդ, մենք չենք կարող ասել, թե այս կամ այն անհատականությունը լրիվ կամ թեկուզ մասնակիորեն ներկա է որևէ մարմնավորված մարդու ներսում, քանի որ Ուսուցչի ներկայությունը ժամանակավոր երևույթ է և կախված է լինում ինչպես աշակերտի մարմինների մաքրությունից, այնպես էլ նրան շրջապատող իրադրությունից:

Երբ մեզ համար հնարավոր է լինում, մենք ներկա ենք գտնվում Երկրի վրա և իրավիճակին ծանոթանում ենք մեր աշակերտների աչքերով:

Բոլոր մեխանիկներն ու դեսպանորդներն իրենց ներսում ունեցել են բարձրագույն անհատականության ներկայություն: Եվ նրանց առաքելության ընթացքում փոխվել է ինչպես այդ ներկայության աստիճանը, այնպես էլ հենց ինքը՝ անհատականությունը: Ուստի սխալ կլինի խոսել այս կամ այն մարդու մարմնում ձեզ հայտնի այս կամ այն Վեհապետի մարմնավորման մասին: Կարելի է խոսել միայն բարձրագույն անհատականության մասնակցության և նրա ներկայության որոշակի աստիճանի մասին:

Ձեզ ոչ անհայտ Վեհապետները, որոնց անունները գիտեք և հաճախ արտաբերում եք, իրականում երբեմն ձեր իմացածից բոլորովին տարբեր անուն են կրում:

Մենք կարող ենք ձեզ շատ երկար պատմել մեր աշխարհակառույցի մասին, և դուք կձգտեք հայացք նետել մեր աշխարհները բաժանող վարագույրի ճեղքից, բայց, միևնույնն է, անտեղի ժամանակ կվատնեք: Չի հարկ է, որ նախ կենտրոնանաք ձեր ընթացիկ խնդիրների վրա՝ օգտվելով այն բարոյաէթիկական խրատներից, որոնք մենք ձեզ տալիս ենք:

Այսօր ես մի փոքր խստությամբ խոսեցի, և ձեզնից նրանք, ովքեր իրենց հարցերի կոնկրետ պատասխանն էին ակնկալում, հնարավոր է՝ ոչինչ չստացան: Սակայն ես փորձեցի խոսել ձեր բարձրագույն մասի հետ և տալ այն խրատները, որոնցով կկարողանաք ձեր կյանքում պահպանել ճշմարիտ կողմնորոշիչներ:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՍ

Սանատ Կումարա
5 հունիսի, 2008 թ.

Լուր ընթացիկ իրադրության մասին

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Ձեր նկրտումների կողմնացույցը ճշգրտելու ժամը հասել է: Ժամանակն է ի մի բերելու, թե ինչ է արված:

Մենք ձեր կողքին էինք, բայց ուշադրությամբ դիտում ու չէինք միջամտում: Այժմ կկամենայինք բերել մեր դիտողություններն ու ամփոփել ձեռք բերված միջանկյալ արդյունքը:

Հիշում եք երևի, որ այս տարվա հունվար ամսին* մենք ձեռնամուխ եղանք մեր դեսպանորդի միջոցով ի կատար ածվող գործերի նոր փուլին:

Ասել ենք նաև, որ այդ փուլը յուրահատուկ է: Այն ամենակարևորն է: Եվ ես պետք է ամենայն լրջությամբ ձեզ հավաստիացնեմ, որ մեր մտահոգումն ի կատար ածելու համար մենք դեռևս երբեք այդքան շատ ջանքեր չէինք գործադրել: Յուրաքանչյուր մարդ, ով հայտնվում է մեր հետաքրքրությունների ու գործունեության ոլորտում, կարող է իր վրա զգալ, թե որքան լուրջ է

դրված ամեն ինչը: Հնարավոր է, որ դուք ձեր ֆիզիկական զգայարաններով չեք տեսնում և չեք զգում, սակայն ներհայեցողական մակարդակով ու կողմնակի հայտանիշների հիման վրա հասկանում եք, որ մուտք եք գործել շատ լուրջ շերտուղու մեջ: Վերջին մի քանի հարյուրամյակի ընթացքում մեզ չի հաջողվել այդ փուլը հաղթահարել մինչև վերջ: Այն կապված է ֆիզիկական ոլորտում Համայնքի նմուշօրինակի կառուցման հետ:

Համայնքի կամ բնակավայրի այդ նմուշօրինակը, կախված մարդկային էվոյուցիայի տվյալ փուլի և ժամանակի տվյալ պահին Երկրի վրա ձևավորված պայմաններից, տարբեր է լինում:

Այժմ հասել է այն պահը, երբ Համայնքի ձևաչափը պետք է յուրացվի նոր, որակապես նոր գիտակցության մակարդակով՝ օգտվելով մարդկության առկա նվաճումներից:

Խնդիրը շատ բարդ է և նշանակալից ջանքեր կպահանջի ներկայումս մարմնավորման մեջ գտնվող լուսակիրներից:

Հավատացե՛ք, երբեմն ամեն ինչ կախված է լինում մի մարդուց, որը հատուկ մարմնավորված է լինում, որպեսզի կատարի որոշակի աշխատանք: Նա այդ մասին իմանում է և պատրաստակամորեն գործի է անցում: Սակայն որոշ ժամանակ անցնելուց հետո նրա նախնական մղումը սկսում է թուլանալ:

Մարդկային բնույթի պատճառով ձեզ չի հաջողվում մշտապես պահպանել գիտակցության հնարավոր ամենաբարձր մակարդակը: Գալիս է մի պահ, երբ ձեր կեղծավոր խելքն ասում է ձեզ. «Մտածի՛ր քո մասին: Ինչու՞ ես այդքան եռանդ ծախսում այդ գործի համար: Արդյո՞ք ճշմարիտ է այն: Ժամանակը չէ՞, որ քեզ համար ապրես. չէ՞ որ կյանքը կարճատև է»:

Եվ մարդը, կասկածների մեջ ընկնելով, սկսում է մեկը մյուսի հետևից հնարավորություններ բաց թողնել: Տիեզերական ժամկետներն անցնում են, և խնդիրը մնում է չլուծված: Եվ եթե խոսքը վերաբերեր ընդամենը մի մարդու՝ ճակատագրին, կարելի կլիներ միայն դժգոհել ու ավստոսանք հայտնել կատարվածի համար: Բայց այստեղ խոսքը վերաբերում է մի ողջ ազգի և մարդկանց մի քանի սերնդի կորցրած հնարավորություններին:

Իհարկե, մենք ունենք նաև պահուստային տարրերակներ: Եվ մենք անմիջապես աշխատում ենք ընտրել դրանցից մեկը և ջանում գործի դնել ուրիշ մեկին: Սակայն որքա՛ն ծանր է լինում տեսնելը, թե ինչպես են լուսակիրները մեկը մյուսի հետևից շեղվում ուղուց, և այն գործը, որի համար իրենք մարմնավորվել էին, մեխվում է տեղում և սկսում տեղապտույտ տալ:

Մենք շատ անգամ ենք խոսել դավաճանության կարմայի մասին, բայց հաճախ, երբ մարդը դավաճանության է դիմում, ինքը չի գիտակցում դա: Նրան թվում է, ավելի ճիշտ, մարմնական խելքը նրան համոզում է, թե որևէ ահավոր բան չի լինի, եթե ինքն այդ գործով զբաղվի ավելի ուշ, երբ պատրաստ կլինի դրան: Ա՛խ, եթե գիտակցեիք, թե որքա՛ն շատ ուժեր են կենտրոնացված մի փոքրիկ հողակտորի վրա, որպեսզի կարևոր գործ առաջ տանեն, և որքա՛ն ծանր է մեզ համար տեսնելը, թե ինչպես է տոննաներով իզուր ծախսվում Աստծո էներգիան ձեր մեն մի սխալ ընտրության պատճառով...

Ծա՛տ ավստոս, որ ձեր աշխարհի այդքան թանձրության պատճառով շատ բաներ չեք գիտակցում: Մենք մեր առաքելությունները նախապատրաստում ենք մի քանի հարյուր տարվա ընթացքում: Լույսի լավագույն Որդիներին ուղարկում ենք մարմնավորվելու, որպեսզի աշխատեն ողջ մոլորակի Ընդհանուր Բարօրության համար: Եվ, ավա՛ղ, ամենապատասխանատու պահին նրանք մոռանում են իրենց պարտավորությունների մասին:

Ես եկել եմ հիշեցնելու այն կարևոր աշխատանքը, որը հենց հիմա հարկավոր է անել:

Ես եկել եմ հիշեցնելու, որ եկել է իրական գործողությունների ժամանակը:

Դուք այլևս չեք կարող անիմաստ գրույցներով զբաղվել: Դադարե՛ք քննարկել այն հարցը, թե ով է ավելի իրավացի, և թե Աստծո Ճշմարտության վերաբերյալ ում պատկերացումներն են ավելի ճշմարիտ:

Կան միանգամայն հավաստի, ժամանակի փորձություն անցած չափանիշներ, որոնցով բազում դարերով մենք աշխատում ենք Երկրի մարդկության հետ: Եթե ֆիզիկական ոլորտում դուք չեք տեսնում համատեղ գործունեության պտուղն ու արդյունքը, որով կհաստատվեր տրված Ուսմունքի ճշմարտացիությունը, ուրեմն կա՛մ ուսմունքն է սխալ, կա՛մ էլ այդ գործն անողները չեն արդարացնում Համբարձյալ Վեհապետների հույսերը: Մենք չենք հոգնում մեր գործը նորից ու նորից սկսելուց: Եվ միայն ծայրահեղ հազվագյուտ դեպքերում է մեզ հաջողվում մեր շինարարության գործը ֆիզիկական ոլորտում հասցնել ցանկալի արդյունքի:

Եվ մենք միշտ ձգտում ենք հասնել այն բանին, որ Ֆիզիկական ոլորտում ձեզ տանք մի նմուշօրինակ, որով առաջնորդվելով՝ կարողանաք բարեփոխել ձեր աշխարհն ու ձեր փոխհարաբերությունները:

Որպեսզի ձեզ օգնենք, մենք պատրաստ ենք շատ բան գոհել: Եվ եթե ձեր մեջ գտնվեին մարդիկ, որոնք իրապես պատրաստ լինեին գոհաբերության՝ մեր կողմից անխոնջ կերպով գործադրվող

ջանքերի միլիոներորդական մասին համարժեք չափով, ապա աշխարհը կզգար այն պայմանների անհամեմատ լավացումը, որոնք բնորոշ են մոլորակի կյանքի ողջ դրվածքին ու իրավիճակին:

Ուստի այլ մեղավորներ մի փնտրեք, թե ինչու են Լույսի մեր առաքելությունները մեկը մյուսի հետևից տեղապտույտ տալիս: Փոխարենը պարզապես հարց տվեք ինքներդ ձեզ. «Արդյոք ես արե՞լ եմ ամեն ինչ, որպեսզի իմ ոչ համբարձյալ վիճակից օգնեմ Համբարձյալ Դասերին»:

Դուք ի վիճակի եք մեզ օգնելու: Դուք կարող եք անել և այն, ինչը մենք չենք կարող անել: Ֆիզիկական ոլորտում կարող եք մեզ համար ձեռք ու ոտք ծառայել: Եվ ես լիահույս եմ, որ դուք ժամանակ կգտնեք, որպեսզի ձեր կյանքերին նայեք ձեզ համար հնարավոր գիտակցության ամենաբարձր վիճակի դիրքից: Եվ կձգտեք դուրս պրծնել ձեր մարմնական մտածմունքների ու զգացմունքների սարդոստայնից, որպեսզի ձեր մեջ ուժ գտնեք իրագործելու ձեր աստվածային առաքելությունը:

Մեզ անհրաժեշտ է առաջապահ դետք (ֆորպոստ) ունենալ ֆիզիկական ոլորտում:

Մեզ ընդդիմացող ուժերը շատ են: Շատերը գործիք են դառնում մեզ հակադիր ուժերի ձեռքին: Քչերն են, որ դիմանում են:

Եզակիներն են մնում հավատարիմ ու անեղծ: Նրանց սպասվում է դարավոր փառք: Իսկ ի՞նչ է սպասվում ձեզ, երբ թողնում եք ձեր սպասավորությունը և վազում ձեր աշխարհի չխկնկանների հետևից...

Պարտության ոչ մի դառնություն չի կարող համեմատվել այդքան շատ հոգիների կորստի հետ: Եվ այն բանի հետ, թե որքան շատ հոգիներ են լքում մեր Ուղին:

*ԵՄ ԵՄ Սանատ Կումարան. հույս ունեմ,
որ ձեր հոգիները կարդենանս պատրանքի քաղցր քնից*

* Տես էլ Մորիայի 2008 թ.-ի հունվարի 10-ի ուղերձը

Սանատ Կումարա
20 հունիսի, 2008 թ.

Հիշեցում պատասխանատվության մասին

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը: Այս օրով ես եկել եմ և ուրախ եմ ձեզ հայտնել, որ Կարմայական Վարչության բարեհաճության շնորհիվ կարող եմ տալ այսօրվա իմ ուղերձը: Դուք գիտեք, որ ներկայումս ընթանում է Կարմայական Վարչության նիստը: Եվ գիտեք նաև, որ նման նիստ տեղի է ունենում տարեկան երկու անգամ՝ ամառային և ձմեռային արևադարձների ընթացքում: Հավանաբար ձեզ հետաքրքրում են այդ նիստի վերջին լուրերը...

Արդ, ես եկել եմ, որ ձեզ տեղյակ պահեմ դրանց մասին: Այսօր մենք որոշում ընդունեցինք, որ մեր դեսպանորդի միջոցով տարվող աշխատանքը պետք է շարունակվի: Թեկադրությունների ձմեռային նախորդ շրջանից հետո մենք պետք է տեսնեինք, թե որքանով եք դուք պատրաստ ֆիզիկական ոլորտում մեր պլանների իրագործմանը: Մենք ուշադիր հետևում էինք տեղի ունեցող ամեն ինչին: Ցավոք, մեր պլանների ու առաջադրած խնդիրների նկատմամբ ձեր վերաբերմունքը երբեմն ողբալի տեսք էր ստանում: Մենք պատրաստ ենք ձեզ հետ համագործակցելու և տալիս ենք մեր ցուցումներն ու հանձնարարականները: Սակայն ամեն անգամ մենք նորից ու նորից բախվում ենք ձեր անճարակությանը, երբեմն էլ ձեր կողմից մեր պլանների ուղղակի ու դիտմամբ ձախողվելուն: Մենք մանրակրկիտ ձևով ընտրում ենք մարմնավորված մեկին, որին շատ տարիների ընթացքում նախապատրաստել ենք որոշակի առաքելություն իրականացնելու համար: Ձեզից ումանք մարմնավորվել են արդեն պատրաստի առաքելություններով: Դուք ինքներդ եք հանձն առնում այդ առաքելությունները՝ ձգտելով մարմնավորվել: Դրանից հետո որոշակի ժամանակ է անցնում, մինչև որ ֆիզիկական ոլորտում հանկարծ հայտնաբերում եք մեր Ուսմունքը և չափազանց մոտենում ձեր մարմնավորման նպատակի իրականացմանը: Երբեմն անհրաժեշտ է լինում ընդամենը մի փոքրիկ ջանք գործադրել, որպեսզի ձեր խնդիրն իր լուծումը ստանա:

Համաձայն Օրենքի՝ հենց որ ձեռնամուխ եք լինում Եղբայրության համար աշխատանք կատարելուն, անմիջապես ձեր կողքին հայտնվում են արտաքին աշխարհի հրապուրանքներ: Ձեզ տրվում է իրադարձությունների զարգացման այլընտրանքային տարբերակ և ընտրության հնարավորություն: Իմացեք, որ դա տեղի է ունենում ինքնաբերաբար: Այդպիսին է Օրենքը: Ձեզ հնարավորություն է տրվում ընտրելու. կա՛մ նպատակասլացություն, նվիրվածություն ու հաստատականություն եք դրսևորում և մնում ուղու վրա՝ ցուցաբերելով անձնագոհության, անշահախնդրության ու Սպասավորության հրաշքներ, կա՛մ էլ տրվում եք հրապուրանքներին,

որոնք հաճկատարորեն ձեզ է հրամցնում ձեր աշխարհը: Երկրորդ դեպքում դուք ընտրում եք ավելի երկարատև ու խորդուբորդ ճանապարհ, որը շատ դեպքերում ոչ մի տեղ չի տանում:

Ուստի ամեն անգամ գալով՝ մենք ջանում ենք զգուշացնել ձեզ սպառնացող վտանգի մասին: Ձեր մարմնական խելքի համար սովորական բան է թվում մեծամասնության պես վարվելը. չէ՞ որ ջահել եք, ուժով ու եռանդով լի. ինչու՞ մի քիչ էլ սեփական կյանքով չապրել, չվայելել կյանքի հաճույքները...

Եվ հենց որ անկատելիորեն ձեր գլխում նման միտք է ծագում, դուք անմիջապես ցած եք սահում թրթռոցների ձեր նվաճած մակարդակից: Դուք մղվում եք դեպի այն սայթաքուն կածանը, որը տանում է դեպի տառապանքների ու ձախորդությունների կիրճը: Բայց իմացեք նաև, որ ինքներդ եք կերտում ձեր ընթացիկ և հետագա կյանքերի հանգամանքները:

Հենց որ ձեզ համար ծագում է Եղբայրությանը ծառայելու հնարավորություն, միաժամանակ ծլում է և այն հրապուրանքը, որը ձեզ շեղում է Ուղուց: Եվ այն դեպքում, երբ ենթարկվում եք մարմնական խելքի շնչոցներին, կորցնում եք ձեր թրթռոցների մակարդակը. և երբ ձեր Բարձրագույն Ես-ը, ձեր երկրային ուսուցիչը կամ մենք մոտենում ենք, որ հայտնենք ձեր մոլորության մասին, դուք չեք լսում մեզ: Չեք էլ ուզում լսել:

Երբ մոտենում եք ճամփաբաժանին, ֆիզիկական ոլորտի ձեր ուսուցիչը միշտ տեսնում է իրադրությունը և ձեզ տեղյակ է պահում այդ մասին: Եվ դուք ընտրություն եք կատարում. հետևել՝ ուսուցչին, թե՞ ենթարկվել մարմնական խելքի շնչոցներին:

Մենք ձեզ հենակներ ենք տալիս, խնամում ենք ձեզ՝ նմանվելով ձանձրացնող դայակների, բայց դուք դուրս եք պրծնում հոգածու ձեռքերից և մղվում արկածներ որոնելու, հաճույքներ ստանալու և այն ամենի կողմը, ինչն ուզում եք ստանալ ֆիզիկական աշխարհից:

Իմացեք, որ այն, ինչը լավ է մարդկանց մեծամասնության համար, այն է՝ կենսափորձ ձեռք բերել և խաղալ պատրանքի մեջ՝ Օրենքի կոպիտ խախտում է նրանց համար, ովքեր արդեն մոտեցել են մեզ ու մեր դեսպանորդին:

Երբ դուք մանկահասակ երեխա էիք և ձեզ չարություններ էիք թույլ տալիս, ձեր ծնողներն ու ձեզնից մեծերը ձեր արածին հանգիստ էին նայում՝ փորձելով խրատել ձեզ: Բայց երբ արդեն մեծ էիք ու էլի փոքր երեխայի պես չարություններ էիք անում, ապա դա արդեն ձեզ արգելում էին: Երբ երեխան ուրիշին պատկանող ու իրեն դուր եկած խաղալիքն իր հետ տուն է տանում, հայրը, մայրը, պապը կամ տատը նրան անմիջապես խրատում են, որ ուրիշի խաղալիքը խլել չի կարելի, ապա ստիպում են, որ այն հետ տարվի և տրվի այն լացող երեխային, որը գրկվել է իր սիրած խաղալիքից: Իսկ երբ հասուն տարիքի հասած մեկը փորձում է յուրացնել ուրիշին պատկանող որևէ բան, ապա հասարակությունը նրան դրա համար պատժում է ամենախիստ ձևով: Ուստի ձեզ համար արդարացում մի՞ փնտրեք՝ ասելով, թե մյուս մարդիկ վայելում են կյանքի հաճույքներն ու բարիքները: Ձեզ վրա ա՛յլ կարգի պատասխանատվություն է ընկած, նաև կարմայական պատասխանատվություն: Որովհետև Աստծո ուսուցիչի ու դուստրերի շարքում դուք արդեն հասել եք հասուն տարիքի:

Հիմա, երբ լրիվ ընթացքով առաջ է գնում մեր դեսպանորդի Աշրամի շինարարությունը, մտորե՛ք այն մասին, թե արդյո՞ք ամեն ինչ արել եք, որ մեր շինարարության գործում օգնեք մեզ: Եվ ընդհանրապես որքա՞ն հաճախ եք ձեր կյանքի ունայնության մեջ հիշում այն մասին, որ մենք նախագիծ եք կյանքի կոչում Ռուսաստանի հողում:

Շատ հարյուրամյակների ընթացքում մենք ձգտում ու չենք կարողանում իրականացնել մեր պլանները: Եվ ահա, երբ վերջապես իրական հնարավորություն է ստեղծված այդ պլաններն իրականացնելու համար, ձեզ համար հանկարծ ավելի կարևոր խնդիրներ են ծագում՝ սիրած աղջկա հետ գնալ ծով՝ հանգստանալու, տուրիստական արշավ նախաձեռնել դեպի սարերը, փող ծախսել մեքենա կամ մի այլ համբավ վայելող բան գնելու համար:

Ես կոչ եմ անում, որ ամենայն ուշադրությամբ վերաբերվեք ձեր բոլոր արարքներին: Նաև նախագգուշացնում եմ, որ այս պահից սկսած՝ ձեր կարմայական պատասխանատվությունը կկրկնապատկվի:

Ֆիզիկական ոլորտում մեր ամեն մի քայլը շատ թանկ գնով է ձեռք բերվում, այնպես որ մենք չենք կարող հանգիստ նայել, թե ինչպես եք ձեր ժամանակը, դրամն ու կյանքը վատնում՝ վազելով չխկնչականների, այլազան խաղալիքների ու հաճույքների հետևից:

Ես այսօր այցի եկա ձեզ այն նպատակով, որ ձեզ հիշեցնեմ ձեր այն պարտավորությունների մասին, որոնք ստանձնել եք ոչ վաղ անցյալում՝ մարմնավորվելուց առաջ, ինչպես նաև բոլորովին վերջերս, երբ կարդում էիք մեր ուղերձները: Գովելի բան չէ, որ ոգևորության պոռթկման պահին պարտավորություններ եք ստանձնում, ապա դրանց մասին անմիջապես մոռանում, հենց որ ձեր աչքերի առաջ ձեր աշխարհի հերթական խաղալիքն է հայտնվում:

Տեր Սուրիա
21 հունիսի, 2008 թ.

Հնարավորություն տվեք մեզ Երկիր մոլորակի վրա քայլելու ձեր կողքից

ԵՍ ԵՄ Սուրիան՝ տիեզերքի խորքերում գտնվող Մեծ Կենտրոնական Արևից կրկին ձեզ այցի եկածը: Ես ուրախ եմ մեր նոր հանդիպման համար. իսկ դուք ուրախ եք...

Այսօր կուզենայի ձեր ուշադրությունը հրավիրել այն բարեփոխումների վրա, որոնք տեղի են ունենում ձեր մոլորակի ֆիզիկական ոլորտում: Եթե դուք ուշադիր վերընթերցեք մեր թելադրությունները, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով, ապա կնկատեք, որ ուղերձներ տալու ողջ ընթացքում մենք ձեր ուշադրությունը հրավիրել ենք այն փաստի վրա, որ Երկրի վրա բարեփոխումներ են ընթանում: Եվ այդ բարեփոխումները կապված են ձեր աշխարհի նրբացման հետ:

Որքան շատ մարդիկ են բողոքում տարբեր թույլություններից ու վատ զգացողությունից: Որքան շատ մարդիկ են ջանում գտնել իրենց ֆիզիկական մարմնի հիվանդությունների պատճառը՝ այցելելով բժիշկներին ու բուժարարներին: Իսկ ինչու՞ չիլիք այն գիտելիքների մասին, որոնք մենք ենք տալիս:

Մոլորակի թրթռանքները բարձրանում են: Եվ եթե ձեր ֆիզիկական մարմնի թրթռոները մնում են նախկին մակարդակի վրա, ապա դուք դուրս եք մղվում Երկիր մոլորակի թրթռանքների ընդհանուր դաշտից: Ձեզ շատ անգամ է տրվել այս Ուսմունքը: Արդյոք ժամանակը չէ՞ տեղեկատվության անօգուտ կլանումից անցում կատարելու տրված գիտելիքները գործնականում կիրառելուն:

Դուք կարող եք բարձրացնել ձեր թրթռոները: Դուք կարող եք մաքրել ձեր ընկալիչները՝ ձեր ստորին չորս մարմինները: Եվ դրա համար հարկ չկա, որ գնաք բժիշկների ու զերզգայականների մոտ: Պարզապես պետք է ուշադիր վերընթերցեք մեր կողմից տրված ուղերձները և կյանքում գործեք ըստ տրված Ուսմունքի:

Ե՛րբ են ձեր թրթռոները բարձրանում. այնժամ, երբ սևեռվում եք դեպի Բարձրագույն աշխարհները. այնժամ երբ դադարում եք հոգ տանել ձեր մասին և ձեր նպատակամղման վեկտորն ուղղում եք դեպի Ընդհանուր Բարօրություն՝ ի շահ բոլոր կենդանի էակների: Ի՞նչն է խանգարում, որ ձեր նպատակամղումների վեկտորը մշտապես ուղղված պահեք դեպի Բարձրագույն աշխարհները, դեպի Ընդհանուր Բարօրությունը:

Ուշադիր վերլուծե՛ք այն ամենը, ինչ խանգարում է ձեր կյանքին և աստիճանաբար ձեր կյանքում ի կատար ածեք անհրաժեշտ բարեփոխումները: Մենք ջանում ենք առավելագույն զգուշություն ցուցաբերել ձեր և ձեր հոգու դաստիարակության հարցում, որպեսզի հասցնեք հարմարվել նոր թրթռանքներին և նվազագույն կորուստներով անցում կատարեք նոր էվոլյուցիոն մակարդակի վրա:

Հավատու՞մ եք արդյոք, որ մենք հոգում ենք ձեր մասին: Այդ դեպքում ինչու՞ չեք հետևում մեր խորհուրդներին ու հանձնարարականներին: Չէ՞ որ ամեն ինչ շատ պարզ է: Անհրաժեշտ է, որ աստիճանաբար հրաժարվեք սխալ չափորոշիչներից ու դրսևորումներից և ձեզ շրջապատեք Աստծո ճշմարիտ չափորոշիչներով ու դրսևորումներով: Եվ դա հենց ինքներդ պետք է անեք: Մենք կարող ենք փորձ անել, որ ձեր ֆիզիկական ոլորտն իջեցնենք մեր ձևաչափերը: Բայց՝ ո՛չ առանց ձեր օգնության: Հասկացե՛ք, որ դուք պետք է հետևողականորեն ջանքեր գործադրեք հարկ եղած ուղղությամբ, և այդ դեպքում ամեն ինչ աստիճանաբար կսկսի բարեփոխվել:

Ձեզ համար ծա՛նր են քաղաքային պայմանները: Արդ, ի՞նչն է խանգարում, որ անցնեք բնության գրկում ապրելուն: Հենց որ ճիշտ նկրտում դրսևորեք և օգնություն խնդրեք Աստծուց, Նա ձեզ կառաքի և՛ հնարավորություն, և՛ անհրաժեշտ միջոցներ, որպեսզի կենսագործեք ձեր հնարավորությունը: Իսկ եթե խավարասերների պես կույզ գաք անկյուններում, վախենաք արևի երես դուրս գալուց և չուզենաք ձեր մարմինները պահել բարեփոխումների քամու դեմ, ապա ո՞վ կարող է ձեզ ստիպել, որ հակառակն անեք:

Հասկացե՛ք. հենց ձեր մեջ է այն մեխանիզմը, որով որոշվում է ձեր դիրքը ֆիզիկական աշխարհում: Դուք ինքներդ եք կերտում ձեր ապագան: Եվ դուք դա անում եք ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան: Ինքներդ եք կառավարում Աստծո այն էներգիան, որը մուտք է գործում ձեր

մարմինները: Եվ եթե ձեզ հաջողվում է ուղղորդել այդ էներգիան Աստծո Օրենքներին համապատասխան, ապա ձեր կյանքի հանգամանքները ձեզ տանում են դեպի Աստված: Իսկ երբ տրվում էք ինքնասփոփանքին ու քաղցր-մեղցր կյանքին, հագուրդ եք տալիս ձեր վատ սովորություններին և չեք ուզում բաժանվել դրանցից, ապա ինքներդ ձեզ նեղն եք լծում, որովհետև ապագա չեք ունենա այն Նոր Աշխարհում, որը Երկիր մոլորակում մենք ստեղծում ենք ձեզ համար:

Ամեն ինչ ձեզ ասվում է ծայրահեղ պարզ ու բացահայտ կերպով: Ոչինչ գաղտնի չի պահվում: Ամբողջ գաղտնիքը ձեր գիտակցության մեջ է, որն անհավատալի արագությամբ ամեն ինչ ա՛յլ կողմ է ծռում և ողջ ձեզ հասած տեղեկատվությունը մեկնաբանում այն ձևով, ինչպես հարմար է գալիս ձեր մարմնական խելքին:

Դուք ինքներդ եք այն գեներատորները, որոնք անկատարություն են ծնում ձեր աշխարհում: Հետևե՛ք Աստծո Օրենքին, և կբարեփոխվեն ձեր կյանքի պայմանները:

Շատ բան հարկ կլինի փոխել մոլորակում: Մենք ձեռնամուխ ենք լինում Երկիր մոլորակի ակտիվ փոփոխություններին: Ուստի հարկ է, որ ձեր պլանները համապատասխանեցնեք մեր պլանների հետ և կատարեք ձեր ընտրությունը: Արդյոք այդքան անհրաժեշտ է, որ կառչած մնաք ձեր սովորություններին ու կապվածություններին:

Մի՛ երկնչեք ամեն ինչից հրաժարվելուց և Աստծուն հետևելուց: Աստված կհոգա ձեր մասին: Մի՛թե կարծում եք, թե ձեզ կթողնեն առանց խնամքի ու հոգածության, եթե անկեղծ նվիրումով ընթանաք դեպի Աստված:

Մի՛ վախեցեք փոփոխություններից: Մի՛ վախեցեք մահից: Մահ գոյություն չունի: Կա միայն հավերժական կյանք, որն իր ձևերն է փոխում: Եվ դուք մեռնում եք միայն այն բանի համար, որպեսզի նորից ծնվեք, նոր մարմին առնեք և նոր ուժերով ծառայեք Աստծուն ու ողջ Կյանքին:

Ցավոք, հենց որ նոր մարմին եք առնում, երբեմն կրկին վերադառնում եք ձեր հին ձևաչափերին և ինքներդ ձեզ քթացնում այլազան վնասակար նյութերով կամ ծանրաբեռնում ձեր մարմինը անմշակ ու անպետք սննդով: Աստված է ձեզ մարմին տալիս. և հարկ է, որ դուք վերաբերվեք ձեր ֆիզիկական մարմնին այնպես, ինչպես դրսևորված Աստծուն:

Մտորե՛ք. արդյոք ձեր մարմինների նկատմամբ ձեր վերաբերմունքը կարո՞ղ է դուր գալ Աստծուն: Կողքից նայե՛ք ձեզ ու ձեր գործողություններին: Արդյոք ձեր կյանքի բոլո՞ր կողմերն են համապատասխանում աստվածային կերպերին: Ձեր ո՞ր մասում պետք է ճշգրտում մտցնեք, որպեսզի ձեր կյանքը բարեփոխվի:

Եթե դուք ավելի հաճախ մտորեք ձեր կյանքի ողջ դրվածքի շուրջ, ապա շատ շուտով իրական բարեփոխումներ կունենաք ձեր կյանքի հանգամանքներում: Միայն ձեր անկատար գիտակցության պատճառով է, որ կույ՜ եք գալիս հսկա քաղաքի մի քանի քառակուսի մետրում այն դեպքում, երբ մոլորակը հսկայական տարածքներ ունի, որոնցում ձեր աուրաները կարող են հառնել հասակով մեկ՝ ձեզ ունակ դարձնելով ընկալելու մեր աշխարհը:

Դու՛րս ելեք հսկա քաղաքների ջունգլիներից դեպի արևոտ լայնարձակություն... Մենք չենք կարող բռնի ուժով ձեզ դուրս քշել այն գարշահոտ վայրերից, որոնցում ապրում եք: Այդ վայրերի թրթռանքներն այնքա՛ն ահավոր են, որ ոչ մի համբարձյալ Վեհապետ չի կարող ճեղքել-անցնել այն հոծ շերտերով, որոնցով ինքներդ ձեզ շրջապատել եք: Հնարավորություն՝ տվեք մեզ Երկիր մոլորակի վրա քայլելու ձեր կողքից: Եվ մենք համատեղ Երկիր մոլորակը կդարձնենք ամենաչքնաղը տիեզերքում...

*ԵՄ ԵՄ Մուրիան՝ Նոր Օրվա արևային կուրացուցիչ
պայծառափայլությամբ կանգնած ձեր առջև*

Վեհապետ Լանտո
22 հունիսի, 2008 թ.

Չրույց կենսականորեն անհրաժեշտի մասին

ԵՄ ԵՄ Լանտոն՝ ձեզ այցի եկածը: Որպեսզի սկսենք մեր զրույցը, խնդրում եմ՝ կենտրոնանաք ձեր սրտի վրա: Այնժամ, երբ մտածում եք ձեր սրտի մասին, դուք սկսում եք համալարվել Աստծո Իրականության հետ: Քանզի ձեզ հայտնի է, որ ձեր սրտի զարկերը ձեզ համար չափանշում են Հավերժությունը: Եվ այդ Հավերժությունը մշտապես ձեզ հետ կլինի այն դեպքում, երբ ձեր երկրային մարմնավորումը վերջավոր բնույթ է կրում:

Այսպիսով, ես հուսով եմ, որ դուք արդեն համալարվեցիք Հավերժության հետ:

Ուստի սկսենք մեր այսօրվա զրույցը: Դուք անվերապահորեն պետք է հանգեք այն գիտակցությանը, որ ձեր ներկա կյանքն ընդամենը ձեր մարմնավորումների ամբողջական շղթայի մի օղակն է: Եվ միայն այն դեպքում, երբ կդադարեք մտածել մեկ մարմնավորման չափանիշներով, կկարողանաք վեր կանգնել ձեր այդ կյանքի ունայնությունից և դիտարկել ժամանակի ավելի երկարատև հատվածները: Առօրյա ունայնությունը նահանջում է, երբ մտածում եք Հավերժության մասին: Եվ միայն մտքի ու սրտի խաղաղացման այդ կետից է, որ դուք ունակ կդառնաք ճիշտ գնահատելու ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչը:

Երբ կկարողանաք երկար ժամանակով կենտրոնանալ ձեր էության հավերժական կողմերի վրա, ձեր ողջ կյանքը կսկսի աստիճանաբար փոխվել: Քանզի այդպիսին է պատրանքային աշխարհի դրվածքը: Քանի դեռ գտնվում եք պատրանքում, դուք չեք կարող հայացք նետել դեպի այլ, Բարձրագույն աշխարհներ: Եվ այնժամ, երբ կհաջողվի համալարվել ու անցում կատարել գիտակցության ավելի բարձրություն վիճակին, դուք ունակ կդառնաք վեր կանգնելու առօրեական ունայնությունից: Եվ շատ բաներ, որոնք ձեզ համար փորձաքարի դեր էին կատարում, ձեզ համար բոլորովին այլ նշանակություն ձեռք կբերեն:

Երբ ձեր շուրջը տեղի ունեցողի ընկալման հարցում նմանվում եք մանկահասակ երեխաների, ձեզ համար բացվում է Հավերժությունը: Նկատի ունեցեք, որ իրականում ձեր արտաքին գիտակցությունն արգելակում է ձեր զարգացումը: Այն դեպքում, երբ ձեր ինտելեկտի զորությամբ եք փորձում հասկանալ Աստծուն, իրականում ավելի ու ավելի եք խրվում պատրանքի մեջ: Քանզի աստվածային բանականությունը ոչ մի ընդհանուր բան չունի ձեր ինտելեկտի զարգացածության հետ: Եվ Աստծո Իմաստությունը ձեզ հասանելի է դառնում միայն այնժամ, երբ մարմնական խելքը քնով է անցնում ու հանձնում իր դիրքերը:

Ուստի հարկ է, որ հրաժարվեք ձեր մարմնական խելքից, որպեսզի բարձրանաք թրթռանքի հաջորդ մակարդակի վրա: Ձեզ թվում է, թե հասարակության առաջադիմությունը միայն այն դեպքում է տեղի ունենում, երբ ի հայտ են գալիս տարբեր գիտականորեն հագեցած տեխնոլոգիաներ և նոր գիտական հայտնագործություններ: Բայց իրականում հասարակությունն առաջադիմում է միայն այն դեպքում, երբ զանգվածային գիտակցության մեջ հաղթանակում է Աստծո Իմաստությունը և Աստծո Օրենքն աստիճանաբար դառնում է այն հիմնական օրենքը, որին ամբողջովին ենթարկվում են ձեր կյանքն ու այն պետության կյանքը, որում ապրում եք:

Ամբողջ տարբաժանումը ձեր գիտակցության մեջ է: Եվ այնժամ, երբ պատռում եք ձեր գիտակցության սահմանափակումներից հյուսված սարդոստայնը, չքանում են տարբեր երկրներում բնակվող մարդկանց միջև եղած տարբերությունները: Չքանում են տարբեր կրոններ դավանող մարդկանց տարբերությունները: Չքանում են և այն տարբերությունները, որոնք ձեզ բաժանում են Կյանքի յուրաքանչյուր մասնիկից:

Ուստի ձեզ համար կանոն դարձրեք, որ օրվա մեջ գոնե մեկ անգամ առանձնանաք և փորձեք ձեր գիտակցությունը բարձրացնել հնարավորինս բարձր մակարդակի վրա, որում չքանում են ունայն մտքերը, նահանջում են անկատար զգացումները, և դուք սկսում եք զգալ Հավերժության շունչը, անդորրն ու խաղաղությունը: Սկզբում ձեզ համար շատ դժվար կլինի նման վիճակի հասնելը, քանի որ ձեր շրջապատի ամեն ինչը չափազանց շատ է հակադրվում գիտակցության աստվածային վիճակին: Եվ ձեր շուրջը եղած ամեն ինչը կփորձի խանգարել Հավերժության հետ ձեր շփմանը: Սակայն ձեր գլխում դուք կարող եք պահել այն բանի մտապատկերը, որ ձեր գիտակցության ու թրթռանքի բարձրացմանը զուգընթաց դուք ունակ եք դառնում ձեր միջով ձեր աշխարհի փոխանցելու կատարյալ աստվածային թրթռանքներ: Հետևաբար դուք ձեզ համար ու ձեր ինքնակատարելագործման համար չէ, որ աշխատում եք, այլ համայն տիեզերքի համար: Աշխատում եք Աստծո համար:

Այժմ եկեք մտորենք այն մասին, թե ինչպիսի վիճակներում եք հայտնվում և ինչպիսի մտքեր են ձեզ այցելում, երբ տանը կամ աշխատանքի վայրում զբաղվում եք ձեր աշխարհիկ գործերով: Կարո՞ղ եք մտաբերել, որ երբևէ գիտակցաբար գործած լինեք Համընդհանուր Բարիքի, բոլոր կենդանի էակների համար: Ձեզ թվում է, թե իմ ասածները վերաբերում են ֆանտաստիկայի բնագավառին. քանզի իրապես, երբ գտնվում եք կյանքի ունայնության մեջ, ձեր մտքով անգամ չի անցնում, որ աշխատեք Համընդհանուր Բարիքի, Բարու, Աստծո համար: Առավել հաճախ դուք աշխատում եք, որպեսզի դրամ վաստակեք, որպեսզի առաջընթաց ունենաք ձեր ծառայության մեջ, այլ կերպ ասած՝ կարիերա ստեղծեք: Ձեր աշխատանքում առաջնորդվում եք ինչով ասես, բայց չեք աշխատում Աստծո համար:

Իսկ հիմա եկեք խորհրդածենք: Ձեր գործելու շարժառիթներն իրենց հետքն են թողնում այն ամենի վրա, ինչով զբաղվում եք օրվա ընթացքում: Եվ, հետևաբար, եթե առաջնորդվում եք սխալ շարժառիթով, ապա Աստծո ողջ այն էներգիան, որը ձեզ բաժին է հասնում օրվա ընթացքում, ուղղորդում եք պատրանքների բազմապատկմանը: Դուք պատրանք եք ստեղծում ցանկացած

շարժառիթի դեպքում, բացի այն դեպքից, երբ աշխատում եք հանուն համայն գոյի, հանուն Աստծո:

Ձեզ անիրական է թվում, որ կարող եք ձեր գործունեության ողջ ընթացքում մշտապես առաջնորդվել Բարձրագույն Օրենքով: Եվ դա այդպես էլ պետք է լիներ, քանզի անցյալի ձեր սխալ նախընտրանքներով ինքներդ ձեզ քշել եք այնպիսի պայմանների մեջ, որոնցում նույնիսկ ամոթ եք համարում շրջապատի մարդկանց ասել, որ դուք աշխատում եք հանուն Աստծո: Եվ, քանի դեռ զանգվածային գիտակցության մեջ այնպիսի արմատական բեկում տեղի չի ունենա, որ Աստծո ըմբռնումը դադարի նույնանալ կրոնի, աղանդների և էլի ինչ որ անարժան բաների հետ, դուք չեք կարողանա բարձրանալ էվոլյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի վրա: Քանզի ինքներդ ձեզ կտրել եք Աստծո Աշխարհից և հարկ է, որ հետ վերադառնաք: Դուք կտրվել եք Բարեշնորհանքից և պետք է նորից ձեռք բերեք այն: Աստվածային բարեշնորհի վիճակի կարելի է արժանանալ միայն Կյանքի Սպասավորությանն ուղղված մշտական ջանքերի գնով:

Այն դեպքում, երբ գիտակցորեն եք մոտենում ձեր կյանքի բոլոր գործերին, երբ հետևում եք ձեր բոլոր նախընտրանքներին ու արարքներին, որպեսզի դրանք համապատասխանեն Աստծո Օրենքին, ապա մոտենում եք Աստծուն: Հնարավոր է նույնիսկ, որ ոչ մի շոշափելի արդյունք չունենաք ֆիզիկական ոլորտում: Քանզի հենց որ կանգնում եք այն Ուղու վրա, որը ձեզ հետ է բերում Աստծո մոտ, ձեր ողջ շրջապատը փորձում է ձեզ կանգնեցնել, «խելքի բերել» և վերադարձնել նախկին կյանքին: Առանձնահատուկ կայունություն ու արիություն է պետք, որպեսզի դիմագրավեք հասարակության մեջ հաստատված կարծրատիպերին: Միայն եզակիները կարող են դուրս պրծնել զանգվածային գիտակցության կապանքներից: Սակայն երկրային չափանիշներով այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, և ավելի ու ավելի շատ անհատներ ունակ կդառնան հանուն Աստծո անել այն ամենն, ինչ անում են իրենց կյանքում:

Միշտ էլ եզակիներն են մեծ գործեր սկսել, որից հետո նրանց միացել են միլիոնները: Հասել է այն պահը, երբ բեկում պետք է տեղի ունենա բավարար քանակի մարդկանց գիտակցության մեջ: Հենց դրա համար էլ մենք այցի ենք գալիս ձեզ և տալիս մեր Ուսմունքը:

ԵՍ ԵՄ Լանտոն՝ ձեր նկատմամբ Միտով

Պաշտելի Ալֆա
23 հունիսի, 2008 թ.

Դուք մեզ կարող եք տալ ավելի ակտիվ գործողությունների հնարավորություն

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր Հայրը: Այս օրով ես ձեզ այցի եմ եկել և ուրախ եմ մեր նոր հանդիպման համար: Իմ վերջին այցից հետո շատ բան է փոխվել ձեր մոլորակի վրա և տիեզերքում: Հավանաբար դուք ձեզ վրա զգում եք տեղի ունեցող բոլոր փոփոխությունները: Ձեզ վիճակվել է ֆիզիկական մարմնով ներկա գտնվել Երկրի վրա, երբ Մեծ Փոփոխություններ են տեղի ունենում: Եվ դրանց մեջ առաջին հերթին այն հսկայական թռիչքն է, որ կրում է ձեր գիտակցությունը:

Հավանաբար նկատել եք, թե շատ բաների նկատմամբ ձեր վերաբերմունքն ինչպես է փոխվում բառացիորեն մեկ օրվա ընթացքում: Այն, ինչն անցած սերունդների համար անհասանելի խնդիր էր, ձեր սերունդը լուծում է շատ արագ: Գիտակցության շարժունակություն ու եռանդունություն. ահա այն տարբերությունը, ինչով նոր ռասաները գալիս են փոխարինելու հին ռասաներին: Եվ պետք է որ հասկանաք, որ ներկայումս Երկրի վրա մարմնավորվածների մեջ կան շատ մարդկային ռասաների և դրանց ճյուղավորումների ներկայացուցիչներ: Դուք բառացիորեն կարող եք նկատել դա՝ դուրս գալով փողոց:

Մեծագույն հնարավորություն է հատկացված Երկիր մոլորակին: Եվ այդ հնարավորությունը կապված է այն բանի հետ, որ շատ մարդկանց իրավունք է տրված սեղմ ժամկետներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու իրենց գիտակցության մեջ:

Ինչպես որ առաջ հնարավոր չէր մեկ մարմնավորման ընթացքում պատկերացում ստանալ այն բաների մասին, որոնք դուք այժմ ունակ եք ընդգրկելու ձեր գիտակցությամբ, այնպես էլ եկող սերունդներն ունակ կլինեն իրենց մեջ կրելու այն հատիկները, որոնք անհրաժեշտ են մարդկության ապագա զարգացման համար: Եվ ամեն մի կրկին Երկիր մոլորակ մուտք գործող նորածին իր մեջ կրում է ապագայում ծնունդ առնելիք գիտակցության սերմերը: Ուստի ողջունեք ձեզ մոտ եկող ամեն նոր մարդուն և փորձեք նրանից իմանալ այն ուղերձը, որն ինքն իր հետ բերում է մեր Աշխարհից: Ձեր ձեռքերում է ապագա ռասաների սերմերին աճի հնարավորություն տալու գործը:

Այնպես, ինչպես խնամք եք տաժում ձեր հողամասում աճող բույսերի նկատմամբ, նույն կերպ պետք է վերաբերվեք և ձեր երեխաներին: Եթե նրանք չստանան ձեր հոգածության և ուշադրության էներգիայի անհրաժեշտ քանակություն, ապա ապագա ռասաների սաղմն աճ չի ստանա նրանց մեջ: Ուստի Ես եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ այն մասին, որ դուք պատասխանատու եք ամեն մի երեխայի համար, ով ներկա ժամանակում մարմին է առնում Երկիր մոլորակի վրա: Գուրգուրե՛ք այդ երեխաներին: Նրանք իրենց մեջ կրում են ձեր մոլորակի ապագան:

Ես պետք է ձեզ ասեմ ևս մեկ բան: Նաև, որպեսզի գիտակցեք իմ տված տեղեկատվության ողջ նշանակալիությունը, խնդրում եմ, ըմբռնե՛ք ձեր գիտակցությամբ, թե որքան հազվադեպ է ինձ հաջողվում դիմել մարմնավորված մարդկությանը: Մարդկային լեզուն չի կարող փոխանցել իմ բոլոր թրթիռներն ու հույզերը, որոնք տաժում եմ ձեր նկատմամբ: Եվ կուզենայի, որ հնարավորինս մեծ քանակի մարդիկ կարողանային զգալ իմ հայրական Սիրո ու զգվանքի էներգիաները, որոնցով ափեռափ լեցուն եմ: Ես կուզենայի ամբողջությամբ ձեզ տրվել: Ես ծարավի եմ ու կանխավայելում եմ այն պահը, երբ մենք կկարողանանք միավորվել հրաշալի համանվագում և հավել Սիրո գրկում: Հավատացե՛ք, որ ինձ համար ավելի մեծ երանություն չկա, քան այն ակնթարթը, երբ Երկինքն ու Երկիրը հանդիպում են իրար:

Ես եկել եմ ևս մեկ յուրով: Եվ դա վերաբերում է այն հնարավորությանը, որը, այս օրվանից սկսած, դուք ձեռք եք բերում:

Մեծ Տիեզերական Բոլորաշրջանը սկսվում է: Մեծ Տիեզերական Բոլորաշրջանը մեր առջև է արդեն: Եվ դուք կարող եք արագացնել ձեր Էվոյուցիան: Ձեզ մնում է միայն ցանկանալ ձեր սրտերում, որ ձեր Էվոյուցիոն ընթացքն արագանա: Կա որոշակի Օրենք: Եվ մենք այն չենք կարող խախտել: Այն վերաբերում է Էվոյուցիային չմիջամտելուն: Քանի դեռ մարդկային Էվոյուցիայի ներկայացուցիչներն օգնություն չեն խնդրում Երկնքից, մենք չենք կարող լրիվ ծավալով օգնություն ցուցաբերել: Հետևաբար, որքան ձեզնից ավելի շատերը խնդրեն Համբարձյալ Դասերին և անձամբ ինձ, որ արագացնենք Երկրի մարդկության Էվոյուցիան, մենք այնքան ավելի մեծ օգնություն կկարողանանք ցուցաբերել:

Դուք կարող եք մեզ տալ ավելի ակտիվ գործողությունների հնարավորություն: Խնդրում եմ, որ օգտվեք Երկրի վրա տեղի ունեցող Էվոյուցիոն գործընթացների արագությունը կարգավորելու այդ լծակից:

Ես այս օրով եղա ձեզ հետ:

ԵՄ ԵՄ Ալֆան

Վեհապետ Սերապիս Բեյ

24 հունիսի, 2008 թ.

Իմաստ չունի Ուսմունք տալ, եթե այն չի ամրապնդվում գործնականում

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը: Այս օրով ես եկել եմ, որպեսզի գրույց վարեմ ձեզ հետ: Եվ այն կվերաբերի ձեր հոգևոր զարգացմանը: Ձեզ բնական բան է թվում, որ Համբարձյալ Վեհապետներն ահա հենց այսպես հասարակ ձևով պետք է գան ու գրուցեն ձեզ հետ: Սակայն չեք պատկերացնում, թե Համբարձյալ Դասերն ինչպիսի՜ վիթխարի աշխատանք են տանում մեր ուղերձների փոխանցման համար:

Մեր աշխարհների միջև գոյություն ունի անթափանց էներգետիկական պատնեշ: Եվ որպեսզի այդ պատնեշը հաղթահարվի, նշանակալի էներգիա պետք է ներդրվի: Դեսպանորդի պատրաստ լինելը պետք է համատեղվի մեր պատրաստ լինելու հետ: Եվ ահա գալիս է մի պահ, երբ մեր աշխարհները համահունչ են դառնում: Այնուհետև դրան հաջորդում է այն պահը, երբ ուղերձը մուտք է գործում ձեր աշխարհ՝ հանդարտ, ինչպես առվակի խոխոջուն. հանդարտ, ինչպես խոտի սոսափ. հանդարտ, ինչպես վարդն է բացվում:

Ձեր աշխարհը ստանում է մեր ուղերձը: Եվ երբ թռուցիկ հայացքով անցնում եք ձեզ տրվածի վրայով, գնահատում ձեր մարդկային տրամաբանությամբ և դեն նետում՝ որպես ձեր հոգևոր զարգացման համար օգտակար ոչինչ չպարունակող մի բան, ապա փորձեք նաև պատկերացնել, թե քանի՜ քայլով եք ինքներդ ձեզ հեռացնում դեպի ձեր աշխարհի հորդող աստվածային հնարավորությունից:

Ա՛խ, եթե կարողանայի՞ք ներքին իմաստ դնել ձեզ հետ մեր հաղորդակցության ամեն մի բառի մեջ... Եթե կարողանայի՞ք մի կողմ թողնել ձեր գործերը և մեր հաղորդակցությանը տրամադրել գոնե մի քանի բառ... Եվ եթե մեծ թվով մարդիկ ամեն օր դա անեին, ապա իմացրեք, որ ձեր

աշխարհը կբարեփոխվեր հաշված տարիների ընթացքում: Քանզի հենց այն բանի պատճառով, որ ձեր գիտակցության մեջ արժանավայել տեղ չէք հատկացնում մեր ուղերձներին, մեր դեսպանորդին և այն աշխատանքին, որը մենք կատարում ենք ձեզ համար, մեր աշխարհները չեն կարողանում մերձենալ իրար:

Մեր աշխարհը և ձեր աշխարհը: Մենք իրար մոտ ենք գտնվում: Նրբագույն շղարշ է ընկած մեր միջև: Եվ այդ շղարշը նրբավարագույրի է վերածվում նրանց համար, ովքեր ունակ են համալարվելու մեզ հետ, զգալու մեր թրթռոնները: Բայց նույն այդ շղարշն անթափանց զրահի է վերածվում նրանց համար, ովքեր իրենց ուշադրությունը մշտապես կենտրոնացած են պահում ֆիզիկականի վրա՝ արտաքին աշխարհի ու իրենց ցանկությունների, իրենց խնդիրների ու կրքերի վրա:

Մտածե՛ք ասածներինս մասին: Մտորե՛ք այն մասին, թե ձեր կյանքում ի՞նչ տեղ էք հատկացնում մեզ հետ ձեր հաղորդակցությանը. որքա՞ն հաճախ էք արտաքին գիտակցությամբ ձեզ հաշիվ տալիս, թե ինչ հրաշք է տեղի ունենում մեզ հետ հաղորդակցվելիս:

Կարողացե՛ք ձեր կյանքի ունայնից այն կողմ նշմարել Ճշմարտության հատիկները, որոնք մենք ցանում ենք այս ու այնտեղ: Մենք հույս ենք կապում, որ կգտնվեն մարդիկ, ովքեր կկարողանան կյանքի ունայնության ու խառնաշփոթի մեջ մի պահ կանգ առնել և հոգու աչքերով նայել իրենց շուրջը:

Ծա՛տ են արդյոք ձեր մեջ այնպիսիները, որոնք կարող են հասկանալ, թե որքանով է տարբեր ձեզ շրջապատող ամեն ինչն Աստծո կատարելությունից: Ծա՛տ են արդյոք նրանք, ովքեր պատրաստ են իրենց կյանքում հետամուտ լինելու աստվածային չափորոշիչներին: Եվ հնարավո՞ր է արդյոք ձեր ամեն մի քաղաքում գտնել գոնե տասը ուղղահավաստի...

Ի՞նչ էք կարծում, ինչպե՞ս պետք է զարգանա ձեր քաղաքակրթությունը, եթե նմանակման համար իր խորքերում չունենա աստվածային կերպեր: Արդյոք այդ դեպքում նրան չի՞ սպասվում աստվածաշնչյան Սողոմոնի ու Գոմորի ճակատագիրը:

Մտորե՛ք իմ խոսքերի շուրջ: Եվ ձեր կյանքում կանոն դարձրեք, որ մշտապես ամեն ինչի մեջ իրարից գատեք աստվածային ու անաստված դրսևորումները: Ձեր զանազանումն ունակ կլինի առաջապահ դիրք ստեղծելու, մեր առաջապահ դիրքը ձեր աշխարհում: Եվ շնորհիվ ձեզ ու ձեր ձեռք բերած զանազանման շնորհի՜ մենք կկարողանանք ընդարձակել մեր աշխարհի սահմանները և մեր աշխարհով պարուրել ձեր աշխարհը:

Աստիճանաբար երկրագնդի վրա կազմավորվում են գոտիներ, որոնք գերծ են ռոք երաժշտությունից և զանգվածային գիտակցության այլևայլ դրսևորումներից: Աստիճանաբար նման անկյունների քանակն ավելի ու ավելի կշատանա: Ժամանակի ընթացքում այդ տեղերի թրթռանքները հենց իրենք հեռու կփախցնեն իրենցից բոլոր անաստված դրսևորումները:

Իսկ հիմա խորհեցե՛ք, թե ինչպե՞ս ձեր նյութական աշխարհում ստեղծեք աստվածային դրսևորումների նմանատիպ կղզյակներ: Մտածե՛ք, թե անձամբ դուք ի՞նչ կարող եք անել, որպեսզի ստեղծվի նմանատիպ անկյուն ու նմանատիպ բնակատեղի:

Ես ձեզ կասեմ ևս մի կարևոր բան: Որպեսզի պատկերացնեք, թե ինչպիսի տեսք պետք է ունենա ապագայի բնակատեղին, պետք է առաջնորդվեք այն Ուսմունքով, որը մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով: Ծատերը կան ձեր աշխարհում, որոնք լսում են Համբարձյալ Վեհապետների ձայները: Եվ է՛լ ավելի շատ են նրանք, ովքեր կարծում են, թե լսում են Համբարձյալ Վեհապետների ձայները: Բայց միայն եզակիներն են, որոնք կարող են ձեզ ճշմարիտ չափորոշիչներ ու կողմնորոշիչներ տալ, և դրանցից մեկն էլ մեր դեսպանորդն է, որի միջոցով տալիս ենք մեր Ուսմունքը: Քանզի այդպիսին է նրանց առաքելությունը մոլորակի վրա. այդ առաքելությամբ են նրանք մարմին առել:

Իմաստ չունի Ուսմունք տալ, եթե այն չի ամրապնդվում գործնականում: Ի հայտ եկած այն մարդը, որը կրում է մեր ուսմունքն ու այն չի ամրապնդում իր և իր հետևորդների գործնական կյանքում, վերածվում է անպտուղ ծաղկի, քանզի ֆիզիկական ոլորտում չի երևում այն պտուղը, որն այդ ոլորտում կարող է որպես նմուշօրինակ ծառայել միլիոնավոր մարդկանց համար:

Ես այս օրով եկա, որպեսզի ձեր գիտակցությունն ուղղորդեմ դեպի գործնական քայլերի կողմը, որոնք պետք է ի կատար ածվեն ձեր աշխարհում: Քանզի ձեր աշխարհը ֆիզիկական աշխարհ է, և ցանկացած գիտելիք կամ Ուսմունք, որն առկա է դրանում, պետք է իր դրսևորումը ստանա մոլորակի ֆիզիկական ոլորտում: Ցանկացած Ուսմունք, որը ֆիզիկական ոլորտում բարի պտուղ չի տալիս, կեղծ ուսմունք է: Ուստի հարկ է, որ շատ ուշադիր մոտեցում ցուցաբերեք այն ամենի նկատմամբ, ինչ տրվում է ձեզ և ստացվածը ձեր կյանքում ամրապնդեք արարքներով ու գործողություններով:

Այն դեպքում, երբ ոչինչ չեք ձեռնարկում, այլ միայն կլանում ու կլանում եք տեղեկատվությունը, ապա պարզապես մակաբույծ կյանք եք վարում և ստեղծում չգործելու

կարմա*: Ձեզ Աստծո էներգիա է փոխանցվում ֆիզիկական ոլորտում որոշակի գործողություններ իրականացնելու համար, բայց դուք ի կատար չեք ածում դրանք և այդքան դժվարությամբ ձեզ փոխանցված էներգիան ծախսում եք բամբասանքների, չարախոսությունների ու պարսավանքների վրա: Ընդ որում ձեզ թվում է, թե ամեն ինչ տեղի է ունենում հարկ եղածին պես, քանի որ ձեր գլխի մեջ սխալ պատկերացումներ ունեք այն ամենի վերաբերյալ, ինչ պետք է լինի:

Կրկին ու կրկին ստիպված եմ ձեզ հիշեցնել, որ խնամքով վերաբերվեք ամեն մի տեղեկատվության, որը ձեզ է հասնում մեր դեսպանորդի միջոցով: Այդ տեղեկատվությունը ձեզ է հասնում հատուկ թողության շնորհով, և ձեր աշխարհի փոթորկոտ օվկիանոսում այն փրկարար ճոպան է դառնում ձեզ համար: Դուք կարող եք օգտվել ձեզ ընձեռված հնարավորությունից և դուրս պրծնել ձեր աշխարհում մոլեգնող փոթորկոտ ջրերից ու կրքերից: Բայց կարող եք և այնպիսի տեսք ընդունել, թե իբր ոչինչ տեղի չի ունենում, ոչինչ չունեք անելու կամ ձգտելու որևէ բանի:

Դուք եք կատարում ձեր ընտրությունը: Սակայն ընտրության հերթագայությունը վաղ թե ուշ կընդհատվի: Քանի որ ձեր ամեն մի ընտրությունը կա՛մ ձեզ մոտեցնում է Աստծուն, կա՛մ հեռացնում է աստվածային գիտակցության գազաթից՝ ձեզ մղելով դեպի տգիտության թավուտները:

Կուզենայի էլի՝ շարունակել մեր գրույցը, բայց նախ կուզենայի հասկանալ, թե շատե՞րը կան արդյոք ձեր մեջ, որ ունակ են ընկալելու տեղեկատվությունն այն մակարդակով, որով մենք հիմա այն տալիս ենք:

ԵՄ ԵՄ Սերասյիս Բեյր՝ ձեր նկատմամբ հույսով լի

*Տես Կուրթումիի 2005 թ-ի հունիսի 24-ի ուղերձը

Տեր Հիսուս
25 հունիսի, 2008 թ.

Ներքին Ուսմունք և արտաքին ուսմունք

ԵՄ ԵՄ Հիսուս՝ ձեզ այցի եկածը: Ինչպես անցած անգամ, ես եկել եմ, որ որոշակի խրատներ տամ, որոնք, հույս ունեմ, օգտակար կլինեն ձեր հոգիների համար: Կա արտաքին ուսմունք, և կա ներքին Ուսմունք: Դուք դրանց մասին գիտեք կամ, հնարավոր է, լսել եք: Բայց ինչո՞վ են դրանք իրարից տարբերվում:

Ամեն անգամ, երբ մենք խրատներ ենք տալիս այդ թեմայով, մի փոքր այլ կերպ ենք մատուցում նյութը, որպեսզի դուք այն ընկալեք հնարավորինս ամբողջական: Գիտեք, որ երբ ես 2000 տարի առաջ մարմին էի առել, իմ Ուսմունքը տվեցի շատ մարդկանց: Այն արտաքին էր, թե՛ ներքին: Հարցին պատասխանելու համար եկեք միասին խորհրդածենք:

Երբ մարմին է առնում որևէ դեսպանորդ կամ մարզարե, նա ունենում է որոշակի նպատակ կամ առաքելություն: Եվ նման ավետաբերի առաքելությունը մշտապես մեկն է լինում՝ վերականգնել ճշմարիտ Ուսմունքը, այն Ուսմունքը, որը մշտապես եղել է աշխարհում ժամանակների սկզբից սկսած, բայց որը մոռացվել է շատ հազարամյակներ առաջ: Ձեր գիտելիքները թարմացման կարիք ունեն: Ուստի և ներկայումս մենք գալիս ենք, որպեսզի տանք թարմացված գիտելիք, այն գիտելիքը, որը հիմա դուք կարող եք ընկալել:

Ոչ շատ վաղ անցյալում, երբ ես մարմնավորման մեջ էի, ինչպես նաև դրանից զգալիորեն ավելի ուշ, եթե մեկը գար և տար այն Ուսմունքը, որը մենք այժմ առատորեն տալիս ենք, ապա չէր կարողանա քարոզել ազատորեն ու բացահայտ այն պարզ պատճառով, որ կային շատ սահմանափակումներ, որոնք բնորոշ են աշխարհի բոլոր կրոններին: Ամեն մի կրոն ներկայացնում է որոշակի դոգմաների ու կանոնների ցանկ: Հավանաբար գլխի եք ընկնում, որ այդ դոգմաների ու կանոնների մեծամասնությունը տրվել են ո՛չ իմ, ո՛չ էլ կրոնների մյուս հիմնադիրների կողմից, այլ ի հայտ են եկել զգալիորեն ավելի ուշ և մտցվել են եկեղեցական հայրերի կողմից: Քանզի ամեն ոք, ելնելով իր աշխարհայացքից ու առկա ընդհանուր մշակույթից, կամենում է խրատել ուրիշներին իր հասկացած լավագույն ձևով: Բայց երբ խրատողը չի խոսում Աստծո անունից, այլ նրա մեջ խոսում է իր մարմնական խելքը, ապա նրա գործադրած ջանքերի արդյունքը տրամագծորեն հակառակ է դառնում այն արդյունքին, որը Համբարձյալ Դասերն ուզում են դրսևորված տեսնել մարդկանց շրջանում: Այսպես, ամեն ոք հնարավոր բոլոր գաղտնածեսերով ձգտում է գտնել այն, ինչը հնարավոր է բացատրել մարդկային խելքով: Իսկ այն, ինչը որևէ բացատրության չի ենթարկվում, կա՛մ լռության է մատնվում, կա՛մ հռչակվում է որպես Աստծո հրաշք: Եվ երբ մարդկանց բազմաթիվ

սերունդներ կրկնում ու բերանացի փոխանցում են այդ հրաշքի մասին իրենց լսածը, որը տեղի է ունեցել իրենցից հարյուրավոր ու հազարավոր տարիներ առաջ, ապա առաջանում է որոշակի կարծրատիպ կամ դոգմա, որն ինքնուրույն սկսում է գոյատևել այն մարդկանց գիտակցությունից անկախ, ովքեր շփվում են այս կամ դավանաբանության կամ եկեղեցու հետ:

Ամեն մի դոգմայում ճշմարտություն կա, բայց որպեսզի այդ ճշմարտությունը հասկանալի դառնա մարդկանց նոր սերունդների համար, մի նոր մարդու կարիք է զգացվում, որ գա ու թարմացնի մարդկանց պատկերացումն Աստծո ճշմարտության վերաբերյալ:

Միշտ էլ այդպես է եղել: Եվ դա նման է այն բանին, թե ինչպես եք ջրհոր փորում և դրանից ջուր հանում: Դուք վարժվում եք այդ ջրհորի ջրին, որովհետև ուրիշ ջուր չեք ունենում: Եվ նույնիսկ երբ որոշ ժամանակ անց ջուրը հոսում է, դուք դրա հետ էլ եք համակերպվում, որովհետև նոր աղբյուր բացել չգիտեք: Բայց ահա հայտնվում է մեկը և նոր ջրհոր է բացում: Դուք զգուշավորությամբ եք փորձում նոր ջուրը, քանի որ գիտեք, որ ջրերը տարբեր են լինում, և ջրից նույնիսկ հնարավոր է թունավորվել: Բավական երկար ժամանակ է անցնում, մինչև որ բոլոր բնակիչները վարժվում են նոր ջրհորին և սկսում են օգտվել դրա ջրից:

Ահա ճիշտ նույն կերպ էլ նոր Ուսմունքի փոխանցման գործն է: Ամեն անգամ մի նոր մարդ է հայտնվում և տալիս նույն հինավուրց Ուսմունքը՝ տվյալ ժամանակի մարդկանց համար հասկանալի տեսքով: Եվ սկզբում այդ Ուսմունքը պարունակում է իր մեջ կատարյալ աստվածային թրթիռներ և գրավում է իր թարմությամբ: Բայց երբ Ուսմունքի կրողը հեռանում է, հետևորդները սկսում են տալ իրենց յուրովի մեկնաբանությունները՝ յուրաքանչյուրն իր ձևով: Քանզի աստվածային հնարավորության հոսքն արդեն ընդհատված է լինում, և արդեն Երկրի վրա չի լինում Աստծո էներգիան փոխանցողը:

Ամեն անգամ միևնույն Ուսմունքն է տրվում, և այդ Ուսմունքի էությունը պարզ ու հասկանալի է լինում նույնիսկ մանկան համար: Բայց այն, ինչը հասկանալի է մանկահասակ երեխայի համար, խույս է տալիս մարմնական խելքից և չի ենթարկվում որևէ տրամաբանական վերլուծության: Ուստի ձեզ համար հույժ կարևոր կլինի, որ յուրաքանչյուրը կարողանա Ուսմունքի աղբյուրը գտնել իր ներսում: Բոլոր ճշմարիտ կրոններն իրենց հիմքում ուսմունք ունեն Աստծո մասին, որն ապրում է յուրաքանչյուր մարդու սրտում: Եվ քանի որ մարդիկ կորցնում են իրենց սրտի ներսի Աստծուն լսելու ունակությունը, ապա միջնորդներ են հայտնվում, որոնք լսում են Աստծուն, կամ էլ ուղղակի ասում են, թե իբր լսում են Աստծուն:

Պախարակելի ոչինչ չկա, երբ դուք դիմում եք այն միջնորդի օգնությանը, որը ձեզ խրատում է դուրս գալ Ուղու վրա: Հարցն այն է միայն, թե որքանով է այդ միջնորդը Աստծո ճշմարտության կրող: Հետևաբար ավելի հեշտ ու արդյունավետ կլինի, եթե ձեզնից յուրաքանչյուրը կարողանա համալարվել Աստծո հետ և իր սրտում զգալ Աստծո թրթիռները: Հավատացե՛ք ինձ, ձեզնից յուրաքանչյուրի սրտում ներկա է Աստված: Եվ ձեզ պետք չէ թափառել Երկրով մեկ, որպեսզի գտնեք ձեզ խրատողին: Բայց քանի որ Աստծուն ուղղակիորեն լսելու ունակությունը կորսված է ներկայումս ապրող մարդկանց մեծամասնության համար, ապա գոնե հայտանիշներ պետք է ունենաք, որոնցով կարողանաք հին ու նոր քարոզիչների մեջ ճանաչել զառանգյալ դիմակով գայլերին:

Այնտեղ, որտեղ ներկա է Աստված, տեղ չկա չարախոսությունների ու փոխադարձ դատապարտումների համար: Այնտեղ, որտեղ ներկա է Աստված, տեղ չկա շահադիտական հետաքրքրությունների ու մերձավորների հաշվին ապրելու համար: Այնտեղ, որտեղ ներկա է Աստված, միայն տալը կա. ձեզ տալիս ու տալիս են աստվածային նեկտարը, որպեսզի ըմպեք, և փոխարենը ոչինչ չեն պահանջում:

Երբեք արտաքին ծեսերի հետևից մի՛ ընկեք: Երբեք մի՛ ձգտեք խորին խորհուրդ գտնել այնտեղ, որտեղ այն չկա: Ապրեք պարզ ու հասարակ: Պահե՛ք Մովսեսի ու մյուս մարգարեների պատվիրանները և առաջնահերթ կերպով ջանացեք ձեր սրտում անխաթար պահել Սիրո զգացումն ու կարեկցանքը մերձավորների, ողջ կենսականի նկատմամբ:

Կախված Կյանքի յուրաքանչյուր մասնիկի, Աստծո ամեն մի դրսևորման նկատմամբ ունեցած վերաբերմունքից՝ ճշմարիտ հավատ ունեցողը տարբերվում է այն կեղծավորից, որն Աստծո անվան տակ է քողարկվում, բայց իր սրտում չունի Աստծուն:

Ես ձեզ պատվիրան եմ տվել. «Սիրեցե՛ք զմիմյանս»: Եվ ես եկա, որպեսզի ասեմ հետևյալը. այն դեպքում, երբ Սեր ունեք ձեր սրտում, ձեզնից դուրս ոչ մի միջնորդ ձեզ պետք չէ. պետք չէ, որ Աստծուն ձեզնից դուրս փնտրելու համար ժամանակ ծախսեք. քանի որ, եթե Սեր ունեք, ապա ուրեմն Աստծո մեջ եք, որովհետև Աստված Սեր է հենց:

Ես այս օրով ձեզ այցի եկա, որպեսզի ձեզ պատկերացում տամ ներքին Ուսմունքի մասին, որը ձեր սրտերում է և Սեր է կոչվում:

Տեր Մայտրեյա
26 հունիսի, 2008 թ.

Ուսմունք այն մասին, թե ինչպես ճիշտ կլինի, որ վարվեք ձեր կյանքերում

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ ձեզ մոտ եկածը, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ այն մասին, թե ինչպես ճիշտ կլինի որ վարվեք ձեր կյանքերում: Եվ այս Ուսմունքը ես կրկին կտամ իմ դեսպանորդի միջոցով:

Որքա՛ն հազվադեպ են լինում մեր հաղորդակցության թուպեները: Եվ որքա՛ն հազվադեպ է հաջողվում ունայնությունից թուպեներ փախցնել, որպեսզի անդորրության մեջ լինենք:

Ես գալիս եմ այնժամ, երբ ձեր մտքերը հանդարտվում են, և զգացմունքները՝ խաղաղվում: Սիրում եմ լինել այնտեղ, որտեղ նույնիսկ քամին է լռում, և չի լսվում անձրևի աղմուկը. երբ ողջ բնությունը քար լռությամբ կանխազգում է իմ գալուստը:

Կգա այն օրը Երկրի վրա, երբ ողջ մոլորակը շունչը պահած կսպասի իմ գալստյանը: Եվ վրա կհասնի այն ակնթարթը, երբ ես կկարողանամ մարմնավորվել: Քանզի որքան շատ լինեն մարմնավորման մեջ գտնվող այն մարդկային անհատները, որոնք կիմանան իմ մասին և կհետևեն իմ Ուսմունքին, այնքան ավելի շուտ կգա ոսկե այն ժամանակը, երբ ես կկարողանամ հայտնվել մարդկանց շրջանում:

Միշտ այդպես է եղել: Սկզբում հող է նախապատրաստվում, ապա տեղի է ունենում մեծ մարմնավորումը: Իսկ հիմա մենք սկսում ենք մեր գրույցը: Որքա՛ն եմ սիրում խրատներ տալ այն սրտերին, որոնք բաց են Սիրո համար: Որքա՛ն եմ սիրում խրատներ տալ անդորրության մեջ:

Երբ ձեր սրտերի անդորրության մեջ կկարողանաք համալարվել իմ թրթռոնների հետ, ես կկարողանամ հաղորդակցվել ձեզ հետ՝ շրջանցելով դեսպանորդին: Իսկ առայժմ դանդաղում ենք ու սպասում, թե երբ պատրաստ կլինեք ընդունելու մեզ ձեր սրտերում: Քանզի Երկրի վրա դեռ պայմաններ չեն ստեղծված իմ գալստյան համար:

Մենք սպասում ենք, որ դուք կարողանաք ականջալուր լինել այն Ուսմունքին, որը մենք տալիս ենք, և կյանքի խռովահույզ ձեր օվկիանոսում ստեղծեք կղզյակներ, որոնք զերծ լինեն փոթորիկներից ու հողմերից. այնպիսի կղզյակներ, որտեղ մենք կկարողանանք մեր Ուսմունքը տալ անդորրության մեջ: Հասկացե՛ք, որ ամբողջ հարցը թրթռանքների տարբերության մեջ է: Եվ այնժամ, երբ փոխում եք ձեր թրթռոնները, ունակ եք դառնում լսելու նուրբ աշխարհներին և շփվելու Վեհապետների հետ: Մենք և՛ տարբեր ենք, և՛ իրար նման: Տարբեր ենք, քանի որ գտնվում ենք տարբեր թրթռանքներ ունեցող աշխարհներում, բայց և նման ենք, քանի որ և՛ դուք, և՛ ես պատկանում ենք այս տիեզերքի միևնույն Էվոյուցիոն շղթայի օղակին: Ուստի և ես այցի եմ գալիս ձեզ:

Նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել զգալու իմ թրթռոնները, հասկանում են, որ ես շատ կցանկանայի հաղորդակցության մեջ մտնել ձեզնից յուրաքանչյուրի հետ: Քանզի այն դեպքում, երբ մեր հանդիպումը կայանում է, մեր աշխարհները ներթափանցում են մեկը մյուսի մեջ, և մենք հնարավորություն ենք ստանում Աստվածային Սիրո հոսքում միաձուլվելու ձեզ հետ:

Ոգեղեն ու ֆիզիկական աշխարհները միևնույն մեղալի երկու երեսներն են: Եվ երբ պահը գա, մենք կկարողանանք համալարվել ու գրուցել իրար հետ: Բայց նախքան այդ դուք դեռ պետք է շատ աշխատեք ինքներդ ձեզ վրա: Եվ ես հիմա ձեզ կասեմ, թե ինչ որակներ պետք է ձեռք բերեք, որպեսզի մեր հաղորդակցությունը կայանա:

Ամենից առաջ պետք է գիտակցեք, որ գոյություն ունի տիեզերական էակների մի ամբողջ Հիերարխիա: Եվ այդ Հիերարխիայում դուք զբաղեցնում եք սկզբնական աստիճանները: Հիերարխիայի և նրա հիմքերի նկատմամբ հարգանք տաժելն ու պատվելը ձեր ամենաառաջնահերթ պարտականությունն է: Դրանից բխում են այնպիսի որակներ, ինչպիսիք են հնազանդությունը, կարգապահությունն ու նվիրվածությունը: Առանց այդ հատկանիշների դուք չեք կարողանա առաջ ընթանալ ձեր Ուղով: Եվ, որպեսզի ձեռք բերեք այդ հատկանիշները, պետք է հրաժարվեք ձեր Էգոյի առյուծի բաժնից, որը ձեր Էվոյուցիոն զարգացման ներկա փուլում գերակշռող է ձեր մեջ:

Ձեր Էգոն մեր հաղորդակցության հիմնական արգելակողն է: Եվ, որպեսզի մուտք գործեք Ձեռնադրումների այն Ուղին, որում ես եմ ձեզ խրատում, իրականում ձեզ պետք չէ ամբողջովին ձերբազատվել ձեր Էգոյից, քանի որ առանց Էգոյի՝ առանց ձեր ստորին չորս մարմինների, դուք չեք կարող գոյատևել ձեր աշխարհում: Հարկավոր է միայն, որ ձեր Էգոն ենթարկեցնեք Բարձրագույն Օրենքին. հարկավոր է միայն որ սանձահարեք ձեր մարմնական ցանկությունների ու կրքերի գազանին: Իսկ այդ գազանի վարժեցման գործով արդեն միասին կբաղվենք:

Մեր աշխարհի մասին ձեր պատկերացումը կրնդայնվի, և Ուղով ձեր առաջընթացը կարագանա միայն այն դեպքում, երբ կկարողանաք մշտական ջանքեր գործադրել, որոնք ուղղված կլինեն ձեր կյանքերում Աստվածային դրսևորումների բազմացմանը և ձեր կյանքի դրվածքի համապատասխանեցմանն Աստվածային ձևաչափերի հետ:

Դուք չեք կարող ձեր Ուղով առաջ շարժվել որոշակի շեմից այն կողմ, քանի դեռ չեք ձերբազատվել այն հիմնական թերություններից ու վնասակար սովորություններից, որոնք բնորոշ են մարդկությանը նրա զարգացման ներկա փուլում: Խոսքս ալկոհոլի, թմրանյութերի, նիկոտինի օգտագործման մասին է, կորստվող ռիթմով ժամանակակից երաժշտություն լսելու մասին և այն ցածր թրթռանքներ ունեցող սննդամթերքի մասին, որն իր մեջ նաև միսն է ներառում:

Քանի դեռ չեք ազատվի ձեր կյանքի այդ «հաճույքներից», չեք կարողանա առաջ ընթանալ էվոլյուցիոն ուղով: Քանզի բթացնող նյութերն ու էներգիաներն այնպես են կապկպում ձեր ոտքերը, որ չեք կարողանա քայլել:

Ես ձեր ուշադրությունը չեի կենտրոնացնի նման բաների վրա, եթե մարդկության առջև հրատապ կանգնած չլինեի այդ անկատար դրսևորումներից անհապաղ ձերբազատվելու անհրաժեշտությունը: Դուք շատ եք խոսում ձեր հոգևոր նվաճումների մասին, բայց ձեզնից քանի՞սն են ունակ իրենց կյանքում հետևելու այն վարվելակերպերին ու կենսակերպին, որոնք բավարարում են մեր պահանջներին՝ Համբարձյալ Դասերիս պահանջներին: Ձեզ թվում է, թե շատ բաների եք հասել, շատ բաներ կարող եք ընդունել և հասկանալ ձեր գիտակցությամբ, բայց ես պետք է ասեմ, որ այն ամենի մեծ մասը, ինչը դուք հոգևոր սնունդ եք համարում՝ հոգևոր ուսմունքներն ու հոգևոր գործառնությունները, իրականում նույնպիսի նախահումքեր են, ինչպիսիք գեղեցիկ փաթեթավորված սննդային նախահումքերն են, որոնք դարսված են ձեր խանութների դարակների վրա: Դուք կարող եք և պետք է կարգ ու կանոն մտցնեք ձեր բարոյական և հոգևոր կողմնորոշիչների մեջ: Եվ եթե հաստատակամորեն հետևեք և դուրս մղեք ձեր կյանքից այն ամենն, ինչն Աստվածային չէ, ապա ես երաշխավորում եմ, որ Երկրի բարենպաստ փոփոխությունները երկար սպասեցնել չեն տա: Ամեն ինչ ձեր ձեռքերում է: Եվ հենց դուք եք կարգավորում էվոլյուցիոն ուղով ձեր ընթացքի տեմպերը. նույնիսկ այն տարերային աղետներն եք կարգավորում, որոնք տեղի են ունենում ձեր մոլորակի վրա: Քանզի ցանկացած տարերային աղետ վերջին հաշվով առաջանում են այն բացասական էներգիաներից, որոնց ծնունդ է տալիս մարդկությունը:

Այն ժամանակից ի վեր, երբ մենք սկսեցինք կանոնավորապես ուղերձներ տալ մեր դեսպանորդի միջոցով, ուշադրությամբ հետևում ենք Երկիր մոլորակի թրթռանքների ընդհանուր խորապատկերին: Եվ ինչպես ձեզ առաջ էլ է ասվել, կան այնպիսի տիրույթներ, որտեղ մարդիկ կարդում և ամբողջ սրտով ընդունում են մեր ուղերձները, և կան ամբողջական տիրույթներ, որոնք փակ են մեր էներգիաների համար: Ուստի անհամակշռություն գոյություն ունի, որն ավելի ու ավելի է մեծանում: Եվ եթե հետևեք նորությունների թողարկումներին, ապա մեծագույն հավաստությամբ կարող եք տեսնել, որ զանազան արհավիրքներն ու տարերային աղետներն անհամեմատ ավելի մեծ թիվ են կազմում այն տարածաշրջաններում ու երկրներում, որտեղ չեն կարդում մեր ուղերձները, և որտեղ չկան այն մարդիկ, ովքեր կարող են փոխանցել մեր էներգիաներն ու թրթռանքները:

Որքան էլ ցանկանաք, ձեզ չի հաջողվի շրջանցել Օրենքը: Եվ վաղ թե ուշ ողջ մարդկությունը կհամաձայնի մեր փաստարկներին ու մեր տված Ուսմունքին: Եվ մենք հույս ենք տածում, որ դա տեղի կունենա հնարավորինս արագ:

ԵՍ ԵՄ Մայրերյան՝ ձեր նկատմամբ Միտով

Ամիտաբհա Բուդդա
27 հունիսի, 2008 թ.

Հասել է ժամանակը, որ դրսևորեք Բուդդայի ձեր իսկական էությունը

ԵՍ ԵՄ Ամիտաբհա Բուդդան: Ես հազվադեպ եմ գալիս: Եվ ամեն անգամ, երբ հնարավորություն եմ ունենում բացելու ձեր աշխարհի դուռը, նախ և առաջ ջանում եմ ձեզ տալ այնպիսի պատկերացում, որը ձեզ հնարավորություն կտար դուրս գալու ձեզ համար սովորական դարձած ձեր աշխարհի շրջանակներից: Որովհետև կա ավելի մեծ ինչ-որ բան, դեպի ուր պետք է մղվեք: Եվ այդ մեծ բանը դուք պետք է անեցնեք ձեր սրտերում:

Երբ գալիս եմ ձեր աշխարհ, ես կամենում եմ խրատներ տալ այն բնագավառի վերաբերյալ, որը հրատապ բնույթ ունի մարմնավորվածներից յուրաքանչյուրի համար: Դա այն է, թե ինչ ձևով կարող եք հաղթահարել ձեր կրքերը: Դա այն է ձեր մեջ, որը փոթորկվում է օվկիանոսի պես և խանգարում ձեր մտքի հանդարտեցմանը:

Դուք անկատար եք ձեր դրսևորմամբ: Բայց ժամանակավոր է և՛ անկատարությունը, և՛ հենց ինքը՝ դրսևորումը: Ուստի ձեզ այնպիսի ժամկետ է տրամադրված, որպեսզի հասցնեք ձերբազատվել այն ամենից, որը ձեզ բաժանում է ինձնից, ձեզ բաժանում է Աստծուց:

Ես ձեզ համար հանելուկներով եմ խոսում, բայց դուք կլսեք ինձ: Քանզի այն, ինչ ես ասում եմ, նախատեսված է ձեր ֆիզիկական լսողության համար: Ես խոսում եմ մի լեզվով, որը հասկանալի է ձեր հոգու համար: Իսկ ձեր հոգին հենց ձեր այն մասն է, որն առավել զգայուն է և առավել տրամադրված մեր ազդեցությանը: Ես այժմ խոսում եմ Բուդդաների և Բողոքականների բազմության անունից: Մենք Հիերարխիայի այն ճյուղն ենք, որը պահպանում է Գիտելիքը և նպաստում Աստծո Իմաստության դրսևորմանը չհամբարձված մարդկության գիտակցության մեջ: Մենք ծառայում ենք Երկիր մոլորակի մարդկանց. սակայն որքա՛ն քչերն են ձեզնից գլխի ընկնում, որ մենք գոյություն ունենք:

Մենք խոնարհաբար կատարում ենք մեր պարտքը: Եվ հույսեր ենք կապում այն բանի հետ, որ ձեր մեջ կգտնվեն այնպիսիները, որոնք կորոշեն ընթանալ Բուդդաների ուղով:

Շա՛տ են դեպի Աստված տանող ուղիներն ու կածանները: Եվ այնժամ, երբ մոտենում եք ճամփաբաժանին, որպեսզի ընտրեք ձեր հետագա ուղին, մշտապես հանդարտ ձեզ է մոտենում Բուդդան՝ մեկը մեզնից, և առաջարկում հետևել իրեն:

Մեր ուղին Բարձրագույն Օրենքին լրիվ հնազանդվելու ուղին է: Եվ ձեզնից նա, ով պատրաստ է ընթանալու Բուդդաների ուղով, գիտի, որ այդ ուղով ընթանալը ոչ մի արտաքին տարբերանշան չունի: Ո՛չ Բուդդայի դիմաքանդակը, ո՛չ անուշահոտությունը, ո՛չ զանգուլակները՝ ոչինչ կարևոր նշանակություն չունի, բացի մի բանից. դա ձեր հնազանդությունն է և բոլոր աշխարհներում բնակվող բոլոր կենդանի էակներին ծառայելու ձեր ցանկությունը:

Մենք այցի ենք գալիս ձեզ այն վիճակներին համապատասխան, որոնց դուք ի վիճակի եք հասնելու ձեր ամենօրյա ներխուժումային գործառության ընթացքում*: Ձեզնից նրանք, ովքեր ապրում են մեծ քաղաքներում և հնարավորություն չունեն հասնելու բուդդայական կենտրոններին ու վանքերին, որոշակի դժվարությունների են հանդիպում ներխուժումային գործառություններին տիրապետելու ընթացքում: Դրանք ավանդաբար հայտնի են եղել Տիբեթում, և շատ լամաներ կան, որոնք իրենց աշակերտներին ուսուցանում են այդ գործառությունները: Սակայն ձեր մեջ կան շատ մարմնավորված Բուդդաներ: Մոլորակի համար այս բարդ ժամանակներում շատ Բուդդաներ հանձն են առել մարմնավորվել բյուրեղյա լարով: Նրանցից շատերը չեն էլ գիտակցում, որ իրենք Բուդդա են, և ես եկել եմ այն բանի համար, որ բուդդայական զանգուլակ հնչեցնելով՝ արթնացնեմ նրանց հոգու հիշողությունը:

Քանզի հարկ է, որ մոտենաք ձեր ներքին բնույթը գիտակցելուն: Հասել է ժամանակը, որ դրսևորեք Բուդդայի ձեր իսկական էությունը: Ժամանակ այնքան էլ շատ չկա, և ես եկել եմ մեկ անգամ ևս հիշեցնելու, որ ձեր գործադրած ջանքերում նպատակամղվածություն ու հետևողականություն դրսևորելն այժմ անհրաժեշտ է, ինչպես երբեք:

Բուդդաներին բնորոշ է հենց այն, որ ցանկացած արտաքին հանգամանքների ազդեցությամբ չեն կորցնում այն նպատակը, որի համար իրենք մարմնավորվել են ֆիզիկական աշխարհում: Իրական Բուդդան իր առաքելությունն ի կատար է ածում նույնիսկ այնժամ, երբ հայտնվում է այնպիսի անբարենպաստ պայմանների մեջ, որտեղ շրջապատում եղածներից ոչ ոք երբևէ չի էլ ենթադրում Հիերարխիայի Լույսի էակների, Բուդդաների ու Բողոքականների անտեսանելի գոյությունը:

Ճշմարիտ Բուդդան նույնիսկ լրիվ մթազնամ գիտակցությամբ մարդկանցով շրջապատված լինելու դեպքում հիշում է այն մասին, որ կա Բարձրագույն Օրենք, և հետևում է այդ Օրենքին: Քանզի Բուդդայի էությունը կարմիր թելի պես անցնում է նրա յուրաքանչյուր շարժումով՝ այն ամենով, ինչ անում է և ինչպես է անում:

Ճշմարիտ Բուդդան իրեն չի կապում իր իսկ գործունեության արդյունքի հետ: Նա չի գործում հանուն փողի կամ պատիվների: Ճշմարիտ Բուդդան իրականացնում է Կյանքին իր ծառայությունը նույնիսկ ամենամեղաբարենպաստ արտաքին պայմանների դեպքում: Նա բավարարվում է աղքատիկ սննդով և համեստ հագուստով, բայց նրա հոգու հարստությունը հնարավոր չէ ծածկել և ոչ մի հագուստով: Բուդդայի ոսկե էությունն աչքի է զարնում նրա ամեն մի շարժման, ամեն մի գործողության և ամեն մի խոսքի մեջ:

Շատ քիչ են մարմնավորված Բուդդաները: Եվ դուք նրանցից շատ բան ունեք սովորելու: Ձեր խնդիրն այն է, որ սովորեք գտնել մարմնավորված Բուդդաներին: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ Բուդդան կամ Բողոքական ցնցոտիներով նստած ողորմություն է խնդրում, կողքով հենց այնպես չպետք է անցնեք: Քանզի ձեր հոգևոր մակարդակի մասին կարելի է դատել հենց այն բանով, թե ինչպիսի վերաբերմունք եք ցուցաբերում ներկայումս մարմնավորված Բուդդաների նկատմամբ:

Դուք պետք է գտնեք այդ Բուդդաներին և օգնեք նրանց, որ իրականացնեն Կյանքին իրենց Սպասավորությունը:

Այն դեպքում, երբ գործում եք հանուն ողջ մարդկության, երբ պատրաստ եք ի կատար ածելու ձեր գործերը հանուն այն բանի, որ բոլոր կենդանի էակները երջանիկ լինեն, ապա ձեր այդ անշահախնդիր ծառայության շնորհիվ ինքներդ վերածվում եք Բուդդայի և ունակ եք դառնում ձեր օրինակով փրկելու շատ հոգիների, որոնք ոչինչ չգիտեն Բարձրագույն Օրենքի մասին և երբեք չեն լսել Լույսի այն մեծ Էակների մասին, որոնք Երկրին օգնություն են ցուցաբերում:

Ես այս օրով այցի եկա ձեզ, որպեսզի ձեզնից նրանց, ովքեր Երկրի մարդկությանն անշահախնդիր օգնություն ցուցաբերելու մղումով մարմին են առել, հիշեցնեմ, որ ձեր ժամանակն արդեն հասել է: Իսկ եթե դեռևս մարդկային թուլությունների, սովորությունների ու կրքերի ազդեցության տակ եք, ապա պետք է անհապաղ ձերբազատվեք դրանցից: Քանզի այլևս ժամանակ չկա զբաղվելու դատարկ բաներով, երբ Կյանքի սպասավորությանն ուղղված գործերն անող չկա:

ԵՍ ԵՄ Ամիտաբհան

*Տես Ամիտաբհայի 2005 թ-ի մայիսի 18-ի ուղերձը

Վեհապետ Հիլարիոն
28 հունիսի, 2008 թ.

Հասել է ձեր յուրաքանչյուր գործողության ու արարքի համար հաշիվ տալու ժամանակը

ԵՍ ԵՄ Հիլարիոնը՝ հինգերորդ ճառագայթի Տիրակալը՝ ձեզ այցի եկածը: Եկել եմ այս օրով և կուգենայի, որ մեր ուղերձները ձեր կյանքում կիրառելիս գործադրեիք այն ջանքերի գոնե մի չնչին մասը, որոնք մեր գալստյամբ մենք ներդնում ենք մեր ուղերձների մեջ:

Ահա ես եկել եմ, և մեր հանդիպումը կկայանա Երկնքի անսահման ողորմածության շնորհիվ: Քանզի երկնային ուժերը պատրաստ են վիթխարի զոհողությունների, որպեսզի Երկրի մարդկության գիտակցությունն արթնանա:

Դուք կարծում եք, թե ձեր գործադրած ջանքերը բավարար են, որպեսզի ֆիզիկական ոլորտում վիթխարի բարեփոխումներ իրականանան: Ես եկել եմ, որպեսզի ձեզ ասեմ հակառակը: Ավա՛ղ, դուք չեք գործադրում նույնիսկ հազարերորդական մասն այն ջանքերի, որոնք պետք է գործադրեիք:

Ես հաճախ եմ հանդիպում այնպիսի անհատների, որոնք ծանր հիվանդությունների բեռով մոտենում են ինձ և ապաքինում խնդրում: Նուրբ ոլորտում ես հանդիպում եմ նրանցից յուրաքանչյուրին և մանրակրկիտ կերպով բացատրում այն պատճառները, որոնք հանգեցրել են հիվանդության: Եվ միայն այն բանից հետո, երբ հոգին գիտակցում է, որ իր տկարությունը պայմանավորված է Աստծո էներգիայի սխալ օգտագործմամբ և այն գործողություններով, որոնք տվյալ անհատը թույլ է տվել ինչպես իր ընթացիկ կյանքի, այնպես էլ վաղեմի մարմնավորումների ընթացքում, մենք համատեղ հանգում ենք եզրակացության, թե որն է առավել ընդունելի տվյալ հոգու համար՝ կյանքի նույն պայմաններում մնալով նա իր ախտերի բուժումը ստանա, թե՛ անցում կատարի և նորից ծնվի, որպեսզի հնարավորություն ունենա շտկելու անցյալի իր սխալ արարքները:

Դուք ձեր հոգու մակարդակով մշտապես գիտեք, թե ինչ կարող եք անել և պետք է անհամեմատ ավելի շատ բան անեք, քան իրապես անում եք: Դուք զգում եք, որ շատ սխալներից կարելի էր և խույս տալ: Բայց անընդհատ՝ մարմնավորումից մարմնավորում, ընթանում եք նույն արատավոր շրջագծով: Ինչու՞ ... Դեռ որքա՛ն եք պատրաստվում մեկը մյուսի հետևից սխալներ թույլ տալ. արդյոք չե՞ք կարող վերջ տալ անհաջող մարմնավորումների հերթագայմանն ու կրկնվող սխալներին:

Իհարկե, կարո՞ղ եք: Եվ երկնային ուժերն էլ հաճույքով կօգնեն ձեզ, որպեսզի դուրս պրծնեք սխալների ու անհաջողությունների արատավոր շղթայից: Համբարձյալ Վեհապետներից յուրաքանչյուրը պատրաստ է ուրախությամբ ձեզ օգնության հասնելու և ցուցաբերելու հնարավոր ամբողջ օգնությունը:

Սակայն դուք օգնություն եք խնդրում միայն ծայր աստիճան վիատվելուց հետո, երբ ծանր հիվանդությունն ու դժբախտությունն են ձեզ այցի գալիս: Բայց հենց որ բացասական էներգիայի

մամլիչն իր ճնշումը մի փոքր թուլացնում է, դուք նորից ցած եք սահում այն նույն վտանգավոր արահետով, որը ձեզ տանում է դեպի տառապանքների ու դժբախտությունների անդունդը:

Եվ, որքան էլ մենք ջանք ենք թափում ու կանչում ձեզ դեպի լեռնագագաթները, դուք կրկին պոկվում ու վարվում եք ձեր ուզածով: Իսկ եթե ինքներդ ձեզ ու ձեր արարքները հանկարծ կողքից դիտեիք, ապա կգարմանայիք, թե որքան անպատասխանատու ձևով եք վարվում: Եթե վայրկյանի մի կարճ պահով ձեզ համար բացվեր ձեր առողջական վիճակի, ձեզ հետապնդող դժբախտությունների և ձեր արարքների, ձեր կողմից օր օրի հրահրվող գիտակցության բացասական վիճակների միջև եղած պատճառահետևանքնային կապը, ապա ակնթարթորեն կզգայիք ձեր խավարում թափառելու ողջ անիմաստությունն ու կձգտեիք գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի դուրս գաք այն ուղու վրա, որից պարզորոշ երևում է աստվածային գիտակցության գագաթը:

Մակայն ձեր ստեղծած կարման երբեմն ձեզ թույլ չի տալիս անգամ մտածել, որ դուք կարող եք և սխալ լինել: «Ինչպե՞ս կարող է սխալվել ամբողջ այն հասարակությունը, որում մենք ապրում ենք», - հարցնում եք ինքներդ ձեզ: Չէ՞ որ ձեր շրջապատում բոլորը նույն կերպ են վարվում. բոլորը ձգտում են փող վաստակել, որպեսզի հագուրդ տան իրենց ցանկություններին ու կրքերին:

Հարկ չկա, որ ուշադրություն դարձնեք այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է: Ձեզ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել միայն ձեր ներքին կողմնորոշիչներին: Դուք պետք է ձեզ համար հնարավոր դարձնեք ձեր սրտի, ձեր բարձրագույն Ես-ի ու խղճի հետ զրուցելը և կյանքում վարվեք միայն այնպես, ինչպես թելադրում է ձեր ներսում հնչող մեղմ ներքին ձայնը: Քանզի ձեր բարձրագույն Ես-ն ու հոգին մշտապես գիտեն, թե ինչպես ճիշտ կլինի, որ վարվեք կյանքի այս կամ այն իրադրությունում: Մակայն դուք գերադասում եք նմանակել այն վարվելաձևերը, որոնք տեսնում եք հեռատեսիլով կամ ձեր անմիջական շրջապատում:

Գիտակցեք, որ ձեր հասարակությունը հիվանդ է: Ուստի ինքներդ պետք է ձեզ մեկուսացնեք ձեր հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպերից:

Սովորաբար, որպեսզի վարակը ձեզ չհասնի, դուք որոշակի միջոցներ եք ձեռնարկում և ձեզ հեռու եք պահում վարակիչ հիվանդություն ունեցող հիվանդից: Ահա ես ասում եմ ձեզ, որ ձեր հասարակությունը հիվանդ է, և, որպեսզի առողջ պահեք ինքներդ ձեզ ու ձեր ընտանիքը, անհրաժեշտ է, որ մեկուսանաք այն վնասաբեր դրսևորումներից, որոնք առկա են ձեր ֆիզիկական աշխարհում:

Նույնիսկ այն դեպքում, երբ անխոհեմաբար միացնում եք հեռուստացույցը, ինքներդ ձեզ և, որ հատկապես ցավալի է, նաև ձեր երեխաներին, ենթարկում եք ոչ ամենալավ վարվելակերպերի ազդեցությանը: Եվ գիտակցորեն կամ ոչ այնքան գիտակցորեն ձեր առջև բացում եք աստեղային ոլորտի դուռը, որով անմիջապես ձեր բնակարանն են ներխուժում ձեր շուրջը եղած չարամիտ էությունները, քանի որ ձգվում են դեպի իրենց համահունչ թրթռանքների կողմը, որոնք ձեր աշխարհ են թափանցում մասնավորապես նաև հեռուստատեսությամբ:

Դուք մարտաֆիլմ եք դիտում, և ձեր բնակարանը լցվում է արյունարբու էակներով: Մարսափի ֆիլմ եք դիտում և դրանով իսկ դուռ եք բացում է՛լ ավելի ահավոր հրեշների ու դիվային էակների առջև: Գերադասում եք պոռնոգրաֆիական ֆիլմ դիտել և ներս եք հրավիրում այնպիսի էակների խառնամրդիսի, որոնք պատրաստ են սնվելու ձեր ցածրակարգ կրքերով ու բնագոյներով:

Ձեր աշխարհում չկա որևէ բան, որ հետևանք չթողնի: Ամեն մի գործողություն իր հետևանքն է ծնում: Եվ երբեմն ձեր անցյալի ցածրորակ արարքների հետևանքներն ի հայտ են գալիս բառացիորեն անմիջապես ձեր աչքի առաջ, երբեմն էլ տասնամյակներ են անցնում, մինչև որ դրանք դրևորվում են հենց այն պահին, երբ արդեն հրաժարված եք լինում ձեր նախկին բացասական սովորություններից ու հաճույքներից:

Արդ, երբեք մեղքը մի՛ գցեք ուրիշների վրա: Մտածեք միայն այն մասին, թե ինչպե՞ս պաշտպանեք ձեզ ու ձեր էությունը սխալ վարվելաձևերի ազդեցությունից: Եվ այնժամ, երբ ջանք թափելով քայլ առ քայլ կրնա՞նք ճիշտ ուղղությամբ, ոչ մի Համբարձյալ Վեհապետ չի հրաժարվի ձեզ օգնելուց: Ես ինքս անձամբ կմոտենամ ձեզ և կցուցաբերեմ այն օգնությունը, որը հնարավոր է ցուցաբերել ի շահ ձեզ ու ձեր հոգուն:

Մտահոգվեք հատկապես ձեր երեխաների համար: Տվեք նրանց այն բանի ըմբռնումը, որ ձեր աշխարհում առկա է անկատարություն, որ ձեր աշխարհը բարու և չարի, լույսի և խավարի խառնուրդ է: Այլ կերպ ասած՝ ձեր աշխարհը հիվանդ է: Եվ ինքներդ ձեզ ու ձեր աշխարհը հենց ինքներդ կարող եք բուժել, եթե սկսեք ձեր կյանքում առաջնորդվել այն հանձնարարականներով, որոնք մենք ենք տալիս՝ խրատներ տալու նպատակով այդքան դժվարությամբ թափանցելով ձեր աշխարհ:

Ես կմաղթեի բոլոր սրտերին, որ այսօրվա իմ ուղերձը նրանց մղի ճշմարիտ արարքների և ստիպի մտորել այն գործողությունների մասին, որոնք ամեն օր ի կատար են ածվում չմտածված կերպով:

Հասել է ձեր յուրաքանչյուր գործողության ու արարքի համար հաշիվ տալու ժամանակը:

ԵՍ ԵՄ Հիլարիոնը՝ ձեր հոգիների համար հոգածությամբ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

29 հունիսի, 2008 թ.

**Եզրակացությունը, որին կհանգեք այս գրույցից հետո,
հնարավոր է, որ դառնա ձեր ամբողջ մարմնավորման ամենակարևոր քայլը**

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ: Իմ ներկայությունը քո ներսում հնարավոր առավելագույնն է, որպեսզի փոխանցվի այն ամենն, ինչ անհրաժեշտ է:

Իմ ներկայությունը քո ներսում հնարավորինս ամբողջական է, որպեսզի փոխանցվեն ոչ միայն խոսքերը, այլ նաև էներգիա:

Ի՞նչ բան է էներգիան, որը փոխանցվում է թելադրության ընթացքում: Դա շրջակայքի վիճակի այն փոփոխությունն է, որը տեղի է ունենում չակրաների աշխատանքի շնորհիվ: Չակրաների առավելագույն չափով բաց լինելը նպաստում է օկտավաների միջև էներգիաների առավելագույն փոխանակությանը: Եվ այն դեպքում, երբ չակրաներն առավելագույն չափով փոխանցում են Աստծո էներգիա, Լույս է իջանում ուղերձների ընդունման վայրի շուրջ՝ շատ կիլոմետրեր կազմող շրջագծով: Եվ Լույսի այդ էջքն ունակ է ժամանակի ընթացքում տարածությունից նոր հնարավորություններ քաշելու:

Երկրագնդի վրա որևէ վայրի թրթռանքների փոփոխությունը հենց նման ձևով է տեղի ունենում: Գտնվում է այն մարդը, որն ունակ է դառնալու Աստծո էներգիայի փոխանցիչ, և նրա միջոցով տեղի է ունենում այն վայրի թրթռանքների փոփոխությունը, որտեղ նա ապրում է: Հետագա ժամանակի ընթացքում այդ վայրը դեպի իրեն է ձգում այն մարդկանց, որոնք համանման թրթռիներ ունեն: Այդ ձևով է կերտվում պատմությունը: Երբեմն այդ ձևով է կերտվում նաև ամբողջ մի ազգի ճակատագիրը:

Բարձր թրթռանքի ի հայտ գալով մոլորակը համահունչ է դառնում Բարձրագույն աշխարհների հետ: Եվ այդ վայրում ձևավորվում է Բարձրագույն աշխարհի հետ ներդաշնակ տարածք: Եթե միայն մեկ մարդն ունակ է իր շրջակա տարածությունը լցնելու Լույսով, ապա կարելի է պատկերացնել, թե որքան արդյունավետ կլինեն ֆիզիկական ոլորտի բարեփոխությունը, եթե միաժամանակ շատ լուսակիրներ ծառայեին որպես Աստծո էներգիայի փոխանցիչներ:

Համբարձյալ Դասերը նպատակամղված են հենց այն բանին, որ Երկրի վրա ստեղծվեն այնպիսի բնակավայրեր, որոնցում հաստատվեին վարքի ու բարոյականության նորմերի նույնպիսի չափորոշիչները, ինչպիսիք կային այն հինավուրց ժամանակներում, երբ մարդկությունը դեռ իր մանկահասակ տարիքում էր և դեռ մեղք չէր ճանաչել:

Հիմա հասել է այն ժամանակը, երբ մարդկությունը գիտակցորեն պետք է վերադառնա թրթռանքների այն մակարդակին, որից սկսել է իր անկումը:

Եվ բանն այն չէ, որ անկումն իր մեջ չարն էր պարունակում: Անկումը մարդկության պատմության այն փուլն էր, որն արդեն անցյալում է: Այդ փուլի շնորհիվ մարդկությունը կարողացավ ճանաչել ինքն իրեն: Եվ այդ փուլի շնորհիվ մարդկությունը ստացավ իր գիտակցությունը զարգացնելու խթան:

Հիմա արդեն քիչ բան է մնում: Հարկավոր է գիտակցորեն՝ զգալով Էփոյուցիոն անհրաժեշտությունը, վերադառնալ գիտակցության այն մակարդակին, որն Ադամն ու Եվան ունեին նախքան անկումը՝ նախքան այն պահը, երբ տեղի ունեցավ թրթռանքների իջեցումը:

Վրա է հասել այն փուլը, երբ մարդկության գիտակցությունը պետք է աճի և հասնի այն մակարդակին, որից տեղի կունենա ամբողջ այն էներգետիկական շերտի թրթռանքների բնականոն բարձրացումը, որի վրա այժմ խարխալ է նետել Երկրի մարդկային քաղաքակրթությունը: Որքան ավելի սահուն ու հավասարաչափ տեղի ունենա այդ գործընթացը, այնքան ավելի մեծ քանակությամբ մարդկային անհատներ կշարունակեն իրենց զարգացումը նոր էներգետիկական մակարդակի վրա: Ուստի և այժմ բառացիորեն ճակատամարտ է ընթանում յուրաքանչյուր հոգու համար:

Կան հոգիներ, որոնք պատրաստ են հետագա Էփոյուցիոն զարգացմանը, և կան նաև այնպիսիները, որոնք հրաժարվում են ընթանալ Էփոյուցիոն ուղով:

Հատիկը որոմից ջոկելու գործը մարդկային գիտակցության ուժի բանը չէ: Որովհետև մարդկային գիտակցությունը մարդ-անհատի զարգացածության մասին դատում է դրամի և նյութական հարստությունների այն քանակով, որին նա տիրում է:

Աստվածային տրամաբանությունը ոչ մի ընդհանուր բան չունի մարդկային տրամաբանության հետ: Աստծո համար բոլորը հավասար են՝ և՛ հարուստը, և՛ աղքատը, և՛ խելապակասը, և՛ ինտելեկտուալ առումով ամենագարգացած անհատը: Բոլորը հավասար են Աստծո առաջ: Եվ երբ վրա կհասնի այն ժամը, որի մասին գրված է բոլոր սուրբ գրքերում, տեղի կունենա այն, ինչ դատաստան է անվանվել: Կամ՝ հատիկը որոմից ջոկել: Եվ բոլորը կդատվեն իրենց արածներին համապատասխան: Եվ եթե կյանքից կյանք, մարմնավորումից մարմնավորում ձեր միակ շարժառիթը եղել է փառքի, հարստության ու պատիվների հասնելը, եթե ամեն ինչ արել եք, որ վեր ելնեք ձեր մերձավորների հաշվին, ապա հազիվ թե պիտանի համարվեք հետագա Էվոյուցիայի համար: Իսկ եթե ձեր վերջին կտոր հացը կիսել եք դրա կարիքն ունեցողի հետ, եթե մտածել եք ոչ թե ձեր, այլ ընդհանուր գործի համար, եթե գործել եք հանուն Համընդհանուր Բարիքի և ոչ թե ձեր փորի համար, ապա այն աստվածային հատկանիշները, որոնք այդ ընթացքում ձեռք եք բերել, բավարար կճանաչվեն, որպեսզի ձեր հոգին շարունակի իր Էվոյուցիան նոր էներգետիկական մակարդակով:

Ոչ որ չգիտե այն ժամը, երբ տեղի կունենա Դատաստանը: Ուստի մշտապես զգուշացվում է, որպեսզի պատրաստ լինեք:

Քանզի ձեր հոգիների նախապատրաստումը ոչ թե տեղի է ունենալու ինչ-որ հեռավոր ժամանակներում, այլ լրիվ ընթացքով տեղի է ունենում արդեն հենց հիմա:

Մանր վրիպումներն ու սխալները նշանակություն չունեն: Նշանակություն ունի անհատի մղումների ուղղվածությունը: Եվ ձեզնից ոմանք շատ կգարմանան, երբ ջոկելու գործն արդեն ավարտված կլինի: Քանզի նրանք, ովքեր, ձեր կարծիքով, ձախողակ ու ոչ մի բանի պետք չեկող մարդիկ էին համարվում, կքայլեն թանկարժեք քարերով զարդարված սպիտակ զգեստներով: Իսկ նրանք, ովքեր երկրային կյանքում էին շքեղ հագուստներ կրում և իրենց մատները զարդարում ադամանդներով, հազիվ թե մուտք գործեն այն Արքայությունը, որը շուտով կլինի:

Այսօր շատ կարևոր գրույց կայացավ: Եվ այն եզրակացությունը, որին կհանգեք այս գրույցից հետո, հնարավոր է, որ դառնա ձեր ամբողջ մարմնավորման ամենակարևոր քայլը:

Այս ուղերձը նպատակ ունի դրդելու հոգիներին, որ փոխեն հասարակության մեջ ընդունված չափորոշիչների նկատմամբ ունեցած իրենց հայացքները:

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ՝ միշտ ձեզ հետ ձեր Ճանապարհին

Վեհապետ Էլ Մորիա*

30 հունիսի, 2008 թ.

**Պահանջվում է բոլոր ուժերի համախմբում,
պահանջվում են կոնկրետ գործողություններ,
պահանջվում են ձեր օժանդակությունն ու մասնակցությունը...**

ԵՄ ԵՄ Էլ Մորիան՝ կրկին ձեզ այցի եկածը: Ինչպես միշտ, այսօրվա գրույցի թեման կլինի այն հավերժական Ուսմունքը, որը դուք յուրացնում եք Ուղով ընթանալիս:

Յուրաքանչյուր նոր խոսք ձեզ այնպես է տրվում, որ չխախտվի ձեր ներքին տարածքի ներդաշնակությունը: Այն դեպքերում, երբ պատրաստ եք լինում մեր Ուսմունքն ընդունելուն, մենք գալիս ենք, որպեսզի այն մատուցենք ձեզ: Սակայն միշտ չէ, որ մեզ հաջողվում է գալ այն ժամանակ, երբ դրսևորում է ձեր պատրաստվածությունը: Քանզի ձեր աշխարհի ունայնությունը ծանրաբեռնում է ձեզ և թույլ չի տալիս, որ մոտենաք ձեր սրտին: Ուստի մենք շատ աստիճանական կարգով ենք փորձում շրջել ձեր գիտակցությունը դեպի հինավուրց Ճշմարտությունները գիտակցելու կողմը:

Անցնում են մարդկանց նորանոր սերունդները, և միայն մի քանիսն են գրադարանների դարակներում փնտրում հինավուրց Ճշմարտությունը: Մարդկանց մեծ մասն, ամբոխ կազմած, գնում է այն կողմ, ուր թվացյալ ուրախություն է և կյանքի տոնի պատրանք:

Մենք ձեզ բոլորովին այլ ուղղությամբ ենք կանչում: Բայց հազվագյուտ են նրանք, ովքեր կանգ են առնում և ականջալուր լինում մեր խոսքերին:

Եվ որքան քիչ են մեր այն աշակերտները, որոնք կյանքի բոլոր հանգամանքներում պատրաստ են ընթանալու արդեն մեկ անգամ ընտրված ուղղությամբ. նրանք, որոնք առաջ են ընթանում, և Ուղու ոչ մի արգելք ու խոչընդոտ չեն կարող կանգնեցնել մեր ամենամոլորված աշակերտներին:

Շատերին թվում է, թե իրենք արդեն հասու են դարձել աստվածային գիտության բոլոր գաղտնիքներին: Սակայն երբ բախվում են Ուղու հենց առաջին խոչընդոտին, ակնթարթորեն մոռանում են իրենց աստվածային նվաճումները և անիծում արար աշխարհը, որ նման արգելքի են հանդիպել:

Ուստի մենք կրկին ու կրկին գալիս ենք, որպեսզի որոնենք ու գտնենք մեր այն աշակերտներին, որոնց չեն վրդովեցնի Ուղու խոչընդոտները. գտնենք նրանց, որոնք կկատարեն իրենց վերցրած պարտավորությունները՝ անկախ բոլոր արտաքին հանգամանքներից:

Այն դեպքերում, երբ գտնում ենք մեկին, որն իրապես պատրաստ է ընթանալու մեր Ուղով, մենք թեթևացած շունչ ենք քաշում, քանի որ իրապես նվիրված աշակերտ գտնելը նույնպիսի հազվադեպ երևույթ է, ինչպիսին ամառվա կեսին ձյուն գալը:

Մենք հույս ենք տածում, որ այն բոլոր խոչընդոտները, որոնք այժմ ձեր կյանքերում հանդիպում են, դուք կընդունեք խոնարհությամբ: Ամեն ինչ անցողիկ է, և բոլոր խոչընդոտները միայն այն բանի համար են, որ մարգեն ձեր հոգու մկանները:

Այն դեպքում, երբ ունակ եք դառնում մեզ ծառայելու բոլոր արտաքին հանգամանքների պայմաններում, դուք վեր եք բարձրանում ձեր գիտակցության այն աստիճանի վրա, որում անկախ եք դառնում արտաքին հանգամանքներից:

Արտաքին հանգամանքներից և ուրիշ մարդկանց կարծիքից կախված չլինելը ձեռնադրումների այն աստիճանն է, որի վրայից արդեն երևում է աստվածային գիտակցության գագաթը: Երբ մեր աշակերտները հասնում են իրենց զարգացման այդ աստիճանին, նրանց համար հնարավորություն է բացվում, որ ծառայեն Համբարձյալ Վեհապետների անմիջական ղեկավարությամբ: Նրանցից շատերը պարզապես իմանում են, թե ինչ պետք է անեն, շատերն էլ մեր գործերն անելու իրենց ներսում ծագած ցանկությունն ընկալում են որպես իրենց Բարձրագույն Ես-ի ցուցում: Բայց կան և այնպիսիները, որոնք գիտեն նույր ոլորտի իրենց Ուսուցչին և նրա հետ անխզելի կապ են պահպանում ոչ միայն մի կյանքի ընթացքում, այլ նաև կյանքից կյանք, մարմնավորումից մարմնավորում:

Այդպիսիներին մենք շատ թանկ ենք գնահատում: Եվ երբ նման անհատը պատրաստվում է մարմնավորվելու, մենք գիտենք, որ նրան կարելի է վստահել, որովհետև փորձառություն ունի գործելու ինչպես մեր, այնպես էլ իր իսկ Բարձրագույն մասի ցուցումների համաձայն՝ անկախ բոլոր այն պայմաններից, որոնք կշռապատեն նրան մարմնավորման ընթացքում:

Այժմ մեր առջև խնդիր է դրված հավաքելու մեր նվիրյալ սպասավորներին, որպեսզի նրանք կարողանան համախմբել իրենց ուժերը համատեղ գործելու համար: Այդ նպատակով մենք մեր կանչն ենք հղում մեր դեսպանորդի միջոցով:

Պահանջվում է այն բոլոր լուսակիրների ուժերի համախմբումը, որոնք աշխարհ են եկել այս բարդ ժամանակներում: Ֆիզիկական ոլորտում կոնկրետ պլաններ իրագործելու համար ջանքերի համախմբում է պահանջվում: Պահանջվում է խոսակցություններից ու քննարկումներից անցում կատարել այն կոնկրետ պլանների իրագործմանը, որոնք նույր պլանում վաղուց գոյություն ունեն, բայց մեր աշակերտների՝ իրարից կտրված լինելու պատճառով դեռևս չեն իրականացվում Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում:

Միայն նրանք, ովքեր մեր կողմից պատրաստություն են անցել և պատրաստ են դիմագրավելու ամենաբարդ արգելքներին, կարող են դառնալ այն առաջամարտիկները, որոնց հետևից ավելի հեշտությամբ կընթանան մյուսները՝ նրանք, որոնք դեռ լի են կասկածներով և համապատասխան ձեռնադրումներ չեն անցել: Մենք լայնորեն հայտնում ենք մեր պլաններն ու պահանջները, որպեսզի մեր բոլոր աշակերտները կարողանան արձագանքել դրանց և ձեռնամուխ լինեն այն նոր գործերին, որոնք մեր դեսպանորդի միջոցով մտադրվել ենք իրականացնել Երկրի վրա:

Դեռ առաջին քայլերն են ձեռնարկվում հարկ եղած ուղղությամբ: Ուստի շատ կարևոր է նոր հարաբերությունների ծիլերը չտրորելը և շարժման ամենասկզբում ճիշտ ուղենիշներ դնելը:

Կարիք չկա շատ երկար կանգ առնել հակասությունների վրա: Քանզի այնժամ, երբ գործում եք և շարժման ընթացքում լուծում ընթացիկ հարցերը, ավելորդ քննարկումների անհրաժեշտությունն ինքնաբերաբար վերանում է: Դեպի Համընդհանուր Բարիքը, Բարին ուղղված իրական գործողությունները կարող են հենց իրենք ճշգրիտ կողմնորոշիչ ծառայել քառսի աշխարհում: Ֆիզիկական ոլորտում միայն այնտեղ է ճշմարտությունը, որտեղ առկա է նոր ցուցանմուշ: Իսկ այնտեղ, որտեղ միայն դատարկ ու երկար խոսակցություններ են և քննարկումներ, ճշմարտություն չկա:

Ուստի մենք մատնանշում ենք այն հանգամանքը, որ ժամանակն արագացել է, և թանկ է ձեր մարմնավորման յուրաքանչյուր րոպեն: Ամեն րոպեն կարելի է հազեցնել իրական իմաստով և էներգիան հատկացնել ֆիզիկական ոլորտում այնպիսի ցուցանմուշների ստեղծմանը, որոնք կարելի կլինի բազմացնել և տարածել ողջ աշխարհով մեկ:

Պահանջվում է բոլոր ուժերի համախմբում, պահանջվում են կոնկրետ գործողություններ, պահանջվում են ձեր օժանդակությունն ու մասնակցությունը...

Ես չգիտեմ, թե էլի ի՞նչ խոսքեր գտնեմ և ասեմ ձեզ, որ վերջապես արթնանաք քաղցր քնից և վճռեք ջանք թափել կոնկրետ գործերի վրա, որպեսզի աստվածային կերպեր ստեղծեք ֆիզիկական ոլորտում:

Նորից ու նորից եմ կրկնում, որ ձեր տարածայնությունները որևէ նշանակություն չունեն: Հարցեր քննարկելու ժամանակ չկա, երբ ամենուրեք մոլեգնում է մարդկային կրքերի հրդեհը: Պահանջվում են միահամուռություն և հստակ գործողություններ: Այն, ինչը կարելի է փրկել և տեղափոխել Նոր Աշխարհ, պետք է փրկվի հենց հիմա:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

*Ուղերձը տրվել է Էլ Մորիայի կողմից՝ Սանատ Կումարայի և Հաութամա Բուդդայի ներկայությամբ

Վեհապետ Էլ Մորիա
1 հուլիսի, 2008 թ.

Պահանջվում է հենց հիմա վեր կենալ և կատարել Եղբայրության գործերը

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ ձեզ այցի եկածը:

Այսօր ես պատիվ ունեմ գալու և տեղեկացնելու, որ թելադրությունների այն շրջանը, որը մենք վարեցինք Կարմայական Վարչության նիստի ու ամառային արևադարձի այս օրերի ընթացքում, ավարտված է:

Մենք թելադրությունների ամառային շրջան չէինք պլանավորել, սակայն հանգամանքները դասավորվեցին բարենպաստ ձևով, և մենք կարողացանք մեր էներգիաները փոխանցել ֆիզիկական ոլորտ:

Ինչպես միշտ, ես տխուր եմ, որ բաժանվում ենք: Սակայն մենք շատ լավ ենք հասկանում, որ ֆիզիկական ոլորտում այժմ ծավալվում են ամենագլխավոր իրադարձությունները, և այն բանից, թե մոտակա ժամանակում որքանով կկարողանանք իրագործել մեր մտահղացածը, կախված է Երկիր մոլորակի էվոլյուցիայի տառացիորեն ողջ հետագա ընթացքը: Եվ, հավատացե՛ք ինձ, սրանք միայն գեղեցիկ խոսքեր չեն:

Մենք կուզենայինք վերջապես ֆիզիկական ոլորտում Լույսի կիզակետ ձեռք բերել՝ մի վայր երկրագնդի վրա, որտեղ ձեզնից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում կարողանար օրը ցերեկով տեսնել մեզ՝ Համբարձյալ Վեհապետներին, և գրուցել մեզ հետ: Եվ ես ձեզ խոստանում եմ, որ այն առաջին Համբարձյալ Վեհապետը կլինեմ, որը ֆիզիկական ոլորտում՝ մեր դեսպանորդի աշրամում, կդրսևորի իր ներկայությունը:

Այն ամենը, ինչ հիմա անհավանական է թվում, մոտ ապագայում կիրագործվի:

Հենց որ մեզ հաջողվի երկրագնդի որևէ վայրում հենակետ ունենալ, մենք կկարողանանք ակնթարթորեն մեր թրթռանքները տարածել բոլոր այն վայրերում, որոնք ամենամաքուրն են: Եվ սկիզբ կառնի մեր երթը Երկիր մոլորակի վրայով:

Մինչև այդ իրադարձություններն ընկած ժամանակը կկրճատվի շնորհիվ այն ջանքերի, որոնք հենց հիմա լուսակիրները պատրաստ են գործադրելու: Մենք չենք սպասի, մինչև արթնանան բոլոր լուսակիրները. մենք անհապաղ կսկսենք գործել նրանց հետ, ովքեր արդեն արթուն են և պատրաստ են գործելու մեր անմիջական առաջնորդությամբ: Հետ մնացածներին սպասելու ժամանակ այլևս չկա: Պահանջվում է հենց հիմա վեր կենալ և կատարել Եղբայրության գործերը: Իսկ նրանք, ովքեր դեռ պատրաստ չեն, ովքեր չեն կարողանում ազատվել իրենց հողին գամող հին ուղեբեռից, թող դժգոհեն միայն իրենցից:

Մենք լայնորեն տեղեկացրել ենք մեր պլանների և օրվա մեր պահանջների մասին: Եվ նրանք, ովքեր պատրաստ են, ովքեր մեր առաջին իսկ կանչով ոտքի են ելել և կանգնել մեր դրոշի տակ, արդեն սկսել են իրենց հաղթական երթը դեպի իրենց անձնական Հաղթանակն ու մեր ընդհանուր Հաղթանակը: Քանզի նրանք տարբերություն չեն դնում մեր և իրենց սեփական գործերի միջև: Մենք բոլորս մի ընդհանուր գործ ենք անում մոլորակի և ապագա Կյանքի համար:

Եվ եթե այն չանենք հենց հիմա, ապա նույնիսկ չեմ ուզում մտածել այն մասին, թե այդ դեպքում ինչպիսի ահավոր հեռանկար կբացվի մոլորակի համար:

Մենք պարտավոր ենք օգտվել տիեզերական այն հնարավորությունից, որն այժմ ընձեռված է: Կարմայական Վարչության և Մեծ Կենտրոնական Արևի բարեհաճությունը մեր կողմն է: Ուստի

մենք զարմանում ենք, թե ինչու՝ են ձեզնից ոմանք դեռևս հապաղում և անճարակություն ցուցաբերում ամեն ինչում:

Մենք ազդարարել ենք այն խնդիրները, որոնք մոտ ապագայում պետք է լուծում ստանան: Մեզ ֆիզիկական ոլորտում կիզակետ է պետք ունենալ, որը որպես ցուցանմուշ կծառայեր բոլոր նրանց համար, ովքեր մտադիր են ֆիզիկական ոլորտում ի կատար ածել Վեհապետների գործը:

Մենք չենք սպասի, մինչև դուք հրաժարվեք ձեր հին սովորություններից և ձերբազատվեք ձեր հին կապվածություններից: Լույսի մարտիկները չունեն և չեն կարող որևէ կապվածություն ունենալ:

Սակայն ես ձեզ պետք է զգուշացնեմ հետևյալի մասին. այն դեպքում, երբ շուտափույթ սլանում եք մեր կանչով, հարկ է մի պահ կանգ առնել և հարց ուղղել սեփական սրտին՝ արդյոք չե՞մ փախչում դժվարություններից. արդյոք Եղբայրության գործի անվան տակ թաքնվելով՝ մի կողմ չե՞մ դնում կարմայական պարտքերս:

Հավատացե՛ք ինձ և Երկրի մարդկության հետ աշխատանքի իմ փորձին. ձեզնից ոչ մեկին չի հաջողվի շրջանցել Կարմայի Մեծ Օրենքը: Եվ քանի դեռ չեք համակշռել ձեր կարմայի անհրաժեշտ տոկոսը, ունակ չեք լինի ծառայելու Եղբայրությանը: Քանզի դեպի մեզ ուղղված ձեր յուրաքանչյուր քայլը կգուգակցվի կարմայական բեռից ազատվելու անհրաժեշտության հետ: Եվ եթե սկզբնական շրջանում շատ արագ հեռու փախչեք ձեր կարմայական խնդիրներից, ապա, երբ սկսեք ձեր ծառայությունը մեր դեկավարությամբ, ձեր կարման այնպիսի արագությամբ կվերադառնա ձեզ, որ չեք հասցնի դիմակայել մեկը մյուսին հաջորդող կարմայական իրավիճակներին: Եվ եթե կարմայական այն բեռը, որի տակ կքա՞ծ եք, չափազանց ծանր է, ապա որոշ ժամանակ անց գլխահակ կվերադառնաք ձեր հարագատ օրրանը և մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտն այդպես էլ գլխի չեք ընկնի, թե ձեզ հետ ի՞նչ կատարվեց...

Ուստի շտապել պետք է, բայց պետք է նաև ուշադիր վերլուծել ձեր պատրաստ լինելու աստիճանը:

Երբեմն հավասարակշռվածությունն ու գործողությունների կշռադատվածությունն անհամեմատ ավելի կարևոր են լինում, քան շտապողականությունն ու արագությունը:

Մշտապես հարկավոր է գնահատել իրավիճակը: Չկան նույնատիպ դեղատոմսեր բոլորի համար: Ամեն մեկն ունի իր կարմայական դրությունը, ուստի տարբեր են նաև հանձնարարականները: Ուրեմն շտապե՛ք՝ չշտապելով: Դա ձեզ համար ճիշտ ցուցում կլինի, որ դրանով առաջնորդվեք ձեր կյանքում:

Մեր հին ու նվիրյալ աշակերտները հրաշալի գիտեն և շատ լավ են հասկանում, թե ինչի մասին եմ խոսում: Քանզի երբեմն ավելի լավ է ամեն ինչ ուշադիր կշռադատել, քան թե գլխահակ հետ դառնալ. երբեմն էլ, երբ իրավիճակն այլ է, հենց պետք է ամեն ինչ թողնել և վազել առաջին իսկ կանչով, քանի որ երկրորդ անգամ էլ կանչ չի լինի:

Ես խոստանում եմ ձեզ խրատ տալ ընտրություն կատարելու ժամանակ, եթե խնդրանքով դիմեք ինձ: Միայն թե, երբ խնդրեք օգնել ու խորհուրդ տալ, ապա իմ տված խորհուրդը ջանացեք ականջաթող չանել: Ես ձեզ հետ կխոսեմ նշաններով, որոնք համեմատելի են տերևի շրշունի ու քամու մեղմ սոսափի հետ:

Ես այս օրով այցի եկա, որպեսզի ձեզ տրամադրեմ ծառայության իրագործումն ահրաժեշտ համարելուն, այն ծառայության, որի համար մարմնավորվել եք: Եվ ես ուրախ եմ, որ իմ այցի նպատակն իրականացավ:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, մինչ նոր հանդիպում

Ուղերձների իններորդ շրջան (հոկտեմբեր, 2008 թ. – հունվար, 2009 թ.)

Սանատ Կումարա
12 հոկտեմբերի, 2008 թ.

Ձեզ հետաքրքրող որոշ հարցերի պատասխանները

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան, եկել եմ այս օրով այն բանի համար, որպեսզի որոշ պարզաբանումներ տամ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Չանգվածային լրատվության միջոցներից դուք գիտեք, որ աշխարհում ֆինանսական իրավիճակը բարվոք չէ, գիտեք տեղի ունեցած երկրաշարժների մասին, այն փոթորիկների ու մրրկահողմերի մասին, որոնք համարյա անընդհատ արշավում են դեպի Ամերիկայի ու Չինաստանի ավերը: Դուք ձեր սրտերով էլի՝ շատ բաներ եք զգում, որոնք չեն լուսաբանվում զանգվածային լրատվության միջոցներով, բայց և իրապես առկա են Երկիր մոլորակի նուրբ ոլորտում:

Այո՛, դուք լիովին ճիշտ եք. իրոք, այդ ամենը լոկ աննշան և նախնական դրսևորումներն են այն իրադարձությունների, որոնց մասին մենք ձեզ զգուշացրել ենք: Մենք ասել ենք այն մասին, որ փոփոխություններ են սպասվում, ասել ենք, որ հասել է ժամանակը, որ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքները բարձրանան, և Երկիրը ելնի էներգետիկական նոր մակարդակի վրա: Այժմ հասել է այն պահը, երբ այդ թրթռանքներն անմիջական ազդեցություն են գործում Երկրի ֆիզիկական ոլորտի վրա:

Ամբողջ այս ժամանակի ընթացքում մենք ձեզ հետ լիովին բաց էինք խոսում և զգուշացնում էինք մոտեցող իրադարձությունների մասին: Հապա էլ ինչու՞ եք զարմանում:

Ամեն դեպքի համար մենք ձեզ խորհուրդներ էինք տալիս, թե ինչպես պահեք ձեզ, ինչ անեք և ինչ նախաձեռնեք:

Մի՛ ասեք, թե ամեն ինչ անսպասելի է տեղի ունենում, և թե դուք ոչինչ չգիտեիք:

Վերընթերցե՛ք մեր ուղերձները, որոնք տվել ենք մեր դեսպանորդի միջոցով: Նորից ուշադիր կարդացեք այն տեսանկյունով, թե ինչ է տեղի ունենում այժմ աշխարհում: Եվ մեր ուղերձներում կգտնեք ո՛չ միայն նախազգուշացումներ, այլ նաև կոնկրետ խորհուրդներ այն մասին, թե ինչպես վարվեք և ինչպես նախապատրաստվեք տեղի ունեցող և սպասվող իրադարձություններին:

Դուք ֆիզիկական ոլորտում եք գտնվում, և ձեզ նախ և առաջ հուզում է այն, ինչ ձեր շուրջը տեղի է ունենում այդ պլանում: Բայց մենք ձեզ կանչում ենք ավելի վեր՝ դեպի լեռնագագաթները, դեպի մեր աշխարհը: Եվ մեր աշխարհում է, որ դուք ձեզ կզգաք լիակատար ապահովության մեջ, հուսալի հսկողության ու խնամքի տակ:

Դուք վարժվել էիք այն բանին, որ մարմնավորումից մարմնավորում մուտք գործեք ձեր հարմարավետ ֆիզիկական աշխարհը: Դուք անխաղձ կապ եք զգում ձեր ֆիզիկական աշխարհի հետ: Դու՛ք եք ստեղծել այդ աշխարհը: Եվ Ես ասու՛մ եմ ձեզ. եկել է ժամանակը, երբ հարկ է, որ հասկանաք և ընդունեք ձեր գիտակցությամբ, որ ձեր աշխարհը ձևավորության կենթարկվի: Իսկ այն անհատների համար, որոնք չեն հասնի գիտակցության որոշակի մակարդակի, ընթացիկ մարմնավորումը կարող է իրենց անահատականության վերջին դրսևորումը դառնալ ֆիզիկական ոլորտում:

Ուստի, քանի դեռ ժամանակ կա, խորհրդածե՛ք խոսքերիս շուրջ: Ընդունե՛ք ձեր սրտերում և փորձեք ձեր կյանքերում ի կատար ածել Մեծ Աստծո Օրենքը:

Ողջ այն անցողիկը, որ ստեղծված է ձեր անկատար գիտակցությամբ, կդադարի գոյություն ունենալուց: Կմնա սոսկ այն, ինչը հավերժ է՝ ձեր Ոգու լավագույն դրսևորումները: Անշահախնդրությունը, ինքնագահողությունը, ինքնանվիրումը, Սիրո բարձրագույն դրսևորումը և այլ շատ բաներ ձեզ հետ համատեղ գոյություն կունենան Նոր Աշխարհում: Այնժամ, երբ հին աշխարհն անէության գիրկը կանցնի, նրա տեղը կզբաղեցնի Նոր Աշխարհը:

Եվ այդ աշխարհում մարդկային բացասական դրսևորումները տեղ չեն գտնի: Այդ աշխարհում կգոյատևի միայն այն, ինչը հավերժ է. միայն այն, ինչը մարդկային լավագույն հատկանիշների դրսևորում է հանդիսանում: Եվ այդ հատկանիշները կբազմապատկվեն ու կաճեն: Իսկ իր դարն ապրած ամեն ինչը կարբվի և կոչնչացվի:

Դուք անհանգստանալու և սգալու կարիք չունեք: Վստահե՛ք այս Տիեզերքի Մեծ Օրենքին: Նրա հետ, ով հավատում է, ով սիրում է, ով հույսեր է տածում, ոչ մի վատ բան տեղի չի ունենա: Հավատացե՛ք ինձ:

Ես ձեզ հետ եմ: Բոլոր Համբարձյալ Դասերը ձեզ հետ են: Եվ մենք մինչև վերջ կօգնենք յուրաքանչյուրին, ում մեջ կենդանի է Աստծո Մոնադան, ում մեջ դրսևորված է Աստծո Էություն:

Մերոնցից ոչ մեկին վիճակված չէ անհամալ: Ամեն ինչ այնպես կլինի, ինչպես գրված է անցյալի ու ներկայի սրբազան գրքերում:

Ձեզ հետ է Աստված: Մի՛ վախեցեք փոփոխություններից:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2008 թ.

Նոր Օրը բացվեց

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Ես կրկին եկել եմ, որպեսզի Հաղթանակի գիտակցությունն ամրագրեմ ձեր գիտակցության մեջ... Եկել եմ, որպեսզի ուրախալի լուր լսեք ինձնից... Եկել եմ, որպեսզի հոչակեմ ձեր անձնական այն Հաղթանակը, որին դուք հասաք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում:

Երևի հույզերի նման զեղում ինձնից չէի՞ք սպասում... Ի՞նչ ասեմ. ես երկար ժամանակ լուռ դիտում էի, թե ինչ է տեղի ունենում մոլորակի վրա և մեր դեսպանորդի Աշրամում: Իսկ գիտե՞ք, թե որքա՛ն սուր է հակադրությունը: Մեր Աշրամում ամեն ինչից զգացվում է ժամանակի շունչը: Մեր Աշրամում գարունն է թևակոխել և տարածել իր բույրը՝ նույնիսկ ձմռան կեսին: Բանգի այստեղ ծիլ է տալիս նոր գիտակցությունը, և այստեղ մենք հոչակում ենք մեր և ձեր Հաղթանակը. քանզի ձեզնից յուրաքանչյուրն, ով մասնակցել է Աշրամի շինարարությանը, հավանաբար այդ Հաղթանակը նաև իր սեփական Հաղթանակն է համարում: Եվ դա ճիշտ է. դա հենց այն է, ինչ ակնկալում են ձեզնից Երկնոլորտները. որ սկսեք մեր գործերն ու պլանները դիտել որպես ձեր անձնական գործերն ու պլանները: Եվ այլ կերպ չի կարող լինել: Դուք մեզ համար որպես ոտք ու ձեռք եք ծառայում ֆիզիկական ոլորտում, և մեր համագործակցությունը դեռ նոր է սկսվել:

Այժմ կուզենայի խոսել գլխավորի մասին: Իսկ գլխավորն այն է, որ մենք կրկնակի էներգիայով կշարունակենք մեր դեսպանորդի միջոցով տարվող աշխատանքը: Դուք դիմացաք քննությանը: Խոսքս այն մասին է, որ անասելի ջանքերի գնով ու բոլոր ուժերի կենտրոնացմամբ կառուցվեց Ուսումնական Կենտրոնի շենքը, և մենք երկրագնդի վրա ձեռք բերեցինք մի կետ, որից մեր տարածքում կարող ենք տալ մեր Ուսմունքը:

Մենք արդեն Լույսի մի շարք կիզակետեր ենք տեղադրել Աշրամի տարածքում: Եվ ես պետք է ասեմ, որ դա միայն սկիզբն է: Եվ եթե մենք ամեն օր անխոնջ կերպով շարունակենք հարկ եղած ուղղությամբ գործադրել մեր համատեղ ջանքերը, ապա շատ շուտով մեր ստացած արդյունքները կգերազանցեն ամենահանդուգն սպասելիքներն ու երևակայությունը:

Չի Երկրի մարդկանց առավելապես այժմ, քան երբևէ նախկինում, անհրաժեշտ է ունենալ Լույսի Փարոս, որը ճշտորեն ցույց տա Ուղին այն փոթորիկների ու մրրիկների պայմաններում, որոնցում գտնվում է մոլորակը: Իսկ ձեզ հայտնի է, որ եթե ձեր դասասենյակներում գտնվելու հետ կապված մեր ներկայությունն առկա է մոլորակի վրա, ապա ոչինչ չի կարող սպառնալ այն երկրին, որը մեզ օթևան է տվել:

Մենք խիզախորեն ենք նայում ապագային և հույսեր ենք կապում ձեր հետագա օգնության ու օժանդակության հետ:

Այս փոքրիկ քայլն իրապես ամենակարևորն ու դժվարինն էր, քանի որ միշտ էլ սկզբում դժվար է լինում հաղթահարել մատերիայի դիմադրությունը. այն չի ուզում հրաժեշտ տալ նախկին թրթռանքներին և անցնել դրանց նոր մակարդակին: Մատերիան դանդաղում է և չի շտապում դուրս գալ բազմադարյան քնի վիճակից: Սակայն Նոր Օրվա լուսաբացն արդեն ցոլքեր է տվել:

Մենք ձեզ ասում ենք այն մասին, որ Երկրի վրա Նոր Օր է բացվում: Եվ այդ Օրն ավելի երջանիկ կլինի, քան մարդկության պատմությունը երբևէ իմացել է իրեն հայտնի բոլոր պատմական դարաշրջանների ընթացքում:

Մի՛ երկուդեք այն դժվարություններից, որոնք իրենց հետ կբերեն բարեփոխումները: Ողջ հնացածն ու անպետքը հարկ կլինի նետել պատմության աղբանոցը: Խանգարող ամեն ինչը հարկ կլինի հեռացնել Ուղուց և այրել տիեզերական վառարանում:

Փոխարենը մենք լայնորեն տիեզերական հնարավորության դուռ ենք բացում այն անհատների առջև, ովքեր պատրաստ են բարեփոխումներին և հոգնել են ներկայիս քաղաքակրթության աղտոտված պայմաններում ապրելուց:

Բարի մու՛տք ձեզ դեպի լուսավոր վաղվա օր... Սակայն մի՛ մոռացեք, որ այդ լուսավոր վաղվա օրը կկառուցվի ձեր օգնությամբ՝ ձեր ձեռքերով ու ոտքերով, ձեր սրտերի մղումներով:

Մենք միայն ցույց ենք տալիս Ուղին և այն ուղղությունը, որով պետք է ընթանա մարդկության հետագա զարգացումը: Դուք ձեր սրտերի մեջ պետք է ներառեք մեր Ուսմունքն ու Նոր Աշխարհի կառուցման սկզբունքները: Եվ այդ դեպքում համատեղ ջանքերով ամբողջ մոլորակն անցում կկատարի Նոր Օրվան:

Իսկ հին աշխարհից մոտ ապագայում ոչ մի հետք չի մնա: Տիեզերական հնարավորության դռները լայնորեն բացված են: Սակայն ձգտեք այդ դռներով անցնել գլուխներդ բարձր, ուսներդ շտկած և ձեր երթը զարդարեք ուրախ ժպիտներով:

Դուք պետք է հասկանաք, որ այնժամ, երբ բացվում է նոր աստվածային հնարավորություն, գալիս է մի շրջան, երբ վերջին դարերի ընթացքում մարդկության ստեղծած բոլոր հին սահմանակարգերը կա՛մ պետք է ձևափոխվեն՝ ըստ նոր սկզբունքների, կա՛մ սրբվեն՝ որպես անպետք աղբ, որպեսզի դրանց տեղում ձևավորվեն հասարակության կառավարման նոր սկզբունքներ: Երբեք պետք չէ կառչել հինից ու իր դարն ապրածից: Մենք ձեզ ուսուցանում ենք պատրաստ լինել մշտական փոփոխությունների և Բարձրագույն աշխարհների հետ մշտական համահնչունության: Ձեզնից միայն նրանք ունակ կլինեն անցավ կերպով հարմարվելու ներկայումս աշխարհ մուտք գործող նոր պայմաններին, ովքեր չեն երկյուղում բարեփոխումներից ու փոփոխություններից: Իսկ նրանք, ովքեր կառչած են մնում հին սովորություններից ու կապվածություններից, կապրեն շատ ծանր ժամանակներ: Ցավոք, այլևս հետ մնացողներին սպասելու ժամանակ չկա: Մենք արագացնում ենք Երկիր մոլորակի վերափոխությունների տեմպերը:

Եթե ուշադրությամբ մեկ առ մեկ վերընթերցեք մեր թելադրությունները, ապա շատ բանալիներ և օգտակար տեղեկություններ կստանաք այն մասին, թե ինչպես վարվեք այս բարդ անցումային ժամանակահատվածում:

Մի՛ ծուլացեք: Գիտակցե՛ք, որ մեր ուղերձները պարզապես կարդալը բավարար չէ. հարկավոր է, որ շատ մանրագնին կերպով ձեր կյանքում հետևեք մեր տված հանձնարարականներին ու խորհուրդներին: Եվ այդ դեպքում անհամեմատ ավելի հեշտորեն կդիմագրավեք ու կհաղթահարեք այն փորձությունները, որոնք սպասվում են և դեռ նոր են սկսվել:

Ձեզ շատ քիչ ժամանակ է մնում: Ուստի ձեզ համար պետք է կանոն դարձնեք ամեն օր կյանքի կոչել մեր հանձնարարականներից գոնե մեկը, մեր տված գոնե մեկ կանչը:

Եթե դուք թեկուզ մեկ փոքրիկ քայլ չկատարեք, ապա ավելի ու ավելի հետ կմնաք և վտանգի տակ կդնեք բացված աստվածային հնարավորությունից ձեր օգտվելը:

Մենք սպանում ենք՝ ներդնելով բոլոր ուժերը: Մենք պատրաստ ենք ընթացող բարեփոխումներին: Մնում է, որ դուք էլ միանաք մեզ:

Արթնացրե՛ք նրանց, ովքեր դեռ քնած են: Դրսում Նոր Օրն է բացվել արդեն...

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան, եղա ձեզ հետ

Տեր Սուրիա

21 դեկտեմբերի, 2008 թ.

Հաղթահարելով ինքներդ ձեզ՝ դուք փոխում եք ձեր աշխարհը

ԵՄ ԵՄ Սուրիան՝ տիեզերակենտրոն Մեծ Կենտրոնական Արևից կրկին ձեզ այցի եկածը:

Ես եկա ձեր նկատմամբ տաժած սիրո թևերով, ո՛վ, Երկրի զավակներ: Ես սիրում եմ Երկրի մարդկանց, և մեր ամեն մի հանդիպումն ինձ համար այնպիսի կարևոր ուղենիշ է, որով դուք մերձենում եք ինձ՝ մերձեցնելով մեր աշխարհները:

Մեզ բաժանող տարածությունը թռիչքով անցնելուս ընթացքում ես խորհում էի այն մասին, թե երբեմն որքա՛ն քիչ բան է անհրաժեշտ, որպեսզի տեղի ունենան այն փոփոխությունները, որոնց մասին մենք ասում ենք, փոփոխություններ, որոնց շնորհիվ մարդկությունը կկարողանար հաղթահարել գիտակցության բացասական վիճակները և դուրս գալ դեպի տիեզերական լայնարձակություն:

Որքա՛ն ցավալի է, որ ես չեմ կարող ձեզ հաղորդակից դարձնել այն անսահման Ազատության և անափ Սիրո վիճակին, որում գտնվում եմ ինքս: Որքա՛ն ցավալի է, Երկրի զավակներ, որ ձեզնից միայն որոշներն են ունակ կարդալու իմ այս ուղերձը...

Ձեր մոլորակի ճակատագիրը կախված է այն բանից, թե որքանո՞վ կկարողանաք ընկալունակ դառնալ նրբին էներգիաների նկատմամբ՝ այն նուրբ թրթռանքների նկատմամբ, որոնցով հագեցած է ողջ տիեզերքը: Որքան հաջող կկարողանաք համալարվել նուրբ աշխարհների հետ, նույնքան

հաջող էլ տեղի կունենա Երկրի անցումը նոր Էվոյուցիոն մակարդակի վրա: Հավատացե՛ք ինձ, որ գոյություն ունեն հսկայական քանակությամբ առավել լավ աշխարհների: Եվ դրանք սպասում են ձեզ, բաց են ձեր այցելության համար: Միայն ինքներդ եք արգելակում ձեր Էվոյուցիոն զարգացման գործընթացը: Միայն ինքներդ եք ձեզ սահմանազատում այն ամեն լավից, որ գոյություն ունի արար տիեզերքում:

Որքա՛ն շատ հոգիների է օթևան տվել ձեր մոլորակը: Իրապես, դուք անգին պարզև եք մեզ համար: Մի պահ պատկերացրեք, որ գալիս եք մանկապարտեզի մտորային խումբ ու հանդիպում երեխաների պրպտուն ու պարզ հայացքներին: Երբ նուրբ աշխարհում ինձ վիճակվում է հանդիպել ձեր հոգիներին, նայում եք ինձ հենց այդպիսի հայացքներով՝ լի գիտելիքի, սիրո և հայտնության փափագով:

Ձեր ֆիզիկական թաղանթները երբեմն իրենց տակ թաքցնում են շատ խոցելի մանկական հոգիներ: Ձեր աշխարհում դուք ստիպված եք լինում հասուն մարդկանց դերեր խաղալ, բայց ձեր հոգիները նախկինի պես շարունակում են մնալ պրպտուն, քնքուշ ու վախվորած: Ձեր հոգին ձեր ներքին երեխան է, որն ապրում է ձեր ներսում: Եվ որքա՛ն լավ կլինեք, եթե երբեմն սեր առաքեիք ձեր հոգուն, գրուցեիք նրա հետ և պարզեիք, թե արդյո՞ք նա որևէ բանի կարիք չի գգում:

Երբեմն ձեր հոգիները տառապում են ձեր աշխարհում գոյություն ունեցող անտանելի պայմանների պատճառով: Եվ եթե կարողանայիք լսել, թե ինչ է խնդրում ձեր հոգին, ապա կիմանայիք, որ նա լի է այն սահմանափակումներից ձերբազատվելու ցանկությամբ, որոնք առկա են ձեր աշխարհում, և մղվելու դեպի տիեզերքի լայնարձակությունը:

Ցավոք, բազմաթիվ մարմնավորումների կարման ձեզ ստիպում է կապկպված մնալ Երկրին: Եվ քանի դեռ չեք համակշռել ձեր կարման, դուք գերի կմնաք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտին: Բայց հենց որ կարմայական բեռն ավելի թեթև դառնա, դուք կկարողանաք այլ կերպ զգալ կյանքը, և կյանքի յուրաքանչյուր բույն ձեզ հրճվանք ու երանություն կպարզւի: Կցնդեն ձեր երկյուղները, կվերանան կապվածությունները, և դուք կրկին կվերածվեք պրպտուն մանուկների ու հրճվանքով ձեր ներսը կքաշեք Աստծո գիտությունը:

Իսկ հիմա ձեր վիճակը ծանր է, որովհետև օրերը խտացվել են, և ժամանակն ընթանում է արագացված տեմպով: Արդեն քիչ ժամանակ է մնացել, և այդ ընթացքում դուք պետք է հասցնեք շատ բան անել: Ուստի նույնիսկ այնժամ, երբ տխուր մտքեր ու տրամադրություններ են այցելում ձեզ, ջանք թափեք, որպեսզի ձեր վրայից թոթափեք այդ տխրությունն ու թախիծը: Ձեր փրկությունն այն կլինի, որ կարողանաք մշտապես պահպանել ձեր գիտակցության վերամբարձ վիճակը: Երբ ձեր թրթռանքը բարձր են, դուք Բարձրագույն աշխարհների հետ համահնչունություն եք պահպանում, և ձեր կյանքում հեշտանում է կողմնորոշիչները պահպանելու գործը: Մտորե՛ք նաև այն մասին, որ պետք է օգնեք ձեր կողքին գտնվող շատ հոգիների, որոնք գգում են ձեր օգնության կարիքը: Նրանք Ուսմունքի մասին ոչինչ չգիտեն և չեն հիշում, թե որտեղի՞ց են եկել և ու՞ր են գնում: Գոյության անիմաստությունը ստիպում է նրանց շատ սխալներ թույլ տալ՝ դատարկ տեղը վատնելով ժամանակն ու Աստծո էներգիան:

Ձեր աշխարհը Լույսի, Միտք, Բարձրագույն օկտավաների թրթռանքի կարիքն ունի, և ձեզնից ամեն ոք, սիրելիներս, ձեր աշխարհի համար կարող է ծառայել որպես ուրախության, երջանկության, Լույսի ու Բարության աղբյուր: Բավական է միայն որոշում ընդունել և օգնել բոլորին, ովքեր ունեն դրա կարիքը՝ ոչ թե ելնելով շնորհակալանքի խոսքեր վաստակելու ցանկությունից, այլ գործելով հոգու, սրտի պահանջով: Ձեր աշխարհն Աստծո էներգիա փոխանցողների կարիքն ունի: Մտորե՛ք այն մասին, թե որքա՛ն ավելի լավ կլինեք ձեզ համար, եթե դադարեիք տրտնջալ ձեր վատ բաժնեմասից և այլ դեր ընտրեիք ձեզ համար՝ Բարձրագույն աշխարհների էներգիաները ձեր աշխարհ փոխանցողի դերը:

Ես այս օրով եկա, որ ձեր սրտերը լցնեմ հրճվանքով, երջանկությամբ ու խաղաղվածությամբ: Իմացեք, որ դուք միայնակ չեք: Եվ ժամանակի այն հատվածը, որով անցնում է մոլորակը, շուտով կավարտվի: Եվ դա կնմանվի ձմեռվանից հետո գարնան գալուն: Ձեր գիտակցության արևը կոչված է լուսավորելու ձեր աշխարհի խավարը: Ուստի ամեն անգամ, երբ ձեզ համար ծանր է լինում, էներգիան չի բավականացնում, հիշեցե՛ք Մեծ Կենտրոնական Արևի հետ համալարվածության այն թողության շնորհը, որը ձեզ տրվեց անցած տարվա ընթացքում: Ես կգործադրեմ բոլոր ջանքերը, որպեսզի այդ թողության շնորհից դուք օգտվեք նաև հաջորդ տարվա ընթացքում և այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհը դուրս չի եկել իր զարգացման խավար շրջանից:

Այն պայմանները, որոնցում դուք ստիպված եք գոյատևել, ձևավորվել են միլիոնավոր տարիների ընթացքում: Եվ այժմ մեզ համար հեշտ խնդիր չէ, որ կարողանաք հնարավորինս նվազագույն կորուստների գնով բարձրացնել մոլորակի թրթռանքների մակարդակը: Ուստի ես մեծ հույսեր եմ կապում այն օգնության հետ, որը դուք ի վիճակի եք ցուցաբերելու: Ես հուսով եմ, որ

կկարողանաք ավելի շատ դիմանալ ու պահպանել ձեր գիտակցության վերամբարձ վիճակը, որքան էլ որ ծանր լինի ձեզ համար:

Արտաքին քառսի և աններդաշնակության պայմաններում որքան շատ ունակ լինեք պահպանելու ձեր ներքին հանդարտությունն ու ներդաշնակությունը, այնքան ավելի բարձր կլինի ձեր հոգևոր նվաճումների մակարդակը:

Կար ժամանակ, երբ Աստծո Իսկության և Աստծո Ճշմարտության դիրքերը պաշտպանվում էին մարտադաշտերում: Այժմ ձեզ համար անհամեմատ ավելի դժվար է, քանի որ մարտադաշտ չկա, բայց դուք ստիպված եք դիմանալ ձեր աշխարհում ընթացող ճակատամարտի հսկայական լարվածությանը: Պարզապես ճակատամարտն ընթանում է բոլորովին այլ պայմաններում: Եվ դուք ստիպված եք լինում ջանքեր թափել դատավարություններում, տարբեր կազմակերպություններում, մերձավորների, աշխատակիցների և հարևանների հետ ունեցած ձեր փոխհարաբերություններում: Ճակատամարտի դաշտի ընդգրկումը ոչ միայն չի նվազել, այլև իր մեջ ներառել է հենց ձեր տան ներսը:

Ամեն ինչ կախված է այն բանից, պաշտելիներս, թե որքանո՞վ ունակ կլինեք բարձր մակարդակի վրա պահելու ձեր գիտակցությունը կյանքի ամենաժանր իրավիճակներում:

Հաղթահարելով ինքներդ ձեզ՝ դուք փոխում եք արտաքին իրադրությունը և դրանով իսկ փոխում եք ձեր աշխարհը:

ԵՄ ԵՄ Սուրիան

Վեհապետ Հիլարիոն
22 դեկտեմբերի, 2008 թ.

Դուք ունակ եք անհամեմատ ավելին անելու, քան անում եք

ԵՄ ԵՄ Հիլարիոնը՝ օրվա խրատները տալու նպատակով ձեզ այցի եկածը:

Եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ, որն առնչվում է այն բանի հետ, թե ինչպե՞ս վերաբերվեք ձեր շուրջը տեղի ունեցածին և ձեր շրջապատի ամեն ինչին: Քանի որ հավանաբար արդեն նկատել եք, որ ձեր շուրջը փոփոխություններ են տեղի ունենում (իսկ դա ակնհայտ է դառնում ավելի ու ավելի մեծ քանակի մարդկանց համար), ապա հարց է ծագում, թե ինչպե՞ս դա ընկալել և ինչպե՞ս դրան վերաբերվել:

Նկատած կլինեք, որ այդ փոփոխություններն առնչվում են բոլորի ու ամեն ինչի հետ՝ և՛ ձեր մերձավորներ ու ծանոթների, և՛ Երկրի իրադրության, և՛ կլիմայի: Եվ քանի որ դա ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, ապա շատերն սկսում են երկյուղել այդ փոփոխություններից, սպասում են աշխարհի վերջին, վերահաս համադեպի ու էլի ինչ-որ ասիավոր և անխուսափելի բանի:

Ենթագիտակցորեն մարդիկ զգում են, որ իրենց կողմից վիթխարի բացասական, ընդհանրական կարմա է կուտակված: Նաև ենթագիտակցորեն սպասում են, որ այդ կարման այս կամ այն եղանակով բեռնաթափվի: Ես կարող եմ ձեզ հավաստիացնել, որ Երկրի մարդկության գլխին կուտակված կարման իրոք հսկայական է, և մարդկության զարգացման պատմության ընթացքում այն դեռ երբեք այսքան չէր ծանրացել:

Իմ այս հայտարարությունը կարող է ձեզ է՛լ ավելի ահաբեկել ու շփոթեցնել: Բայց ամենայն պատասխանատվությամբ կարող եմ նաև հավաստիացնել, որ Երկրի վրա գոյացած այս իրավիճակն իր մեջ ներքաշել է ողջ տիեզերքի բարձր զարգացած էակների շատ հոծ բազմության: Եվ շատ բանական էակներ համատեղ ուժերով ջանում են ուղղորդել մոլորակի իրադրությունը դեպի հնարավորինս անվտանգ հուն: Իդեալական կլիներ, եթե հաջողվեր ուղու այս նեղ հատվածն անցնել մարդկային գոհերի ու կորուստների նվազագույնով:

Իրավիճակը բարդացնում է և այն, որ մարդկությունն իր հիմնական զանգվածով չի լսում մեր նախագուշացումները և չի արձագանքում մեր խնդրանքներին: Մենք որոշակի չափով կարող ենք համակշռել մոլորակի իրավիճակը, սակայն, որպեսզի ամեն ինչ լուծվի դրականորեն, պահանջվում է ձեր մասնակցությունը. պահանջվում է, որ փոխվի Երկիր մոլորակի վրա ներկայումս մարմնավորված հնարավորինս մեծ թվով մարդկային անհատների գիտակցությունը:

Մեր ջանքերը մենք գործադրում ենք հիմնականում այն ուղով, որ ձեզ հասու դարձնենք գործընթացների լրջությանը: Մենք չենք թաքցնում, որ իրավիճակը մինչև այս պահը դեռևս բարենպաստ չէ: Ուստի կոչ ենք անում ձեզ՝ լսելու ունակներիդ, որ ավելի վճռական քայլեր ու գործողություններ ձեռնարկեք ֆիզիկական ոլորտում: Դա չի նշանակում, որ օրվա մեջ 24 ժամ պետք է աղոթեք, այլ նշանակում է, որ նախ ինքներդ պետք է լիովին գիտակցեք Կարմայի Օրենքի

գործելակերպը, ապա այդ գիտելիքը փախանցեք հնարավորինս շատ մարդկանց՝ նրանց, ովքեր ի վիճակի են դա հասկանալու:

Կարման միշտ չէ, որ կապված է ֆիզիկական ոլորտի կոնկրետ գործողությունների հետ: Դրա մեծ մասը, հատկապես ձեր օրերում, ստեղծվում է մտքերով ու զգացմունքներով:

Դուք նույնիսկ քնած ժամանակ եք կարմա ստեղծում: Եվ եթե քնից առաջ չեք համալարվել բարձրաթիվ լադով, ապա կարող եք հայտնվել նուրբ աշխարհի ոչ այնքան լավ շերտերում և դրանով իսկ մեծացնել ձեր կարմայի բեռը:

Ուստի առաջնահերթ խնդիր է դառնում այն, որ մշտապես հետևեք ձեր մտքերին ու զգացմունքներին: Եթե ձեր մտահղացումները մաքուր լինեն, ապա ֆիզիկական ոլորտի ձեր գործողությունները կհամապատասխանեն Աստծո Օրենքին:

Իսկ այժմ եկեք լայնորեն տարածված մի իրավիճակ քննարկենք ձեր կյանքից: Ասենք, ուզում եք ինչ-որ բան ձեռք բերել: Կարևոր չէ, թե ինչ՝ ձեր հրապուրանքի առարկան, մեծ գումար, իշխանություն, փառք. շա՛տ են նմանատիպ հրապուրանքները ձեր աշխարհում: Հենց որ որևէ ցանկություն կամ հրապույր ծագում է ձեր ներսում, անմիջապես ձեր մարմնական խելքը սկսում է փնտրել այն ուղիներն ու եղանակները, որոնք ձեր ուզածը կհասցնեն ձեզ: Եվ շուտով դուք ստանում եք ձեր ուզածի վկայումները: Տարածությունը հնազանդորեն արձագանքում է ձեր մտահղացմանը, և դուք լսում եք այն, ինչ կուզենայիք լսել, տեսնում եք այն, ինչ կուզենայիք տեսնել: Իսկ մեր ու մեզ հետ համահունչ մարդկանց փաստարկներն այդ դեպքում ձեզ վրա ոչ մի ազդեցություն չեն գործում:

Ահա այդպես դուք ենթարկվում եք պատրանքին և հայտնվում պատրանքի գրկում: Սակայն ձեր ցանկությունը միշտ ունի իր ծագման սկզբնական պահը: Եվ հենց այդ պահը դուք կարող եք վերահսկել, որովհետև ուժեղ եք դրանից: Բավական է, որ ենթարկվեք ձեր ցանկությանը, և ձեր հսկողությանը հանձնված Աստծո էներգիան կսկսի ուժեղացնել ու ամրապնդել ձեր այդ ցանկությունը: Այդպիսով դուք ձեր միջով անցնող Աստծո էներգիան կուղղորդեք ոչ Աստծո Օրենքին համապատասխան: Եվ ավելի ու ավելի մեծ կարմա կստեղծեք: Այդ կարման փակում է ձեր աչքերը, ձեր ցանկությունն ավելի ու ավելի է մեծանում, և արդեն ոչ թե դուք եք ղեկավարում ձեր ցանկություններն ու մտքերը, այլ այն հրեշը, որին ինքներդ եք ձեր մեջ անեցրել. այն տիրում է ձեզ և օգտագործում իր նպատակների համար:

Մարդկանց մեծ մասը, ցավոք, հաշիվ չի տալիս իրեն, թե ինչ է տեղի ունենում, և չի կարողանում սևեռել այն պահը, երբ իր մեջ ծագում են ոչ ճիշտ մղումներ կամ ցանկություններ:

Որպեսզի կարողանաք վերահսկել ինքներդ ձեզ, պահանջվում է շատ մեծ ներքին կարգապահություն և սեփական հետաքրքրությունները Վեհապետների, Համընդհանուր Բարիքի ու Բարու հետաքրքրություններին ենթարկելու կարողություն:

Եվ դա հենց այն է, ինչը մենք գալիս և ուսուցանում ենք: Դա հենց այն Ուսմունքն է, որը մենք ձեզ տալիս ենք անխոնջ կերպով:

Հենց որ հասնում եք կրթվածության որոշակի աստիճանի, սկսում եք հասկանալ Աստծո էներգիայի փոխանջատման մեխանիզմը և ունակ եք դառնում հետևելու ձեր գիտակցության ներքին անկատար վիճակին ու այն հաղթահարելու: Անցնում է ևս մի փոքր ժամանակ, և արդեն ունակ եք դառնում նկատելու, թե ինչպես են նման անկատար վիճակները ծագում այլ մարդկանց մոտ:

Հետևաբար արդեն կարող եք սովորեցնել ձեր մերձավորներին, որ նույն կերպ վարվեն: Կարող եք պատմել ձեր երեխաներին ու թոռներին, թե ինչպես է գործում Կարմայի Օրենքը. դրանով դուք կարող եք կանխել նոր կարմայի առաջացումը և սովորացնել նրանց, թե ինչպես, դժվարին իրադրություններում ճիշտ ընտրություն կատարելով, բեռնաթափեն նախկինում ստեղծած իրենց կարման:

Դուք ունակ եք անելու անհամեմատ ավելի, քան անում եք: Մենք ակնկալում ենք, որ կյանքում դուք կենդանի օրինակ կծառայեք: Փոփոխությունների գործընթացը սկսեք ձեզնից: Բոլոր գործիքները ձեզ տրված են: Եվ այն, ինչ դուք կարող եք անել Երկիր մոլորակի մարդկության համար, մենք չենք կարող անել մեր համբարձյալ դիրքից:

Մի՛ զլացեք գործնականում կիրառել մեր տված Ուսմունքը յուրաքանչյուր օր:

ԵՄ ԵՄ Հիլարիոնը

Պաշտելի Հելիոս
23 դեկտեմբերի, 2008 թ.

Ես ունակ եմ օժտելու ձեր էությանը կենսական ուժի և էներգիայի լրացուցիչ ծավալով

ԵՍ ԵՄ Հելիոսը, ձեզ այցի եմ եկել այս օրով, երբ մարդկության մեծ մասը, որն ապրում է հյուսիսային կիսագնդում, արևային էներգիայի պակաս է զգում:

Ի՛նչ արած, դա օրինաչափ է և պայմանավորված է տարեկան շրջանով:

Ես եկել եմ իմ ուրախության մի փոքր մասը ձեզ պարգևելու և ձեր սրտերը սիրով ու քնքշությամբ լցնելու, որի կարիքը նույնպես ունեք այս ձմեռային օրերին:

Ես եկել եմ նաև այն բանի համար, որպեսզի հայտնեմ ձեզ, որ ինչքան էլ ձեզ անելանելի ու փակուղային թվա ֆիզիկական աշխարհի ձեր կեցությունը, և որքան էլ ձեզ ճնշի շրջակա իրադրությունը, այնուամենայնիվ ամեն ինչ կարելի է փոխել ու կարգի բերել:

Ձեր աշխարհը հնազանդ գործիք է ձեր ձեռքին: Եվ ձեզ մնում է միայն հիշել, որ դուք աստվածներ եք և ինքներդ եք ձեր աշխարհը ստեղծել՝ ըստ ձեր պատկերի և նմանության: Եվ եթե հիմա արդեն հասկացել եք, որ ամեն ինչ կարելի փոխել, հարկ է, որ անմիջապես ձեռնամուխ լինեք այդ գործին և սկսեք բարեփոխումների գործընթացը: Հենց որ բարեփոխումների գաղափարը մուտք գործի բավարար մեծ քանակությամբ մարդկանց գիտակցության մեջ, այդ բարեփոխումները մտքերի ու զգացմունքների ավելի նուրբ աշխարհներից կսկսեն իջնել ձեր ֆիզիկական աշխարհը: Ուստի հարկ չկա, որ հապաղեք: Ես ի՛նքս էլ կօգնեմ ձեզ այդ բարեփոխումների գործընթացում:

Այն դեպքերում, երբ ուրախության, առույգության և արևի պակաս եք զգում, կարող եք օգնության խնդրանքով դիմել ինձ: Քանզի ես ունակ եմ օժտելու ձեր էությանը կենսական ուժի և էներգիայի լրացուցիչ ծավալով:

Հարկ կլինի, որ դուքս գաք արևի տակ կամ պատկերացնեք, որ գտնվում եք արևի ճառագայթների ներքո, որը ձեզ լույս է առաքում Երկնքից: Եվ երբ ձեր ողջ էությամբ կզգաք արևից ճառագվող ջերմությունն ու էներգիան, ապա խնդրե՛ք ինձ. *«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, պաշտելի՛ Հելիոս, խնդրում եմ մաքրի՛ր իմ աուրան ու չակրաներն այն ամենից, ինչն Աստծուց չէ, և լցրու՛ իմ էությունը քո էներգիայով, արևային էներգիայով»:*

Ձեր այդ կոչը դուք կարող եք հղել ամեն օր՝ անկախ օրվա ժամից, բայց այն կլինի ամենագործունը, երբ արևը զենիթում է, և այն դեպքում, երբ ձեր ողջ էությամբ շրջվել եք դեպի արևը:

Ես կարող եմ և ունակ եմ, ձեր կոչին արձագանքելով, օգնել ձեզ, եթե միայն դիմեք ինձ:

Ես նաև շատ լավ հասկանում եմ, որ ձեզ համար երբեմն այնքան ծանր է լինում, որ նույնիսկ ուժ չեք գտնում այդ կոչը հղելու: Նման դեպքում ես ձեզ խորհուրդ կտայի, որ ձեր աչքերի առջև պահեք ծագող արևի լուսանկարը կամ արևի ցանկացած պատկեր: Արևը շատ կարևոր դեր է խաղում ինչպես ձեր, այնպես էլ բոլոր կենդանի էակների կյանքում: Այդ պատճառով ձեզ համար շատ օգտակար կլինի արևի վրա մտասևեռվելը: Այն ձեզ ուժ ու եռանդ կհաղորդի:

Ձեր աշխատավայրում կամ բնակարանում ունեցեք արևի լուսանկարը:

Այն ամենն, ինչով շրջապատված եք, ձեզ վրա անհամեմատ ավելի մեծ ազդեցություն է թողնում, քան կարող եք պատկերացնել: Ուստի ձեզ շրջապատեք ճիշտ նմուշներով, ձգտեք լինել ներդաշնակ վիճակում, և այնժամ ձեր շատ հոգեբանական խնդիրներ կա՛մ ձեզ ամբողջովին կլքեն, կա՛մ էլ այնքան կթուլանան, որ ձեզ այլևս չեն քթացնի:

Ես միշտ ձգտում եմ իմ ողջ հնարավոր օգնությամբ աջակցել բոլոր կենդանի էակներին: Եվ այն դեպքերում, երբ մտածում եք, թե ձեզ ոչ ոք չի տեսնում, ապա սխալվում եք. ես սիրում եմ հետևել ձեզ, փաղաքշել ու շոյել ձեր դեմքերը:

Հավանաբար դուք չեք էլ ենթադրում, որ արեգակնային համակարգության ձեր արևը ոչ միայն էներգիայի աղբյուր է ձեզ համար, այլ նաև ձեր վաղեմի ընկերն ու օգնականն է:

Ես ոգի եմ տալիս ֆիզիկական արևին և կանգնած եմ երևակված արևի թիկունքում: Ուստի, այն բանից, թե որքանով կկարողանաք կարգավորել ձեր անձնական փոխհարաբերությունն արևի և ինձ հետ, կախված է այն, թե որքան աստվածային սկզբունքներ կկարողանաք մտցնել ձեր աշխարհը:

Որպեսզի Լույս մտցնեք ձեր աշխարհ, պետք է համահունչ դառնաք Լույսի հետ: Դա ավելի հեշտ կլինի անել, եթե համահունչ դառնաք ինձ հետ: Ես իրապես ձեր ընկերն ու օգնականն եմ ձեր Ուղու վրա:

Փա՛նք տվեք ինձ, փառաբանե՛ք ամեն մի լուսաբացը, վայելե՛ք իմ ջերմությունը, որքան կարող եք:

Ներկայումս իմ ճառագայթներն ա՛յլ կերպ են լույս տալիս: Հիմա իմ ճառագայթներն արթնացնում են ձեր մեջ ձեր աստվածային բնույթը: Եվ, երևի, արդեն սկսել եք նկատել, որ օրվա ընթացքում թեկուզ կարճ ժամանակով արևի տակ մնալը ձեր մեջ ուժի ու էներգիայի հորդում է առաջացնում:

Պարզապես փոխվել է իմ լուսաճառագումը: Ձեր գիտնականներն իմ սպեկտրում շուտով կնկատեն արևի լուսաճառագման փոփոխված բնութագրերը, բայց, քանի որ ծանոթ չեն աստվածային գիտությանը, ապա դժվար թե կարողանան բացատրել, թե դրանք ինչ են նշանակում:

Ես պետք է նաև նախազգուշացնեմ, որ մեծացել է նաև իմ ճառագայթների ինտենսիվությունը՝ հատկապես սպեկտրի անտեսանելի մասում: Այդ պատճառով արևի տակ չափազանց երկարատև մնալը կարող է վնասել ձեր օրգանիզմին:

Կան որոշ անհատներ, որոնք վախենում են իմ ճառագայթներից և թաքնվում են ինձնից: Ինտուիտիվ կերպով ու ենթագիտակցաբար նրանք հասկանում են, որ իրենց ներսում կա ինչ-որ բան, որն իրենց թույլ չի տալիս շփվել ինձ հետ և հայտնվել արևի տակ: Ես նրանց վրա ճնշիչ ազդեցություն եմ թողնում, քանի որ մեր բնույթները չափազանց շատ են տարբերվում իրարից:

Երկիրը՝ որպես մոլորակ, իր վրա թույլ է տալիս գոյատևել կատարելապես տարբեր չափազանց շատ էակների: Եվ ոչ բոլորն են նրանցից ընթանում այն ուղղությամբ, որը նախասահմանված է Երկիր մոլորակի համար:

Կապված այն բանի հետ, որ մեր հանդիպումը մոտենում է իր ավարտին, կուզենայի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնել, որ հանձին ինձ դուք կգտնեք ձեր հուսալի ու անկեղծ ընկերոջը, եթե միայն դիմեք ինձ: Նույնիսկ իմ մտապատկերը՝ լուսարձակող հրե գունդը, ունակ է ձեզնից շատերին վստահություն ներշնչել, առույգություն հաղորդել և անհրաժեշտ քանակի ուժ ներարկել ձեր մեջ:

ԵՍ ԵՄ Հելիոսը՝ ձեր նկատմամբ սիրով լի

Վեհապետ Լանելլո՝

Մեծն Աստվածային Ուղղորդիչի ներկայությամբ

24 դեկտեմբերի, 2008 թ.

**Մենք գալիս ենք, որպեսզի պահպանենք
ձեր նպատակամղման ներուժը և ճշգրտենք այն ուղենիշերը,
որոնցով առաջ եք շարժվում**

ԵՍ ԵՄ Լանելլոն՝ այս օրով ձեզ այցի եկածը: Թող հայտնի լինի ձեզ, որ այսօր ես մենակ չեմ: Ինձ հետ ներկա է իմ ընկերն ու Ուսուցիչը՝ Մեծն Աստվածային Ուղղորդիչը:

Մենք միասին ենք եկել, որպեսզի ուժեղացնենք մեր ասելիքը, և որպեսզի մեր ներկայության գորությունը կրկնապատկվի:

Դրանից չի հետևում, որ դուք պետք է պարզապես առանձնահատուկ ուշադրությամբ ընկալեք այն, ինչը լսում եք, այլ դա նշանակում է, որ պետք է վերաբերվեք տրվածին այնպես, որպես թե այն ինչ լսում եք, ձեզ համար հայտնություն է:

Մենք գալիս ենք, որպեսզի դուք կարողանաք ձեր ձգտումներն ու մտքերը համաձայնացնել մեր ձգտումների ու մտքերի հետ: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ մոտենում է տարվա ավարտը, իսկ դա արդյունքներ ամփոփելու և ապագայի պլաններ հյուսելու ժամանակն է: Ուրիշ ո՞վ, եթե ոչ Մեծն Աստվածային Ուղղորդիչը ձեզ պետք է հուշի, թե ի՞նչ ուղղությամբ արժե, որ ընթանաք:

Այնպես որ դուք այսօր պետք է կենտրոնացնեք ո՛չ միայն ձեր մենտալ մարմնի, այլ նաև ձեր մյուս մարմինների բոլոր ջանքերը. համահնչունության բերեք ձեր բոլոր մարմինները: Եվ դրանից հետո մենք պատրաստ կլինենք սկսելու մեր գրույցը:

Այնպես, ինչպես միշտ, հարկ է, որ հասկանաք. որպեսզի կարողանաք ընկալել մեր Ուսմունքն ու մեր խրատները, ձեր ներսում մեխանիզմ պետք է ունենաք, որ համալարվեք մեր թրթռանքների հետ: Այդ մեխանիզմը տեղադրված է ձեր ներսում և միշտ ձեզ հետ գոյություն է ունեցել: Այն ձեր հոգու կամերտոնն է: Սակայն այն ընթացքում, երբ գտնվում եք մարմնավորման մեջ, ձեզնից շատերի համար այդ մեխանիզմը կա՛մ ընդհանրապես էլ չի հնչում, կա՛մ էլ ձեռք է բերում այլ տոնայնություն: Ուստի հարկ է, որ մաքրեք ձեր մեխանիզմը և համալարվեք նուրբ աշխարհների հետ:

Եվ ձեզնից ոչ մեկի համար գաղտնիք չի լինի, եթե ասեմ, որ Բարձրագույն աշխարհների հետ համահնչունություն ձեռք բերելու համար ձեզ անհրաժեշտ է ունենալ անվերապահ Հավատ և

հնազանդություն համայն այս տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքի առջև: Այն դեպքում, երբ համալարվում էք մեր թրթռանքների հետ, ձեր մարմինները ձեռք են բերում մեծ հաղորդականություն: Եվ այն ամբողջ անպետքությունը, որը նստած է ձեր չորս ստորին մարմիններում, ցեխի ու փոշու նստվածքի պես սկսում է պոկվել ու հետ ընկնել ձեզնից:

Իսկ այն դեպքում, երբ դեռ նոր եք սկսել ընթանալ Ուղով, դարերով կուտակված ցեխի այնքան շատ շերտեր են տարանջատվում ձեզնից, որ կորցնում եք ձեր ուղենիշներն ու ձեր շարժման ուղղությունը: Ահա այսպես, ձեզ համար երբեմն անսովոր է թվում այն, ինչ ձեզ հետ տեղի է ունենում:

Այնինչ տեղի են ունենում շատ բնական գործընթացներ: Եթե նախկինում թրթռում էիք այլ հաճախականությամբ և համահնչունություն պահպանում ֆիզիկական աշխարհի ու ձեզ շրջապատող ամեն ինչի հետ, ապա այժմ սկսում եք թրթռալ ավելի բարձր հաճախականությամբ, և ձեզնից պոկվում է այն ամենն, ինչը խոչընդոտում է ձեր թրթռանքի արագացմանը:

Երբ սկսում եք շատ արագ ընթանալ, ձեզ խանգարում է ձեր ավելորդ ուղեբեռը: Նույնը տեղի է ունենում նաև այն ժամանակ, երբ սկսում եք արագացնել Ուղով ձեր ընթացքը: Եվ նույնիսկ այնպիսի անվնաս գործողությունն, ինչպիսին մեր ուղերձների ընթերցումն է, ձեզնից շատերի մեջ այնպիսի էներգետիկական փոթորիկ է առաջացնում, որ երբեմն հարկ է լինում կանգ առնել, որպեսզի վերականգնվի հավասարակշռությունը, գիտակցեք այն, ինչ տեղի է ունենում, և նոր ուժերով նորից առաջ ընթանալ:

Ձեր Ուղու դադարներն ավելի ու ավելի կարճատև կդառնան, և ժամանակի ընթացքում դուք լրիվ ընթացք ձեռք կբերեք՝ ընթացք հաղորդելով նաև այն բոլոր անհատներին, որոնք ինքնությունաբար չեն կարող համալարվել մեզ հետ: Եվ այդ կերպ ողջ մարդկությունը կարագացնի իր զարգացումը:

Մենք չէինք ուզենա, որ մեր ուղերձներն անցանկալի ազդեցություն թողնեն ձեզ վրա: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, եթե մեր թրթռանքները նշանակալիորեն հեռու են թրթռանքների այն մակարդակից, որը տիրապետող է մեր դեսպանորդի համար: Դրանից չի հետևում, որ պետք է ամեն ինչ թողնեք և այլևս չփնտրեք Աստծուն, դադարեք ընթանալ հոգևոր Ուղով: Հետևում է միայն, որ պետք է մի փոքր շունչ առնեք, քանի որ չափազանց արագ ընթանալուց շնչասպառ եք եղել: Եթե արագ քայլերից ձեր շունչը կտրվում է, դրանից չի հետևում, որ այլևս չպետք է քայլեք, այլ միայն նշանակում է, որ ձեր ծանրաբեռնվածությունը պետք է չափավորված լինի:

Ամեն մի բժիշկ ձեզ նույնը կասի: Եվ մենք էլ, հետևելով բժիշկներին, ձեզ ավելի դանդաղ տեմպ ենք նշանակում:

Նկատեք, որ բանն այն տեմպի մեջ չէ, որով շարժվում եք, այլ կայունության և միշտ միևնույն ուղենիշներով առաջնորդվելու մեջ:

Համաձայնե՞ք, որ եթե շատ արագ վազեք, բայց տարբեր օրերի՝ տարբեր ուղղություններով, ապա հազիվ թե հասնեք ձեր վազքի նպատակակետին: Եվ հակառակը՝ եթե շարժվում եք անշտապ, բայց մշտապես նույն ուղղությամբ, ապա վաղ թե ուշ կհասնեք ձեր շարժման նպատակակետին:

Ուստի շտապե՛ք՝ առանց աճապարելու: Յուրաքանչյուրին հատուկ է իր տեմպն ու իր շարժման ռիթմը:

Ամենավատն այն կլինի, եթե դադարացնեք ամեն մի շարժում կամ խեցգետնի պես սկսեք դեպի հետ ընթանալ:

Ի դեմս դրա՝ մենք գալիս ենք, որպեսզի պահպանենք ձեր նպատակամղման ներուժը և ճշգրտենք այն ուղենիշները, որոնցով առաջ եք շարժվում:

Չարժե, որ անտեսեք մեր խորհուրդները:

Իսկ այժմ մենք անցնում ենք այն ամենակարևորին, հանուն որի եկել ենք այս ուղերձը տալու: Գիտեք, որ տարին ավարտվում է: Եվ, ինչպես միշտ, այս ընթացքում իր աշխատանքն է սկսել Կարմայական Վարչությունը: Ուստի այսօր և մինչև տարեվերջ դուք հնարավորություն ունեք նամակով դիմելու Կարմայական Վարչությանը: Իսկ դա շատ կարևոր թողության շնորհ է, որը կարող է ձեզ համար էականորեն օգտակար լինել:

Կարմայական Վարչության անդամները ոչ միշտ են հնարավորություն ունենում միջամտելու ձեր ճակատագրին: Բայց եթե ինքներդ նամակով դիմեք Կարմայական Վարչությանը, ապա ձեր խնդրանքներն անպայման կքննարկվեն և ձեռք կառնվեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հանգամանքները կա՛մ փոխվեն, կա՛մ մեղմացվեն: Ամեն ինչ կախված է ձեր նպատակամղվածությունից և այն էներգիայից, որը եկող կիսամյակում դուք ունակ կլինեք հատկացնելու այն բանին, որ ձեր խնդրանքները կյանքի կոչվեն:

Ինչպես միշտ, դուք հնարավորություն ունեք Աստծո Ողորմածությամբ լուծելու ձեր ամենաչարքրված պրոբլեմները:

Իսկ հիմա հասավ մեր բաժանման պահը: Ուստի վերջում մեկ անգամ ևս խնդրում եմ, որ չմոռանաք մեր խրատներն ու մեր յուրաքանչյուր ուղերձը դիտեք որպես Աստծո Հայտնություն, այլ ոչ թե օրվա հերթական ժամանց:

ԵՍ ԵՄ Լանդլոն՝

Մեծն Աստվածային Ուղղորդիչի ներկայությամբ այսօր եղա ձեզ հետ

Վեհապետ Լանտո
25 դեկտեմբերի, 2008 թ.

Ուսմունք աշակերտի որակական հատկանիշների մասին

ԵՍ ԵՄ Լանտոն՝ այս օրով ձեզ այցի եկածը: Ինչպես միշտ, ես եկել եմ, որպեսզի գրուցեմ ձեզ հետ: Եվ հույս ունեմ, որ այսօրվա գրույցից դուք անժխտելի օգուտ կստանաք:

Իմ գալը նաև նպատակ ունի, որ վստահեցնեմ ձեզ, որ ձեր հաջողություններն ու Ուղով ձեր առաջընթացն ուղղակիորեն կախված են ձեր նպատակամղվածությունից և այնպիսի հատկանիշից, ինչպիսին կայունությունն է: Հաջորդ հատկանիշը, որն անհրաժեշտ է ձեզ, նվիրվածությունն է:

Եվ այսպես, նպատակամղվածություն, կայունություն և նվիրվածություն. ահա ձեր Ուղով ընթացքին շատ անհրաժեշտ հատկանիշները:

Կան ևս մի քանի որակային հատկանիշներ, առանց որոնց գործը գլուխ չի գա: Եվ դրանց մեջ ամենակարևորը Մերն է: Քանզի այնժամ, երբ դուք ունակ եք Մեր զգալու, ընկալունակ եք դառնում մեր թրթռանքների նկատմամբ: Իսկ երբ ձեր սիրտը լեփ-լեցուն է Սիրով, ձեր սիրտն է մուտք գործում նաև Աստծո Իմաստությունը՝ այն հատկանիշը, որը դուք կարող եք ձեռք բերել, եթե անխոնջ կերպով, օր օրի ականջալուր լինեք մեր խոսքերին և հետևեք մեր հանձնարարականներին:

Ես նաև կուզենայի մի երկու խոսք ասել Հավատի մասին: Եթե ձեր սրտերը լի են նվիրվածությամբ ու հավատով, ապա ձեր էությունը լցվում է այնպիսի գորությամբ, որ ձեզ չեն կարող սարսափեցնել ձեր աշխարհի ցանկացած փոթորիկներն ու հողմերը:

Ուստի նախքան որոշում ընդունելը, որ հետևեք մեզ՝ Համբարձյալ Վեհապետներին, նախքան մեր Ուսմունքին ու մեր հանձնարարականներին հետևելը ստուգե՛ք, թե արդյոք բավարար ուժե՞ղ է ձեր նպատակամղվածությունը և արդյոք ունե՞ք Ուղով ընթանալու համար անհրաժեշտ այն որակները, որոնք ես քիչ առաջ թվարկեցի:

Քանզի եթե ձեզ տիրեն կասկածները, և դուք սկսեք մշտապես ինչ-որ տեղ փնտրել ավելի լավ ու կատարյալ բաներ, ապա չեք կարողանա յուրացնել մեր Ուսմունքում առկա այն ճշմարտությունը և աստվածային շնորհատվության այն նեկտարը, որը մենք սփռում ենք մեր ուղերձներով, երկրի վրա հոսեցնում հենց ձեր կողքով, իսկ ձեր սրտերը մնում են դրան անհաղորդ:

Ուստի նախքան անխախտ որոշում կայացնելը, որ հետևեք այն Ուղուն, որն ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները, ստուգե՛ք, թե որքա՞ն է ուժեղ ձեր նպատակամղվածությունը. արդյոք այն չի՞ սպառվի ավելի շուտ, քան կարդալով կհասնեք այս ուղերձի ավարտին: Եվ եթե վստահորեն չեք կարող ասել, որ պատրաստ եք հետևելու մեր Ուսմունքին, նվազագույնը՝ մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը, ապա չարժե, որ ժամանակ ծախսեք մեր ուղերձները կարդալու վրա:

Քանզի դրանով դուք կգրադվեք կատարելապես անօգուտ և անիմաստ գործով: Դա նույն բանն է, ինչ փորձեք մաղով ջրել ձեր բանջարանոցը:

Աստծո ճշմարտության և ոչ մի հատիկ չի լուսավորի ձեր միտքը և խթան չի տա ձեր հետագա առաջընթացին, եթե չեք գնահատում այն, ինչ տրվում է ձեզ և մեր ուղերձ տալու հրաշքը դիտում եք որպես ժամանցային զբաղմունք:

Ձեր աշխարհն ավելի ու ավելի է թեքվում դեպի այն կողմը, որ դուք մշտապես զբաղված լինեք հերթական ժամանցների ու խաղալիքների փնտրտությամբ: Դուք այնպես եք խրվել այդ գործի մեջ, որ նույնիսկ չեք նկատում աստվածային հնարավորության այն ճոպանը, որը ճոճվում է ուղիղ ձեր քթի դիմաց:

Ես այսքան անգիջում ու խիստ չէի խոսի, եթե աչքի առաջ չունենայի շատ մարդկանց, որոնք առաջ են մղվել Ուղով, բայց սահել են դեպի անդունդը և հեռացել դեպի անէություն: Դուք մոռանում եք այն մասին, որ գտնվում եք երկդիմի, պատրանքային աշխարհում: Եվ հետևապես պետք է միշտ զգոն լինեք: Ուստի հարմար է գալիս ձեզ համեմատել աշխարհ եկած մարտիկների հետ: Որովհետև հատկապես հենց մարտիկի հատկանիշներն են, որ ձեզ անհրաժեշտ է ձեռք բերել:

Մարտիկը չի՝ տրտնջում, չի՝ բողոքում ճակատագրից. նա կատարում է իր մարտական պարտքը և հասկանում, որ եթե հանուն Գաղափարի ու Համընդհանուր Բարիքի պահանջվի զոհել իր կյանքը, ապա, ամենայն հավանականությամբ, ինքը դա կանի:

Բայց ձեր ժամանակներում անհամեմատ ավելի շատ բան է պահանջվում. ոչ թե ընդամենը մեկ անգամ զոհաբերել կյանքը հանուն Համընդհանուր Բարիքի ու Բարու, այլ ամբողջ կյանքը դարձնել անշահախնդիր ծառայության ու ինքնագոհողության շարունակական գործողություն:

Այդ խնդիրն ի վիճակի են լուծել միայն ոգով շատ ուժեղ մարդիկ: Եվ հիմա ձեր մեջ մարմին են առել անցյալի մեծագույն շատ յոգեր:

Մեծագույն շատ անհատականություններ են մարմին առել այս դժվար ժամանակներում: Եվ եթե կարծում եք, թե նրանք բարձր պաշտոններ են զբաղեցնում կամ շատ հայտնի մարդիկ են ձեր աշխարհում, ապա սխալվում եք: Հավանաբար ձեզնից ոչ ոք նույնիսկ չի էլ լսել այդ մեծագույն մարմնավորվածների մասին: Քանզի իրենց առաքելությունը նրանք կարող են ի կատար ածել միայն այն դեպքում, եթե իրենց վրա չիրավիրեն մարդկանց հայացքներն ու մտքերը, որոնք կարող են խանգարել Լույսի առաքելության իրականացմանը:

Մեր դեսպանորդի դեպքում բանն ուրիշ է: Քանզի դեսպանորդի պաշտոնը ստիպում է գտնվել ճակատամարտի առաջնային գծում: Ուստի ամեն մեկը չէ, որ կարող է իր վրա վերցնել Իմաստության Վեհապետների դեսպանորդ լինելու բեռը, և ամեն ոք չէ, որ կարող է, նախ և առաջ, դիմանալ այն էներգետիկական ծանրաբեռնվածությանը, որն ընկնում է դեսպանորդի ուսերին:

Այդ պատճառով մենք սպասում ենք, թե ե՞րբ ձեր աշխարհում ճիշտ վերաբերմունք կհաստատվի մեր դեսպանորդների նկատմամբ՝ հիմնված ոչ թե հետաքրքրասիրության և այդ հետաքրքրասիրությունը բավարարելու, այլ ծառայելու և հնարավոր ողջ օժանդակությունը ցուցաբերելու վրա:

Այն բանից ելնելով, թե ինչպես եք վերաբերվում մեր դեսպանորդներին, մենք դատում եք ձեր հոգևոր նվաճումների մակարդակի մասին: Ամեն ոք, ով հայտնվում է մեր դեսպանորդի տեսադաշտում, ինքնաբերաբար հայտնվում է նաև մեր տեսադաշտում: Եվ մենք այդ անհատներին ենք մատուցում այն ատամներ փշրող թեստերը, որոնցով հնարավոր է դառնում որոշել հավատարմության ու նվիրվածության աստիճանը և նրանց միջից առանձնացնել այն անհատներին, որոնք իրենց համար են ինչ որ բան փնտրում ու պատրաստ չեն ծառայության այն մակարդակին, որը հիմա պահանջվում է:

Ուստի նախքան մեր դեսպանորդի հետ որևէ փոխհարաբերության մեջ մտնելը խորհուրդ կտայի որ բազմակիորեն կշռադատեք. կարո՞ղ եք արդյոք դիմանալ և անցնել այն թեստերը, որոնք անխուսափելիորեն կթափվեն ձեր գլխին, հենց որ, թեկուզ մտովի, մոտենաք մեր դեսպանորդին:

Հը՛, վախեցրի՞ ձեզ... Բայց ես նպատակահարմար եմ համարում, որ նախապես զգուշացված լինեք այն մասին, թե ինչ է գալու ձեր գլխին, քան թե անտեղյակ լինեք ու հետո ամեն ինչի համար մեղադրեք մեր դեսպանորդին: Ձեզ համար դրանից վատ բան չի կարող լինել: Քանզի մեր դեսպանորդի հետ կարմա ունենալը հավասարագոր է Աստծո հետ կարմա ունենալուն: Իսկ դա ամենաձանր կարմայի տեսակն է, որը ներկայումս գոյություն ունի ձեր աշխարհում:

Ես երջանիկ էի այս ոչ մեծ Ուսմունք ձեզ տալով: Եվ ես հույս եմ տածում, որ երախտագիտությամբ կընդունեք այն ձեր սրտերում:

ԵՄ ԵՄ Լսնտոն: ՕՄ

Գուան Ին

26 դեկտեմբերի, 2008 թ.

Ուսմունք կարեկցանքի և գթասրտության մասին

ԵՄ ԵՄ Գուան Ինը: ԵՄ ԵՄ ձեզ այցի եկել այս օրով, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ:

Ես հազվադեպ եմ այցի գալիս: Հետևաբար ընկալեք իմ խոսքերը կրկնապատկված ուշադրությամբ: Ոչ այն պատճառով, որ ես եմ այդպես ուզում, այլ որովհետև դա ձեզ է անհրաժեշտ:

Ես գալիս եմ ձեզ ուսուցանելու կարեկցանք ու գթասրտություն: Քանզի եթե ձեր սրտերում չունենաք այդ հատկանիշները, ապա չեք կարողանա մուտք գործել նոր, գալիք դարաշրջանը:

Կարեկցանքն ու գթասրտությունը միայն մերձավորների հոգսերը հոգալով չէ, որ արտահայտվում են: Ձեր սրտի այդ հատկանիշները տիեզերական բնույթ ունեն և պետք է կիրառվեն բոլոր կենդանի էակների նկատմամբ: Համայն գոյի նկատմամբ ձեր հոգածությունը նույնքան պետք է լինի, որքան ձեր մոր նկատմամբ:

Եթե աշխարհում տիրապետող դառնան կարեկցանքի ու գթասրտության երկու հատկանիշները, ապա աշխարհը կլքեն մարդկային գիտակցության այնպիսի բացասական դրսևորումներն, ինչպիսիք են պատերազմները, ահաբեկչական գործողությունները, ատելությունը: Նաև շատ ուրիշ հատկանիշներ, որոնք ներկայումս բնորոշ են մարդկությանը, անեության գիրկը կանցնեն:

Եվ գլխավորը կդառնան միայն բոլոր կենդանի էակների նկատմամբ ձեր հոգածությունն ու ձեր Մերը յուրաքանչյուր աստվածային դրսևորման նկատմամբ:

Ձեր կյանքում որքա՞ն հաճախ եք մտորում այն մասին, թե ինչ ազդեցություն կարող էիք գործել ձեր շրջապատի վրա, եթե միայն ձեր սրտում տեղ գտնեին կարեկցանքի ու գթասրտության այդ երկու հատկանիշները: Խնդրում եմ դրանք չշփոթել խղճահարության և ձեզ մոտիկ մարդկանց մասին հոգ տանելու հետ: Քանզի այն դեպքում, երբ կապվածություն եք զգում ձեր մերձավորների հետ և փորձում, ինչպես ձեզ է թվում, նրանց նկատմամբ տածել կարեկցանք ու գթասրտություն, ապա հենց ինքներդ եք տառապում: Քանի որ գթասրտության ու կարեկցանքի հատկանիշները, եթե իրապես են դրսևորվում ձեր կողմից, կախված չպետք է լինեն այն բանից, թե ինչ կարգի ազգակցություն գոյություն ունի ձեր և այն մարդկանց միջև, ում նկատմամբ գթասրտություն ու կարեկցանք եք տածում:

Դուք կարող եք ընդհանրապես չճանաչել այն մարդկանց, որոնք տառապում կամ օգնության կարիք են զգում, բայց ձեր սրտի Սիրո և օգնության առաքումն ունակ կլինի փոխելու այն իրադրությունը, որում գտնվում են այդ մարդիկ՝ նպաստելով այն բանին, որ աստվածային հատուցումն այդ հոգիների կողքով անցնի կամ առաջադրվի կարմայի բեռնաթափման ամենաթեթև եղանակը:

Ողջ դժվարությունն այն է, որ գթասրտության ու կարեկցանքի մասին ձեր պատկերացումը տարբեր է մեր պատկերացումից:

Ձեր տեսակետը տարածվում է ընթացիկ մարմնավորման կամ նույնիսկ դրա ընդամենը մի ժամանակահատվածի վրա: Ուստի երբ տեսնում եք, որ մարդիկ տառապում են, և դուք չեք կարողանում նրանց օգնել, վշտանում և ինքներդ եք սկսում տառապել:

Աստվածային կարեկցանքը մի փոքր ավելի վեր է մարդկանց պատկերացրածից և վերաբերում է ոչ այնքան ֆիզիկական մարմնին, որքան հոգու փրկությանը: Եվ երբեմն այն, ինչը ձեր տեսակետից թվում է ահավոր ու անարդարացի, մենք դիտարկում ենք այդ նույն իրադրությունը և կարծիք հայտնում, որ դրանով հոգուն հնարավորություն է ընձեռված ամենաարագ ու դյուրին ձևով թեթևացնելու իր կարմայական բեռը:

Ամեն ինչ կախված է մոտեցման տեսակից: Մենք դիտարկում ենք անցյալի մարմնավորումների ողջ շրջան և տեսնում, թե հետո ինչ ավելի լավ մարմնավորում է նախապատրաստվում տառապող հոգու համար:

Դա չի նշանակում, որ դուք պետք է համակվեք անտարբերությամբ և հանգիստ անցնեք այն մարդկանց կողքով, ովքեր օգնության կարիք ունեն: Այլ միայն նշանակում է, որ ամեն ոք պետք է բեռնաթափի կարմայի այն շերտանստվածքը, որի բեռնաթափման հերթը հասել է: Եվ այն դեպքում, երբ օգնություն եք ցուցաբերում որևէ կարիքավորի, նախ և առաջ պետք է մտահոգվեք նրա հոգու, այլ ոչ թե ֆիզիկական մարմնի հարցով:

Քանզի նախ հոգին է տառապում, հետո նոր միայն ի հայտ են գալիս խոցեր, հիվանդություններ և ֆիզիկական ոլորտի անբարենպաստ կարմայական իրավիճակներ:

Ձեր օգնությունը դուք պետք է ցուցաբերեք ֆիզիկական ոլորտում, բայց միշտ նկատի պետք է ունենաք, որ այն, ինչ ձեզ հետ կատարվում է ֆիզիկական ոլորտում, ոչ այլ ինչ է, եթե ոչ անցյալի ձեր սխալ արարքների, մտքերի ու զգացմունքների հետևանքը: Ուստի, որպեսզի իրավիճակը հարթվի ֆիզիկական ոլորտում, հարկ է, որ փոխվի այդ ոլորտում տառապանքներ կրող մարդկանց գիտակցությունը:

Ցավոք, երբեմն կարման այնքան ծանր է լինում, որ մարդն ի վիճակի չի լինում գիտակցելու, որ իր գլխին եկած փորձանքն անցյալի իր սխալ արարքների հետևանքն է: Նա ունակ չի լինում գիտակցելու կարմայական կապերի ու կարմայական հատուցման առկայությունը: Նման դեպքում, երբ, ձեր Սիրո ու կարեկցանքի զգացումից ելնելով, կարեկցում եք այդ մարդու հոգուն, այն ձեզնից լրացուցիչ խթան է ստանում, որի օգնությամբ կարող է պոկվել պատճառի ու հետևանքի արատավոր շրջանից և վեր կանգնել դրանից: Եվ նույնիսկ եթե տվյալ մարդը մահանում է, ապա շնորհիվ ձեր կարեկցանքի զգացումի և այն կոչերի, որոնք հղում եք նրա հոգու փրկության համար, նա կարող է իր գիտակցությամբ բարձրանալ այնպիսի մակարդակի վրա, որտեղ հրեշտակներն ու Լուսի էակները նուրբ ոլորտում արդեն ունակ կլինեն ձեռք մեկնելու և օգնություն ցուցաբերելու նրա հոգուն:

Այն դեպքերում, երբ ճշմարիտ գթասրտություն ու կարեկցանք եք տածում տառապող անհատների նկատմամբ, դուք նրանց եք փոխանցում ձեր նվաճումների մի մասը, և ձեր այդ նվաճումների միջոցով այդ հոգիներն ունակ են դառնում վեր բարձրանալու:

Ուստի, որպեսզի ճշմարիտ գթասրտություն ու կարեկցանք տածեք, հարկ է, որ ձեռք բերեք նվաճումների որոշակի պաշար:

Ձեր մեջ կան Բուդդաներ ու Բողոհիսատվաներ, որոնք օժտված են ճշմարիտ գթասրտությամբ ու կարեկցանքով, սակայն մարդկանց մեծամասնությունը գթասրտություն ասելով պարզապես խղճահարություն է հասկանում:

Երբ ճշմարիտ գթասրտությունն ու կարեկցանքը մարդկանց մեծամասնության մշտական ուղեկիցները կդառնան, տառապանքներն աստիճանաբար կքեն ձեր աշխարհը: Տառապանքները մաքրում են ձեր հոգիներն այն բանի շնորհիվ, որ տառապող հոգին բեռնաթափում է կարմայի մեծ շերտանստվածք:

Հիմա առանց դրա հնարավոր չէ ոչինչ անել, քանի որ մարդկության կարման չափազանց շատ է ծանրացած: Սակայն մարդկությունն աստիճանաբար կընթանա մեր ցույց տված ուղղությամբ: Եվ ցանկալի կլինեք, որ կանգ չառնեիք այդ Ուղու վրա: Չափազանց շատ աշխատանք է սպասվում առջևում:

ԵՄ ԵՄ Գուան Ինը

Տեր Շիվա

27 դեկտեմբերի, 2008 թ.

Հասել է ձեր գիտակցության մեջ վիթխարի փոփոխություններ իրականացնելու ժամանակը

ԵՄ ԵՄ Շիվան...

Ես եկա...

Այսօր եկել եմ, որպեսզի ավերեմ ձեր գիտակցության որոշ կարծրատիպեր, որոնք վերջին հազարամյակների ընթացքում հուսալիորեն դիրքավորվել են ձեր գիտակցության մեջ:

Եվ ամենակարևոր կարծրատիպը, որն այսօր եկել եմ ավերելու, վերաբերում է այն բանին, որ դուք ունակ եք ինքներդ որոշում ընդունելու ձեր կյանքում և գործելու այնպես, ինչպես խելքներիդ կփչի: Այո՛, ձեր աշխարհում գործում է ազատ կամքի օրենքը: Եվ մենք չենք միջամտում ձեր որոշումներին, քանի դեռ ձեր որոշումները, ձեր վարվելակերպն ու կենսակերպը վտանգ չեն ներկայացնում ձեր մոլորակի քաղաքակրթության համար:

Սակայն գալիս է պահը, երբ ձեր ազատ կամքը ձեզ հասցնում է կարմայական փակուղու: Եվ այն ամենն, ինչ անում եք, հանգեցնում է խառնակ ամենաթողության՝ խնջույքի ժանտախտի ժամանակ:

Դրան պետք է վերջ տրվի: Եվ այժմ ես եկել եմ, որպեսզի ձեր հոգիներին հիշեցնեմ ավելի լավ ժամանակների մասին, որոնք եղել են Երկրի վրա: Ժամանակներ, երբ կար Տիեզերական Օրենքի գերակայություն: Եվ Երկրի մարդկությունը ենթարկվում էր խրատատուներին, որոնք էվոլյուցիոն զարգացման ավելի բարձր աստիճանների վրա էին կանգնած: Ազատ կամքի չարաշահումը հասցրեց այն բանին, որ շղարշը թանձրացավ, և մարդկության խրատատուներն այլևս չէին կարող ներկա գտնվել մարդկանց շրջապատում:

Ներկա ժամանակահատվածը կալի յուզան է՝ խավարի ու տգիտության դարաշրջանը:

Ուստի այժմ մենք գալիս ենք, որպեսզի տեղյակ պահենք ձեզ, որ տգիտության լծի տակ մնալու ձեր ժամանակը մոտենում է իր ավարտին: Մոտենում է այն ժամանակը, երբ ձեր խրատատուները պետք է վերադառնան և շրջեն ձեր մեջ:

Սակայն դրա համար ինքներդ պետք է համապատասխան պայմաններ ստեղծեք: Եվ այդ պայմանները պետք է ձեր աշխարհի վերադառնան ձեր գիտակցության փոփոխության շնորհիվ: Քանզի երբ մարդկությունը համառոտ է և փորձում պահպանել Էգոյի դիրքերը, վրա է հասնում այն արհավիրքների հերթը, որոնք Երկրի երեսից սրբում են ամբողջական քաղաքներ և նույնիսկ մայրցամաքներ:

Ուստի ես ձեզ ոչ թե ահաբեկում եմ, այլ ասում եմ, որ ժամանակը կարճ է: Եվ Բարձրագույն Օրենքի առջև ձեր հնազանդ լինելն այժմ անհրաժեշտ է, ինչպես երբեք:

Դադարեք ձեզ աստծո տեղ դնել: Պարզապես եղե՛ք աստվածներ: Մեզ հետ հավասար դարձեք, բայց դրա համար հարկ կլինի, որ ինչ-որ բան զիջեք: Հարկ կլինի, որ զիջեք ձեր անիրական մասը՝ ձեր Էգոն, որը սովորել է վարել պարահանդեսը Երկրի մոլորակի ֆիզիկական ոլորտում:

Ես ձեզ ասում եմ. «Վերջանում է կալի յուզայի դարաշրջանը: Եվ հասել է ձեր գիտակցության մեջ վիթխարի փոփոխություններ իրականացնելու ժամանակը»:

Որպես անկյունաքար՝ պետք է դրվի ձեր հնազանդությունը Բարձրագույն Օրենքին:

Ձեր Էգոն ձեզ ստիպում է դես ու դեն ընկնել ու կասկածել, փնտրել ձեր քմահաճույքներին ու ցանկություններին հագուրդ տալու ինչ-որ բաներ:

Հարկ է, որ հասկանաք, որ մոտենում է ձեր անիրական մասի վերջը: Եվ այն անհատներն, ովքեր պատրաստ չեն հարմարվելու նոր պայմաններին, ովքեր չափազանց շատ են տարված իրենց անիրական մասով, կհայտնվեն իրենց համար շատ ծանր ժամանակներում: Այն կարման, որը դուք շարունակում եք ստեղծել ձեր անտեղյակության կամ տգիտության պատճառով, արդեն գերազանցում է բոլոր խելամիտ սահմանները: Եվ նույնիսկ Համբարձյալ Դասերի գործությունը չի բավականացնում, որ պահի ձեր կարման որոշակի սահմանների մեջ, որպեսզի այն ավերից դուրս չգա և Երկրի երեսից չարբի մայրցամաքների մեծ մասը:

ԵՍ ԵՄ Շիվան՝ պատրանքներ ավերողս: Եվ իմ գործությունն անհնար է համեմատել բոլոր գրքային կախարհների գործության հետ, որոնք իրենց մարմնավորված աստվածների տեղ են դնում:

Սթափվե՛ք: Ձեր դարում, երբ բյուրեղյա լարով ձեր էության մեջ իջնող աստվածային գործությունը գիտակցորեն թուլացված է, դուք ունակ չեք որևէ լուրջ գործողություն իրականացնելու և չեք կարող նշանակալի չափով հակադրվել աստվածային գործությանը: Դուք կարող եք միայն բարդացնել ձեր կարման և այն դարձնել աներևակայելի չափով մեծ:

Ես գալիս եմ, որպեսզի դուք հասկանաք, որ ձեր անիրական մասի դիմադրությունը շուտով կհասնի իր վախճանին:

Մնացել է մի փոքր ժամանակահատված, երբ ձեզ հնարավորություն է տրվում, որպեսզի փոխեք Եվոյուցիային վերաբերող ձեր հայացքները:

Անխելամիտ է, չափից դուրս անխելամիտ ինքներդ ձեզ Աստծուց, Աստծո Հիերարխիայից կտրելը, որը գոյություն ունի այս տիեզերքում: Կարծես թե դա ձեզ բազմակի անգամ ասվել է, և ես զարմանքով նկատում եմ, որ մեր կողմից տրված տեղեկությունների մեծ մասը ձեր կողմից չի յուրացվում: Դուք նշանաձողեր եք վերցնում, բայց չեք խորանում տրված Ուսմունքի մեջ:

Այնքան պարզ բան է Բարձրագույն Օրենքին հնազանդվելն ու այլևս չդիմադրելը, սակայն ձեր Էգոն կրկին ու կրկին գլուխ է բարձրացնում և շարունակում իր կռիվը: Ու՛մ դեմ եք կռվում...

Ձեզ տարօրինակ չի՞ թվում, որ կռվում եք ճշմարիտ Աստծո դեմ, մեր ու ձեր միջև մեջտեղ դնելով հնարավոր աստվածների, որոնց ինքներդ եք ստեղծել՝ ըստ ձեր պատկերի և նմանության:

Ժամանակը չէ՞ արդյոք հայացքն ուղղելու դեպի այս տիեզերքի միասնական Աստվածը և ոչ թե աղոթելու այն աստվածներին, որոնց հորինել է ձեր անկատար գիտակցությունը:

Ես այս օրով եկա, որպեսզի խրատեմ ձեզ Աստծո Ճշմարտության ճանաչման ձեր Ուղու վրա և ձեր ուշադրությունը հրավիրեմ այն բաների վրա, որոնք խանգարում են իմացության Ուղու վրա այդ Ճշմարտության ճանաչմանը:

*ԵՍ ԵՄ ՇԻՎԱՆ...
ՕՍ ՆԱՄՄԱԿ՝ ՇԻՎԱՅԱ*

Բարաջի

28 դեկտեմբերի, 2008 թ.

Ես եկել եմ, որպեսզի ձեզ առաջ մղեմ...

ԵՍ ԵՄ Բարաջին, այս օրով եկել եմ, որպեսզի, ինչպես միշտ, ձեզ հետ սրտաբաց գրույց վարեմ, և հույս ունեմ, որ ձեր սրտերում ըմբռնում ու համագործակցության պատրաստակամություն կգտնեմ:

Ձեր աշխարհին հրաժեշտ տալուց հետո ես աշխատում եմ ջանք չխնայել, որպեսզի Երկրի մարդկությունը կարողանա հաղթահարել գոյություն ունեցող խոչընդոտները, նաև որպեսզի հնարավորինս արագ գա այն ժամանակը, երբ այլևս այդքան շատ տառապելու կարիք չեք ունենա: Տառապանքների պատճառն ու դրանց խորությունը հենց ձեզնով են պայմանավորված: Ուստի շատ կարևոր է, որ կարողանաք ձեր կյանքում նշմարել այն պահերը, երբ սկզբնավորում եք ձեր և ձեր երեխաների ապագա տառապանքների պատճառները: Հարկավոր է, որ շատ ուշադիր ու շրջահայաց լինեք ձեր կյանքի ընթացքում: Չէ՞ որ երբեմն միայն այն բանի համար, որ պնդեք ձեր իմացածն ու ձեր հաղթական տեսակետը, դուք պատրաստ եք լինում նույնիսկ ձեր խղճին դեմ

գնալու և կատարելու շատ անվայել արարքներ: Արժե՝ արդյոք, որ վատնեք ձեր ջանքերն ու Աստծո թանկարժեք էներգիան միայն այն բանի համար, որ սփոփեք ձեր էգոյին:

Չարժե՝ Եվ ես ասում եմ ձեզ, որ եկել է ձեր զարգացման այն ժամանակահատվածը, երբ պետք է գիտակցված ձևով մոտենաք ձեր ամեն մի գործողությանը: Քանզի այն գործերը, որոնք դուք կանեք ձեր էգոյի օգտին, շատ արագ ձեր կյանքում ի հայտ կբերեն իրենց փտած պտուղները:

Ուստի եղեք ավելի իմաստուն, ավելի խիզախ: Մի՛ երկնչեք ձեր հայացքներն ու համոզմունքները պահպանելուց, եթե նույնիսկ դրանք հակասում են ձեր կողքին ապրող մարդկանց հայացքներին:

Դուք ձեր կյանքում պետք է առաջնորդվեք բարձրագույն իմաստությամբ և ընթանաք Վերին Ուղով...

Եվ նույնիսկ այն դեպքում, երբ ձեզ կլվա, թե ոչ որ ձեզ չի հասկանում, և ձեր շրջապատում չկա մեկը, որի հետ կիսվեք աստվածային իմացության բնագավառի ձեր հայտնությամբ, մի՛ վշտացեք: Ես մշտապես ձեր կողքին եմ: Եվ Համբարձյալ մյուս Վեհապետները նույնպես ձեր կողքին են: Բավական է միայն, որ ունենաք մեր մտապատկերն ու դիմեք մեզ, որպեսզի մենք արդեն լսենք ձեզ: Մի՛ կարծեք, թե դուք մենակ եք ձեր աշխարհում. Համբարձյալ Վեհապետները գտնվում են հենց այնտեղ, որտեղ դուք հիմա ապրում եք: Մեզ համար տարածական խոչընդոտներ գոյություն չունեն: Մենք շտապում ենք արձագանքել ձեր կանչին մտքի արագությամբ և պատրաստ ենք օժանդակելու ձեր բոլոր այն նախաձեռնություններին, որոնք սկսում եք հանուն Քրիստոսի, հանուն Բուդդայի, հանուն Մովսեսի, հանուն Մուհամեդի կամ հանուն այն բազմաթիվ Լույսի Էակների, որոնք երբևէ մուտք են գործել ձեր աշխարհ և ձեզ ուսուցանել Աստծո ճշմարտությունը:

Մեր միջև հակասություններ չկան: Մենք կազմում ենք մի ընտանիք, մի Համայնք: Ի՞նչն է խանգարում, որ նույնն էլ լինի ձեր ֆիզիկական ոլորտում:

Կրոնական հողի վրա կառուցված ձեր հակասությունները հորինովի են և ստեղծվել են այն մարդկանց կողմից, որոնք փորձում են պարտադրել իրենց կարծիքը և պատրաստ են դրա համար դիմելու անաստվածահաճո արարքների: Ընթացե՛ք Վերին Ուղով: Միշտ ջանացե՛ք տեսնել այն ընդհանուրը, որն ընկած է տարբեր կրոնների ու տարբեր կրոնական հոսանքների հիմքում, և կհամոզվեք, որ ընդհանրություններն անհամեմատ ավելի շատ են, քան տարբերությունները:

Մենք բոլորս նույն ընտանիքն ենք ներկայացնում: Նախապես մեզ բաժանող ոչինչ չկար: Ձեր աշխարհից դուրս բաժանող ամեն ինչը ենթակա է այրման ու պատմության աղբանոց նետվելու:

Գալիս է նոր մտածողության ժամանակաշրջանը, երբ ամոթ կլինի ձեր տեսակետը չկիսող մարդկանց մեղադրել հերետիկոսության մեջ: Գալիս է այն ժամանակաշրջանը, երբ տարբեր կրոնական հոսանքների պատկանող շատ մարդիկ կհասկանան, որ այլևս չկա այն, ինչը դարերով բաժանում էր մարդկանց: Նրանց գիտակցության մակարդակը թույլ կտա, որ վեր կանգնեն հակասություններից և տեսնեն ընդհանրականը:

Իսկ այն կրոնական գործիչները, որոնք կանդեն հինը և կառչած կմնան կրոնական դոգմաներից, կա՛մ ստիպված կլինեն փոխելու իրենց գիտակցությունը, կա՛մ կմնան միայնակ, որ իրենց քարոզը կարդան անապատում: Քանզի մարդիկ կլքեն բոլոր այն տաճարները, որտեղ չկա Աստված:

Չգայուն մարդիկ կկարողանան երկրագնդի վրա գտնել այն վայրերը, որոնց թրթռանքները համահունչ են մեր թրթռանքներին: Եվ այն բնակավայրերն ու համայնքները, որոնք դուք կկառուցեք այդ վայրերում, շատ շուտով թույլ կտան ինձ ու իմ եղբայրներին, որ հյուր գանք ձեզ սկզբում կարճ, իսկ հետո՝ ավելի ու ավելի երկար ժամանակով:

Իմացեք, որ ձեր թրթռանքներն ու ձեր մտածողությունն են ներկայումս խոչընդոտում, որ բարձրանաք Էվոյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի վրա:

Փորձեցե՛ք վեր բարձրանալ, ես խնդրո՛ւմ եմ ձեզ:

Պատկերացրեք, որ նստած եք պարսպի հետևում և չեք տեսնում, թե ինչ կա դրանից այն կողմ: Ընդամենը փոքրիկ ջանք է պահանջվում, որ հաղթահարեք այդ արգելքը, դուրս գաք բաց տարածություն և զարմանքով տեսնեք, որ աշխարհն անհամեմատ ավելի բազմազան է ու հետաքրքիր, և կա այն, ինչի համար արժե՛ ապրել...

Այժմ ձեր գիտակցությունը շատ նեղացված է և ձեր իսկ կողմից կաշկանդված է կայուն կարծրատիպերով: Հարկավոր է, որ հաղթահարեք ձեր գիտակցության այդ վիճակը: Չարդե՛ք վերջապես ձեր կճեպը և դուրս եկեք Լույս աշխարհ: Դուք նման եք այն ճտերին, որոնց ժամանակը հասել է, որպեսզի ճեղքեն կճեպը և քայլ անեն անձամոթ աշխարհում:

Հին աշխարհն իր բոլոր սահմանափակումներով ու հակասություններով պետք է անցյալի գիրկն անցնի: Ես մեծ հույսեր եմ կապում ձեր արիության, դիմացկունության, խիզախության և ցանկացած իրավիճակում գործելու ձեր ունակության հետ:

Ես մի անգամ չէ, որ ասել եմ այն մասին, որ եկել է այն ժամանակը, երբ աշխարհը պետք է թևակոխի նոր դարաշրջան: Պետք չէ հապաղել ու նայել, թե ինչ են անում հարևանները: Գոյություն ունի միայն ձեր անձնական փոխհարաբերությունն Աստծո հետ, և երբեք չարժե կողմնորոշվել այն բանով, թե ինչ են անում ձեր հարևաններն ու ծանոթները: Ձեր սրտերում առկա է մեխանիզմ, որը մշտապես գիտի, թե որ կողմ եք շարժվում: Եվ այն դեպքում, երբ շարժվում եք դեպի Լույսը, դուք կասկածներ չեք ունենում: Կասկածներն առաջանում են այնժամ, երբ հայացք եք նետում դեպի հետ, որպեսզի ձեր ուղղությունը ճշգրտեք ձեր այն հին ծանոթների միջոցով, որոնք խցկվել են իրենց բները և չեն ուզում քայլ անել դեպի Լույսը:

Եկել է Նոր Ժամանակ, եկել է նրանց համար, ովքեր խիզախ են ու բաց, ովքեր եռանդուն են ու աշխատասեր:

Շտապե՛ք, որ բաց չթողնեք աստվածային հնարավորությունը... Շտապե՛ք անել ձեր քայլը Նոր Աշխարհում...

Ես եկա, որպեսզի խթանեմ ձեզ, արագացնեմ ձեր ընթացքը, քաջալերեմ: Զանգի տեսնում եմ, որ ձեզնից շատերին չի բավարարում խիզախությունն ու վճռականությունը: Ձեզնից շատերը ենթարկվել են շրջապատի ազդեցությանը և հակված չեն ինքնուրույն գործելու:

Ես եկա, որպեսզի ձեզ առաջ մղեմ...

Խիզախե՛ք...

ԵՍ ԵՄ Բարաջին: ՕՍ

Վեհապետ Էլ Մորիա
29 դեկտեմբերի, 2008 թ.

Պահի խստությունը պարտադրում է ինձ, որ նախազգուշացնեմ ձեզ տեղի ունեցողի մասին

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ կրկին ձեզ այցի եկածը...

Ես եկել եմ տարեվերջյան այս օրերից մեկում, և դա ունի իր պատճառները: Համամոլորակային բնույթ ունեցող պատճառները: Ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ անցյալ տարի որոշում է ընդունվել Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքների բարձրացման մասին*: Հնարավոր է, որ այդ լուրն անցել է ձեր գիտակցության կողքով՝ առանց որևէ հետք թողնելու:

Շատ տարօրինակ է լսել Բարձրագույն Կարմայական Խորհրդի ինչ-որ որոշումների մասին, երբ չորս բոլորը տոնական ունայն խառնաշփոթ է տիրում: Եվ հասկանալի չէ, թե այդ լուրն ինչպե՞ս կանդրադառնա ձեզնից յուրաքանչյուրի կյանքի վրա:

Իրոք, մեկ տարի առաջ այդ իրադարձությունն իրեն ոչ մի կերպ չդրսևորեց, և դուք կարծեցիք, որ հավանաբար վերեններում ինչ-որ բան խառնել են:

Եվ հնարավոր է, որ ձեզնից շատերը կարծում էին, թե ֆիզիկական ոլորտի թրթռանքների բարձրացումը նման է ինչ-որ տոնական, աղմկոտ և ուրախ մի բանի:

Թույլ տվեք տալ իրավիճակի բացատրությունը, ինչպես ես եմ այն հասկանում, և ինչպես մեկնաբանում եմ Համբարձյալ Վեհապետները:

Ձեր համաշխարհային հանրությունը՝ որպես մարմնավորման մեջ գտնվող անհատների համակեցություն, չկարողացավ ինքնուրույնաբար վեր բարձրանալ Էվոյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի վրա: Դուք գերադասեցիք թաքնվել և կյանքից հաճույքներ ստանալ՝ ամեն մեկդ իր հարմարավետ բնի մեջ կույժ եկած:

Ուստի որոշում ընդունվեց ձեզ մի փոքր շտապեցնել: Եվ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքները մի փոքր բարձրացվեցին: Անցավ մեկ տարի, և թրթռանքների այդ բարձրացումն սկսեց արտահայտվել ձեր կյանքերում: Այն չի վերաբերում որևէ առանձին երկրի, որևէ կոնկրետ անձի կամ մարդկանց որոշակի խմբի, այլ համամոլորակային իրադարձություն է և իր անդրադարձը կունենա Երկիր մոլորակի վրա ապրող բոլոր մարդկանց կյանքերի վրա:

Մեկը չի դիմանա թրթռանքների բարձրացմանը և այլ աշխարհ կտեղափոխվի, մյուսը կհիվանդանա, իսկ մեկի վրա էլ թրթռանքների բարձրացումն այնպես կազդի, որ կսրվեն նրա հոգեբանական բոլոր խնդիրները: Ամենավատն այն կլինի, որ պետությունների ճակատագրերը հայտնվեն հոգեկան հավասարակշռությունից զուրկ մարդկանց ձեռքերում, որոնց վրա մենք ազդել չենք կարող, քանի որ նրանք ընտրություն են կատարել հայտնվելու մեզ հակադիր ուժերի ազդեցության տակ: Այդ պատճառով է, որ գոյություն ունի պատերազմների, ահաբեկչական և ցանկացած այլ գործողությունների վտանգ այն մարդկանց կողմից, որոնք փորձում են իրենց հարցերը լուծել հին եղանակներով՝ առանց հաշվի առնելու, որ ժամանակը փոխվել է:

Ուստի նման գործողությունների համակշռումը պետք է և անհրաժեշտ: Մենք փորձում ենք դա անել, սակայն պահանջվում է նաև ձեր օգնությունը:

Համաշխարհային ֆինանսական համակարգը նույնպես պետք է համապատասխանի նոր ժամանակին, և եթե մոտակա ժամանակներում այն չվերակառուցվի և չփորձի բավարարել նոր պահանջները, ապա համաշխարհային տնտեսությանը սպասվում է այնպիսի խոր ճգնաժամ, որի նմանը մարդկությունը չի տեսել ողջ իրեն հասանելի ու նկարագրյալ պատմության ընթացքում:

Դուք շահ տա՞ծե՞լու բան ունեք տարեվերջյան այս օրերին: Եվ ես կարող եմ հուշել, թե ինչ պետք է նախաձեռնեք: Ձեզ հարկավոր է ձեր ներսում գտնել անդորրի, հանդարտության ու խաղաղվածության այն կետը, որում ներկա է Աստված: Եվ այդ կետից դուք պետք է փորձեք հասկանալ, որ ձեր ֆիզիկական աշխարհում չկա որևէ բան, որը կարողանար ձեզ վնասել, եթե միայն ինքներդ չեք ցանկանում խուճապի մատնվել ու փրկության նպատակով փախուստի դիմել:

Դուք փախչելու տեղ չունեք: Ձեք կարող հավաքել ձեր կենցաղային իրերն ու տեղափոխվել ուրիշ մոլորակ: Ձեզ կվիճակվի դիմանալ մինչև վերջ: Կվիճակվի համակերպվել այն ամենին, ինչ պետք է տեղի ունենա և արդեն տեղի է ունենում: Իմ կողմից կարող եմ ասել, որ ձեզ որոշակի հնարավորություն է տրվում, և ամեն ինչ տեղի է ունենում շատ դանդաղ: Այնպես որ բառացիորեն ձեզնից յուրաքանչյուրն ունակ է ազդեցություն գործելու աշխարհում ընթացող գործընթացների վրա: Որքան շատ մարդիկ կարողանան պահպանել անդրդվելիություն ու հանդարտություն, որքան շատ լինի ձեր հավատը, այնքան ընթացող ամեն ինչը տեղի կունենա ու կընդլայնվի ավելի հեշտ ճանապարհով:

Այժմ ձեզ անհրաժեշտ է հավատալ, որ ոչ մի ուժ չի կարող վնաս պատճառել ձեր հոգիներին, քանի դեռ վստահ կլինեք ձեր սեփական անխոցելիության մեջ:

Հասել է ձեր ակտիվ գործողությունների ժամանակը: Այ՛նչ և չեք կարող այնպիսի տեսք ընդունել, որ իբր ոչինչ տեղի չի ունենում: Եվ ձեր նախկին ժամավաճառությունները, զբաղմունքներն ու խաղերը շատ շուտով ձեզ կթվան կատարյալ անպետքություններ, և դուք կզարմանաք, թե որքա՛ն աննպատակ ժամանակ եք վատնել դրանց վրա: Անհրաժեշտ է հետ բերել կորցրածը: Եվ ձեզնից նրանց է ուղղված այսօրվա իմ խոսքը, ովքեր պատրաստ են գործելու հանուն Երկիր մոլորակի կենսահոսքերի բարօրության, ովքեր պատրաստ են արթնացնելու քնածներին և նրանց դուրս հանելու իրենց հրդեհվող տներից:

Շտապեցե՛ք: Ժամանակ քիչ է մնացել: Մենք արթնության ենք կոչում բոլոր նրանց, ովքեր դեռևս ի վիճակի են արթնանալու: Մենք անում ենք այն ամենը, ինչ թույլ են տալիս մեր ուժերը: Իսկ դուք անու՛մ եք այն, ինչ թույլ են տալիս ձեր ուժերը:

Կարո՞ղ եք արդյոք արթնացնել և ուղի դուրս բերել ձեր շրջապատից գոնե մի հոգու:

Շատերն այնքան քաղցր են քնած, որ ոչինչ չեն ընկալում: Շա՛տ ափսոս, որովհետև տիեզերական հնարավորության ժամանակն արդեն մոտենում է իր ավարտին: Եվ հարցը միայն այն է, թե որքա՞ն հոգիներ դեռևս կարող են փրկվել: Հաշվի մեջ է յուրաքանչյուր հոգին:

Եվ ժամանակը կարճ է, ինչպես երբեք:

Ես այս օրով եկա, որպեսզի դուք վերջապես գիտակցեք իրավիճակի լրջությունը: Փորձեք հասկանալ, որ ձեր անխոցելիությունն ուղղակիորեն կապված է ձեր Հավատի ու նվիրվածության հետ՝ այն բանի հետ, թե որքանով եք ունակ ենթարկվելու համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին:

Ես չեմ ահաբեկում, բայց պահի խստությունը ստիպում է ինձ զգուշացնել ձեզ տեղի ունեցողի մասին և ձեր ձեռքը տալ փրկության հնարավորության ճոպանը:

ԵՄ ԵՄ Էլ Մորիան

*Տես 2007 թ-ի դեկտեմբերի 28-ի ուղերձը

Տեր Մայտրեյա
30 դեկտեմբերի, 2008 թ.

Ուսմունք աշխարհում տեղի ունեցող փոփոխության մասին

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ այս օրով ձեզ այցի եկածը...

Որքա՛ն ուրախալի է ֆիզիկական ոլորտի թրթռանքները կրկին զգալը. որքա՛ն քաղցր է այսօրվա մեր հաղորդակցությունը կանխավայելելը...

Ես երկար սպասում էի, որ գամ ու գրուցեմ ձեզ հետ: Եվ ահա եկա՛: Իմ Ուսմունքը ձեզ համար շատ հոգնեցուցիչ չի լինի: Ես եկել եմ, որպեսզի պատկերացում տամ իմ գալստյան մասին:

Գիտակցու՛մ եք արդյոք, թե որքա՛ն տարբեր են մեր թրթռիքները: Գիտակցու՛մ եք արդյոք, որ ինձ համար անհնարին է ձեր աշխարհի մուտք գործելը: Դուք ապրում եք ձեր աշխարհում, և այն հարազատ է ձեզ համար: Այդտեղ ամեն ինչ հարմարեցված է ձեր ապրելու համար:

Բայց ինձ համար այդպես չէ: Եթե մի վայրկյան ենթադրենք, որ մուտք եմ գործել ձեր աշխարհ, ապա, ի՞նչ եք կարծում, կկարողանա՞մ ընկալել այն ամենն, ինչը ձեզ շրջապատում է. մեքենաների արձակած գազերն ու դրանց աղմուկը, ձեր, այսպես կոչված, երաժշտությունը, ծխախոտի հոտը...

Նորմալ բան եք համարում, որ Վեհապետները հայտնվեն նման իրավիճակում:

Դե ինչ, ես եկել եմ, որպեսզի ցրեմ ձեր մոլորությունները: Երբեք և ոչ մի Վեհապետ ձեր աշխարհի մուտք չի գործի, քանի դեռ ձեր աշխարհը գտնվում է այնպիսի վիճակում, ինչպիսին հիմա է: Դժվարն այն է, որ ձեր աշխարհը հնարավորինս արագ բերվի այնպիսի վիճակի, որ Վեհապետները կարողանան գալ և մնալ այդտեղ: Իսկ մինչ այդ մենք ստիպված ենք օգտվել թարգմանիչների ծառայությունից, որոնք մեր դեսպանորդի նման ձեզ են փոխանցում այն ամենի իմաստը, ինչը մենք կամենում ենք հասցնել ձեր գիտակցությանը:

Շատ հասարակ բան է թվում աշխարհին այնպես փոխելը, որ Համբարձյալ Վեհապետները կարողանան այնտեղ գտնվել: Շատ քիչ բան է պահանջվում ձեզնից: Սակայն՝ ո՛չ. ձեր գիտակցությունն այնպես է կարծրացել, որ չի ուզում ենթարկվել գոնե մի փոքր փոփոխության:

Պատկերացրե՛ք, որ ձեզ, այս պահից սկսած, վիճակվի հրաժարվել բոլոր այն սովորություններից, որոնցից կառչած եք՝ ծխելուց, անաստված երաժշտություն լսելուց, հեռուստացույց դիտելուց... Ստիպված լինեիք հրաժարվել դատապարտումից, նախանձից, ատելությունից, չարամտությունից...

Ի՞նչ եք կարծում, իրատեսակա՞ն է դա:

Նույնքան էլ իրատեսական է ներկա ժամանակում իմ մուտք գործելը ձեր աշխարհ:

Եվ ես մյուս Համբարձյալ Վեհապետների պես հույս եմ տածում, որ համատեղ ջանքերով մենք կկարողանանք փոխել Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտը: Դուք այլևս չպետք է ապրեք այնպիսի իրավիճակում, ինչպիսին այժմ է: Աստվածամարդուն դա սազական չէ: Դուք պետք է ջանք թափեք, որ փոխեք ձեր թրթռիքները, ձեր գիտակցության մակարդակը: Եվ առաջին քայլը, որ պետք է անեք այդ ուղղությամբ, այն է, որ հասկանաք, որ ձեզ շրջապատող ամեն ինչը պետք է փոխվի և պետք է փոխվի ձեր օգնությամբ:

Եվ այդ ամենի միջից ամենադժվար փոփոխության ենթարկվողը ձեր գիտակցությունն է: Ձեր խելքն այքան ճարպկախույս է, որ երբեմն ապշած ես մնում, թե որքա՛ն արդարացումներ, պատճառներ ու խորամանկություններ է բանեցնում, միայն թե չհրաժարվի կարծես ամենամանկան որևէ բանից: Հապա փորձե՛ք հենց հիմա թողնել ծխելը: Հապա փորձե՛ք հրաժարվել ձեզ համար սովորական դարձած սին հեռուստադիտումից: Ձեզնից ամեն մեկն ունի իր սրտին սիրելի, անմեղ կապվածությունները, որոնցից հրաժարվելն անհամեմատ ավելի դժվար է իր համար, քան աշխարհի ամենամեծ սարը մի այլ վայր տեղափոխելը:

Ձեզ համար ավել հեշտ է գետերը հետ շրջելը, անապատում քաղաք շինելը, քան ձեր մի վատ սովորությունից կամ կապվածությունից հրաժարվելը:

Ուստի մենք խոսում ենք այն մասին, որ հարկավոր է փոխել ֆիզիկական ոլորտի թրթռանքը: Հարկավոր է, և մենք դա անում ենք: Զանգի եթե սկսենք սպասել, թե երբ կկարողանաք փոխել ձեր գիտակցությունն ու կենսակերպը, ապա վախենամ, թե երբեք դա տեղի չի ունենա:

Չափազանց քաղցր է մատերիայի մեջ ձեր քունը: Եվ չափազանց դժվար գործ է նոր կյանքի համար ձեր արթնանալը:

Չէի ուզենա տխուր բաներից խոսել: Շա՛տ կուզենայի ձեզ ուրախ լուրեր հաղորդել: Իսկ դրանք կան: Եվ դրանք մեր այն պլաններն են, որ վերաբերում են Երկիր մոլորակին: Դրանք այնքան վիթխարի են, որ դուք ի վիճակի չեք լինի հավատալու, որ շատ մոտ ապագայում դրանք իրականություն կդառնան:

Դուք թաղված եք ծանր կարմայական վիճակի մեջ և չեք նկատում որևէ բան, որը մի փոքր ավելի վեր է գտնվում ձեր սովորական տեսադաշտից: Եվ դա լիովին հասկանալի է: Երբ Երկիր

մոլորակի ողջ ֆիզիկական ոլորտի թրթռանքները բարձրանում են, ձեր մարմինները սկսում են ընդհուպ հետևել շրջապատի միջավայրին: Եվ ձեր ֆիզիկական մարմնի ու ավելի նուրբ մարմինների թրթռումների բարձրացմանը զուգընթաց դրանցից սկսում է դուրս թափվել ողջ այն կարմայական աղբը, որը կուտակվել է այնտեղ միլիոնավոր տարիների ընթացքում: Ձեր վիճակը նախանձելի չէ...

Ուստի ես եկել եմ, որպեսզի բացատրեմ, թե ինչ է տեղի ունենում ձեզ ու ձեր շրջապատի մարդկանց հետ: Եթե գիտեք տեղի ունեցողի պատճառը, ապա կարող եք ավելի հեշտ տրամադրվել տվյալ իրավիճակի ընդունմանը: Դուք ձեզնից դուրս ոչինչ չեք կարող փոխել, սակայն կարող եք փոխել ձեր վերաբերմունքը ձեզ հետ և մյուս մարդկանց հետ տեղի ունեցողի, ինչպես նաև արտաքին հանգամանքների նկատմամբ:

Ես ուրախ եմ, որ հաջողվեց ձեզ հասցնել ձեր աշխարհի փոփոխություններին վերաբերող Ուսմունքի որոշ դրույթներ: Եվ ես կարծում եմ, որ շատերին իմ բացատրությունները հնարավորություն կտան գիտակցորեն մոտենալու իրենց կյանքի արտաքին ու ներքին հանգամանքներին: Եվ առավել ուրախ կլինեի, եթե ձեր աշխարհում ավելի մեծ թվով մարդկանց մատչելի դառնային այս տեղեկություններն ու մեր կողմից տրվող Ուսմունքը:

Քանզի այն դեպքում, երբ հասկանում եք, թե ինչ է տեղի ունենում, կարող եք այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք թույլ կտան ձեզ իրականացնել ձեր գիտակցության նոր մակարդակի անցումը հնարավորինս հեշտ ու անցավ կերպով:

Այդ միջոցները հանրահայտ են: Դրանց թվում են ճիշտ սնունդը, ճիշտ կենսակերպը, մտքերի ու զգացմունքների մաքրությունը, ճիշտ երաժշտության ունկնդրումը և, իհարկե, աղոթքային ու ներխոյանմային գործառնությունները: Քանզի այն դեպքում, երբ օգնության կանչով դիմում եք Բարձրագույն ուժերին, Բարձրագույն աշխարհներին ու Համբարձյալ Վեհապետներին, ապա ստանում եք ձեզ անհրաժեշտ ամբողջ օգնությունը: Եվ ձեզ օգնություն ցուցաբերելու աստիճանը կախված է միայն ձեր մղվածությունից, աղոթքից ու ձեր սրտի մաքրությունից:

Երկնոլորտները մշտապես օգնություն ցուցաբերում են: Նույնիսկ այն դեպքում, երբ թվում է, թե անելանելի իրավիճակում եք հայտնվել, միշտ էլ հնարավոր է լուծում գտնել աստվածային Ուղով: Հարկավոր է միայն հավատալ և գործադրել բոլոր ջանքերը իրավիճակից սեփական ուժերով դուրս գալու համար:

Մենք տալիս ենք հնարավորություն և էներգիա, իսկ դուք պետք է այդ հնարավորությունն ու էներգիան օգտագործեք ըստ նշանակության: Այդպես կիրականանա մեր համագործակցությունը:

Շա՛տ ափսոս, որ պետք է բաժանվեմ ձեզնից: Մինչև նոր հանդիպում:

ԵՍ ԵՄ Մայրերյան

Վեհապետ Սերապիս Բեյ
31 դեկտեմբերի, 2008 թ.

Դեպի Աստծո Աշխարհի լեռնագագաթները տանող նեղ արահետ

ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը՝ այսօրվա մեր գրույցի համար ձեզ այցի եկածը: Դուք, հավանաբար, այժմ պատրաստ չեք այն լուրջ խոսակցությանը, որը հիմա կկայանա: Այնուհանդերձ ես պնդում եմ, որ կենտրոնանաք ու գործադրեք բոլոր ջանքերը, որպեսզի լսեք ինձ:

Ես շատ բաներ եմ հաղթահարել, որպեսզի լսելի դառնամ: Դուք նույնպես ջանք գործադրեք:

Ներկայումս այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի են գալիս Վեհապետները: Եվ, հավանաբար, ձեզ թվում է, թե միշտ այսպես կշարունակվի: Մենք գալիս ենք, որպեսզի միաբանենք այն հոգիներին, որոնք մեր կողմից են, բայց մոլորված վիճակում են: Մեր դեսպանորդի միջոցով մենք նրանց ենք մեկնում հնարավորության ճոպանը: Եվ այդ հոգիների համար մենք պատրաստ ենք շատ բան անելու, որ նրանք գտնեն իրենց Ուղին: Իսկ գիտե՞ք, թե ինչու: Որովհետև այդ հոգիների հետ կարմայորեն կապված են մեզնից շատերը՝ Համբարձյալ Վեհապետները: Դեռ այն ժամանակ, երբ մարմնավորման մեջ էինք գտնվում, մենք հնարավորություն ունեինք համագործակցելու ձեզ հետ: Մենք ընդհանուր գործեր էինք անում՝ հանուն հասարակության բարոյական հիմքերի վերածննդի:

Հիմա դուք այդտեղ եք՝ ֆիզիկական ոլորտում: Եվ կարող եք հույս կապել մեր օգնության հետ, սակայն գործի հիմնական ծանրությունն ընկած է ձեր ուսերին:

Այն մշակույթը կամ, ավելի ճիշտ, մշակույթի բացակայությունը, որ պարուրել է ձեր հասարակությանը, ենթակա է անհապաղ կերպափոխության ու վերակերտման: Մենք ձեզնից

կոնկրետ քայլեր ենք ակնկալում, որոնք ուղղված կլինեն այն սկզբունքների վերականգնմանը, որոնց վրա մենք պնդել ենք բոլոր ժամանակներում: Ձեր մեջ հայտնվել է Բուդդան, հայտնվել է Մովսեսը, հայտնվել է Մուհամեդը, հայտնվել է Հիսուս: Բոլորն էլ խոսել են որոշակի սկզբունքներից, որոնց հիման վրա պետք է կառուցվի առողջ հասարակություն:

Ձեր հասարակությունն այժմ հիվանդ է: Եվ մենք գալիս ենք, որպեսզի դեղ նշանակենք ձեր հիվանդության դեմ: Ձեր հիվանդությունը կապված է այն բանի հետ, որ ազատությունն ընկալում եք որպես ամենաթողություն:

Ձեր ազատությունը սահմանափակված է այս տիեզերքում գործող Աստծո Օրենքով: Եվ եթե դուք մտադիր եք այսուհետև ևս խախտել ու ոտնատակ տալ այդ Օրենքը, ապա ապագայի աշխարհում ոչ մի անելիք չունեք: Քանզի Երկիրը՝ որպես ամբողջական մոլորակ, պետք է անցում կատարի իր զարգացման նոր գալարին:

Եվ ինչպես միշտ, այն բանից առաջ, երբ թռիչք պետք է կատարվի մարդկության զարգացման գործընթացում, յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում կատարելու իր ընտրությունը: Այստեղից էլ հենց սկիզբ են առնում թվացյալ խառնաշփոթն ու ամենաթողությունը, բարեկրթության ու բարոյականության բացակայությունը: Որովհետև ամենքին ընտրության հնարավորություն է տրվում: Եվ երբ ամենաթողության շրջանակները չափից դուրս ընդարձակվում են, ձեր հոգու համար բացվում է այն իրական ընտրությունը, որին ի վերջո հետևում եք:

Որպեսզի կատարվի աստվածային նախընտրանքը, այդ մասին թմբկահարելու կարիք չկա: Այդ նախընտրանքը դուք կատարում եք ձեր սրտերում: Եվ դա անում եք բառացիորեն Երկրի վրա ձեր գտնվելու ամեն բույսին:

Հեռուստատեսությամբ, համացանցով կամ հենց փողոցում ձեզ հանկատարորեն դեմ են տալիս վարվելակերպի ցածրակարգ նմուշներ: Եվ այդ պայմաններում ձեզնից յուրաքանչյուրը ստիպված է լինում ընտրություն կատարել կա՛մ շրջապատող պատրանքի, կա՛մ էլ Աստծո Աշխարհի օգտին:

Ընտրություն կատարելը բարդանում է այն պատճառով, որ Աստծո Աշխարհի ցուցանմուշներն այնքան մատչելի չեն, որքան հակառակ ցուցանմուշները: Դրա համար է ասվել, որ *լայն է դեպի դժոխք տանող ճանապարհը, և նեղ է այն աղահետը, որը ձեզ տանում է դեպի Աստծո աշխարհի լեռնագագաթները**:

Միշտ էլ այդպես է եղել, երբ աշխարհը կանգնել է լուրջ ընտրության առջև: Եվ այս իրադրության մասին, որը հիմա գոյացել է, ասված է և՛ Աստվածաշնչում, և՛ անցյալի բազմաթիվ դեպքանորդների ու մարգարեների գրվածքներում:

Եվ ահա ժամը հասել է: Ինչու՞ չեք անհանգստանում: Ինչու՞ տազնապ չեք հնչեցնում:

Հասել է գործելու ժամը: Քանզի ձեզնից յուրաքանչյուրից է կախված և՛ այն բերքը, որը կհավաքի Մահը, և՛ այն բերքը, որը կհավաքի Կյանքը:

Դուք ձեզ հաշիվ տալի՞ս եք արդյոք, որ ժամանակը փոխվել է: Փոխվել է հենց ինքը՝ ժամանակի ընթացքը: Դրա համար էլ ասվում է, որ ժամանակը կարճ է. պետք է ամեն ինչ հասցնել:

Անտեղի մի՛ վատնեք աստվածային հնարավորության այն ժամերը, որոնք հատկացվել են ձեզ: Այնպիսի տեսք մի՛ ընդունեք, որ մեր ասածները ձեզ չեն վերաբերում: Այն ամենը, ինչ մենք ասում ենք, վերաբերում է ներկայումս մարմնավորման մեջ գտնվող յուրաքանչյուրին:

Նոր գիտակցությունը պետք է ծիլ տա այն փուլ ու տատակի միջավայրում, որով այժմ պատված է ողջ մոլորակը: Ուստի դրա շիվերը պետք է լինեն բավարար ուժեղ, որպեսզի հաղթահարեն գոյություն ունեցող բոլոր արգելքները և ձգվեն դեպի Արևը, աստվածային գիտակցության Արևը:

Ես նկարագրում եմ այն պատկերը, որին իրապես դուք բախվում եք ձեր կյանքի ընթացքում: Եվ դեպի աստվածային գիտակցության Արևը մղվելու այդ պատկերը պետք է մշտապես ունենաք ձեր ներքին հայացքի առջև: Նկատի ունեցեք, որ ձեր կյանքի հանգամանքներն այնպես են դասավորվել, որ ձեզ կվիճակվի լուծել կարմայական մեծաքանակ հանգույցներ: Եվ մի մարմնավորման ընթացքում դուք երբեմն ունակ եք դառնում հանգուցալուծելու հազարամյակների կարմա: Ահա և արագացված է ժամանակը: Ուստի պետք չէ անտեղի ժամանակ վատնել: Սկսե՛ք կառուցել ձեր շրջապատի մարդկանց հետ նոր փոխհարաբերությունների նոր սկզբունքներ:

Դրսևորեք դիմացկունություն և արիություն, որպեսզի հրաժարվեք այն բոլոր հրապուրանքներից, որոնցով փորձության եք ենթարկվում ձեր քաղաքների ու գյուղերի անապատում: Քանզի իրապես ձեր քաղաքները նման են հոգևոր անապատների: Ուստի և մենք չենք հոգնում ձեզ կոչ անելուց, որ վերականգնեք բարոյականությունն ու բնության հետ կապը:

Միակ բանը, որով կարող է կործանումից փրկվել ներկայիս քաղաքակրթությունը, այն է, որ հնարավորինս շատ անհատականություններ բարձրանան գիտակցության նոր մակարդակի վրա:

Տասը ուղղահավատներ կարող են փրկել մի ողջ քաղաք: Հազար ուղղահավատներ կարող են փրկել ողջ աշխարհը:

Ես եկա, որպեսզի ճիշտ ուղղություն տամ ձեր մղվածությանը: Մի՛ ենթարկվեք խորամանկ խաղալիքների ազդեցությանը և մի՛ մտեք այն վրանների տակ, որտեղ կտիրեն ձեր ամենաթանկ գանձին՝ ձեր հոգուն:

ԵՍ ԵՄ Մեղասպիս Բեյր՝ ձեր հոգիների նկատմամբ հոգածությամբ

*Մտթ. 7-13,14, Ղկ. 13: 23-24

Հառութամա Բուդդա

1 հունվարի, 2009 թ.

Հիմա գտնվում ենք Էվոլյուցիոն ուղու շատ նեղ փուլում

ԵՍ ԵՄ Հառութամա Բուդդան:

Ես եկա մի օր, որն ընդունված է նշել որպես նոր տարվա սկիզբ:

Այս օրով իմ գալն ավանդական է դարձել:

Դե ինչ, ես սկսում եմ:

Հավանաբար նկատում եք, թե տարեցտարի ինչ է տեղի ունենում Երկրի հետ: Ձեզ շրջապատող ողջ ունայնից այն կողմ կարելի է նշմարել տեղի ունեցող ընդհանրականը: Թվում է՝ մարդիկ, ըստ սովորության, ինչ-որ գործեր են անում, սակայն դրանք չեն տալիս նախկին գոհացումը, հաճույքը, ուրախությունը:

Ամեն ինչ իներցիայով է շարժվում: Բայց կգա պահը, երբ հին մտածողությունն ու հին կենսակերպը կսպառեն իրենց շարժման ողջ ներուժը: Եվ աշխարհը զարմանքով կարձանագրի, որ սկսվել է նորը:

Այժմ հենց այն պահն է, երբ նոր գիտակցությունը, նոր մտածողությունն ու նոր կենսակերպը պետք է ծնունդ առնեն: Եվ սկզբնական շրջանում դա կթվա շատ անսովոր ու օտարոտի: Կանցնի ևս մի որոշ ժամանակ, և նոր ժամանակի ուրվագծերն ավելի ու ավելի կգրավեն մարդկանց գիտակցությունը:

Ներկայումս ձեզ համար դժվար է դրան հավատալ, բայց հենց այդպես էլ կլինի:

Դա չի կարող չլինել: Եվ գլխավոր բանը, որ պետք է ի հայտ գա, համայնքի գիտակցությունն է. ո՛չ այն գիտակցությունը, երբ ամեն ոք ձգտում է ապրել ուրիշի հաշվին, այլ համայնքի այնպիսի գիտակցություն, երբ ամեն ոք ջանում է օգտակար լինել բոլորին: Իսկ դա հենց այն է, ինչին հարկ է, որ ձգտեք: Դուք պետք է ծլեցնեք ձեր ներսում նոր գիտակցության շիվերը: Պետք է անեցնեք ձեր մեջ համայն կյանքի հետ միասնության զգացողությունը: Շատ քիչ են նրանք, ովքեր կարող են հենց հիմա հասնել նոր գիտակցության: Ուստի անհրաժեշտ է ջանքերի համախմբում դրսևորել:

Նորը միշտ էլ առաջացրել է դիմադրություն ու հակակրանք: Ձեր խնդիրն է այնպես անել, որ նորը ներառվի գոյություն ունեցող ամեն ինչի մեջ. այնպես անել, որ հին ձևանմուշներն աստիճանաբար փոխարինվեն նորերով:

Այդ դեպքում մենք կկարողանանք խույս տալ փոփոխությունների ավելի արմատական, խստաշունչ տարբերակից:

Որքան ավելի շատ մարդիկ իրենց սրտերում հայտնաբերեն նոր գիտակցության շիվեր, այնքան ամբողջ մարդկության համար ավելի հեշտ կլինի նոր մակարդակի անցնելը:

Որևէ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ գոյություն ունի ողջ մարդկության ընդհանրական անգիտակցականը: Եվ այն դեպքում, երբ այդ անգիտակցականում կուտակվում է ագրեսիայի, ահի, մերձավորի հաշվին ապրելու որոշակի ներուժ, ծագում են պատերազմներ և ավերածություններ:

Բայց այժմ հասել է այն ժամանակը, երբ մարդկության ընդհանրական անգիտակցականում տեղի է ունենում դրական էներգիայի կուտակում՝ ուղղված դեպի Բարիքը, Բարին, Մերը:

Վաղ թե ուշ այն, ինչը գերակշռում է նուրբ ոլորտում, սկսում է իջանել ֆիզիկական ոլորտ:

Ներկայումս ֆիզիկական ոլորտ է իջանում տասներկուամյա վաղեմության ձեր գիտակցությունը: Դուք քաղում եք ձեր անցյալի սխալների ու մոլորությունների պտուղները:

Այժմ ժամանակը հոսում է արագացված տեմպով: Եվ այն, ինչ հիմա կերտում եք ձեր գիտակցությամբ, ֆիզիկական ոլորտ կիջնի յոթ տարի հետո: Ուստի հարկ է, որ ձեր գիտակցությունը պահեք ձեզ համար մատչելի առավելագույնս բարձր մակարդակի վրա:

Կան մարդիկ, որոնք իրենց հանձնել են մեզ հակադիր ուժերի կողմից հռչակվելուն: Վերջիններս իրենց ներսում չունեն աստվածային էներգիայի սեփական աղբյուրը: Ուստի իրենց առջև խնդիր են դրել յուրացնելու ձեր էներգիան: Դուք ճանաչում եք այդ մարդկանց այն պտուղներով, որոնցով շրջապատված են ֆիզիկական ոլորտում: Չնայած թվացյալ բարեկեցությանը՝ նրանց շուրջը տիրում է հոգևոր անապատ:

Ուստի հարկ է, որ շատ զգույշ լինեք և դատարկ բաների վրա շաղ չտաք Աստծո այն թանկարժեք էներգիան, որի պակասությունը մոլորակն ունի:

Հիշեք՝ որտեղ կենտրոնացնում եք ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Ուստի ջանացեք, որ ձեր էներգիան օգտագործեք ձեր աշխարհում ճիշտ կերպեր անեցնելու համար: Պտուղների երևան գալը չի ուշանա Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում:

Դուք պետք է վերահսկեք Աստծո էներգիայի յուրաքանչյուր երգը: Ուստի առաջնահերթ է դառնում, որ ձեր գիտակցությունից ու շրջապատող իրականությունից դուրս մղեք բոլոր անաստված դրսևորումները: Դրանք կարող են լինել նկարներ, ֆիլմեր, խաղեր կամ սխալ, ոչ-աստվածային թրթռանքներ պարունակող երաժշտություն: Ձեր կյանքերում այն հաստատություններում, ուր հաճախում եք՝ մանկապարտեզներում, դպրոցներում, առողջապահական հիմնարկներում, չափազանց շատ են հին կարծրատիպերը, որոնք հիմնված են մարդկային վախի ու տգիտության վրա:

Ավերեք վախի, տգիտության ու սնոտիապաշտության պատվարները ձեր սրտերում ու մտքերում, և մոլորակը կմաքրվի ոչ ճիշտ կերպերից:

Հասել է ժամանակը, երբ պետք է սովորեք զանազանել ձեզ շրջապատող ամեն ինչի թրթռանքները: Փորձե՛ք վստահել ձեր սրտին և զարմանքով կնկատեք, որ ձեր սիրտը ձեզ միշտ ճիշտ հուշումներ է տալիս և ձեր կյանքում ձեզ ուղղորդում ճիշտ ճանապարհով:

Հարկ չկա, որ ղեկավարվեք ձեր շրջապատի մարդկանց խորհուրդներով: Ժամանակն է, որ ձեզ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները ստանաք հենց ձեր ներսից:

Այս տարին վճռորոշ է և բեկումնային: Այն բանից, թե որքան շատ մարդիկ և ինչ աստիճանով կկարողանան փոխել իրենց գիտակցությունը և վեր կանգնել հասարակությունում հաստատված կարծրատիպերից, կախված է այն, թե դեպի ուր ուղղված կլինի մոլորակի էվոլյուցիան հաջորդ տարում: Մենք կոչ ենք անում, որ խնամքով հետևեք Աստծո էներգիայի ծախսին: Այն խախտուտ համակշռությունը, որը մենք այսքան դժվարությամբ պահպանում ենք, կարող է խախտվել ձեր չկշռադատված գործողությունների հետևանքով:

Երբեմն ավելի լավ է ոչինչ չանել, քան ոչ ճիշտ մտապատկերներով ալեկոծել աստեղային ոլորտը: Քանզի այդ ոլորտի ստորին շերտերը սերտորեն կապված են Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի հետ, և ոչ ճիշտ նմուշների նստեցումը կարող է վրա հասնել բառացիորեն հենց վաղը:

Դրա հետ կապված որոշակի դժվարություն կա: Բարձրագույն օկտավաներից կատարյալ կերպերի նստեցումը տեղի է ունենում անհամեմատ ավելի դանդաղ, քան անկատար կերպերի նստեցումն աստեղային ոլորտից:

Նուրբ աշխարհին ապրում է իր օրենքներով: Եվ խելամիտ բան չէ բահ ու քլունգով նուրբ ոլորտի զանազան շերտեր մուտք գործելը: Անհրաժեշտ է գիտակ լինել և զգույշ:

Տգիտությունը երբեք լավ բանի չի հանգեցրել: Եվ համակարգչի առաջ նստած վայրենին ոչնչով լավ չէ ջուճկվելու մարդկային վայրենուց: Որքան շատ հնարավորություններ են հայտնվում տգետի ձեռքերում, այնքան ավելի վատ հետևանքներ կարող են լինել:

Ուստի մենք ձեզ ուսուցանում ենք զգուշություն, զգայունություն, զանազանում: Հիմա գտնվում ենք էվոլյուցիոն ուղու շատ նեղ փուլում: Այն պետք է անցնել գերագույն զգուշությամբ:

Հիշե՛ք, որ ձեր ամեն միտքն ու բառը ցնցում են Երկիր մոլորակի շրջակա տարածությունը:

ԵՄ ԵՄ Հաղթանա Բուդդան՝ ԵՄ ԵՄ-ի աշխարհում գտնվողը

Վեհապետ Կուրթումի
2 հունվարի, 2009 թ.

Ուսմունք թրթռանքների փոփոխության մասին

ԵՄ ԵՄ Կուրթումին, այս օրով եկել եմ, որպեսզի տամ մի Ուսմունք, որը ձեզ կարող է նոր թվալ, սակայն այս նյութը մեր աշակերտներին մենք ուսուցանել ենք դեռևս հինավուրց Լեմուրիայի տաճարներում:

Նրան, ով ունակ է ընդարձակելու իր գիտակցությունը և ընդգրկելու թրթիռների մի քանի հարակից օկտավաներ, մատչելի են դառնում և՛ ֆիզիկական, և՛ նուրբ աշխարհները: Տարածական թրթռանքների յուրացման գործառնությունը հիմնականներից մեկն է եղել անցյալի ձեռնադրումների դպրոցներում: Եվ եթե աշակերտը կարողանում էր կարճատև ժամանակի ընթացքում դիմանալ տրամագծորեն հակառակ թրթռանքների, ապա համարվում էր, որ նա հասել

Է ձեռնադրման այնպիսի մակարդակի, որ նույն այդ գործառնությունը կարող է սովորեցնել ուրիշներին:

Բանն այն է, որ որպեսզի բոլոր մարմինների թրթռանքներն ակնթարթորեն ամենացածրից անցնեն ամենաբարձրին, պահանջվում է, որ բոլոր մարմինները պատրաստված լինեն դրան: Մարմիններից և ոչ մեկը չպետք է ծանրաբեռնված լինի ավելորդ բեռով: Այդ դեպքում բոլոր մարմինները հաշված վայրկյանների ընթացքում ցած կիջնեն սարից և նույն հաշված վայրկյանների ընթացքում էլ կելնեն սարի գագաթը: Խոսքս այն մասին է, որ մարմիններից յուրաքանչյուրը՝ ֆիզիկականը, աստեղայինը, մենտալայինը և եթերայինը, չպետք է ծանրաբեռնված լինեն կարմայով:

Ոչ մի կողմնակի միտք, ոչ մի ցածրակարգ հույզ, ֆիզիկական մարմնի ոչ մի աղակուտակ չպետք է լինի:

Երբ մարմինները պատրաստ են նման ծանրաբեռնվածությանը, մարդը դառնում է ձեռնադրյալ:

Իհարկե, երկար ժամանակ է պետք, որպեսզի մարդիկ կարողանան իրենք իրենց տիրապետել թրթռանքների տարբեր մակարդակներում և գիտակցորեն մի մակարդակից անցնեն մյուսին:

Ձեր ժամանակները ձեզ տալիս են նման հնարավորություն, որպեսզի, չկտրվելով սովորական կյանքից, յուրացնեք թրթռանքների ակնթարթային փոփոխության այս գործառնությունը:

Միայն մի՛ մոռացեք, որ որպեսզի տիրապետեք այդ մեթոդաբանությանը, հարկ կլինի, որ փոխեք ձեր ողջ կենսակերպը և ձեր կյանքը նվիրաբերեք միայն մի խնդրի՝ բոլոր կենդանի էակներին Սպասավորելուն: Քանզի եթե այդ մեթոդաբանության յուրացման ձեր շարժառիթն այն է, օրինակ, որ հասնեք գերազանցության, ապա ձեր մենտալ կամ զգայական մարմնում կառաջանա արգելապատնեշ, որը ձեզ հնարավորություն չի տա անցնելու թրթռանքների մի մակարդակից մյուսին:

Հաջորդ փուլը տարածության մեջ ակնթարթորեն տեղաշարժվելն է:

Սակայն ինձ թվում է, որ ձեզ համար առայժմ բավարար կլինի, որ յուրացնեք այն ավելի պարզ մեթոդաբանությունը, որը ես շարադրեցի մեր այսօրվա գրույցում:

Ես երջանիկ կլինեմ Լուսի եթերային օկտավաներում հանդիպելու ձեզնից նրանց հետ, ովքեր հասած կլինեն հաջողությունների:

ԵՄ ԵՄ Կոյթոնալին

Տեր Հիսուս

3 հունվարի, 2009 թ.

Ճշմարտությունը, Աստված, Մերը ձեր ներսում են

ԵՄ ԵՄ Հիսուս՝ խրատներ տալու համար ձեզ այցի եկածը:

Այսօր ես եկել եմ, որպեսզի փոխեմ ձեր որոշ հայացքներն ու համոզմունքները, որոնք վերաբերում են ինձ և այն Ուսմունքին, որն աշխարհին տվեցի 2000 տարի առաջ:

Տիեզերական չափանիշներով այնքան էլ շատ ժամանակ չի անցել իմ այդ Ուսմունքը տալուց հետո: Սակայն այն աղավաղումները, որոնք արվել են շատ մարդկանց կողմից, այնքան են խեղաթուրել նախնական իմաստը, որ ես ինքս էլ երբեմն դժվարությամբ եմ կռահում այն արտահայտությունների իմաստը, որոնք գրառված տեսքով այժմ առկա են աստվածաշնչյան գրքերում:

Իմ ավետաբանությունն անհամեմատ ավելի լայն էր, քան այն մեկնաբանությունները, որոնք յուրացրել ու գրի են առել իմ աշակերտները: Իսկ տեքստերի հետագա կատարելագործողներն ավելի շատ աղավաղումներ են մտցրել: Նրանցից շատերն անկեղծորեն ցանկացել են ավելի լավ մատուցել բովանդակությունը, բայց, իհարկե, այնպես, ինչպես իրենք են հասկացել: Մյուսների հայեցակետում իմ կողմից տրված Ուսմունքի շատ դրույթներ ընդհանրապես չեն տեղավորվել և հանգիստ դեն են նետվել: Ուստի ֆիզիկական ոլորտից իմ հեռանալուց ընդամենը երեք հարյուր տարի անց դուք ստացել եք մի Ուսմունք, որը միայն հեռավոր նմանություն ունի իմ կողմից տրված Ուսմունքի հետ: Համեմատության համար կարելի է բերել մոմի ու արևի օրինակը: Ահա այդ համամասնությամբ է ներկայիս քրիստոնեության մեջ մնացել իմ տված Ուսմունքի բուն էությունը:

Բայց հիմքն այնուամենայնիվ դրվել է: Եվ իմ միջոցով տրված աստվածային հնարավորությունը նպաստել է այն բանին, որ Ուսմունքը դառնա կենսունակ, որ շատ հարյուրամյակների ընթացքում փնտրող շատ սրտեր այդ Ուսմունքում գտնեն սփոփանք ու մխիթարություն: Ուսմունքի բարեշնորհանքը փոխանցվել է ոչ այնքան աստվածաշնչյան

տեքստերի, որքան այն առարկաների, պատկերների միջոցով, որոնք հազեցվել են մեր ներկայությամբ. նաև այնժամ, երբ սրբապատկերների վրա կենդանություն են առել իմ և Աստվածամոր պատկերները:

Եվ շատ փնտրողներ մեր պատկերների միջոցով կարողացել են անմիջականորեն միանալ մեր ներկայությանը, անմիջականորեն ըմպել Աստծո բարեշնորհանքը՝ մեր պատկերները որպես փոխանցիչ օգտագործելով ֆիզիկական ոլորտում:

Այն հայրերը, որոնք Աստծուն փնտրելու նպատակով հեռացել են անապատ, Նրան գտել են իրենց սրտի անդորրության մեջ: Եվ բարեշնորհանքը՝ Աստծո հայտնությունների անփոփոխ ուղեկիցը, այցելել է նրանց ամենախավար ձմեռային երեկոների ու գիշերների ընթացքում:

Եվ նրանց գիտակցության արշալույսը թույլ է տվել, որպեսզի շատ հարյուրամյակների ընթացքում մեր Ուսմունքի հիմքերը պահպանվեն մարդկանց մտքերում: Եվ այդ հիմքերը մենակյաց հայրերի սրտերից փոխանցվել են նրանց սրտերի մեջ, ովքեր այցելել են այդ մենակյացներին, որպեսզի մխիթարություն գտնեն իրենց հոգու համար:

Աշխարհում շատերն են սրտի կարոտ ապրել: Եվ հիմա ևս շատ-շատերը կարոտ են ճշմարիտ Հավատի: Շատերը կան, որ օգնության կարիք են զգում:

Մենք օգտագործում ենք ֆիզիկական ոլորտի ամեն մի կիզակետ, որպեսզի երևան հանենք մեր ներկայությունը և մխիթարություն տանք այն սրտերին, որոնք այնքան խորտակված են, այնքան են իրենց աղքատ ու գուրկ զգում ճշմարիտ Հավատի բացակայության պայմաններում, որ աստվածային հնարավորությունը նրանց համար բացվում է Աստվածամոր ժպիտով՝ վանքի ճարճատող մոմերի լույսի ներքո:

Երբ հնարավոր է լինում, պապակ սրտերին մենք տալիս ենք առավելագույնը: Եվ մեզ չեն վրդովում ո՛չ Ուսմունքի խեղաթյուրումը, ո՛չ էլ եկեղեցական ծեսերը: Այդ ամենի միջով մենք կարող ենք մեր ձեռքը մեկնել օգնության կարիք ունեցող սրտերին:

Շատ մարդիկ այցելում են եկեղեցի: Մենք նրանց մխիթարություն ենք տալիս: Ոմանք էլ այլ ճանապարհ են փնտրում՝ շրջանցելով եկեղեցին. և մենք նրանց տալիս ենք այդ ճանապարհը:

Կարևոր չէ, թե ինչ ուղով են ընթանում մարդիկ: Կարևոր է նրանց սրտի որակն ու Հավատի աստիճանը: Եվ նրանք մեզ կգտնեն նույնիսկ անապատում:

Ամենից վատն այն է, երբ մարդիկ կորցնում են հավատը կամ սկսում են ուրիշ մարդկանց աստվածային մոլմունքն օգտագործել, որպեսզի ինչ-որ բան ձեռք բերեն անձամբ իրենց համար կամ լուծեն անձնական խնդիրներ:

Այն ժամանակ, երբ եկել էի, ես հատկապես դա՛ր դեմ էի խոսում: Խոսում էի դպիրների ու փարիսեցիների երկերեսանիության մասին, որոնք գրվածքների բարեպաշտական և խորիմաստ խոսքերի քողի տակ իրենց մուր զործերն էին անում և երեկոյան ուրախ-ուրախ շփում ձեռքները, որ հաջողվել է անմեղ գառներից հերթական մեծ պատառը պոկել:

Ինչպես ես, այնպես էլ Աստծո բոլոր դեսպանները բոլոր ժամանակներում ընդվզել ենք երկրեսանիության ու կեղծավորության դեմ: Աստծո Ճշմարտությունը պարզ է: Աստծո Մերը բաց է բոլորի համար: Ամեն ինչ մակերեսի վրա է, և որպեսզի ձեռք բերվի Աստծո Իմաստություն, փողի կարիք չկա: Աստված ամեն ինչ բոլորին ձրի է տալիս:

Ձեզ միայն պետք է, որ դեպի փակուղի տանող հազարավոր ճանապարհների ու մայրուղիների միջից առանձնացնեք այն նեղ արահետը, որը ձեզ կհասցնի աստվածային գագաթ:

Պետք է հասկանաք, որ ճշմարիտ Հավատն ընդհանուր ոչինչ չունի ծեսերի ու արարողակարգերի հետ: Ճշմարիտ Հավատը ձեր սրտերի մեջ է: Եվ Աստված ապրում է ձեր սրտերում: Եվ այն մարդկանց համար, ովքեր իրենց սրտերում գտել են ճշմարիտ Աստծուն, տարբերություն չկա, թե ո՞ր տաճարը կմտնեն աղոթելու համար:

Կարևոր չէ՝ բուդդիստական վանք եք մտնում, քրիստոնեական եկեղեցի՞, սինագոգ՞, մզկիթ՞, թե՞ աղոթատուն. եթե գնում եք դեպի Աստված, ապա նրան կգտնեք ամենուրեք:

Իսկ եթե ձեր սրտերը դատարկ են, ապա Աստծուն ոչ մի տեղ չեք գտնի:

Ծիսական խոսքերի ու աղոթքների մեխանիկական կրկնությունը, եթե դրանք արտաբերվում են առանց անկեղծության ու ներքին Հավատի, ձեզ ոչ մի օգուտ չի տա: Հազար տարի կարող եք աղոթել, բայց եթե միաժամանակ վատն եք կամենում ձեր մերձավորին, ապա ձեր աղոթքներն ու ջանքերը գրոշի արժեք չունեն:

Ոչ մի Հավատ չի կարող արդարացնել ձեր այն հանցանքները, որոնք գործում եք «հանուն Աստծո»:

Խնդրում եմ ամենայն ուշադրությամբ վերաբերվել իմ այսօրվա խոսքերին: Ես կարեկցում եմ այն մարդկանց, ովքեր փնտրում են Աստծուն, բայց չեն կարողանում գտնել: Եվ որքան շատ են այնպիսիները, որոնք օգտագործում են նրանց ազնիվ մղումը, որպեսզի շահ ստանան դրանից:

Հավատի խնդրի ամբողջ արմատը ձեր սրտերի մեջ է: Եվ Աստծո հավատարիմ ու նվիրյալ սպասավորների դուք կարող եք գտնել աշխարհի բոլոր կրոնների ներսում: Բայց կարող եք և գտնել նրանց, ովքեր Աստծուն ծառայելու քողի տակ ծառայում են իրենց էգոյին ու սատանային, որը տիրել է իրենց սրտերին:

Ես եկա, որպեսզի հիշեցնեմ ձեզ, որ Ճշմարտությունը, Աստված և Մերը ձեզնից դուրս ինչ-որ տեղ չեն: Նրանք բոլորը ձեր ներսում են: Եվ մենք կօգնենք, որ ձեր սրտերում գտնեք այդ հարստությունները: Խնդրե՛ք մեզնից օգնություն: Դիմե՛ք մեզ կոչերով ու աղոթքներով: Ձեր անկեղծ կոչը կարող է հասնել ցանկացած Վեհապետի, իսկ մենք չենք կարող չարձագանքել, քանի որ ձեր կոչին պատասխանելը մեր պարտքն է և մեր սրբազան պարտականությունը:

ԵՄ ԵՄ Հիմա

Մայր Մարիամ
4 հունվարի, 2009 թ.

Սրտակից գրույց

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը՝ եկել եմ, որ, ինչպես միշտ, գրույց վարեմ ձեզ հետ, սրտակից, սրտե-սիրտ գրույց: Երբ խոսում է սիրտը, խելքը լռում է: Եվ մեր միջև ճշմարիտ հաղորդակցությունը հնարավոր է միայն այնժամ, երբ իրար հետ կապ ենք հաստատում սրտի մակարդակով:

Ձեզ չի բավականացնում Մերը: Չի բավականացնում Լույսը: Երբեմն դուք բառացիորեն շնչասպառ եք լինում Աստծո էներգիայի պակասությունից, ինչպես թթվածնի պակասությունից:

Հարկ է, որ ավելի շատ ժամանակ հատկացնեք ինձ հետ սրտակից գրույց վարելուն:

Ես պատրաստ եմ լսելու ձեր բոլոր տրտուներն ու խնդրանքները: Մի՛ ամաչեք: Ես գիտեմ, որ հատկապես տղամարդիկ են շատ ամաչկոտ իրենց հույզերը դրսևորելիս: Եվ այնժամ, երբ գալիս է մեր հաղորդակցության յուրահատուկ պահը, նրանք հապճեպ սրբում են պատահաբար աչքերից հոսած արցունքը:

Մի՛ ամաչեք լաց լինելուց: Ձեր հոգին կարոտ է ճշմարիտ հաղորդակցության: Դուք փնտրում և ձեր աշխարհում չեք գտնում ձեր իդեալը: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք: Դուք մարմին եք տենչում, բայց իսկական Մերը դրսևորվում է հոգու մակարդակով և նույնիսկ ձեր Բարձրագույն Ես-ի մակարդակով:

Մի՛ ամաչեք, երբ ինձ հետ հաղորդակցության ժամանակ ձեր աչքերն արցունքով են լցվում: Անցած կյանքերում շատ անգամ և արդեն այս կյանքում էլ դուք թույլ եք տվել ոչ այնքան գեղեցիկ արարքներ կանանց՝ մայրերի ու քույրերի հանդեպ: Եվ թողե՛ք, որ այդ անվայել արարքները լուծվեն արցունքներով և բացասական էներգիաներն անվերադարձ լքեն ձեզ:

Ձեր գոջումը, նույնիսկ եթե չեք էլ հասկանում, որ գոջում եք, ձեզ համար նոր հնարավորություն է բացում՝ աշխարհին ուղղված նոր հայացք:

Մի՛ ամաչեք ձեր արցունքներից: Դրանք իրենց հետ տանում են այն կարման, որը ստեղծել եք անգիտության կամ թյուրիմացության հետևանքով:

Ես ձեզ հետ եմ: Ես միշտ ձեզ հետ եմ, և դուք միշտ կարող եք ձեր կյանքի դժվար թուփերն օգնության խնդրանքով դիմել ինձ:

Ես այնքան մոտ եմ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտին, որքան մոտ չե՛ և ոչ մի Վեհապետ: Հենց դա՛ է իմ հատուկ առաքելությունը: Ես հսկում եմ ձեր ընտանեկան օջախները, հսկում եմ ձեր երկիրը: Եվ պատրաստ եմ ձեզ մոտենալ ձեր առաջին իսկ կանչով:

Եվ այդ ամենը հնարավոր է դառնում ձեր ջանքերի շնորհիվ՝ Սիրո և աղոթքի այն էներգիայի շնորհիվ, որը ես ստանում եմ ձեզնից:

Ձեր Վարդարան ընթերցելը, որն ինձ եք նվիրաբերում, հնարավորություն է ընձեռում, որ օգնեմ շատ ու շատ հոգիների, որոնք իմ օգնության կարիքն ունեն:

Ես միշտ իմանում եմ, երբ դուք անկեղծորեն Վարդարան եք կարդում: Մեր միջև հաստատվում է էներգիայի հոսք, որը մե՛կ ձեզնից վեր է ելնում, մե՛կ ցած իջնում ինձնից: Այդ կերպ դուք ստանում եք իմ Սիրո և Բարեգթության էներգիան:

Այնժամ, երբ շատ տխուր եք և ուժ չունեք Վարդարան կարդալու, կարող եք պարզապես մտածել իմ մասին, լսել ինձ նվիրված մեղեդիներ*: Այդ դեպքում ձեր էներգիայի հոսքը ճիշտ նույն ձևով հասնում է ինձ, և ես զգում եմ ձեզ, ձեզնից յուրաքանչյուրին: Աստծո ողորմածությամբ ինձ տրված է Իր բոլոր ուսուրերին ու դուստրերին զգալու կարողություն, երբ նրանք մտածում են իմ մասին կամ խնդրանքով դիմում են ինձ:

Ուստի այսօր դուք կարող եք առաջվա պես օգտվել այն հնարավորությունից, որը ստանում եք Երկնքից և խնդրել ինձ, որ դժվարին պահերին օգնեմ ու օժանդակեմ ձեզ:

Երեկ Հիսուս ձեզ տեղեկացրեց, որ իմ շատ պատկերների վրա ես հաստատագրել եմ իմ ներկայությունը: Ինքներդ էլ կարող եք դա զգալ: Իմ որոշ սրբապատկերներ օժտված են հրաշագործ գործությամբ: Եվ երբեմն բավարար է լինում, որ մտահայեք այդ սրբապատկերներից որևէ մեկը, որպեսզի ստանաք իմ օգնության ճառագայթը:

Այն դեպքերում, երբ հնարավորություն ունեմ ներկա գտնվելու ձեր միջավայրում (չեմ թաքցնում, որ Աստված օժտել է ինձ նման ողորմածությամբ), հնարավոր է, որ չգաք ձեր կողքին իմ ներկայությունը: Բայց ես կարող եմ ներկա գտնվել հենց այնտեղ, որտեղ դուք եք գտնվում: Ինձ համար կարևոր է, որ ձեր շուրջը հաստատված լինի հանդարտ ու խաղաղ իրավիճակ: Ես գալիս եմ անտեսանելի ու աննկատ, և միայն թերևս վարդաբույրով, որը միշտ ուղեկցում է ինձ, կարող եք զլխի ընկնել, որ ձեր կողքին եմ:

Ձմեռային այս օրը ես եկել եմ որոշակի նվերով, որը, հույս ունեմ, ձեզ օգտակար կլինի: Կուզենայի ձեզ տալ սուրբ Աստվածամոր աղոթքը, որպեսզի այն օգտագործեք ձեր աղոթածամին:

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, սուրբ Աստվածամայր, պաշտելի՛ Մայր Մարիամ, ծնկաչոք իջնում եմ քո առաջ: Բառեր չեմ գտնում, որ արտահայտեմ իմ սրտի ողջ Մերը, որ տածում եմ առ քեզ: Ընդունի՛ր իմ Մերն ու երախտագիտությունը: Քեզ հայտնի է, թե ինչն է ամենակարևորն այս պահին իմ հոգու անհի համար: Ես խնդրում եմ քո օգնությունն ու օժանդակությունը: Խնդրում եմ, օգնիր, որ օրվա ունայնության մեջ չմոռանամ մեր անմիջական հաղորդակցության այն խաղաղ թույլեները, որոնց մասին հիշում է իմ հոգին:

Թող քեզ հետ ունեցած իմ անխաղաղ կապը նեցուկ լինի ինձ կյանքում և օգնի, որ չմոռանամ այն Բարձրագույն Ուղու մասին, որով մտադիր եմ քայլել իմ կյանքում»:

Ես անկեղծորեն հույս եմ տածում, որ կկարողանաք ավելի հաճախ լինել ինձ հետ ու դիմել ինձ: Մեր ամեն մի հաղորդակցությունը, նույնիսկ դեպի իմ պատկերն ուղղված ձեր կարճ հայացքը կօգնի, որ ձեր գիտակցությունը պահեք այնպիսի մակարդակի վրա, որ անմատչելի դառնաք նրանց հարձակումների համար, ովքեր դեռ չեն գտել դեպի իմ սիրտը տանող ուղին և չգիտեն, թե ինչ են անում:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը, այս օրով եղա ձեզ հետ

*Տես՝ http://org.sirius-ru.net/ave_maria.htm

Վեհապետ Էլ Մորիա
5 հունվարի, 2009 թ.

Ավարտվեց ուսուցման ժամանակը և սկսվեցին գործողության յոգայի գործնական պարապմունքները

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այսօր ես եկել եմ, որպեսզի ամփոփեմ կատարված որոշակի աշխատանքը և ուրվագծեմ ապագայի պլանները:

Ընդհանուր առմամբ՝ մենք բավարարված ենք այն աշխատանքով, որն ի կատար է ածվել ֆիզիկական ոլորտում: Մենք շատ ուրախ ենք և ողջունում ենք համայն աշխարհի այն լուսակիրներին, ովքեր արձագանքեցին մեր կոչին և օգնեցին կենսագործելու մեր մտահղացումը՝ կապված մեր դեսպանորդի Աշրամի շինարարության, հասարակական կազմակերպության ու հրատարակչության ստեղծման հետ:

Այո՛, մենք շատ ուրախ ենք...

Սակայն ես եկել եմ, որպեսզի դուք ցթույացնեք ձեր դիրքերը, քանզի այն ամենը, ինչ մինչև հիմա արվել է, դեռևս սկզբնական՝ առաջին ոչ մեծ քայլն է, որ արվել է հարկ եղած ուղղությամբ: Մի՛ կարծեք, թե արդեն ամեն ինչ նվաճված է: Ձեզ դեռևս անհամեմատ ավելի շատ գործ է մնում անելու, քան արդեն արվածն է: Եվ պետք է ձեզ նախագգուշացնեմ, որ հետագա առաջընթացը կուղեկցվի ավելի ու ավելի մեծ դժվարություններով: Ուստի ձեզնից կպահանջվի, որ դրսևորեք ձեր ողջ գգնությունն ու ուշադրությունը:

Մենք մտնում ենք մի փուլ, որը կարող է զգալի կերպով ի ցույց հանել, թե աշխարհն ընդհանուր առմամբ ընթանում է սխալ ուղով՝ էգոյի պահանջների բավարարման, կապվածությունների, անաստվածայինի ուղով:

Ուստի այն, ինչ մենք անում ենք մեր դեսպանորդի միջոցով և ձեր անմիջական օգնությամբ ու մասնակցությամբ, կարող է դուր չգալ շատ-շատերին՝ նրանց, ովքեր որևէ փոփոխություն չեն ուզում և սովոր են գործել հին մեթոդներով:

Եվ այստեղ անփոխարինելի դեր կխաղա համախմբումը, բոլոր այն լուսակիրների համախմբումը, ովքեր պատրաստ են նոր սկզբունքների հիման վրա միավորվելու համաշխարհային Համայնքում:

Ֆիզիկական ոլորտում դուք կարող եք կառուցել բնակավայրեր և ստեղծել առանձին անկախ ավաններ: Ամեն ինչ ձեր ձեռքին է: Բայց միշտ հիշեք, որ հիմնականը ոգու Համայնքն է:

Կարմայական հանգամանքները ոչ բոլորի համար են բարենպաստ դասավորված: Ոչ բոլորն են ունակ գոտեպնդվելու և մեր առաջին կանչով ճամփա ընկնելու: Ցավոք, այն կարման և այն կարմայական հանգամանքները, որոնք կապված են ձեր ընտանիքների հետ, պետք է հանգուցալուծվեն ու կապագերծվեն առաջին հերթին:

Դուք չեք կարող, հասարակության առջև պարտքեր ունենալով հանդերձ, բնակություն հաստատել մեր Համայնքներում: Չեք կարող մի կողմ հրել ձեր զավակներին և մղվել դեպի ապագա:

Ձեզ չի հաջողվի, որ ձեր ընտանեկան ու ներքին խնդիրները չլուծած՝ դառնաք արժանավոր համայնավարներ:

Այո՛, մեզ նմուշօրինակ է պետք ունենալ ֆիզիկական ոլորտում. բայց բանն այն է, որ այն կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ մաքուր ձեռքեր ու սրտեր:

Ձեր հագուստի ամեն մի բիծն անհավատների գիտակցության միջոցով կբազմապատկվի, և նրանք ողջ աշխարհին կպատմեն, թե որքա՛ն փնթի եք դուք ու չեք հետևում նույնիսկ ձեր հագ ու կապին:

Ուստի առաջնահերթ հարց է դառնում այն մարդկանց գտնելը, ովքեր արդեն պատրաստ են և իրենց նախորդ մարմնավորումների ընթացքում արդեն ապացուցել են Եղբայրությանն իրենց հավատարմությունը՝ իրենց վրա ավելորդ կարմայական բեռ չավելացնելով:

Միայն այդպիսի համայնավարները, միայն այդպիսի աշխատակիցներն են ունակ դառնալու Համայնքի կորիզը, իսկ մյուսները, ովքեր մուտք կգործեն Համայնք, կջանան հետևել վարքի, գործերի ու տնտեսավարման այն նմուշներին, որոնք կհաստատվեն առաջատարների կողմից:

Ձեզ վիճակված է ամեն ինչ սկսել դատարկ տեղում: Չկան նմուշօրինակներ, որ մենք ձեզ հանձնարարենք նմանակման համար: Կա տեսություն, կան համայնքի շինարարությանը վերաբերող ամբողջական հատորներ, բայց չկան մարդիկ, որ այդ ուղեցույցները կյանքի կոչեն գործնականում:

Ես կաշտպանեմ իմ Համայնքը: Ես ներկա կլինեմ ձեր բոլոր գործերում: Ես կկարողանամ պաշտպան կանգնել մեր ամբողջին ու մեր առաջապահ դիրքին: Բայց ասվածից չի հետևում, որ ձեր բոլոր գործերում ամբողջովին պետք է հենվեք իմ ու Աստծո վրա: Ձեզ վիճակված է թևքերը քշտել և ֆիզիկական ոլորտի ողջ անհրաժեշտ աշխատանքը կատարել ինքնուրույն:

Ես ձեզ կօժանդակեմ նուրբ ոլորտից: Կաշտպանեմ նրանց ոտնձգություններից, որոնք չարամիտ էակների ազդեցության տակ են գտնվում և դիվոտում են հենց միայն Համայնք բառը լսելուց: Մակայն այդ դիվոտներին հիվանդանոց տանելն ու Համայնքը նման տմարդիներից պաշտպանելն արդեն ձեր գործը պետք է լինի:

Ես նախագգուշացնում եմ ձեզ, թե ինչ կարող է պատահել, և ինչպիսի խոչընդոտներ կարող են կանգնել ձեր ուղու վրա:

Ուստի դեռևս հաղթանակ մի՛ տոնեք, քանի դեռ դուրս չեք եկել մարտադաշտ: Կարող եք և տեղ չհասնել:

Դեռ վաղ է դափնեպսակ կրելն ու հանգստի մասին մտածելը: Մեր գործը դեռ եռման զագաթնակետին է: Եվ պահանջվում է ներդնել ձեր ողջ զգոնությունը, ճարպկությունն ու հմտությունը, որպեսզի չձախողվեք և չընկնեք բյուրոկրատների ու պաշտոնյաների խորամանկորեն հյուսված որոգայթների մեջ:

Այժմ մարտի դաշտը տեղափոխվել է բյուրոկրատների աշխատասենյակները, դատարաններն ու տեսչությունները: Ուստի հարկ է, որ իմանաք օրենքներն ու գործեր վարելու ձևերը:

Գործը հեշտ էր, երբ ամեն ինչ որոշվում էր մարտադաշտում: Դեմ առ դեմ թշնամին կանգնած էր և սպառնալից հայացքը հառել էր ձեզ: Հիմա բոլորը սիրալիք ժպտում են, բայց և թաքուն առաջ տանում իրենց չար գործը: Եվ չեք իմանա, թե ո՞ր աշխատասենյակում են բնավորվել նախասնձի իժն ու վրիժառության կարիճը:

Ավարտվեց ուսուցման ժամանակաշրջանը և սկսվեցին գործողության յոգայի գործնական պարապմունքները:

Յու՛յց տվեք, թե ինչեր կարող եք անել և թե որքանով հավատարիմ կարող եք մնալ Վեհապետների պատգամներին առօրյա ունայնության ու բյուրոկրատական խառնաշփոթի պայմաններում:

Դուք շա՛տ անելիքներ ունեք: Նման բան դեռևս մտահղացված չի եղել:

Պլանն առկա է, և անհրաժեշտ է այն կյանքի կոչել:

Իսկ ձեր մեջ կամավորներ կա՞ն արդյոք...

ԵՍ ԵՄ Է՛լ Մորիան

Ուղերձների տասներորդ շրջան (հունիս – հուլիս, 2009 թ.)

Մանատ Կումարա
20 հունիսի, 2009 թ.

Դադարեք խույս տալ Էվոյուցիայի խնդիրներից

ԵՄ ԵՄ Մանատ Կումարան՝ այս օրով կրկին ձեզ մոտ եկածը: Ես երջանիկ եմ, որ հնարավորություն ունեմ ուղերձով դիմելու Երկրի մարդկությանը: Ո՛չ միշտ է մեզ նման հնարավորություն ընձեռնվում: Քանզի Երկրի իրադրությունը փոխվում է, և անհատականությունների գիտակցությունը չափազանց շատ է ենթակա դառնում փոփոխությունների:

Այսօր ես եկել եմ, որպեսզի ձեզ պատկերացում տամ, թե ինչ է կատարվում մոլորակի վրա: Ձեզնից շատերը, ֆիզիկական ոլորտում իրենց շուրջը եղած իրավիճակը դիտելով, մտորում են, թե ինչ է ի վերջո տեղի ունենում: Կարծես թե ամեն ինչ սովորականի պես է, բայց այնուհանդերձ ինչ որ բան անորսալիորեն փոխվել է: Ընդ որում, ձեզնից շատերին թվում է, թե աշխարհը խելքը թոցրել է: Եվ դա հեռու չէ ճշմարտությունից:

Իրոք, մենք մարդկանց գիտակցության առավել շատ փոփոխություն էինք ակնկալում: Մենք ակնկալում էինք համագործակցության ավելի մեծ հնարավորություն, երբ մեր դեսպանորդի միջոցով սկսեցինք մեր աշխատանքը Ռուսաստանում: Եվ հիմա զարմանքով նկատում ենք, որ կրկնվում է Ամերիկայի տխուր փորձը: Ռուսներն էլ նույն ուղով գնացին: Մեր ուղերձները նրանց զարմանքն են հարուցում, դիտարկում են դրանք որպես վայրի մի բան, և այնուամենայնիվ մեր ուղերձներն ու մեր Ուսմունքը նրանց գիտակցությունը չեն զբաղեցնում ավելի երկար, քան այն ժամանակը, որն անհրաժեշտ է թելադրությունը կարդալու համար:

Ցավոք, մենք դեռևս չենք ստացել այն, ինչն ակնկալում էինք: Մենք համագործակցության պատրաստակամություն չենք տեսնում: Չենք տեսնում այն անհատներին, որ այնքան խորացած լինեն մեր Ուսմունքի մեջ, որ գոհեն իրենց ողջ ունեցածը, նույնիսկ կյանքը հանուն այն բանի, որ Երկիր մոլորակի կենսահոսքերին մատուցած իրենց անշահախնդիր ծառայությունն ի վիճակի դառնա երկրաբնակ շատ մարդկանց գիտակցությունները վերաուղղորդելու դեպի Աստծո ճշմարտության ճանաչողություն:

Մենք հասկացանք, որ մեր հույսերը հերթական անգամ չարդարացան: Մենք նորից բախվեցինք մարդկային գիտակցության ծուլության ու անկանխատեսելիության հետ: Դե ինչ, սա մեզ դաս եղավ, և մենք պատրաստ ենք առաջ ընթանալու Էվոյուցիոն զարգացման ուղով: Ձեզ դեռևս հույս մնում է, բայց, որպեսզի այդ հույսն իրականություն դառնա, դուք պետք է մի լավ մտորեք, թե արդյոք անու՛մ եք ամեն ինչն այնպես, ինչպես պետք է անեք:

Քանի որ մոլորակի իրադրությունը շիկանում է, դուք այլևս ժամանակ չունեք չափազանց շատ ու երկար խոսելու: Մենք հենվում ենք այն Ուսմունքի վրա, որն արդեն տրված է: Եվ, որպեսզի շարունակեք ձեր շարժումը, պետք է ձեր կյանքի յուրաքանչյուր օրը նվիրաբերեք ձեր գիտակցության փոխմանը: Ես շատ լավ գիտակցում եմ ու հաշվի եմ առնում, որ դուք թաղված եք պատրանքի մեջ, և որ այդ պատրանքն օր օրի ավելի է ուժեղանում:

Բայց և դու՛ք հասկացեք մեզ: Մենք մտահոգված ենք և հոգ ենք տանում բոլոր այն հոգիների փրկության համար, որոնք դեռ քնած են, բայց և քնի մեջ լսում են մեր կանչը, մեր իրազեկումներն ու մեր Ուսմունքը: Դուք դեռ ի վիճակի չեք տարբերելու, թե այն, ինչ լսում եք մեզնից, ձեր քնի շարունակությունն է, թե՛ Նոր Օրվա դողանքը:

Սակայն մենք բավարարվում ենք քչով. դուք մեզ լսում եք, և դա արդեն ուրախալի է:

Երբեք մի՛ դադարեք նպատակամղվել: Երբեք թույլ մի՛ տվեք, որ պատրանքը գրավի ձեր ողջ գիտակցությունը:

Ես հույսս չեմ կորցնում և համոզում եմ բոլոր տիեզերական խորհուրդներին, որ Երկիր մոլորակի մարդկությունն ունակ է շարժվելու Էվոյուցիոն զարգացման ուղով:

Սակայն ավելի ու ավելի քիչ ժամանակ է մնում: Ես ձեզ չեմ ասի քննարկվող ժամկետների և այն իրադարձությունների ճշգրիտ տարեթվերի մասին, որոնք սպասվում են: Ինչների՞դ է պետք, որ իմանաք...

Նրա համար, ով քնած է մնացել, ոչ մի նշանակություն չունի, թե ինչ տեղի կունենա: Իսկ արթուններին ոչ մի բան չի սպառնում:

Մնացին այն քչերը, որոնք կարծես քնի մեջ լսում են իմ խոսքերը և իմ ուղերձները կարդալուց անմիջապես հետո իսպառ մոռանում դրանց մասին: Բայց ձեզ էլ ոչ մի ժամկետ չեմ հայտնի:

Քանզի ժամանակը ոչ մի նշանակություն չունի, եթե հիմա չեք կարողանում ձեզ ենթարկեցնել ձեր գիտակցության փոփոխությունը:

Ես եկել եմ, որպեսզի հիշեցնեմ, որ ձեզնից՝ մարմնավորվածներիցդ են կախված շատ ու շատ բաներ, եթե չասենք՝ ամեն ինչը:

Դադարե՛ք Էվոյուցիայի խնդիրներից խույս տալուց. դադարե՛ք անկյուններում թաքնվելուց, որպեսզի շարունակեք թաքուն խաղալ ձեր երեխայական խաղերը: Դուք արդեն հատել եք բոլոր այն հնարավոր սահմանները, որոնց ընթացքում անհրաժեշտ էր յուրացնել մեր Ուսմունքը:

Այժմ ես ամենայն պատասխանատվությամբ պետք է ասեմ, որ ամբողջ աշխարհն ու նրա ճակատագիրը կախված են այն քչերից, որոնք որոշակի առաքելությամբ ու նպատակով մարմնավորվել են հենց այս ժամանակ, և այնպես են տարվել պատրանքով, որ բաց են թողել բոլոր հատկացված ժամկետները: Եվ հիմա մեր առջև ծառացել է անհրաժեշտություն՝ կա՛մ երկարաձգել ժամկետները, կա՛մ էլ բռնի կերպով ձեզ քնից հանել:

Ամեն անգամ մենք ասում ու զգուշացնում ենք, և ամեն անգամ ձեր գիտակցությունը հրաժարվում է հավատալ, որ ամեն ինչ շատ լուրջ է: Թող որ իմ այս ուղերձը ձեզ ստիպի գոնե կարճ ժամանակով բացել ձեր աչքերը, որպեսզի տեսնեք այն վտանգը, որը սպառնում է մարդկությանը, եթե նա չկարողանա այն քչերի միջոցով, որոնք մարմնավորվել են հատուկ այդ առաքելությամբ, հենց հիմա անել այն, ինչ պահանջում է Տիեզերական Օրենքը: Իսկ հենց հիմա պահանջվում է ապացուցել, որ մարդկությունն ունակ է համագործակցելու Բարձրագույն Աշխարհների հետ. որ մարդկությունը կարող է և ուզում է զարգանալ՝ ընթանալով Էվոյուցիոն զարգացման վերընթաց ուղով:

Ես այս ամենն ասում եմ ձեզ բաց ու շիտակ, քանզի ինձ վրա պատասխանատվություն եմ վերցրել Երկրի մարդկության համար: Եվ ես կշարունակեմ ձեզ քնից հանել ու արթնացնել այնքան ժամանակ, մինչև որ իրապես արթնանաք:

Դուք չեք կարող պատկերացնել, թե որքա՛ն դժվար է լինում ինձ համար, որ համոզեմ Մեծ Կենտրոնական Արևին, որ մարդկությանն էլի՝ մի քիչ ժամանակ է պետք ու էլի՝ մի քիչ էներգիա: Շատ ցավալի է, որ դուք ունակ չեք գնահատելու ու հասկանալու այն խնամքն ու հոգածությունը, որ այժմ ձեզ ցուցաբերում են ձեր ավագ եղբայրներն ու քույրերը՝ Համբարձյալ Վեհապետները:

Ես այժմ լռում եմ, որպեսզի ասածներիս շուրջ մտորելու ժամանակ ունենաք: Խոստացեք, որ ձեր գիտակցության տարբեր վիճակներում առնվազն երեք անգամ կկարդաք իմ այս ուղերձը:

Ես այս օրով եկա, որպեսզի իմ ձայնը ձեր սրտերին հասցնելու ևս մեկ փորձ կատարեմ:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Տեր Սուրիա
21 հունիսի, 2009 թ.

Այլևս ոչ մի բույս կորցնել չի կարելի

ԵՄ ԵՄ Սուրիան:

Ես այսօր եկել եմ կարևոր գրույց վարելու համար և հուսով եմ, որ այսօրվա մեր գրույցը կդրդի ձեր հոգիներին կատարելու այն գործողություններն ու քայլերը, որոնք անհրաժեշտ են այս փուլում:

Այժմ կուզենայի ձեզ հիշեցնել որոշ բաների մասին, որոնց շուրջ մենք արդեն խոսել ենք մեր նախորդ ուղերձներում, սակայն դրանք ավելորդ չի լինի կրկնել մեկ անգամ ևս: Խոսքն այն վերաբերմունքի մասին է, որ դուք ցուցաբերում եք Համբարձյալ Դասերիս, ինչպես նաև մեր ուղերձների նկատմամբ:

Ներկայումս շատերն են երևակայում, թե կարող են ընդունել մեր ուղերձները: Եվ նրանց մեծ մասն իրապես ուղերձներ է ընդունում և փորձում դրանք, որքան հնարավոր է, լայնորեն տարածել:

Ի՛նչ արած, դա ձեր իրավունքն է: Աստված չի կարող ձեզ գրկել ազատ կամքից և արգելել այդ գործը: Փոխարենը մենք կարող ենք Ուսմունք տալ Աստծո էներգիայի կեղծ դասակարգումով պայմանավորված կարմայական պատասխանատվության մասին:

Ամեն անգամ, երբ ջանում եք կապի մեջ մտնել ձեր կարծեցյալ Բարձրագույն աշխարհի հետ, հարկ է, որ մի պահ կանգ առնեք և վերլուծեք ձեր գիտակցության վիճակը: Քանզի ձեր գիտակցության վիճակն իր հետքն է թողնում ձեր արած ամեն ինչի վրա: Նաև պետք է վերլուծեք ձեր արարքի շարժառիթը, որովհետև դրանով է ուղղորդվում ձեր գործողության վեկտորը:

Ե՛վ մեկը, և՛ մյուսը շատ կարևոր են: Ամեն մի գործողություն, որն ի կատար եք ածում ֆիզիկական ոլորտում կամ մտքերի ու զգացմունքների ավելի նուրբ ոլորտներում, ձեզնով է

գունագարդվում և ծառայում է կա՛մ պատրանքը բազմապատկող ուժերի, կա՛մ այդ պատրանքի հետ հավաքմանը նպաստող ուժերի դրսևորմանը:

Ուստի ձեր նպատակամղվածությունից է կախված, թե ո՛ր ուժերի կողմից եք դուք հանդես գալիս:

Ասենք, օրինակ, ելնելով դատարկ հետաքրքրասիրությունից՝ դուք որոշել եք նուրբ ոլորտից ուղերձներ ընդունողի դեր խաղալ: Դրանում ոչ մի վատ բան չկա: Կարո՞ղ եք նման փորձեր անել: Սակայն նուրբ ոլորտի հետ առնչվելու պարագայում նախ պետք է իմանաք և պահպանեք անվտանգության տեխնիկայի կանոնները:

Չէ՞ որ առանց համապատասխան ուսուցում անցնելու և առանց ձեր կողքին հմուտ խորհրդատու ունենալու դուք չեք նստում ժամանակակից օդանավի դեկավարման վահանակի առաջ: Արդ, ինչու՞ եք կարծում, թե կարող եք հաղորդակցվել նուրբ ոլորտի հետ՝ առանց ուսուցում անցնելու և համոզված չլինելով, որ ձեր այդ ձեռնարկումն անվտանգ է:

Ձեզնից շատերը, շա՛տ շատերը, չգիտես ինչու կարծում են, թե ի վիճակի են ուղերձներ ընդունելու նուրբ ոլորտից: Եվ անում են դա՝ չնայած այն հաճախակի ու բազում զգուշացումներին, որոնք տրվում են մեր կողմից: Եվ ես չեի վատնի Աստծո թանկարժեք էներգիան, որպեսզի հերթական ուղերձս տամ այդ թեմայի վերաբերյալ, եթե չլինեին այն բազմակի ու հաճախակի դեպքերը, երբ ուղերձ ընդունելու նպատակով մարդիկ ջանում են կապի մեջ մտնել նուրբ աշխարհի հետ, ձեռնամուխ են լինում դրան, թվում է, թե ինչ-որ բան ստացվել է, բայց հետո գալիս է մի պահ, երբ նրանք արդեն չեն կարողանում վերադառնալ իրենց սկզբնական դիրքին: Նրանք չափազանց հեռու են գնացած լինում իրենց փորձարարությամբ: Անտեսանելի աշխարհը, աստեղային աշխարհն իր կենսոլորտով լիակատար իշխանություն է ձեռք բերում ձեր կենսահոսքի վրա, և դուք այլևս ինքներդ ձեզ չեք պատկանում. ստիպված եք մշտապես ենթարկվել այն էակների անընդհատ հրամաններին ու ցուցումներին, որոնք, ձեզ կառավարելով, սկսել են գործել ձեր միջոցով:

Դուք կարող եք և պետք է փորձարարությամբ զբաղվեք: Բայց ինչու՞ չսկսել ձեր գիտակցությունը փոխելու և մաքրագործելու ավելի անվտանգ վարժություններից: Կամ ինչու՞ սկզբի համար չբաղվել զանազանելու կարողության զարգացման փորձերով, որպեսզի կարողանաք պարզել, թե ինչն է ձեզ շրջապատող իրականության մեջ համապատասխանում աստվածային չափորոշիչներին, և ինչը, ընդհակառակը, բացասական ու անաստված կերպերին:

Չէ՞ որ ձեզնից ամեն ոք վաղ թե ուշ բախվում է այնպիսի հանգամանքների, որոնք սկսում են ձեզ գրգռել, առաջացնել հույզերի բուռն պոռթկում: Չէ՞ որ բախվում եք այնպիսի դրսևորումների, որոնք ստիպում են ձեզ տառապանք կրել, ապրումներ ունենալ և քայլեր ձեռնարկել, որպեսզի ապահովեք ձեր անվտանգությունը, վերադառնաք ավելի հարմարավետ միջավայր: Մի՞թե սուտ է, որ ձեզնից շատերը մշտապես գտնվում են վախի, ագրեսիվության և ընկճվածության ճիրաններում: Ինչու՞ եք դուք գիտակցության այդպիսի բացասական վիճակներ ունենում: Պատճառներից մեկն այն է, որ գիտակցաբար թե անգիտակցաբար դուք ձեզ ենթարկում եք աստեղային ոլորտին: Եվ նույնիսկ ո՛չ այն պատճառով, որ ուղերձներ ընդունելու փորձեր եք անում: Դուք աստեղային ոլորտի գերին եք դառնում՝ օգտագործելով ալկոհոլ, նիկոտին ու միս, սարսափի ֆիլմեր, արյունահեղ մարտաֆիլմեր ու պոռնոգրաֆիական ֆիլմեր դիտելով: Ահա այդ ամենով դուք ձեզ ենթարկեցնում եք աստեղային ոլորտին ու ստիպված եք լինում կրելու դրա ազդեցությունը, վայելելու ձեր արարքների պտուղները:

Իհարկե կասեք, որ Երկրի վրա ապրող մարդկանց մեծամասնությունն անում են բոլոր այն բաները, որոնք ես հենց նոր թվարկեցի: Այո՛, դա այդպես է. Երկրի վրա ապրող մարդկանց մեծամասնությունն իսկապես աստեղային ոլորտի ազդեցության տակ է գտնվում:

Բայց չէ՞ որ ես գալիս եմ, որպեսզի ձեր մոլումների վեկտորն ուղղեմ դեպի ավելի նուրբ ու վերամբարձ աշխարհները: Ես ջանում եմ ձեր ուշադրությունը կենտրոնացնել աստվածային չափորոշիչների և Աստծո աշխարհի դրսևորումների վրա: Եվ, հավատացե՛ք ինձ, այնժամ, երբ ձեր զանազանելու կարողությունը կսկսի գործել, դուք կկարողանաք կողմնորոշվել լինելիության չերևացող ոլորտների թրթռանքներով: Եվ այլևս կույր գործիք չեք դառնա աստեղային ոլորտի ուժերի ձեռքին, կկարողանաք գնահատել այն ամենի թրթռանքը, ինչը ձեզ կշրջապատի երևացող ու չերևացող մակարդակներում և գերպատվություն կտաք աստվածային չափորոշիչներին՝ սեփական ազատ կամքով մերժելով ցածր թրթռանքներ ունեցող այն անմշակ նախահումքերը, որոնք ձեր հոգիներին առաջնորդում են դեպի մահ և դժոխք:

Ձեզ թվում է, թե ձեր սիրած որոշ թուլությունները պահպանելը, ձեր ցածրակարգ կրքերին ու սովորություններին հագուրդ տալն իրենցից որևէ ահավոր բան չեն ներկայացնում: Իսկ ես ասում եմ ձեզ, որ եկել է ժամանակը, երբ դուք պետք է գիտակցորեն որոշում կայացնեք, որ ձերբազատվեք ձեր մեջ առկա ամեն մի անաստված դրսևորումից: Իսկ դրա հետևանքը կլինի այն,

որ կկարողանաք ձերբազատվել շրջակա աշխարհի անաստված դրսևորումներից, քանզի մատերիան հնազանդորեն ենթարկվում է ձեր գիտակցությունը:

Ես այս պարզ բաներին այսքան շատ ժամանակ չեի հատկացնի, եթե տեսնեի, որ թեկուզ մի քանի տոկոսի չափով առաջնորդվում եք Համբարձյալ Դասերի խրատներով:

Մեր ուղերձներն ընթերցողների մեծամասնության մոտ մեր տված տեղեկատվությունն ու մարդկության անվտանգ զարգացման բանալիները մի ականջից մտնում, մյուսով դուրս են գալիս՝ որևէ գործողության չհանգեցնելով ո՛չ մենտալ, ո՛չ էլ ֆիզիկական ոլորտի առումով:

Գիտակցե՛ք, խնդրեմ, որ ժամանակն այնպիսին է, որ այլևս չի կարելի կորցնել ոչ մի լույս: Դուք այլևս ժամանակ չունեք, որ հետաձգեք ձեր վերափոխումը՝ գիտակցությունը փոխելու իմաստով:

Ես ձեզ անհրաժեշտ ցուցումներ տվեցի: Մի՛ սպասեք այն հրաշքին, որը դրսից է գալու: Եթե ներքուստ պատրաստ չեք, ապա ոչ մի հրաշք ձեզ չի օգնի: Ցանկացած հրաշքի նախապատրաստման և դրսևորման համար Աստծո էներգիայի ահռելի քանակություն է պահանջվում, և, որպեսզի այն տեղի ունենա, դուք պետք է ապացուցեք, որ պատրաստ եք սեփական գիտակցությունը փոխելուն և դրա համար անում եք անհրաժեշտ ամեն ինչ:

Իսկ այժմ ես ուզում եմ հիշեցնել Կարմայական Վարչությանը նամակներ հղելու թողության շնորհի մասին: Հենց այս օրերին ընթանում է Կարմայական Վարչության նիստը, որը կարող է քննարկել ձեր խնդրանքները և ցուցաբերել այն օգնությունը, որը հայցում եք ձեր խնդրանքով: Սակայն օգնություն ցուցաբերելու մասին որոշում կայացնելիս Կարմայական Վարչությունն առաջնորդվում է նրանով, թե որքան են մաքուր ձեր շարժառիթները և որքանով է անկեղծ ձեր փոխվելու ցանկությունը: Հնարավոր չէ խաբել Աստծուն. հնարավոր չէ ստիպել Աստծուն, որ խաղա ձեր մարդկային կանոններով:

Հասել է ժամանակը, որպեսզի հասկանաք, որ բոլոր հնարավոր սահմաններն արդեն հատվել են:

Ես չգիտեմ, թե ինչպիսին կլինի Կենտրոնական Արևի ընդհանրական որոշումը, բայց ամեն դեպքում մի՛ մոռացեք Երկիր մոլորակի համար շնորհներ խնդրել ձեր հղումներում: Չի այն վիճակը, որում մոլորակն այժմ գտնվում է, Լուսի գորագնդերի հրատապ միջամտություն է պահանջում: Համակշռությունը խախտված է, և խախտված է ոչ առանց ձեզնից յուրաքանչյուրի մասնակցության:

ԵՍ ԵՄ Մուրիան

Մուրբ Միքայել Հրեշտակապետ
22 հունիսի, 2009 թ.

Ես կանչում եմ ձեզ դեպի ապագա

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը:

Ես եկել եմ կապույտ բոցի հրեշտակներով շրջապատված: Եվ կուզենայի, որ ձեր ողջ ուշադրությունը կենտրոնացնեիք իմ հաղորդման վրա:

Այս և մոտակա օրերին այնպիսի ժամանակներ են, երբ դուք ձեր ջանքերը պետք է կենտրոնացնեք մոլորակին օգնելու գործի վրա: Եվ հենց դա է իմ հաղորդումն ու նախազգուշացումն ուղղված ձեզ:

Ես մանրագնին կերպով խոսքեր եմ ընտրել և մտորել, թե ինչպե՞ս ձեզ հասցնեմ այն պարզ ճշմարտությունը, որ արդեն հասել եք այն տարիքին, երբ Համբարձյալ Դասերի հետ պետք է կիսեք պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա:

Դուք չեք շտապում մոլորակի համար պատասխանատվություն ստանձնել, սակայն դա ձեզ կվիճակվի անել: Եվ դա գիտակցության այն հաջորդ մակարդակն է, որին պետք է հասնեք:

Առաջվա պես ձեզ հուզում է միայն այն, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը. դուք կլանված եք այն պատրանքով, որը ձեզ շրջապատում է տանը, աշխատանքի վայրում, ցուցադրվում է հեռուստատեսությամբ: Սակայն կան անհամեմատ ավելի կարևոր և իրական բաներ, որոնց մասին արդեն պետք է սկսեք մտորել:

Ամբողջ աշխարհը, լինելիության ֆիզիկական և նուրբ ոլորտները ցնցվում են ձեր շատ գործողություններից, մտքերից ու զգացմունքներից: Ե՛վ ես, և՛ Լուսի մյուս էակները երբեմն սարսուռով ենք ընկալում բացասական էներգիայի այն հերթական բռնկումները, որոնք մարդիկ թույլ են տալիս իրենց անմտության երեսից: Ամեն անգամ, երբ տեղի է ունենում բացասական էներգիայի անկառավարելի ժայթքում, պահանջվում է բազում Լուսի էակների ջանքերի

ներդրումը, որպեսզի իրավիճակը համակշռվի և հետևանքները ֆիզիկական ոլորտի համար աղետալի չդառնան:

Այժմ հասել է այն ժամանակը, երբ դուք՝ մարդկային համակեցության լավագույն ներկայացուցիչներդ, պետք է մեզ՝ Համբարձյալ Դասերիս հետ կիսեք պատասխանատվությունը Երկիր մոլորակի համար՝ այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա: Եվ դա գիտակցության այն մակարդակն է, որին մոտակա ժամանակներում իրապես պետք է հասնեք:

Դադարե՛ք հայացք նետել շրջապատի մարդկանց վրա և հետևել այն օրինակներին, որոնք տեսնում եք ձեր շուրջն ու հեռատեսիլի էկրանին: Քանզի մոտ է այն ժամանակը, երբ պետք է սկսեք հետևել ձեր սրտերի առաջնորդությանը: Կան ավելի նուրբ էներգիաներ ու գործընթացներ, որոնք ավելի նուրբ ոլորտներում առկա են ձեր շուրջը: Եվ այդ գործընթացներն իրենց արձագանքն են գտնում ձեր ներսում գիտակացական որոշակի վիճակների տեսքով: Նուրբ ոլորտում տեղի ունեցողը ոչ միշտ է ձեր կողմից գիտակցվում, ոչ ամեն ինչն է հասնում ձեր արտաքին գիտակցությանը, բայց դուք օժտված եք որոշակի ներըմբռնողականությամբ, կանխագագությանբ, հոգեպայծառացմամբ: Եվ եթե անկեղծ լինեք ինքներդ ձեզ հետ, եթե մուտք գործեք ձեր սիրտը և զգաք նուրբ աշխարհի թրթռումները, ապա պարզորոշ կերպով տազնապալից զվվոց կլսեք, որը ելնում է Երկիր մոլորակից: Դա տազնապալի ազդանշան է: Այն ցույց է տալիս, որ մոլորակի վրա գործերը վատ են ընթանում:

Ինչպե՞ս կարելի է փոխել իրավիճակը, և ի՞նչ կարելի է անել հենց հիմա, որպեսզի ուժերի գերակշռումով նորից լուսավոր ուղու հեռանկար բացվի:

Ես կարծում եմ, որ ավելորդ չի լինի հիշեցնել այն մասին, որ որքան էլ ծանր լինի իրավիճակը, որքան էլ ձեզ տիրեն ծանր մտքերն ու տրամադրությունները, պետք է ձեր մեջ ուժ գտնեք և արտաբերեք հետևյալը.

«Ես գիտեմ, որ այս վիճակներն իրական չեն: Գիտեմ, որ պատրանքն ուժեղ է, բայց ես պատրաստ եմ պատրանքային ուժերին հակադրելու իմ Միտո ողջ գործությունը, որն իմ սրտից է բխում: Ես սիրում եմ այս աշխարհը: Ես սիրում եմ Աստծուն և Նրա արարչագործությունը և թույլ չեմ տա, որ այն ավերվի: Պաշտելի՛ Միքայել Հրեշտակապետ և պահապան հրեշտակներ՝, խնդրում եմ իմ կենսահոսքն օգտագործել՝ ի օժանդակություն Լույսի գորագնդերի: Ես գիտեմ, որ իմ մոլորակի հետ ոչինչ չի պատահի, քանի որ ես կա գոնե մեկ լուսակիր, ով գիտակցորեն գործում է Լույսի ուժերի կողմից»:

Հենց որ հավաքագրենք բավարար թվով անհատների, որոնք պատրաստ կլինեն վճռականորեն պաշտպանելու Լույսի դիրքերը, մենք կկարողանանք ողորմածություն խնդրել Մեծ Կենտրոնական Արևից ու բոլոր տիեզերական խորհուրդներից, որպեսզի Երկիրն օգնություն ստանա և այդ օգնությունը ստանա առանց հապաղման:

Այդ պահով շատ բան է որոշվում: Մարդկային անհատների մեծ մասը պատրաստ չէ գիտակցության փոփոխությանը: Եվ գործունյա կամավորներ են պետք, որպեսզի ցուցադրվի գիտակցության նոր մակարդակը, այն գիտակցության, որը ոչ թե կապկապված է ֆիզիկական ու աստեղային ոլորտներին, այլ պատրաստ է համագործակցելու Բարձրագույն Աշխարհների հետ:

Եվ այնժամ, երբ բավարար թվով անհատներ գտնվեն, որոնք ի վիճակի կլինեն ցուցաբերելու իրենց նոր գիտակցությունը, նրանց ջանքերի շնորհիվ կսկսի փոխվել նաև մյուս մարդկանց գիտակցությունը:

Լինելիության նուրբ ոլորտներում դուք բոլորդ կապված եք իրար հետ: Եվ գիտակցության ավելի բարձր հաճախություն է պետք, որ կամերտոնի պես հնչի տարածության մեջ, որպեսզի այն մարդկանց հոգիները, որոնք խրված են պատրանքի մեջ, ոգի առնեն ու իրենց հայացքներն ուղղեն դեպի Երկիրը:

Ես նախանձում եմ ձեզ, որ մարմնավորվել եք այս բարդ ժամանակներում: Քանզի այն բանից, թե ինչպես կկարողանաք մաքուր պահել ձեր գիտակցությունը և այն համահունչ ու նկրտուն դարձնել Բարձրագույն Աշխարհների հետ, կախված է մոլորակի և այն հոգիների ապագան, որոնք թաղված են պատրանքի մեջ և ոչ մի լույսի շող չեն տեսնում:

Օրինա՛կ ցույց տվեք: Խիզա՛խ եղե՛ք ու տոկուն, եղե՛ք ճարտարամիտ: Հորինե՛ք այն եղանակները, որոնք միլիոնավոր մարդկանց գիտակցությունը կբարձրացնեն նոր մակարդակի վրա: Ղողանջե՛ք ամենաբարձր նոտայով: Օրինա՛կ ծառայեք:

Ես ձեզ կանչում եմ դեպի ապագան...

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը

Ձեր խնդիրն է՝ սովորել հաղթանակ տանել նուրբ ոլորտում

ԵՍ ԵՄ Սերապիա Բեյը:

Այս օրով ես եմ եկել... Օրեցօր ավելի դժվար է դառնում ձեր սրտերի դուռը բախելը: Մարդկությունն անշեղորեն շարժվում է դեպի անդունդ: Այնուամենայնիվ մենք մեր հույսը չենք կորցնում: Քանզի հատկապես այնժամ, երբ թվում է, թե վիճակն անելանելի է, և ոչ մի ելք չկա ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, հենց այդ պահին տեղի է ունենում մի բան, որը կարելի է Աստծո հրաշք կոչել, և իրադրությունը կտրուկ փոխվում է:

Մարդկության պատմության մեջ որքա՛ն հաճախ են եղել պահեր, երբ թվացել է, թե առջևում միայն անթափանց խավար է տիրում: Սակայն ամենավերջին պահին՝ բառացիորեն կործանման եզրին, գտնվել են անձնագոհ հոգիներ, որոնք իրենց վրա են վերցրել մարդկության համար պատասխանատվությունը՝ հանուն երկրային Էվոյուցիայի հետագա ընթացքի:

Ես գիտեմ, որ իմ այս ուղերձը կարդացողների մեջ շատ կան լուսավոր հոգիներ: Դուք բազմաթիվ անգամ մարմնավորվել եք Երկրի պատմության ամենաճակատագրական պահերին: Եվ հիմա կրկին ձեզնից պահանջվում է ձեր բոլոր ուժերի ու հնարավորությունների լարումը:

Բավական է միայն, որ ոգի առնեք և ձեր հայացքը հառեք ձեզ շրջապատող պատրանքից ավելի վեր:

Մի պահ պատկերացրեք, թե վատ երազ եք տեսնում: Գիշերը կանցնի, արևը նորից կշողա, և ցերեկվա լույսի տակ ձեր բոլոր գիշերային ահերն ու սարսափները կթվան անիրական: Դուք այժմ քնի մեջ եք: Դուք խորասուզված եք պատրանքի քնի մեջ:

Այժմ հասել է այն ժամանակը, երբ պետք է ի մի բերեք ձեր բոլոր ուժերն ու ունակությունները և քայլ անեք դեպի առաջ:

Դուք ասպետներ եք: Մարտիկներ: Եվ այժմ ձեր ջանքերից շատ բան է կախված: Միայն թե հարկ չկա, որ սուր վերցնեք և զրահ հագնեք ֆիզիկական ոլորտում: Դուք պետք է զրահավորվեք ձեր ոգու զրահով: Եվ պետք է վեր հանեք ձեր ոգու սուրը՝ ձեր Կուռդալինին: Միայն դրանով՝ դուք կարող եք ձեր ներսում և ձեզ շրջապատող իրականության մեջ իրականը բաժանել անիրականից:

Դուք մարտիկներ եք, բայց ձեր խնդիրն այն չէ, որ անվերջանալի ճակատամարտ մղեք ֆիզիկական ոլորտում: Ձեր խնդիրն է, որ սովորեք հաղթանակ տանել նուրբ ոլորտում, ձեր հույզերի ու մտքերի ոլորտում: Հատկապես այնժամ, երբ հաղթանակ կտանեք ձեր մտքերի զգացմունքների ու բացասական վիճակների նկատմամբ, հաղթանակ կտանեք նաև լինելիության ֆիզիկական ոլորտում: Քանզի նուրբ ոլորտների ձեր նվաճումներն անխուսափելիորեն կձևափոխեն ֆիզիկական ոլորտը:

Հարկ չկա, որ մարտիկների շարքեր փնտրեք, որպեսզի միանաք նրանց: Քանզի նուրբ ոլորտում դուք ներկայանում եք որպես Լույսի հզոր զորք: Եվ դուք անպարտելի ու անխոցելի կլինեք, քանի դեռ ձեր գիտակցությունը պահպանում եք աստվածային մակարդակի վրա:

Այն ամենը, ինչ ձեզնից պահանջվում է, իրական աստվածային գիտակցություն կրելը և չկորցնելը գիտակցության այդ մակարդակը ողջ օրվա ընթացքում և ամեն օր:

Պատկերացրեք այնպես, որ ֆիզիկական ոլորտում դուք հանդես եք գալիս որպես ընդօրինակման կատարյալ նմուշ: Աննկարագրելի ջանքերի գնով և ներքին աշխատանքով դուք պահպանում եք ձեր գիտակցությունը հնարավորինս բարձր մակարդակի վրա: Իսկ դա անելը բավականին դժվար է՝ գտնվելով անկատար միջավայրում: Բայց այն դեպքում, երբ ձեզ հաջողվում է պահպանել գիտակցության առավելագույն մակարդակը, ձեր թրթիռներն այնքան են բարձրանում, որ ամեն մի անկատարություն, որին բախվում եք ձեր աշխարհում, ստիպված է լինում ցույց տալ իր դեմքը: Դուք մեր մարտիկներն եք և նմանվում եք ջահերի, որոնցով մեզ համար լուսավորվում է պատրանքի անկատարությունը: Աստծո ողջ ուզածն այն է, որ ձեր աշխարհում հնարավորինս արագ տեղի ունենա որոմը հատիկից ջոկելու գործընթացը: Հատկապես այնժամ, երբ կհավաքվի բարի հատիկների բերքը, իսկ մոլախոտերը կհանձնվեն կրակին, ձեր աշխարհի համար կգա այն ժամանակը, երբ Համբարձյալ Վեհապետները կկարողանան մուտք գործել ձեր աշխարհ:

Ուստի մի՛ հուսահատվեք և մի՛ ասեք, թե ամեն ինչ վատ է: Ամեն ինչ ճշգրտորեն ընթանում է համաձայն Աստծո պլանի: Եվ ձեզնից ամեն ոք, ով հանձն կառնի իր վրա կրել Լույսի բեռը, կստանա հրեշտակային գործառնությունը պաշտպանությունը:

Դուք սարսափով եք նայում ձեր շրջապատին, և դրությունը ձեզ թվում է անելանելի: Մի՛ տրտմեք այն ամենի համար, ինչն այլևս ենթակա չէ հետագա Էվոյուցիայի: Ձեր ոտքերով ամուր կանգնեք հողին և հղե՛ք ձեր կոչերը դեպի Երկինք:

Այս բարդ ժամանակներում ձեր դերն ու առաքելությունն այն է, որ դիմանաք ճակատամարտի լարվածությանը և մնաք մարտադաշտում:

Միայն թե մարտն ընթանում է նուրբ ոլորտում՝ աստեղային այն թանձրացած շերտերում, որոնք առավելագույնս մոտ են ֆիզիկական ոլորտին: Այդ պատճառով ճակատամարտը զգալի է ձեզ համար: Դուք պառկում եք քնելու և արթնանում այն զգացողությամբ, որ ողջ գիշեր եղել եք ծանր մարտի մեջ: Եվ հենց այդպես էլ կա: Լույսի լավագույն մարտիկները դադար չունեն ո՛չ ցերեկը, ո՛չ էլ գիշերը: Քանզի չի կարելի կորցնել թանկարժեք ժամանակը, որովհետև ժամանակ շատ քիչ է մնացել:

Փոխարենը հետագայում դուք կհիշեք ձեր սխրանքների մասին: Ամոռանալի ժամանակներ են ձեր ապրած ժամանակները: Եվ, որքան էլ ձեզ համար դժվար լինի, պետք է գիտակցեք, որ անհրաժեշտ է դիմանալ ու մնալ շարքերում: Վհատվել չի՝ կարելի: Մի՞թե՞ լարվածությունն ու մարտը...

Ասված է, որ միայն ամենա-ամենաներն ու նվիրվածները կկարողանան շարունակել էվոյուցիան:

Ես ուրախ եղա ձեզ այսօրվա իմ խրատները տալուս առիթով...

ԵՄ ԵՄ Սերասյիս Բեյր

Տեր Ծիվա

24 հունիսի, 2009 թ.

**Ես եկել եմ, որպեսզի ձեր հոգիները դուրս հանեմ այն խավարից,
որի մեջ սուզված է Երկիր մոլորակը**

ԵՄ ԵՄ Ծիվան...

Ես այս օրով կրկին ձեզ այցի եմ եկել: Չարժե՞ր գալ Ուսմունք տալու համար, քանի որ դուք չեք գնահատում մեր ուղերձներն ու մեր Ուսմունքը:

Ամեն անգամ, երբ տեսնում եմք մարդկության արձագանքը մեր այն փորձերի նկատմամբ, որ ուզում եմք կապ ստեղծել և համագործակցություն հաստատել, ցանկություն է առաջանում ամեն ինչ թողնել և սկզբից սկսել:

Դուք պատրաստ չեք և չեք ուզում ջանքեր գործադրել, որպեսզի պատրաստ լինեք համագործակցությանը:

Առաջվա պես պատրանքը տիրել է ձեր էությանը:

Եվ նույնիսկ այնժամ, երբ փորձում եք թափանցել մեր Ուսմունքի բուն էության մեջ, ավելի շատ ենթարկված եք լինում պատրանքին, քան մեր այն ազդեցությանը, որը մենք ուզում ենք ձեզ վրա թողնել մեր ուղերձների միջոցով:

Դուք չեք կարողանում հաղթահարել ձեր ներսում առկա անտեսանելի պատնեշը: Չեք ուզում և չեք կամենում վճռական քայլ կատարել պատրանքի հաղթահարման ուղղությամբ նախ և առաջ ձեր գիտակցության մեջ: Եվ այդ պատճառով մենք հայտնվել ենք ընտրության առջև. թողնել մարդկությանն իր հույսի՞ն, թե՞ շարունակել մեր փորձերն ու իրազեկումները:

Երբեմն ինձ թվում է, թե հնարավոր չէ մարդկությանը տեղից շարժել իրազեկումների միջոցով: Սակայն այն դեպքում, եթե դադարեցնենք մեր վերահսկողությունը, մարդկությունն ինքնուրույն չի կարողանա գոյատևել նույնիսկ մեկ երկրային օր: Դուք մշտապես գտնվում եք այս տիեզերքի Բարձրագույն Էակների խնամքի տակ:

Ձեր քաղաքակրթությունը կկործանվի 24 ժամվա ընթացքում, հենց որ մենք դադարեցնենք Էներգիայի ներդրումը ձեր քաղաքակրթության պահպանման համար:

Բանն այն է, որ չափազանց շատ ջանքեր են ծախսվել այն բանի վրա, որ մարդկությունը սկսի քայլեր անել էվոյուցիայի ուղղությամբ և ընդունի կշռադատված, լիովին հասուն որոշումներ:

Այն շատ քիչ հոգիները, որոնք պատրաստ են հետևելու մեր ցուցումներին, բաժան-բաժան են իրարից և իրենց շրջապատող միջավայրում իրենց զգում են սալիտակ ագռավների դերում: Եվ երբ սկսում եմ մտածել այդ քչերի մասին, երբ հիանում եմ նրանց հոգևոր փորձի հարստությամբ, որը նրանք մեղուների պես հավաքել են բազում երկրային մարմնավորումների ընթացքում, ես արդեն անցնում եմ նրանց կողմը, ովքեր կողմնակից են, որպեսզի շարունակվի երկրային փորձը:

Ոսկին միշտ քիչ է լինում, իսկ դատարկ բնանյութը՝ անհամեմատ ավելի շատ, բայց և այնպես մարդիկ շարունակում են բնանյութից ոսկի կորզելու գործը: Մենք էլ մեր հերթին կշարունակենք ձեր աուրային հնարավորություն տալ, որպեսզի այն ձեռք բերի ոսկու շողարձակում:

Ձեր քաղաքների աղմուկի, ցեխի ու փոշու մեջ շատ դժվար է զանազանել այն մարդկանց, որոնք պայծառացած են Աստծո Լույսով: Դուք փնտրում եք Աստծուն այնտեղ, որտեղ Նա չկա ու

չի կարող լինել: Դուք փնտրում եք Աստծուն բարեհաջողության աշխարհում: Սակայն մենք գալիս ենք, որպեսզի ձեզ ուսուցանենք զանազանման կարողություն: Աստծո ներկայությունը ձեր աշխարհում միշտ կա, սակայն ձեզ հարկավոր է դիտողականություն դրսևորել: Ձեզնից ամեն մեկի ներսում ներկա է Աստված: Պետք է միայն կարողանաք տեսնել:

Ձեր կյանքում լինում են շատ հանդարտ, երանավետ պահեր, երբ կարծես ձեր շուրջն ամեն ինչ լում է: Քաղաքի աղմուկի մեջ դուք ունկնդիր եք լինում լռությանը: Ամենուրեք լուռ է: Եվ այդ ժամանակ հանդարտ ձեզ է մոտենում Աստված: Նա դուրս է ելնում ձեր էության խորքից և իր ազդեցությունը սփռում ձեր շուրջը: Եվ եթե դուք ավելի հաճախակի ապրեիք ձեր աշխարհում աստվածության ներկայության այդ պահերը, ապա, այդ երանության համն առնելով, դուք վերջնականապես կհրաժարվեիք այն փոխանակներից, որոնք ձեզ է հրամցնում ձեր քաղաքակրթությունը: Աստծո կողմից տրված բարեշնորհանքը չի կարելի շփոթել այն փոխարինիչների հետ, որոնց ամենուրեք հանդիպում եք ձեր աշխարհում:

Ես կուզենայի, որ դուք սովորեիք նշմարել ներքին անդորրի ու հանդարտության այդ վիճակները ձեր աշխարհում: Նաև կուզենայի, որ կարողանայիք պահել այդ վիճակները ձեր հիշողության մեջ նույնիսկ այնժամ, երբ ձեր շուրջն ամեն ինչ փուլ է գալիս:

Կան ճշմարիտ վիճակներ, երբ դուք Աստծո մեջ եք գտնվում: Եվ պետք է ձգտեք, որ լինեք նման վիճակներում: Այդ եղանակով ձեր ներսից Աստծո Աշխարհը կարող է դուրս հորդել դեպի ձեր երևակված աշխարհը: Եվ այդ եղանակով ձեր աշխարհի անկատարությունը կսկսի աստիճանաբար նվազել այն կրակի պես, որն այլևս այրելու ոչինչ չունի:

Միայն ինքներդ եք պահպանում ձեր աշխարհի անկատարությունը: Միայն ինքներդ եք ձեր էներգիայով սնուցում անկատարությանը, որի շնորհիվ էլ այն հարատևում է: Կանգ առեք, մտորե՛ք, թե ինչ եք անում: Դադարե՛ք օր օրի, մարմնավորումից մարմնավորում տեղապտույտ տալուց՝ գազարի հետևից ընկած հիմար ավանակի պես: Ամեն մեկը ունի իր գազարը. մեկի համար դա սեքսուլ հաճույքն է, մյուսի համար՝ կարիերան, որին, չգիտես ինչու, ինքնադրսևորում եք կոչում, իսկ երրորդի համար էլ՝ թմրեցուցիչ նյութերը, մոլի խաղերն ու ժամանցները:

Որքա՛ն տարբեր բաներ է հորինել մարդկությունը, որպեսզի դրանք հակադրի միակ ճշմարտությանը՝ Աստծուն, որը ներկա է ձեր սրտերի անդորության մեջ:

Մո՛ւտք գործեք այդ անդորության մեջ, և դուք կունենաք նմուշօրինակ, որը համեմատության մեջ կդնեք այն ամենի հետ, ինչը կյանքում ձեզ կհանդիպի: Կկարողանաք համեմատել ձեր այն վիճակները, որոնք ձեռք եք բերում ձեր աշխարհի խաղալիքների հետ առնչվելուց, աստվածային ներդաշնակության ու անդորության այդ նմուշօրինակի հետ:

Ձեզ անհրաժեշտ է կամավորապես հրաժարվել տարբեր իրերի այն գերկուտակումից, որն առկա է ձեր աշխարհում, բայց ձեզ պետք չի գա ապագա աշխարհում:

Շատ հեշտ է եռաժանու մի հարվածով ձեր աշխարհի գորոյան հանգույցը կտրելը: Սակայն մարդկության լավագույն նվաճումների ամեն մի հատիկը պետք է պահվի ու պահպանվի: Մարդկային քաղաքակրթության լավագույն նվաճումները բազմակիորեն գերազանցում են աշխարհների այլ համակարգերի նվաճումները: Բայց, որպես դրան հակակշիռ, նաև ունեք շատ բաներ, որոնցից սարսռում են Բարձրագույն Աշխարհները, և որոնք պետք է հանձնվեն տիեզերական կրակին:

Դուք գտնվում եք տիեզերական վառարանի վերնանցքում: Եվ ձեր մեջ է, որ տեղի է ունենում ոսկին հումքային բնանյութից առանձնացնելու գործընթացը: Եվ մարդկության Ոսկեդար անցնող հոգիների տոկոսն էլ նույնն է, ինչքան որ ոսկու տոկոսն է Երկրի հումքային բնանյութի մեջ:

Ես եկա, որպեսզի ձեր հոգիները դուրս հանեմ այն խավարից, որի մեջ սուղված է Երկիր մոլորակը:

ԵՄ ԵՄ Շիվան...

Տեր Մայրելյա
25 հունիսի, 2009 թ.

Ուսմունք ընտրության և Ուղու մասին

ԵՄ ԵՄ Մայրելյան՝ ձեզ այցի եկածը:

Այսօրվա իմ գալու նպատակն այն է, որ մտորեմ ձեզ հետ միասին և զրույց կայացնեմ, հոգևոր զրույց: Ուզում եմ դիմել անմիջականորեն ձեր հոգուն: Ուզում եմ, որ գոնե կարճ ժամանակով մի կողմ թողնեք ձեր մտքերն ու ձեր առօրյա խնդիրները:

Օրվա ընթացքում ձեր գիտակցության վիճակներն այնպիսին են, որ անհաղթահարելի պատնեշ են ստեղծում մեր աշխարհների միջև:

Ինչպե՞ս ձեզ բացատրեմ և ինչպե՞ս ձեզ փոխանցեմ այնպիսի մի վիճակ, որ կարողանաք հասկանալ ինձ:

Ես եկել եմ հաստատ համոզվածությամբ, որ լուրջ գրույցի ժամանակն է արդեն: Եվ այդ գրույցն այժմ անհրաժեշտություն է այն հոգիների համար, որոնք արդեն գնում էին Համբարձյալ Վեհապետների մատնանշած Ուղով, բայց այդ Ուղու ինչ-որ փուլում համակվեցին կասկածով ու անվստահությամբ:

Ձեզ շփոթեցնում ու խելքահան է անում տեղեկատվության այն հսկա քանակությունը, որը սփռված է ձեր աշխարհով մեկ: Եվ այդ տեղեկատվությունը վերաբերում է այն բազմաթիվ նոր եղանակներին, որոնց օգնությամբ իբր հրաշագործ կերպով ձևափոխության կենթարկվեք ու պատրաստ կլինեք ապրելու Նոր Աշխարհում:

Հիշե՛ք Հիսուսի խոսքերը լայն ճանապարհի մասին, որը դժոխք է տանում և այն նեղ դռների մասին, որոնք ձեր առջև բացում են Երկնային Արքայությունը*:

Ձեր դես ու դեն ընկնելն ու հակվածությունն այն բանի նկատմամբ, որ շրջանցեք Աստծո Օրենքն ու ձեզ չհամապատասխանող դիրք գրավեք տիեզերական շղթայում, հիմքում սխալ է և պահանջում է անհապաղ շտկում: Դուք չեք կարող տեղ գրադեցնել այնպիսի էներգետիկական մակարդակի վրա, որը չի համապատասխանում ձեր գիտակցությանը: Ձեզ անհանգստություն պետք է պատճառի միայն և միայն ձեր գիտակցության մակարդակը: Իսկ ձեր գիտակցության մաքրությունը չի կարող ապահովվել ուրիշ մարդկանց միջոցով, գնվել փողով կամ ձեռք բերվել որևէ սեմինարի ընթացքում: Միայն ինքներդ կարող եք ձեր ջանքերով ազատվել այն էներգիաներից, որոնք խանգարում են Էվոյուցիայի ուղով ձեր ընթացքին:

Ձեր մեջ կան որոշ մարդիկ, որոնք համոզված են, թե կկարողանան ինչ-որ անցում կատարել և անվտանգ գոյատևել Նոր Աշխարհում:

Նրանք համարում են, որ Էվոյուցիայի նոր մակարդակի վրա կարելի է անցում կատարել առանց հին էներգիաներից ու սովորություններից ձերբազատվելու: Հնարավոր չէ վիրահատական ճանապարհով փոխել ձեր ԴՆԹ-ն կամ կտրել-հեռացնել ձեր կարման: Դուք ինքնե՛դ պետք է ձեր նվաճումների ու ջանքերի մոռցումով ցուցադրեք հետագա Էվոյուցիայի ձեր կարողությունը: Իսկ այդ կարողությունը չի չափվում ո՛չ կարդացած գրքերի քանակով, ո՛չ հաճախած սեմինարների քանակով, ո՛չ կարդացած Վարդարանների քանակով, ո՛չ էլ մտասևեռումների քանակով:

Ձեր գիտակցության մակարդակը որոշվում է այն աստվածային հատկանիշներով, որոնք դուք ձեռք եք բերում ձեր Ուղու վրա: Հնարավոր չէ խաղալ Սպասավորություն, անձնագոհություն, անշահախնդրություն կամ Սեր:

Այդ հատկանիշները դուք պետք է ձերը դարձնեք, և դրանք պետք է ձեզ բնորոշ դառնան: Հատկապես հենց այդ հատկանիշների ձեռքբերումը ձեզ հնարավորություն կտա, որ փոխեք ԴՆԹ-ի բուն կառուցվածքն ու այն տեղեկատվական կոդը, որը ձեզ թույլ կտա գոյատևել ապագայի աշխարհում:

Այս տիեզերքի պատմության ընթացքում եղել են էակներ, որոնք փորձել են շրջանցել Օրենքն ու իրենց ոչ բնորոշ դիրք գրավել՝ դիմելով կախարդության, սև մոգության և ուրիշ այլ ցածրորակ գործառնությունների օգնությամբ: Իմացեք, որ այդ անհատներից և ոչ մեկին չի հաջողվել քիչ թե շատ նշանակալի ժամանակով դիմանալ իրենց ոչ բնորոշ մակարդակի վրա:

Դուք կարող եք ցած թռչել երկնաքերից, և ինչ-որ ժամանակ ձեզ կարող է թվալ, թե դուք ճախրում եք, բայց դրանք սոսկ ակնթարթներ կլինեն, որոնք կավարտվեն ձեր՝ հողին զարկվելով:

Որպեսզի սովորեք ճախրել, պետք է փոխեք ձեր գիտակցության ներքին վիճակը: Ձեր այն էներգիան, որը ծախսում եք դատարկ գրույցների, ժամանցների ու հեռատեսիլ դիտելու վրա, հատկացրեք այն բանին, որ աշխատեք ձեր հատկանիշների վրա: Մի՛ կարծեք, թե որևէ կատարյալ մեթոդաբանություն կամ հոգևոր գործառնություն որևէ կերպ կազդի ձեզ վրա, եթե դեռևս չեք հաղթահարել ձեր անիրական մասի դիմադրությունը և չեք կարողանում դուրս գալ մարդկային գիտակցության կճեպի միջից:

Դուք պետք է ազատվեք ձեր մարմնական խելքից, հանեք ձեր վրայից մարդկային գիտակցությունն այնպես, ինչպես օձն է փոխում իր կաշին: Պետք է ձեռք բերեք նոր գիտակցություն: Առանց դրա չեք կարողանա շարունակել ձեր Էվոյուցիան: Առանց դրա հնարավոր չէ որպես տեսակի ձեր զարգացումը, այն է՝ բանական մարդը պետք է վերածվի աստվածամարդու:

Ես այսօր եկա, որպեսզի ձեր մղումների վեկտորի ուղղությունը նվաճումների ձեռքբերման արտաքին եղանակների փնտրտուքից փոխեմ դեպի այն եղանակները, որոնք ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները, որպեսզի ձգտեք դեպի ներքին նվաճումները: Դա այն հարստությունը կլինի, որից հնարավոր չի լինի ձեզ գրկել, որին ո՛չ ցեղը կարող է վնասել, ո՛չ ժանգը*: Այն ձեր Երկնային գանձը կլինի:

Դուք պետք է սովորեք ձեր պատրանքային իրականությունից անցում կատարել այլ, ավելի ռեալ իրականության՝ Աստծո Աշխարհին:

Նաև ձեզ համար դժվար կլինի, պահելով ձեր մարդկային կապվածությունները, միաժամանակ անցում կատարել հոգևոր աշխարհին, ինչպես որ դժվար է երկու աթոռի վրա միաժամանակ նստելն ու մի ձեռքով երկու ձմերուկ բռնելը:

Հասել է ձեր ընտրություն կատարելու ժամանակը: Աշխարհներից ո՞րը կընտրեք. ձեր պատրանքային աշխարհը, թե՞ Աստծո իրական աշխարհը:

Թե այս հարցին ինչպե՞ս կպատասխանի մարդկության մեծամասնությունը, դրանից է կախված մարդկության ապագան և այն ուղին, որով նա կընթանա մոտակա ժամանակներում:

Ես շատ պարզ Ուսմունք տվեցի ընտրության և Ուղու մասին:

Ձեզ մնում է միայն հասկանալ այդ Ուսմունքը:

Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում ձեր Ուղու վրա...

ԵՍ ԵՄ Մայրություն

*Մտթ., 7: 13-14

**Մտթ., 6: 19-21

Տեր Հիսուս

26 հունիսի, 2009 թ.

Ինչու բոլորը չէ, որ կարող են ընթանալ Ուղով

ԵՍ ԵՄ Հիսուս:

Ես ձեզ այցի եմ եկել: Դուք տաժանակիր աշխատանք եք անում ձեր աշխարհում: Դուք մշտապես գտնվում եք մարդուն ոչ վայել իրադրության մեջ: Երկա՛ր մնացիք զարշառոտության մեջ: Եվ ահա գալիս է մի ժամանակ, երբ ձեր ողջ քառսի ու անկարգության մեջ պետք է մուտք գործի նոր գիտակցությունը: Այն աննկատ է գալիս, բայց անխուսափելիորեն պետք է մուտք գործի ձեր աշխարհ: Եվ կան բավարար թվով կամավորները, որոնք ցանկություն են հայտնել ընթանալու իմ Ուղով, իսկ որպես պարզև իրենց նվիրվածության ու ծառայության դիմաց՝ մատերիայում արժանանալու խաչելության:

Այո՛, ձեր աշխարհում չկա և չի կարող այլ պարզև լինել ձեր ծառայության ու ձեր կրած ոգեղեն սխրանքի դիմաց, քան այն խաչը, որն ինձ հետ ես հանեցի Գողգոթա: Եվ ձեզնից նրանց, որ ձգտում են փառքի ու ճանաչման հասնել, պատիվ ու փող վաստակել և հանուն դրա պատրաստ են հարկ եղած աշխատանքը կատարել Վեհապետների համար, պետք է ասեմ, որ ձեր ժամը դեռ չի հասել: Դուք չեք կարող ընթանալ իմ Ուղով:

Որպեսզի կարողանաք երթի դուրս գալ Քրիստոսի Ուղով, անհրաժեշտ է, որ այդ որոշումն ընդունեք ձեր սրտում: Եվ ձեզնից յուրաքանչյուրին, ով անկեղծ սրտով կամենում է կրկնել իմ Ուղին, ես կցուցաբերեմ իմ անմիջական օգնությունն ու օժանդակությունը: Միայն թե պետք է գիտակցեք, որ այդ Ուղուց այլևս չկա հետդարձի ճանապարհ: Դուք պետք է գիտակցեք Քրիստոսի Ուղով ընթանալու ողջ պատասխանատվությունը: Չեք կարող այսօր այդ Ուղով ընթանալու ցանկություն հայտնել, իսկ վաղը խաչը դնել մառանի անկյունում և շարունակել ձեր աշխարհիկ հաճույքները ստանալու գործը:

Ընտրությունը դուք ներքուստ եք կատարում: Եվ պետք է մանրագնին կշռադատեք, թե որքան է ամուր ձեր նպատակամղվածությունը: Շատերն են պահի տրամադրության տակ որոշում ընթանալ Ուղով: Բայց մեկ-երկու օր անցնելուց հետո նրանց վճռականությունը հօդս է ցնդում: Նոր գրավչություններ են տիրում նրանց էությանը, և նրանք մոռանում են ընդունած որոշման մասին: Իսկ դա ձեզ համար շատ մեծ քայլ է դեպի հետ: Ամեն անգամ, երբ ձեր անկեղծ կանչը հասնում է Համբարձյալ Դասերի ականջին, սկսում է աշխատել մի մեխանիզմ, որը ձեզ ստիպում է վերադառնալ Ուղուն: Առօրյա ունայնության մեջ դուք արդեն մոռացած եք լինում այն մասին, որ պարտավորվել էիք ընթանալ Քրիստոսի Ուղով, սակայն հանգամանքները ձեր շուրջը խտանում են, և դուք մուտք եք գործում փորձությունների ու թեստերի շրջան: Բայց քանի որ արդեն մոռացած եք լինում ձեր որոշման մասին, ամեն մի նոր փորձությունն առաջ է բերում ձեր դժգոհությունն ու վախը: Դուք սկսում եք աղաչել Աստծուն, որ օգնի ձեզ դուրս գալու ձեր կյանքի այդ խավար շրջանից:

Հիմա մի պահ ձեզ պատկերացրեք Համբարձյալ Վեհապետների դերում: Ինչպե՞ս կարձագանքեիք այն բանին, որ այսօր ձեզնից մի բան են խնդրում, իսկ վաղը՝ դրա տրամագծորեն հակառակը:

Անհետևողականությունն ու շրջակա հանգամանքներից տրամադրության կախվածությունը ձեր ժամանակների խոցելի տեղն են:

Դուք ձեր մեջ պետք է զարգացնեք աշակերտի հիմնական որակները՝ կայունություն, կարգապահություն, նվիրվածություն և խոնարհություն:

Եթե ձեր ներսում չմշակեք այդ որակները, ապա չեք կարողանա ընթանալ աշակերտելու ուղով և դուրս կմնաք Համբարձյալ Ուսուցիչների տեսադաշտից, քանզի չեք առանձնանա այն քառասյին առկայծումների միջից, որոնք մարդկության միջավայրում մեզ համար տեսանելի են մեր գիտակցության համբարձյալ դիրքից:

Պատկերացրեք մի փարոս, որն այսօր աշխատում է, իսկ վաղը՝ ոչ: Մենք ուշք ենք դարձնում ձեր սրտի կրակներին այնժամ, երբ ձեր սրտի զոհարանի վրա կրակն օր ու գիշեր վառվում է առանց դադար տալու ու հավասարաչափ՝ անկախ կենսական մրրիկներից ու խոչընդոտներից. այդ դեպքում է միայն, որ հրեշտակները կարող են ձեզ նկատել ձեր աշխարհի աղջամուղջում և ցուցաբերել օգնություն ու օժանդակություն:

Գլխավոր և հիմնական խոչընդոտը, որին մենք բախվում ենք մարմնավորված մարդկության միջավայրում, անկայունությունն է և անհետևողականությունն ամեն ինչում: Ուստի, փոխանակ դժգոհելու և Համբարձյալ Դասերին պահանջներ ներկայացնելու, փորձեք ձեռք բերել այն որակները, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր Ուղու վրա:

Բոլոր ժամանակներում բարձր են գնահատվել կայունության և նպատակին հասնելու համառության հատկանիշները:

Ձեզ անհրաժեշտ է պահպանել ձեր նպատակամղվածությունը. այդ դեպքում ձեր սրտի զոհարանի բոցը կայրվի հավասարաչափ, և մենք կիմանանք, որ ահա այս անհատականությունը պատրաստ է, որ սկսենք իր հետ աշխատել:

Մենք դիտարկում ենք ոչ միայն ներկա պահը, այլ նաև ուշադրությամբ զննում ենք ակաշիի ժամանակագրությունները: Եվ կարողանում ենք տեսնել, թե տվյալ անհատականությունը քանի՞ անգամ է բռնել Ձեռնադրումների Ուղին և քանի՞ անգամ հետ կանգնել Ուղուց: Ուստի ձեզնից յուրաքանչյուրի համար տարբեր է այն ժամանակը, երբ պետք է սպասեք ձեր Ուսուցչին և կապվեք նրա հետ: Մենք ձեզ անմիջապես տեսնում ենք, երբ ձեր սրտի բոցը հավասարաչափ է այրվում. սակայն երբեմն ակաշիի ժամանակագրությունները ցույց են տալիս, որ մի քանի տասնյակ անգամ փորձել եք ընթանալ Ուղով, բայց միշտ հետ եք դարձել: Այդ դեպքում մենք իրավունք չենք ունենում ձեզ հետ աշխատելու մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը: Սակայն դրանից չի հետևում, որ դուք Ուղով ընթանալու պատրաստակամություն չպետք է ցուցաբերեք: Քանզի ձեր նպատակամղվածությունն ու կայունությունն, անշուշտ, կստեղծեն այն ներուժը, որը ձեզ պետք կգա հաջորդ կյանքում:

Դրանով է բացատրվում այն, թե ինչու որոշ մարդիկ հեշտորեն են յուրացնում մեր Ուսմունքը, վերելքը թեթևությամբ են հաղթահարում և պատրաստ են լինում մեր առաջին իսկ կանչով գալու ու ընթանալու այն ուղղությամբ, որը մատնանշում ենք: Որոշներն էլ կարողում են Ուսմունքը, լսում թելադրությունները, բայց հաջորդ պահին նրանք տարվում են բոլորովին այլ բանով. դեն են նետում մեր Ուսմունքի գրքերը և սուրում ձեր աշխարհի հերթական խաղալիքի ու չխկչխկանի հետևից:

Յուրաքանչյուրդ իր գիտակցության մակարդակն ունի: Եվ քանի որ հիմա Կալի յուզայի ժամանակներն են, ապա շատ քիչ մարմնավորված անհատներ կան ձեր մեջ, որոնք որոշակի հոգևոր նվաճումներ ունեն: Մյուսներին հնարավորություն է տրված, որ կրկնեն իրենց անցած դասը: Եվ ձեզնից շատերը նույն դասը ստիպված են լինում անցնել բազում մարմնավորումների ընթացքում: Նախքան աստվածային հնարավորության միջանցքի փակվելը ձեզ բազմիցս նոր հնարավորություն է տրվում: Եվ երբ այլ աշխարհ եք անցնում և կանգնում Կարմայական Վարչության առջև, սարսափով դիտում եք ձեր սխալները և խնդրում մարմնավորման ևս մեկ հնարավորություն: Երկնքի ողորմածությունը սահմաններ չի ճանաչում: Եվ յուրաքանչյուրին, ով խնդրում է, նոր հնարավորություն տրվում է: Սակայն ամեն հաջորդ մարմնավորման հետ պայմանները բարդանում են: Ձեր կարման թանձրանում է, և ձեզ համար ավելի ու ավելի դժվար է դառնում անկատար մտքերի ու զգացմունքների այն մածուցիկ հոսանքից դուրս պրծնելը, որի մեջ հիմնովին խրված է ֆիզիկական աշխարհը:

Արդ, նախքան ճակատագրից դժգոհելն ու խնդրելը, որ ձեզ ազատեն կարմայական բեռից կամ այն թեթևացնեն, հիշեք, որ ձեզ շրջապատող ու ձեզ հետ պատահող ամեն ինչն ինքներդ եք վաստակել ձեր նախորդ մարմնավորումների ընթացքում: Անկեղծ գոջումն ու մեղա գալը երբեմն

կիսով չափ թեթևացնում են ձեր կարմայական բեռը: Աստված չի ուզում, որ դուք անվերջ տառապեք. ինքներդ եք ձեզ մատնում տառապանքների: Եվ սեփական սխալների գիտակցումն ու դրանց համար մեղա գալը համարյա ակնթարթորեն թեթևացնում են ձեր վիճակն ու այն բեռը, որը կրում եք ձեր ուսերին:

Այսօր ես Ուսմունք տվեցի Ուղու և այն մասին, թե ինչու՞ ոչ բոլորն իրենց կյանքում կարող են ընթանալ այդ Ուղով:

ԵՄ ԵՄ Հիմունք

Գուան Ին
27 հունիսի, 2009 թ.

Երկնքից ձեզ տրվում է ևս մեկ հնարավորություն

ԵՄ ԵՄ Գուան Ինը՝ ձեզ այցի եկածը:

Երկրում հաստատված իրադրության մեջ չափազանց շատ այնպիսի պահեր կան, որոնք էվոլյուցիայի հետագա գործընթացում կարող են խաղալ ինչպես դրական, այնպես էլ բացասական դեր: Ես այժմ նկատի ունեմ այն բացասական փորձառությունը, որը մարդկության պատմության ընթացքում ձեռք է բերվել շատ հոգիների կողմից:

Ահա, տեսե՛ք. վերջին հարյուրամյակների ընթացքում աշխարհը մշտապես համակշռվում է՝ գտնվելով կործանման եզրին: Եվ Համբարձյալ Դասերը մշտապես մարտի պատրաստ վիճակում են: Իրոք, եթե մարդկության պատմությունը դիտարկենք հոգևոր փորձառության տեսանկյունից, ապա, որքան էլ դա տարօրինակ թվա, հենց այդ կործանման եզրի մշտական համակշռումն է հոգիներին առավելագույն աճի հնարավորություն տալիս, իսկ մեզ՝ Համբարձյալ Դասերիս, հնարավորություն է ընձեռում մարդկության պատմության մասնակիցը դառնալ: Քանզի այն բանից, թե որքանով կկարողանանք համաձայնեցված գործել պատմության կրիտիկական պահերին, կախված է այն, թե մարդկային քաղաքակրթությունը կշարունակի՞ իր գոյությունը, թե՞ ոչ:

Շատ ու շատ հոգիներ, անցնելով տառապանքով ու ծանրագույն թեստերով, կարողացան մաքրվել դարավոր կարմայից, որը ձեռք էին բերել անցյալի իրենց՝ աստվածային տեսակետից սխալ համարվող վարքով: Եվ հիմա այդ հոգիներից շատ շատերը Լույսի օկտավաներից օգնություն են ցուցաբերում մարդկությանը: Արդ, երբեմն մարդկային չափանիշներով կատարելապես կորուսյալ թվացող հոգին ունակ է լինում ակնթարթորեն կերպափոխվելու ու մաքրվելու: Այո՛, հենց այդպիսին է հնարավորությունը, որը ներկայումս ընձեռված է Երկիր մոլորակի իրադրությանը: Ուստի ես, որպես Բարեգթության ու Կարեկցանքի Աստվածուհի, առաջին իսկ կանչով մոտենում եմ տառապանք կրող անհատականությանը և ջանում ցուցաբերել այն օգնությունը, որի կարիքը նա ունի: Եվ երբեմն իմ մի քնքուշ հայացքն ու իմ սրտից ելած Սիրո ճառագայթը բավարար է լինում, որ ահավոր տառապանքների մեջ գտնվող ու մեռնող հոգին նորից հառնի նոր կյանքի համար: Եվ շատ ու շատ մարդիկ, մահվան շեմին տառապելով ծանր հիվանդությունից, վերջին պահին վերջին շնչի հետ անվերադարձ ազատագրվում են երկրային տառապանքներից և վերածնվում հավերժական Կյանքի համար:

Ամեն ինչ կախված է այն բանից, թե ի՞նչ վիճակով է մարդն անցում կատարում այլ աշխարհ: Չարացած է արդյոք ողջ աշխարհի նկատմամբ, թե՞ լիովին գիտակցում է երկրային վայելքներից իր և իր հոգու համար հաճույքներ ստանալու իր բոլոր փորձերի ապարդյունությունը և իր հայացքը հառում դեպի Երկինք, դեպի Աստված:

Անցման այդ պահին հոգին վերափոխվում է և վեր ելնում Կյանքի պարույրով:

Դրա շնորհիվ է, որ ճշմարիտ հավատ ունեցողները մշտապես օգնել են անբուժելի հիվանդներին անցում կատարելիս. օգնել են նրանց հոգիներին, որպեսզի անցման հետ միաժամանակ ձերբազատվեն նուրբ մարմիններում դարերով կուտակված ծանրությունից:

Եվ ձեր աշխարհի այդ հատկանիշը՝ բառացիորեն մոխրի, ցեխի ու աղբի միջից մարդկանց հոգիների վերածնվելու կարողությունը, գոյատևելու հնարավորություն է տալիս ձեր մոլորակին՝ չնայած բոլոր ճառագայթներով Աստծո էներգիայի հրեշավոր աղավաղումների առկայությանը:

Այսօր ես այցի եմ եկել ձեզ, որ ձեր հոգիներին գիտելիք տամ անցման ուղու վերաբերյալ: Ձեր երկրային կյանքի ցանկացած պահին դուք կարող եք ձեր գիտակցությամբ անցում իրականացնել: Այդպիսին է ընթացիկ պահի յուրահատկությունը: Դուք կարող եք ձերբազատվել այն բեռից, որի ծանրության տակ տնքում է մարդկությունը: Ձեր գիտակցության փոփոխման բանալին ու ողջ մեխանիզմը թաքցված են ձեր ներսում: Ձեզ հարկավոր է միայն յուրացնել այն նոր սկզբունքները,

որոնք հաստատուն կերպով պետք է գան փոխարինելու այն հին սկզբունքներին, որոնց վրա ներկայումս հենված է հասարակությունը: Դուք պետք է գիտակցեք, որ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են Սերը, Բարեգթությունը, Կարեկցանքը, ինչ-որ վերացական բաներ չեն: Դրանք այն հատկանիշներն են, որոնք պետք է մուտք գործեն յուրաքանչյուրի կյանքի մեջ, ով կամենում է շարունակել իր Էվոյուցիան Երկիր մոլորակի վրա: Բավական է միայն, որ պարզապես բարեփոխումների մշտական ծարավ ու կարիք զգաք: Դուք պետք է ողջ էությամբ մղվեք դեպի ապագայի աշխարհը, որը գուրկ է մարդկության ներկա փուլին հատուկ թերություններից ու արատներից: Եվ ձեր այդ մղման ընթացքում տեղի կունենա երաժշտության, ճարտարապետության, կրթական նոր համակարգերի, առողջապահության, նոր տնտեսական համակարգի ճշմարիտ կերպերի էջը, որոնք արդեն գոյություն ունեն և մշտապես իրենց համար ճանապարհ են հարթում այն անհատականությունների գիտակցության մեջ, որոնց մարմնավորման նպատակն այդ կերպերը ֆիզիկական ոլորտ հասցնելն է:

Մարդկությունն աղոտովել է հին գիտակցությամբ, հին կենսակերպով: Եվ երբ Երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդուն հասկանալի կդառնա, որ այլևս այդպես ապրել չի կարելի, որ պահանջվում են շտապ փոփոխություններ ու ձևափոխություններ, ապա դրանք՝ մարդկային կյանքի բոլոր բնագավառների այդ ճշմարիտ կերպերը, կսկսեն իջանել ու Երկրի վրա այս ու այնտեղ նյութականացվել:

Ձեզ մնում է միայն ցանկանալ ազատվել այն կենսակերպից, որն առկա է ձեր շուրջը: Դրսևորե՛ք ձեր ազատ կամքը, հնչեցրե՛ք դեպի Երկինք ձեր ազատ կամքը ձեր կոչով:

«Տե՛ր, ես հոգնել եմ անելանելիությունից, հոգնել եմ անբարյացակամությունից և մարդկանց մռայլ դեմքերը տեսնելուց: Ես փոփոխություններ եմ ուզում... Իմ հոգին նորացման է ծարավի... Իմ հոգին հոգնել է և կարիք ունի նոր էներգիաների՝ Սիրո էներգիայի, Բարյացակամության, Կարեկցանքի և Բարեգթության էջքի: Օգնի՛ր, Տե՛ր, արագացրո՛ւ Երկիր մոլորակի կերպափոխման գործընթացը...»:

Հենց որ բավարար թվով անհատականություններ պատրաստ լինեն իրենց գիտակցությամբ, Երկիր մոլորակի փոփոխությունները երկար չեն սպասեցնի: Համբարձյալ Դասերը պատրաստ են փոփոխություններին: Ողջ Երկինքն իր հայացքը հառել է Երկրին: Ձեր հերթն է գալիս: Մի՞թե չեք լսում ժամանակի կանչը:

Անհնարին է չնկատել այն նշանները, որոնք սփռված են այս ու այնտեղ՝ եղանակային պայմանների, արհավիրքների, տնտեսական ու ֆինանսական ոլորտների անկարգավորվածության տեսքով:

Հասել է Երկնքից ձեզ նոր հնարավորություն տալու ժամանակը, և դա ձեզ հայտնում եմ ես՝ Կարմայական Վարչության անդամ:

ԵՄ ԵՄ Գուան Ինը

Սպիտամա Չրադաշտ
28 հունիսի, 2009 թ.

Ուսմունք երջանկության և աստվածային Ուղու մասին

ԵՄ ԵՄ Չրադաշտը...

Ես այս օրով եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ: Մեր գրույցը ձեզ շատ չի հոգնեցնի: Ես հակիրճ կխոսեմ:

Այսօր ձեզ հնարավորություն կտրվի հասկանալու, թե որքանո՞վ կարող է ձեզ շրջապատող ամեն ինչը փոխվել և որքանո՞վ դրա կարիքը կա:

Մի պահ պատկերացրեք, որ հայտնվել եք անմարդաբնակ կղզում: Ձեր սովորական իրերից ոչինչ չունեք, սակայն մտաբերում եք, հիշողության ծալքերից դուրս եք հանում այն անհրաժեշտ գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ձեզ, որպեսզի գոյատևեք այդ անմարդաբնակ կղզում:

Ձեր քաղաքակրթությունը հագեցած է շատ բազմազան իրերով, ժամանցներով, մեծահասակների համար նախատեսված տեսակ-տեսակ խաղալիքներով, սակայն, որպեսզի գոյատևեք, իրականում ձեզ այնքան էլ շատ բան պետք չէ: Անհրաժեշտ նվազագույնն առկա է, և այն բավարար է: Եվ եթե սկսեք մտորել, ապա կարճատև խորհրդածությունից հետո ձեզ համար հասկանալի կդառնա, որ ձեզ շրջապատող ամեն ինչը և այն ամենը, ինչ ունեք, ձեզ ավելի երջանիկ չեն դարձնում:

Այդ դեպքում ո՞րն է երջանկությունը:

Ձեզնից յուրաքանչյուրն այդ հարցի իր պատասխանը կունենա: Եվ այն դեպքում, երբ երջանկության հասնելու համար ձգտում էք ձեռք բերել ավտոմեքենա, բնակարան, քաղաքամերձ առանձնատուն, ճամփորդելու և զվարճանալու հնարավորություն, ապա պետք է ասեմ, որ դուք դրանցով երբեք երջանկության չեք հասնի: Որովհետև ստիպված կլինեք մեկը մյուսի հետևից անընդհատ ձեռք բերել տարբեր իրեր ու չխկնկաններ՝ ձգտելով ավելի ու ավելի նրբացված հաճույքներ ստանալ կյանքից: Սակայն ամեն անգամ, երբ ձեռք կբերեք հերթական իրը կամ կվայելեք հերթական հաճույքը, ապա անմիջապես կկորցնեք հետաքրքրությունը դրա նկատմամբ և կսկսեք փնտրել ձեր տենչանքի հաջորդ առարկան: Եվ այդպես, տեսլապատրանքների հետևից ընկած, անցնում է ո՛չ մեկ և ո՛չ երկու մարմնավորում:

Դուք ձգտում եք երջանկություն փնտրել ձեզնից դուրս: Սակայն երջանկությունը ձեր գիտակցության վիճակի մեջ է: Եվ այնժամ, երբ դուք իրապես երջանիկ եք, ձեզ այլևս ոչինչ պետք չէ. դուք բավարարված եք և պատրաստ եք ձեր հրճվանքը կիսելու ողջ աշխարհի հետ:

Շա՛տ կան արդյոք ձեր մեջ իրենց սրտերում ներքին երջանկության այդպիսի վիճակ ունեցողներ: Տարօրինակ չի՞ թվում ձեզ արդյոք, որ ամենաեժան, նույնիսկ ձրի բանը մատչելի չէ երկրաբնակների մեծամասնության համար...

Ինչու՞ է դա այդպես: Պատճառն այն է, որ ձեր քաղաքակրթությունը մարդկանց մանուկ հասակից սկսած կողմնորոշում է իր բարիքների անընդհատ սպառման ուղղությամբ: Եվ վերջը չի երևում այն նորանոր իրերի ու հաճույքների, որոնցով ձգտում է հագեցնել ձեր մարմնական խելքը:

Կա՛նգ առեք և մտորե՛ք: Այդ ամենի մեջ ինչ-որ բան այնպես չէ: Պետք է ելք լինի այն շրջապատույթից, որում անիվի մեջ հայտնված սկյուռի պես դուք պտտվում և վազվզում եք մարմնավորումից մարմնավորում: Եվ այդ ելքը ձեր գիտակցության մեջ է:

Կա՛նգ առեք և մտորե՛ք: Ձեր աշխարհը հնազանդորեն համալարվում է ձեր գիտակցության հետ: Արտաքին աշխարհից դուք ստանում եք այն, ինչին ձգտում եք: Ուստի, եթե ձեզ հաջողվի փոխել ձեր գիտակցությունն ու ձեր մղումների վեկտորի ուղղությունը, ապա մատերիան, թեկուզ և դանդաղորեն, կսկսի փոխվել, որպեսզի համապատասխանի ձեր գիտակցության նոր մակարդակին:

Սկսեք ամենահեշտից. վերլուծեք, թե ձեր ունեցածից ի՞նչն է, որ ձեզ երջանիկ է դարձնում. ձեր ունեցածից ի՞նչն է, որից կարող եք հեշտորեն հրաժարվել:

Ձեզնից շատերը մտածելուց հետո կասեն, թե ոչ մի ավելորդ բան չունեն, և որ ունեցած ամեն ինչն անհրաժեշտ է իրենց կյանքի համար:

Հիշե՛ք անմարդաբնակ կղզու այն օրինակը, որ բերեցի մեր գրույցի սկզբում:

Դուք պետք է ձգտեք ավելի պարզ կենսակերպի: Այնժամ, երբ կփոխվի ձեր գիտակցությունը, կհասկանաք, որ հսկայական ազատ ժամանակ ունեք, թեև առաջ այն չէր բավականացնում: Եվ ձեզ մոտ ճաշակ կձևավորվի ավելի ճիշտ սննդի, ավելի ներդաշնակ երաժշտության նկատմամբ: Դուք կդադարեք ենթարկվել զանազան ներագոյիչներով հագեցած կյանքի կատաղի մրցավազքին: Կհասկանաք, որ սեռական կենսակցումը սերը չէ: Դուք շատ բացահայտումներ կանեք ձեր կյանքում: Բայց նախ անհրաժեշտ է որոշում ընդունել և փորձել գիտակցությունն ուղղորդել աստվածային Ուղով:

Իհարկե, կասեք, թե դուք այդ Ուղու հայտանիշների կարիքն ունեք և ձեզ ցուցապաքներ են պետք, որպեսզի գտնեք այդ Ուղին:

Իրականում բոլոր ցուցապաքները հենց ձեր ներսում են: Եվ եթե ուշադիր լսեք ձեր ներքին ձայնը, ապա շատ շուտով կիմանաք, թե որտեղով է անցնում աստվածային Ուղին:

Նույնիսկ նրանք, ովքեր այնքան էլ հավատ չեն ընծայում մեր ուղերձներին և ընդհանուր առմամբ զգուշավորությամբ են վերաբերվում տարբեր ուսմունքներին ու դավանանքներին, կյանքում գոնե մեկ անգամ հուշող ձայն են լսել իրենց ներսից այն մասին, թե ինչպես վարվեն իրենց առջև ծագած բարդ իրադրության պայմաններում: Դուք մշտապես հրաշալի իմանում եք, թե ինչ անեք և ինչպես վարվեք: Սակայն հետո մեջտեղ է գալիս ձեր մարմնական խելքը և հանդիմանանքով շշնջում. «Դու, ի՞նչ է, խելքդ թժցրե՛լ ես: Քեզ դա ձեռնտու չէ: Ի՞նչ խղճի մասին է խոսքը: Արժանապատվությու՞նս որն է: Չէ՛ որ պաշտոնդ կկորցնես (կամ ուրիշ որևէ մի բան՝ ձեր աշխարհի միջակայն արժեքների բնագավառից)»:

Եվ դուք ականջ եք կախում մարդկային տրամաբանությանը՝ կորցնելով Աստծո Օրենքով առաջնորդվելու ձեզ ընձեռված հնարավորությունը:

Առաջին հայացքից աստվածային Ուղով ընթանալը ձեր աշխարհում ձեզ ոչ մի շահ չի տալիս. ո՛չ փող, ո՛չ փառք: Եվ դեռ ընդհակառակը, դուք գրկվում եք շատ բաներից, որոնք ձեր աշխարհում պատվարժան են համարվում:

Սակայն դուք ձեռք եք բերում այլ արժեքներ՝ երջանկություն, հոգեկան անդորր, և ունակ եք դառնում ճաշակելու իրական Միտո զգացմունքը:

Դուք որևէ տեղ չեք գտնի աստվածային Ուղու ցուցալաքներ: Սակայն այդ Ուղու կողմնացույցն ու քարտեզը ծննդյան օրից մինչև այլ աշխարհ անցնելը մշտապես առկա են ձեր սրտերում: Ձեզնից դուրս որևէ մեկը չկա, որ մեղավոր լինի այն բանում, որ դուք չեք օգտվում ձեր ներքին գիտելիքից, այլ փոխարենն ընթանում եք այն ուղով, որով «ընթանում են բոլորը»:

Մի՛ ձգտեք գնալ լայն ճանապարհով, որը ոչ մի տեղ չի տանում: Ընթացեք այն նեղ, հազիվ նկատելի արահետով, որը ձեզ տանում է դեպի հավերժական Կյանք:

Ես բավականին շատ բաներ ասացի նրանց համար, ովքեր ունակ են դրանք հասկանալու:

Մաղթում եմ, որ դուրս պրծնեք անիվից և ձեռք բերեք երջանկություն...

ԵՍ ԵՄ Չրադաշտը

Վեհապետ Ջավալ Կիուլ

29 հունիսի, 2009 թ.

Ուսմունք Սպասավորության մասին

ԵՍ ԵՄ Ջավալ Կիուլը:

Ես չափազանց հազվադեպ եմ այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի գալիս:

Քայց այսօր եկել եմ, քանի որ անհրաժեշտ էր ձեզ որոշակի Ուսմունք տալ: Եվ կոչված եմ, որ ձեր ուշադրությանը ներկայացնեմ այդ Ուսմունքը: Գործնականում շատ քիչ են այն մարդիկ, որոնք իրենց կյանքը նվիրաբերել են ճշմարիտ Սպասավորությանը: Եվ ես եկել եմ, որպեսզի ձեզ տամ ճշմարիտ Սպասավորության ըմբռնումը, ոչ այն սպասավորության, որը դուք եք ճիշտ համարում, այլ այն Սպասավորության, որն իրապես ճշմարիտ է:

Ասացե՛ք, դուք երբևէ մտորե՞լ եք Սպասավորության հասկացության շուրջ. ի՞նչ բան է դա:

Ես կարծում եմ, որ դուք ավելի շատ մտորում եք ձեր աշխարհի իրեղենի շուրջ: Ցավոք, Սպասավորությունն այն հատկանիշը չէ, որ շատ է տարածված ձեր աշխարհում: Եվ գիտե՛ք, թե՛ ինչու. որովհետև անգամ դրա հասկացությունն է կորսված ձեր քաղաքակրթության կողմից:

Ես եկել եմ նորացնելու Սպասավորությունը: Քանզի հենց որ սկսեք լրջորեն խորհել այդ թեմայի շուրջ, կկարողանաք Սպասավորության մասին պատկերացում ստանալ ավելի նուրբ աշխարհներից: Ձեր աշխարհընկալումն անընդհատ ստիպում է ձեզ շեղվել առավել բարձր ու հավերժական հարցերի շուրջ լուծումներ որոնելուց: Սակայն հիմա հենց այն ժամանակն է, երբ պետք է սկսեք խորհրդածել այնպիսի բաների մասին, որոնք մակերեսի վրա չեն, բայց անհրաժեշտ են ձեզ, եթե մտադիր եք շարունակել ձեր ընթացքն էվոլյուցիոն ուղով:

Եվ այսպես, Սպասավորության մասին: Ես գիտեմ, որ շատերը, սպասավորություն ասելով, հասկանում են այն պարտականությունները, որոնք կատարվում են իրենց մերձավորների կամ նրանց հանդեպ, ովքեր օգնության կարիք ունեն: Սակայն Սպասավորության հասկացությունը, ինչպես այն ընկալում են Համբարձյալ Վեհապետները, շատ ավելի լայն է: Փաստորեն առանց Սպասավորության հնարավոր չէ մարդկության հետագա էվոլյուցիոն զարգացումն ու առաջընթացը: Եվ Սպասավորության հատկանիշի կողքին կանգնած է անշահախնդրությունը: Քանզի այնժամ, երբ ձեզ վրա եք վերցնում ինչ-ինչ պարտականություններ և փոխարենը ցանկանում ինչ-որ հատուցում ստանալ, կարևոր չէ՝ ֆիզիկական աշխարհի բարի՞ք, թե՛ արժանավայել տեղ Աստծո Աշխարհում, ապա դա ճշմարիտ Սպասավորություն չէ:

Փաստորեն, Սպասավորությունը ձեր գիտակցության վիճակն է: Այն ենթադրում է համայն տիեզերքում գոյություն ունեցող որոշակի կարգի պահպանում, երբ ամեն մի կենդանի էակ ծառայում է ուրիշ կենդանի էակների, և այդ համատեղ Սպասավորության արդյունքում տեղի է ունենում համագործակցություն ու զարգացում: Սպասավորությունն անհնարին է առանց համագործակցության, իսկ ճշմարիտ համագործակցությունն անհնարին է առանց Սիրո: Եվ ահա մոտեցանք ամենագլխավորին: Ճշմարիտ Սպասավորությունը հնարավոր է միայն այնժամ, երբ այն հիմնված է Սիրո զգացման վրա: Ոչ այն սիրո վրա, որը դուք սովոր եք ընկալել: Ձեզ հայտնի են սիրո այն դրսևորումները, որ տղամարդը տածում է կնոջ նկատմամբ կամ հակառակը, սերը երեխաների, ծնողների նկատմամբ: Սակայն գոյություն ունի ավելի մեծ Սեր: Սեր, որը հիմնված չէ հարազատության կամ սեռական հարաբերությունների վրա: Սեր, որը ձեր մեջ առկա է՝ որպես վիճակ, և հնարավոր չէ նկարագրել բառերով, որքան էլ ջանք թափեք, բայց այն ներթափանցել է ողջ Արարչության մեջ: Եվ երբ ձեր գիտակցությամբ հասնում եք Սիրուն՝ Արարչի Սիրուն, ապա ունակ եք դառնում այն ճշմարիտ Սպասավորությանը, որի մասին խոսում են Համբարձյալ Դասերը:

Կյանքին Սպասավորելը նման է մշտապես դետքի վրա գտնվելուն, երբ միշտ պատրաստ եք կատարելու ձեր պարտքը: Սպասավորությունը նաև ենթադրում է այնպիսի հատկանիշների առկայություն, ինչպիսիք են պատասխանատվությունն ու կայունությունը: Բոլոր ճշմարիտ աստվածային հատկանիշները խտացված ձևով երևան են գալիս Սպասավորության մեջ:

Ես պետք է հատուկ ընդգծեմ խոնարհության հատկանիշը, որն անփոխարինելի է Սպասավորության պարագայում: Քանզի երբեմն սպասավորում եք անհատների, որոնք գտնվում են գիտակցության չափազանց ծանր վիճակներում, և ձեզնից պահանջվում է ձեր ողջ խոնարհությունն ու համբերատարությունը, որպեսզի ցուցաբերեք անհրաժեշտ օգնություն՝ անկախ այդ անհատների ոչ ամենալավ գծերի դրսևորումից: Ձեզ չպետք է անհանգստացնի այն, ինչին երբեմն ականատես եք լինում ֆիզիկական ոլորտում: Ձեզ պետք է անհանգստացնի հոգածությունը հոգու նկատմամբ, որն անհատի անանց մասն է:

Երբեմն անհրաժեշտություն է ծագում օգնելու մի մարդու, որը, ցավոք, իր ողջ կյանքում թիթեռի պես զարնվելով ապակու, կորցրել է իր բոլոր ուժերը, և կարման այնպես է մթազնել նրա աչքերը, որ նա չի տեսնում հենց իր կողքին գտնվող և լայն բացված աստվածային հնարավորության օդանցքը:

Տառապող մարդկային անհատների մեծ մասի կյանքը նման է ապակուն զարնվող թիթեռի, որը չի կարողանում ելք գտնել: Եվ եթե մոտենում եք անհատին այն ժամանակ, երբ նա անխոնջ կերպով հսկայական ջանքեր է գործադրում, բայց ոչ հարկ եղած ուղղությամբ, ապա նա հագիվ թե լսի ձեզ: Բայց երբ ամբողջովին ուժասպառ է եղել, ապա երբեմն հոգեպայծառացում է վրա հասնում, և այն ամենը, ինչ մինչ այդ ասում էիք իրեն, արդեն լսում է նույնիսկ առանց բառերի: Քանզի նրա հոգին գերագույն տառապանքի գնով ձեռք է բերել հատուկ զգայունություն: Այդ պահին դուք կարող եք անգնահատելի օգնություն ցուցաբերել տառապյալ հոգուն, սակայն այդ օգնության արդյունքը, ցավոք, կդրսևորվի նրա հաջորդ մարմնավորման ժամանակ: Ըստ այդմ՝ ճշմարիտ Սպասավորությունը երբեմն դրսևորվում է ոչ թե ամենօրյա քարոզներով ու խրատներով, այլ այն պահի սպասմամբ, երբ հոգին կբացվի վարդի կոկոնի պես և ունակ կլինի ընկալելու այն կենարար էներգիան, որը ձեր սրտից փոխանցվում է տվյալ անհատի սրտին:

Դրանք շատ նուրբ պահեր են, սիրելիներս, և երբեմն բավարար է լինում մի քանի վայրկյան ձեր սրտից անկեղծ աղոթքի ու օժանդակության հղում անել օգնության կարիք ունեցողի սրտին, որպեսզի հոգին հարություն առնի հավերժական Կյանքի համար:

Զգու՛մ եք արդյոք տարբերություն այն սպասավորության, երբ ձեզ զբաղեցնում են ասածո խոսքի մասին իրենց քարոզներով, և այն Սպասավորության, որ օգնության ձեռքը հասնում է հենց այն պահին, երբ այդ օգնությունը կարող է ընդունվել և ավելի արժեքավոր լինել, քան միլիոնավոր անգամ ոչ ճիշտ ժամանակին ասվող խոսքերը:

Նման Սպասավորության համար երբեմն հարկ է լինում սպասել մի ամբողջ կյանք, մինչև զա այն պահը, երբ օգնության կարիք ունեցող հոգին ունակ կդառնա ընդունելու ցուցաբերվող օգնությունը:

Ես այսօր ձեզ հետ զրուցեցի աստվածային Սպասավորության մասին: Եվ ինձ համար հաճելի կլինի իմանալ, որ դուք մեր զրույցի ընթացքում մի մասնիկ ստացաք այն Սիրուց, որն, աշխարհների միջով անցնելով, խնամքով հասցրի ձեզ:

ԵՍ ԵՄ Զավալ Կհուլը

Վեհապետ Լանտո
30 հունիսի, 2009 թ.

**Ողջ մարդկային հասարակայնությունը մուտք է գործել
կոլեկտիվ ձեռնադրման ժամանակաշրջան**

ԵՍ ԵՄ Լանտոն՝ այս օրով ձեզ այցի եկածը: Եվ այսօրվա իմ այցի նպատակը ձեզ խրատ տալն է, որը, կարծում եմ, ձեզ համար օգտակար կլինի ձեր առօրյա կյանքում:

Ներկայումս, երբ տիեզերական բոլորաշրջանը փոխվում է, ձեզ այլ հատկանիշներ են պետք՝ այլ հմտություններ ու ունակություններ, որոնք տարբերվում են անցյալ դարերի ընթացքում մարդկության ունեցածից: Եվ մարդկության հետագա բանական զարգացումը հնարավոր չի լինի առանց այդ հատկանիշների ու հմտությունների տիրապետման:

Դուք դա պետք է որ արդեն զգացած լինեք ինքներդ ձեզ վրա: Մենք ձեզ նախագգուշացրել էինք, որ Երկիր մոլորակի թրթռանքներն անցում են կատարում նոր մակարդակի*: Եվ, որպեսզի հարմարվեք այդ թրթռանքներին, պահանջվում է, որ վերկառուցեք ձեր աշխարհընկալման համակարգը: Դա շատ բարդ և աշխատատար գործընթաց է: Հարկ է, որ փոխեք ձեր վերաբերմունքն ամեն ինչի նկատմամբ. հարկ է, որ վերակառուցեք այն փոխհարաբերությունների համակարգը, որը գոյություն ունի ձեր հասարակության մեջ:

Սա ո՛չ իմ նախաձեռնությունն է, ո՛չ էլ, առավել ևս, մեր դեսպանորդինը: Եվ այդ նոր հարաբերությունները պետք է հնարավորինս նման դառնան այն հարաբերություններին, որոնք առկա են մեր՝ Համբարձյալ Վեհապետներիս միջև: Ինչու՞ չհետևեք մեր օրինակին և մի կողմ չնետեք ձեր նախկին ցածրակարգ հարաբերությունները: Փոխել է պետք ձեր եսակենտրոնությունը համագործակցությամբ, վերմակն իր վրա քաշելու գործը՝ սեփական փորձը ողջ մարդկային ընտանիքի վրա տարածելու գործով:

Իմացեք, որ հասել է այն ժամանակը, երբ պետք է անցում կատարվի այնպիսի հարաբերությունների, որոնք հիմնված են ընկերակցության, սիրո, փոխօգնության ու փոխադարձ օժանդակության վրա: Եվ որքան էլ փորձեք կառչած մնալ ձեզ համար սովորական դարձած վարքի կարծրատիպերից, դրանք անխուսափելիորեն անցյալի գիրկը կանցնեն՝ լուծարվելով այն անկատարությունների հետ մեկտեղ, որոնք ներկայումս բնորոշ են ձեր հասարակությանը՝ պատերազմներ, ահաբեկչական գործողություններ, համաճարակներ, տնտեսական ճգնաժամեր: Ձեր հասարակությունը հիվանդ է, և հարկավոր է անցում կատարել գիտակցության ու մտածողության նոր մակարդակի, որպեսզի հնարավոր լինի շարունակել էվոլյուցիան:

Մենք ձեզ իզուր չենք նախագգուշացրել, որ բարձրացվում է մոլորակի թրթռանքների ընդհանուր մակարդակը: Եվ դուք ստիպված կլինեք հետևելու թրթռանքների այդ նոր մակարդակին: Այն ամենը, ինչ չի կարողանա համալարվել ու փոփոխվել, կենթարկվի աստիճանական մաքրման: Հարկավոր է, որ ուշադրությամբ զննեք ինքներդ ձեզ և ձեր շրջապատի մարդկանց: Տեղի է ունենում հենց այն, ինչը սովորաբար տեղի է ունեցել, երբ մարդը ձեռնադրումներ է անցնելիս եղել անցյալի գաղտնի ծեսերի դպրոցներում: Նա հայտնվում էր այնպիսի պայմաններում, որտեղ թրթռանքներն ավելի բարձր էին լինում իր համար սովորական մակարդակից: Եվ նրա մարմինները՝ ֆիզիկական և ավելի նուրբ, ստիպված էին լինում հարմարվելու թրթռանքների նոր մակարդակին: Թրթռանքների բարձրացումը մարդու միջից դուրս է մղում այն բացասական էներգետիկական պատճենները, որոնք բազմաթիվ մարմնավորումների ընթացքում ներաճել և խաղաղ գոյակցել են նրա հետ: Այդ պատճառով մարդը ենթակա է դառնում գիտակցության զանազան բացասական վիճակների ազդեցությանը. ֆիզիկական մարմնի զանազան ցավեր է ունենում, որոնք հնարավոր չէ դասակարգել որպես սովորական հիվանդությունների արդյունք. փոփոխություններ են տեղի ունենում մարդու հոգեկանում, որոնց հետևանքով նա դառնում է ջղագրգիռ, անհավասարակշիռ, մռայլ ու շուտ բորբոքվող: Ծանոթ պատկեր է, այնպես չէ՞:

Սակայն այն, ինչ տեղի էր ունենում անցյալի գաղտնաձեսերի դպրոցներում, վերաբերում էր մի մարդու կամ մարդկանց առանձին խմբի: Իսկ հիմա ձեր մոլորակն ու ողջ մարդկային հասարակությունը մուտք են գործել կոլեկտիվ ձեռնադրման ժամանակաշրջան:

Այսպիսով, ձեզ իրազեկում ենք, որ տիեզերական հնարավորության միջանցքը նեղանում է: Ժամանակն է, որ վերջնական ընտրություն կատարեք. կա՛մ ընթանում եք էվոլյուցիոն ուղով, կա՛մ էլ վերածվում եք մոլախոտերի, թափոնների:

Կարող եք տրտնջալ, թե Տիեզերական Օրենքը ձեզ հետ այնքան էլ մարդասիրաբար չի վարվում: Բայց արդյո՞ք հենց ինքներդ այդպես չեք վարվում ձեր բանջարանոցում: Դուք քաղհանում եք մոլախոտերը, եթե դրանք սպառնում են ձեր բերքին: Դուք էտում եք ծառերի չորացած ճյուղերը և վառում դրանք:

Վերջին հազարամյակների ընթացքում մենք մշտապես եկել ենք բազմաթիվ դեսպանորդների և մարգարեների միջոցով: Եվ մշտապես ձեզ նախագգուշացրել ենք այն մասին, որ անհրաժեշտ է շտկել ձեր քաղաքակրթության զարգացման ուղղությունը: Չեք կարող ասել, որ ձեզնից որևէ մեկն իր կյանքում գոնե մեկ անգամ չի լսել մեր նախագգուշացումները: Եվ այն հանգամանքը, որ մեր փոփոխությունները մենք անում ենք շատ սահուն կերպով, ձեզ հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ կշռադատելու ամեն ինչ և զարգացման հնարավորություն տալու ձեր իսկ լավագույն մասին:

Դեռևս ժամանակ կա, խորհրդածե՛ք իմ խոսքերի շուրջ: Ամեն ինչ կշռադատե՛ք: Մի՛ ձգտեք մի հարվածով ամեն ինչ վճռել: Լավագույն արդյունքի հանգեցնում են ոչ մեծ, բայց կանոնավոր ջանքերը, որոնք գործադրում եք ճիշտ ուղղությամբ:

Այն կարման, որ դուք կուտակել եք, շատ մարդկանց ճակատագրեր է միահյուսել ձեր ճակատագրի հետ: Ուստի չեք կարող ամեն ինչ թողնել և ձեր հոգին փրկելու համար սլանալ դեպի անտառ կամ անապատ: Դուք պետք է ամենօրյա ջանքեր գործադրեք ձեր հարազատների ու գործընկերների հետ ունեցած հարաբերությունները վերափոխելու ուղղությամբ: Հարկավոր է, որ ձեր կյանքի փոփոխությունները համաձայնեցնեք այն մարդկանց հետ, որոնց հետ ունեցած ձեր կարման առավել ծանր է:

Կարելի է ամենամանր կարմայական իրավիճակն ուղղորդել դեպի բարենպաստ հուն, բայց այդ դեպքում հարկ կլինի, որ ձեր կարմայական հանգույցների քանդմանը նվիրաբերեք ձեր ողջ կյանքը և, հնարավոր է, ոչ մեկ կյանք:

Արդ, պատրաստվեցե՛ք լարված աշխատանքի ինքներդ ձեզ ու ձեր թերությունների վրա և միշտ հիշեք, որ երբ որևէ մեկին օգնում եք՝ լուծելու իր խնդիրները, դրանով իսկ լուծում եք ձեր կարմայական խնդիրները: Եթե դուք անկեղծորեն ուրախանում եք ուրիշի նվաճումներով, ապա դրանով իսկ նաև ձերն եք դարձնում այդ մարդու նվաճումների պաշարը:

Շատ եղանակներ կան, որոնցով կարելի է շատ մեծ կարման բեռնաթափել հաշված տարիների ընթացքում՝ ընդամենը ճիշտ նախընտրանքներ կատարելով և ճիշտ վերաբերվելով այն իրադրություններին, որոնք ձեզ մատուցում է կյանքը:

Ես ձեզ կարևոր Ուսմունք տվեցի, որը ձեզ համար անփոխարինելի արժեք կունենա այս տարիների և օրերի ընթացքում:

ԵՄ ԵՄ Լանտոն

*Տես՝ 28.12.2007թ.-ի ուղերձը

Հառությամա Բուդդա
1 հուլիսի, 2009 թ.

Ուսմունք առճակատումների հաղթահարման մասին

ԵՄ ԵՄ Հառությամա Բուդդան՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ուրախությամբ և մեծ բավարարվածությամբ եմ նայում ձեզնից շատերի դեմքերին, երբ կարդում եք իմ թելադրությունները: Առանձնահատուկ կապ է հաստատվում ձեր համալարվածության դեպքում: Երբ մեր ուղերձները կարդալու ընթացքում ձեր թրթռոնները բարձրանում են և հասնում համահնչունության, ապա նույն աշխարհը մոտենում է ձեզ և բառացիորեն բախում ձեր դուռը:

Մշտապես պահպանե՛ք այդ համահնչունությունը, և ձեր հասարակության առջև ծառացած շատ խնդիրներ ինքնաբերաբար կլուծվեն:

Հավատացե՛ք ինձ և իմ փորձին. ամբողջ բանը թրթռանքների այն մակարդակն է, որն ունակ է պահպանելու մարդկությունը:

Այսօրվա մեր գրույցն այն մասին կլինի, թե ինչպես փոխըմբռնում հաստատել այն մարդկանց միջև, որոնք ներկայացնում են տարբեր ուղղություններ: Դա վերաբերում է ո՛չ միայն կրոնական ուղղություններին, այլ նաև այն ուղղություններին, որոնք կան քաղաքականության մեջ, հասարակական գործունեության տարբեր բնագավառներում և գործարար աշխարհում:

Մարդկանց միջև շատ հազվադեպ է հաստատվում խաղաղություն և հանգստություն: Որպես կանոն,՝ մարդկանց շահերը բախվում են, և դա պատճառ է դառնում առճակատումների և նույնիսկ պատերազմների: Ինչպե՞ս հաղթահարել առճակատման ու թշնամանքի այն վիճակը, որը հատուկ է ձեր աշխարհին և ներկայումս նրա բնորոշ գծերից մեկն է:

Մեր գրույցի սկզբում ես անտեղի չհիշատակեցի թրթռանքների մասին: Ձեր աշխարհում ամեն ինչ որոշվում է թրթռանքների մակարդակով: Մարդկային փոխհարաբերությունների ոլորտը ևս որոշվում է թրթռանքների մակարդակով: Իսկ այդ ի՞նչ մոգական բան է թրթռանքը, որից կախված են առճակատումները, պատերազմները և դրանց բարեհաջող հանգուցալուծումը:

Ինձ համար շատ դժվար է այդ հասկացությունը բացատրել այնպիսի եզրույթներով, որոնք կիրառելի ու հասկանալի են ձեզ համար:

Պատկերացրեք ձուկ, որն ափ է նետված: Այն դուրս է հանված իր սովորական միջավայրից և ապրում է իր կյանքի ոչ ամենադյուրին թույլները: Ձեզնից ամեն ոք, երբ հայտնվում է այնպիսի վայրում, որի թրթռանքներն իրեն չեն համապատասխանում, նմանվում է ափ նետված ձկան:

Մարդ էակը բարդ համակարգ է: Ֆիզիկական մարմնից բացի նա ունի նաև ավելի նուրբ մարմիններ, որոնք կազմված են մատերիական նախանյութից: Ամեն ինչ որոշվում է մարդու գիտակցության զարգացման մակարդակով: Եվ մարդիկ տարբերվում են նույնիսկ ԴՆԹ-ի՝ գեների ու քրոմոսոմների մակարդակով: Կարծում եմ, ծանոթ եք այդ եզրույթներին:

Եվ այսպես, ամեն մարդ կրում է իր մեջ որոշակի էներգետիկական բաղադրիչ: Ամեն մարդ ունի ներքին այս կամ այն ներուժը, որով և ձևավորվում է այս կամ այն գերակշռող հաճախությունը, որը բնորոշ է դառնում նրա համար:

Ձեր մարմնով, օրինակ, կարող է որոշվել թրթռանքների հիմնական հաճախությունը: Դուք նախապատվություն եք տալիս այս կամ այն սննդին: Եվ ձեր սիրած կերակուրն այս կամ այն չափով որոշում է ձեր թրթռանքի մակարդակը: Օրինակ, եթե դուք մսակեր եք և ընդհանրապես սննդի մեջ ջրկոդություն չեք դնում, ապա մեծագույն հավանականությամբ կարելի է ասել, որ ձեր թրթռանքները շատ ցածր են: Ձեր թրթռանքների մակարդակի վրա ազդեցություն է գործում ոչ միայն սնունդը, այլ նաև իրադրությունը, հագուստը և այն վայրը, որտեղ ապրում եք: Ընդհանրապես ասած՝ դուք այդ վայրում եք ապրում, որովհետև ձեր թրթռանքները քիչ թե շատ համապատասխանում են հենց այդ վայրին:

Այնուհանդերձ ձեր թրթռանքները կարող են մեծ չափով փոփոխվել ձեր կյանքի ընթացքում: Եվ եթե որոշում եք բուսակեր դառնալ, հրաժարվում եք ծխախոտից ու ալկոհոլից, դադարում եք լսել ոչ ճիշտ երաժշտություն, ապա ձեր թրթռանքները, եթե ոչ միանգամից, ապա աստիճանաբար սկսում են փոխվել: Եվ ձեզ արդեն հարմարավետ չեք զգում նախկին միջավայրում: Ձեզ կարծես թե դուրս են մղում այն կոլեկտիվից, որի հետ աշխատում էիք: Ամբողջ բանը թրթռանքներն են: Դուք այլևս չեք համապատասխանում ձեր շրջապատի թրթռանքի միջին մակարդակին, որի հետևանքով ստիպված եք լինում նոր աշխատանք, նոր ընկերակցություն փնտրել:

Յուրաքանչյուր առնականուման հիմքում թրթռանքների տարբերությունն է ընկած: Դուք կարող եք ասել, որ կարման է ընկած ամեն մի առնականուման հիմքում: Սակայն կարման կապված է ձեր թրթռանքների մակարդակի հետ: Եվ նա, ով օժտված է բարձր թրթռանքներով, նշանակալի տոկոսով արդեն բեռնաթափել է իր սեփական կարման: Սակայն կա նաև խմբակային կարմա, ընտանեկան կարմա, երկրի կարմա, մոլորակի կարմա... Եվ դուք չեք կարող խույս տալ կարմայի այդ տեսակների բեռնաթափումից: Նույնիսկ այն դեպքում, երբ մեկը որոշակի արդյունքների է հասել իր անձնական կարմայի բեռնաթափման գործում, նա սկսում է «դուրս մնալ» շրջապատի ընդհանուր թրթռանքի հետնապատկերից, որի հետևանքով ծնվում են նոր առնականումաններ:

Եվ մարդկության զարգացման որոշակի փուլում այդ առնականումաններն անխուսափելի են:

Ենթագիտակցական մակարդակով թրթռանքների տարբերությունը թույլ է տալիս անսխալ որոշելու, թե ով է իր թրթռանքներով ձեզ նման, և ով՝ տարբեր: Եվ եթե ձեր թրթռանքները բարձր են միջին մակարդակից, ապա դուք «դուրս եք մղվում», ինչպես գնդակն է ջրից դուրս մղվում դեպի նրա մակերևույթը:

Այսպիսով, առնականումաններն անխուսափելի են հասարակության մեջ: Սակայն անխուսափելի են այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունը գտնվում է թրթռանքների շատ ցածր մակարդակի վրա: Երբ մարդկային համակեցության միջին թրթռանքները բարձրանում են, ապա տեղի է ունենում առնականումային իրադրության հարթում: Սկզբում հնարավորություն է ծագում բանակցությունների միջոցով խուսափելու պատերազմից, որից հետո հենց ինքը՝ առնականումը, կորցնում է իր չափազանց բացասական, ավերիչ բնույթը:

Մարդկային համակեցությունն այլ ուղի չունի, քան այն ուղին, որն ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները: Անհրաժեշտություն չկա, որ ձեր համոզմունքները պնդեք ուժի կիրառմամբ: Ժամանակն է, որ անցում կատարեք գիտակցության այլ մակարդակի, որի պայմաններում յուրաքանչյուր առնականում կարող է հարթվել հասարակության ամեն մի անդամի՝ իր վրա կատարած ներքին աշխատանքի շնորհիվ:

Եթե հասարակության բոլոր անդամները ներքին խնդիրներ չունեն, զուրկ են իրենց աուրայում ծվարած բացասական էներգիայից, ապա ոչ մի արտաքին գրգռիչ կամ արտաքին թշնամի չի կարող մոտենալ նրանց:

Դուք նման եք Աստծո Իմաստության օվկիանոսի ափին ընկած քարերի: Վրա վազող ալիքները, որոնք այս դեպքում տիեզերական բոլորաշրջաններն են, հղկում են ձեր աուրաները: Կանցնի տիեզերական բոլորաշրջանների ևս ինչ-որ քանակություն, և ձեր աուրաները ձեռք կբերեն բացարձակ գեղեցիկ, նուրբ ու պայծառ երանգներ:

Բոլոր բժերն ու անկատարությունները կարող են հաղթահարվել: Մշտապես կա մարդկային հասարակության պրոբլեմների լուծման ուղին: Եվ այդ ուղին հենց մակերևույթի վրա է: Միայն մարդկային ծուլության ու անհնազանդության պատճառով է, որ դեռևս շարունակում եք տառապել:

Ես ուրախ եղա առնակատումների հաղթահարմանը վերաբերող այս Ուսմունքը տալուս առիթով:

ԵՄ ԵՄ Հատկաժամա Բուդդան

Վեհապետ Կուրթումի
2 հուլիսի, 2009 թ.

Չրույց կենսականորեն անհրաժեշտի մասին

ԵՄ ԵՄ Կուրթումին: Ես եկել եմ նոր գրույց վարելու:

Ես կցանկանայի ձեզ հետ խոսել բաց ու անկեղծ: Անմիջական:

Իմ սիրտը շատ բաների շուրջ է փափագում խոսել ձեզ հետ, բայց նախ և առաջ, իհարկե, այն մասին, ինչն այս փուլում ձեզ համար ամենահետաքրքիրն է ու ամենակարևորը: Եվ այն իրարանցումը, որն առկա է ձեր աշխարհում, անշուշտ առաջին հերթին հենց ձեզնով է պայմանավորված: Սկզբում դուք թույլ եք տալիս անպատասխանատու արարքներ, անկատար մտքեր ու զգացմունքներ, որոնք տիրում են ձեր էությանը, իսկ հետո շատ եք զարմանում այն հետևանքներով, որոնք թողնում են ձեր արարքները, մտքերն ու զգացմունքները:

Մոլորակի մենտալային դաշտը գերձանրաբեռնված է ձեր գիտակցության բացասական վիճակներով: Նույնն է վիճակը նաև աստեղային ոլորտում:

Դուք չափազանց հազվադեպ եք մտորում այն ազդեցության մասին, որ գործում են ձեր մտքերն ու զգացմունքները շրջակա ամեն ինչի վրա: Եվ, ըստ էության, առկա բոլոր բացասական երևույթները, լինեն դրանք բնության մեջ, եղանակային պայմաններում, ֆինանսական և Երկիր մոլորակի կյանքի այլ ոլորտներում, բոլորի ծնող պատճառը հենց ինքներդ եք: Որոշ ժամանակ անցնելուց հետո ձեր կողմից հղացված այլազան բաներն իջանում են Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտ՝ որպես փոթորիկ, տեղատարափ անձրև, երաշտ կամ ջրհեղեղ:

Մենք շատ անգամ ենք խոսել այն ուղիղ և անմիջական կապի մասին, որը գոյություն ունի ձեր գիտակցության վիճակի և այն ամենի միջև, ինչ տեղի է ունենում Երկիր մոլորակում:

Ձեր մոռացկոտությունն ու մշտապես այն բանի հետ հույս կապելը, թե ամեն ինչ ինքնուրունի լավ կվերջանա, ստիպում են մեզ՝ Համբարձյալ Վեհապետներիս, կասկածել, թե արդյո՞ք մարդկությունն ընդհանրապես ունակ է մեզ լսելու և ընկալելու մեր տեղեկատվությունը:

Տասնյակ անգամներ արդեն ասվել է այն մասին, որ պետք է հետևեք ձեր մտքերին ու զգացմունքներին, որ պետք է ուշադրություն դարձնեք օրվա ընթացքում ձեզ հետ տեղի ունեցող ամեն ինչի վերլուծությանը: Ֆիզիկական ոլորտի համար ավելի ակնհայտ նշաններ պարզապես հնարավոր չէ կանխատեսել: Իսկ հաջորդը, երևի թե, այնպիսի ահավոր մի համադետ կլինի, որի մասին կարծես գլխի եք ընկնում, բայց վախենում եք անգամ մտածել դրա շուրջ:

Ինչու՞ եք կարդում մեր ուղերձները, եթե ձեր կյանքում չեք գործելու համաձայն մեր տված ցուցումների ու խնդրանքների: Երևում է, մարդկությունը հասել է իր զարգացման այնպիսի մի աստիճանի, որ այլևս ունակ չէ համարժեքորեն արձագանքելու տեղեկատվությանը:

Անձամբ ես իմ թելադրություններում շատ անգամ եմ խոսել այն մասին, որ դուք տառապում եք տեղեկատվության գերկուտակումից: Դուք ձեր միտքն այնքան եք ծանրաբեռնում տարբեր աղբյուրներից եկող զանազան լուրերով ու տեղեկատվությամբ, որ ոչ միայն անընդունակ եք դառնում զանազանելու ճշմարիտ տեղեկությունը ստից, այլ նաև կորցնում եք որևէ տեղեկատվությանն արձագանքելու կարողությունը: Ամեն ինչը պարզապես մի ականջից մտնում, մյուսով դուրս է գալիս, իսկ այն, ինչն օրվա ընթացքում մուտք է գործում ձեր գիտակցության մեջ, այնտեղ չի մնում թեկուզ մի րոպեով: Գործում է պաշտպանական մեխանիզմ:

Ուստի ես այսօր եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ասեմ ձեզ, որ պետք է ընտրողաբար մոտենաք ցանկացած տեղեկատվության, որը պատրաստվում եք կարդալ: Նույնիսկ այն դեպքում, երբ ձեզ թվում է, թե տվյալ տեղեկատվությունը ձեր գիտակցության վրա որևէ հետք չի թողնում, իմացեք, որ այն նստվածք է տալիս ձեր ենթագիտակցության մեջ: Եվ դուք երբեք չեք կարող իմանալ, թե ե՞րբ և ինչպիսի՞ ազդեցություն կթողնի ձեր ենթագիտակցությունը ձեզ վրա՝ ձեր նախընտրանքների ու վարքի վրա:

Ամենաթողության և ցանկացած տեղեկատվության մատչելիության ջինը բաց է թողնված շի միջից: Եվ այդ վիճակից դուրս գալու միակ ելքն այն է, որ ինքներդ ձեզ պաշտպանեք այն ամենից, ինչը չի նպաստում ձեր էվոյուցիոն զարգացմանը: Եվ եթե այդ ուղղությամբ քայլեր չձեռնարկեք, ապա հաջորդ սերունդն այլևս բոլորովին չի կարողանա համարժեք արձագանքել որևէ տեղեկատվության: Բազմակի կրկնությունը կողմնորոշ ազդեցություն է թողնում ձեր գիտակցության վրա: Այդ պատճառով դուք պետք է շատ առանձնահատուկ զգուշավորությամբ ենթարկվեք զանգվածային տեղեկատվության ժամանակակից միջոցների ազդեցությանը: Եկել է ժամանակը, երբ դուք պետք է որոնք հատիկից ջուկեք այն ամենում, ինչ ձեզ շրջապատում է, և հրաժարվեք անաստված ամեն ինչից: Ես հասկանում եմ, որ երբ դուք գտնվում եք ժամանակակից առաջավոր տեխնոլոգիաների համակողմանի ճնշման տակ, որոնք օրվա մեջ 24 ժամ հեռուստա-ռադիոալիքներով ողջ հզորությամբ բթացնում են ձեր գիտակցությունը, ապա այդ իրավիճակում ձեզ համար դժվար է կողմնորոշվելն ու հասկանալը, թե ինչպես վարվեք:

Մենք ձեզ ուսուցանում ենք զանազանելու և ճիշտ ընտրություն կատարելու կարողություն: Եվ առաջինն ու ամենախելացին այն կլինի, որ սահմանափակեք տեղեկատվության զանգվածային միջոցների ազդեցությունը ձեր գիտակցության ու ենթագիտակցության վրա: Երբ այդ համակողմանի ճնշումը դադարեցվի, դուք ձեռք կբերեք կողմնորոշվելու ու զանազանելու կարողություն: Ձեր Բարձրագույն Ես-ը՝ ձեր ներսի Աստված, չի կարողանում ձեզ հետ խոսել: Համբարձյալ Վեհապետները չեն կարողանա ձեզ հետ խոսել, քանի դեռ գտնվում եք այն տեղեկատվական աղբի խիտ շրջափակման մեջ, որը տոննաներով օրվա ընթացքում ձեր գլխին է թափվում հեռատեսիլի էկրաններից, ռադիոընդունիչներից, թերթերից, համացանցից: Դուք այնպիսի զգացողություն եք ունենում, թե տեղեկացված եք աշխարհի վերջին իրադարձությունների մասին: Ձեզ տեղեկատվություն է մատուցվում բոլոր բնագավառների նոր բաների մասին: Սակայն ամենագլխավոր նորությունները մատչելի չեն Երկրի բնակչության մեծամասնությանը, քանի որ դրանք չեն հեռարձակվում որևէ ռադիո- կամ հեռուստաալիքով: Եվ ամենագլխավոր նորությունն այն «SOS» ազդանշանն է, որ առաքում են մոլորակն ու նրա վրա եղած ողջ կենդանական աշխարհը:

Դուք նմանվում եք խելակորույս նավապետի, որը նավը վարում է փոթորկի ժամանակ: Մարդկության ընդհանրական գիտակցությունն ու ընդհանրական ենթագիտակցականը նման են այդ խելակորույս նավապետին: Եվ ցանկացած պահի նավը՝ ձեր մոլորակը, կարող է բախվել սրածայր խութերի ու խորտակվել:

Դուք փորձարկել, համտես եք արել Երկիր մոլորակի բոլոր պտուղները, և հիմա ժամանակն է, որ վերադառնաք լինելիության ավելի նուրբ վիճակներին: Ինչպե՞ս կարող եք դուք լսել իմ երգեհոնի երաժշտությունը, որը եթերային օկտավաների իմ մենաստանում ես նվագում եմ ամեն գիշեր, եթե մշտապես խլացված եք ձեր բարձրախոս սարքերից անընդհատ հնչող ձայների ժխորով:

Բնության կենդանի ձայներն ու լռությունը լսելը ձեզ համար հոգնեցուցիչ է դարձել ու ձանձրալի: Դուք արհեստական քաղաքակրթություն եք ստեղծել, որն ինքն իրեն կտրել է այն ամենից, ինչ Աստված ստեղծել է Երկիր մոլորակում:

Ես եկա, որպեսզի փորձեմ ձեր գիտակցությանը հասցնել պարզ ճշմարտություններ: Եվ ահա լռում եմ՝ հույս փայփայելով, որ այնուամենայնիվ ինձ լսեցիք:

ԵՄ ԵՄ Կույթումին

Բաբաջի
3 հուլիսի, 2009 թ.

Ուսմունք Մահա Քրանթի մասին

ԵՄ ԵՄ Բաբաջին՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեզ պատկերացում տամ այն փուլի մասին, որում այժմ գտնվում է մարդկությունը, նաև այն մասին, թե ինչ է սպասվում ձեզ մոտակա ժամանակներում:

Երբ ես գտնվում էի մարմնավորման մեջ*, Ուսմունք տվեցի սպասվող մեծագույն հեղափոխության, մեծագույն փոփոխության մասին՝ Մահա Քրանթի մասին:

Ուսմունքը լսող ոչ բոլոր մարդիկ էին այն հասկանում: Բայց բոլորը երկյուղում էին արյունահեղ իրադարձություններից: Ես ահաբեկել էի նրանց: Սակայն այն իրադարձությունը, որին

ականատես կլինի մարդկությունը, կապված չէ այնպիսի հեղափոխության հետ, որը տեղի կունենա մարդկանց, մարդկանց խմբերի, քաղաքական կուսակցության կամ որևէ երկրի կամքով:

Այդ հեղափոխությունը կամ փոփոխությունը տեղի կունենա բարձրագույն ուժերի կամքով: Մարդկային զոհերի և՛ կարգը, և՛ քանակը, որոնք անխուսափելի կլինեն սպասվող փոփոխությունների ընթացքում, կորոշվի գիտակցության այն մակարդակով, որին այժմ մարդկությունն ի վիճակի կլինի հասնել: Միակ որոշիչ գործոնը ձեր գիտակցության մակարդակն է: Դուք կա՛մ կդիմանաք սպասվող փոփոխություններին, կա՛մ ոչ: Եվ ձեզնից նրանք, ովքեր ունակ են հասկանալու մեր Ուսմունքն ու հետևելու դրան իրենց կյանքում, կկարողանան անցնել այդ փոփոխություններով, և նրանց ոչինչ չի սպառնա:

Հարկավոր է միայն, որ հասկանաք Ուսմունքը, անցկացնեք ձեր միջով, կիրառեք այն ձեր կյանքում, և ձեր գիտակցությունը կփոխվի:

Դուք չեք կարողանա մուտք գործել ապագա՝ ունենալով գիտակցության այնպիսի մակարդակ, որը բնորոշ է ներկայիս մարդկության մեծամասնությանը: Եվ դա ոչ թե իմ քմահաճույքն է, այլ գործող օրենք է:

Երբ մոտենում են տիեզերական ժամկետները, ապա անխուսափելիորեն տեղի է ունենում մեծագույն անցում, մեծագույն փոփոխություն: Մարդկության հոծ զանգվածը, եթե պատրաստ չէ այդ անցմանը, չի դիմանա դրան: Սակայն դրանից հետո Երկրի վրա պայմաններ կստեղծվեն, որպեսզի մարդկանց նոր ռասան բնակեցնի մոլորակը և շարունակի երկրային էվոլյուցիան:

Ռասաների հերթագայության ընթացքում նման փոփոխությունները միշտ են տեղի ունենում: Եվ դրանք անխուսափելի են մոլորակի համար: Սակայն դրանց ժամկետների մասին ձեզ ոչինչ չի ասվի: Կոնկրետ ժամկետներ երբեք չեն նշվում: Միշտ ասվում է սպասվող փոփոխությունների անխուսափելիության մասին: Ձեզնից յուրաքանչյուրին հայտնի է, որ փոփոխություններն անխուսափելի են: Եվ բոլորդ ունեք փոխվելու հնարավորություն: Բոլորդ հնարավորություն ունեք փոխելու ձեր գիտակցությունը և ընթանալու էվոլյուցիոն ուղով:

Նախորդ մեծագույն փոփոխությունները նկարագրված են անցյալի սուրբ գրքերում: Աստվածաշնչում դուք կարդացել եք ջրհեղեղի մասին, Վեդաներում կարդացել եք Կուրուկշետրայի մեծագույն ճակատամարտի մասին:

Անցյալի շատ պատմական փաստաթղթեր հիշատակում են պարունակում Երկիր մոլորակի վրա տեղի ունեցած փոփոխությունների մասին:

Այժմ մոլորակի վրա ապրում են շատ մեծ քանակությամբ հոգիներ: Եվ այդ հոգիներից շատերը վերջին հնարավորությունն ունեն, որ կանգնեն զարգացման էվոլյուցիոն ուղու վրա: Նրանցից շատերի համար մեր տված Ուսմունքն անհասկանալի կլինի: Սակայն բանը նույնիսկ արտաքին գիտակցությամբ Աստծո Իմաստությունն ընկալելը չէ, այլ մաքրության ու արդարակյացության ներքին օրենքին հետևելն է:

Ձեր հոգին կարող է ցեխով պատվել, և արտաքինից կարող է թվալ, թե դուք պիտանի չեք էվոլյուցիայի համար: Սակայն Տիեզերական Վարչությունը գնում է ձեր հոգու խորքը և ցեխի ցանկացած շերտի ու բազմաթիվ անկատարությունների հետևում կարող է տեսնել այն ոսկու շողարձակումը, որը չի կարող աննկատ մնալ իմաստունների փորձառու հայացքից:

Ոմն մեկը ձեզ հետագա էվոլյուցիայի համար ոչ պիտանի է թվում, քանի որ կեղտի մեջ կորած է, տհաճ արտաքինով, կյանքին չհարմարվող: Այնինչ նրա հոգին պատրաստ է հետագա էվոլյուցիային: Իսկ մյուսը կարծես թե օժտված է մարդկային բոլոր արժանիքներով ու տարբերանշաններով, շրջապատված է պատվով, փառքով, երկրպագուներով, բայց արի ու տես, որ պատրաստ չէ հետագա էվոլյուցիային: Զանգի նրա հոգի՛ն է արատների մեջ թաղված: Աշխարհում փայլողներ, և աշխարհում աղքատներ: Ե՛վ մեկ, և՛ մյուս խմբում կան այնպիսիները, որ կշարունակեն էվոլյուցիան, և կան նաև այնպիսիները, որ չեն շարունակի:

Չկա որոշիչ մի հայտանիշ, որն արտաքին գիտակցությանն իմաց տար, թե ով է պատրաստ, և ով՝ ոչ: Ո՛չ ազգությունը, ո՛չ ռասան, ո՛չ դավանանքը, ո՛չ սոցիալական դրությունը, ո՛չ էլ տարիքը չեն կարող հայտանիշ ծառայել էվոլյուցիայի նկատմամբ կարողության կամ անկարողության վերաբերյալ:

Չկա՛ այնպիսի հայտանիշ, որը ցույց տա մարդկային գիտակցության մակարդակը: Սակայն Աստծո համար մարդկային անկատարություններից ու թերություններից անդին բացվում է ինչպես մեկի անմահ ոգին, այնպես էլ մյուսի փտածությունն ու քայքայումը:

Արդ, շա՛տ դժվար ժամանակներում եք դուք ապրում: Ամեն ինչ իրար է խառնված, և մեծ դժվարություն է հարուցում ջոկելն ու որոշելը, թե ով է անգին հատիկ, և ով՝ որոմ:

Ուստի և ձեր ժամանակներում այդքան շատ են հրապուրանքներն ու աստվածային ձևաչափերին չհամապատասխանող բաները:

Եթե հոգին պատրաստ է հետագա Էվոյուցիային, ապա արտաքին աշխարհի ոչ մի հրապուրանք չի կարող այդ հոգուն շեղել Ուղուց: Իսկ այն հոգիները, որոնք դեռ պատրաստ չեն, հնարավորություն ունեն հրաժարվելու շրջապատի հրապուրանքներից և դառնալու արդարակյաց:

Չի կարելի ասել, թե Աստված անարդար է: Ամեն ոք ինքն է կատարում իր ընտրությունը: Եվ ամեն ոք ենթագիտակցական մակարդակով տեղեկացված է լինում այն ընտրության մասին, որն ինքը կատարել է:

Ինքներդ եք դատում ձեզ և կատարում ձեր նախընտրանքը: Աստված ձեզ չի խանգարում: Իսկ ես մյուս Համբարձյալ Վեհապետների հետ մեկտեղ հնարավորություն ունեմ տալու իմ խրատները, բայց այդ խրատները նրանց համար են, ովքեր պատրաստ են դրանք լսելու:

ԵՄ ԵՄ Բարաջին: ՕՍ

*Շրի Հեյրակհան Վալե Բաբա (Բաբաջի) – մեծագույն հոգևոր ուսուցիչ, որն ապրել է Հնդկաստանում 1970 – 1984 թթ., Հիմալայների ստորոտի Կումաոնի շրջանում, որտեղ ծնվել ու գործել են շատ ու շատ ականավոր հնդիկ սրբեր: Երիտասարդի մարմնով հայտնվելով Հեյրակհան գյուղի մոտակա քարանձավում՝ Երկրի վրա գտնվելու հետագա իր 14 տարին Նա նվիրաբերել է իր Աշրամում մարդկանց ծառայելուն:

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
4 հուլիսի, 2009 թ.

Ուսմունք հոգևոր գործառնությունների մասին

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը:

Այս օրով ես եմ եկել նաև այն նպատակով, որ ձեզ տեղեկություններ հաղորդեմ Կարմայական Վարչության աշխատանքի վերաբերյալ: Մենք ավարտեցինք մեր աշխատանքը: Ինչպես մեր աշխատանքի արդյունքը, այնպես էլ մեր ընդունած որոշումները վերաբերում են միջև ձմեռային արևադարձն ընկած ժամանակաշրջանին:

Չեմ թաքցնում, մեր աշխատանքը դյուրին ընթացք չունեցավ: Ինչպես միշտ, համակշռությունը պահպանում էինք եզրագծի վրա: Մեր այն ցանկությունը, որ հնարավորինս մեծ քանակությամբ հոգիների ևս մեկ անգամ հնարավորություն ու ժամանակ տրվի ընտրություն կատարելու և կողմնորոշվելու համար, հաշվի առնվեց Մեծ Կենտրոնական Արևի կողմից: Ուստի ես բավարարված եմ աշխատանքի ընթացքով և ընդունված որոշումներով:

Ինչ վերաբերում է ձեր հոգևոր աշխատանքին և գործունեության ուղղություններին, ապա ես խորհուրդ կտայի, որ ավելի շատ մտորեք այն մասին, որ անքան էլ շատ ժամանակ չի մնացել: Եվ հիմա, ինչպես երբեք, զգացվում է յուրաքանչյուր մարդու ջանքերի կարիքը: Չէ՞ որ երբեմն իրադրությունն այնպես է դասավորվում, որ բավարար է լինում, որ մի քանի լուսակիր համատեղեն իրենց աշխատանքը, և ուժերի գերակշռությունը փոխվում է Էվոյուցիան շարունակելու կողմը:

Շատերը ձեզնից՝ շատ շատերը, խորհում են այն մասին, թե ի՞նչ կկարողանային անել, որպեսզի որևէ օգուտ տան մոլորակին և այն բնակեցնող կենդանի էակներին: Երբեմն դուք զբաղվում եք ներխուժումով, երբեմն՝ աղոթքներով, բայց շատ հազվադեպ եք փորձում ինչ-որ բան անել ֆիզիկական ոլորտում: Եվ ես ձեզ պետք է ասեմ, որ ձեր յուրաքանչյուր գործողությունն ու պրակտիկ գործառնությունը երկդիմի աշխարհում կարող է կրել երկակի բնույթ: Եվ երկու մարդիկ, որոնք նույն աշխատանքն ու նույն գործողություններն են կատարում, կարող են և ծառայել տարբեր ուժերի:

Ինչպե՞ս է դա հնարավոր՝ կհարցնեք դուք: Պատասխանում եմ: Այն վեկտորը, մղումը, շարժառիթը, որը դուք դնում եք ձեր աշխատանքի կամ գործառնության հիմքում, որոշում է այն, թե ո՞ր ուժերին կծառայեն ձեր ջանքերն ու գործողությունները:

Բերեմ ձեր կյանքից կոնկրետ օրինակ: Ահա դուք փորձում եք զբաղվել ներխուժումով: Գիտեք և կարդացել եք, որ դա օգտակար գործ է: Եվ սկսում եք մտասևեռվել: Ներխուժման ձևերը կատարելապես տարբեր են լինում: Դրանց մի մասն առնչվում է միայն մենտալային ոլորտի մի որևէ տիրույթի: Եվ դա ներխուժման այն տեսակն է, որ պետք է իրականացվի արտակարգ զգուշավորությամբ: Քանզի մենտալային ոլորտը մոտ է երկրային ոլորտին: Եվ ներխուժման ընթացքում կամ դրա սկզբում ձեր մտքերի յուրաքանչյուր շեղում դեպի բացասականը ստեղծում է ձեր ուզածի ուղիղ հակառակ արդյունքը:

Օրինակ՝ դուք ուզում եք մտքով աշխատել ի բարօրություն բոլոր կենդանի էակների, որի նպատակով ձգտում եք վեր հանել ձեր միտքը և այն ուղղորդել բարուն: Բայց այդ պահին հիշում

եք ինչ-որ մի խնդրի մասին, որը ծագել է ձեր ընտանիքում կամ աշխատանքի վայրում: Ձեր միտքը վայրկյանի մի փոքր մասով շեղվում է ներխոկման համար ձեր ընտրած թեմայից, և դուք դա նույնիսկ չեք էլ նկատում: Բայց դրանով բացասական վիճակ եք խցկում ներխոկման ընթացքի մեջ: Եվ եթե հենց այդ թեմայով ներխոկմանը մասնակցում են շատ մարդիկ, տասնյակ, հարյուրավոր և նույնիսկ հազարավոր մարդիկ, և նրանցից յուրաքանչյուրն իր բացասական ներդրումն է ունենում ընդհանուր ներխոկման ընթացքի մեջ, ապա կարող է այնպես ստացվել, որ համընդհանուր ներխոկման ընթացքն ուղղվի լրիվ հակառակ ուղղությամբ, և վերջնական արդյունքը ստացվի ձեր ուզածի ուղիղ հակառակը:

Մենք գիտենք, որ դա հնարավոր է, և նման բան հաճախ է տեղի ունենում: Ուստի արտակարգ զգուշավորությամբ ենք վերաբերվում համատեղ ներխոկումներին և չափազանց հազվադեպ ենք խնդրում, որ դուք իրականացնեք դրանք: Մտքի ուժն ու մտքի սևեռվածությունը մարդկանց մեծամասնության ուժեղ կողմը չեն: Այդ պատճառով, ներխոկումները, եթե նույնիսկ անց են կացվում գիտակցության ոչ համապատասխան վիճակով, չեն կարող բացասական մեծ ազդեցություն թողնել, բայց ձեզ անհրաժեշտ է, որ սովորեք ամեն ինչին մոտենալ գիտակցված ձևով: Հատկապես հիմա, երբ աշխարհները մերձենում են իրար:

Ձեր հոգևոր գործառնությունները կարող են և՛ վնաս բերել, և՛ օգուտ: Ամեն ինչ կախված է այն վիճակից, որում ձեռնամուխ եք լինում ձեր հոգևոր գործառնություններին:

Եվ ես պետք է նաև նշեմ, որ հոգևոր գործառնության ընթացքում էներգիայի ոչ ճիշտ ուղղորդման դեպքում դուք նույնալիսի կարմա եք ստեղծում, ինչպիսին ստեղծում եք ֆիզիկական ոլորտում կատարած ոչ ճիշտ գործողությամբ:

Այո՛, սիրելիներս, ժամանակն է, որ խորհրդածեք նախքան աղոթք առաքելը՝ արդյո՞ք կարմա չեք ստեղծում ձեր աղոթքով:

Աղոթքի ժամանակ ճիշտ վիճակն և ճիշտ տրամադրվածությունը շատ կարևոր տարրեր են: Նաև շատ կարևոր են ձեր արտաբերած աղոթքի խոսքերը: Ուշադրություն՝ դարձրեք աղոթքի խոսքերին: Եվ եթե չեք հասկանում, թե ինչի մասին է աղոթքը, ապա չեք կարող ճշգրիտ ուղղություն տալ աղոթքի էներգիային:

Կա նաև մանտրաներ կարդալու գործառնությունը: Այն յուրահատուկ գործառնություն է: Եվ, որպես կանոն, դուք չեք հասկանում մանտրաների իմաստն ու նշանակությունը: Ազդեցություն է գործում հենց մանտրայի վանկերի արտասանությունը: Բայց ձեզ այստեղ էլ է վտանգ սպառնում. մանտրաների ոչ ճիշտ արտասանության դեպքում մանտրա կարդալու ձեր գործառնության արդյունքը նույնպես կարող է բացասական լինել:

Այս Ուսմունքը ձեզ հիմա տրվում է այն հույսով, որ դուք կսկսեք ավելի զգուշորեն կիրառել հոգևոր գործառնություններն ու հոգևոր մեթոդաբանությունները: Եվ եթե նույնիսկ փորձառություն անցած հոգևոր գործառնություններն են բացասական ազդեցության հանգեցնում, ապա ինչպիսի՞ ազդեցություն կարող են թողնել այն գործառնությունները, որոնք ինքներդ եք հորինում ու տարածում: Եթե ձեր առաջարկած հոգևոր գործառնությունն Աստծո տեսանկյունից սխալ է, և դուք այն տարածել եք բավականաչափ շատ մարդկանց շրջանում, ապա այդ գործառնության կիրառմամբ պայմանավորված կարմայի ողջ ծանրությունն ընկնում է ձեր ուսերին:

Ուստի ես ձեզ խորհուրդ կտայի, որ հատկապես տեղեկատվության զանգվածային միջոցների ներգրավմամբ լայն նախաձեռնություններ չցուցաբերեք, որ տարածեք նոր գործառնություններ ու մեթոդաբանություններ: Պատահական չէ, որ հնում բոլոր գործառնություններն ու մեթոդաբանությունները տարածվել են ուսուցիչ-աշակերտ շղթայով, և Ուսուցիչը մանրագին հետևել է, թե աշակերտներն ինչպես են իրականացնում այս կամ այն հոգևոր գործառնությունը:

Դուք համարում եք, որ հոգևոր զարգացման բնագավառում նշանակալի բարձունքների եք հասել և կարող եք ինքներդ ուսուցանել ու խրատներ տալ: Դե ինչ, ոչ ոք, ներառյալ նաև ես, չի կարող դա ձեզ արգելել: Բայց հոգևոր գործառնությունների մասին Ուսմունք մենք պարտավոր ենք տալ: Այդ Ուսմունքը ձեր կյանքում դուք կա՛մ կարող եք օգտագործել, կա՛մ ոչ: Մակայն ես լիահույս եմ, որ ձեզնից շատերն այսուհետև շատ զգույշ կլինեն հոգևոր գործառնություններ իրականացնելիս, մանավանդ եթե դրանք նորամուծություններ են:

Ես ձեզ նախազգուշացրի և ցույց տվեցի ձեր Ուղու ճիշտ ուղղությունը:

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը

Վեհապետ Հիլարիոն
5 հուլիսի, 2009 թ.

Հավանականություն կա, որ Ոսկեդարը մուտք կգործի Երկիր

ԵՍ ԵՄ Հիլարիոնը:

Մեր այսօրվա գրույցի թեման կվերաբերի ձեր կյանքում աստվածային որոշում կայացնելուն: Դուք մեր ուղերձներում հավանաբար կարդացել եք, որ ձեր բոլոր գործողություններն ու մտքերը պետք է համապատասխանեն Աստծո Կամքին: Սակայն շատերիդ մոտ հավանաբար հարց կառաջանա, թե ձեզ շրջապատող քառսի պայմաններում ինչպե՞ս իմանալ, թե ինչն է համապատասխանում Աստծո Կամքին և ինչը՝ ոչ. ո՞րն է աստվածային որոշում և որը՝ ոչ:

Ինչպես միշտ, հիմնական և գլխավոր հանձնարարականս կլինի այն, որ ականջալուր լինեք ձեր սրտի ձայնին: Քանզի հենց այդտե՛ղ կարող եք գտնել ձեր բոլոր հարցերի պատասխանները:

Իսկ ի՞նչ անեն նրանք, ովքեր չեն լսում այդ պատասխանները:

Ցավոք, Երկրի վրա ունեցած շատ ու շատ մարմնավորումների ընթացքում շատերի սրտերը ծածկվել են անթափանց զրահով, և շատ դժվար է դարձել այդ զրահի միջով Աստծո պատասխանը լսելը:

Դուք ձեր կյանքերի ընթացքում բախվել եք շատ ողբերգական իրավիճակների: Եվ դրանք ձեր սրտերին այնպիսի վերքեր են հասցրել, որոնք ցավ ու մորմոք են պատճառում նույնիսկ այն հաստ զրահի տակից, որ հագցրել եք ձեր սրտին, որպեսզի չզգաք այդ ցավերը:

Ի՞նչ անել ուրեմն...

Ձեր սրտերը պետք է բերվեն աշխատունակ վիճակի: Պետք է շերտ առ շերտ սրտի վրայից հեռացնեք բոլոր այն բացասական ազդեցությունները, որոնք եղել են անցյալում և կան ներկայում: Ձեր սրտերը շատ զգայուն են: Եվ նախքան ձեր սրտերը բացել սովորելը պետք է հոգ տանեք, որ ձեր կյանքի արտաքին պայմանները նոր վերքեր չառաջացնեն ձեր սրտերում:

Ցավոք, ձեր աշխարհում շատ են այնպիսի բաները, որոնք ստիպում են սրտին կծկվել անտանելի ցավից: Սակայն միշտ չէ, որ այդպես է եղել:

Մարդկության պատմության ընթացքում եղել են երջանիկ դարաշրջաններ, երբ մարդիկ ուրախություն էին պարգևում միմյանց, ուրախանում էին արևով, ողջ կենդանական աշխարհով: Ուրախությունն էր տիրում ամենուրեք: Դա շատ վաղուց էր՝ այն հինավուրց դարերում, երբ Երկրի վրա Ոսկեդար էր:

Մարդկության լավագույն ներկայացուցիչներն ու նրանց Ուսուցիչները գտնվում էին մարմնավորման մեջ: Բնությունն ու ողջ շրջապատը ներկայանում էին որպես աստվածության ներդաշնակ դրսևորում: Այն ամենը, ինչ գոյություն ուներ այդ հրաշք ժամանակներում, պարուրված էր երջանկությամբ: Երջանկության և ուրախության վիճակները տիրապետող էին ողջ գոյի համար: Նույնքան կատարյալ ու Սիրով հագեցած էին նաև մարդկանց փոխհարաբերությունները: Ամեն ինչ խելամիտ էր դասավորված:

Եվ այդ դարերի ընթացքում մարդկանց սրտերն անթափանց զրահով ծածկվելու կարիքը չէին զգում: Մարդկանց սրտերը բաց էին բոլորի առջև, քանզի դրանցում բացակայում էին բացասական դրսևորումները: Եվ մարդկանց սրտերին քաջ հայտնի էր, թե ինչպես պետք է վարվել համաձայն Աստծո Օրենքի:

Դա շատ վաղուց էր:

Մարդկությունն աստիճանաբար ցած սահեց ու հասավ այնպիսի վիճակի, ինչպիսին այժմ է: Այն ամենը, ինչ ձեր կյանքում տեսնում եք ձեր շուրջը, համապատասխանում է ձեր սրտերի վիճակին: Անհասկացողության զրահը, ատելությունը, հակակրանքն ու անտարբերությունը ծածկի տակ են առել մարդկությանը:

Դուք լրիվ չափով ճաշակեցիք անհնազանդության պտուղները: Հենց հատկապես ինքնակամությունն ու ուրիշների հաշվին ինչ-որ բան ձեռք բերելու անհագ ցանկությունը մարդկությանը հասցրին գիտակցության այն վիճակին, որում ներկայումս նա գտնվում է:

Ուստի այդ վիճակից դուրս գալու հակադարձ ուղին այն կլինի, որ կյանքի բոլոր ոլորտներում դրսևորվեն դրանց լրիվ հակադիր կերպերը:

Ատելությունն անհրաժեշտ է փոխարինել Սիրով:

Վախն անհրաժեշտ է փոխարինել Սիրով:

Անտարբերությունը, չարությունն ու հակակրանքը պետք է փոխարինվեն բարյացակամությամբ:

Ուրախությունը պետք է փոխարինի նոթոսվածությամբ:

Ասես կախարդական փայտիկի օգնությամբ բոլոր անաստված հատկանիշները փոխարինվում են աստվածային հատկանիշներով միայն այն դեպքում, եթե մարդկությունն իր հիմնական

զանգվածով եսասիրության, փառասիրության և կյանքից անընդհատ հաճույքներ կորզելու իր վարվելակերպը փոխարինում է այնպիսի վարվելակերպով, որը հիմնված է փոխօգնության, համագործակցության և ի շահ հանուր կյանքին ամեն ինչ տալու ցանկության վրա:

Ճիշտ կլինի, եթե ասեք, որ ես իրար հակադրեցի եսասիրության ու մարդասիրության դիրքերը:

Երբ մարդկային գիտակցությունը հեռանում է աստվածային թրթռանքներից, ապա մարդ ինքն իրեն կտրում է Աստծուց. նա դադարում է իրեն ապահով վիճակում զգալուց, դադարում է Սեր զգալուց: Իսկ երբ մարդ վերադառնում է աստվածային թրթռանքներին, ապա տեղի է ունենում ճիշտ հակառակը: Մարդ զգում է ողջ Արարչության հետ իր միասնությունը, զգում է Սեր, ուրախություն: Նա իրեն բավարարված է զգում, դառնում է հանգիստ ու հավասարակշիռ:

Աստծո Աշխարհի սահմանագիծն անցնում է ձեր սրտերով: Հենց այդտեղ՝ զրահի տակ, Աստված է: Եվ այնժամ, երբ ամեն մարդ կկարողանա բացել իր սիրտը, մարդկությունը կվերադառնա այն ժամանակներին, երբ Երկրի մարդիկ մշտապես իրենց զգում էին երջանկությամբ ու Սիրով պարուրված:

Հավանականություն կա, որ Ոսկեդարի այդ ժամանակները կվերադառնան: Հավանականություն կա, որ Ոսկեդարը մուտք կգործի Երկիր: Եվ մենք սպասողաբար կանխագուշակում ենք, թե Երկրի վրա հատկապես որտե՞ղ պայմաններ կստեղծվեն Ոսկեդարի գալստյան համար:

Ես ձեզ չեմ պատմի մեր պլանների մասին: Բայց դուք պետք է գիտենաք, որ ոչ միշտ է երկինքը մռայլ ու անձրևոտ լինում: Կգա ժամանակ, երբ աստվածային գիտակցության Արևը կշողա Երկրի վրա: Միայն կարող եմ ասել, որ Ոսկեդարի գալստյան համար անհրաժեշտ պայմաններն արդեն ստեղծվում են, ինչպես նաև պատրասվում են մարմնավորման և արդեն մարմնավորվում են այն հոգիները, որոնք իրենց մեջ կրում են ոսկեդարյան գիտակցություն: Եվ լավ կլիներ, եթե դուք այդ հոգիների համար Երկրի վրա այնպիսի պայմաններ ստեղծեիք, որոնցում նրանք կարողանային լրիվ դրսևորել իրենց ունակություններն ու շնորհները:

Ես ավարտում եմ իմ այսօրվա ուղերձը և հույս եմ փայփայում, որ դուք ձեր մեջ ուժ կգտնեք, որպեսզի հաղթահարեք ձեր բոլոր բացասական վիճակները՝ հանուն Երկիր մոլորակի ապագայի:

ԵՄ ԵՄ Հիլարիոնը

Վեհապետ Գողֆրի*

6 հուլիսի, 2009 թ.

Ուսմունք Աստծո էներգիայի ճիշտ ծախսման մասին

ԵՄ ԵՄ Գողֆրին:

Ես չափազանց հազվադեպ եմ գալիս այս դեսպանորդի միջոցով: Եվ կուզենայի, օգտվելով իմ այսօրվա հնարավորությունից, դիմել ողջ աշխարհի լուսակիրների լայն լսարանին:

Ես մարմնավորվել էի Ամերիկայում, և այսօր ձեզ այցի եմ գալիս ռուս դեսպանորդի միջոցով: Հենց ինքը՝ իմ այսօրվա ուղերձի փաստը շատ խոստում է: Անհատների միջև հակասություններ չեն ծագում, երբ նրանք հասնում են իրենց զարգացման որոշակի հոգևոր մակարդակին:

Երբ գտնվում եք ցածրադիր վայրում, լեռները հեռվում ձեզ տեսանելի են լինում, բայց ձեր տեսադաշտն առանձնապես լայն չի լինում: Իսկ երբ բարձրանում եք լեռան գագաթը, ապա ձեր առջև այնպիսի հեռանկար է բացվում, որը, ցածում գտնվելով, չէիք կարող տեսնել: Ուստի ձեր խնդիրն է չզբաղվել դատարկաբանություններով և չուզվել առօրեական ունայնության ճահճի մեջ: Ձեր խնդիրն է գիտակցությամբ բարձրանալ հնարավորինս վեր՝ դեպի այն տիրույթը, որտեղ մարդկանց միջև հակասություններ չկան:

Բաժանվածությունը ձեր աշխարհում առկա է միայն այն բանի պատճառով, որ չեք հասել գիտակցության այն մակարդակին, որի վրա բացվում է աստվածային Ազատության լայնարձակ հորիզոնը:

Իմ վերջին մարմնավորումն անցավ Ամերիկայի հողում: Եվ ես շատ եմ սիրում այդ երկիրը: Նաև ուրախ եմ, որ կարող եմ գալ ռուս դեսպանորդի միջոցով, քանի որ այդ երկու երկրների միջև եղած կապերը պետք է պահպանվեն:

Ռուսաստանի հոգևոր զարգացումը շատ բան կարող է տալ Ամերիկային: Իսկ Ամերիկայի փորձից էլ կարող է օգտվել Ռուսաստանը:

Ֆիզիկական ոլորտի բոլոր խնդիրներն ու հակասություններն ունեն իրենց աստվածային լուծումը: Եվ եթե բավարար է այն հրեղեն սրտերի քանակը, որոնք պատրաստ են հուր փոխանցել

հազարավոր լուսակիրների, ապա ցանկացած սառույց, ցանկացած սառը հարաբերություն, որն առկա է աշխարհի երկրների միջև, կարող է հալվել:

Անհրաժեշտ է բարձր կանգնել բոլոր տեսակի քաղաքական, տնտեսական և մարդկային այլ հարաբերություններից:

Ես ձեզ համար շատ մեծ գաղտնիք կբացեմ: Եվ հարկ է, որ այդ գաղտնիքն անմիջապես տարածեք հնարավորինս շատ մարդկանց շրջանում: Գաղտնիքն այն է, որ եթե Աստծուն թույլ եք տալիս ներկա գտնվել ձեր մեջ, ապա փոխում եք ձեր շուրջը եղած ամեն ինչը:

Ամեն, ամեն որ թող թույլ տա Աստծուն ներկա գտնվել իր մեջ: Հրավիրե՛ք ձեր ԵՍ ԵՄ Ներկայությանը՝ մուտք գործելու ձեր տաճարները և մշտապես դրանցում ներկա լինելու:

Ձեզնից յուրաքանչյուրի մեջ կա Աստծո մասնիկը: Ըստ այդմ՝ ձեզնից յուրաքանչյուրն իր ֆիզիկական տաճարը կարող է դարձնել Աստծո մշտական ներկայության վայր: Աստծո ներկայությունը ձեր մեջ դուք այնքան կարող եք ընդարձակել, որքան որ կարող են դրան դիմանալ ձեր ֆիզիկական և ավելի նուրբ կրիչները:

Մարդկային կյանքի բոլոր ոլորտները որոշվում են միայն այն բանով, թե որքանով են մարդիկ թույլ տալիս Աստծուն ներկա գտնվել իրենց ներսում:

Դա շատ պարզ ճշմարտություն է: Եվ դա հենց այն է, ինչն ամեն օր պետք է անեք՝ ձեր ԵՍ ԵՄ Ներկայությանը հրավիրեք ձեր տաճարը:

Դա հնարավոր ամենապարզ գործառությունն է և ամենապարզ մեթոդաբանությունը:

Դուք արտաբերում եք.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, ես հրավիրում եմ իմ մեջ եղած Աստծո մասնիկին՝ իմ ԵՍ ԵՄ Ներկայությանը, որ ինձ հետ լինի ողջ այսօրվա ընթացքում: Խնդրում եմ, օ՛ր իմ ԵՍ ԵՄ Ներկայություն, վերահսկի՛ր իմ բոլոր գործողությունները, արարքները, խոսքերը, հույզերն ու մտքերը: Խնդրում եմ, օ՛ր իմ ԵՍ ԵՄ Ներկայություն, գործի՛ր իմ միջոցով ողջ այսօրվա ընթացքում և դեկավարի՛ր իմ կյանքը: Ամեն»:

Եվ ձեր այդ կոչից հետո Աստծո Ներկայությունը ձեր մեջ այնքան կուժեղանա, որքան թույլ կտան ձեր ստորին չորս մարմինները: Դուք Լույսի փոխանցիչ կդառնաք ձեր աշխարհի համար:

Ձեր աշխարհը Լույսի կարիք ունի և զգում է էներգիայի պակասություն: Հարկ է, որ մեծ զգուշավորությամբ տնօրինեք ձեր Լույսը: Դուք պատասխանատվություն եք կրում այն Լույսի համար, որը փոխանցում եք ձեր շրջապատի մարդկանց:

Կան մարդիկ, որոնց ձեր Լույսը, ձեր էներգիան անհրաժեշտ է, ինչպես ջրի կումը կիզոդ անապատում: Ձեր էներգիան նրանց հնարավորություն է տալիս մի փոքր շունչ քաշելու և կրկին շարունակելու իրենց կյանքի ուղին: Բայց կան և մարդիկ, որոնք ուզում են անվերջ ստանալ ձեր էներգիան՝ անձամբ իրենք ոչինչ չանելով, և դեռ ավելին, ձեզնից ստացած էներգիան օգտագործում են ոչ թե աստվածային նպատակներով, այլ դրան ուղիղ հակադիր նպատակներով: Նման դեպքում էներգիայի սխալ օգտագործման կարման ընկնում է ձեզ վրա: Դուք պատասխանատու եք ձեր տված Լույսի համար: Եվ պետք է ձեր կյանքում այն ճիշտ տնօրինեք:

Չորացած ծառը չեն ջրում: Եվ չեն ոռոգում մոլախոտերը: Բայց այն, ինչ կենդանի է, ինչը բարի բերք է տալիս, պետք է ստանա կենարար հեղուկի իր բաժինը:

Ես ձեզ Ուսմունք տվեցի ձեր կյանքերում Աստծո էներգիայի ճիշտ ծախսման մասին:

Դատարկամիտ խոսակցություններ, հարաբերությունների անվերջ պարզում. այդ բոլորը ստիպում են ձեզ, որ սխալ օգտագործեք Աստծո էներգիան:

Աստված ձեզ էներգիա է տալիս, որպեսզի փոխանցեք նրան, ով դրա կարիքն ունի, ով ձեր օգնության և օժանդակության կարիքն է զգում, որպեսզի շարունակի իր կյանքի ուղին:

Ես ձեզ Ուսմունք տվեցի Աստծո էներգիան խնայողաբար ծախսելու մասին: Բայց միայն ինքներդ կարող եք կիրառել և պետք է կիրառեք այս Ուսմունքը ձեր գործնական կյանքում:

ԵՍ ԵՄ Գողթրին

*Համբարձյալ Վեհապետ Գողթրին վերջին անգամ մարմնավորվել է Ամերիկայում և ապրել Գայ Բալարդ անունով: Եղել է Մեն Ժերմենի Դեսպանորդը: Նրա միջոցով տրվել է Մեծ Մպիտակ Եղբայրության Ուսմունք՝ ԵՍ ԵՄ Ներկայության Օրենքի տեսքով: Երկրի համար Բալարդը պահպանել է Քրիստոս-գիտակցության կիզակետը մինչև իր համբարձման պահը՝ 1939 թ.: Իր գրառումները նա կատարել է Գողթրի Ռեյ Քինգ ստորագրությամբ:

Վեհապետ Նիկողայ Ռերիխ
7 հուլիսի, 2009 թ.

Լուրջ գրույց ռուսաստանաբնակների հետ

ԵՍ ԵՄ Նիկողայ Ռերիխը:

Այս դեսպանորդի միջոցով ես եկել եմ լուրջ գրույց վարելու, և այն հենց հիմա կկայանա:

Ժամանակ շատ քիչ է մնացել: Նկատի ունեմ այն ժամանակը, որի ընթացքում աստվածային հնարավորությունը դեռևս բաց է աշխարհի համար:

Եվ այդ հնարավորության մեջ գլխավոր դերը պետք է խաղա Ռուսաստանը:

Ձեզ հայտնի է, թե իմ սիրտը որքան էր ցավում Ռուսաստանի համար, երբ ես գտնվում էի մարմնավորման մեջ: Եվ հիմա՝ էլ է իմ սիրտը մշտապես լեցուն Ռուսաստանի նկատմամբ հոգածությամբ: Իմ բոլոր մտադրությունները մինչև այժմ կապված են Ռուսաստանի հետ: Եվ ես զգում եմ պատասխանատվության այն բեռը, որն ընկած է իմ ուսերին:

Ներկա պահին եթե ես գտնվեի Ռուսաստանում մարմնավորման մեջ, ապա որքան շատ բաներ կկարողանայի անել: Որքան շատ հնարավորություններ են բացված ձեր առաջ: Դրանք չկային, երբ ես մարմնավորման մեջ էի: Ես չէի կարող նույնիսկ գտնվել Ռուսաստանի տարածքում, և կյանքիս մեծ մասը անցավ նրա սահմաններից դուրս:

Հիմա դու՛ք եք ապրում Ռուսաստանում: Եվ ձեր տրամադրության տակ վիթխարի հնարավորություններ ունեք: Չարմացած եմ, թե ինչու՞ ոչինչ չեք անում: Ու՛ր են այն այրերը, որոնք փրկում էին Ռուսաստանը, երբ անցյալ դարերի ահավոր ժամանակներում օտարերկրյա զորախմբերը հարձակվում էին նրա վրա:

Մի՞թե ռուսական հողն աղքատացել է այն աստիճան, որ այլևս հնարավորություն չկա լուսավոր ուժերի համախմբման մեծ գաղափարով իրար շուրջ հավաքելու Ռուսաստանի լուսակիրներին, որպեսզի օտարամուտ մշակույթին հակադրեն ռուսական արժեքներն ու ռուսական մշակույթը: Ռուսական մշակույթը մշտապես եղել է ամենամարդկայիններից և հումանիստականներից մեկն աշխարհում: Ոչ վաղ անցյալի ռուս նկարիչներն ու ռուս կոմպոզիտորներն անանց փառք են բերել իրենց երկրին: Ինչու՞ է ռուսական հողն այսքան աղքատացել:

Ինչու՞ է հիմա այնպես ստացվել, որ պարահանդեսը դեկավարում են փողն ու նյութական արժեքները: Որքա՞ն կարելի հաճույք ստանալ օտարամուտ կենսակերպից: Ժամանակը չէ՞ արդյոք վերադառնալու ճշմարիտ արժեքներին:

Ժամանակը չէ՞ արդյոք մտաբերելու արժանապատվությունն ու պատիվը:

Ժամանակը չէ՞ արդյոք երեխաներին դաստիարակելու համամարդկային անանց արժեքների նկատմամբ նվիրվածությամբ: Տեսեք, թե ինչով է զբաղված ձեր երիտասարդությունը. մի՞թե բանն այդպես պետք է լինե...

Ինձ համար վշտալի է այդ համընդհանուր քայքայման ու փտածության պատկերը տեսնելը:

Մյուս Համբարձյալ Վեհապետների հետ համատեղ ես աշխատում եմ քնից արթնացնել Ռուսաստանի լուսակիր հոգիներին: Ես փորձում եմ գտնել մտավորականության այն ներկայացուցիչներին, որոնց համար դեռևս չեն արժեզրկվել պատիվ, արժանապատվություն և հայրենիք հասկացությունները: Փորձու՛մ եմ, փորձու՛մ գտնել այդ հոգիներին...

Սակայն ես ավելի ու ավելի շատ եմ հուսահատության գիրկն ընկնում: Նույնիսկ այնժամ, երբ հաջողվում է գտնել մի հոգու, որի ներսում արթնացել է ճշմարտության ձգտումը, և հավատն ու Աստված ելել են առաջին պլան, հենց որ անցնում է որոշ ժամանակ, այդ հոգին շեղվում է աստվածային Ուղուց և սկսում փնտրել առասպելական ինչ-որ արժեքներ, մշակույթային ինչ-որ փոխնակներ:

Որքա՞ն քիչ հոգիներ են մնացել, որոնք իրապես նվիրված են ոգեղինության բարձրագույն գաղափարներին: Եվ դրանց մեջ որքա՞ն քիչ են նրանք, ովքեր կարմայով ծանրաբեռնված չեն և ֆիզիկական ոլորտում կարող են ի կատար ածել Վեհապետների գործերը:

Ես սարսափով եմ մտածում, թե մարմնավորման մեջ որքա՞ն քիչ կան իրապես նվիրված աշխատակիցներ, որոնք չեն կորցրել կողմնորոշիչները և չեն շեղվել ուղղությունից:

Հիմնականում ես հենց ձե՛զ եմ դիմում այսօր: Ոչ թե թվով, այլ հմտությամբ են մշտապես հաղթել:

Ուստի հարկավոր է միասնական ճակատ ստեղծել այն այլանդակության դեմ, որը տիրել է այսօրվա Ռուսաստանի կյանքին:

Լույսի առաքելությամբ մարմնավորված որքա՞ն հրաշալի հոգիներ են խճճվել այլանդակության ու ամենաթողության այդ սարդոստայնում:

Ժամանակն է, ինչպես Մինինի ու Պոժարսկու օրոք, աշխարհագոր կազմել, որպեսզի կանգնեցվի այն թշնամին, որը մտքի և հույզի նուրբ ոլորտից վրա է քշել Ռուսաստանին: Ժամանակն է աստվածային կերպերով դիմագրավելու անաստվածության ողջ այն դրսևորմանը, որն այժմ իր վրա է վերցրել պարահանդեսի դեկավարումը:

Անող սերնդի ճիշտ դաստիարակության համար ներդրված այսօրվա ռուբլին վաղը հետ կգա հարյուրապատիկ, և Ռուսաստանի հոգևոր հարստություններն ապագայում բազմակի կաճեն:

Եվ բանը նույնիսկ նյութական ծախսերի մեջ չէ. երբեմն բավարար է պարզապես հոգու լավագույն որակների դրսևորումը, որպեսզի երեխաների հոգիներում բարի սերմեր ցանվեն:

Ձեր ժպիտը փողով չէ, սերը փողով չէ, բարյացակամությունը փողով չէ: Այդ ամենը ձեզ Աստված է տալիս: Եվ այդ ամենը դուք էլ ձեր հերթին պետք է տաք աշխարհին:

Ողջ խնդիրն այն է, որ դուք մոռացել եք Աստծուն, մոռացել եք, որ այդ աշխարհն էք եկել Աստծո գործերը կատարելու համար, այլ ոչ թե բավարարություն տալու ձեր էգոյի և մարմնական խելքի քմայքներին:

Ես երկար ժամանակ է, ինչ չէի գալիս ուղերձ տալու, քանի որ չէի ուզում արտահայտել իմ տարակուսանքը: Նման հուզականությունը սազական չէր լինի ինձ:

Ամո՞թ է երկրի համար, ամո՞թ է ազգի համար, ամո՞թ է այն մարդկանց համար, որոնք վատնում են իրենց կյանքը՝ նստելով հեռատեսիլի առաջ և օդու գավաթի շուրջ:

Ամո՞թ ձեզ, մուժիկներ:

Ես իմ աղոթքներով ամեն օր աղերսում եմ, որ աստվածային հնարավորությունը ևս մի փոքր երկարացվի Ռուսաստանի համար, որ երկիրը վերջապես հետ կանգնի կյանքն անտեղի վատնելուց և փողի ու շահի հետևից վազելուց: Կան ճշմարիտ արժեքներ: Կա այն, որի համար դուք մարմին եք առել և հենց դրան պետք է ուղղեք ձեր ամենօրյա ջանքերը:

Ես եկա լուրջ գրույց վարելու համար ռուսաստանաբնակների և այն քաղաքացիների հետ, որոնք մեկնել են արտասահման՝ լավ ու հեշտ կյանք գտնելու միտումով:

Հավատացե՛ք ինձ. երբ անցում կատարեք այլ աշխարհ, զարմանքով կիշեք մարմնավորման ժամանակ կորցրած ձեր անիմաստ օրերը և ամո՞թ կզգաք ձեր այն որոշումների համար, որոնք ձեզ ֆիզիկական աշխարհի բարիք էին բերում, բայց և հավերժ փակում ձեր առաջ Երկնային Արքայության դուռը:

ԵՄ ԵՄ Նիկոլայ Ռեդիխը

Պաղմա Սամբհավա
8 հուլիսի, 2009 թ.

Չրույց հետագա Էվոլյուցիայի համար անհրաժեշտ հատկանիշների մասին

ԵՄ ԵՄ Պաղմա Սամբհավան՝ աշխարհների միջով ձեզ այցի եկածը:

Այսօրվա մեր գրույցի թեման մշտապես պահանջարկ կունենա, քանի դեռ գոյություն ունեն դրսևորված աշխարհները: Դա Ուսուցչի և աշակերտի թեման է՝ Գուրուի և իր սանի:

Ձեզ մատչելի են դարձել զանգվածային տեղեկատվության ամենակատարյալ ձևերը. ձեր տրամադրության տակ է համացանցը, զինված եք համակարգիչներով: Սակայն ես ձեզ պետք է ասեմ, որ ձեր քաղաքակրթությունը մի մագաչափ անգամ առաջ չի գնացել այն հարաբերությունների առումով, որոնք գոյություն ունեն աշխարհների դրսևորումից ի վեր:

Այնինչ դուք հակված եք կարծելու, թե ամեն ինչ գիտեք, քանի որ ձեզ մատչելի է ցանկացած տեղեկատվություն, որն առատորեն սփռված է ձեր աշխարհում:

Ձեզ հավատացնում եմ, որ ամբողջ տեղեկատվությունը կարելի է գնել փողով, և որ այն դրված է գրախանութների դարակների վրա կամ կարելի է ձեռք բերել սեմինարներ հաճախելով:

Ձեզ մոլորեցնում եմ, և դուք ենթարկվում եք այդ մոլորությանը: Քանզի իրապես արժեք ներկայացնող տեղեկատվությունը դուք չեք գտնի գրախանութների դարակների վրա:

Ձեր քաղաքակրթությունը, որքան էլ ցանկանա, չի կարող ստանալ այդ տեղեկատվությունը: Քանզի դրա բանալիները թաքցված են ձեր իսկ ներսում: Եվ, որպեսզի ստանաք այդ բանալիները, հարկ է, որ ձեր գիտակցությունը բարձրացնեք համապատասխան մակարդակի վրա: Աստծո Իմաստությունն ուսուցանելու մեխանիզմը մշակվել է դարերով: Այն է՝ աշակերտը պետք է հնազանդորեն սպասի, մինչև բացվի այն դուռը, որի հետևում պահված է Ճշմարտությունը:

Ժամանակը փոխվել է: Բայց այն փոխվել է միայն այն առումով, որ ավելի ու ավելի քիչ մարդիկ կարող են ձեռք բերել այնպիսի հատկանիշներ, որոնք մոտեցնում են այն դռանը, որի հետևում

պահված է ճշմարտությունը: Մնացյալները ճշմարտությունը փնտրում են ոչ թե այնտեղ, որտեղ այն կա, այլ այնտեղ, որտեղ լույս են գցում զանգվածային տեղեկատվության միջոցների լուսարձակները և փողհարում, թե ահա սա՛ է ճշմարտությունը:

Հանդարտ, շա՛տ հանդարտ է գալիս ճշմարտության գիտակցումը՝ երկու շնչի և սրտի երկու զարկերի միջև:

Ո՛հ, փողոցի աղմուկն ու տեղեկատվության զանգվածային միջոցների աղմուկը պիտանի չեն ճշմարտության որոնում սկսելու համար:

Ունայնը չափազանց շատ է ձեր քաղաքակրթության մեջ: Եվ երբ որևէ մեկը հրապարակում է հերթական հիմարությունը՝ այն ներկայացնելով որպես բարձրագույն ոլորտներից հենց նոր ստացված տեղեկատվություն, կարելի է և՛ ժպտալ, և՛ տխրել: Քանզի իրականում այն շատ ունայն բաներ, շատ ու շատ տարբեր բաներ է պարունակվում, բայց ոչ՝ ճշմարտություն:

Սարդոստայնի պես փրկարար թելեր են սփռված ձեր աշխարհում որպես նշաններ, որոնք տանում են դեպի ճշմարտության մենաստանները: Բայց այդ նշանները դուք չեք նկատում և դրանց վրա ուշադրություն չեք դարձնում:

Շատ պարզ բաներ են պետք, որպեսզի ձեր քաղաքակրթությունը գոնե մոտավոր պատկերացում կազմի այն գաղտնի գիտելիքների մասին, որոնք ռուսուցիչ-աշակերտ շրթայով դեռևս տարծվում են Երկրում:

Երբեք, նույնիսկ ամենաահեղ ժամանակներում, աշխարհների միջև կապը չի ընդհատվել: Մշտապես, նույնիսկ ամենաահավոր ժամանակներում, մարմնավորված են եղել մարդիկ, որոնք աշխարհին փոխանցել են ճշմարտության թրթիռները:

Երկրագնդի վրա այժմ էլ հատուկ վայրեր կան, որտեղ ներկա են այդ Գիտելիքի, այդ ճշմարտության կրողները:

Ես գիտեմ և համոզված եմ, որ կգան այնպիսի ժամանակներ, երբ մարդիկ կհոգնեն ունայնից: Եվ մարդիկ կսկսեն վերադառնալ այն նեղ արահետին, որը տանում է դեպի ճշմարտություն:

Երբ ես մարմնավորման մեջ էի, գիտելիք փնտրողի հետ զրույցի չէի բռնվում, քանի դեռ նա չէր ցուցաբերում իր նպատակամղվածությունն ու խոնարհությունը:

Երբեմն ես տասնյակ տարիներով սպասում ու դիտում էի՝ նախքան ամենապարզ զրույց վարելն այն անհատների հետ, որոնք ձգտում էին դառնալ իմ աշակերտները, որպեսզի ստանան ճշմարտության մի մասնիկ:

Ձեզնից ո՛վ կարող է ներխուժման դիրքով ամբողջ տարիներով նստել և խոնարհ սպասել, մինչև իր թրթիռներն Ուսուցչին թույլ տան խոսելու իր հետ:

Բայց չէ՛, դուք ուզում եք փող վճարել և փոխարենը ստանալ բոլոր գիտելիքները:

Հանդարտվե՛ք: Ճշմարտությունն ու գիտելիքը փողով չեն տրվում: Դրանք մուտք են գործում ձեր էության մեջ այնժամ, երբ ձեր գիտակցությունը պատրաստ է դրանք ընկալելու:

Դա անխուսափելիորեն տեղի է ունենում: Երբ անոթը պատրաստ է, հայտնվում է և Ուսուցիչը: Դա օրենք է, որը գործում է ձեր ֆիզիկական աշխարհում:

Եվ եթե Ուսուցչին մոտենաք իրապես պատրաստ լինելուց ավելի շուտ, ապա հիասթափությունից բացի ուրիշ բան չեք ստանա: Դեռ ավելին, կմեղադրեք ձեր Ուսուցչին այն բոլոր թերությունների մեջ, որոնք բնորոշ են հենց ձեզ: Քանզի իսկական Ուսուցիչն այն հայելին է, որի մեջ տեսնում եք ինքներդ ձեզ:

Հաճախ է պատահում, երբ մարդիկ համարում են, որ ժամանակն ու ֆիզիկական աշխարհի պայմաններն այնքան են փոխվել, որ անհրաժեշտ են նոր մոտեցումներ, նոր ուսմունքներ, որ հին մոտեցումները կորցրել են իրենց ուժը և այլևս արդյունավետ չեն:

Դե ինչ, հնարավոր է՝ ձեզ համար այդպես է: Սակայն այն օրենքները, որոնք միլիարդավոր տարիներ ի վեր գործում են տիեզերքում, երբևէ չեն փոխվել:

Երբևէ ձեր գիտնականներն իրենց լաբորատորիաներում կգտնեն տիեզերական օրենքների հաստատումները: Սակայն դա տեղի չի ունենա ավելի շուտ, քան մարդկանց գիտակցությունը պատրաստ կլինի ընկալելու այդ հայտնագործությունները: Իսկ մինչ այդ ձեր գիտությունը կտրված կլինի ճշմարտությունից ճիշտ այնպես, ինչպես ձեր ողջ քաղաքակրթությունն է կտրված ճշմարտությունից:

Ես այսօր ձեզ այցի եկա, որպեսզի ձեր գիտակցությանը պարզ դարձնեմ այն, որ քանի դեռ հետագա էվոլյուցիայի համար ձեռք չեք բերի անհրաժեշտ հատկանիշներ, չեք տեղաշարժվի այն մեռյալ կետից, որի վրա մարդկությունը դոփում է արդեն մի քանի հազարամյակ:

Ես կկրկնեմ այդ հատկանիշները, որպեսզի ավելի լավ յուրացնեք դրանք:

Ձեզ անհրաժեշտ է խոնարհություն Բարձրագույն Օրենքի առջև. ձեզ անհրաժեշտ է նպատակամղվածություն, հնազանդություն, համբերություն և համբերատարություն:

Դրանք հիմնական հատկանիշներն են:

Դրանցից զատ ձեզ անհրաժեշտ է ունենալ ճիշտ վեկտոր, որի շնորհիվ Ուղով ձեր ընթացքը կատանա ճշմարիտ ուղղվածություն: Իսկ ճիշտ վեկտորը ձեզ համար կլինի այն, որ ցանկանաք օգնել տիեզերքի համայն գոյին:

Ես ձեզ խրատ տվեցի: Եվ հիմա ձեզ ժամանակ է պետք, որպեսզի մտորեք դրա շուրջ:

ԵՄ ԵՄ Պաղմա Սամբալան: ՕՄ

Մայր Մարիամ
9 հուլիսի, 2009 թ.

Ես ձեր գիտակցությանը դեպի վեր եմ կանչում

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը՝ ձեզ այցի եկածը:

Մեր վերջին հանդիպումից հետո տեղի ունեցան իրադարձություններ, որոնք հետ մղեցին այն Նոր դարի գալուստը, որը դեռևս սպասվում է Ռուսաստանում: Մենք հանդիպեցինք մեզ հակադիր այն ուժերի դիմադրությանը, որոնք հմտորեն օգտագործում են առանձին մարդկանց՝ գործելով նրանց միջոցով:

Ես միշտ ձգտել եմ, որ իմ ներկայությունը մոտ լինի Ռուսաստանին: Եվ ես ափսոսանք եմ հայտնում տեղի է ունեցածի համար:

Չեմ ասում, թե ամեն ինչ վատ է: Եվ դեռևս հույս ունեմ, որ ամեն ինչ լավ կլինի: Բայց դուք պետք է նպատակամղեք ձեր ջանքերը: Պետք է ամենօրյա որոշակի ջանքեր գործադրեք, որպեսզի մոտեցնեք Ռուսաստանի համար նախանշված օրինյալ ժամանակները:

Ուղերձս տխուր նոտայով ստացվեց: Բայց ինքներդ էլ զգում եք, որ ամեն ինչը չէ, որ դասավորվում է մեր ցանկացածի պես, իսկ ես իմ կողմից ավելացնեմ. «Ինչպես մտահղացված էր»:

Սակայն մենք ձեռքներս ծալած չենք նստի ու սպասի:

Ճիշտ է, այնպես չէ՞, որ եթե ես խնդրեմ ձեզ կրկնապատկել, եռապատկել ձեր ջանքերը, ապա դուք իմ կոչն անպատասխան չեք թողնի...

Մեկը կուժեղացնի իր աղոթքային գործառնությունը, իսկ մյուսը ձեռնամուխ կլինի ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործեր կատարելուն:

Դուք շահո քան կարող եք անել: Եթե կանոնավորապես ականջալուր լինեք մեր տված խորհուրդներին և այն հանդարտ ձայնին, որը, առօրյա ունայնության միջով անցնելով, ձեր սրտի խորքից հասնում է ձեզ, ապա մենք շատ բան կկարողանանք անել և այն էլ՝ սեղմ ժամկետներում:

Այժմ հարկ է, որ վճռորոշ պոկում կատարելուց առաջ ի մի բերեք ձեր բոլոր ուժերը: Հենց հիմա է որոշվում, թե որքա՞ն արագ, և ընդհանրապես՝ վրա կհասնե՞ն արդյոք սպասվող բարեփոխումները նախ Ռուսաստանի, ապա և մնացյալ ողջ աշխարհի համար:

Մանրամասները ես ձեզ չեմ ասի, և իմ գործը չէ, որ ցուցում տամ, թե ով և ինչ քայլեր պետք է ձեռնարկի: Ամեն ոք պետք է իր գործն անի: Եվ ես ինքս էլ անդադար, օր ու գիշեր իմ ծառայությունն եմ իրականացնում նուրբ ոլորտում:

Ես հնարավորինս մոտ եմ կանգնած երկրային ոլորտին: Եվ ամեն օր լսում եմ ձեր խնդրանքները, նաև այն հաղիմանանքները, որ առաքում եք ինձ:

Ես պատրաստ եմ նույնիսկ լսելու ինձ ուղղված ձեր ոչ այնքան հաճելի խոսքերը: Երբեմն, որպեսզի ինչ-որ բան գիտակցեք, այն պետք է հասնի ձեր ականջին: Ձեր ներսում շահո խորն եմ նստած ձեր հին մարմնավորումներից մնացած խնդիրները:

Ահա մոտենում եք իմ պատկերին և սկսում ձեր ներքին մենախոսությունը: Չեք էլ կասկածում, որ ես լսում եմ ձեր յուրաքանչյուր բառը: Եվ եթե առկա է աստվածային հնարավորություն, ես անհապաղ հրեշտակներին ձեզ օգնության եմ ուղարկում: Նուրբ ոլորտում օգնությունն ականթարթորեն է հասնում: Բայց որոշակի ժամանակ է պահանջվում, որպեսզի այդ օգնությունն իջանի ֆիզիկական ոլորտ: Երբեմն ձեր համբերությունը չի հերիքում, որ սպասեք այդ օգնությանը, ուստի և ինձ եք առաքում ձեր հանդիմանանքն ու դժգոհությունը: Այդ դեպքում աստվածային հնարավորության հոսքն անմիջապես դադարում է: Բայց դրանից հետո էլ, երբ կրկին մեղա գալով ու լացելով մոտենում եք իմ պատկերին, ես կրկին ձեզ օգնություն եմ առաքում: Ավա՛ղ, ամեն ինչ նորից է կրկնվում: Իսկ երբ նույն բանն արդեն ինձնից խնդրած եք լինում հինգերորդ կամ յոթերորդ անգամ, ես այլևս չեմ շտապում օգնություն ցուցաբերել: Քանզի դուք չեք գիտակցում այն ողջ պատասխանատվությունը, որը ձեր յուրաքանչյուր խնդրանքով դնում եք հրեշտակների դասի ուսերին:

Հետևողական եղեք ձեր բոլոր խնդրանքներում ու գործերում:

Երբեմն ձեր կարման թույլ չի տալիս, որ միջամտեմ ձեր ճակատագրին, բայց դուք ինձնից օգնություն եք խնդրում ամեն օր, տարվա ընթացքում շատ ու շատ անգամ: Եվ ձեր այդ ջանասիրությունն ու նպատակամղվածությունը փշրում են անտեսանելի պատմեշը, և օգնությունը վարար հոսքով ներհոսում է ձեր էության ու կյանքի մեջ:

Աստծո ողորմածությունը սահմաններ չի ճանաչում: Նուրբ ոլորտից օգնությունը կհասնի, բայց կարողացե՛ք օգտվել այդ օգնությունից: Աստվածային հնարավորությունը մի՛ փակեք բացասականի ձեր պոռթկումներով: Եթե ժամանակի մեծ մասի ընթացքում կարողանայիք պահել ձեր համայարումն Աստծո Աշխարհի հետ, ապա որքա՛ն ավելի կհեշտանար ձեզ օգնություն ցուցաբերելը: Եվ որքա՛ն ավելի հաջող կընթանային Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի փոփոխությունները:

Ամեն անգամ, երբ կորցնում եք ձեր հավասարակշռությունը, նմանվում եք փոքրիկ հրաբխի: Ձեր շուրջն ամեն ինչ ցնցվում է, և տարրոգիները ձեզնից հեռու են փախչում, քանի որ ձեր թրթռումները նրանց թույլ չեն տալիս գտնվել ձեր կողքին:

Նաև այնժամ, երբ ընդհատ ռիթմով բարձր երաժշտություն եք միացնում, տարրոգիներն ու հրեշտակային էակները տագնապահար լքում են ողջ այն գոտին, որտեղից լսելի է այդ ահավոր երաժշտությունը: Հավասարակշռությունն այնքան է խախտվում, որ ոչ մի էակ, որի պարտականությունը նուրբ ոլորտում կարգ հաստատելն է, ամբողջ մի քանի օրով չի կարողանում մուտք գործել այն գոտին, որտեղ հնչել է այդ երաժշտությունը: Եվ քանի որ նույն վայրերում ամեն օր եք նման երաժշտություն միացնում, ապա ձեր քաղաքներն ու բնակավայրերը նմանվում են անապատի. նուրբ աշխարհի բոլոր բնակիչները լքում են այդ անապատը, և ձեզ օգնելը դառնում է անհնարին:

Մեծ մասամբ մենք ձեզ օգնում ենք տարրոգիների թագավորության միջոցով՝ օդի, հրի, ջրի և հողի տարերքների միջոցով: Ձեր վարքով դուք մեզ զրկում եք ձեզ օգնություն ցուցաբերելու հնարավորությունից:

Մեզ պետք է, որ ֆիզիկական ոլորտի մթնոլորտը ներդաշնակ լինի: Եվ եթե պատահաբար հայտնվում եք երկրագնդի այն վայրերում, որտեղ մթնոլորտը դեռևս հանդարտ է ու ներդաշնակ, ապա բուժվում և ապաքինվում եք: Տարրոգիների դասի հազարավոր էակներ պատրաստ են լինում օգնելու և բուժելու ձեզ:

Արդ խորհեցե՛ք՝ ժամանակը չե՞ արդյոք, որ վերկանգնվի ներդաշնակությունը բնության բոլոր թագավորությունների միջև, ինչպես եղել է այն հինավուրց ժամանակներում, երբ մարդիկ երջանիկ էին, և կյանքը պարզապես ուրախություն էր պարգևում նրանց: Նրանք տեսնում էին տարրոգիներին, հրեշտակներին, և դա այնքան բնական էր լինում, ինչպես դուք եք հիմա տեսնում շներին, կատուներին և թռչուններին:

Ես ձեր գիտակցությանը դեպի վեր եմ կանչում: Ես փորձում եմ հասցնել ձեր գիտակցությանը, որ դուք վանդակի մեջ եք ապրում, որ ինքներդ եք ձեզ խցկել այդ վանդակի մեջ և այն դրել ձեր քաղաքների անապատում:

Հասել է ժամանակը, որ վերանայեք ձեր արժեհամակարգը, կյանքի բոլոր բնագավառներում փոխհարաբերությունները: Է՞լ ինչպես մենք հասցնենք ձեր գիտակցությանը, որ դուք գտնվում եք մարդուն ոչ վայել պայմաններում:

Ավելի համարձակ հրաժեշտ տվեք ձեր քաղաքակրթության «բարիքների» հետ ունեցած ձեր կապվածություններին, և ձգտեք ձեռք բերել իսկական բարիքներ ու անանց գանձեր:

Բնությունը դատարկություն չի սիրում, և ձեր ամեն մի բացասական հատկանիշին կփոխարինի աստվածային հատկանիշ, ձեր մարդկային կապվածություններին կփոխարինեն աստվածային անդորրի, ներդաշնակության, հանգստության, երջանկության և ուրախության վիճակները: Հենց դրանք են, որ պակասում են ձեր կյանքում:

Այսօր ես փորձեցի ձեր հայացքն ուղղել ձեզ համար սովորական դարձած հորիզոնից ավելի վեր, որպեսզի տեսնեք այն լեռնագագաթները, դեպի ուր պետք է մղվեք ներկա ժամանակներում:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը

Վեհապետ Էլ Մորիա
10 հուլիսի 2009 թ.

Մենք շարունակում ենք Ռուսաստանում սկսած մեր գործը

ԵՍ ԵՄ Էլ Մորիան:

Դուք սպասում էիք ինձ... Ես գիտեմ, որ ձեզնից շատերն անհամբերությամբ սպասում էին իմ այցին: Քանզի Վեհապետներից ոչ մեկն այնքան վճռական ու խիստ գործնական տոնով չի խոսում, ինչպես ես. որովհետև Ռուսաստանում մեր սկսած բոլոր գործերի պատասխանատվությունն ինձ վրա է ընկած: Եվ այդ պատասխանատվությունն ինձ ստիպում է, որ խոսեմ հակիրճ, տարողունակ ու գործնական տոնով:

Ուղերձի սահմանափակ շրջանակում անհրաժեշտ է շատ բան ներառել:

Դե ի՞նչ, ես կսկսեմ:

Ձեզ պետք է որ հայտնի լինի, որ մեր առաքելությունը Ռուսաստանում տեղապտույտ է տալիս: Նաև պետք է հայտնի լինի, որ դրա պատճառն այն լուսակիրների անճարակությունը եղավ, ովքեր պետք է մասնակից դառնային մեր առաքելությանը, բայց փոխարենն այլ զբաղմունքներ գտան և զբաղվեցին այնպիսի գործերով, որոնք բոլորովին մեր հետաքրքրությունների շրջանակի մեջ չեն:

Որքան երկար ու մանրակրկիտ են նախապատրաստվում մեր առաքելությունները: Որքան շատ զրույցներ են վարվում նուրբ ոլորտում այն հոգիների հետ, որոնք նախապատրաստվում են այդ առաքելությանը: Եվ երբ գալիս է գործելու ժամանակը, տեղի է ունենում այն, ինչը հնարավոր չէ նախապես ծրագրել. դուք հրապուրվում եք բաներով, որոնցով երբեք չէիք հրապուրվել, և կարծում եք, թե հենց դրա համար եք մարմնավորվել: Դուք չեք լսում և չեք ուզում լսել մեր խոսքերից ոչ մեկը, որոնք կարդում եք մեր ուղերձներում կամ գիշերային քնի ընթացքում լսում մեր մենաստաններում, չեք նկատում ֆիզիկական ոլորտի մեր նշանները. դուք պարզապես սուզվում եք պատրանքի մեջ:

Եվ ի՞նչ է մնում անել: Ես իմ ծափողջույններն եմ հղում մեր դեսպանորդին իր հերոսական ջանքերի համար: Գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ որևէ կերպ պլանավորված չէր, որ այդ կինը շինարարությամբ զբաղվի՝ իր մարմնավորման թանկարժեք օրերը նվիրաբերելով այնպիսի բաների, որոնցով պետք է զբաղվեին բոլորովին ուրիշ մարդիկ: Ես նրան ծափահարում եմ, բայց միևնույն ժամանակ պետք է ասեմ. գուցե լավ է դա, բայց ամբողջ այս երկու տարում, երբ ընթանում էր շինարարությունը, առաջ գնալու փոխարեն մենք մի քանի տարով հետ ընկանք:

Այո՛, մենք նորից ստիպված ենք ձեզ նստեցնելու առաջին դասարանցու դասասեղանի առջև և նորից սկսելու մեր ուսուցումը՝ փոխանակ զբաղվելու այն գործերով, որոնք պլանավորված էին:

Մենք ակնկալում էինք, որ ավելի շատ բան կհասցնենք անել, բայց ձիերը կառքի առջևից չենք լծի: Կսպասենք, մինչև ռուս մոլոժիկը քնից կշտանա ու վեր կենա վառարանի վրայից: Այսպիսի ասացվածք կա. «Ռուսները դանդաղ են լծում, բայց արագ են գնում»: Պետք է ասեմ, որ դուք դեռ ձեռնամուխ չեք եղել լծելու գործին:

Մենք դեռևս գտնվում ենք ուղու ամենասկզբում և հրատապ կերպով փնտրում ենք այն անհատներին փոխարինողներին, որոնք կանչվել էին Լույսի առաքելության գործին մասնակցելու, բայց վազքուղուց դուրս մնացին: Ամեն մեկն իր պատճառն ուներ, բայց ընդհանուր արդյունքը ողբալի եղավ. այս ու այնտեղ առկայծող ցաքուցրիվ կայծերը չեն կարող հաջողության ցուցանիշ ծառայել: Եվ, փոխանակ միավորվելու մեր դեսպանորդի դրոշի ներքո, դուք գտաք ձեր արդարացումը զանազան գործերի տեսքով, որոնք փորձում էիք ի կատար ածել ֆիզիկական ոլորտում այս ու այնտեղ:

Եղբայրության գործերից զատ դուք այլ գործեր չպետք է ունենայիք:

Եվ այնժամ, երբ մենք, բոլոր փողերը փչելով, ազդարարում ենք լայն ճակատով հարձակում, դուք չպետք է զբաղվեք հարմոն նվագելով: Հենց այդպես են երևում ձեր գործերից շատերը, որոնցով զբաղված եք:

Փոխանակ մեր գործին մասնակցելու և օգնելու, դուք բազմաթիվ գործեր գտաք, որոնք գուցե լավ են էվոլյուցիոն զարգացման որոշակի փուլի համար, բայց ձեր հոգիները դրանց կարիքը բոլորովին չունեն:

Դա նույն բանն է, որ այն լեռնագնացը, որը նվաճել է աշխարհի շատ բարձր գագաթներ, հիմա զբաղվի այն բլրակը նվաճելով, որով ձմեռը սահում են հինգ տարեկան երեխաները: Ես չգիտեմ, թե էլի ի՞նչ խոսքեր գտնեմ, որպեսզի խելքի բերեմ ձեզ: Բայց և այնպես մենք շարունակում ենք Ռուսաստանում սկսած մեր գործը: Մենք առաջ կընթանանք ուղիղ այնքան, որքան կկարողանանք: Բայց ես տխուր եմ. կարելի էր անհամեմատ ավելի շատին հասնել: Սակայն թերևս վաղ է արդյունքներն ամփոփել. աշխատանքի եռուն շրջանն է: Եվ այնժամ, երբ կկարողանանք

ծածանել մեր դրոշներն ու կարգավորել մեր մարտակարգերը, կտեսնենք, թե ով կհանդգնի մեզ հակադրել իր խորամանկ որոգայթներն ու շահադիտական նպատակները:

Հասավ ֆիզիկական ոլորտում հզորություն զարգացնելու ժամանակը:

Մենք չենք հոգնում ձեզ համար կրկնելուց, որ ձեզ անհրաժեշտ է խիստ որոշակի գործեր անել, բայց դրանք պետք է անենք ոչ թե քառսայնորեն, այլ կազմակերպված ձևով: Ձեզ անհրաժեշտ է միավորվել: Եթե մեզ հաջողվի երկրագնդի ինչ որ վայրում իրականացնել մտահղացումը, ապա կկարողանանք նույն փորձը կրկնել նաև ուրիշ շատ վայրերում:

Ես ակնկալում էի, որ դուք ավելի շատ ճարակություն ու արագաշարժություն կդրսևորեք: Ի՛նչ արած, փորձենք շարքերը վերադասավորել և մեծացնել Լույսի գործությունը:

Դուք երկար էիք սպասել իմ այցին: Սակայն հիմա ես ձեզ հետ երկար զրուցելու ժամանակ չունեմ:

Ավելի լավ աշխատեք, և ես ձեզ ավելի շատ ժամանակ կհատկացնեմ...

ԵՄ ԵՄ Էլ Մորիան

Ուղերձների տանձերորդ շրջան (դեկտեմբեր, 2009 թ. – հունվար, 2010 թ.)

Սանատ Կումարա
1 դեկտեմբերի, 2009 թ.

Նախագգուշացում այն մասին, որ դուք ընտրել եք դեպի ապագա տանող ամենաբարդ ուղին

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ կրկին ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, քանզի ափեափ սիրով եմ լցված մարդկության հանդեպ և պատրաստ եմ զոհաբերելու իմ բոլոր նվաճումները՝ իմ նվաճումների ողջ պաշարը, որպեսզի մարդկությունը կարողանա ապրել ու զարգանալ:

Այո, հարցը դեռևս շատ լուրջ է դրված: Մենք անում ենք ամեն հնարավոր բան և յուրաքանչյուր անգամ հայացք ենք նետում ձեզ վրա՝ մարմնավորված երկրացիներիդ վրա, և զննում, թե ինչն է փոխվել: Եթե չլինեի Երկրի մարդկության հետ ունեցած իմ բազմամիլիոնավոր տարիների հաղորդակցությունը, ապա ես վաղուց կդադարեցնեի այս փորձը: Բայց այս ընթացքում ես այնքան սիրեցի Երկրի մարդկությանը՝ ի դեմս նրա լավագույն ներկայացուցիչների, որ չեմ կարող ձեզ՝ երկրացիներիդ համար նորից ու նորից չզոհաբերել իմ նվաճումների պաշարը:

Ըստ էության, ես եկել եմ, որպեսզի հաղորդեմ որոշակի անհամակշռության մասին, որը չի հաջողվում համակշռել մեր ջանքերով: Մենք Երկիր մոլորակի լուսակիրների կողմից առավել մեծ օգնություն ենք ակնկալում:

Երբ մենք 2005 թվականին սկսեցինք մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների շրջանները, մարմնավորված 144 հազար Քրիստոս-Էակների սրտերում վառվեց Հաղթանակի Հուրը: Մենք երջանիկ էինք՝ ականատես լինելով երկրագնդի այս կամ այն վայրում այդ Հրի բռնկմանը:

Սակայն ժամանակի ընթացքում կենցաղային առօրյա թոհուրոհի, նկրտման ու նվիրվածության բացակայության պատճառով մարեց այդ լուսավոր հոգիների Հուրը: Եվ հիմա ողջ աշխարհում հագիվ մի քանի հարյուր լուսակիրներ կան, որ ունակ են պահելու իրենց նվաճումների պաշարն ու իրենց Լույսը տալու շրջապատին:

Ու՛ր կորան մնացած լուսակիրները: Երբ մենք այս դեսպանորդի միջոցով սկսեցինք մեր առաքելությունը, շատ ու շատ հոգիներ հիշեցին իրենց աստվածային առաքելության մասին: Նրանցից շատ շատերը ձգվեցին դեպի մեր տված Ուսմունքը: Եվ այդ ձգվողների մեջ էլ ավելի շատ էին նրանք, ովքեր ցանկացան օգուտ քաղել այդ արձակված Լույսից: Այո՛, սիրելիներս, ձեր աշխարհում անկատարությունը գերակշռում է: Եվ նոր Ուսմունքի սկզբնաղբյուրին ձգտող լուսակիրների առաջին ալիքը տարրալուծվեց նրանց ծովում, ովքեր ուզում էին միայն ստանալ՝ փոխարենը ոչինչ չտալով:

Շա՛տ ափսոս, որ մեծաքանակ լուսակիրների մեջ չգտնվեցին նրանք, ովքեր կարող էին հաղթահարել արտաքին ու ներքին դիմադրությունը և կանգուն մնալ այդ անհավասար մարտում: Ես խոսում եմ մարտի մասին ու կիրառում զինվորական տերմինաբանություն, քանի որ ոչ ոք չեղյալ չի հայտարարել Արմագեդոնը, և ոչ ոք չեղյալ չի հայտարարել այն մարտը, որն ընթանում է Երկրի մարդկանց հոգիների համար: Եվ հակառակ կողմի հունձքն, ավա՛ղ, ավելի շատ է ստացվում, քան Լույսի ուժերինը:

Մեր ջանքերն՝ ուղղված այն բանին, որ ֆիզիկական ոլորտում բարեկարգվի մի վայր, որտեղ լուսակիրները կարողանային միավորել իրենց ջանքերն ու գործողությունների նախագիծ կազմել, չսված դիմադրության հանդիպեցին: Եվ այդ դիմադրությունը չի կարելի համեմատել այն դիմադրության հետ, որին հանդիպում էին մեր դեսպանորդներն անցյալում: Այո՛, մենք հնարավորություն ունենք գործելու Ռուսաստանի տարածքում, բայց այն խավարը, որն ամեն կողմից վրա քշեց ֆիզիկական ոլորտի մեր առաջապահ դիրքի վրա, գերազանցեց մեր բոլոր սպասելիքները: Մենք չէինք կարծում (ուստի և չէինք հակազդում), որ մեզ հասցված հիմնական հարվածը կլինի ոչ թե խավար ուժերի, այլ նրանց կողմից, ովքեր իրենց լուսակիր էին համարում, կամ հենց այդպիսին էին ոչ վաղ անցյալում:

Եվ ի՞նչ ենք մենք տեսնում. խժոժություններ, չարախոսություններ, բամբասանքներ: Տեսնում ենք մեղադրանքներ ու գաղջ մթնոլորտ: Մեր բոլոր ջանքերը մարդկանց ուղեղներում ու սրտերում դիմադրության են հանդիպում, անասելի մի դիմադրության:

Ժամանակն արագացել է: Ժամանակը բազմակի է արագացել, և այն տխուր պատկերը, որ մենք տեսնում ենք ողջ աշխարհում սփռված մեր հին կազմակերպություններում, Ռուսաստանի տարածքում դրսևորվեց ընդամենը մեկ տարվա ընթացքում:

Որքա՞ն ափսոս է ծախսված էներգիան: Այն կարող էր նպատակաուղղվել Ռուսաստանի փայլուն ապագայի համար: Իսկ այժմ ողջ այդ էներգիան թանձր փառի պես նստած է Աշրամի տարածքում, Ռուսաստանում այս ու այնտեղ, ուր նախկին լուսակիրները թշնամություն ու կասկածամտություն են սերմանում՝ փոխանակ Լույս, Մեր ու Հույս սերմանելու:

Կարող եմ որոշ նախատինք էլ մեր դեսպանորդին ուղղել: Սակայն ես չգիտեմ ներկայումս մարմնավորված որևէ մեկին, որը, նրա տեղը լինելով, կկարողանար տանել այն հարվածները, որոնք հասցվում էին և՛ առջևից ու հետևից, և՛ լուսակիրների կողմից, և՛ պետական կառույցների ու մարմինների կողմից:

Այո՛, սիրելիներս, նախքան ժողովուրդներին իր ետևից տանելու իրավունք ձեռք բերելը ողջ Ռուսաստանը՝ նրա բոլոր օրգաններն ու կառույցները, պետք է թեստեր անցնեն: Ե՛վ դատական իշխանությունները, և՛ օրենսդիր իշխանությունները, և՛ վերահսկող մարմինները: Սակայն ամենազխալվոր ձախողումը մենք կրեցինք հենց լուսակիրների կողմից, որոնք հաշված տարիների ընթացքում իմ բնից ելած արծվաձագերից վերածվեցին ագռավների երամի: Ինձ համար դառն ու ցավալի է այդ ամենը տեսնելն ու գիտակցելը:

Մենք այլ ուղի էինք ակնկալում՝ լեռնայինը: Սակայն մարդկությունն առաջվա պես ձգտում է ամենաբարդ ճանապարհով գնալ: Ի՞նչ արած, մենք հարգում ենք ձեր ընտրությունը:

Սակայն այնժամ, երբ ձեր տառապանքները, դառնություններն ու դժբախտությունները կգերազանցեն երևակայելի բոլոր չափանիշները, իմացեք, որ կան Համբարձյալ Վեհապետներ, որոնք միշտ պատրաստ են օգնության ձեռք մեկնելու ձեզ:

Մենք միշտ պատրաստ ենք համագործակցության: Մենք միշտ պատրաստ ենք օգնություն ցուցաբերելու: Ձեր կարման ոչ միշտ է թույլ տալիս ձեզ օգնություն ցուցաբերել, բայց դա այն է, ինչ ինքներդ եք ստեղծել, իսկ Կարմայի Օրենքը շարունակում է անխախտ գործել տիեզերքում:

Որպեսզի կրկին բացվի դուրին լեռնային ուղին, մեզ անհրաժեշտ է ձեր ներքին նվաճումների դրսևորումը: Ձեր ներքին գերապատվություններից է կախված մարդկության ապագան, որը կարող է փոփոխվել ցանկացած ակնթարթում. բավական է միայն, որ որոշակի քանակի լուսակիրներ դրսևորեն միասնություն և նպատակամղվածություն:

Ամեն անգամ դուք ստիպված եք լինում ձեր գործն սկսել ավելի ու ավելի ծանր պայմաններում: Ստիպված եք լինում հաղթահարել այն բոլոր կարմայական կուտակները, որոնք հենց ինքներդ եք ստեղծել:

Ձեռքը սրտին դնելով՝ կարո՞ղ եք արդյոք ասել, որ վերջին մի քանի տարիների ձեր բոլոր ուժերը, ողջ էներգիան, ողջ ձգտումը դուք ուղղել եք միայն Մեծ Սպիտակ Եղբայրությանը ծառայելուն: Քանի՞սն են ձեզնից ի վիճակի այդ հարցին դրական պատասխան տալու՝ առանց իրենց հոգու առջև մեղք գործելու:

Ի՞նչ եք այդ դեպքում ակնկալում ապագայից: Ի՞նչ կերպ գնահատենք մենք ձեր պատրաստակամության ու նվաճումների աստիճանը, եթե դուք այսօր կայտառորեն գնում եք այն ուղղությամբ, որը մենք ցույց ենք տալիս, իսկ վաղը պանդուն եք լրիվ հակառակ ուղղությամբ կամ ընդհանրապես նախընտրում եք ձեր օրերն անցկացնել ընկճվածության ու անգործության մեջ կամ էլ իջնում եք այն աստիճան, որ խաղաք ձեր աշխարհի պատրանքային խաղալիքներով:

Ես եկա այս ուղերձով, որպեսզի ձեզ տամ Երկրի ներկայիս իրավիճակի նկարագրությունը և զգուշացնեմ, որ դուք ընտրել եք դեպի ապագա տանող ամենաբարդ ուղին:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Տեր Սուրիա
2 դեկտեմբերի, 2009 թ.

Հասել է Լինելիության Բարձրագույն Իրականության մեջ արթնանալու ժամը

ԵՄ ԵՄ Սուրիան, ձեզ այցի եմ եկել՝ անցնելով աշխարհներ ու տարածություններ: Մեր հանդիպումը ձեզ ներդրություն չի պատճառի: Ես հակիրճ կլինեմ: Եվ իմ հակիրճությունը կհիշեցնի ձեզ այն մասին, որ ձեր տարածության ու ժամանակի մեջ գտնվելու ժամկետը կրճատվում է: Դուք պետք է ավելի հաճախ խորհեք այն մասին, թե որտե՞ղ պիտի թաքցնեք ձեր բոլոր պատրանքային զբաղմունքները, սովորությունները և կապվածությունները, երբ լքեք ձեր աշխարհը: Ինչպե՞ս

կկարողանաք շարունակել ձեր զարգացումը հաջորդ աշխարհում, եթե կապվածությունները չփոխարինվեն անձնվիրությամբ ու նպատակամղվածությամբ, եթե երկուդները չփոխարինվեն սիրով:

Ինչպե՞ս կմտածեք կատարելագործման մասին, եթե չսերտեք տիեզերքի հիմնական Օրենքները:

Ձեր ներքին աշխարհը՝ Աստծո աշխարհի հետ ձեր համալարված լինելն է վերջին հաշվով որոշում ձեր և ձեր մոլորակի ապագան:

Ես մերթ ընդ մերթ գալիս եմ և չեմ հոգնում նույն պարզ ճշմարտությունները կրկնելուց: Երբեմն միևնույն բանի մասին ես խոսում եմ շատ ու շատ երկրային տարիների ընթացքում, և հանկարծ հրաշք է տեղի ունենում. մեկն իր ներքին Լույսով պայծառանում է, և նրան համակում է հայտնագործման ուրախությունը: Որպես մարդկության ճշմարիտ Ուսուցիչ՝ ես մի կողմ եմ քաշվում, որպեսզի չխաթարեմ հայտնագործության այդ հրճվանքը, որն անսպասելի այցելում է մարդուն:

Որքա՞ն ուրախալի է տեսնել, որ կան զարգացման և Էվոլյուցիայի ունակ անհատներ: Թեև դեպի Նոր Աշխարհ տանող առաջին քայլերն անասելի դժվարությամբ՝ ահռելի դժվարությունների հաղթահարման գնով են տրվում, այնուամենայնիվ դրանք ուրախացնում են մեզ: Երկրային տասը տարիների ընթացքում հավերժական աշխարհների հետ հաղորդակցման զգացողությունը ճաշակած թեկուզ մի մարդու առկայությունը բավարար է, որ մենք չհրաժարվենք Երկրի մարդկությանն ուսուցանելու և խրատելու մեր հույսերից ու փորձերից:

Ամեն անգամ, երբ ես հաղթահարում եմ մեր աշխարհներն իրարից բաժանող ահռելի պատնեշները, մտորում եմ, թե ինչպես ավելի լավ կատարեմ իմ աշխատանքը, առավել կատարյալ կերպով ու ձեզ հասկանալի լեզվով հասցնեմ այն տեղեկատվությունը, որը չի արտահայտվում ձեր լեզվով և չափազանց նուրբ ու նրբաշուք է ձեր կոպիտ ֆիզիկական խելքի համար: Այնուհանդերձ տարածության ավելի նուրբ բաղադրիչը ժամանակի ընթացքում պետք է իր տեղը գրավի ձեր աշխարհում:

Շա՛տ ափսոս, որ ոչ բոլորն են ունակ ընկալելու նուրբ աշխարհները: Շա՛տ ափսոս, որ ոչ բոլորն են ունակ մղվելու դեպի հեռավոր աշխարհներ:

Տարածության ու ֆիզիկական աշխարհի օրենքն այնպիսին է, որ դուք անխաթար ստանում եք այն, ինչին ձգտում եք հասնել: Դուք կարող եք ձեր աշխարհում անել ամեն բան, ինչ խելքներիդ կփչի: Դուք աստվածներ եք ձեր աշխարհում: Հենց այդ և բազում այլ չարաշահումների պատճառով, որոնք թույլ են տրվել մարդկության կողմից նրա զարգացման որոշակի փուլում, արարման այդ գործությունը սահմանափակվել է: Բայց այն դեռևս շարունակում է գործել: Միայն թե արդյունքի հասնելու համար պահանջվում են այնպիսի որակներ ինչպիսիք են նպատակամղվածությունը, հաստատակամությունը և չափազանց ուժեղ կենտրոնացումը: Այն, ինչ առաջ՝ մինչ այդ արարչական գործության սահմանափակումը, տևում էր վարկյանից էլ կարճ, այժմ պահանջում է շատ ամիսներ և նույնիսկ տարիներ: Ամեն բան կախված է մարդու սրտի որակներից, նրա ոգեղեն որակների զարգացածությունից: Սակայն, գործնականում ամեն մարդ, եթե ցուցաբերի որոշակի չափի կենտրոնացում և համբերատարություն, կարող է ֆիզիկական ոլորտում հասնել այն բանին, ինչին ձգտում է:

Այն ժամկետը, որն ընկած է հղացումից մինչև դրսևորվելը, անհրաժեշտ է այն բանի համար, որպեսզի մարդն էլի ու էլի խորհի, թե որքանո՞վ է իր տենչանքների առարկան կամ նպատակը համապատասխանում իր աստվածային բնության: Այդ իսկ պատճառով, եթե դուք շա՛տ եք ուզում ձեռք բերել ձեր աշխարհի չիսչիսկաններից որևէ մեկը, ապա ձեռք կբերեք այն: Եթե ուզում եք տիրել ձեր տենչանքի առարկային, ապա կտիրեք: Հարցն այն է, թե որքանո՞վ է ձեր ձգտածը համապատասխանում աստվածային չափորոշիչներին և աստվածային դրսևորումներին: Բավարար կենտրոնացման ու նպատակամղվածության դեպքում ձեր նուրբ մարմինների միջով հոսող Աստծո էներգիայի օգնությամբ դուք ի վիճակի եք նյութականացնել շատ բաներ: Բայց արդյո՞ք դա անհրաժեշտ է ձեր անմահ մասին: Արդյո՞ք դա անհրաժեշտ է, որպեսզի շարունակեք ձեր Էվոլյուցիան հեռավոր աշխարհներում:

Իհարկե, ո՛չ: Միայն ձեր ձեռք բերած մղվածության ու կենտրոնացման որակները կմնան ձեզ հետ, երբ կշարունակեք ձեր Էվոլյուցիան ավելի նուրբ և վսեմ աշխարհներում:

Իսկ քանի դեռ պահպանում եք ձեր աշխարհի հետ կապվածությունը, ապա կրկին ու կրկին ձգվում եք դեպի ձեր աշխարհը և ստիպված եք լինում մարմնավորվել: Հապա փորձեք հրաժարվել ձեր աշխարհից՝ այն ամենից, ինչը շրջապատում է ձեզ: Դա ձեզ չի հաջողվի: Դուք չեք կարող մի ակնթարթում ամեն բանից հրաժարվել: Եվ դուք ի վիճակի չեք լինի ապրել այնպիսի մի աշխարհում, որտեղ չկա այն ամենը, ինչը շրջապատում է ձեզ ֆիզիկական աշխարհում: Ուստի մենք ձեզ սիրով տալիս ենք մեր Ուսմունքները և ուղղորդում ձեր զարգացման ընթացքը: Որպեսզի

շատ ուժեղ ցնցումներ չապրեք, Լույսի հազարավոր էակներ ջանում են պահպանել ձեր աշխարհը: Սակայն այնժամ, երբ մոտենում են ժամկետները, գալիս է իրադարձությունների արագացման հերթը: Եվ այդ ժամկետներն արդեն սարերի հետևում չեն:

Դուք պետք է հրաժեշտ տաք շատ կապվածությունների: Պետք է շատ բաներից հրաժարվեք: Իսկ դրա համար ավելի ու ավելի քիչ ժամանակ է մնում: Ես չա՛տ լավ եմ հասկանում ձեզ: Շա՛տ լավ գիտեմ, թե որքան քաղցր է քունը պատրանքի մեջ: Արթնանալու ցանկություն բոլորովին չկա...

Սակայն Աստծո իրականության արևն արդեն ծագում է և կանչում ձեզ դեպի նոր աշխարհներ, առավել հրաշագեղ աշխարհներ, քան ձեր աշխարհն է:

Ես գիտեմ, որ մոլորակի մարդկանց 90 տոկոսը, երբ կարդա իմ ուղերձի այս տողերը, կթոթվի ուսերն ու, ամենայն հավանականությամբ, ոչինչ չի հասկանա:

Բայց ես եկա այն սակավաթիվ մարդկանց համար, որոնք ունակ են հասկանալու: Ես խոսում եմ ձեզ համար, ո՛վ, իմ սիրելիներ: Չափից ավելի ծանր է այն բեռը, որ դուք կրում եք ձեր աշխարհում: Եվ տարեցտարի ձեզ համար ավելի ու ավելի դժվար է դառնում ձեր մարմինների էներգետիկական ծանրաբեռնվածությունը կրելը:

Միայն շատ ուժեղ հոգիները կարող են դիմանալ և չկորցնել ուղղությունը: Սակայն ամեն ոք կարող է կանգնել Հիերարխիայի աստիճանին և պաշտպանություն ու օգնություն հայցել: Մենք անուշադրության չենք մատնի ձեր խնդրանքները: Օգնությունը կհասնի, և այն կլինի այնքան զորեղ, որքան զորեղ կլինի պատրանքի քաղցր քնից դուրս գալու ձեր մղումը:

Հասել է Լինելիության Բարձրագույն Իրականության մեջ արթնանալու ժամը: Արթնացե՛ք: Պատրա՛ստ եղե՛ք նոր էներգիաների ու թրթիռների ընկալմանը...

ԵՍ ԵՄ Սուրիան: ԵՍ ԵՄ՝ ձեր նկատմամբ Միդով լի

Տեր Ծիվա

3 դեկտեմբերի, 2009 թ.

Ցուցաբերեք ձեր Հավատն ու նվիրվածությունը Երկնքին

ԵՍ ԵՄ Ծիվան...

ԵՍ ԵՄ՝ այստեղ և այժմ...

Տարածությունն ու ժամանակը հնազանդորեն ինձ խոսելու հնարավորություն ընձեռեցին: Ես շատ ուղերձներ եմ տվել այս դեպքանորդի միջոցով: Եվ ես անչափ շատ եմ աշխատել Երկրի մարդկության հետ: Ես սիրում եմ լինել հատկապես իմ սիրելի երկրում՝ Հնդկաստանում, ուր ինձ պաշտում են և ընդունում որպես Աստծու:

Աստծո ձեր ներքին պաշտամունքն օդի պես անհրաժեշտ է ձեզ: Եթե դուք ձեր մեջ չկարողանաք աճեցնել աստվածային այդ զգացմունքը, ապա չեք կարողանա առաջ շարժվել: Էվոլյուցիայի ուղով ձեր առաջընթացն անքակտելիորեն կապված է այն բանի հետ, թե որքանով կկարողանաք ընդունել Աստծուն ձեր գիտակցության մեջ:

Ես գալիս եմ, որպեսզի հիշեցնեմ ձեզ այն ամենապարզ ճշմարտությունները, առանց որոնց դուք չեք կարողանա առաջ շարժվել: Ողջ խավարը, որ պարուրել է Երկիրը, իմ մի հայացքից կարող է չքանալ: Սակայն, որպեսզի այդ հայացքը նետեմ, դուք պետք է դրան արժանի դառնաք:

Ու՛ր է ձեր նվիրվածությունը: Ու՛ր է ձեր ջերմեռանդությունը: Ու՛ր է ամեն ինչում Աստծուն երկրպագելու ձեր ցանկությունը:

Շատ պարզ ճշմարտություններ եմ ես ասում: Եվ այդ պարզ ճշմարտությունները պետք է գրված լինեն ամենուրեք, նաև այն տեղերում, ուր շքեղորեն փայլում են ձեր գովազդային պաստառները:

Որքա՛ն է անկում ապրել հասարակությունը կալի-յուգայի ընդամենը 5000 տարիների ընթացքում:

Տիեզերական պատմության շատ կարճ ժամանակահատվածում հասարակության հետընթացը հասավ իր գագաթնակետին: Ուստի ես գալիս եմ, որպեսզի հիշեցնեմ Աստծուն պաշտելու անհրաժեշտության մասին:

Աստվածային այդ զգացմունքը ոչ մի ընդհանրություն չունի տաճարներ, մզկիթներ ու եկեղեցիներ այցի գնալու հետ: Որպեսզի հայտնվեք ձեր Աստծո մոտ, պետք է պարզապես աստվածային այդ զգացմունքը ձեր սրտի մեջ ընդունեք: Երբ ապրում եք այդ զգացմունքը, անսպասելի մի անդորր, խաղաղություն է գալիս նույնիսկ այն դեպքում, եթե գտնվում եք խոշոր քաղաքի կենտրոնում: Դուք բավականություն եք ստանում Աստծուն ներհայելուց, և դրանով իսկ

թույլ եք տալիս Աստծուն գորեղացնելու իր ներկայությունը ձեր մեջ: Միտ գգացմունքը, վեհագնվագույն Միտ գգացմունքը, որն ունակ եք գգալ, շատ նման է աստվածային գգացմունքին:

Այժմ, երբ արդեն տվեցի ձեզ այն հիմնական ուղղությունը, որով արժե, որ աշխատեք ձեր կյանքերի ընթացքում, կցանկանայի կենտրոնանալ նաև հետաձգում չհանդուրժող մի հարցի վրա:

Իսկ այդ հարցը վերաբերում է այն բանին, թե ինչպե՞ս հնարավոր դարձավ, որ մեր դեսպանորդի Աշրամում երկրային մեր ներկայությունը արգելափակվի: Դուք չեք գիտակցում, թե ինչ եք անում: Մեր դեսպանորդի դեմ ուղղված յուրաքանչյուր արարք ընկալվում է որպես ձեր զարգանալու չկամություն: Մեր դասպանորդի դեմ ուղղված ձեր յուրաքանչյուր գիտակցված կամ չգիտակցված քայլով դուք կարմա եք ստեղծում: Եվ մենք բազմիցս ասել ենք, որ մեր դեսպանորդի հետ առնչվող կարման հավասարագոր է Աստծո հետ առնչվող կարմային:

Ինչի՞ եք ուզում դրանով հասնել: Իրավիճակը մոլորակի վրա գնալով վատանում է: Եվ ուղիղ կապ գոյություն ունի մեր դեսպանորդի դեմ գործած ձեր արարքների ու Երկրի իրավիճակի վատթարացման միջև: Ինչպե՞ս ստացվեց, որ մեր դեսպանորդը դատի տակ է: Ինչպե՞ս հնարավոր դարձավ, որ մարդկային գիտակցությունը դատում է Աստծո ներկայացուցչին:

Վա՛յ ձեզ, որ չգիտեք, թե ինչ եք անում: Վա՛յ բոլոր մնացյալներին, ովքեր չեն գիտակցում մեր դեսպանորդի դեմ ուղղված իրենց ամեն մի գործողության հետևանքները:

Իմ գիտակցությամբ ես չեմ կարողանում հասկանալ ձեր արարքները: Դուք ինձ հիշեցնում եք ճեղքվածքի պատճառով ջրի տակն անցնող նավի վրա պար եկող մարդկանց: Դուք փորձում եք գտնել նորանոր խաղալիքներ ու զվարճալիքներ՝ ուշ չդարձնելով մեր խոսքին:

Ես չեմ կարող դա հասկանալ... Դա իմ հասկացողության սահմաններից դուրս է: Որքա՞ն կարելի է ասել ողջ շրջապատը, որ անխտիր վնաս հասցվի ամեն ինչին: Ինչպե՞ս կարելի է այնքան կտրվել Աստծո Աշխարհից, որ կորսվեն զանազանման հիմնական թելերը:

Ե՛ս չեմ հնարել այն իրավիճակը, որում այժմ գտնվում է մարդկությունը: Դուք ինքներդ եք ձեր ձեռքերով ստեղծել ողջ այն իրավիճակը, որում այժմ գտնվում եք:

Ահա ասու՛մ եմ ձեզ, որ կա մեկ ուրիշ, շատ ավելի հեշտ ու վեհ ուղի: Ահա ասու՛մ եմ ձեզ, թե ինչ պետք է արվի, որպեսզի ձեր իսկ ներսում բացվի այդ ուղին: Ինչու՞ չեք լսում. ինչու՞ չեք հասկանում ինձ...

Հատկացված ժամանակը կարող է ավելացվել, բայց կարող է և կարճացվել: Մենք փնտրում ու բառացիորեն փշրանքներով հավաքում ենք այն դրական օրինակները, որոնք վկայում են, որ դեռևս կան զարգանալու ունակ հոգիներ:

Կարող եք ինձ չհավատալ, բայց երբեմն մի օրինակը՝ հանուն Աստծո գործած հոգու մի սխրանքը, բավարար է լինում, որպեսզի մի ողջ քաղաքակրթության թույլատրվի շարունակել զարգացումը: Եվ նմանապես մեր ներկայացուցչի դեմ ուղղված մի գործողությունն իսկ բավարար է լինում, որպեսզի Երկինքը երես թեքի և մարդկությանը հանձնի խավարի մեջ ինքնակամ թափառելու բախտին:

Կշեռքի նժարն ավելի ու ավելի է թեքվում անխոհեմության ու Աստծո Օրենքին հետևել չուզենալու կողմը: Որտե՞ր են այն հզոր ոգիները, որոնք այժմ մարմնավորված են և կոչված են համակշռելու Երկրի իրավիճակը:

Ես գիտեմ նրանցից շատերին, որոնք կա՛մ տրտինգ տալով ընկան մեծարանքի պատրանքային նշանների ետևից, կա՛մ ընկճվեցին, կա՛մ իրենց այնպիսի երևելի անձ երևակայեցին, որ մեղք համարեցին ներկայիս մարդկության հետ գլուխ ցավեցնելը:

Պատրանքը շա՛տ ուժեղ է, և մեր դեսպանորդի միջոցով տրված թելադրությունների վերջին շրջանից սկսած՝ այն ավելի է ամրապնդել իր դիրքերը: Այս իրավիճակում պահանջվում է Հավատի վիթխարի ցուցաբերում՝ Հավատի դրսևորում:

Ցուցաբերե՛ք ձեր Հավատն ու նվիրվածությունը Երկնքին: Դրա համար հարկ չկա հասնելու աշխարհի ծայրը: Մենք տեսնում ենք յուրաքանչյուրին, ով բոցավառվում է նվիրվածության և Ծառայության բոցով, երկրագնդի որ վայրում էլ նա գտնվելիս լինի: Եվ մենք օգտվում ենք յուրաքանչյուրից, ով նախապատրաստել է իր տանարը Ծառայության համար:

Ես շատերին գիտեմ, ովքեր պատրաստ են: Սակայն նրանք չունեն բավարար արիություն ու քաջություն, որպեսզի կանգնեն ողջ հասակով մեկ և դուրս գան ոչինչ չանելու, խրամատում անգործ նստելու իրենց վիճակից:

Հերիք է այսքանը:

Ես եկա անուրախ գգացմունքով, բայց և դառը ճշմարտությունը ձեզ հասցնելու անհրաժեշտությանից դրդված:

ԵՄ ԵՄ Շիվան...

Ոգու սխրագործներ են պետք...

ԵՍ ԵՄ Նիկողայ Ռերիխը, ձեզ մոտ եմ եկել, որպեսզի տամ իմ հերթական ուղերձը: Շատ բան է փոխվել մեր վերջին հանդիպումից հետո: Եվ փոխվել է ոչ դեպի լավը:

Որքան ծանր է իմ գիտակցության համբարձյալ մակարդակից չհամբարձված մարդկության վարքը դիտելը: Որքան շատ սխալներից ու անհաջողություններից կարելի կլինե՞ր խուսափել, եթե միայն մարդկությունը լսեր, հաշվի առներ թեկուզ հարյուրերորդական մասն այն ամենի, ինչ տրվում է մեր թելադրություններում ու ուղերձներում:

Երբեմն ես անգուսպ ցանկություն եմ ունենում մարմնավորվելու, որպեսզի ուղղեմ շատ ցավալի վրիպումներ, որոնցով հյուսվում է ամենավատ ապագայի անխուսափելիությունը:

Ես հնարավորինս հետևում էի Ռուսաստանում դեսպանորդության զարգացման գործընթացին: Հետևում էի մեր ուղերձների նկատմամբ Ռուսաստանի մարդկանց արձագանքին: Ես ավելի հեշտ ուղու հույս էի փայփայում, որը Երկնքի ողորմածության շնորհիվ բացվել էր Ռուսաստանի ու ողջ աշխարհի համար: Այդ հնարավորությունը գրեթե ձեռքից բաց է թողնված: Եվ ես չգիտեմ, թե ի՞նչ պետք է տեղի ունենա, որ այդ հնարավորությունը նորից հետ գա ու Երկրին բերի շատ ու շատ չքնաղ տարիներ, որպեսզի դրանց ընթացքում տաղանդներով օժտված ու անցյալում շատ փառահեղ գործեր կատարած չքնաղ հոգիները կարողանան մարմնավորվել:

Երբ մենք Մահաթմանների Ուղերձն ու սուրբ երկրից առաքված տուփը ձեռքներիս Ռուսաստանի կոմունիստական իշխանության մոտ էինք գնում, ոչ մի ակնթարթ չէինք կասկածում, որ մեր առաքելությունը հաջողություն կունենա. մեզ կլսեն, և Ռուսաստանի առջև լուսավոր ապագա կբացվի: Դա հնարավոր կլինե՞ր, եթե Ռուսաստանի իշխանությունն ընդունե՞ր Շամբալայի Տիրակալներին ու նրանց Աստվածառաջնորդությունը: Մենք վստահ էինք հաղթանակի մեջ և դրա ուրախությունը կանխավայելելով՝ եկանք Ռուսաստան:

Ինձ համար մեծ հարված եղավ, որ մեզ ոչ միայն չլսեցին, այլև փորձեցին ձերբակալել:

Վա՛յ այն կառավարությանն ու ժողովրդին, որոնք չեն ընդունում Վեհապետների դեսպանորդներին: Խավարո՛վ պատվեց Ռուսաստանը երկա՛ր ու ձիգ տարիներ:

Եվ ահա Երկնքի ողորմածությամբ 2005 թվականին այս նոր դեսպանորդն ավետիս բերեց Ռուսաստանին: Ամեն բան սկսեց փոխվել. առկայծեց լուսաբացը, թարմ քամին քշեց փոշիները, և արևը լուսավորեց մարդկային գիտակցության մզապատ անկյունները:

Որքան շատ հույսեր ծագեցին... Ավա՛ղ, ամեն բան կրկնվեց: Մի ձախորդությունը հետևեց մյուսին: Եղան կասկածանքներ, դատափետություն, դատավարություններ ու չարախոսություններ: Այդ ամենով կտրվեց աստվածային հնարավորության հոսքը, և խավարը կրկին հաղթեց Ռուսաստանում:

Շա՛տ ափսոս վատնած ջանքերը: Շա՛տ ափսոս այն էներգիան, որ աստվածային գիտակցության ծաղիկները ջրելու փոխարեն ջրեց մարդկային գիտակցության մոլախոտերը:

Ուղերձիս բովանդակությունն այնքան էլ ուրախալի չէ: Եվ ի՞նչ ուրախություն կարող է լինել այնտեղ, որտեղ խավարը հաղթել է Լույսին:

Միակ հնարավորությունը, որ շարունակում է բաց մնալ, մարդկանց ուղեղներում ու սրտերում աստվածային գիտակցության աճի հնարավորությունն է:

Իսնդրո՛ւմ եմ, չնայած խավարին, չնայած խառնադմուկին ու քաոսին՝ կարողացե՛ք անդորր գտնել ձեր սրտում: Կարողացե՛ք վեր բարձրանալ աշխարհիկ ունայնությունից ու շրջապատող խավարից և ասել.

«Ո՛հ, ես կանգ չեմ առնի: Ոչինչ չի՛ կանգնեցնի ինձ: Ես գնում եմ դեպի Աստված, և ոչ մի դժվարություն կամ աշխարհիկ անհաջողություն չի՛ կարող արգելք լինել իմ ընթացքին: Ես կրակ կլսեմ իմ սրտում: Ես երբեք ետ չեմ շրջվի: Ես աննահանջ կգնամ առաջ, և ոչինչ չի՛ կանգնեցնի ինձ, որովհետև Աստված ինձ հետ է»:

Շատ անձնվեր ու շիտակ սրտեր կան մարմնավորված: Եվ երբեմն նրանց Լույսն այնքան ուժեղ է բոցկլտում աշխարհի խավարի մեջ, որ թվում է, թե դեռ ամեն բան կարող է փոխվել. դեռ ամեն բան կարելի է վերադարձնել բարերնապատ ուղու վրա:

Ա՛խ, եթե միայն այդ անջատ-անջատ կրակները հնարավոր լինե՞ր միավորել մեկ միասնական ժայթքմամբ և այն պատկերել կտավի վրա... Հնարավոր դառնար պատկերել ապագայի ճշմարիտ ու ստույգ կերպարները...

Որքա՛ն կուգենայի ձեզ օգնած լինել... Երբ ես մարմնավորման մեջ էի, նկարներ էի ստեղծում, որ աշխարհը լցնեմ գեղեցկությամբ: Ես վստահ էի, որ եթե ճշմարիտ կերպերը չափազանց շատ լինեն աշխարհում, ապա դրանց թրթռոններն կկարողանան խլացնել խավարի, մահվան ու քաոսի ամեն մի թրթռ:

Ես հիմա՛ էլ եմ վստահ դրանում: Եվ կարծում եմ, որ կյանքի բոլոր ոլորտներում ճիշտ կերպերի քարոզն ի գոյու կլինի մարդկությանը հանելու սարսափի, անգործության, հուսալքության ու ընկճվածության ճահճից:

Որքա՛ն շատ ճշմարիտ նմուշներ կան արվեստի բոլոր բնագավառներում: Դաստիարակության ու կրթության որքա՛ն շատ ճշմարիտ համակարգեր կան:

Բավական է կիրթ դեկավարություն ունենալ պետական կամ նույնիսկ տեղական մակարդակով, որպեսզի այդ ճշմարիտ կերպերը գտնեն իրենց լայն կիրառությունը: Պետք չէ հագուրդ տալ մարդկային ամենամեծ բնագոյներին: Դրանցով մենք ամենաանցանկալի ապագան ենք կերտում մեր հետնորդների համար:

Միայն լուսավոր կերպեր են պետք: Միայն գեղեցկություն՝ որպեսզի պետք է առաջնահերթ տեղ գրավի բոլոր հասարակական տեղեկատվության միջոցներում և հատկապես հեռուստատեսությունում ու համացանցի էջերում:

Դեռ հնարավոր է ամեն ինչ շտկել: Ոգու սխրագործներ են պետք, արարիչներ, ստեղծագործողներ...

Ես պատրաստ եմ օգնելու յուրաքանչյուրին, ով կկանչի իմ ներկայությունը, որպեսզի օգնեմ լրացուցիչ գեղեցկություն ներմուծելու ձեր աշխարհ:

Ես ձեզ հետ եղա այսօր: Եվ ի սրտե միշտ ձեզ հետ եմ...

ԵՄ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

Բաբաջի

5 դեկտեմբերի, 2009 թ.

Զրույց այն մասին, թե ինչպես կարդալ ուղերձներն ու ինչպես վերաբերվել դեսպանորդին

ԵՄ ԵՄ Բաբաջին:

Իմ զրույցը սկսելուց առաջ կուգեի համոզված լինել, որ դուք մեր ուղերձները կարդալու նախագգուշական բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել եք:

Նրանք, ովքեր առաջին անգամ են կարդում մեր ուղերձները, հնարավոր է, որ զարմանան: Սակայն նրանք, ովքեր արդեն վաղուց են կարդում մեր ուղերձները, հավանաբար գիտեն այն նախագգուշական միջոցների մասին, որոնք անհրաժեշտ է պահպանել: Նախ պետք է գիտակցեք, որ գործ ունեք էներգիայի հետ, քանզի մեր Խոսքը համապատասխան էներգետիկ լիցքով է օժտված: Եվ, ինչպես ամեն մի էներգիա, այն իր հանդեպ զգուշավոր ու զուսպ վերաբերմունք է ակնկալում, այլապես մեր ուղերձների ընթերցման հետևանքն անկանխատեսելի կարող է լինել:

Այսպիսով, դուք պետք է գիտակցեք, որ խոսում եք Վեհապետների հետ, որոնք իրենց գիտակցության մակարդակով շատ առաջ են անցել ձեզնից: Ուստի պետք է ներքին ակնածանքի ու հարգանքի զգացում տածեք նրանց հանդեպ: Դուք չեք կարող Աստծո հետ խոսել «ձեռի հետ», գործերի արանքում: Չեք կարող և՛ թեյ խմել, խոսել աշխատանքային ընկերների հետ, ստուգել ձեր երեխաների տնային առաջադրանքները, և՛ կարդալ մեր ուղերձները: Եթե զբաղվեք այդ ամենով ու միաժամանակ կարդաք մեր ուղերձները, ապա դրանով կարմա կստեղծեք, որն ուղիղ համեմատական կլինի մեր ուղերձների մեջ եղած էներգիային:

Մեկ անգամ ևս զգուշացնում եմ, որ դուք զրուցում եք Աստծո հետ: Ուստի դա պետք է անեք սրտի թրթռոքով ու ակնածանքով: Ձեր ողջ էությունը պետք է միտված լինի Աստծո հետ հաղորդակցվելուն: Պետք է մի կողմ դնեք ձեր բոլոր գործերը կամ, հակառակը, հետաձգեք ուղերձի ընթերցումը, քանի դեռ չի եկել դրա բարենպաստ պահը:

Եթե դուք հավասարակշիռ վիճակում չեք կամ ցանկացած այլ բացասական հատկանիշի ազդեցության տակ եք գտնվում, ապա մեր ուղերձների մեջ եղած էներգիան կուժեղացնի ձեր մեջ եղած ամեն մի բացասական հատկանիշը: Եվ հակառակը, եթե դուք հավասարակշիռ վիճակում եք և լի ներքին խաղաղությամբ, ապա այդ հավասարակշռության ու խաղաղության վիճակը նույնպես կուժեղանա այն էներգիային համապատասխան, որն առկա է ուղերձում:

Այսպիսով, ես ձեզ տվեցի անհրաժեշտ ցուցումներ, թե ինչպես մոտենաք մեր ուղերձների ընթերցմանը:

Այժմ ես ձեզ պետք է բացատրեմ, թե ինչ է իրենից ներկայացնում Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդի պաշտոնը: 2004 թվականին մենք պատմունքի շնորհից ձեռք բերեցինք մեր դեսպանորդին և միաժամանակ նրան ֆիզիկական ոլորտում Եղբայրությունը ներկայացնելու լիազորություններ տվեցինք: Ուստի, երբ որևէ հարաբերության մեջ եք մտնում մեր դեսպանորդի հետ, պետք է հասկանաք, որ դրանով դուք Եղբայրության հետ եք հարաբերության մեջ մտնում: Եվ կախված այն բանից, թե դուք ինչպես եք վերաբերվում մեր դեսպանորդին, մենք կարծիք ենք կազմում ձեր և ձեր քաղաքակրթության հոգևոր զարգացածության մակարդակի մասին:

Այն ժամանակ, երբ ես մարմնավորման մեջ էի, մարդիկ տարբեր կերպ էին վերաբերվում ինձ: Շատերն իրոք ինձ համարում էին մարմին առած Աստված, և դա օգնում էր իրենց ներքին շատ խնդիրները հաղթահարելուն, քանզի փաստորեն նրանք օգտվում էին իմ ձեռքբերումներից, իսկ դա նպաստում էր իրենց գիտակցության շատ արագ աճին: Մյուսները կասկածներ ունեին, և այդ հանգամանքը նրանց հետագա աճի հնարավորություն չէր տալիս: Չի ձեզ տրվում է ըստ ձեր հավատի:

Համամիտ եմ՝ շատ մարդիկ կան, որոնք իրենք իրենց մեծ դեսպանորդների ու մարգարեների մարմնավորում են համարում: Եվ եթե դուք ձգվում եք դեպի այդ մարդիկ, ապա դա միայն ձեր կարմայի հետևանքն է, որը ենթակա է բեռնաթափման:

Բայց եկեք վերադառնանք մեր դեսպանորդի հարցին: Եվ այստե՛ղ էլ ձեր գիտակցության մեջ պետք է ընդունեք այլ երկրի դեսպանի հետ լիակատար համամանությունը:

Մի պահ պատկերացրեք ձեր երկրում գտնվող մի այլ պետության դեսպանի: Իմիջիայոց, նախկին ժամանակներում շատ մեծ նշանակություն էր տրվում այն բանին, թե ինչպես են տվյալ երկրի բնակիչները վերաբերվում հարևան երկրի դեսպանին: Եվ երբեմն դեսպանի հանդեպ ոչ բարյացկամ վերաբերմունքը պատերազմ սկսելու առիթ էր դառնում: Անցյալում այդպես էր: Պատմությունը լի է նման օրինակներով:

Հիմա փորձեք պատկերացնել, թե ինչ ենք մենք զգում, երբ դուք մեր դեսպանորդի հանդեպ անբարյացակամ վերաբերմունք եք ցուցաբերում կամ բացահայտ թշնամական գործողություններ ձեռնարկում նրա նկատմամբ:

Չէ՛, մենք պատերազմ չենք սկսի կամ ուժով չենք ստիպի, որ հարգեք մեր դեսպանորդին: Մենք պարզապես, ելնելով ձեր գործողություններից, տեսնում ենք մարդկային համակեցության գիտակցության զարգացածության ընդհանրական պատկերը: Եվ դա մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ մարդկությունը դեռ պատրաստ չէ, որ իր հետ խոսեն այնպես, ինչպես հավասարը հավասարի հետ է խոսում: Մարդկությունը դեռևս ուզում է թափառել խավարի ուղիներով:

Ահա հենց այս հանգամանքի պարզաբանման անհրաժեշտությունն էլ դրդեց ինձ, որ ուղերձով այսօր այցի գամ ձեզ: Կարծում եմ, շատերի համար այս տեղեկատվությունն օգտակար կլինի:

Դուք ապրում եք ֆիզիկական աշխարհում: Եվ միաժամանակ ներկա եք նաև մենտալային ու աստեղային աշխարհներում: Ուստի եթե ձեր մարմինն ակնաձայն ու խոնարհություն է արտահայտում, բայց ձեր խելքն այդ նույն ժամանակ համրում է բոլորի ոսկորները, ում աչքը կտրում է, և ձեր ցանկություններն էլ համեմված են նախանձով ու այլ անվայել զգացմունքներով, ապա դրանից չի հետևում, որ ձեր գիտակցությունն արժանավայել վիճակում է գտնվում:

Ձեր աշխարհը զարգանալու համար ձեզ հիասքանչ հնարավորություններ է ընձեռում: Այդպիսի ներուժ, որ ունի ձեր աշխարհը, հազվադեպ կարելի է հանդիպել տիեզերքում: Սակայն տեսեք, թե ինչով եք զբաղվում օրվա մեծ մասի ընթացքում: Արժե՛ր արդյոք մարմնավորվել, որ պառկե՛ք բազմոցին ու հեռուստացույց դիտե՛ք:

Ես այսօր շատ թեմաներ շոշափեցի, որոնք արդիական են ձեզ համար: Եվ բոլոր այդ թեմաներն ու հարցերը պահանջում են ձեր ամենալարված ուշադրությունը: Առանց այդ հարցերը լուծելու դուք տեղում կանգնած կմնաք: Իսկ մենք ուզում ենք, որ դուք զարգանաք: Մենք ուզում ենք, որ ձեր զարգացումը հաջող ընթանա՝ նվազագույն քանակի համադրվածությամբ ու դժբախտություններով: Մենք հոգում ենք ձեր մասին:

Երբ ես մարմնավորման մեջ էի, ձգտում էի մարդկանց տալ այն առավելագույն էներգիան, որին տիրապետում էի, և որն ինձ Աստված էր տալիս: Սակայն ես տեսնում էի, թե ինչպես մարդիկ, ստանալով այդ էներգիան, դեռ երկու քայլ ինձնից չհեռացած՝ իսկույն ցրիվ էին տալիս ստացածը: Շա՛տ անգամ եմ դա նկատել: Այնուհանդերձ ես անընդհատ մարդկանց էներգիա էի տալիս, որովհետև նրանց հոգիները սիրո, ջերմության կարիքն ունեին: Բայց երբ նրանք այդ ամենը ստանում էին, չէին գիտակցում, թե ինչ հարստության են տիրացել և, դա չգիտակցելով հանդերձ, իսկույն ցրուցան էին անում ստացածը՝ դրսևորելով քննադատություն, նախանձ, չարություն:

Ես մաղթում եմ ձեզ, որ կարողանաք շուտափույթ կերպով ձերբազատվել ձեր ներսի բոլոր ոչ աստվածային էներգիաներից: Եվ, հավատացե՛ք ինձ, դրան հասնելու համար ձեզ ոչինչ պետք չէ, բացի ցանկություն ու մշտական նկրտում ունենալուց:

Տեր Մայտրեյա
6 դեկտեմբերի, 2009 թ.

**Դուք ձեր երեխաներին պետք է այնպես վերաբերվեք,
ասես այդ ես՝ Տեր Մայտրեյաս եմ եկել ձեզ մոտ
ձեր երեխայի կերպարանքով**

ԵՄ ԵՄ Մայտրեյան:

Որքա՛ն ուրախալի է ինձ համար, որ կրկին ձեր աշխարհ մուտք գործելու հնարավորություն ունեմ: Մանկան պես ուրախանում եմ, որովհետև ձեր աշխարհին հայացք նետելն իսկ ինձ համար մեծ երազանք է: Ես միշտ եմ ուզում գալ: Բայց Տիեզերական Օրենքը դա թույլ չի տալիս: Քանզի եթե ես հիմա գամ, ձեր գիտակցության մակարդակով ինձ չեք ճանաչի:

Հանձին ինձ՝ դուք ակնկալում եք տեսնել ամենագոր Աստծու, իսկ ես մանկիկ եմ, թեև օժտված Մեծ Իմաստությամբ:

Նայեցե՛ք ձեր երեխաներին: Նրանցից շատերի դեմքերը մեծ իմաստունների դեմքեր են հիշեցնում: Նայեցե՛ք նրանց աչքերին: Հենց նոր ծնված մանկիկը եկել է մեր Աշխարհից: Նա դեռ հիշում է մեր Աշխարհը: Բայց ի՞նչ է տեսնում իր շուրջը: Սոսկ իրարանցում, խառնաշփոթ: Ահավոր աղմուկ: Բայց չի տեսնում, որ ուզենաք իր մեջ տեսնել Աստծուն, ճանաչել այն գաղտնիքը, որը նա իր հետ բերել է ձեր աշխարհում բացելու համար:

Իր կյանքի առաջին ամիսների ընթացքում երեխան կիսով չափ , դեռ ավելին՝ մեծ մասամբ դեռ մեր Աշխարհում է: Այդ ընթացքում դուք շատ բաներ կարող եք նրանից սովորել: Իհարկե, նա չի կարող ձեզ ուսուցանել խոսքով կամ գործողություններով, բայց կարող է ձեզ փոխանցել մեր Աշխարհի դրվածքը: Այդ դրվածքը երևում է նրա աուրայում: Շատերը ներքին մղումով ձգտում են հպվել մանկանը, գրկել, շոյել գլուխը: Անշուշտ, այդ ակամա գործողությունները ձեզ հնարավորություն են տալիս մանկան միջոցով հպվելու մեր Աշխարհին:

Բայց, ավաղ, դուք մոռանում եք այն մասին, որ երեխան մեր Աշխարհից եկած բանբեր է, և կրկին անցնում եք ձեր սովորական գործերին՝ հեռուստացույց եք դիտում, խոսում հեռախոսով, երաժշտություն լսում: Եվ որոշ ժամանակ անց սկսում եք զարմանալ, թե ինչու՞ է ձեր մանկիկն անհանգիստ, լավկան, քմահաճ:

Բայց չէ՞ որ ձեր արածներն այնքան շատ են տարբերվում մեր Աշխարհից, որ երեխան մշտապես ցնցումներ է ունենում: Նա չի կարող ձեզ ստիպել, որ անջատեք աղմկոտ երաժշտությունը կամ հեռուստացույցը, չի կարող պահանջել, որ դադարեցնեք ձեր երկարաշունչ հեռախոսազրույցները: Նա իր դժգոհությունն արտահայտում է լացով և այդ կերպ ուզում է ձեզ հասկացնել, որ այդ ամենն իր համար ցանկալի բաներ չեն: Իսկ ձեզ այնպես է թվում, թե երեխան ուտել կամ խմել է ուզում կամ պարզապես հոգնել է և պետք է քնի:

Երեխաների հանդեպ ձեր վերաբերմունքը վերանայման կարիք ունի: Դուք ձեր երեխաներին պետք է այնպես վերաբերվեք, ասես այդ ես՝ Տեր Մայտրեյաս եմ եկել ձեզ մոտ ձեր երեխայի կերպարանքով:

Կանեի՞ք իմ ներկայությամբ այն բոլոր բաները, որ անում եք ձեր երեխայի ներկայությամբ՝ կարծելով, թե նա ոչինչ չի հասկանում:

Կպահեի՞ք ձեզ այնպես, ինչպես պահում եք ձեր աշխարհում...

Ես երբևէ մարմին կառնեմ, դա իմ նվիրական ցանկությունն է. բայց ես չեմ կարող դա անել, քանի դեռ փոխած չեք լինի ձեր վերաբերմունքը ձեր իսկ երեխաների նկատմամբ:

Կյանքի առաջին ամիսներին երեխայի աուրան կարող է իր մեջ մի ողջ քաղաք տեղավորել: Հիրավի, Երկնքի բանբերն է լինում ձեր կողքին: Բայց արդյո՞ք արժանավայել կերպով եք դիմավորում Երկնքից իջած ձեր բանբերին:

Դուք կարծում եք, թե ձեր երեխան դեռ ոչինչ չի հասկանում: Ձեզ թվում է, թե նա դեռ տհաս է և չի կարող իրականությունն այնպես ընկալել, ինչպես դուք:

Երեխան ձեր աշխարհ է գալիս՝ իր հետ բերելով մի այլ աշխարհի պատկերացում: Նոր ծնված երեխաներից շատերը ձեռնադրումների երկրային դպրոցն ավարտած իմաստուն հոգիներ են լինում: Եվ ի՞նչ են նրանք տեսնում իրենց շուրջը՝ քչիչացող ծնողներ ու հարազատներ: Եվ ամբողջ շրջապատում չի գտնվում զոնե մեկը, որ հանձինս նրանց տեսներ այն իմաստուն հոգիներին, որոնք ի ծնե արդեն ամեն բան գիտեն:

Հետզհետե երեխայի աուրան իր մեջ է ներառում ընտանիքի, քաղաքի, երկրի ողջ դրվածքը, և երեք տարեկան հասակում երեխան արդեն կորցրած է լինում մեր Աշխարհի ամեն մի հիշողություն: Նա հարմարվում և յուրացնում է ձեր սովորությունները, կապվածությունները, վարքի կարծրատիպերը: Երեք տարեկանում նա իր աուրայի մեջ արդեն կրում է ձեր բոլոր բացասական հոգեվիճակները, որոնցով դուք անցել եք կամ դեռ անցնում եք: Եվ եթե հեռուստացույց դիտելու կամ ռադիո լսելու հնարավորություն է ստեղծվում (իսկ դուք կարծում եք, թե նա քնած է կամ, միևնույն է, ոչինչ չի հասկանում), երեխան ակամա ներառում է իր մեջ այն ողջ մղձավանջը, որը գետի պես հորդում է ձեր զանգվածային լրատվական միջոցներից: Եվ երեք տարի անց ձեր առջև արդեն տեսնում եք ոչ թե ձեր աշխարհի մուտք գործած հրեշտակի, այլ աշխարհի բոլոր մեղքերով ծանրաբեռնված հոգու, որը մինչև իր այդ երկրային կյանքի ավարտը ստիպված է լինելու բեռնաթափել ընտանիքի, ազգի, երկրի և աշխարհի կարման:

Ես չեմ կարող գալ ձեր աշխարհ, քանի դեռ այն պատրաստ չի լինի ինձ ընդունելու: Եվ եթե կարծում եք, թե ասածներս չեն համապատասխանում իրականությանը, չափազանցում կամ խտացնում եմ գույները, ապա դրանով էլ ավելի եք հետաձգում իմ գալստյան ժամկետը:

Քանի դեռ ձեր աշխարհում պարահանդես վարողը տգիտությունն է, քանի դեռ պարզ ճշմարտությունները դուք ընկալում եք որպես հեքիաթներ, ես ձեր աշխարհում անելիք չունեմ:

Ես, իհարկե, շատ եմ ուզում հնարավորինս շուտ մարմին առնել: Բայց, ավաղ, միայն դու՛ք կարող եք արագացնել իմ գալուստը:

Հոգատար վերաբերմունք պետք է ցուցաբերեք ոչ միայն երեխաների հանդեպ. ֆիզիկական աշխարհում ապրող ամեն ոք սիրված լինելու իրավունք ունի:

«Միրի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ», որքա՛ն վաղ է տրվել այս պատվիրանը... Տեր Հիսուսի տված այդ պատվիրանից հետո որքա՛ն շատ իրադարձություններ են տեղի ունեցել երկրագնդի վրա: Բայց և որքա՛ն զբաղված եք լինում դուք ձեր կյանքում. մշտապես զբաղված եք լինում ինչ-որ բաներով: Ժամանակը չէ՛ արդյոք, որ մի պահ կանգ առնեք և լսեք Հիսուսի Խոսքը, որը հենց ձեզ է ուղղված:

Քանի՞ անգամ պետք է կրկնվեն պատգամները, որպեսզի վերջապես ի կատար ածվեն: Քանի՞ անգամ պետք է ուղերձներով գանք, որ հետո դուք սովորեք ոչ միայն կարդալ կամ լսել, այլ նաև ձեր կյանքում առաջնորդվել ստացած Ուսմունքով:

Ես դեռ էլի՛ կգամ և կտամ իմ ուղերձները: Լիահույս եմ, որ երկրագնդի վրա կգտնվեն գոնե հարյուր մարմնավորված հոգիներ, որոնք ոչ միայն կկարդան դրանք, այլ նաև կկիրառեն իրենց կյանքում:

ԵՍ ԵՄ Մայրերյան

Վեհապետ Լանտո
7 դեկտեմբերի, 2009 թ.

**Համբարձյալ Վեհապետների խնդիրը
Ժամանակակից աշխարհում մոլորված
հնարավորինս շատ Լույսի հոգիների փրկությունն է**

ԵՍ ԵՄ Լանտոն՝ այս օրով ձեզ այցի եկածը, որպեսզի ոչ մեծ Ուսմունք տամ, որը դուք, հավանաբար, արդեն լսել եք: Այնուհանդերձ ես իմ պարտքն եմ համարում ձեզ այդ մասին կրկին հիշեցնել:

Եվ այսպես, նախքան շարադրանքիս անցնելը ինձ պետք է ունենալ ձեր ուշադրությունը: Ինձ պետք է, որ ձեր ողջ ուշադրությունն ու կենտրոնացվածությունը բևեռեք մատուցվող Ուսմունքի վրա, այլ ոչ թե ձեզ շրջապատող աշխարհի վրա: Լիակատար կենտրոնացվածությունը հնարավորություն է տալիս յուրացնելու գրույցի առարկան:

Ձեր ֆիզիկական աշխարհում գտնվելը համակցված է շատ անցանկալի բաների հետ, որոնցից դուք պետք է մեկը մյուսի հետևից հրաժարվեք: Դրանց շարքում են մսի, ալկոհոլի, ծխախոտի օգտագործումը: Եթե խոսելու լինենք ձեր հրապուրանքների մասին, ապա դրանցից հարկ է հիշատակել ձեր հոգու վրա ամենակործանարար ազդեցություն գործողները՝ հեռուստատեսությունն ու ժամանակակից երաժշտության որոշ տեսակները: Թե՛ մեկը և թե՛ մյուսն այնքան կործանարար են ներգործում մարդու օրգանիզմի, նրա աուրայում ընթացող նուրբ գործընթացների վրա, որ արդյունքում ամենօրյա բազմաժամյա հեռուստադիտումներն ու երաժշտության անցանկալի տեսակների ունկնդրումն ամբողջությամբ ի չիք են դարձնում նուրբ աշխարհներն ընկալելու ձեր հնարավորությունը: Խախտվում է կենտրոնանալու ունակությունը, և նուրբ էներգիաներն այլևս չեն ընկալվում նման հրապուրանքներին ենթարկված մարդու կողմից:

Ես ձեզ պատկերացում տվեցի այն մասին, թե որքան կործանարար և երբեմն նույնիսկ մահաբեր են գործում ձեր աշխարհի անմեղ թվացող ու բոլորի կողմից ընդունված զվարճանքները: Եվ եթե ես ձեզ այդ մասին չասեի, ապա էլ որտե՞ղ կարող էիք այդ մասին կարդալ:

Շատ բաներ այնքան զանգվածային են դարձել և երբեմն այնքան են միահյուսվել գործարարության հետ, որ ձեր աշխարհում շատ դժվար է գտնել մարդու օրգանիզմի վրա դրանց ազդեցության վերաբերյալ ստույգ ու ճշմարիտ տեղեկատվություն:

Ամենաանցանկալին այն կլինի ձեր կողմից, որ չուզենաք հրաժարվել իմ նշած բաներից: Չէ՞ որ ժամանակակից մարդն իր կյանքը չի կարող պատկերացնել առանց հեռուստացույցի, երաժշտության, հիմա նաև առանց համացանցի: Չեմ ասում, թե հրաժարվեք ժամանակակից քաղաքակրթության բոլոր ձեռքբերումներից: Ուղղակի իմացեք, որ ձեր շատ, այսպես կոչված, քաղաքակրթական ձեռքբերումներ բերում են նրան, որ դրանց պարբերաբար կիրառումը ոչ միայն դանդաղեցնում է ձեր առաջընթացը, այլև այն անհնար է դարձնում:

Անշուշտ կան որոշ հաղորդումների, ֆիլմերի և երաժշտության տեսակներ, որոնք բարերար ազդեցություն են գործում մարդու հոգու վրա: Բայց դրանք այնքան քիչ են, որ պարզապես կորչում են հոգեկործան նմուշների ծովում: Ավելի հեշտ է էվոյուցիոն զարգացման որոշակի փուլում ընդհանրապես հրաժարվել հեռուստացույց դիտելուց և կործանարար երաժշտություն լսելուց, քան թե փորձել արժեքավոր հատիկներ գտնել այն աղբակույտի մեջ, ինչին վերածվել են հեռուստատեսությունն ու ռադիոն:

Ինչու՞ իմ այսօրվա գրույցը նվիրեցի այս թեմային: Մի՞թե չկային խրատատվության ավելի կարևոր ու արդիական թեմաներ:

Իհարկե, թեմաներ շատ կան, բայց ձեր կյանքը խաբսիսված է բազում մանրուքների վրա, և այդ մանրուքներից յուրաքանչյուրն իր դերն է խաղում ժամանակակից մարդկության ընդհանուր անցանկալի կերպարի ստեղծման գործում: Ես նշեցի դրանցից գլխավորները, որոնցից պետք է հեռու մնաք առաջին հերթին:

Մարդկությունը կորցրել է այն աստվածային թելը, որով պետք է առաջնորդվեր: Եվ, որպեսզի կորսվածը հետ բերվի, պետք է ձեռք բերել զգայունություն, վերականգնել գեղեցիկը զգալու ճաշակն ու ձեր աշխարհի վայելչագեղ, նուրբ նմուշները:

Ցավոք, շատերն արդեն այնքան հեռու են գնացել զանգվածային արվեստի տեսակների նկատմամբ իրենց հրապուրանքներով, որ նրանց նուրբ մարմիններն այլևս չի հաջողվի վերականգնել: Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է սոսկ այն, որ ֆիզիկական մարմնի մահից հետո այլևս չի լինի էվոյուցիան շարունակողը: Նուրբ մարմինները լիովին ավերված կլինեն և այլևս վերականգնման ենթակա չեն լինի: Ինքներդ եք ձեզ սպանում:

Մարդկության ներկայացուցիչներից շատերի գեներում ինքնառնչացման ծրագիր է դրված: Եվ հենց այդ ծրագիրն է ստիպում մարդկանց դանդաղորեն սպանել իրենք իրենց: Ամենավերջում մահանում է ֆիզիկական մարմինը: Առավել նուրբ մարմիններն ու ձեր աուրան քայքայվում են առաջին հերթին:

Մույն տեղեկատվությունը ես տալիս եմ այն հույսով, որ կգտնվեն որոշակի քանակությամբ մարդկային անհատականություններ, որոնք կկարողանան դուրս պրծնել ժամանակակից քաղաքակրթության ջունգլիներից ու թավուտներից և կվերադառնան շրջակա միջավայրի, բնության հետ ներդաշնակ, Արարչի կողմից նախասահմանված հարաբերություններին:

Թո՛ղ մեռյալները թաղեն իրենց մեռածներին: Ես դիմում եմ նրանց, ովքեր դեռ կենդանի են և ունակ են ընթանալու էվոյուցիոն զարգացման ուղով: Տիեզերական էվոյուցիայի ժամկետները խիստ սեղմ են, այդ իսկ պատճառով հունձքը լրիվ ընթացքի մեջ է. հունձք են անում և՛ մահվան ու դժոխքի ուժերը, և՛ լուսավոր ուժերը:

Ես մտահոգ եմ այն հոգիների համար, որոնք դեռ կենդանի են: Խնդիր եմ դնում, որ ստեղծեք Նոյյան տապան, որով կփրկվի ողջ այն լավագույնը, որն ստեղծվել է մարդկության կողմից: Մնացած ամեն ինչը մի քանի հարյուր կամ հազար տարուց հետո թաղված կլինի օվկիանոսի հատակում կամ հողի հաստ շերտի տակ:

Մոլորակի թրթիռները բարձրանում են, և ամենայն բան, որը չի համապատասխանի այդ թրթիռներին, ժամանակի ընթացքում կլքի լինելիության ֆիզիկական և ավելի նուրբ ոլորտները: Կմնա միայն այն, ինչն ունակ կլինի ընթանալու հետագա էվոյուցիայի ուղով: Մեր՝ Համբարձյալ Վեհապետների խնդիրը ժամանակակից աշխարհում մոլորված և ժամանակակից քաղաքակրթության կապանքներից դուրս պրծնել չկարողացող հնարավորինս շատ Լուսիսի հոգիների փրկությունն է:

Դեռ ժամանակ կա: Դուք պետք է ավելի շատ մտածեք ձեր անմահ մասի մասին:

Ես շատ լավ եմ հասկանում, որ իմ այս ուղերձը կարդացող ոչ բոլոր մարդիկ կարող են դրանից որևէ այլ բան հասկանալ, քան ինչ-որ սարսափելի սպառնալիք, որից պետք է զգուշանալ: Որպեսզի

ավելի ճիշտ հասկանաք, թե ինչի մասին եմ խոսում, անհրաժեշտ է, որ դուք մեթոդաբար՝ մեկը մյուսի ետևից, կարդաք մեր դեսպանորդի միջոցով տրված բոլոր այն թելադրությունները, որոնք տրվել են այս վերջին տարիների ընթացքում: Ամբողջության մեջ այդ թելադրությունները պարունակում են Ուսմունք, որը կոչված է ցույց տալու այն Ուղին, որով Համբարձյալ Վեհապետներն ուզում են, որ մարդկությունը հիմա ընթանա: Ոչ մի առանձին վերցրած թելադրություն չի պարունակում համապարփակ տեղեկատվություն: Դրանք նման են ուլունքի առանձին հատիկների, որոնք պետք է շարքեք ձեր գիտակցության թելի վրա. այնժամ նրանք կկազմեն մի թանկարժեք մանյակ: Իսկ այդ մանյակը հրաշք գործելու ունակությամբ է օժտված. այն ձեր հոգիներին փրկության հնարավորություն է ընձեռում:

ԵՄ ԵՄ Լանտոն

Սպիտամա Չրադաշտ
8 դեկտեմբերի, 2009 թ.

Իմ արարչական Հուրը մշտապես ձեզ հետ է...

ԵՄ ԵՄ Չրադաշտը: Կրկին եկել եմ, որ գրուցեմ ձեզ հետ այնպիսի հարցերի շուրջ, որոնք, հավանաբար, ձեզ կհետաքրքրեն:

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է տեղի ունենալ Երկրի վրա, եթե շատ մեծ քանակի մարդիկ ականջալուր լինեն այն ամենին, ինչի վերաբերյալ խոսում են Համբարձյալ Վեհապետները: Մոլորակի համար ընդհանուր առմամբ լավ կլինի՞, թե՞ ոչ:

Ես այսպես եմ կարծում. որքան շատ մարդիկ կարդան մեր ուղերձները, այնքան ավելի ու ավելի բարենպաստ կդառնա Երկրի իրադրությունը, այնքան Երկրի վրա ավելի բարվոք պայմաններ կստեղծվեն մարդկանց հոգիների զարգացման համար: Այդ դեպքում ի՞նչն է խանգարում, որ մարդիկ ականջալուր լինեն մեզ: Ի՞նչն է ձեզ խանգարում:

Մարդկանց մեծ մասն իր զարգացման մակարդակով պարզապես ունակ չէ ընկալելու այն, ինչի մասին մենք խոսում ենք: Նրանց գիտակցությունն ամբողջովին զբաղված է միայն ֆիզիկական ոլորտով և ունակ չէ կտրվելու այդ ոլորտից:

Մի այլ տեսակի պատկանող մարդիկ էլ կասկածում են ինչ-որ բանի գոյության մասին, որը չի ընկալվում իրենց ֆիզիկական զգայարաններով: Եվ նրանք տարբեր միջոցներ են փորձարկում, որպեսզի մոգության, կախարդանքի և ուրիշ այլ գործառնությունների միջոցով այդ «ինչ-որ բանը» ծառայեցնեն իրենց: Դա գիտակցության այն ամենացածր մակարդակն է, որով հնարավոր է ընկալել մեր ուղերձները: Սակայն այդ մարդիկ, ցավոք, ունակ չեն տեսնելու այն ճշմարտությունը, որն առկա է մեր ուղերձներում. նրանք ունակ են միայն օգտագործելու մեր ուղերձների տեղեկատվությունն ի շահ իրենց էգոյի: Նմանատիպ մարդիկ անչափ շատ են: Սակայն մեր ուղերձները նրանց համար չեն նախատեսված:

Մեր ուղերձները նախատեսված են գիտակցության այնպիսի մակարդակ ունեցող մարդկանց համար, որոնք ունակ են մտածելու ոչ միայն իրենք իրենց ու իրենց մերձավորների մասին, իրենց շրջապատի գուտ ֆիզիկական կարիքները հոգալու մասին: Մեր ուղերձները նախատեսված են այն մարդկանց համար, ովքեր խորհում են այնպիսի հավերժական հասկացությունների շուրջ, ինչպիսիք են Սպասավորությունը, ինքնագոհողությունը: Մոլորակի վրա ապրող մարդկանց մեծ մասի աչքին այդպիսիները սպիտակ ագռավ են երևում: Ինչպե՞ս հավատալ մի բանի, որը բնավ չոչափելի չէ: Ինչպե՞ս կարելի է նման բանի համար գոհաբերել սեփական ժամանակը, գործել հանուն վերացական ինչ-որ բանի, որը հնարավոր չէ տեսնել. կամ ապրել այնպիսի պատկերացումներով, որոնք գերազանցում են մի առանձին կյանքի սահմանները:

Ցավոք, նման մարդիկ փոքրամասնություն են կազմում երկրաբնակների մեջ, սակայն մենք գալիս և ուղերձներ ենք տալիս հանուն հենց այդ մարդկանց:

Բոլորդ դիտել եք, թե զարնանն ինչպես են ծաղկում ծառերը, կանաչում խոտերը: Դիտել եք նաև, թե աշնանն աստիճանաբար ինչպես են հասունանում պտուղները, սերմերը:

Անցնում է որոշակի ժամանակ, և սերմերից ծլում են նոր բույսեր: Սակայն սերմերի մեծ մասը ծիլ չի տալիս: Մեծ մասը մահանում է: Նույնը վերաբերում է և մարդկանց: Ձեզնից յուրաքանչյուրը կարողություն ունի զարգանալու, դրսևորելու արարչական կարողություն: Սակայն ոչ բոլոր անհատներն են ունակ այդ կարողությունը կյանքի կոչելու:

Իմաստության Տիրակալները բազմահազար և միլիոնավոր տարիներ առաջ մարդկանց օժտել են բանականությամբ: Եվ այդ ինքնագոհաբերման գործողության շնորհիվ մարդկությունը կարողացել է զարգանալ ու կատարելագործվել: Սակայն այն սերմերը, որոնք ցանված են ձեր միջավայրում, ոչ բոլորն են ծլունակ: Շատերը կկործանվեն: Եվ չգործարկված

հնարավորությունների տոկոսը ճիշտ նույնքան է, որքան որ այն կազմում է բույսերի սերմերի պարագայում:

Դուք երբևէ մարդկության զարգացումը չե՞ք դիտել այդ տեսանկյունից: Ձեր գլխում երբևէ միտք չի՞ ծագել այն մասին, որ ձեր արարչական կարողության աճի համար հատկացված ժամանակը կարող է սահմանափակ լինել և մոտենալ իր ավարտին:

Ես դաժան բաներից եմ խոսում: Եվ իմ հաշվարկն այն բանի վրա է, որ այն մարդիկ, ովքեր ի վիճակի են ընկալելու Համբարձյալ Վեհապետների խոսքը, իրենց մեջ ուժ կգտնեն, որպեսզի հաղթեն պատրանքի այն ուժերին, որոնք ճոպանների պես իրենց կապում են Երկրին: Ես լիահույս եմ, որ այն բոցը, որն առկա է ձեր ներսում, նոր խթան կստանա իր զարգացման համար: Եվ այնժամ, երբ արարչական Բոցը կպարուրի ձեր ողջ էությունը, դուք չեք կարողանա ինքներդ ձեզ ո՛չ մատուցել, ո՛չ էլ գոհել: Դուք կհուրհրատեք և կլուսավորեք այն մարդկանց Ուղին, որոնք դեռևս գտնվում են կասկածների ու անհավատության աղջամուղջում: Դուք կկարողանաք տալ նրանց ձեր Լույսը: Եվ դա կանեք անշահախնդրորեն՝ առանց պարզև կամ մեծարանք ակնկալելու: Դուք արթնացած կլինեք հավերժական Կյանքի համար, այն Կյանքի, որը չի սահմանափակվում միայն մեկ կյանքով կամ մեկ մոլորակով: Կյանք, որն իր գիտակցությամբ ընդգրկում է ողջ տիեզերքը և իր այդ գիտակցությունը միավորում տիեզերքի ամեն մի էակի գիտակցության հետ:

Ես խոսում եմ գիտակցության այն բարձրագույն վիճակների մասին, որոնք ի վերջո պետք է ձեզ մատչելի դառնան: Դուք հիմա փակված եք ձեր անկատար մտքերի ու զգացմունքների բանտում և պետք է ձեր մեջ ուժ գտնեք, որպեսզի դուրս պրծնեք ձեր գիտակցությանը բնորոշ կաղապարներից: Պետք է ձեր մեջ հաղթահարեք գիտակցության բոլոր անկատար վիճակները...

Միայն այն ժամանակ եք գտնվում աստվածային գիտակցության վիճակում, երբ մշտապես ճաշակում եք Մեր, հրճվանք և գիտակցության վսեմ վիճակ: Ծնորհավորում եմ ձեզինքն նրանց, ովքեր, թեկուզ կարճատև ժամանակով, կարող են գիտակցության նման վիճակում հայտնվել...

Ձեր գիտակցության մակարդակը արտասանված աղոթքների կամ տաճարներ ու սրբազան վայրեր ացելելու քանակով չի որոշվում: Ձեր գիտակցության մակարդակը որոշվում է ներքին անդորրության, խաղաղվածության և ուրախության կատարյալ վիճակներով:

Սակայն, որպեսզի հասնեք նման վիճակների, դուք պետք է և՛ աղոթեք, և՛ հաղթահարեք գիտակցության բացասական վիճակները, և՛ ձերբազատվեք վնասակար սովորություններից:

Ներկայումս մարմնավորվել են բավարար քանակությամբ ոգու իսկական մարտիկներ: Եվ ես ուրախ կլինեմ, եթե իմ այս ուղերձը նրանք ընթերցեն: Այս ուղերձում ես ներդնում եմ իմ օժանդակության խթանը, այն խթանը, որը կնպաստի նրանց զարգացմանն ու գիտակցության անկատար վիճակների հաղթահարմանը:

Աստվածային Հուրը, իմ արարչական Հուրը մշտապես ձեզ հետ է... Հրավիրե՛ք իմ ներկայությունն այն պահերին, երբ հատկապես ծանր է ձեզ համար, և ես իմ սրտի Հուրը կհասցնեմ Երկրի ամենադժնի վայրը, որպեսզի ցուցաբերեմ ձեզ իմ օգնությունն ու օժանդակությունը...

Ծատ շատերիդ մեջ, որ այժմ մարմնավորված եք Երկրի վրա, կա իմ մասնիկը: Եվ ես չեմ լքի ձեզ, քանի դեռ ձեր ներսի արարչական Հրի բոցը չի հասել այնպիսի ուժգնության, որ այլևս չմարի ձեր աշխարհի այլազան փորձությունների ազդեցությամբ:

ԵՍ ԵՄ Չրադաշտը՝ ձեր հոգիների նկատմամբ Միտով

Վեհապետ Լանելլո
9 դեկտեմբերի, 2009 թ.

Ցանկացած ուսմունք, որը չի ամրապնդվում պրակտիկ գործերով, մեռած ուսմունք է

ԵՍ ԵՄ Լանելլոն: Ես եկել եմ մի գրույց վարելու, որը, հավանաբար, ձեզ անսովոր կթվա, բայց նաև հնարավոր եմ համարում, որ այն արձագանք կգտնի հենց նրանց սրտերում, որոնց այն իսկապես պետք է:

Եվ այսպես, ես սկսում եմ: Այսօր՝ թելադրությունը սկսելուց առաջ, ես երկար մտածեցի, թե ինչպես ձեզ մատուցեմ այս նյութը: Եվ ամենակարևոր բանը, որ հասկացա, այն էր, որ ինչքան էլ ջանամ, միևնույնն է, չեք կարողանա լսել այն, ինչը ձեզ վիճակված չէ լսել: Եվ հակառակը, եթե դուք պատրաստ եք, և ձեր պատրաստվածության մակարդակը թույլ է տալիս, ապա դուք կլսեք ձեզ անհրաժեշտ ամեն ինչ, եթե նույնիսկ դրանք չասվեն: Դուք դրանք կկարդաք տողերի արանքում և կընդունեք որպես գործողության ուղեցույց:

Ինչպես և մենք ենթադրում էինք, մեր առաքելությունը Ռուսաստանում դիմադրության հանդիպեց: Եվ դա անխուսափելի էր: Քանզի մեր դեսպանորդի միջոցով Ռուսաստանի լուսակիրների սրտերի մեջ վերջին տարիներին ներհոսած Լույսի հեղեղն ակներևաբար պետք է որ դիմադրություն առաջացներ:

Եվ ահա ֆիզիկական ոլորտի այն առաջապահ դետքը, որը մենք հիմնեցինք մեր դեսպանորդի Աշրամում, շատ լուրջ հարձակումների ու փորձությունների է ենթարկվում: Ի՛նչ արած, ամեն բան օրինաչափ է:

Քանի դեռ մարդկանց մեծ մասն այնպիսի կարծիք է ունենում, թե ընդամենն ինչ-որ վերացական Ուսմունք է տրվում Ձեռնադրումների Ուղու կամ Ներքին Ուղու մասին, այն որևէ դիմադրություն կամ հակակրանք չի առաջացնում, որովհետև ձեր աշխարհն առատորեն լցված է նման այլազան ուսմունքներով: Եվ դրանց հետնապատկերի վրա մեր դեսպանորդի միջոցով տրված Ուսմունքն այնքան էլ աչք չի ծակում:

Սակայն հենց որ մենք հանձն առանք ֆիզիկական ոլորտում շինարարություն սկսել, միանգամից հակադեցության ակիք բարձրացավ: Եվ այդ ակիքը բարձրացավ ոչ միայն պաշտոնյաների կողմից, այլ նաև այն մարդկանց ներսից, որոնք մինչև վերջերս իրենք իրենց լուսակիրներ էին համարում: Որքա՛ն դատափետումներ, որքա՛ն բամբասանքներ ու ասեկոսեներ ի հայտ եկան:

Եվ այդ ամենը՝ ֆիզիկական ոլորտում մեր կատարած սոսկ մի փոքրիկ գործնական քայլի պատճառով:

Իսկ գիտե՞ք, թե ինչու է այդպես լինում: Յանկացած Ուսմունք, որը չի ամրապնդվում պրակտիկ գործերով, կյանքում կիրառություն չի գտնում և չի ընդգրկում Լինելիության բոլոր ոլորտները, ներառյալ նաև ֆիզիկականը, մեռած ուսմունք է:

Տարբեր ժամանակներում մշտապես եղած բազում տարբեր ուսմունքներից Մեծ Սպիտակ Եղբայրության Ուսմունքը հենց նրանով է առանձնացել, որ մեր Ուսմունքը մենք միշտ ձգտել ենք կիրառել գործնականում: Ո՛չ այնպես, ինչպես վերացական հոգևոր գործառություններն են անում՝ առասպելական տարբեր կիզակետերի նստեցման, էներգիաների ներքաշման և այլ եղանակներով, այլ մենք միշտ ձգտել ենք գործնականում առաջ քաշել հենց այն ձևանմուշները, որոնք տրվում են Ուսմունքով՝ ամենօրյա կյանքում անհրաժեշտաբար կիրառելու համար:

Կարելի է շատ երկար, նույնիսկ հազար տարի պատմել Աստծո Պատգամների մասին, բայց բավական է, որ այն մարդիկ, որոնք հետևում են իրենց կյանքում այդ Պատգամներին, մեկ անգամ իրապես տեսնեն այդ ձևանմուշները, և դրանք մինչև կյանքի վերջը կմնան նրանց գիտակցության մեջ:

Հենց այդ պատճառով է այդքան կարևոր ֆիզիկական ոլորտում ձևանմուշ ունենալը: Ուստի և մենք անխուց այդ մասին խոսում ու դրա ստեղծման համար էներգիա ենք առաքում:

Բայց հենց այն պատճառով, որ ձևանմուշը կենսական կարևոր նշանակություն ունի Վեհապետների գործի համար, այն ֆիզիկական, աստեղային ու մենտալային ոլորտներում այդպիսի ահռելի դիմադրության է հանդիպում: Տեսեք, թե սկզբում որքան մարդիկ ի հայտ եկան, որոնք ցանկանում էին Վեհապետների գործին հաղորդակից դառնալ: Իսկ ու՛ր կորան հիմա նրանք: Հենց որ խոսք գնաց ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործողություններ սկսելու մասին, բոլորն ակնթարթորեն գտան կյանքի այլ զբաղմունքներ, ավելի հարմարավետ ուսմունքներ ու կրոններ, որոնք այնքան էլ ցավոտ չեն դիպչում ու վնասում իրենց էգոյին:

Մենք դրոշ վեր խոյացրինք Ռուսաստանի հողի վրա: Հաստատեցինք մեր պլաններն ու ձեռնամուխ եղանք դրանց իրագործմանը: Բայց հիմա, ցավոք սրտի, ընդիմադիր ուժերի կողմից հանդիպեցինք ահռելի դիմադրության: Այդ դիմադրությունը մի կողմից կանխատեսելի ու բնական է, բայց մյուս կողմից՝ մենք հույս էինք տածում, որ Ռուսաստանի լուսակիրները գիտակցության առավել բարձր աստճան կդրսևորեն: Մենք առավել շատ խիզախություն, ինքնագոհություն ու նվիրվածություն էինք ակնկալում:

Դե ինչ, մենք կսպասենք, մինչև ռուս մուժիկը քնից արթնանա: Միայն թե չափից դուրս ուշ չարթնանա... Անցյալի գիրկն են անցնում մեր դեսպանորդի աշխատունակության անգին տարիները: Իսկ մեր ծրագրերն առանց դեսպանորդի իրագործել չի հաջողվի: Մենք շատերի միջոցով ենք փորձել աշխատել և հիմա էլ ենք փորձում արթնացնել նրանց, ովքեր ի վիճակի են հանձն առնել նման կարևոր ու անհրաժեշտ առաքելություն: Սակայն առայժմ այլ թեկնածուներ չենք գտնում:

Միակ բանը, որ կարող եմ այս իրավիճակում ձեզ խորհուրդ տալ, այն է, որ չհուսահատվեք և փորձեք տեր կանգնել գոնե այն ամենին, ինչ արդեն հետ է խլվել պատրանքից: Ամենաթանկ բանը, որին հնարավոր եղավ հասնել այս տարիների ընթացքում, դա ինչպես Ռուսաստանում, այնպես էլ այլ երկրներում ապրող շատ ու շատ լուսակիրների գիտակցության մակարդակի բարձրացումն է:

Բարձր է մեր ամբիոնը, որից կարող ենք տալ մեր Ուսմունքը: Ամեն թելադրության հետ էներգիա է տրվում, որը դուք պետք է յուրացնեք և ուղղորդեք Եղբայրության ծրագրերի իրագործման համար:

Ցավալի է տեսնելը, թե ինչպես է այդքան դժվարությամբ մեր կողմից ձեր օկտավա առաքված էներգիան վատնվում դատարկ գրույցների, ճամարտակությունների, երբեմն էլ բամբասանքների ու դատափետումների վրա:

Եղբայրությունը նախկինում երբեք այսպիսի մեծ լսարանի համար միաժամանակյա խոսելու նման հնարավորություն չէր ունեցել: Ես նկատի ունեմ համացանցի միջոցով Ուսմունքը տարածելու հնարավորությունը: Մենք գիտակցում ենք, որ այդ լայնարձակ լսարանում մակարդակները տարբեր են, ուստի փորձում ենք Ուսմունքն այնպես տալ, որ ամեն ոք իր գիտակցության մակարդակով կարողանա իր համար անհրաժեշտ որևէ բան քաղել: Այդ պատճառով Ուսմունքը տրվում է շատ հասարակ բառերով և շոշափում է բոլորին հասկանալի նյութեր:

Տարբեր ժամանակներում Ուսմունքի մատուցման որոշակի տարբեր կերպեր են պահանջվում: Մենք անկեղծորեն հույս ենք տածում, որ վաղ թե ուշ մեր տրված թելադրությունների քանակը կհանգեցնի ձեր գիտակցության նոր որակին:

Սակայն մի մոռացեք, որ առաջնահերթ խնդիրն այն է, որ երկրագնդի վրա ստեղծվի մի վայր, որտեղ Ուսմունքն ամբողջովին կկիրառվի գործնական կյանքում:

Այժմ Երկիր մոլորակում Լույսի բավարար թվով հոգիներ կան, որոնք մարմնավորվել են հենց այդ առաքելությամբ: Օգնեք մեզ տարածելու Ուսմունքն այնքան, որ այն հասանելի դառնա աշխարհով մեկ ցրված այդ հոգիների համար:

Ես հույս չեմ կտրում, որ ինձ կյսեն ու կհասկանան նրանք, ում համար այսօր խոսեցի:

ԵՄ ԵՄ Լանելոն: Միշտ հաղթանակ...

Սեն Ժերմեն

10 դեկտեմբերի, 2009 թ.

Ամբողջ կատարելությունը ձեր ներսում է...

ԵՄ ԵՄ Սեն Ժերմենը...

Ուրախ եք արդյոք կրկին ինձ լսելով... Ես եկել եմ, որպեսզի ձեզ փոխանցեմ լավատեսության նշանակալի մի չափաբաժին: Ես շատ լավատես Վեհապետ եմ: Եվ, չնայած այն բոլոր դժվարություններին, որոնք շարունակում են աճել, ես վստահ եմ, որ հաղթանակը, վերջնական հաղթանակը Լույսի ուժերի կողմն է լինելու: Այլ կերպ պարզապես չի կարող լինել: Եվ ես Ուղու վրա հանդիպած բոլոր խնդիրներն ու դժվարություններն ուրախությամբ եմ դիմավորում. ուրեմն վարժվելու բան կա, սովորելու բան կա...

Ամբողջ հոգով մաղթում եմ ձեզ, որ նման ձևով վերաբերվեք ձեր Ուղու վրա հանդիպած բոլոր դժվարություններին: Միշտ պետք է հիշեք, որ Աստված ձեր առջև ուժից վեր խնդիրներ չի դնում. ցանկացած հարց կամ խնդիր, որը կանգնում է ձեր առջև, նույնիսկ եթե այն իրենով փակում է ձեր ողջ տեսադաշտը, միևնույնն է, պատրանք է: Այն ձեր առջև կանգնած է մնում, քանի դեռ ձեր գիտակցության մեջ չեք գտել դրա լուծման բանալին:

Եվ եթե մշտապես կենտրոնացած մնաք խնդիրների վրա, ապա դրանք էլի՜ կծագեն, իսկ եթե կենտրոնանաք հաջողությունների վրա, ապա ձեզ մշտապես կուղեկցեն հաջողությունները:

Լավատեսությունը բնավորության մի գիծ է, որը հատուկ է ինձ: Եվ ես կկամենայի այդ լավատեսությունն ինձնից փոխանցել ձեզ:

Ձեր կյանքում ձեզ հետ կատարվող ամեն ինչը պայմանավորված է հենց ձեզնով՝ այն նախընտրանքներով, որոնք կատարել եք անցյալում: Բոլոր իրադարձությունների պատճառները թաքնված են անցյալի ձեր ընտրություններում և գիտակցության ցածրորակ վիճակներում: Ուստի և այն ամենի իսկական պատճառը, ինչին կյանքում դուք բախվում եք, հենց ձեր ներսում է՝ ձեր գիտակցության մեջ: Եվ այն բացասական էներգիաները, որոնք առկա են ձեր ներսում, տարածությունից դեպի ձեզ են քաշում բացասական իրավիճակներ: Ըստ Լույսի, ինքներդ եք պատրանք ստեղծում, որպեսզի հետագայում բախվելով դրա հետ՝ ցրեք այն: Եվ դա տեղի է ունենում միայն այն պատճառով, որ սխալ վերաբերմունք եք դրսևորում ձեր կյանքում տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ:

Հավանաբար անցյալում ձեր առջև ծագել են շատ դժվարին իրավիճակներ: Դուք տառապել եք, մտածել եք, որ ապրելը ձեզ համար այլևս անիմաստ է: Հնարավոր է, որ դա որևէ անհաջողություն

է եղել սիրո, աշխատանքային կամ ընտանեկան բնագավառում: Բայց հիշե՛ք հապա. անցել է որոշ ժամանակ՝ օր, ամիս, մեկ կամ մի քանի տարի, և երբ ձեր գիտակցությամբ նորից անդրադարձել եք այդ իրավիճակին, այն այլևս ձեզ անհույս կամ անելանելի չի թվացել:

Ինքներդ եք ձեր կյանքում նման իրավիճակներ ստեղծում, ապա հերոսաբար հաղթահարում դրանք: Եվ այս Ուսմունքը, որ տալիս եմ, առնչվում է այն բանին, թե ինչպես հաղթահարեք այն ներքին բացասական վիճակները, որոնք սկզբնավորել եք անցյալում: Պարզապես այն պահին, երբ ամեն ինչ ձեզ անհույս է և անիմաստ է թվում, հիշե՛ք ինձ: Մտահայե՛ք ձեր առջև իմ պատկերը, որպեսզի կարողանաք շեղվել ընթացիկ իրադրությունից:

Ես գիտեմ, որ երբ խրված եք պատրանքի մեջ, որը ձեզ այնքան իրական է թվում, ձեզ համար շատ դժվար է լինում Վեհապետներին, Ուսմունքը կամ ինձ հիշելը: Բայց դա այն է, ինչը պետք է սովորեք անել:

Աստված Մեծ է: Նա թույլ է տալիս, որ ամենքդ ձեր պատրանքն ունենաք: Եվ միևնույն իրավիճակը, որի մեջ հայտնվում են տարբեր մարդիկ, մեկին ողբերգական է թվում, մեկին՝ հետաքրքիր, ոմանք էլ ընդհանրապես ոչ մի զգացում չեն տածում տվյալ իրավիճակի նկատմամբ:

Հենց դա է կերպափոխության այն արվեստը, որ ձեր գիտակցության մեջ կարողանում եք կերպափոխել իրավիճակը: Իհարկե, դուք ձեզնից դուրս ոչինչ չեք փոխում, բայց փոխում եք ձեր վերաբերմունքը տվյալ իրավիճակի նկատմամբ: Պարզապես դրանում մի ինչ-որ դրական բան եք գտնում, հետո՝ մի ուրիշը: Այնուհետև որոշ ժամանակով տարվում եք որևէ ուրիշ հաճելի գործով, որից հետո, երբ անդրադառնում եք նախկին իրավիճակին, այն այլևս ձեզ վատ ու անհույս չի թվում: Եվ հենց ինքը իրավիճակը փոխվում է՝ կապված դրա նկատմամբ ձեր ճիշտ վերաբերմունքի հետ: Այն թանձր էներգիան, որով առաջացել էր ձեր այդ իրավիճակը, մի փոքր թեթևանում է՝ շնորհիվ ձեր ճիշտ ներքին գործողությունների:

Կարողացե՛ք դրական կողմից նայել ցանկացած իրավիճակի: Կարևորը իրավիճակին ճիշտ տեսանկյունից նայելն է:

Ռուս ազգն ունի բնավորության մի որոշակի գիծ, որը փաստորեն շատ բան է փչացնում: Դա իրերին լավատեսորեն նայել չկարողանալն է: Ամերիկացիներն ինձ դուր են գալիս նրանով, որ ամեն մի իրադրության մեջ կարողանում են դրական բաներ գտնել:

Ես նույնիսկ սկզբնական շրջանում չէի կարողանում ուղերձ տալ ժուս դեսպանորդի միջոցով, քանի որ նրա ժուսական մտածելակերպը խոչընդոտում էր ինձ:

Ամեն ինչ կարելի է ուղղել: Եվ բնավորության շատ գծեր, նույնիսկ եթե դրանք արմատավորվել են դարավոր մարմնավորումների անբարենպաստ պայմանների ընթացքում, կարելի է ուղղել:

Ամերիկյան դեսպանորդների միջոցով ես տվել եմ ալքիմիայի գիտությունը՝ կերպափոխությունների գիտությունը: Այդ գիտության էությունը հենց այն է, որ դուք ձեր սրտի կրակներով կարող եք փոխել ցանկացած իրավիճակ՝ ամբողջ բացասականը վերափոխելով լավագույն մարդկային որակների:

Ես մտածված կերպով եկել եմ իմ այս ուղերձը տալու հենց հիմա՝ տարեվերջին, երբ հյուսիսային կիսագնդում քիչ է արև լինում, և մարդիկ հայտնվում են ճնշվածության մեջ: Հարկ է, որ ավելի շատ ուշադրություն դարձնեք ինքներդ ձեզ վրա տարվող աշխատանքին: Ամբողջ կատարելությունն արդեն ձեր ներսում է: Դա ձեր աստվածային էությունն է՝ այն ոսկին, որը դրված է ձեր էության խորքում: Ձեզ մնում է միայն ջանքեր գործադրել, որպեսզի քերեք այն կարմայական նստվածքները, որոնք խոչընդոտում են ձեր իսկ գանձից ձեր օգտվելուն:

Դուք երջանիկ կլինեք... Անպայման երջանիկ կլինեք, եթե ձեր կյանքում առաջնորդվեք այն խորհուրդներով, որոնք տալիս ենք մենք՝ ես և մյուս Համբաձյալ Վեհապետները:

Ես երջանիկ եղա, որ տվեցի ձեզ իմ այսօրվա ուղերձը...

ԵՍ ԵՄ Սեն Տերունյան

Տեր Հիսուս

11 դեկտեմբերի, 2009 թ.

Վարդեն Ուղու էությունը

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեզ այցի եկածը:

Որքան ջանքեր գործադրեցին Երկնային Դասերը, որպեսզի ձեզ ուղերձ տալն ինձ համար հնարավոր դառնա: Եվ ահա ես ձեզ հետ եմ:

Ուրախ եք արդյոք մեր հանդիպման առիթով: Կարծում եմ, որ ձեզնից շատերը որոշ կասկածներ ունեն, թե որքանով է հնարավոր իմ ուղերձ տալը, և թե արդյոք սույն ուղերձն իսկապես իմ կողմից է տրվում:

Ես կաշխատեմ ցրել ձեր կասկածները: Մի՛ մտածեք ուղերձի աղբյուրի մասին, մի՛ մտածեք այն մասին, թե ինչպես է այն հայտնվել ձեր աշխարհում: Կենտրոնացրեք ձեր ուշադրությունը հենց ուղերձի վրա և փորձեք ձեր սրտով ընթերցել այն: Ո՛չ խելքով, այլ հենց սրտով: Ձեր խելքն ու սիրտը միշտ չէ, որ համաձայնության մեջ են լինում: Հատկապես խելքը, ձեր մարմնական խելքն է խանգարում մեծ մասամբ, երբ ձեր սիրտը ձեզ դեպի վեր է կանչում:

Խելքն ասում է, թե դա անհնար է. այն հազար պատճառ է գտնում, որպեսզի ձեր կյանքում ոչինչ չփոխվի: Եվ հաճախ դուք ձեր խելքով եք առաջնորդվում, այլ ոչ թե սրտով: Եվ սրտի ձայնն աստիճանաբար դառնում է ավելի ու ավելի մեղմ, ապա և մարում է ի վերջո: Իսկ այնժամ, երբ սկսում եք կյանքում խարխալել, հանդիպում եք շատ խոչընդոտների, չամոքվող վերքեր ստանում ձեր նուրբ մարմիններում և հոգեբանական խնդիրներ ունենում, ապա ինչ-որ տեղ լսում կամ հիշում եք այն մասին, որ լավ կլինի օգնության խնդրանքով դիմեք ձեր սրտին:

Սակայն, երկա՛ր տարիներ անցկացնելով առանց Աստծո, ձեր սիրտը փակված է լինում այնպիսի կոշտուկներով ու պալարներով, որ չի կարողանում արձագանքել ձեր կանչերին:

Դուք տարակուսանքի մեջ եք ընկնում: Ախր, օգնություն եք խնդրել, իրոք, օգնության կարիք ունեք, բայց չեք կարողանում այն ստանալ: Ձեր սիրտը լուռ է մնում:

Եվ հենց այդ պահին շատ մարդիկ վիատվում են, հույսները կորցնում և ընկնում գիտակցության վատագույն վիճակների մեջ:

Պետք չէ այդպես վարվել, սիրելիներս: Ձեր սիրտը լսում է ձեզ, բայց դուք չեք կարողանում նրան լսել, քանի որ գրահի մեջ եք առել նրան: Դուք հաճախ հայտնվել եք կյանքի այնպիսի իրավիճակներում, որոնք վերք են հասցրել ձեր սրտին, իսկ դուք կոպտացել ու դաժանացել եք: Ձեր սրտի առումով դա նշանակում է, որ այն պատվել է գրահով. գրահազգեստ է հագել, որպեսզի պաշտպանվի հարվածներից, այն դաժան հարվածներից, որոնք ձեր կյանքը հասցնում է իրեն: Ուստի դուք պետք է քայլ առ քայլ հալեցնեք այդ գրահն ու գրահազգեստը, որում պատսպարվել է ձեր սիրտը: Դա ձեզ չի հաջողվի անել միանգամից և նույնիսկ մեկ ամսվա ընթացքում: Կարող է և ավելի շատ ժամանակ պահանջվել՝ նույնիսկ ճիշտ այնքան, որքան անտես եք արել ձեր սրտին:

Սակայն որպեսզի վերադառնաք ճշմարիտ Կյանքին, ոչ այն կյանքին, որը ձեզ շրջապատում է, այլ այն ճշմարիտ ու հավերժական Կյանքին, որը վիճակված է ձեզ, դուք պետք է ընթանաք քայլ առ քայլ՝ երբեք կանգ չառնելով և մեկը մյուսի հետևից ձեր սրտի վրայից հանելով ծածկոցները:

Անչափ շատ է չարը, որին բախվում եք ձեր կյանքում: Անչափ շատ են այնպիսի բաները, որոնք ձեր սրտին ստիպում են կույ զգալ: Զրուցե՛ք ձեր սրտի հետ, զգացե՛ք նրա ջերմությունը: Պատկերացրե՛ք, որ սրտով եք շնչում: Սրտի հետ զրույցները պետք է ձեր ամենօրյա գործառնությունը դառնան:

Եվ այն բանին զուգընթաց, որ կսկսեք ավելի ու ավելի շատ ուշադրություն դարձնել ձեր սրտին, կարծանա՛նք նրա փոխադարձ պատասխանին: Եվ ձեր կյանքում կգա այն պահը, երբ ձեր էության խորքում կլսեք ձեր սրտի ձայնը: Դա կլինի շատ նուրբ և գորովալից ձայն: Պետք է աշխատեք շրջապատող կյանքի ունայնության մեջ չկորցնել այդ ձայնը: Պետք է աշխատեք նաև լսել, թե ինչ է ասում այդ ձայնը:

Եվ եթե մեկ անգամ, երկրորդ անգամ ձեզ հաջողվի դա անել, ապա կարելի կլինի ձեզ շնորհավորել վիթխարի հաղթանակի կապակցությամբ: Ուրեմն դուք վերադարձել եք այն ճշմարիտ, Աստծո էությանը, որը գտնվում է հենց ձեր ներսում: Եվ այդ նրբության, ջերմության, Միրո և երանության համեմատ, որը դուք գտել եք ձեր ներսում՝ ձեր էության մեջ, ձեր աշխարհի բոլոր հաճույքները կթվան կոպիտ ու անպետք: Դուք ավելի նուրբ ճաշակ ձեռք կբերեք և կհաղորդակցվեք Աստծո աշխարհի ուրախություններին:

Եվ այնժամ, երբ դա տեղի կունենա ձեր ներսում, կասեք ինքներդ ձեզ. «Իրականացավ... Ես հաղթեցի՝ իմ անիրական մասին: Ես դա կարողացա՛ անել...»:

Սակայն հենց որ ձեր էության ներսում խաղաղություն ու անդորր գտնեք, ամբողջ մնացյալ աշխարհը դուրս կգա ձեր դեմ:

Ես ինչ-որ նոր գաղտնիք չեմ բացում: Այս պատմությունն աշխարհի չափ հին է: Հենց որ ձեր թրթիռները բարձրանում են, դուք վտանգի աղբյուր եք դառնում ձեր շրջապատի աշխարհի համար: Որովհետև ամբողջ մնացյալ աշխարհը շարունակում է սրտերը ծածկած պահել անթափանց գրահի տակ և չի ուզում արձագանքել ձեր Միրուն, որը դուրս է ցայտում ձեր էության միջից:

Ի՞նչ անել նման իրավիճակում. լսել սեփական սրտի ձայնը: Ձեր սիրտը ձեզ կհուշի, թե ինչ անեք: Որպես կանոն, ձեր կյանքի հանգամանքները՝ ձեր կարման, թույլ չեն տալիս, որ դուրս

արծնեք աշխարհի զսպանիրաններից: Եվ դուք ստիպված եք լինում մնալ և Աստծո Գառ դառնալ մատաղի համար: Ստիպված եք լինում ինքնագոհողության գնալ, որպեսզի ձեր արյունով հագեցնեք ծարավներին: Եվ ձեզ բզկտելով, ձեր արյունը խմելով՝ աշխարհը կարող է մի պահ կանգ առնել և մտորել, որ ամեն մի էակի ներսում Աստված կա: Իսկ Աստված հարմար պահի է սպասում, որպեսզի խոսի աշխարհում ապրող ամեն մի մարդու հետ:

Աշխարհում չափազանց քիչ են արթնացածները: Ուստի և նրանց ճակատագիրն է աշխարհի համար մատաղացու Գառներ դառնալը:

Եվ դա կշարունակվի այնքան ժամանակ, մինչև նման հոգիների քանակն այնքան շատանա, որ նրանց Լույսի միավորյալ ներուժը գերակշռության հասնի աշխարհի խավարի նկատմամբ:

Իսկ մինչ այդ յուրաքանչյուր քրիստոս-էակի ճակատագիրը աշխարհին զոհ դառնալը կլինի: Ճիշտ այնպես, ինչպես ժամանակին ես ինձ զոհաբերեցի և խաչվեցի մատերիայի խաչին:

Ես ձեզ ծանոթացրի Վարդե Ուղու էությանը, այն Ուղու էությանը, որով ես ընթացել եմ 2000 տարի առաջ մարմին առնելուց հետո: Դրանից հետո շատ Լույսի հոգիներ են կրկնել իմ Ուղին: Նրանցից ոմանց դուք գիտեք. պատմության մեջ նրանք հայտնի են որպես սրբեր և մարգարեներ: Իսկ ոմանց մասին դուք չեք էլ լսել: Քանզի այդ Ուղու էությունը հանուն աշխարհի փրկության ինքնագոհողությունն է, իսկ երբ դա տեղի է ունենում, այդ մասին չեն խոսում ամեն քայլափոխի:

Ես ձեզ տվեցի Ներքին Ուղու այն պատկերացում, որն ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները:

ԵՄ ԵՄ Հիսուս

Վեհապետ Կուրծիումի
12 դեկտեմբերի, 2009 թ.

Ուսմունք բացասական էներգիաներից ձերբազատվելու մասին

ԵՄ ԵՄ Կուրծիումին:

Հավանաբար ձեզնից նրանք, ովքեր կանոնավորապես կարդում են մեր դեսպանորդի միջոցով ձեզ փոխանցվող մեր ուղերձները, լավ են հիշում ինձ: Ես հաճախ եմ գալիս, և իմ գրույցները հիմնականում վերաբերում են ձեր գիտակցության զարգացմանը: Ես նաև մասնագիտացած եմ այն հոգեբանական խնդիրների լուծման գործում, որոնցով ծանրաբեռնված են ձեր հոգիները:

Ուստի այսօրվա իմ ժամանակը ես կուզենայի հատկացնել մի գրույցի այն մասին, թե ինչից են ծագում ձեր հոգեբանական խնդիրները, և արդյոք հնարավոր չէ՞ դրանցից ձերբազատվել՝ չդիմելով ձեր աշխարհիկ հոգեբույժների օգնությանը: Պետք է ասեմ, որ Համբարձյալ Վեհապետներն ու ձեր աշխարհիկ հոգեբույժները տարբեր կերպ են մոտենում հոգեբանական խնդիրներից ձերբազատվելու հարցին: Աշխարհիկ մասնագետներն օգտագործում են ենթագիտակցականի և անգիտակցականի հասկացությունները այն դեպքում, երբ ես սովորաբար օգտագործում եմ *հոգի* և *նուրբ մարմին* հասկացությունները:

Դրանց մեջ մեծ տարբերություններ չեին լինի, եթե ձեր մասնագետները ձեզ դիտարկեին ոչ թե որպես հաճախորդների, որոնցից կախված է իրենց եկամուտը ֆիզիկական աշխարհում, այլ դիտեին ձեզ որպես հոգիների, որոնք օգնության և օժանդակության կարիք ունեն:

Ես պետք է արձանագրեմ այն ցավալի փաստը, որ գործնականում Երկրում ներկայումս բնակվող բոլոր մարդիկ օգնության կարիք են զգում: Ես նկատի ունեմ այն օգնությունը, որն անհրաժեշտ է ձեզ, որպեսզի լուծվեն մարմնավորումից մարմնավորում ձեր հոգիների վրա ծանրացող հոգեբանական խնդիրները: Մասնագետ հոգեբույժներից շատերը ժխտում են այն, որ հոգին վաղեմի պատմություն ունի և շատ մարմնավորումներով է անցել: Եվ այդ հանգամանքը նրանց թույլ չի տալիս, որ լիարժեք օգնություն ցուցաբերեն դրա կարիքն ունեցող շատ հոգիների: Խնդիրներից շատերը ձեզ ժառանգություն են մնացել անցյալի մարմնավորումներից: Դրանք զանազան ահեր են, ֆոբիաներ, մահվան գրառումներ: Ծատ են այն հոգիները, որոնք ծանրաբեռնված են դրանցով և չգիտեն, թե ինչպես ազատվեն դրանցից:

Ես ձեզ համապիտանի դեղատոմս չեմ տալիս: Ես կարող եմ միայն հանձնարարականներ տալ, իմ հանձնարարականները: Ես ուրախ կլինեմ, եթե դրանք դուք օգտագործեք ձեր կյանքում, և էլ ավելի ուրախ կլինեմ, եթե դրանցով ձեր հոգիները ապաքինվեն:

Առաջին հերթին ձեզ անհրաժեշտ է պարզորոշ գիտակցել այն խնդիրը, որն առկա է ձեր ներսում և իրենով ծանրաբեռնում է ձեր նուրբ մարմինները: Օրինակ՝ դա կարող է լինել ատելությունը հակառակ սեռի նկատմամբ, որը ժառանգել եք անցյալ կյանքից: Այս կյանքում դուք ունեք հրաշալի ընտանիք: Եվ ատելության ու հակակրանքի ոչ մի պատճառ չկա: Բայց ինքներդ

ձեզ հետ ոչինչ չեք կարող անել: Ժամանակ առ ժամանակ դուք ասելության ու ցասման բռնկումներ եք ունենում: Եվ դրանից տառապում եք ինչպես ինքներդ, այնպես էլ ձեր ամենամերձավորները՝ կողակիցը, երեխաները:

Ձեր այդ խնդրի լուծման առաջին և ամենագլխավոր քայլն այն կլինի, որ գիտակցեք այդ խնդրի առկայությունը ձեր ներսում: Դա շատ մեծ և կարևոր քայլ կլինի: Այս տողերը կարդալիս ձեզ հիմա երևի ծիծաղելի է թվում, թե ինչպե՞ս կարելի է չնկատել նման խնդրի առկայությունը: Մի՛ շտապեք հետևություններ անել: Դուք այդ խնդիրը կարող եք նկատել այլ մարդկանց մեջ, սակայն երբ ասելության ու հակակրանքի կարմայական էներգիան գլուխ է բարձրացնում հենց ձեր մեջ, օվկիանոսի ալիքի պես այնպես է ձեզ ծածկում ու կուրացնում, որ այլևս չեք կարողանում սթափ գնահատել իրավիճակը: Ձեր ցատումը ձեզ լիովին արդարացված է թվում, և դուք, ավելի ճիշտ, ձեր մարմնական խելքը, հագարավոր պատճառներ է գտնում, որպեսզի արդարացնի ձեր վիճակը, ձեր վարքն ու ձեր գործողությունները:

Այն դեպքերում, երբ ձեր ներսից վեր է բարձրանում անցյալի մարմնավորումների այդ ահավոր բացասական էներգիան, ձեզ համար շատ դժվար է դառնում ինքներդ ձեզ տիրապետելը: Ձեզ հայտնի չէ, թե անցած մարմնավորումների ընթացքում որքա՞ն անգամ եք հակառակ սեռի կողմից արժանացել ամենադաժան վերաբերմունքի: Ձեզ ստորացրել են, ծեծել և նույնիսկ բռնաբարել ու սպանել: Բոլոր այդ բացասական ապրումների գրառումները որպես ծանր բեռ նստած են ձեր նուրբ մարմինների վրա: Եվ ձեր խնդիրը, ամենաառաջնահերթ խնդիրն այն է, որ գիտակցեք, որ այդ բացասական էներգիան առկա է ձեր ներսում: Իրադրությունը բարդացնում է և այն, որ ձեր կողակիցը նույնպես ունի բեռնաթափման ենթակա նմանատիպ բացասական էներգիա: Եվ, ամենայն հավանականությամբ, եթե այդ բացասական էներգիայի ազդեցության տակ դուք ձեր կողակցին մեղադրում եք ինչ-ինչ գործողությունների կամ մտքերի համար, որոնք այս մարմնավորման մեջ ինքը չունի, ապա դրանք նա ունեցել է իր նախորդ մարմնավորումների ժամանակ և հիմա է արժանանում ձեր հանդիմանանքին: Ուստի ցածրորակ էներգիաներից բուժվելու գործընթացը բարդանում է նրանով, որ դա երկկողմանի գործընթաց է: Եվ ինքներդ կարող եք օգնել մեկդ մյուսին, որպեսզի ձերբազատվեք բացասական էներգիաներից: Դուք պետք է իրար հետ պայմանավորվեք, որ հենց որ մեկնումեկիդ մեջ սկսի գլուխ բարձրացնել բացասական էներգիան, անմիջապես մյուսը մատնացույց անի այդ փաստը: Եվ այդ եղանակով իրար օգնելով՝ դուք կկարողանաք գիտակցել ձեր մեջ այդ էներգիայի առկայությունը: Եվ դրանով իսկ ունակ կդառնաք ձեզնից հատելու այդ էներգիան: Կհասկանաք, որ դա ձեր այն մասն է, որից ցանկանում եք ձերբազատվել:

Եվ ահա հասանք երկրորդ շատ կարևոր քայլին. այն է՝ դուք արդեն գիտակցել եք ձեր ներսում բացասական էներգիայի առկայությունը և այժմ ցանկանում եք ձերբազատվել դրանից:

Այս հաջորդ քայլն ամենահեշտն է: Դուք խնդրում եք Աստծուն, որ Նա ձեզ ազատի ձեր մեջ առկա բացասական էներգիայից: Սակայն, չնայած թվացյալ հեշտությանը, ոչ բոլորն են կարողանում այդ քայլն անել: Որպես կանոն, մարդիկ իրենց գիտակցությամբ շատ թեթևաշարժ են: Նրանք կարող են մեկ կամ երկու անգամ խնդրել Աստծուն, որ ազատի իրենց բացասական էներգիայից, իսկ հետո իսպառ մոռանալ, թե ինչ են խնդրել: Իսկ երբ վրա է հասնում հաջորդ կարմայական պահը, և բացասական էներգիան նորից է գլուխ բարձրացնում, մարդիկ սկսում են տարակուսել: Մի՞թե Աստված դեռ չի ազատել իրենց այդ էներգիայից...

Բանն այն է, պաշտելինե՛րս, որ ձեր մեջ առկա բացասական էներգիան երբեմն ձևավորվում է մի ամբողջ մարմնավորման, երբեմն էլ՝ մի ամբողջ շարք մարմնավորումների ընթացքում: Այդ պատճառով, որպեսզի ձերբազատվեք այդ էներգիայից, հարկ է լինում, որ շատ մեծ ջանքեր գործադրեք: Կարող եք ձեռնամուխ լինել աղոթքային գործառության, կարող եք նաև օգտվել ամսի 23-ի թողության շնորհից, որը մի շարք թելադրությունների մեջ մանրամասնորեն մեր կողմից շարադրվել է մեր դեսպանորդի միջոցով: Կարող եք օգտվել նաև Կարմայական Վարչությանը նամակ հղելու թողության շնորհից, որի մանրամասները նույնպես ձեզ շարադրվել են:

Միայն ամենօրյա ջանքեր, երբեմն մի քանի տարվա ընթացքում, գործադրելով՝ ի վիճակի կլինեք ձերբազատվելու անցյալի բացասական էներգիաներից:

Այն բացասական հատկանիշները, որոնք ձեռք եք բերում ներկա մարմնավորման ընթացքում, անհամեմատ ավելի հեշտ է բեռնաթափելը, քան այն հատկանիշները, որոնք ուղեկցում են ձեզ մարմնավորումից մարմնավորում. դրանք շատ մեծ ջանքեր են պահանջում բեռնաթափման համար:

Եվ շատ հատկանիշներ կարող են բեռնաթափվել ամուսինների անմիջական փոխհամագործակցությամբ: Օր օրի բախվելով մեկդ մյուսի բացասական հատկանիշներին՝ դուք գիտակցում եք, որ դա հենց այն բացասական էներգիան է, որից պետք է ձերբազատվեք: Ուստի փոխադարձաբար ներում եք իրար և մեկմեկու օգնում ձեր ողջ կյանքի ընթացքում:

Միայն այդպես՝ օգնելով մեկի մյուսին, դուք երբեմն ունակ եք դառնում բեռնաթափելու անցյալի կարման: Եվ ամենագլխավոր տարրը, որն ի վիճակի է օգնելու ձեզ անցյալի կարմայի բեռնաթափման գործում, սերն է, որ տաժում եք մեկի մյուսի նկատմամբ: Դա այն ամենաթանկարժեք բանն է ձեր աշխարհում, որն անհամեմատ ավելի արժանի է պահպանման, քան փողերը, իրերը կամ ոսկին:

Ես ուրախ եմ, որ մեր այսօրվա գրույցը կայացավ:

ԵՍ ԵՄ Կույթումին՝ ձեր ու ձեր հոգիների նկատմամբ Միտոլ լի

Հաութամա Բուդդա
13 դեկտեմբերի, 2009 թ.

Ուսմունք Երկրի ընթացիկ իրավիճակի և ձեր հոգևոր որոնումների ուղղության մասին

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան:

Ես եկել եմ մեր դեսպանորդի միջոցով, որպեսզի գրույց վարեմ: Քանզի զգում եմ, որ ձեզնից շատերը սրտակից գրույցի կարիք ունեն:

Երբ լռում է մարմնական խելքը, և խաղաղվում են հույզերը, գալիս է լռության պահը: Այդ պահին դուք կարող եք զգալ իմ ներկայությունը և հասկանալ ինձ: Մեր աշխարհները տարբերվում են իրարից: Եվ այդ տարբերությունն այնքան նշանակալից է, որ ձեզ համար հնարավոր չէ մեր աշխարհում գտնվելը:

Ձեր աշխարհում տարբեր տեսություններ կան, որոնք վերաբերում են այն բանին, թե իբր դուք կարող եք անցում կատարել և հայտնվել մեր չափականության մեջ, կամ թե՝ ձեր ոլորտի թրջանքները կտրուկ կբարձրանան, և դուք կկարողանաք գոյատևել մի այլ էներգետիկական մակարդակում:

Ես նման տեսություններին կողմնակից չեմ և պատրաստ եմ բացատրելու, թե ինչու մարդկության զարգացման ներկայիս փուլում կտրուկ փոփոխությունները ցանկալի չեն: Ես կարող եմ օրինակ բերել ձեր առօրյա կյանքից: Փորձեք պատկերացնել ձեզ առանց հեռուստացույցի, թերթերի, ամսագրերի, առանց ընկերների շրջապատում մի բաժակ թեյի կամ զարեջրի շուրջ ժամանակ անցկացնելու: Կարո՞ղ եք ինքներդ ձեզ պատկերացնել առանց մերձավոր շրջապատի՝ առանց հարազատների, հարևանների, գործընկերների:

Եթե այդ ամենը ձեր շուրջը չլինի, կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչով կզբաղվեիք, ինչպես կանցկացնեիք ձեր ժամանակը:

Առանց նորով փոխարինվելու՝ հինը չի կարող անհետանալ: Դա ակնհայտ է: Եվ եթե դուք ինչ-որ բանից հրաժարվում եք, ապա դրա տեղը պետք է լրացնի մի այլ բան:

Որպես սկիզբ՝ դուք պետք է ձեռք բերեք նուրբ աշխարհին պատկանող բաների նկատմամբ ավելի նուրբ զգացողություն: Ոչ թե աստեղային կամ մենտալային աշխարհները նկատի ունեմ, այլ ավելի բարձր աշխարհները: Դուք պետք է համահունչ դառնաք այդ աշխարհների հետ, զգաք դրանց անդորրը: Ներդաշնակությունը: Պետք է լավ զգաք այդ աշխարհներում: Սկզբում դուք կկարողանաք միայն կարճատև հայացք նետել շղարշից այն կողմ՝ մի թեթև բարձրացնելով շղարշի ծայրը: Կապրեք ձեզ համար նոր վիճակներ, որոնք հիմնված չեն մենտալ դատողությունների ու պատկերացումների վրա: Դրանք հիմնված չեն լինի նաև ձևի կամ ձեզ համար սովորական դարձած պատկերացումների վրա: Եվ այնուհանդերձ դա գոյություն է, գոյություն՝ լինելիության ավելի բարձր մակարդակում:

Դուք կկարողանաք անցնել գիտակցության այլ վիճակների սկզբում ձեր մտասևեռումներով, այնուհետև կհայտնվեք այդ վիճակներում նույնիսկ առանց մտասևեռման՝ ձեր սովորական աշխատանքի, տնային գործերի ընթացքում:

Դրան դուք չեք կարող հասնել մեկ կյանքի ընթացքում: Ձեզնից շատերին հարկ կլինի անցնել շատ մարմնավորումներով, որպեսզի ձեռք բերեք ձեր գիտակցության այդ նոր վիճակները: Դա իրոք այդպես է:

Իսկ երբ խոսք է գնում արագ փոփոխությունների մասին, ապա դրանք հեղափոխության պես մի բան են նշանակում: Հեղափոխություն՝ ձեր գիտակցության մեջ: Եվ, ինչպես ցանկացած հեղափոխության ժամանակ, այս դեպքում նույնպես զոհերն անխուսափելի են: Եվ որքան ցածր է մարդկության գիտակցության միջին մակարդակը, այնքան զոհերի քանակը շատ կլինի:

Որպես բուդդա՝ ես օժտված եմ մարդկության նկատմամբ կարեկցանքի մեծ աստիճանով: Եվ ես կանեմ ինձնից կախված ամեն ինչ, որպեսզի մարդկությունն ընթանա էվոլյուցիոն ուղով՝ զոհերի ու արհավիրքների նվազագույն քանակով:

Ես իրոք պատրաստ եմ գնալ ինքնագոհողության, որպեսզի ձեր զարգացումն ընթանա բնական տեմպերով, առանց բեկումնային թռիչքների: Ըստ այդմ՝ Կարմայական Վարչության մոտակա նիստին ես կարտահայտեմ իմ տեսակետը: Եվ կարծում եմ, որ այս տիեզերքի Բարձրագույն խորհուրդներն ականջալուր կլինեն իմ կարծիքին:

Հազիվ է զգացվում այն համակշռությունը, որն արդեն մի քանի հարյուրամյակի ընթացքում մեզ հաջողվում է պահպանել: Եվ ամեն անգամ, երբ մոլորակի իրավիճակը դուրս է գալիս հսկողության սահմաններից, հաջողվում է այն նորից վերադարձնել անվտանգ հուն: Մինչև այժմ հաջողվել է: Տեսնենք, թե հիմա ինչպես կլինի: Շատ ճիշտ է այն դիրքորոշումը, երբ դուք պատրաստ ենք հանգստություն պահպանելու և աղոթքային վիճակում գտնվելու նույնիսկ այն դեպքում, եթե ձեր շուրջն ամեն ինչ սկսի փուլ գալ: Դա շատ ճիշտ դիրքորոշում է: Քանզի գիտակցության այն վիճակը, որը դուք ունենում եք անցման պահին՝ ֆիզիկական մարմինը լքելու պահին, որոշում է թրթռանքի այն մակարդակը, որով շարունակում եք ձեր էվոլյուցիան: Ուստի շատ կարևոր է հնարավոր բոլոր բեկումնային իրավիճակներում հանգստություն պահպանելը:

Չհամբարձված մարդկությանը երբեք չի ասվել այն պլանների մասին, որոնցով նա կանցնի իր զարգացման ընթացքում: Եվ եթե եղել են մարգարեներ, որոնք ասել են Ճշմարտությունը, ապա այն այնպես է ծածկագրվել, որ երկիմաստ հասկացվի: Նույն կերպ և ե՛ս ձեզ կասեմ, որ չեն պարզաբանվելու ո՛չ ճշգրիտ ժամկետները, ո՛չ ենթադրյալ իրադարձությունները: Իսկ բոլոր նրանք, ովքեր ճշգրիտ ժամկետներ են ասում և իրադարձությունների ճշգրիտ սցենարներ ներկայացնում, ուղղակի խաբում են ձեզ:

Մարդկային քաղաքակրթության զարգացման ուղիներն անկանխատեսելիության տարր են պարունակում, սակայն մինչև այժմ Համբարձյալ Դասերին միշտ հաջողվել է համակշռություն պահպանել և մարդկությանը հետ պահել այն անդունդի եզրից, դեպի ուր երբեմն այդպես եռանդագին նա ուզում է ցատկել:

Մի՛ շտապեք: Այս տիեզերքի Բարձրագույն Վեհապետների տեսակետից՝ ձեր առջև հավերժություն է: Եվ այն բանից, թե որքանով ձեզ կհաջողվի ձեր կյանքերի ընթացքում զգալ այդ հավերժությունը՝ հավերժական անդորրն ու հավերժական երանությունը, կախված է այն, թե ինչ ուղով կընթանա մարդկության հետագա զարգացումը:

Մարդկանց ամբոխների մեջ երբեք չեն եղել ոգու մեծ նվաճումներ: Բոլոր սխրանքները գործվել են անդորրության մեջ՝ մոմի լույսով ու աղոթքով: Ձեր վերելքը ներքուստ է՝ դեպի վեր տանող սանդուղք: Այն օրինակները, որոնք հայտնի են դարձել պատմությանը, սառցասարի ընդամենը վերջրյա մասն են: Եվ այդ եզակի օրինակներով մարդկությունը հնարավորություն ունի շտկելու իր ընթացքի ուղղությունը:

Միայն մեկ Հիսուս է եղել: Բայց նրա ոգու սխրանքով ցայսօր առաջնորդվում են շատ փնտրողներ: Սակայն, որպեսզի ոգու այդ սխրանքը կայանար, պահանջվել են նախապատրաստության ու փորձի երկար տարիներ, որոնք ընդգրկել են անցյալի շատ մարմնավորումներ: Այդպես էլ դուք. ձեզնից դուրս մի՛ փնտեք այն, ինչն անհրաժեշտ է ձեր հոգևոր աճի համար: Ձեր ներսում փնտրեք. այդտեղ է այն դուռը, որ տանում է դեպի հավերժություն:

Ես Ուսմունք տվեցի Երկրի ընթացիկ իրավիճակի և ձեր հոգևոր որոնումների ուղղության մասին:

ԵՍ ԵՄ Հատկաճանա Բուդդան

Սուրբ Միքայել Հրեշտակապետ
14 դեկտեմբերի, 2009 թ.

**Այժմ Երկրի վրա իդեալական պայմաններ են ստեղծված.
ամեն ոք կարող է դրսևորել իր ներքին էությունը**

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը... Ես կրկին եկել եմ...

Այսօր եկել եմ, որպեսզի անհրաժեշտ բացատրություններ տամ ընթացիկ իրավիճակի մասին: Եվ պետք է ձեզ վստահեցնեմ, որ ամեն ինչ այնքան էլ անհուսալի չէ, ինչպես, երևի, ձեզնից որոշներին թվում է: Ամեն ինչ ընթանում է ըստ պլանի, ըստ Աստծո Պլանի և պատշաճ կարգի:

Այլ կերպ պարզապես հնարավոր էլ չէ, քանզի համայն տիեզերքի Օրենքն այնպիսին է, որ այն ամենը, ինչ դեմ է կանգնում համայն տիեզերքի հիմքում դրված Պլանին, որով զարգանում է

տիեզերքը, պետք է սրբվի ու վերացվի: Եվ իմ ու կապույտ բոցի հրեշտակների գործը հենց այն է, որ վերացնենք այն ամենը, ինչ խանգարում է այս տիեզերքի Արարչի Մտահղացման իրականացմանը: Ցանկացած օրգանիզմում հավաքվում են աղակույտեր ու թույներ, որոնցից պետք է ժամանակին ձերբազատվել, որպեսզի օրգանիզմն իր ամբողջության մեջ պահպանի աշխատունակությունը: Երկրի վրա նույնպես կան էություններ, էներգիաներ և որոշակի քանակությամբ մարդկային անհատներ, որոնք որոշել են դեմ գնալ Արարչին:

Կա որոշակի սահման, մինչև ուր թույլատրվում են սնապարծության ու ընդդիմացման դրսևորումները, իսկ դրանից անդին արդեն գալիս է իմ ու իմ հրեշտակների գործելու հերթը:

Ձեզ համար, որ գտնվում եք մարմնավորման մեջ, մեր աշխատանքն աննկատելի է մնում: Ձեր ոլորտում կարծես թե ոչինչ տեղի չի ունենում, կամ, ավելի ճիշտ, ամեն ինչ բնականոն ընթացք է ստանում: Ձեզ համար մեր աշխատանքը դույզն-ինչ անգամ նկատելի չի լինում: Ընդամենը նորություններից լսում կամ կարդում եք հեղթական վթարի կամ արհավիրքի մասին: Չգիտեմ՝ նկատել եք, թե ոչ, բայց հատկապես տարեվերջին զանազան վթարների, արհավիրքների և հիվանդությունների քանակն ավելանում է: Մահն իր հունձքն է անում: Ֆիզիկական ոլորտից հեռացվում է այն ամենը, ինչից այդ ոլորտը պետք է մաքրվի:

Ձեզնից շատերի համար իմ խոսքերը տարակուսանք կառաջացնեն, քանզի ձեր տեսակետից վթարների ու տարերային աղետների զոհերի շարքում շատ են լինում և բոլորովին անմեղ հոգիներ, որոնք մահվան ճարակ են դառնում իրենց ստեղծագործական հնարավորությունների ծաղկման շրջանում:

Մարմնավորված մարդիկ իրենց տեսակետն ունեն իրադարձությունների նկատմամբ, մենք՝ մերը: Իրոք, լինում են դեպքեր, երբ պայծառ հոգիները վաղաժամ անցում են կատարում: Եվ երբեմն դա կապված է լինում մարմնավորված վիճակում եղած հարազատներից կարմայական կապերը խզելու անհրաժեշտության հետ, քանի որ վաղաժամ կորուստն ստիպում է նրանց ավելի մանրագնին մտորել իրենց կյանքի մասին և հիշել Աստծուն: Երբեմն մարդ ինքն է որոշում դուրս գալ մարմնավորումից, քանի որ գիտակցում է, որ այն կենսապլանը, որն ինքն ընդունել էր նախքան մարմնավորվելը, այլևս չի կարող ի կատար ածվել իր կողմից թույլ տրված շատ սխալների պատճառով: Ըստ այդմ՝ անհատն ուզում է մենաստաններում նորոգել իր հոգու համար նախատեսված Աստծո Պլանի տեսլականը և նորացված հայացքով կրկին մարմնավորվել:

Ինչպես տեսնում եք, տարբեր են այն պատճառները, որոնցով մարդիկ վաղաժամ անցում են կատարում, և ոչ միշտ է, որ դա կապված է մեր աշխատանքի հետ:

Մեր աշխատանքը նուրբ ոլորտում է ընթանում: Բայց և այն, ինչ դրսևորված եք տեսնում ֆիզիկական ոլորտում, մեր աշխատանքի արդյունքն է:

Ներկայումս մարմնավորված շատ մարդիկ կան, որոնք հինավուրց Ատլանտիդայի ժամանակներից ի վեր օժտված են մոգական ունակություններով: Այդ ունակությունները կիսաքուն վիճակում են, և մարդիկ իրենք հազվադեպ են դրսևորում դրանք: Հատկապես շատ են այնպիսի մարդիկ, որոնք ժամանակին սև մոգերի ու կախարդների գործառնությունն են իրականացրել զանազան կրոնական հոսանքների ու աղանդների կազմում, որտեղ նպաստավոր հող են գտել, որպեսզի դրսևորեն իրենց մոգական տաղանդների և ունակությունների մնացորդները:

Այդ մարդկանց ներքին էությունը չի բացահայտվում մինչև որոշակի ժամանակ: Եվ կա տիեզերական Օրենք, որը մեզ թույլ չի տալիս միջամտել, քանի դեռ սև մոգության ունակություններով օժտվածը ֆիզիկական ոլորտում չի կատարում այնպիսի գործողություններ, որոնք վնաս են պատճառում ուրիշ մարդկանց կամ ճշմարիտ լուսակիրներին, որոնք այդ ընթացքում ոչինչ չեն կասկածում:

Ձեր ժամանակների բարդությունը հենց այն է, որ Ատլանտիդայի նախկին սև ու սպիտակ մոգերը հայտնվել են միևնույն խմբերի մեջ, միևնույն կրոնական ուղղություններում: Ծառ դժվար է զանազանելը, որովհետև բոլորն էլ խոսում են Աստծուց, Լուսից, Սիրուց ու Բարուց: Բոլորն աղոթում են, մտասնեռվում, կատարում բարի գործեր:

Բայց կա մի տարբերակում, որն առկա է մարդու ներսում: Եվ դա այն ներքին էությունն է, որն ստիպում է մարդուն ծառայել կամ Լուսի ուժերին, կամ պատրանքի ուժերին: Այդպես միշտ է եղել, ուստի Տեր Հիսուս խնդրում էր ձեզ, որ չդատեք գործողություններով, խոսքերով կամ գործերով, այլ դատեք պտուղներով՝ գործերի արդյունքներով*:

Ուստի այժմ Երկրի վրա իդեալական պայմաններ են ստեղծված. ամեն ոք կարող է դրսևորել իր ներքին էությունը:

Մինչև որոշակի ժամկետի լրանալը Օրենքը մեզ թույլ չի տալիս միջամտել: Մենք համբերությամբ սպասում ենք մեր ժամին: Եվ երբ պտուղներն ի հայտ են գալիս, մենք իրավունք ենք ստանում Աստծո արդարադատության ձեռքը մեկնելու դեպի տվյալ մարդը:

Դուք հավանաբար արդեն ձեր երևակայության մեջ պատկերացրիք բոլոր այն մարդկանց, որոնց նկատմամբ, ըստ ձեզ, անհրաժեշտ է կիրառել Աստծո արդարադատություն: Բայց չէ՞ որ Հիսուս ձեզ խնդրել է չդատել*: Քանզի մարդկանց կատարած միևնույն գործողություններն իրենց վերջնական արդյունքում կարող են և՛ բազմապատկել պատրանքը, և՛ հետ հավաքել այն: Եվ Հիսուսի ակնարկած պտուղները, որոնք տվյալ դեպքում ակնհայտորեն ձեզ անորակ են թվում, կարող են լինել այն մարդկանց կարմայի բեռնաթափման արդյունք, որոնց համար այդ պտուղները մահվան ու դժոխքի դեր են կատարում:

Ես այսքան ժամանակ հատկացրի ձեզ համար մեր աշխատանք լուսաբանելու գործին, որովհետև միայն իմ մակարդակից են տեսանելի բոլոր իսկական պատճառներն ու իսկական շարժառիթները: Իսկ դուք միայն կարող եք կանչ հղել, ինձ օգնության կանչել կամ դիմել ինձ ու իմ հրեշտակներին, որպեսզի կրիտիկական իրավիճակում միջամտենք և օժանդակենք Աստծո արդարադատության իրականացման գործին: Ոչ մի դեպքում հույզեր ու զգացմունքներ մի՛ ներդրեք ձեր կանչերում: Արեք դա առանց ավելորդ կրքերի ու մեկուսի: Իդեալական կլինեք, եթե կարողանայիք մշտապես մնալ դիտորդի դերում և չխառնվել որևէ պայքարի:

Որքան շատ էներգիա եք ծախսում ծագած իրավիճակին զգայական գնահատական տալու վրա, որքան շատ եք քննարկում այն, այնքան ավելի ու ավելի շատ եք էներգիան ներքաշում բացասական իրավիճակի մեջ, և, վերջին հաշվով, այդ իրավիճակը ձեր ջանքերով ավելի ու ավելի է վատանում:

Ես խնդրում եմ իմ հանձնարարականները չկիրառել անխտիր բոլոր իրավիճակների նկատմամբ, որոնք ծագում են ձեր կյանքում: Այսպես կարելի է կանխատեսել, որ փոխանակ պառավիճակ օգնեք, որ կտրի-անցնի բանուկ մայրուղին, կգերադասեք մնալ դիտորդի դերում...

Կարևորն այն է, որ ձեր կյանքի յուրաքանչյուր պահի լինեք զգոն և մշտապես վերլուծեք ձեր արձագանքներն այն ամենի նկատմամբ, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը:

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը

*Մտթ. 7:15-20

**Մտթ. 7:1

Վեհապետ Սերապիս Բեյ
15 դեկտեմբերի, 2009 թ.

Ուսմունք սեռական էներգիան ճիշտ ծախսելու մասին

ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը: Դուք ճանաչում եք ինձ. ես հաճախ եմ գալիս այս դեսպանորդի միջոցով:

Հավանաբար նաև գիտեք, որ ես սպասավորում եմ ամենացածր չակրայի՝ մուլադհարայի, ճառագայթով:

Այդ չակրայում ննջում է ձեր Կունդալինիի էներգիան: Դեպի Լույս ձեր համբարձման պահին կուրացուցիչ ճերմակ լույս է ճառագում այդ չակրայից, և Աստծո էներգիան բառացիորեն ձեզ պոկում է ֆիզիկական ոլորտից և վեր հանում դեպի ավելի բարձր օկտավաներ:

Ուստի ես այն Վեհապետն եմ, որն աշակերտներին ճիշտ վերաբերմունք է ուսուցանում Աստվածամոր էներգիայի նկատմամբ:

Ես տեղյակ եմ, որ վերջին հարյուր և ավելի տարիների ընթացքում մարդկությունը բարոյապես խիստ անկում է ապրել: Այդ անկումն արտահայտվում է նաև սեռական էներգիայի նկատմամբ վերաբերմունքով:

Այսօր պետք է մի Ուսմունք տամ, որը շատ շատերին կստիպի այլ կերպ նայել իրենց սեռական մղումներին: Եվ իմ այս խրատատվության նպատակն այն կլինի, որ ինձ լսելու ունակ հոգիներին հետ պահեմ է՛լ ավելի մեծ անկումից և սեռական էներգիայի չարաշահումից:

Ի՞նչ նոր խոսք ու խրատ կարող եմ հաղորդել ձեզ, որ հայտնի եղած չլինի մարդկությանը դեռևս բազմաթիվ հարյուրամյակներ և հազարամյակներ առաջ: Ձեր մշակույթը լուրջաբար է մատնում շատ բաներ, որոնք այնքան բնական են և շատ հազարամյակների ընթացքում փոխանցվել են սերնդեսերունդ: Խոսքս վերաբերում է սեռական էներգիան ճիշտ ծախսելու մասին Ուսմունքին: Հատկապես այն բանով, թե ինչ վերաբերմունք ունեք ձեր այդ գաղտնի ուժի նկատմամբ, որոշվում է ձեր հետագա էվոլյուցիոն ուղին:

Այն դեպքում, երբ կարողանում եք խելամոտորեն օգտագործել ձեր սեռական էներգիան, դուք հաղթահարում եք ձեր կենդանական մասը և մոտենում Աստվածամարդուն: Իմ գրույցի նյութը շատերիդ կցնցի, քանի որ անցյալի ձեր գործելակերպն անխոցելի չի եղել: Ամեն անգամ, երբ

չմտածված ու չարդարացված ձևով վատնում եք ձեր աստվածային կարողությունը, դուք կարմա եք ստեղծում: Ձեր ստեղծագործական կարողությունը, ստեղծագործական ունակություններն ու առողջությունն ուղղակիորեն կապված են այն բանի հետ, թե ինչպես եք կարողանում կառավարել ձեր սեռական էներգիան:

Հասարակությունն այդ թեմայի շուրջ մանրամասն բացատրություններ չի տալիս ո՛չ դպրոցական դաստիարակության, ո՛չ էլ ապագա ծնողներ դաստիարակելու ընթացքում: Մակայն այս կարևոր թեման պետք է զբաղեցնի ձեր միտքը նաև այնժամ, երբ մտահոգվում եք, թե որքանով է հավանական, որ հետագայում կկարողանաք ճիշտ կերպով տնօրինել ձեր սեռական էներգիան:

Ինչպես արդեն նշեցի, սեռական էներգիան ուղղակիորեն կապված է ձեր ստեղծագործական կարողության հետ՝ մարդկային գործունեության ցանկացած բնագավառում որևէ բան արարելու ձեր ունակության հետ: Նաև ձեր սեռական էներգիան որպես վառելիք է օգտագործվում համբարձման ժամանակ: Այստեղից հետևում է, որ պետք է խնայողական, հատուկ խնայողական վերաբերմունք դրսևորել էներգիայի այդ տեսակի նկատմամբ:

Դուք կարող եք առարկել ինձ, թե Աստված է էներգիա տալիս, հետևաբար այդ էներգիայի աղբյուրն անսահմանափակ է:

Դա իրոք այդպես է, բայց պայմանով, որ արդեն օժտված լինեք այդ էներգիայի նկատմամբ ճիշտ վերաբերմունքով: Ի՞նչ եք կարծում, ինչու՞ նյութականացումը, տեղեկորտացիան և դրանց պես շատ հրաշքներ հնարավոր չեն ձեր ժամանակներում: Պատճառներից մեկն այն է, որ Աստծո էներգիայի հոսքը դեպի ձեր մարմիններ առավելագույն չափով փակված է: Աստծո էներգիան մատչելի չէ ձեզ նույնիսկ այն չափով, որը հնարավոր էր դեռևս մի քանի հազարամյակ առաջ: Եվ այն բանին զուգընթաց, որ մարդկությունն ավելի ու ավելի է թաղվում տգիտության մեջ, Աստծո էներգիայի հոսքն ավելի շատ է արգելափակվում:

Ձեզ տգիտություն է թվում այն, երբ չեք կարողանում օգտվել հեռուստացույցից, համակարգչից կամ բջջային հեռախոսից: Ո՛չ, տգիտություն է այն, երբ չեք հետևում համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին: Եվ այդ Օրենքի կետերից մեկը հենց այն մասին է, որ անհրաժեշտ է խնայողաբար ծախսել սեռական էներգիան:

Յուրաքանչյուր մարդ օժտված է որոշակի կարողությամբ, որը կարող է սպառվել ժամանակից շուտ: Իսկ այդ դեպքում ոչ միայն չեք կարողանա ի կատար ածել ձեր աստվածային պլանն ու աստվածային առաքելությունը, այլև կվերածվեք դատարկության՝ մարդու, որի ներսում ներկա չէ Աստված: Ձեր աչքերը կխամրեն, և ձեր երկրային կյանքի ընթացքում արդեն կվերածվեք կենդանի դիակի:

Սեռական մշակույթը հասարակության ընդհանուր մշակույթի մաս պետք է կազմի: Այն, ինչ հիմա մենք տեսնում ենք, նման է հասարակության բարոյական անկման այն փուլին, որը եղել է Սողոմոնի ու Գոմորի ժամանակներում: Հավանաբար լսել եք, թե ինչ կատարվեց այդ քաղաքների հետ:

Մարդիկ կանգնած են Էվոյուցիոն զարգացման տարբեր աստիճանների վրա: Եվ շատ փոքր տոկոս են կազմում այն մարդիկ, որոնք ծննդյան օրից օժտված են Աստծո էներգիայի նկատմամբ ճիշտ վերաբերմունքով: Դրանք Սանատ Կումարայի մաքրակյացներն են: Ըստ էության, այդ մարդիկ շատ մեծ հոգիների լիակատար կամ մասնակի մարմնացումներ են: Կան նաև մարդիկ, որոնք ունակ են վերահսկելու իրենց սեռական էներգիան և այն պահելու որոշակի շրջանակներում: Բայց դրա համար նրանք պետք է իրազեկված լինեն այն մասին, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել սեռական էներգիայի ավելորդ վատնումը: Հասարակության մեջ առկա վարվելակերպի կարծրատիպերն ու զանգվածային մշակույթը չեն նպաստում, որ այդ ասպարեզում ճիշտ վարվելակերպեր ձևավորվեն: Ուստի ծագում է գայթակղությունների նկատմամբ ներքին գիտակցված հակադրություն ձևավորելու անհրաժեշտություն: Եվ ոչ մի դեպքում չպետք է այդ թանկարժեք էներգիան ծախսել հաճույքներ ստանալու համար: Իդեալական կլիներ, եթե այդ էներգիան ծախսվեր միայն սերունդ տալու վրա:

Ես խոսեցի երկու տեսակի մարդկանց մասին, որոնք ունակ են լրիվ կամ մասնակի վերահսկելու իրենց սեռական էներգիան: Մնացած մարդիկ, ցավոք սրտի, այդ հարցում անհամեմատ ցած են իջել կենդանիներից, քանզի այն, ինչ թույլ է տրվում տեղեկատվության զանգվածային միջոցներում ու համացանցում, այլ խոսքերով չես կոչի, քան բարոյական նորմերի լիակատար անկում:

Ամենալուսավոր էներգիան, որը ձեզ նման է դարձնում Աստծուն, մարդկանց ուղեղներում կապվել է այլասերվածության և էլի ինչ-որ անմաքուր բանի հետ:

Ձեր ուղեղներում պետք է կարգուկանոն հաստատվի: Այդ հարցում դուք պետք է Աստվածայինը ջոկեք սատանայականից: Հատիկը որոմից ջոկելն առաջին հերթին այդ հարցում

պետք է լինի, քանի որ ձեր աշխարհում Աստծո էներգիայի ամենամեծ աղավաղումները հատկապես կապված են հնարավոր ամեն տեսակ սեռական աղավաղումների հետ:

Ես ուրախ եմ, որ ինձ հաջողվեց գրույց վարել այս կարևոր թեմայով: Եվ էլ ավելի ուրախ կլինեմ, եթե այս ուղերձն ընթերցած մարդկանց մեջ գտնվեն բավարար քանակի անհատներ, որոնք, դրսևորելով վճռականություն ու համառություն, իրենց մեջ ուժ գտնեն, որպեսզի սանձեն ցանկություններն ու վեր հանեն իրենց Կունդալինիի էներգիան՝ որպես Աստծո Կամքին հավատարիմ լինելու նշան:

ԵՍ ԵՄ Սեդասախ Բեյր

Կոնֆուցիոս

16 դեկտեմբերի, 2009 թ.

Իմաստ ունի միայն ինքն իրեն փոխելը

ԵՍ ԵՄ Կոնֆուցիոսը:

Ես մի փոքր շփոթված եմ, որ ժուս դեսպանորդի միջոցով եմ գալիս: Ես առավելապես Չինաստանում եմ հայտնի:

Սակայն կան ընդհանուր բարդություններ, որոնք բնորոշ են Երկրի վրա ապրող բոլոր ազգերի ներկայացուցիչներին: Եվ կարծում եմ, որ այն, ինչ կմատուցեմ ձեզ, որոշակի հետաքրքրություն կներկայացնի:

Ես իրազեկված եմ որոշ գործընթացներից, որոնք անցյալ դարում տեղի են ունեցել Ռուսաստանում: Եվ դուք գիտեք, որ խռովությունները, հեղափոխություններն ու նման բաներն իմ սրտով չեն: Իմ վերջին կյանքի ողջ ընթացքը ստիպեց ինձ, որ իմ շուրջը տեղի ունեցող ամեն ինչին նայեմ բոլորովին այլ դիրքից:

Ես կտամ ձեզ իմ հայեցակետը: Եվ ուրախ կլինեմ, եթե ձեր կյանքում կարողանաք առաջնորդվել իմ խորհուրդներով:

Դեռևս այն ժամանակ, երբ մարմնավորման մեջ էի, երկար ժամանակ ես մտորում էի այդ թեմայի շուրջ, բայց հիմա, երբ նայում եմ Համբարձյալ Վեհապետի իմ մակարդակից, այդ հայեցակետն այնքան ակնհայտ է երևում, որ հազիվ թե որևէ մեկն այդ թեմայի շուրջ սկսի վիճաբանել:

Թեև ձեզ համար, որ անկատար աշխարհում եք գտնվում, հավանաբար շատ բաներ այլ կերպ են երևում: Եվ այդ դեպքում դուք կարող եք ինքներդ ընտրել, թե ինչին հետևեք և ինչով առաջնորդվեք ձեր կյանքի ընթացքում: Դա ձեր գերակա իրավունքն է՝ ազատ կամքի օրենքը:

Եվ այսպես, ես ինձ թույլ կտամ հեռվից սկսելու: Հնարավոր է, դուք ծանոթ եք այնպիսի փիլիսոփայական համակարգերի, որոնցում ասվում է, որ աշխարհում էներգիայից բացի ոչինչ չկա: Եվ, կախված հաճախականությունից, այդ էներգիան կարող է այնպիսի աշխարհներ ձևավորել, ինչպիսին ձերն է՝ այսպես կոչված, թանձր աշխարհը: Բայց քանի որ ամեն ինչն էներգիա է, ապա ձեր աշխարհի հետ միաժամանակ կարող են գոյություն ունենալ նաև ուրիշ աշխարհներ, որոնց թրթռանքների հաճախականությունը պարզապես ավելի բարձր է: Դուք չեք տեսնում այդ աշխարհները, իսկ մենք, օրինակ, գտնվելով մեր աշխարհում, չենք տեսնում ձեզ: Դա ակնհայտ է:

Ավելի պակաս ակնհայտ է այն, որ ձեր աշխարհի տարբեր կետեր տարբեր թրթռանքներ ունեն: Տարբեր մայրցամաքներ, տարբեր երկրներ թրթռում են իրենց սեփական հաճախությամբ: Եվ երկրագնդի վրա մի տեղից մյուսը տեղափոխվելով՝ դուք կարող եք դա զգալ: Բայց կարող եք զգալ դա այնժամ, երբ համապատասխան սարքավորում ունեք դրա համար: Ես նկատի ունեմ ձեր էներգետիկական սարքավորումը՝ ձեր էներգետիկական կենտրոնները, որոնց զգայնության աստիճանը կախված է ձեզնից:

Երկրագնդի վրա ապրող մարդկանց մեծամասնության համար այն, ինչ ասում եմ, անհասկանալի կլինի: Բայց, բարեբախտաբար, կան մարդիկ, որոնք օժտված են բավարար զգայնությամբ, որպեսզի հասկանան իմ ասածները: Եվ այսպես, մի վայրում գտնվելով՝ դուք հարմարավետություն ու հանգստություն եք զգում, իսկ տեղափոխվելով մի ուրիշ վայր՝ զգում եք լարվածություն ու անհարմարավետություն: Ի՞նչ է սա նշանակում: Առաջին վայրի թրթիռները մոտ են ձեզ, դրանք ավելի շատ են համընկնում ձեր թրթիռներին: Երկրորդ վայրի թրթիռները խիստ տարբեր են ձերինից:

Հետաքրքրե՞ց ձեզ, թե խոսքս ուր եմ տանում: Եթե ունակ եք զգալու իմ ասածները, ապա այս պարզ օրինակով ես ապացուցեցի այն պարզ ճշմարտությունը, որ արտաքին աշխարհը

պարզապես մի հայելի է, որն արտացոլում է ձեր գիտակցությունը: Էներգետիկորեն դուք ձգվում եք դեպի այն վայրը, որտեղ ապրում եք: Եվ, վերջին հաշվով, ամեն ինչ որոշվում է ձեր գիտակցության մակարդակով և այդ մակարդակին համապատասխանող թրթռանքով:

Ուստի իմաստ չունի, որ փորձեք փոխել արտաքին իրադրությունը: Իմաստ ունի միայն ինքն իրեն փոխելը: Եվ այնժամ, երբ ձեր թրթռոները կփոխվեն, դուք կկարողանաք տեղափոխվել այն վայրը, որը համապատասխանում է ձեր նոր թրթռոներին: Շատ մարդիկ խիստ անհարմարավետություն են զգում այն վայրում, որտեղ ապրում են: Եվ իսկապես, ձեր քաղաքներն ապրելու համար հարմար չեն այն մարդկանց համար, որոնք օժտված են որոշակի աստվածային գիտակցության մակարդակով: Նրանք ստիպված տառապում ու մշտական անհարմարավետություն են զգում՝ ապրելով զանգվածային գիտակցության այդ կոյուղիներում: Իսկ գիտե՞ք, թե ինչու չեն տեղափոխվում այն վայրերը, որոնք համապատասխանում են իրենց գիտակցության մակարդակին: Հիմնական պատճառն այն է, որ, որպեսզի տեղափոխվեն նման վայր, նրանք ստիպված կլինեն հեղափոխություն անելու իրենց գիտակցության մեջ: Նրանք ստիպված կլինեն ապրելու բոլորովին այլ պայմաններում՝ բնության գրկում: Եվ ձեր ներսում պայքար է սկսվում: Ի՞նչ անել: Հաշտվե՞լ եղած պայմանների հետ, թե՞ գնալ և ապրել այնպիսի պայմաններում, որոնցում ապրելու մասին որևէ պատկերացում չունեք:

Կանցնի բավականին ժամանակ, մինչև մարդկանց մոլորների վեկտորը ելք կգտնի ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Վերջնական արդյունքում դուք կսկսեք ապրել արժանավայել պայմաններում: Բայց, որպեսզի ապագայի բնակավայրերի գաղափարը նստվածք տա ձեր գիտակցության մեջ, որոշակի ժամանակ պետք է անցնի:

Իսկո՞նք եմ այն մարդկանց, որոնք ստիպված են ապրել մարդկանց հոծ զանգվածի մեջ, ամեն օր նրանց հետ մտնել աուրաների շփման մեջ և, ըստ էության, էներգետիկական դոնորի վերածվել բազմաթիվ մարդկանց համար: Բայց նաև համաձայնեք, որ դա ձեր իսկ նախընտրանքն է: Աստված միշտ ձեզ ընտրության հնարավորություն է տալիս: Եվ եթե չեք տեսնում նոր ուղին կամ այնպիսի տեսք եք ընդունում, իբր չեք նկատում այն, ապա շատ շուտով իրավիճակն է՛լ ավելի կփոխվի: Եվ դուք դուրս կթափվեք ձեր քաղաքներից, ինչպես հասած խնձորներն են թափվում խնձորենուց:

Մարդկության պատմության մեջ եղել է մի շրջան, երբ մարդիկ հիմնականում երկրի վրա ապրում էին մանր բնակավայրերում: Հետո, որպեսզի արհեստները զարգանան, նրանք սկսեցին ապրել ավելի խոշոր բնակավայրերում ու քաղաքներում: Այժմ կան բոլոր հնարավորությունները, որպեսզի մարդիկ ապրեն բնության գրկում և օգտվեն քաղաքակրթության բոլոր բարիքներից: Բայց մի փոքրիկ նրբություն կա. ոչ բոլոր մարդիկ կկարողանան ապրել բնության գրկում: Շատերը կմերժվեն բնության կողմից՝ բնության ոգիներից ու վայրերի թրթռանքներից:

Ամեն ինչ կփոխվի: Ե՛վ կառավարման կառուցվածք, և՛ պետական կառուցվածքը: Եթե մարդկության համար պլանավորված է Ոսկեդար, ապա այն իրականություն կդառնա: Ես չգիտեմ՝ դա Ռուսաստանում կլինի, թե՞ աշխարհի մի ուրիշ երկրում: Վերջին հաշվով, ամեն ինչ որոշվում է այն գիտակցության մակարդակով, որին տիրապետում է երկրի բնակչության մեծամասնությունը:

Ես գիտեմ, որ Համբարձյալ Վեհապետները հույսեր են կապում Ռուսաստանի հետ: Բայց նաև գիտեմ, որ դրանից առաջ հույսեր էին կապել Ամերիկայի հետ:

Առանց նոր գիտակցության հետագա զարգացում հնարավոր չի լինի: Ամեն ինչում հարկավոր են նոր սկզբունքներ: Եվ այդ սկզբունքները, որոնցով հարկավոր է առաջնորդվել, պարունակվում են նաև այս ուղերձներում, որոնք մենք տալիս ենք այս դեսպանորդի միջոցով: Քի՜չ եք համարում կոնկրետ ցուցումները: Բայց համաձայնեք, որ ձեզ համար ձանձրալի կլինեն ապրելը, եթե ամեն օր Համբարձյալ Վեհապետները ձեզ ասեին, թե ինչ հագնեք, որ ժամին արթնանաք և ինչ անեք: Այդպես շատ շուտով մարդիկ կվերածվեն խնամարկյալների, որոնք ունակ չեն հետագա էվոլյուցիա անցնելու: Ո՛չ, մեզ անհրաժեշտ են հոգով ու ժեղ մարդիկ, որոնք ունակ են գործելու և պատասխանատվություն կրելու իրենց գործողությունների հետևանքների համար:

Ես այսօր շատ խոսեցի: Չգիտեմ՝ կկարողանա՞ք արդյոք ամբողջ ասվածից որևէ օգտակար բան քաղել ձեզ համար:

ԵՄ ԵՄ Կոնֆուցիոսը

Տիրուհի Նադա
17 դեկտեմբերի, 2009 թ.

**Դուք ձեր սպասավորությունը կարող եք սկսել հենց այնտեղ,
որտեղ այս պահին գտնվում եք**

ԵՍ ԵՄ Նադան: Ես առաջին անգամն եմ ձեզ այցի գալիս այս դեսպանորդի միջոցով: Այսօրվա իմ խնդիրն է ձեզ պատկերացում տալ այն դերի մասին, որը ձեզնից յուրաքանչյուրը կարող է խաղալ իր կյանքի ընթացքում: Ձեր մտքերում որոշակի ակնկալիքներ ունեք՝ կապված Եղբայրությանը մատուցելիք ձեր հնարավոր սպասավորության հետ: Ես ձեզ համար պետք է լուսաբանեմ այդ պահը: Հարկ չկա սպասելու, սիրելիներս, թե երբ ձեր տրամադրության տակ կունենաք ինչ-որ հնարավորություններ՝ դրամական միջոցներ, իշխանություն կամ պաշտոն:

Եթե կարծում եք, թե ձեզ ինչ-որ բան է պետք, որպեսզի սկսեք ձեր սպասավորությունը, ապա, ձեր արդեն ունեցածը մի կողմ դրած, գործում եք ձեր մարմնական խելքի թելադրանքով: Եղբայրությանը ծառայելու համար ձեր ցանկությունից զատ ուրիշ ոչինչ պետք չէ: Ուրիշ ոչինչ պետք չէ:

Դուք ձեր սպասավորությունը կարող եք սկսել հենց այնտեղ, որտեղ այս պահին գտնվում եք: Այս պահին ինչ անում եք, ձեր կողմից կարող է ուղղվել Եղբայրությանը սպասավորելուն: Հիմա եկեք տեսներ, թե ինչով եք զբաղված:

Ասենք՝ կատարում եք ձեր տնային պարտականությունները: Հրաշալի՛ է: Արդեն իսկ ծառայում եք Եղբայրությանը: Բայց ինչպե՞ս սա ընկալել, որ բնակարան մաքրելով և աման լվանալով՝ ծառայում եք Եղբայրությանը: Օ՛, պաշտելիներս, ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչպես եք դուք դա անում: Ցանկացած մանր ու աննշան գործ, որ անում եք ձեր կյանքի ընթացքում, կարելի է անել մեծագույն Սիրով: Եվ եթե մեծագույն Սիրով եք ձեր գործն անում՝ մտածելով այն մասին, թե ձեր մերձավորներն ու ընտանիքի անդամները որքա՛ն ուրախ կլինեն, երբ մտնեն մաքուր բնակարանն ու հագնեն ձյունաճերմակ այն զգեստները, որ հենց նոր եք մաքրել ու լվացել, ապա արդեն ծառայում եք Եղբայրությանը: Ամեն գործի մեջ կարող եք ներդնել ձեր սպասավորությունը: Եվ եթե ձեր աշխատանքը կատարում եք ամենայն մանրամասնությամբ ու Սիրով, ապա ձեր ցանկացած գործունեությամբ կբարեփոխվի այն տարածքը, ուր մուտք կգործեն ձեր երեխաները կամ ամուսինը՝ հոգնած ու ծանրաբեռնված առօրյա այն ունայնությունից, որում գտնվել են ողջ օրվա ընթացքում: Տանը ձեր ստեղծած Սիրո մթնոլորտն ունակ կլինի ամոքելու նրանց սրտերը և ներդաշնակություն վերահաստատելու նրանց հոգիներում:

Այն դեպքում, երբ գտնվում եք աշխատավայրում, ձեզ համար շատ դժվար է ներքին համակշռությունն ու Սիրո զգացմունքը պահպանելը, որովհետև ներդաշնակ ու բարեհաճ են ոչ բոլոր մարդիկ, որոնց հետ հանդիպում եք օրվա ընթացքում: Ավելի հաճախ բախվում եք մարդկային գիտակցության ոչ ամենալավ դրսևորումներին: Ահա, այստեղ գործունեության լայնարձակ դաշտ է բացվում ձեր սպասավորության համար: Դուք պետք է հմտանաք Սիրո, համբերության և հնազանդության միջոցով ցանկացած բացասական բան չեզոքացնելու գործում: Կյանքում որքա՛ն շատ հնարավորություններ են ձեզ ընձեռվում, որպեսզի դրսևորեք ձեր սպասավորությունը...

Գործնականում ցանկացած գործ, ցանկացած հանդիպում, այն ամենը, ինչ օրվա ընթացքում տեղի է ունենում ձեզ հետ, կարող եք ի նպաստ դնել ձեր սպասավորությանը: Քանզի միայն այնժամ, երբ կտվորեք կյանքի մանրունքներում, առօրյա գործերում գտնել ձեր հոգու լավագույն հատկանիշների գործադրման կետերը, միայն այնժամ, երբ արտաքին իրարանցումները չեն կարողանա խաթարել ձեր ներքին անդորրն ու ներդաշնակությունը, ձեզ համար նոր հնարավորություն կբացվի, որ շարունակեք ձեր սպասավորությունը: Եվ արդեն ձեռք բերած ձեր հատկանիշները կկարողանաք օգտագործել Եղբայրությանը ծառայելու նոր փուլում, որն անբաժանելի է Կյանքի սպասավորությունից:

Որքա՛ն շատերն են ձեզնից օգնության կանչով դիմում Համբարձյալ Վեհապետներին՝ խնդրելով, որ սպասավորման հնարավորություն տրվի, որ հնարավորություն տրվի իրենց դրսևորելու սպասավորման գործում: Պաշտելիներս, մի՛ խաբեք ինքներդ ձեզ: Չէ՞ որ Աստված արդեն հոգացել է ամեն ինչի մասին: Ձեզ համար առկա են լավագույն պայմաններ, որպեսզի սկսեք ձեր սպասավորությունը, աշխատեք ձեր այն հատկանիշների վրա, որոնք ձեզ խանգարում են կենսական ամենաձանր իրավիճակներում դրսևորելու Մեր և հոգաժություն մերձավորների նկատմամբ: Եվ քանի դեռ չեք սովորել կենսական մանրունքներում գտնել մեծ սպասավորություն, չեք կարողանա առաջ ընթանալ Ուղով: Մտածեք, թե իրականում ի՞նչ եք ուզում. լինել նշանավոր ինչ-որ մե՞կը, դեկավարել ինչ-որ բա՛ն, թե՞ սպասավորել:

Այս հարցի պատասխանով կորոշվի ձեր ողջ հետագա կյանքի ուղղությունը: Կա՛մ ողջ կյանքի ընթացքում կապաքարեք, որպեսզի պաշտոն ձեռք բերեք և ինչ-որ մեկին ապացուցեք, որ մեծ հոգևոր նվաճումների եք հասել, կա՛մ էլ կծառայեք՝ կողմնակի ուշադրություն չգրավելով և ավելի ու ավելի մեծ մասշտաբով Երկրի վրա կատարելով Աստծո գործերը:

Ես այսօր եկա, որպեսզի ձեզ տամ ճշմարիտ սպասավորության և կեղծ սպասավորության ըմբռնումների տարբերությունը: Այո՛, սիրելիներս, ինչպես ամեն բան ձեր աշխարհում, սպասավորությունն էլ ունի իր երկու տարբեր կողմերը:

Մշտապես, նախքան ինչ-որ բան ձեռնարկելը, մտորեք, թե ի՞նչն է իրականում ձեզ առաջ մղում: Ուրիշներին ինչ-որ բան ապացուցելու ցանկություն՝նը, ձեր մեծությունն ու ջանասիրությունը բոլորին ցուցադրելու ցանկություն՝նը, թե՛ ձեզ առաջ է մղում Մերը մերձավորի նկատմամբ, որն ի վերուստ հատուկ է ձեզ և իր հետքն է թողնում այն ամենի վրա, ինչ անում եք: Շատ հասարակ գործեր, որոնք արված են անշահախնդրորեն, մեծ ու անվերպահ Սիրով, հավիտյան մնում են ձեզ հետ՝ դառնալով ձեր կաուզալ մարմնի զանձեր: Ձեր երկրային կյանքի կավարտվի, բայց գործի ու մարդկանց նկատմամբ ձեր վերաբերմունքը կմնա և ձեզ կուղեկցի ձեր հաջորդ մարմնավորման ընթացքում:

Ձեր աշխարհում խիստ անբավարար է դրսևորվում Կյանքին ծառայելու այդ հատկանիշը, որն ինքնաբերաբար նաև Եղբայրությանը ծառայել է նշանակում, քանի որ Մեծ Սպիտակ Եղբայրության հիմնական խնդիրը Երկրի մարդկությանը սպասավորելն է:

Ես այսօր ձեզ իրագրեցի դարձրի պարզ ճշմարտությունների: Անգամ վստահ եմ, որ այդ ամենը դուք արդեն գիտեիք. կարդացել էիք կամ լսել:

Բայց, թույլ տվեք հարցնել՝ ի՞նչն է խանգարում, որ ձեր գիտելիքները կիրառեք ձեր կյանքում:

Ձեր գիտելիքների՝ կարդացածի կամ լսածի, և դրանք ձեր կյանքում իրապես կիրառելու միջև երբեմն անդունդ է ընկած լինում:

Դուք պետք է ավելի շատ մտորեք այն մասին, թե ինչն է ձեզ խանգարում, որ կյանքում դրսևորեք աստվածային հատկանիշներ, որից հետո աստիճանաբար՝ քայլ առ քայլ, ձերբազատվեք ձեզ խանգարող ամեն ինչից:

Ես Համբարձյալ Տիրուհի չեի դառնա, եթե գործնական կյանքում, իմ մարմնավորումների ընթացքում, չյուրացնեի ամբողջ այն գիտությունը, որն այժմ ձեզ ուսուցանում եմ: Ես ավարտել եմ երկրային դպրոցը և այժմ մարդկությանը ծառայելու մեծագույն հնարավորություն ունեմ: Մի՛ կարծեք, թե աշխատանքի, մարդկանց, բույսերի կամ կենդանիների նկատմամբ ձեր վերաբերմունքն աննկատ է մնում, երբ ձեր բարի գործերի կամ արարքների ժամանակ վկաներ չեք տեսնում: Ձեր ամեն մի գործողությունը, միտքը, զգացմունքը կամ արարքը, լինի այն բացասական թե դրական, պահպանվում է ակաշիի գրառումներում: Մտորե՛ք այս մասին և կյանքում զգո՛ւ եղեք, որ ձեզնից հետո աստեղային և մենտալային աղբ չթողնեք:

Թո՛ղ որ կյանքով ձեր առաջխաղացումն ուղեկցվի միայն Սիրով ու վարդերի բույրով...

Սիրով՝ ԵՍ ԵՄ Նադան

Վեհապետ Հիլարիոն
18 դեկտեմբերի, 2009 թ.

Կարևոր է այն, թե որքանով եք ունակ պահպանելու ձեր նվիրվածությունը Աստծո Կամքին

ԵՍ ԵՄ Հիլարիոնը: Վստահ եմ, որ ճանաչում եք ինձ: Ես սպասավորում եմ Ճշմարտության, բուժարարության և Աստծո Գիտելիքի ճառագայթով:

Ճշմարտությունը, Աստծո Ճշմարտությունը, ինչպես այն ներկայացվում է ձեզ և ինչպես ներկայացվել է մարդկանց նախորդ սերունդներին, միշտ Աստծո միևնույն Ճշմարտությունն է: Բայց համաձայնեք, որ ամեն անգամ այն նորովի է ներկայանում: Դեռ ավելին, ամեն մարդու համար այն տարբեր է լինում: Նույնիսկ այնժամ, երբ դուք խոսում եք միևնույն առարկայի մասին, կարծելով, թե հասկանում եք մեկը մյուսին, որոշ ժամանակ անց պարզ է դառնում, որ խոսել եք տարբեր բաների շուրջ: Նաև երբեմն լինում է այնպես, որ մարդիկ խոսում են միևնույն լեզվով, երկուստեք հասկանալի բառերով, բայց իրար չեն հասկանում:

Այդ ամենը ցույց է տալիս, որ ամեն մարդ գտնվում է Աստծո Ճշմարտության ճանաչման իր աստիճանի վրա և, որքան էլ ջանա տեսնել, թե այդ Ճշմարտությունն ինչպես է երևում ճանաչման մի այլ աստիճանից, հազիվ թե դա նրան հաջողվի:

Այդ պատճառով մենք կրկին ու կրկին գալիս և փորձում ենք ձեզ տալ Աստծո ճշմարտության ոչ մեծ չափաբաժին, այնպես, որ ձեզնից յուրաքանչյուրը կարողանա իր համար գոնե ինչ-որ բան ընկալել և դա կիրառել իր կյանքում:

Մենք անխոնջ գալիս և ամեն անգամ գիտելիք ենք տալիս, որը կարծես արդեն տրված է եղել, բայց ամեն անգամ գտնվում են մի քանիսը, որոնք իրենց համար ինչ-որ նոր բան են բացահայտում: Եվ հանուն հենց այդ մի քանիսի արժե գալ և գիտելիք տալ: Քանզի ճշմարտությունը, որը մատչելի է դառնում մի քանի մարդու գիտակցության համար, ժամանակի ընթացքում նրանց գիտակցության միջոցով կարող է տիրել ողջ աշխարհին: Եվ դրանից որոշ ժամանակ անց այլևս հնարավոր չի լինի այդ գիտելիքով զարմացնել որևէ մեկին, չնայած ոչ շատ վաղ անցյալում նույն գիտելիքը հարուցում էր մեծամասնության զգուշավորությունն ու կասկածը: Որպես օրինակ կարող է ծառայել այն, որ հիմա ամեն մի դպրոցականի հայտնի է, որ Երկիրը կլոր է և պտտվում է Արեգակի շուրջը, իսկ ընդամենը մի քանի հարյուր տարի առաջ նման հերետիկոսական մտքի համար այրում էին խարույկի վրա:

Հիմա ժամանակները փոխվել են, և խարույկի վրա չեն այրում: Բայց բազմաթիվ ուրիշ եղանակներ կան, որոնցով հասարակությունը ջանում է գլուխն ազատել այն հոգեհան փիլիսոփաներից, որոնք բարբառում են հայտնի ճշմարտություններ և եռանդագին պահանջում, որ դրանք կյանքի կոչվեն:

Բազմաթիվ են այնպիսի մարդիկ, որոնց համար պարզ ճշմարտություններն ընդունելի չեն: Այնպիսի ճշմարտությունները, որոնք կարծես թե այլևս կասկած չեն հարուցում: Օրինակ՝ այս մեկը. «Մի՛ր մերձավորիդ, ինչպես ինքդ քեզ»: Կամ՝ այս մեկը. «Դրացիներիդ չարը մի՛ կամեցիր»:

«Մի՛ նախանձիր»: «Մի՛ գողանա»: «Մի՛ շնանա»: «Մի՛ սպանիր»....:

Կարծես թե այս ճշմարտությունները կասկած չպետք է հարուցեին: Սակայն այն ամենը, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը, այն ամենը, ինչ լուսաբանվում է լրատվության ձեր զանգվածային միջոցներով, հենց այն փաստերի արտացոլանքն են, որոնք հակասում են նշված ճշմարտություններին: Ստացվում է, որ ճշմարտությունները գոյություն ունեն իրենք իրենց համար, իսկ հասարակությունն ապրում է ինքն իր համար՝ իր օրենքներով և իր հայեցողությամբ:

Ի՞նչ եք կարծում, մտքերում ու գործողություններում երկակի ստանդարտների գոյությունը համապատասխանո՞ւմ է Աստծո Կամքին: Եթե չի համապատասխանում, և տիեզերքն էլ զարգանում է Աստծո Կամքին համապատասխան, ապա վաղ թե ուշ վերջ կտրվի իրերի նման վիճակին:

Հիշեք, թե որքա՛ն շատ մարդիկ են միջնադարում այրվել խարույկի վրա ու կտտանքների ենթարկվել: Ներկայումս դա ձեզ երևում է որպես հակամարդասիրական բան և տգիտության արտահայտություն: Ավելի մոտ ժամանակները նայեք՝ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ: Հիշեք համակենտրոնացման ճամբարները Գերմանիայում, զանգվածային հալածանքները Ռուսաստանում: Հիշեք Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները: Մարդկային տգիտության այդ դրսևորումների գոհը դարձան միլիոնավոր մարդիկ:

Իր հիմնական զանգվածով մարդկությունը նույնքան տգետ է մնացել, որքան միջնադարում էր: Հիմա՝ էլ կան անհատներ, որոնք իրենց վարքի ներքին չափորոշիչներն ու մտածելակերպը պահում են աստվածային մակարդակով: Եվ կան անհատներ, որոնք բացահայտորեն ծիծաղում են Աստծո և Հավատի վրա:

Ինչպե՞ս կարող են նրանք համատեղ ապրել միևնույն քաղաքներում: Միևնույն տան մեջ: Եվ ինչպե՞ս կարող է այդ ամենը համաձայնեցվել այն ստվածային սկզբունքների հետ, որոնց մասին խոսում են Վեհապետները:

Իսկապես, Երկիրն ապրում է շատ խավար ժամանակներ: Եվ այս ժամանակներն անհրաժեշտ են ու օրինաչափ, քանի որ հենց հիմա է տեղի ունենում հատիկը որոմից ջոկելու գործընթացը: Ամեն ոք հնարավորություն ունի դրսևորելու իր ներքին էությունը: Եվ ամեն ոք գիտակից ձևով ընտրություն է կատարում: Ծառ քիչ են ընտրյալները՝ նրանք, ովքեր, գտնվելով մնացած մարդկանց ու լրատվության զանգվածային միջոցների զգացական ու մտավոր ճնշման պայմաններում, կարողանում են պահպանել վարքի աստվածային չափորոշիչները:

Սա վերադարձ է միջնադարին: Սա բարոյական նորմերի ու մշակույթի անկում է: Եվ այնպես, ինչպես բույսերի սերմերի միայն հազարերորդական կամ միլիոներորդական մասն է նոր կյանքի ծնունդ դառնում, ճիշտ այդպես էլ մարդկային անհատների միայն մի փոքր տոկոսը կկարողանա շարունակել էվոյուցիան՝ անցնելով զանգվածային գիտակցության աղացի միջով:

Դուք անցնում եք ձեր փորձություններն ու թեստերը՝ չիեռանալով սովորական կյանքից: Եվ ձեր Ձեռնադրումների Ուղին անցնում եք ձեզ շրջապատող սովորական կյանքում: Մտորե՛ք այս մասին: Մտորե՛ք նաև այն մասին, որ կարևոր է ոչ այն, որ ձեր շուրջն ամեն ինչ վատ է, և աշխարհը, կարծես, խեղակորույս վիճակում է: Կարևոր է միայն այն, ինչ տեղի է ունենում ձեր էության

ներսում: Կարևոր է այն, թե որքանով ունակ կլինեք դիմանալու այդ անբարենպաստ պայմաններում և որքանով կկարողանաք պահպանել ձեր վարքի աստվածային չափորոշիչներն ու Աստծո Կամքին ձեր նվիրվածությունը:

Վիթխարի ճակատամարտ է ընթանում երկրագնդի վրա: Եվ եթե նախկինում հնարավոր էր լինում խուսափել այդ ճակատամարտից՝ հեռանալով ուրիշ երկիր, սարերն ու անտառները, ապա այժմ ամբողջ երկրագունդն է հրդեհի բոցերի մեջ հայտնվում, որում հոգիներից ոմանք կայրվեն անվերադարձ, ոմանք էլ, ոսկու պես հալվելով, կգտվեն և ձեռք կբերեն անմահություն:

Ես այսօր ձեզ փոխանցեցի ոչ այնքան մխիթարական բաներ: Բայց ամեն ինչ ասացի այնպես, ինչպես իրականում կա՝ բաց թողնելով որոշ մանրամասներ, որոնք ձեզ տրված չէ իմանալ:

Ուստի, սիրելիներս, ես ուրախ կլինեի, եթե իմ ուղերձը որևէ մեկի համար ծառայեր որպես օգնության ձեռք, որպես օժանդակություն: Քանզի, որքան էլ իմ այս ուղերձը, կարծես, տխուր ստացվեց, նրանում կա մի ուրախ նոտա: Դա ձեր անմահությունն է, որը ձեզնից շատերը պարտավոր են նվաճել մինչև իրենց ընթացիկ մարմնավորման ավարտը:

ԵՍ ԵՄ Հիլարիոնը

Էլոհիմ Կիկլոպետս

19 դեկտեմբերի, 2009 թ.

**Հատկապես ձեր միջավայրում՝ ձեզ շրջապատող քառսի ու կոպտության մեջ,
կարող եմ ծաղկել աստվածային գիտակցության լոտոսները**

ԵՍ ԵՄ Կիկլոպետսը: ԵՍ ԵՄ, շատ հազվադեպ եմ հաղորդակցվում չհամբարձված մարդկության հետ: Ձեզ համար շատ դժվար է ինձ հասկանալը, ինձ համար՝ ձեզ հասկանալը: Մեզ իրարից բաժանում են միլիոնավոր լուսատարիներ: Ես անձն վիճակում եմ, իսկ դուք՝ դրսևորման ցածրագույն կետում:

Այդ պատճառով ես իմ թրթռանքն իջեցրել եմ մինչև ամենացածր սահմանը, որպեսզի իմ էներգիաներով չայրեմ մեր դեսպանորդին: Այնուամենայնիվ սա շատ մեծ բեռնավածություն է թե՛ ինձ, թե՛ նրա համար:

Արարչագործությունը լայնարձակ է, և Ես՝ որպես դրսևորված աշխարհի Արարիչներից մեկը, կոչված եմ հետևելու այդ դրսևորված աշխարհին: Ես մտասկեռվում եմ այդ աշխարհին վերաբերող Աստծո Մտահղացման վրա և տեսնում եմ շեղումներ Աստծո այդ մտահղացումից:

Շեղումները հնարավոր են միայն նախապես տրված սահմաններում: Սակայն շեղումների հնարավոր սահմաններն այժմ մոտենում են իրենց վերջնագծին: Դուք մի կուշտ խաղացիք պատրանքի մեջ: Հասավ նրանց ժամանակը, ովքեր պատրաստ են հիշելու այն աշխարհը, որտեղից դուրս են եկել և ուր պետք է վերադառնան: Երկրային կյանքի ձեր դերերը մոտենում են իրենց ավարտին: Վստահեցնում եմ ձեզ, որ վրա է հասնում այն ժամանակաշրջանը, երբ արտաքին ամբողջ դրսևորվածը պետք է հետ հավաքվի: Բայց այն չի կարող ակնթարթորեն հետ հավաքվել: Պատրանքն արարվել է մարդկային տեսակետից անպատկերացնելի ժամանակահատվածի ընթացքում: Եվ այժմ վրա է հասել շրջադարձային պահը:

Ձեզ համար դա միայն նշանակում է, որ ամեն ինչ կսկսի փոխվել: Էներգիաները, որոնք մենք առաքել ենք ձեր աշխարհ, առաջ են բերել շատ բացասական բաների բարձրացման գործընթաց դեպի դրսևորման ոլորտ: Այն ամենը, ինչ հանգիստ քնած վիճակում էր աստեղային ոլորտի ցածր շերտերում, այժմ արթնացված է և իր դրսևորումն է գտել նույնիսկ լինելիության ֆիզիկական ոլորտում:

Ես խոսում եմ այն իրավիճակի մասին, որը դուք տեսնում եք ձեզ շրջապատող աշխարհում: Իմ խոսքերը ձեզ համար հասկանալի կդարձնեն տեղի ունեցող շատ գործընթացներ:

Աստվածային էներգիաներ: Թրթռանքների ուժեղացում: Թվում է, թե դրանք պետք է դրական գործընթացներ առաջ բերեին ձեզ շրջապատող իրականության մեջ: Սակայն դա տեղի չի ունենում: Ամեն ինչ ավելի է կոպտանում՝ հասնելով անհեթեթության աստիճանի:

Այդպես էլ պետք է լինեի, սիրելիներս: Երբ մոտենում եք հոտած ճահին, ձեզ այնպես է երևում, թե դրա մակերեսը մաքուր է և միայն կապույտ երկինք ու ամպեր է արտացոլում: Հիմա փայտ վերցրեք և խառնեք ճահնի մակերևույթը: Կերևա տիղմ, ճահնախոտ, կզգաք լնացած ջրի գարշահոտը:

Մեր ազդեցությունը ձեր աշխարհի վրա նման է ձեր այդ ազդեցությանը ճահնի հոտած ջրի վրա:

Այժմ պատկերացրեք, թե ինչ խնդիր է կանգնած մեր առջև: Պետք է ողջ այդ փտածի ու գարշահոտության միջից ջոկենք լոտոսների ծիլերը, որոնք աճել են հոտած ճահնի միջավայրում: Այո՛, իրապես, չորս կողմում տիղմ է ու ճահնախոտ: Բայց հենց այդ միջավայրում են ծիլ տվել

մարդկային գիտակցության իսկապես հրաշալի լոտոսները: Հատկապես ձեր միջավայրում՝ շրջապատող քառսի և կոպտության պայմաններում, կարող են աճել աստվածային գիտակցության լոտոսները: Եվ ամեն մի այդպիսի մարդ, ով կարող է այդ միջավայրում դրսևորել Բուդդայի գիտակցություն, հարյուրավոր կիլոմետրեր շառավղով իր շրջապատում ունակ է փրկելու շատ ու շատ հոգիների: Հատկապես հիմա՝ Երկրին տիրած այս խավար ժամանակներում է հյուսվում Բուդդայի գիտակցությանը հասած անհատականությունների Լույսի ցանցը:

Երկրագնդի վրա այս ու այնտեղ մենք տեսնում ենք ձեր կատարյալ գիտակցության բացվող լոտոսները: Հավանաբար ձեզ հետաքրքրում է, թե որտեղ են ամենաշատը բացվում այդ լոտոսները: Դա գաղտնիք է, որը, երևի, ձեզ համար կբացեմ իմ հաջորդ որևէ գալստյան ժամանակ: Բայց հատկապես հենց այդ երկրում կսկսի դրսևորվել նոր գիտակցությունը:

Մեկը նվաճում է ուղղաձիգ ժայռը: Նա վեր է մագլցում՝ առանց ապահովության միջոցների: Բայց բոլոր նրանք, ովքեր կհետևեն նրան, կստանան պարան և օգնություն: Եվ նրանց համար անհամեմատ ավելի հեշտ կլինի Ուղին:

Մենք ձեզ օգնում և օժանդակում ենք այս ուղերձների միջոցով: Դուք պետք է շատ խնամքով վերաբերվեք այն ամենին, ինչ տրվում է ձեզ: Հավաքե՛ք ապահով տեղում այն մարգարիտներն ու թանկարժեք քարերը, որոնք կան յուրաքանչյուր ուղերձի մեջ: Իսկ երբ վրա հասնեն առավել խավար ու մթամած ժամանակները, դուրս կհանեք ձեր կուտակածը, և այն կփրկի ձեր Կյանքը: Ոչ թե ֆիզիկական ոլորտի կյանքը նկատի ունեմ, այլ այն Կյանքը, որը հավերժական է: Ձեր գիտակցությունն այն անցաթուղթը կլինի, որով մուտք կգործեք Հավերժական Աշխարհ: Եվ նա, ով ունակ է աստվածային գիտակցության լոտոսի պես ծաղկել կյանքի ճահճում, իրավունք ունի մուտք գործելու հավերժական Կյանք:

Անցողիկն իմ Աշխարհի մուտք չունի: Միայն ձեր անանց, անմահ մասը կարող է գոյատևել իմ Աշխարհում: Իսկ դրա համար արդեն այժմվանից դուք պետք է հոգ տանեք ձեր անմահ մասի համար: Մի՛ կուտակեք այնպիսի գանձեր, որոնք պատկանում են ձեր աշխարհին. կուտակեք միայն Աստծո Իմաստության գանձերը, որոնք արժեքավոր են բոլոր աշխարհներում:

ԵՄ ԵՄ Կիկլոպետար

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
20 դեկտեմբերի, 2009 թ.

Մեզ հարկավոր է Երկրի կենսահոսքերին ծառայելու ձեր պատրաստակամությունը տեսնել

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը:

Իմ գալուստն այսօր համընկել է Կարմայական Վարչության նիստի սկզբի հետ: Ուստի ես կարճ ուղերձ կտամ՝ կապված այդ սկզբի հետ:

Ձեզ չպետք է վրդովի այն, որ Կարմայական Վարչության նիստը տեղի է ունենում փակ դռների հետևում: Այդպես միշտ է եղել, և չհամբարձված մարդկությունն այդ նիստում տեղի ունեցածի մասին կարող է իմանալ միայն այնքանով, որքանով մենք նրան տեղյակ ենք պահում մեր ուղերձներով:

Պետք է ձեզ ասեմ, որ ներկայիս նիստն այնքան էլ հեշտ ընթացք չի ունենա: Որովհետև մեզ հարկ կլինի շատ ջանքեր գործադրել, որպեսզի համայն տիեզերքի Բարձրագույն Խորհրդին բավարար ապացույցներ ներկայացնենք մարդկության Էվոյուցիոն զարգացման բարեհաջող ընթացքի մասին: Ցավոք, ամեն ինչ ճիշտ և ճիշտ հակառակն է: Մենք փնտրում և ոչ մի դրական տեղաշարժ չենք գտնում, որը համապատասխաներ ամառային արևադարձի նիստից հետո ընկած ժամանակահատվածին:

Վատ չէր լինի, եթե դուք նամակներ ուղարկեիք Կարմայական Վարչությանը և, ի տարբերություն ձեր նախորդ սովորական նամակների, որոնցում ինչ-ինչ բաներ էիք խնդրում անձամբ ձեզ կամ ձեր հարազատների համար, այս անգամ որոշ դրական փաստեր շարադրեիք ձեր կյանքից: Եվ ես անձամբ շատ երախտապարտ կլինեի ձեզ, եթե պարտավորություն վերցնեիք հաջորդ կիսամյակի համար, որ որոշակի քանակությամբ աղոթքներ և Վարդարաններ կկարդաք ընդհուպ մինչև Կարմայական Վարչության հաջորդ նստաշրջանը՝ մոլորակի համակշռությունը պահպանելու նպատակով: Մեզ հարկավոր է, որ տեսնենք մոլորակի կենսահոսքերին օգնություն ցուցաբերելու ձեր բարի կամքի դրսևորումը: Մեզ հարկավոր են ձեր աղոթքային ջանքերը, մեզ հարկավոր է, որ տեսնենք Երկրի կենսահոսքերին ծառայելու ձեր պատրաստակամությունը:

Թվում է, թե շատ հասարակ բաներ եմ խնդրում, որոնց կատարումը շատ ջանքեր ու զոհողություններ չի պահանջի ձեզնից: Սակայն փորձը ցույց է տալիս, նաև ձեր հղած նամակները

տարեցտարի դա հաստատում են, որ Երկրի կենսահոսքերի բարօրությանն ուղղված աղոթքային էներգիայի զոհաբերության խոստում պարունակող մեկ նամակին բաժին են հասնում մի քանի հազար այնպիսի նամակներ, որոնք անձնական խնդրանք են պարունակում սեփական ուսերին ընկած կարմայական բեռը թեթևացնելու վերաբերյալ:

Մարդկության զարգացման մասին կարող են վկայել միայն անշահախնդիր սպասավորության փաստերը: Իմացեք, որ այն հաջորդ փուլը, ուր պետք է մուտք գործի մարդկությունը, կապված կլինի մարդկանց միջև սկզբունքորեն նոր հարաբերությունների հետ: Ընդ որում՝ առաջին տեղում կդրվի անշահախնդրությունը, իսկ երկրորդում՝ սպասավորությունը: Իսկ այդ երկու տարբերակիչ պահերը հնարավոր են միայն անվերապահ Սիրո և անսահման Հավատի հիման վրա:

Ուստի ձեր շուրջը նայեք և տեսեք, թե կա՞րդյոք ձեր շրջապատում այնպիսի մեկը, որ պատրաստ է մարդկային հարաբերությունների այդ նոր փուլին:

Այ, հիմա նոր ձեզ համար հասկանալի կդառնա իմ հուսալքությունը Կարմայական Վարչության նիստից առաջ: Ուրի են անձնագոհության և անշահախնդիր սպասավորության փաստերը: Եվ եթե նույնիսկ հույզերի հորդանքի ազդեցությամբ ձեզ ոգևորություն է համակում, որպեսզի ինչ-որ գործ կատարեք աստվածային Սպասավորության շրջանակներում, ապա հետևեք, թե ինչքա՞ն է տևում ձեր այդ ոգևորությունը: Մի քանի օր: Կես տարի: Մի քանի տարի:

Երբ մենք խոսում ենք մարդկանց միջև նոր տիպի հարաբերությունների հաստատման մասին, ապա դրանք պետք է տեսն նվազագույնը մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը: Վերջ տվեք ձեր շրջապատի մարդկանց նայելուն և նրանց կյանքից օրինակներ բերելուն: Մարդկանց մեջ շատ է տարածված հետևյալ փաստարկը. «Ահա այսինչ մարդիկ Աստծո ոչ մի Օրենքի չեն ենթարկվում և խաղուպարով ապրում են իրենց համար, իսկ ես աղոթում եմ, պաս եմ պահում և դրա դիմաց ոչինչ չեմ ստանում»:

Շա՛տ բնորոշ է ներկայիս մարդկանց... Հավատացեք, որ դուք Նոր Երկիր մուտք չեք գործի հոծ խմբերով, և ոչ ոք ձեզ այնտեղ չի քշի ոչխարների պես: Դուք նեղ դռներով կկարողանաք անցնել միայն ձեր անձնական վաստակի և անձնական նվաճումների շնորհիվ: Իսկ «խաղուպարով» ապրողները կմնան դրսի խավարում: Նրանք ապագա չունեն: Ինչու՞ եք ուզում հավասարվել նրանց:

Ձեր բարդության հիմնական արմատն այն է, որ փոքր է ձեր Հավատը: Դուք դեռևս չեք կարողանում մինչև վերջ հավատ ընծայել Վեհապետների այն խոսքին, որ ձեր կյանքը միանգամյա չէ: Որ ձեզնից շատերի առջև մի ուրիշ կյանք է ընկած: Դուք Աստծուն չափում եք ձեր մարդկային չափանիշներով և փորձում ձեր մարդկային տրամաբանությունը հարմարեցնել Աստծո Օրենքին:

Իսկ ես ձեզ ասում եմ՝ պետք է ենթարկվեք Աստծո Օրենքին և հրաժարվեք ձեր մարմնական խելքի բոլոր հնարքներից ու խորամանկություններից:

Արդյոք որքա՞ն ժամանակ կհերիքի Վեհապետների ցուցումներով շարժվելու ձեր վճռականությունը: Կարծում եմ, որ մինչև մոտակա հեռուստատեսային սերիալը կամ մինչև մոտակա հեռախոսագրույցն ընկերների հետ: Առավել ևս, որ առջևում այնպիսի հրապուրիչ ամանորյա տոներ են, որ զբաղվելու բան կունենաք՝ փոխանակ լսելու Վեհապետների անվերջանալի բարոյական քարոզները...

Ի՛նչ արած, դա ձեր նախընտրանքն է և ձեր որոշումը: Հնարավոր չէ մարդուն ստիպել ընթանալ մի ուղով, որն ամենակարճն է բոլորից: Չգիտես ինչու, մարդիկ միշտ ընտրում են ամենադժվարին ուղին, բայց և որոշ ժամանակ անց չեն զլանում տրտնջալ Աստծուց այն ծանր ճակատագրի ու դժբախտությունների համար, որ իրենց բաժին են հասնում:

Ինձ արդեն շտապեցնում են... Պետք է վերջացնեմ այսօրվա ուղերձս: Բայց կարծում եմ, որ այն հիմնականը, որ ուզում էի փոխանցել ձեզ, հասցրի ասել:

Այսպիսով, ամեն ինչ վերջին հաշվով ինքներդ եք որոշում ձեր նախընտրանքներով: Մեղքը չբարդե՛ք ճակատագրի, Աստծո և Վեհապետների վրա:

ԵՍ ԵՄ Մենն Աստվածային Ուղորդիչը

Ազատության Աստվածուհի
21 դեկտեմբերի, 2009 թ.

Ուսմունք աստվածային Ազատության մասին

ԵՍ ԵՄ Ազատության Աստվածուհին:

ԵՍ ԵՄ այսօր եկել, որպեսզի ձեր մտքերում ու սրտերում ամրապնդեմ Ազատությունը: Ուղերձ տալուց առաջ ես մտորում էի, թե ինչպես լավագույն ձևով տեղեկատվությունը հասցնեմ այս ուղերձներն ընթերցող մարդկանց: Ես այն Վեհապետներից եմ, որոնք հովանավորում են

Ամերիկային: Նյու Յորքում Ազատության կիզակետը ես պահպանում եմ Ամերիկայի և ողջ աշխարհի համար:

Ես նաև Կարմայական Վարչության անդամ եմ, և դուք կարող եք դիմել անձամբ ինձ, հատկապես եթե իմ այս ուղերձն ընթերցելուց հետո հարցեր ունենաք:

Եվ այսպես, ազատության հատկանիշի մասին: Ես չեմ հոգնում այդ հատկանիշի մասին խոսելուց, քանի որ դա այն կարևորագույն հատկանիշներից է, որով մարդն աստվածակերպ է դառնում: Ձեզնից յուրաքանչյուրն ազատության իր պատկերացումն ունի: Սակայն կա ազատության ավելի բարձր տեսակ, որով պետք է առաջնորդվեք, եթե ուզում եք ընթանալ Համբարձյալ Վեհապետների ուսուցանած Ուղով:

Ամենայն պատասխանատվությամբ ես ձեզ պետք է ասեմ, որ այդ հատկանիշը շատ մեծ աղճատումների է ենթարկված: Ամեն ինչ ձեր աշխարհում երկակի բնույթ է ստանում և աղավաղվում: Ազատության հատկանիշը նույնպես բացառություն չի կազմում:

Մենք ազատություն ենք ասում, իսկ շատ շատերը դրա տակ ամենաթողություն են հասկանում՝ ցանկացած պահի զբաղվել խելքներին փչած ցանկացած գործով: Եվ քանի որ նրանց գիտակցությունն անկատար է, ապա արդյունքում զբաղվում են ամենաանպատշաճ բաներով և խիստ դժգոհում են, եթե դրանք անելն արգելվում է իրենց:

Ուստի ես եկել եմ, որ ձեզ համար պարզաբանեմ ազատության հատկանիշը: Եվ որքան դրա դրսևորումը մոտ լինի Աստծուն, այնքան ազատության ավելի բարձր կերպեր կմատուցվեն ձեր ընկալմանը, որպեսզի հետևեք դրանց ձեր կյանքի ընթացքում:

Ազատության ձեր ընկալմանը մատչելի ամենաբարձր տեսակը մատերիայի կապանքներից ազատ լինելն է: Բայց որքանո՞վ է ասածս մատչելի իմ այս ուղերձը կարդացողներից մեծ մասի համար...

Եթե գնանք դարերի խորքը և հիշենք մարդկության վաղեմի պատմությունը, ապա կտեսնենք, որ այդ ժամանակներում մարդկությունը դեռևս խորասուզված չէր մատերիայի մեջ: Նրա գոյատևումն ընթանում էր լինելիության ավելի նուրբ ոլորտներում: Թեև միլիոնավոր տարիներ առաջ է այդպես եղել, բայց ձեզնից ամեն ոք, ով հիմա կարդում է այս ուղերձը, ապրել է այդ ժամանակներում: Երկրի մարդկությունն այն ժամանակ դեռևս գտնվում էր իր մանկահասակ տարիքում:

Մեղսագուրկ լինելով՝ մարդկությունը տիրապետում էր տելեպորտացիայի, նյութականացման ունակություններին և մշտապես Արարչի հետ երանության ու միասնության վիճակում էր:

Սակայն պակասում էր այն տարրը, որը թույլ կտար մարդկությանն էվոյուցիա ապրել և արարել գիտակցված ձևով: Մարդկությունը գուրկ էր բանականությունից: Թե ինչ եղավ հետո, դուք քից-շատից գիտեք: Այն իր արտացոլումն է գտել աշխարհի շատ առասպելներում, լեգենդներում և ուսմունքներում: Մարդկությունը բանականություն ձեռք բերեց՝ շնորհիվ Մեծագույն Ոգիների՝ Սուրբ Կույմարների կամավոր գոհողության:

Այդ հզոր գործիքը ձեռք բերելով՝ մարդկությունն սկսեց այն օգտագործել: Եվ քանի որ մարդկությունը նախապես արդեն օժտված էր ազատ կամքով, ապա նաև հնարվորություն ուներ այդ շնորհից օգտվելու ըստ իր ազատ կամքի:

Եթե բանականությունն օգտագործվում էր Արարչի Կամքին համապատասխան, ապա մարդկային անհատները ծիածանագույն թաղանթներ էին հավելում իրենց կաուզալ մարմնին: Իսկ եթե այդ նույն բանականությունն օգտագործվում էր էգոյի քմայքները բավարարելու համար, ապա Աստծո էներգիան նստվածք էր տալիս և թանձրացնում տարածությունը: Միլիոնավոր տարիներ անցան, և աշխարհը դարձավ այնպես թանձր, ինչպես հիմա է ձեզ երևում: Բանականության և ազատ կամքի շնորհների սխալ օգտագործման հետևանքով մարդկությունը միլիոնավոր տարիների ընթացքում փաստորեն կերտեց հոգու բանտ: Քանզի ձեր իսկ ստեղծած թանձր աշխարհն ավելի ու ավելի շատ կապանքների մեջ առավ նախապես ձեզ տրված ազատությանը: Եվ այժմ դուք գտնվում եք ձեր թանձր աշխարհում՝ դրա հետ կապված լինելով բազմաթիվ կապերով: Դրանք ձեր իսկ ստեղծած կարմայական կապերն են, որոնք արտահայտվում են աշխարհիկ գայթակղությունների և իրեղենի հետ բազում կապվածություններով:

Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեր հոգիներում մղում առաջացնեմ դեպի աստվածային Ազատությունը՝ որպես ազատագրություն նյութականի կապանքներից: Ժամանակն է, որ սկսեք գիտակցել այն պարզ բաները, որոնք ձեզ ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները: Առաջին հերթին ձեր գիտակցությունը պետք է ազատագրվի: Ձեր գիտակցության մեջ պետք է ձեռք բերեք աստվածային Ազատության զգացում՝ որպես կապագերծում մատերիական աշխարհից: Չնայած, թե ինչ կապերով եք կապված այդ աշխարհի հետ: Վերլուծեք ձեր բոլոր կապվածությունները: Արդյո՞ք դրանք հիմա այդքան կարևոր են ձեզ համար: Չե՞ք ենթարկվում արդյոք մեծամասնության ինտեր գիտակցության թելադրանքին:

Մարդկությունը, նրա յուրաքանչյուր անհատը կանգ է առել էվոյուցիոն զարգացման որոշակի փուլում: Հարկ է, որ գտնվեն որոշակի թվով մարդիկ, որոնք ունակ են արձագանքելու իմ խոսքերին և իրենց գիտակցության մեջ արթնացնելու աստվածային Ազատությունը՝ որպես ազատագրություն մատերիայի հետ ունեցած ամեն մի կապվածությունից:

Ես չեմ ասում որևէ նոր բան, որ ուսումնասիրված չի եղել ձեռնադրյալների դպրոցներում: Գլխավոր հիմնադրություններից մեկը, որն ուսուցանվել է այդ դպրոցներում, մատերիայի կապանքներից ամբողջովին ազատ լինելն է, մասնավորապես, ցանկացած իրեղեն սեփականության հետ կապվածությունից ազատ լինելը:

Ես շատ լավ գիտակցում եմ, որ այս պահին ողջ աշխարհն առաջնորդվում է մարդկանց կողմից գրված օրենքներով, որոնք առաջին հերթին կոչված են պաշտպանելու սեփականության իրավունքը:

Ձեզ տարօրինակ չի՞ թվում արդյոք այն, որ այդքան շատ հաստատություններ, դատարաններ, պետական և մասնավոր կառույցներ միահամուռ ջանք են թափում, որպեսզի ամրագրեն որևէ մեկի սեփականության իրավունքն ինչ-որ բանի նկատմամբ:

Իմ և Համբարձյալ Վեհապետների տեսակետից՝ դա կատարյալ անհեթեթ զբաղմունք է: Ինչպե՞ս է հնարավոր տիրանալ մի բանի, ինչն իր արարման պահից սկսած արդեն տեր ունի: Ամեն ինչ պատկանում է Աստծուն, և ամենայն ինչ Աստված է:

Հիմա երևի պատկերացրիք, թե ինչ անդունդ է ընկած Համբարձյալ Դասերի գիտակցության և մարդկային անհատների մեծ մասի գիտակցության միջև: Եվ արդեն տեսնում եք, թե ինչի վրա պետք է աշխատեք:

Ինչպե՞ս առանց ավելորդ ցնցումների և հավանական գոհերի քանդել ձեր կապվածությունների գործյան հանգույցը: Ինչպե՞ս մեկը մյուսի հետևից արձակել կարմայական կապերը՝ Կյանքին վնաս չպատճառելով: Ահա սա է այն խնդիրներից մեկը, որ փորձում են լուծել Համբարձյալ Վեհապետները և, մասնավորապես, Կարմայական Վարչությունը:

Իհարկե, կարելի է սրի հարվածով հաշվված վայրկյանների ընթացքում հատել մարդկության կարմայի հանգույցը: Բայց որքա՞ն մարդկային հոգիներ կկործանվեն այդ ընթացքում...

Ուստի մենք գալիս և ամեն անգամ դիմում ենք նրանց, ովքեր ունակ են մեզ լսելու: Շատ լավ հասկանում եմ, որ կարելի է թռչել տիեզերք, ստեղծել գերժամանակակից տեխնիկա, գետեր շուռ տալ... Եվ այդ ամենն անելն ավելի հեշտ է, քան փոխել գիտակցությունը, որպեսզի ոտք դնեք էվոյուցիայի հաջորդ աստիճանին:

Ես այս օրով եղա ձեզ հետ: Եվ հիմա ժամանակն է, որ հեռանամ:

ԵՍ ԵՄ Ազատության Աստվածուհին

Աթենաս Պալլաս

22 դեկտեմբերի, 2009 թ.

Մենք ձեր օգնության կարիքն ունենք

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը՝ ձեզ այցի եկածը: Մեր նախորդ հանդիպումից հետո անցել է մի քանի տարի: Ես շատ հազվադեպ եմ հաղորդակցվում չհամբարձված մարդկության հետ:

Բայց ահա եկել է այն ժամանակը, երբ կարող եմ ձեզ հետ խոսել: Ոչ այն բանի համար, որ այդպես է պետք, այլ պարզապես հասել է իմ հերթը, և ես էլ ձեզ ասելու բան ունեմ: Ես սպասավորում եմ Աստծո Ճշմարտության գծով, և հույս ունեմ ձեզ փոխանցելու Աստծո Ճշմարտության նկատմամբ իմ նվիրվածության մի մասնիկ:

Ձեր կյանքում կա ինչ-որ ավելի մեծ բան, քան այն, ինչով շրջապատված եք ֆիզիկական աշխարհում: Ե՛վ հասարակության զարգացման աստիճանը, և՛ այդ հասարակության ընդհանրական գիտակցության մակարդակը, վերջին հաշվով, որոշվում են այն բանով, թե այդ հասարակությունն ինչ վերաբերմունք ունի հավերժական, անանց արժեքների նկատմամբ: Դրանցից են գեղեցկությունը, Սերը, ներդաշնակությունը, խաղաղությունը... Եվ հենց այդ անանց արժեքների շարքին է առնչվում Աստծո Ճշմարտությունը:

Տարբեր ժամանակներում մարդիկ տարբեր կերպ են ընկալել ու վերաբերվել Աստծո Ճշմարտությանը: Եղել են անկման շրջաններ, ինչպիսին հիմա ձեր ժամանակներն են, երբ մարդիկ մոռանում են Աստծուն ու անանց արժեքները: Եղել են նաև զարթոնքի շրջաններ, երբ արվեստները ծաղկում են ապրել, և մարդիկ նորից վերագտել են իրենց հոգու ներքին վեհությունը:

Շատ հազարամյակներ առաջ նման զարթոնք է եղել այն երկրում, որտեղ ինձ պաշտում էին՝ որպես Աստվածուհու: Ես այդ երկրի ծաղկման շրջանի ականատեսն եմ եղել: Այդ շրջանում էր, որ

ինձ նվիրված տաճարներ կառուցվեցին, և մարդիկ ինձ անկեղծորեն պաշտում էին: Այնուհետև ամեն ինչ սկսեց անկում ապրել:

Փոքրաթիվ այն մարդիկ, որոնք շարունակում էին նվիրված մնալ Աստծո ճշմարտությանը, հասարակության կողմից այլևս հարգանքի չէին արժանանում: Հասարակությունը սկսեց գերապատվություն տալ ոչ ամենալավ վարվելակերպերին: Եվ այն կողմնորոշիչները, որոնք արդեն գերակշռում էին հասարակության մեջ, հանգեցրին երբեմնի հզոր երկրի անկմանը:

Նույնը հիմա ձեր աշխարհում է: Բայց ներկա իրավիճակը բարդացնում է այն, որ գերաբազ հաղորդակցության և երկրների միջև մեծապես զարգացած կապերի հետևանքով այն կերպերը, որոնք տիրում են գիտակցությանը մեկ կամ մի քանի երկրներում, որոշ ժամանակ անց լայնորեն տարածվում են ամբողջ աշխարհում:

Եվ շատ ցավալի է, որ հաղորդակցության բնագավառի այդքան մեծ նվաճումները մարդկային հասարակությունն օգտագործում է ոչ թե հոգևոր զարգացմանը զարկ տալու նպատակով, այլ ներդնում է այն արտադրությունների զարգացման մեջ, որոնք ծառայում են մարմնական հաճույքների բավարարմանը:

Այն հասարակությունը, որը չի հարգում իր մարգարեներին և չի հետևում հավերժական ճշմարտությանը, դատապարտված է աստիճանական անկման ու մահացման:

Ես գիտեմ, թե ինչ եմ ասում ձեզ: Որպես Կարմայական Վարչության անդամ՝ ես շատ եմ անհանգստացած մոլորակի վիճակով: Ինչպես մենք տեսնում ենք, ամեն մի հավերժական, աստվածային պահվածքի կողքին մարդկային գործունեության ցանկացած բնագավառում, որին նայելու լինես, կան հարյուր և ավելի անաստված պահվածքներ և դրսևորումներ:

Ես տխուր եմ դրա համար: Տխրությունս անսահման է...

Կան մեթոդներ, որոնցով կարելի է կարգավորել հասարակությունում ընթացող գործընթացները: Եվ մենք դրանք կիրառում ենք: Սակայն մեզ դառնացնում է ոչ միայն այն, որ ձեր հասարակությունում տեղի են ունենում գիտակցության մակարդակի իջեցնող բաներ, այլ նաև այն, որ շատ ու շատ լուսավոր հոգիներ, որոնք բոցավառ սրտերով մարմնավորվել էին, որպեսզի ի կատար ածեն Լուսի հանձնարարականները, իրենց կյանքի ճանապարհին այնքան շատ զայթակողությունների են հանդիպում, որ չեն կարողանում դրանք հաղթահարել: Ես ողբում եմ այն բազմաթիվ հոգիների համար, որոնց անձամբ գիտեմ և հովանավորել եմ: Ողջերթի խոսքերով ես նրանց ճանապարհել եմ դրել դեպի մարմնավորում: Որքան դառնացա, երբ իմացա, որ այդ հոգիները կա՛մ հավերժ կորած են Էվոյուցիայի համար, կա՛մ էլ այնքան են սուզվել կյանքի ճահճի մեջ, որ այլևս հնար չունեն դուրս պրծնելու իրենց շրջապատող տիղմի միջից: Ահա սա է ինձ դառնություն պատճառում:

Ես այսօր եկել եմ, որպեսզի դիմեմ այն հոգիներին, որոնք Աստծո ճշմարտություն են քարոզում: Աստծո ճշմարտությունը կրոնական և ազգային պատկերներ չի ճանաչում: Մարդիկ, որոնց սրտերում Աստծո ճշմարտությունն է հնչում, երկրագնդի վրա ցրված են տարբեր երկրներում: Ահա նրանց է, որ դիմում եմ այսօր:

Դեռևս ժամանակ կա, և դուք կարող եք ինչ-որ բան անել, որպեսզի հնարավորինս շատ հոգիների փրկեք կյանքի փոթորկոտ ջրերից և այն դժոխային կրակներից, որոնք, Երկրի վրա այս ու այնտեղ բռնկվելով, հրո ճարակ են դարձնում ամմեղ հոգիների:

Ես ձեզ խնդրում եմ աշխարհը սնուցել կատարյալ աստվածային կերպերով, որոնք արվեստի տարբեր ճյուղերի արգասիք կարող են լինել: Ես խնդրում եմ ձեզնից կախված ամեն ինչ անել, որպեսզի երիտասարդությունը պատկերացում ստանա գեղեցիկի մասին:

Օ՛, ԵՄ՝ ճշմարտության Աստվածուհիս, ահա ծնկաչոք իջնում եմ ձեր առաջ: Ես չեմ կարող անել այն, ինչ կարող եք անել դուք՝ ներկայումս լինելով մարմնավորման մեջ: Ես աղաչում եմ, որ ձեր ուժերի ներածին չափ ամեն ինչ անեք:

(Դադար)

Հիմա, երբ սպառվում են ինձ հատկացված ժամանակը և ուղերձի համար հատկացված էներգիան, իմ պարտքն եմ համարում ձեզ տեղեկացնել, որ Կարմայական Վարչության այս նիստը շատ ծանր ընթացք ունեցավ: Եվ մենք տիեզերքի Բարձրագույն Խորհրդին չկարողացանք համոզել, որ անհրաժեշտ է կրկին հարկ եղած չափով էներգիա հատկացնել մոլորակի համակշռության պահպանման համար: Ուստի, խնդրում եմ, մի՛ զլացեք և մինչև տարվա ավարտը ժամանակ հատկացրեք աղոթքային գործառությանը: Մեզ էներգիա է հարկավոր, որպեսզի կարողանանք ծածկել Երկիր մոլորակի նուրբ ոլորտում այս ու այնտեղ գոյացող խոռոչները: Մենք ձեր օգնության կարիքն ենք զգում:

Ես ուղերձներով հազվադեպ եմ գալիս: Եվ այսօր եկա, քանի որ պարտավոր էի օգտագործել ընձեռված հնարավորությունը:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը՝ ձեր նկատմամբ Հույսով

Գուան Ին
23 դեկտեմբերի, 2009 թ.

**Թող որ իմ Գթասրտության ու Կարեկցանքի
ճառագայթը հասնի ձեր սրտերին**

ԵՍ ԵՄ Գուան Ինը: Ես այսօր ձեզ այցի եմ եկել՝ ձեզ հետ զրուցելու ցանկությունից դրդված: Իմ զրույցը կշռափի ձեզ համար հրատապ մի թեմա: Այսօր ես եկել եմ՝ որպես Կարմայական Վարչության անդամ, և պետք է ձեզ կարևոր մի բան հայտնեմ:

Նախաբանս երկար չի տևի: Հուսով եմ, որ դուք հասկանում եք ընթացիկ պահի ողջ պատասխանատվությունը:

Դեռևս ցավալի փաստ է մնում այն, որ մարդկությունն իր հիմնական մեծամասնությամբ պատրաստ չէ ընկալելու այն ճշմարտությունները, որոնք միլիոնավոր տարիների ընթացքում նրան ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները:

Ներկայումս մարմնավորման մեջ են մնացել մարդկության այն ներկայացուցիչները, որոնք, բազմաթիվ անգամ մարմնավորվելով, եթե կարելի է այսպես ասել, կյանքի դպրոցում մնացել են նույն դասարանում:

Նրանք մարդկության լավագույն ներկայացուցիչները չեն:

Եվ նրանց մեջ կան այնպիսիները, որոնք պատրաստ են շարունակելու Էվոլյուցիոն զարգացման ուղին, բայց նաև կան այնպիսիները, որոնք այլևս ունակ չեն դա անելու, և ես իմ խորին ափսոսանքն եմ հայտնում այդ առթիվ:

Հիմա այն ժամանակներն են հասել, երբ տեղի է ունենում հոգիների տեսակավորում: Հավանաբար, առիթ ունեցել եք այդ մասին լսելու: Տարբեր կրոնական համակարգերում այդ ճշմարտությունը տարբեր կերպ է մատուցված, բայց նշմարելի է բոլոր ճշմարիտ հոգևոր ուղղություններում: Ես այժմ գերծ կմնամ այն զանազան նոր ուղղությունները լուսաբանելուց, որոնցից ամեն մեկը յուրովի է մատուցում այդ ճշմարտությունը:

Այսպիսով, մարդկությունը հասել է իր զարգացման այն կետին, երբ նրա չափազանց շատ ներկայացուցիչներ պատրաստ չեն հետագա Էվոլյուցիային: Լինելով Բարեգթության ու Կարեկցանքի Աստվածուհին՝ ես այն հանգուցային օղակներից մեկն եմ ներկայացնում, որտեղ վերջնական որոշում է կայացվում այդ հոգիների համար: Ամեն անգամ փորձում եմ կառնել հոգու բարի զգացումներին որևէ հատկանիշից կամ դրսևորումից, որի նկատմամբ վերջնական որոշում պետք է կայացվի: Եվ որքան ծանր է լինում ինձ համար, երբ, զննելով ակաշիի գրառումները, ես չեմ գտնում որևէ բան, որ առողջ ու զարգացման պատրաստ լինի այն անհատի ներսում, որն իր նուրբ մարմինների համակարգով կանգնած է լինում իմ առջև:

Իմ առաքելության ամենադառը մասն այն է, երբ ստիպված եմ լինում ընդհատելու այս կամ այն մարդկային անհատի զարգացումը: Նման դեպքում անհրաժեշտ է լինում առաջնորդվել Բարեգթության ու Կարեկցանքի սկզբունքներով, բայց արդեն ոչ այնքան տվյալ անհատի նկատմամբ, որքան այն անհատների, որոնք, կարմայորեն կապված լինելով նրա հետ, զարգացում չեն ունենա, քանի որ մարմնավորումից մարմնավորում կրնկեն միևնույն թակարդների մեջ՝ կազմված խարդավանքներից, սպառնալիքներից և նույնիսկ բռնություններից ու սպանություններից:

Եվ հանուն այն բանի, որ ազատեմ այդ հոգիներին չափազանց ծանր բեռից, ես կայացնում եմ իմ որոշումը:

Իմ աշխատանքի այդ հատվածն ամենաբարդն է: Ըստ էության, ես ինձ վրա պատասխանատվություն եմ վերցնում մարդկային անհատների ճակատագրերի որոշման հարցում: Եվ, հավատացե՛ք ինձ, իմ առջև կանգնած անհատի համար ես անմխիթարական որոշում եմ կայացնում միայն այն դեպքում, երբ մինչև վերջին սահմանը սպառված է լինում իմ

Բարեգլխության ու Կարեկցանքի ողջ պաշարը, որն իր չափերով անհամեմատելի է այն բարեգլխության ու կարեկցանքի հետ, որը մարդկության լավագույն ներկայացուցիչներից որևէ մեկը երբևէ կարող է պատկերացնել:

Հասել է այն ժամանակը, երբ պետք է մարմնավորվեն նոր ռասայի ներկայացուցիչները: Նրանք շատ երկար են սպասել իրենց մարմնավորման հնարավորությանը: Որպեսզի նրանք կարողանան մարմնավորվել, Երկրի վրա պետք է համապատասխան պայմաններ ստեղծվեն: Երկիրն առավելագույն չափով պետք է մաքրված լինի մեռած ու իրենց դարն ապրած բաներից: Այլապես աշխարհի ոսկե երիտասարդությունը՝ մարդկության լավագույն ներկայացուցիչները, չեն կարողանա գոյատևել այն պայմաններում, որոնք այժմ գոյացել են Երկրի վրա:

Տիեզերական այդ փականը պետք է ջարդվի: Եվ ես կանխագգում եմ, որ Կարմայական Վարչության նիստին ինձ կվիճակվի շատ ու շատ դժվարին որոշումներ կայացնել: Բայց իմ բոլոր որոշումները կկայացվեն հանուն Աստծո և Էվոյուցիայի բարեհաջող ընթացքի:

Ես պետք է կանգ առնեմ ևս մի կարևոր պահի վրա: Այժմ Երկրի վրա մարմնավորված մարդկության շատ ու շատ լավագույն ներկայացուցիչներ կան, որոնք կամավոր գոհողության են գնացել՝ այս բարդ ժամանակներում մարմնավորվելով: Նրանք շատ լավ պատկերացրել են, որ մեծ է հավանականությունն այն բանի, որ իրենց առաքելությունը կձախողվի, և իրենք չեն կարողանա այն իրականացնել: Ես դիմում եմ ձեզ՝ ձեզնից նրանց, ովքեր հնարավորություն ունեն կարդալու իմ այս ուղերձը:

Շնորհիվ Աստծո մեծ ողորմածության՝ մենք ունենք մեր դեսպանորդի միջոցով այս ուղերձները տալու հնարավորությունը: Մի՛ կարծեք, թե այսպես միշտ կշարունակվի: Մա մեր օգնության ձեռքն է, աստվածային հնարավորության այն ճոպանը, որը ձեզ համար իջեցրել են ձեր այն եղբայրներն ու քույրերը, որոնք արդեն բարձրացել են Էվոյուցիայի հաջորդ աստիճանի վրա: Ամեն անգամ ուղերձ տալու հնարավորություն ձեռք բերելով՝ մենք ամենից առաջ և առաջին հերթին հույս ենք տալիս մատերիայի մամլիչից դուրս հանելու նրանց, ովքեր, ինքնագոհողության գնալով, մարմնավորվել են այս բարդ ժամանակներում: Ձեզնից շատերին ընդամենը մի փոքրիկ էներգետիկական ազդակ է պետք, որպեսզի արթնանաք և բարձրանաք գիտակցության այնպիսի մակարդակի վրա, որը թույլ կտա ձեզ հիշել ձեր աստվածային առաքելությունը:

Ահա ձեզ է, որ դիմում եմ հիմա: Թո՛ղ որ Բարեգլխության ու Կարեկցանքի իմ ճառագայթը հասնի ձեր սրտերին: Թո՛ղ որ չքանան այն պատկերները, որոնք հեռու են պահում ձեզ Բարձրագույն Իրականության մեջ արթնանալուց...

Առաջին հերթին ես հենց ձեզ եմ դիմում: Մինչև տարեվերջ կարող եք ձեր նամակներով անձամբ դիմել ինձ և օգնություն խնդրել: Ես հանձն եմ առնում օգնել, քանի որ չեմ կարող չարձագանքել ձեր օգնության կանչին: Իմ պարտքն է ձեզ օգնել դուրս գալու այն ծանր կարմայական իրավիճակից, որի մեջ ընկել եք հմտության ու փորձառության պակասի պատճառով, քանի որ ձեր սրտերը ձեր շրջապատում չարը չեն տեսնում, այլ տեսնում են միայն բարին:

Արդարությունն ի վերջո կհաղթանակի, և ես ձեզ չեմ լքի, ինչ էլ որ պատահելու լինի ձեր այս մարմնավորման ընթացքում: Ես դա ձեզ խոստանում եմ:

ԵՄ ԵՄ Գուն Ինր

Վայրոչանա Բուդդա
24 դեկտեմբերի, 2009 թ.

Ոգու կրակներ, սրտի կրակներ. ահա թե ինչը ձեզ պետք է մտահոգի առաջին հերթին

ԵՄ ԵՄ Վայրոչանան: Դուք ինձ արդեն ճանաչում եք, քանի որ արդեն երկու անգամ ձեզ այցելել եմ*: Իսկ այսօրվա այցս շատ կարևոր ու նշանակալից կլինի:

Ես ձեզ հետ խոսելու հնարավորություն ունեմ աստվածային այս հնարավորության շնորհիվ, որը, կամոքն Աստծո, դեռևս սպառված չէ:

ԵՄ ԵՄ երևակված աշխարհի մատրիցայի կատարյալ դրսևորման պահապանը: Ես հինգ Դիհանի Բուդդաների մանդալայի կազմում եմ և ներկայացնում եմ այդ մանդալայի նրբագույն մասը: Իմ տեղը Իրական Աշխարհի և դրսևորված տիեզերքի միջև է, և իմ միջոցով իմ էներգետիկական կենտրոնների միջոցով, կապ է հաստատվում այդ աշխարհների միջև:

Այդ կարևոր դերի շնորհիվ ես նաև մշտապես տարին երկու անգամ ներկա եմ լինում Կարմայական Վարչության ձմեռային և ամառային արևադարձների նիստերին:

Ես կոչված եմ պահպանելու կատարյալ դրսևորման կիզակետը, և իմ այդ դերի շնորհիվ մենք հնարավորություն ենք ունենում որոշումներ կայացնելու, որոնց շնորհիվ կարողանում ենք շտկել ձեր աշխարհում առկա բոլոր անկատար դրսևորումները:

Այդ դերի շնորհիվ է նաև, որ հաղորդակցվում եմ Երկրի մարդկության հետ, դրսևորում իմ իրական էությունը և այն հասցնում ձեր աշխարհին, ընդհուպ մինչև ձեր աշխարհի ամենախորքերը:

Դա շատ կարևոր է: Այդպիսի հաղորդակցության շնորհիվ վերականգնվում է աշխարհների միջև կորսված կապը: Իսկ դուք դրա շնորհիվ կարողանում եք այլ կերպ նայել ձեր շրջապատի շատ բաների վրա:

Պատկերացրեք, որ ձեր որևէ խոշոր քաղաքի հենց կենտրոնում հանկարծակի վեր է խոյացել ձյունաճերմակ գագաթ՝ նման Հիմալայների գագաթներին: Իմ գիտակցության մակարդակով ահա ես կանգնած եմ այդպիսի լեռան կատարին, իսկ դուք՝ դրա ստորոտում:

Ես հնարավորություն ունեմ ձեր հայացքն ուղղելու ձեզ շրջապատող պատրանքից վեր: Հնարավորություն ունեմ խթանելու ձեզ, որ ձեր գիտակցությունն ավելի վեր հանեք:

Շատ դժվար է բացատրել, թե ինչ է պահանջվում մարդկությունից, քանի որ մենք տարբեր լեզուներով ենք խոսում: Եվ այն, ինչ ձեզ համար արժեք է ներկայացնում, մեր աշխարհում չի կարող արժանանալ թեկուզ ամենաչնչին ուշադրության: Միայն ձեր ոգու որակը, միայն ձեր անձնական փորձառության ձեռքբերումները, որոնք ստանում եք ձեր մարմնավորումների ընթացքում, կարող են նշանակություն և արժեք ունենալ մեր աշխարհում:

Մի պահ պատկերացրեք, որ հանկարծակի դուրս եք պրծել պատրանքի ճիրաններից և հայտնվել մեր աշխարհում: Այստեղ չէիք գտնի այնպիսի մի բան, որի վրա կիրառեիք ձեր երկրային հմտությունները: Չկան համակարգիչներ, հեռուստացույցներ, զվարճալիքներ:

Այդ ամենը ձեր աշխարհում է: Այստեղ միայն և միայն գիտակցության մակարդակով է մատչելի դառնում ամենագիտության ու լիարժեք կատարելության աստիճանը: Տիեզերական համակարգիչը, որն իր մեջ տեղեկություններ է պարունակում ողջ Արարչության վերաբերյալ, ձեզ մատչելի կդառնա միայն այնժամ, երբ կունենաք ոգու համապատասխան ձեռքբերումներ: Հարկ է, որ իմանաք, որ ոգու որակները կապված չեն դրամի քանակի, հեղինակավոր պաշտոնի կամ աշխարհիկ որևէ դիրքի հետ: Կապված չեն նաև այն զբաղմունքների հետ, որոնց ձգտում եք: Ոգու որակները դրսևորվում են ոչ թե ժողովրդական ամբողջներում, այլ ձեր ամենօրյա կյանքում: Դուք կա՛մ ձգտում եք կատարյալ որակներ ձեռք բերելու, կա՛մ ապրում եք կենդանու պես՝ միայն ձգտելով բավարարել ձեր մարմնական պահանջները:

Մեծ ոգիներին ունեն առանձնահատուկ մի բան, որը դրսևորվում է մարմնավորումից մարմնավորում: Միևնույն կենսական իրավիճակում մեկն ի վիճակի է գնալու ինքնահրաժարման, սխրանքի կամ գոհողության, իսկ մյուսը կիրաժարվի այդ որակներից՝ հոգուտ վաղանցիկ ցանկությունների ու կապվածությունների:

Նրանով, թե տվյալ մարդը ունա՞լ է արդյոք կյանքի մանրութներում դրսևորելու ոգու լավագույն որակներ, մենք դատում ենք հետագա Էվոլյուցիային նրա պիտանի լինելու կամ չլինելու մասին:

Ոգու կրակներ, սրտի կրակներ. ահա թե ինչը ձեզ պետք է մտահոգի առաջին հերթին:

Ձեր աշխարհին պատկանող ոչինչ ձեզ չպետք է մտահոգի: Ահա ասում եմ ձեզ, որ միայն ոգու որակները նշանակություն ունեն:

Կարծում եմ, որ այս մասին դուք շատ անգամ եք լսել: Բայց ամեն հերթական ուղերձը լսելուց հետո դուք շարունակում եք ձեր գործերը՝ առանց ասվածը հաշվի առնելու: Ուրիշ ի՞նչ պետք է տեղի ունենա, որպեսզի մարդկությունը հասկանա, որ վերջին ժամկետը հասել է: Դուք գտնվում եք կառամատույցից արդեն ճանապարհ ընկած գնացքի վերջին վագոնի դռների մոտ: Վճռե՛ք: Կա՛մ թռչում եք Էվոլյուցիայի գնացքի ներսը, կա՛մ մնում եք դրսում, որպեսզի վայելեք ձեր կարմայի պտուղները:

Ներկայումս Վեհապետները ձեզ համար բացում են բոլոր այն գաղտնիքները, որոնք նախկինում մատչելի էին լինում միայն ձեռնադրումների դպրոցներում: Ձեզ համար հիմա մատչելի են դառնում շատ բաներ, որոնք նախկինում փակ են եղել լայն զանգվածների համար: Իսկ դա նշանակում է, որ մենք վերջին ուռկանն ենք նետում և վերջին անգամն եք մեկնում աստվածային հնարավորության ճոպանը:

Երկրի մարդկանց ներկայիս ռասաները պետք է փոխարինվեն ուրիշ ռասաներով: Հարցը միայն այն է, թե որքան ցավագին կանցնի այդ գործընթացը: Երբ ձեր մեքենան քշում եք լրիվ արագությամբ, ցանկացած կտրուկ շրջադարձ կարող է վթարի պատճառ դառնալ: Այժմ մենք կտրուկ շրջադարձ ենք կատարում դեպի զարգացման Էվոլյուցիոն ուղու կողմը: Չէ՞ որ դայակություն անելն անվերջ չի կարող շարունակվել:

Մենք բաց ենք համագործակցության և օգնության համար: Բայց հիմա այնպիսի ժամանակներ են, որ ոչ բոլորն ունակ կլինեն ստանալու մեր օգնությունն ու օժանդակությունը: Քանզի արձակված էներգիայի պաշարը պետք է ծախսվի միայն նրանց համար, ովքեր կենսունակ են և Երկրի վրա ունեցած շատ մարմնավորումներով ապացուցել են իրենց կենսունակությունը:

ԵՄ ԵՄ Վայրոչանան: ՕՄ

*Տես՝ 2005 թ-ի ապրիլի 16-ի և 2006 թ-ի հունվարի 4-ի թելադրությունները:

Պաշտելի Պորցիա
25 դեկտեմբերի, 2009 թ.

Ուսմունք Դեսպանորդի պատմունճանի ազդեցության մասին

ԵՄ ԵՄ Պորցիան:

Ես առաջին անգամ ձեզ այցի եմ եկել այս Դեսպանորդի միջոցով, որպեսզի ընձեռված առիթն օգտագործելով՝ ձեզ հրամցնեմ այն տեղեկատվությունը, որն իմ իրավասության տակ է:

ԵՄ ԵՄ Արդարության և Աստծո Արդարադատության Աստվածուհին: Ես նաև աստվածային հնարավորություն եմ բացում, եթե այն վաստակված ու արդարացված է:

Իսկ այժմ, երբ արդեն ծանոթացանք, կուզենայի ձեզ փոխանցել մի տեղեկատվություն, որն այնքան էլ ուրախալի չի լինի ձեզ համար:

Հավանաբար դուք դեռ գլխի չեք ընկել, որ մեր դեսպանորդի գործունեությունն ունի նաև մի կողմ, որն առանձնապես շատ չի լուսաբանվում: Հիմա արդեն ժամանակն է, որ դրա մասին ձեզ իրազեկեմ: Դեսպանորդի աուրան պարունակում է մի բան, որը մեզ թույլ է տալիս երբեմն ներկա գտնվելու և գործելու ձեր օկտավայում: Այդ եղանակով մենք կարողանում ենք որոշ բաներ իմանալ: Կա նաև մի այլ յուրահատկություն կամ հատկանիշ, որն անբաժանելի է մեր դեսպանորդի գործառնություններից: Երբ մեր ներկայությունը Դեսպանորդի աուրայում գործեղանում է, մենք հնարավորություն ենք ստանում դիմավորելու ձեր աշխարհի այն անհատականություններին, որոնք բառացիորեն նետվում են դեպի Լույսը: Թրթիռների համապատասխանությամբ մեր դեսպանորդին մոտեցող ոչ բոլոր մարդիկ են լինում լուսակիրներ: Առավել հաճախ դեպի Լույսն են թռչում այն անհատականությունները, որոնք ուզում են Լույսի համն առնել, հաճույք ստանալ Լույսից և անգամ մեր Լույսից փոշոտում ստանալուց հետո էլ ձեր օկտավայում շարունակել իրենց անվայել գործերը:

Քանի՜ հազարամյակ է, ինչ մենք չենք կարողանում ժամանակ առ ժամանակ մեր ուշադրության տակ առնել որոշ անհատների, որոնք, խորամանկ հնարքներ բանեցնելով, իրենց խարդավանքներն ու ձեռնածություններն ուրիշ մարդկանց միջոցով իրականացնելով, կարողանում են խուսափել կարմայից:

Ուստի դեսպանորդի գործառնություններից մեկն էլ հենց այն է, որ դեպի իր կողմը գրավի նման անհատների: Այնուհետև գործի է դրվում Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդի սուրբ: Իսկ այդ սուրբ կտրում-թափում է այդպիսի անհատների վրայից բոլոր դիմակահանդեսային զգեստները և ստիպում, որ ցույց տան իրենց բուն էությունը: Եվ ահա այդ ժամանակ գործի է դրվում Աստծո Արդարադատությունը: Այո՛, պաշտելիներս, ավա՛ղ, մեծ մասամբ դեպի Լույսն են նետվում այն մարդիկ, որոնք ցանկանում են Լույսն օգտագործել իրենց շահերի համար: Իսկ երբ հասկանում են, որ չի ստացվում մեր դեսպանորդին օգտագործել իրենց շահադիտական նպատակներով, ահա այդ ժամանակ մերկացնում են իրենց իրական բնույթը՝ ցուցադրելով իրենց ողջ այլանդակությունն ու անկատարությունը:

Երբ Տառյանան ստացավ Դեսպանորդի իր պատմունճանը, չգիտեր, որ այդ պատմունճանն օժտված է նաև նման ազդեցությամբ: Նա անկեղծ ու սրտաբաց դիմավորում էր ամենքին, ովքեր մոտենում էին իրեն: Նա իրոք անկեղծորեն հավատում էր, որ Լույսը միայն Լույս կարող է քաշել դեպի իրեն, և չգիտեր, որ Լույսը կարող է իր կողմը գրավել նաև խավարին, որն ուզում է տիրանալ Լույսին և այն օգտագործել իր նպատակների համար:

Այս ողջ ընթացքում մենք հնարավորություն ունեցանք դիտելու, թե ինչ է տեղի ունենում: Դուք վկա եք, որ ես առաջին անգամն եմ ուղերձ տալիս, մինչդեռ ես այս տարիների ընթացքում դիտում և եզրահանգումներ էի անում: Քանզի, վերջին հաշվով, ինձնից է կախված՝ շարունակե՞նք արդյոք հնարավորություն տալ Ռուսաստանին, թե՞ Լույսի կիզակետը տեղափոխենք մի ուրիշ երկիր:

Առայժմ ձեզ ուրախացնող ոչինչ չունեմ ասելու: Ի պաշտոնե, որպես այն Աստվածուհին, որը պատասխանատու է Աստծո Արդարադատության համար, ես նաև հնարավորություն ունեցա

դիտելու այն ողջ դատական քաշքշուկը, որը հարուցվել էր մեր դեսպանորդի դեմ: Եվ վկա եղա, թե ինչպես այդ երկրի դատական համակարգը չի անցնում իր թեստը: Մենք դիտմամբ որևէ կերպ չմիջամտեցինք այդ դատական գործի ընթացքին: Մենք սպասում էինք, որ գործը հասնի մինչև այդ երկրի վերին ատյանները: Եվ ի՞նչ տեսանք. օրենքի լրիվ ոտնահարում. և՛ Աստծո Օրենքի, և՛ մեր դեսպանորդի իրավունքների, որը մեր ներկայացուցիչն է ֆիզիկական ոլորտում:

Այն, ինչ տեղի ունեցավ, մի մարդու գործ չէր: Գործերի նման ընթացքն արդյունք էր բազմաթիվ անհատների լուռ ու համառ դիմադրության, որոնք չեն ուզում Լույս աշխարհի դուրս գալ և դեմ են կանգնում ցանկացած բարեփոխման:

Շատ շատերը դրսևորեցին իրենց իրական բնույթը: Չափազանց մեծ է նրանց թիվը:

Ձեզ թվում է, թե դա մեր պարտությունն էր: Ես լավատես ու անընկճելի մարտիկ եմ: Եվ ձեզ կասեմ, որ մենք հասանք վիթխարի հաղթանակի: Քանզի այն, ինչ չէր ենթարկվում Աստծո Արդարադատությանը, վերջապես բացահայտվեց, և ես կարողացա Աստծո Արդարության ու Արդարադատության իմ սուրբ կիրառել շատ անհատների նկատմամբ, որոնք բացահայտվեցին մեր դեսպանորդի ներկայության շնորհիվ:

Վերջնական նպատակն ի կատար է ածված: Իսկ այս փուլում մեր նպատակն այն էր, որ որոմը հատիկից ջոկենք: Իհարկե, այդ ընթացքում մեր դեսպանորդի վիճակը նախանձելիներից չէր, քանի որ նա մեկ աստվածային սերմնագտիչի դեր էր խաղում, մեկ աստվածային կապանքի, մեկ աստվածային սրի, մեկ՝ պարզապես մահակի:

Ի՞նչ արած, այդպիսին է Դեսպանորդի պաշտոնի հակառակ երեսը, որը մինչև հիմա չէր ցուցադրվել: Բայց մենք հասանք հրաշալի՝ արդյունքի: Կարողացանք երևան հանել այն անհատներին, որոնք միշտ երևելի դիրքեր էին զբաղեցնում զանազան եկեղեցիներում: Նրանք լինում էին տաճարների կառավարիչներ, ինկվիզիցիայի առաջնորդներ և մշտապես կարողանում էին գործն այնպես վարել, որ ուրիշներին դնեն կարմայի հարվածի տակ, իսկ իրենք մնան ստվերում՝ հաղթանակի զգացումով շփելով իրենց ձեռքերը:

Բայց ու՞մ էիք հաղթում, պարոնայք: Աստծու՞ն: Չէ՞ որ դա հնարավոր չէ: Ձեր ժամանակը հասավ իր ավարտին: Եվ ես ուրախ եմ, որ մեզ հաջողվեց ի հայտ բերել բազմաթիվ չարամիտ հոգիների, որոնք, քահանայական զգեստներ հագած, սրբերի դեր էին խաղում: Եվ ահա վերջապես նրանք ստիպված եղան գործելու և ցուցադրելու իրենց իսկական էությունը:

Հիմա արդեն իմ աշխատանքի ժամանակն է եկել: Եվ ես ձեզ վստահեցնում եմ, որ իմ գործը կանեն լավագույն ձևով...

Արդ, ամեն ինչ դեռ կորած չէ... Բայց ու՞ր են Լույսի այն լավագույն ներկայացուցիչները, որոնք մարմնավորվեցին:

Նրանցից շատերին գիտեմ, որոնք սայթաքեցին և մինչև ընթացիկ մարմնավորման ավարտն այլևս չեն կարողանա շտկել իրենց ուսերը: Իմ քույր Գուան Ինը կօգնի նրանց:

Ես կանխագուշակեմ, որ դեռ էլի՝ շատ հետաքրքիր պահեր կլինեն, որոնք թույլ կտան մեզ շատ խնդիրներ լուծել: Ես առայժմ այս աստվածային հնարավորությունը շարունակելու կողմնակիցն եմ: Հետո կտեսնենք, թե ինչ կլինի:

ԵՄ ԵՄ Պորցիան

Էլոհիմ Հերկուլես

26 դեկտեմբերի, 2009 թ.

Ես եկել եմ նախագուշակելու, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է Երկրի վրա

ԵՄ ԵՄ Էլոհիմ Հերկուլեսը: ԵՄ ԵՄ հզոր Էլոհիմն Աստծո: Հնարավոր է, որ Իմ մասին որոշ բաներ լսած լինեք հինավուրց առասպելներից ու լեգենդներից: Մակայն բոլոր առասպելները գաղտնագերծման բանալի են պահանջում հասկացված լինելու համար: Չի կարելի առասպելները կուրորեն կրկնել: Եվ ոչ միշտ է, որ առասպելներում նկարագրված դեպքերը տեղի են ունեցել հենց Երկրի վրա: Առավել հաճախ դրանցում արտացոլված են լինում իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել լինելիության ավելի բարձր ոլորտներում:

ԵՄ սպասավորում ԵՄ Աստծո Կամքի ճառագայթով: Իմ հիմնական հատկանիշը Ուժն է: Ուժը և հավատարմությունն Աստծո Կամքին: Ես նաև պատասխանատու եմ դրսևորված աշխարհի համար, որ այն հարատևի մինչև այն ժամկետը, որը, թեև նախանշված է, բայց հայտնի է միայն ինձ ու Բարձրագույն Վեհապետներին:

Ձեզ կարող է տարօրինակ թվալ, որ այս օրով ձեզ այցի եմ եկել: Իսկ ես եկել եմ, որպեսզի ձեզ նախագգուշացնեմ, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է ընթանում Երկրի վրա: Չկշռադատված գործողություններով, մտքերով ու զգացմունքներով մարդկությունը շարունակում է ճոճել նավակը: Անխոհեմ քայլերի քանակը հատկապես ավելանում է տարեվերջին, երբ մարդիկ, ինչպես իրենք են համարում, տոնում են նոր տարվա գալուստը:

Պետք է ձեզ ասեմ, որ այդ տոնակատարությանը նախորդած մի քանի օրում մարդիկ նույն ծավալի կարմա են կուտակում, որքան մնացած ամբողջ տարվա ընթացքում: Ուստի նախքան տոները նախապես կշռադատեք, թե ո՞ր ձևն ավելի լավ կլինի դրա համար: Միգուցե փոխե՞ք այդ տոնի նկատմամբ ձեր ավանդական պատկերացումը, թե դա անգուսպ կերուխումի լավ առիթ է...

Եթե ես իմ ողջ գործությամբ և ուժով չպահեի մոլորակի համակշռությունը, ապա մոլորակը վաղուց փշուր-փշուր եղած կլիներ ծանր քարի հարվածի տակ ընկած ընկույզի պես: Քանզի մարդկության կուտակած կարման ներկայումս ի գործ է հաշված վայրկյանների ընթացքում ցաքուցրիվ անելու երկրագունդը:

Ձեզ երևի տարօրինակ է թվում, որ այսպես բաց ձևով ձեզ այսպիսի սարսափագրու բաներ եմ ասում: Երևի կարծում եք, թե ուզում եմ ձեզ ահաբեկե՞լ. ձեր սրտերն ահո՞վ լցնել...

Ո՛չ, ես հեռու եմ դրանից: Իմ միակ ցանկությունն այն է, որ խելքի բերեմ Երկրի վրա մարմնավորված անհոգ դեռահասներին և տեղյակ պահեմ այն մասին, թե մարդկությունը որքան շատ էներգիա է պարտք տիեզերական բանկին: Յուրաքանչյուր տարվա այս բարդ ժամանակահատվածի ընթացքում Կարմայական Վարչությունն Աստծո էներգիայի վարկ է վերցնում Մեծ Կենտրոնական Արևից, որպեսզի Երկրի կենսահոսքերն իրենց ուռքի տակ հարթակ ունենան հետագա էվոյուցիան շարունակելու համար:

Եվ ամեն անգամ հաջողվում է համոզել տիեզերքի Բարձրագույն Խորհրդին, որ այդ էներգիան հատկացվի: Բայց ինձ հայտնի են ուրիշ մոլորակների օրինակներ, երբ ճակատագրական պահին դադարեցվել է ֆիզիկական հարթակի պահպանման համար հատկացվող Աստծո էներգիայի հոսքը: Նման դեպքում մոլորակը հաշված վայրկյանների ընթացքում առանձին կտորների է բաժանվում: Մարսի և Յուպիտերի միջև եղած աստերոիդների գոտին սեփական մոլորակը քանդող քաղաքակրթության անխոհեմության մի հուշարձան է:

Այդ մոլորակի որոշ ներկայացուցիչներ ապաստան գտան Երկրում: Եվ նրանք, համեմայն դեպս, նրանցից ոմանք նորից իրենց նախկին գործերով են զբաղված՝ հավանաբար վստահ լինելով իրենց անմահության և անպատժելիության հարցում:

Ես՝ Էլոհիմս, ինձնից կախված ամեն ինչ կանեմ, որ Երկիր մոլորակի ֆիզիկական թաղանթը մնա անվնաս: Սակայն կա նաև Բարձրագույն Խորհուրդ, որին ես անվերապահորեն ենթարկվում եմ:

Դուք՝ երկրացիներդ, ձեր էվոյուցիան շարունակում եք Երկնքի անսահման ողորմածության շնորհիվ: Եթե ձեր տեղը լինեի, ապա մինչև նոր տարի մնացած օրերի ընթացքում օրական 24 ժամ իմ երախտագիտությունը կհայտնեի Երկնքին:

Եթե ձեր զվարճալիքների վրա ծախսվող ժամանակի ընդամենը 10 տոկոսը հատկացնեիք աղոթքներին ու ներխուժումներին, ապա Կարմայական Վարչությունը դրական փաստարկներ կունենար Կենտրոնական Արևին ներկայացնելու համար:

Սակայն դա տեղի չի ունենում: Մտորե՞ք այս մասին:

Ձեր բնակեցրած որևէ քաղաքում կա՞ն արդյոք թեկուզ տաս արդարակյաց մարդիկ: Ունա՞կ են արդյոք նրանք առանձնանալու և աղոթելու՝ հանուն Երկրի կենսահոսքերի էվոյուցիայի բարօրության և նրանց փրկության:

Ես շատ հազվադեպ եմ գալիս: Եվ երկար խոսել չեմ սիրում: Բայց կարծում եմ, որ ասացի այն ամենը, ինչ անհրաժեշտ էր ասել:

ԵՍ ԵՄ Հերկուլեսը

Մայր Մարիամ
27 դեկտեմբերի, 2009 թ.

Ամենուրեք պետք է դրսևորվի Հավատ և բարեպաշտություն

Միրելինե՛րս, ահա նորից ձեզ այցի եմ եկել...

ԵՍ ԵՄ՝ Մայր Մարիամը: Ավելի շուտ էի ուզում գալ, բայց ոչ մի կերպ չէր ստացվում: Ծա՛տ են գործերս հիմա՝ տարեվերջին: Ծա՛տ են այն մարդիկ, որոնք իմ օգնության կարիքն ունեն և դրա համար դիմում են ինձ:

Ես միշտ պատրաստ եմ օգնություն ցուցաբերելու, բայց ավելի ու ավելի հաճախ եմ ստիպված լինում մերժումով պատասխանել: Անչափ շատ եմ ցավում դրա համար: Հավատացե՛ք ինձ, ես օգտագործում եմ ամեն մի հնարավորություն, նույնիսկ ամենաչնչինը, եթե միայն աստվածային հնարավորությունը բաց է տվյալ մարդու համար: Բայց ավելի ու ավելի հաճախ եմ ես տեսնում, թե ինչպես է մարդու հոգու ճրագը մարում և չակրաները՝ վերածվում տարածության խռոչների: Մարդն արդեն մեռած է, թեև կարող է դեռ խոսել ու քայլել: Ահավո՛ր տեսարան է դա, սիրելիներս... Ֆիզիկական մարմինը՝ հյուսվածքը, կա, գոյություն ունի, բայց մարդու հոգին մահվան ճիրաններում է:

Հարկ է, որ հոգ տանեք ոչ միայն ձեր ֆիզիկական մարմնի մասին, այլ նաև հոգու: Տրտունջներով ու թառանջներով է լցված Երկրի մերձակա տարածությունը: Տառապում են հոգիները: Ես գիտեմ, որ շատ կան տառապող հոգիներ, բայց այդ տառապանքի հետ մեկտեղ նրանք մաքրվում են: Եթե հոգին դեռ կենդանի է, ապա հույս կա, որ մարդը կապրի:

Ձեր հոգիներն օգնության կարիք ունեն: Եվ միայն ես չեմ, որ կարող եմ օգնություն ցուցաբերել ձեր հոգուն: Դուք նույնպես կարող եք օգնել ինքներդ ձեզ:

Ձեր հոգու ամենալավ դեղն այն կլինի, որ անկեղծորեն զոջաք ձեր գործած բոլոր սխալների ու մեղքերի համար և ապագայում այլևս դրանք չկրկնելու ամուր ցանկություն դրսևորեք: Աղոթքը, եթե նույնիսկ այն խոսքերով չի արտահատվում, բայց համահունչ է Աստծո Աշխարհին, ունակ է ամոքելու հոգու շատ վերքեր:

Ես գիտեմ շատ մարդկանց, որոնք ամաչում են աղոթելուց, ամաչում են իրենց զգացմունքներն արտահայտելուց: Պաշտելիներս, իմ որդի Հիսուս ուսուցանում էր չաղոթել հրապարակայնորեն, ցուցադրաբար, բայց և դժվարին պահերին օգնության խնդրանքով դիմում էր Աստծուն:

Եվ դու՛ք էլ նույնը պիտի անեք: Աստծո Աշխարհի հետ համանչունությունը՝ օրվա ընթացքում թեկուզ շատ կարճ տևած, ձեր հոգուն թույլ է տալիս ճաշակել իր համար անհրաժեշտ սնունդը: Ձեր հոգին սնվում է Աստծո բարեշնորհանքով, և դուք պետք է հարկ եղած ուշադրությունը հատկացնեք ձեր հոգուն: Դրա համար այնքան էլ շատ ժամանակ չի պահանջվում, սիրելիներս:

Ես ապշած մնացի մարդկանց այն Հավատով, որն այս տարի դրսևորվեց Բարեգթության Ժամին: Որքան շատ մարդիկ դիմեցին ինձ՝ ոչ միայն օգնության խնդրանքով, այլ նաև անկեղծորեն առաքեցին ինձ իրենց աղոթքի էներգիան, որպեսզի ես այն տնօրինեմ՝ ըստ իմ հայեցողության:

Շնորհակալ եմ, սիրելիներս: Ձեր աղոթքային ջանքերի և ինձ հատկացրած էներգիայի շնորհիվ հաջողվեց օգնել շատ հոգիների: Շատ շատերը ապաքինվեցին:

Եվ ես ուրախ եմ, որ Երկրի վրա գտնվեցին այդքան շատ հրաշալի հոգիներ, որոնք իրենց էներգիան կամեցան կիսել իրենց եղբայրների ու քույրերի հետ...

Ա՛խ, եթե ամեն օր այդպես լինեք, սիրելիներս... Բ՛նչն է խանգարում, որ օրվա մեջ մի ժամ հատկացնեք աղոթքին, ձեր սրտում ինձ հետ հաղորդակցվելուն...

Ես շատերին գիտեմ, որոնք թեև ամաչում են աղոթելուց, սակայն տանը, աշխատանքի վայրում կամ մեքենայի մեջ միացնում են ինձ նվիրված երգեր: Սուգվում են մեղեդու կախարդական աշխարհը և իրենց սրտում հանդարտ հաղորդակցվում ինձ հետ: Շատ ու շատ մարդիկ իրենց մոտ պահում են իմ պատկերը: Եվ այնժամ, երբ մի մեկուսի վայրում հանում եք իմ դիմանկարը և համբուրում, այդ նույն պահին ես դա իմանում եմ: Եվ ակնթարթորեն ապահովվում եմ իմ ներկայությունը ձեր կողքին:

Այո՛, սիրելիներս, Աստված օժտել է ինձ նման հնարավորությամբ, որ միաժամանակ հայտնվեմ երկրագնդի շատ վայրերում: Եվ այնտեղ, որտեղ մարդիկ հիշում և սիրում են ինձ, միշտ թագավորում է հատուկ պաշտպանված մթնոլորտ: Ես տարածքի պաշտպան եմ: Այն վայրերում, որտեղ ես կարողանում եմ ներկա գտնվել, շատ քիչ են զանազան դժբախտություններ պատահում:

Եվ եթե մշտապես կարողանայիք համահնչունություն պահպանել իմ սրտի հետ, ապա դուք և ձեր մերձավորները, ինչպես նաև ձեր մոտակայքում ապրող մարդիկ պաշտպանված կլինեիք:

Այժմ ես կուզենայի կանգ առնել ևս մի պահի վրա: Այն կապված է Ռուսաստանի՝ այն երկրի հետ, որը գտնվում է իմ խնամակալության տակ: Այս առիթով ձեզ չեմ կարող ասել ոչ մի սփոփիչ բան: Ես վշտացած եմ... Առաջվա պես այդ երկրի հսկայական ներուժը մնում է քնած, չարթնացված վիճակում: Ռուսական հսկաները խոր քնի մեջ են դեռ: Եվ նրանցից շատերը փոխվում են ձեր աշխարհից՝ այդպես էլ չարթնանալով: Մենք մյուսի հետևից ֆիզիկական ոլորտը լքում են մարդիկ, որոնց առաքելությունը որպես զանգ ծառայելն էր, որի դողանջը պետք է մաքրեր տարածությունն ամեն խավարից ու աղբից:

Կկամենայի իմ հատուկ բարեհաճությունը հայտնել նրանց, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ և խաղաղ ու աննկատ իրենց սպասավորությունն են մատուցում Երկրի կենսահոսքերին: Դուք քիչ եք, բայց ձեր շուրջը եղած տարածությունը մաքրվում է ինչպես զանգի

դողանջից, քանի որ ձեր մաքուր հոգացումներով, անշահախնդրությամբ ու սպասավորությամբ օժտված եք տարածությունը մաքրելու ունակություն:

Ես ձեզ օժտել եմ ինձ հետ կապի մեջ մտնելու հատուկ հնարավորությամբ: Ձեզ համար ես միշտ մոտ եմ գտնվում: Ինձ հայտնի են բոլոր այն վայրերը, որտեղ դուք ապրում եք: Եվ ես կապահովեմ իմ մշտական ներկայությունը ձեր կողքին: Այդպես մենք կկարողանանք բազմապատկել տարածությունը մաքրելու մեր ջանքերը:

Իսկ նրանց, ովքեր հոռետեսորեն են տրամադրված իմ նկատմամբ և այն Ուսմունքի նկատմամբ, որը տալիս ենք ես և մյուս Վեհապետները, ահա թե ինչ կասեմ: Քանի դեռ ձեր սրտերում կասկածն իր տեղը չի գիշի նվիրվածությանն ու Հավատին, քանի դեռ պատիվ ու հարգանք չեք ցուցաբերի իմ սպասավորների նկատմամբ, ոչինչ չեն կարողանա բարեփոխել ո՛չ Վեհապետները, ո՛չ էլ ինքներդ ձեր երկրներում:

Ամենուրեք պետք է դրսևորվի Հավատ և բարեպաշտություն՝ ամեն քաղաքում և գյուղում: Ոչ թե ցուցադրական հավատ, որը ոչինչ չարժե, այլ ճշմարիտ Հավատ. միայն դա կարող է բացել աստվածային հնարավորությունը:

Մեզ պետք է, որ ամենուրեք դրսևորվի Հավատ, ականածանք դեպի Բարձրագույն Օրենքն ու Աստծո Օրենքը:

Եվ այնժամ երբ դա տեղի կունենա, այդ մասին դուք կիմանաք, քանի որ ձեր աչքի առաջ արագորեն ամեն ինչ կսկսի փոխվել:

Իսկ հիմա ես կարող եմ ապավինել միայն շատ քչերին, ովքեր կրում են իրենց ծառայությունը լիակատար ըմբռնումով և նույնիսկ շրջապատի մարդկանց բնօրինակի ներքո: Վա՛յ այն ժողովրդին, որը չի հարգի ճշմարիտ Հավատի դրսևորումը և հարգանք չի տաժի իր սրբերի նկատմամբ:

Այսօր ես ձեզ հրամցրի ոչ այնքան ուրախալի ուղերձ: Մակայն հույսը երբեք չի հատնի և չի լքի մարդկությանը, քանի դեռ կան թեկուզ մի քանի սրբեր, ովքեր ունակ են պահպանելու գիտակցության աստվածային մակարդակը:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը

Չորավոր Տիեզերք
28 դեկտեմբերի, 2009 թ.

Մենք միասին դեռ շատ ճանապարհ ունենք անցնելու Էվոյուցիայի աստիճաններով

ԵՍ ԵՄ Չորավոր Տիեզերքը: Ես Տիեզերական Էություն եմ: Ես շատ ուրախ եմ, որ կարող եմ ուղերձ տալ Երկրի մարդկությանը:

Ես իմ ուղերձի մեջ ներդնում եմ այնպիսի էներգետիկական լիցք, որը կօգնի ձեզ մտածելու ավելի լայն ընդգրկմամբ, քան այն ամենն ունի, ինչ ֆիզիկական կյանքում տեսնում եք ձեր շուրջը, և նույնիսկ ավելի լայն, քան ձեր հարազատ մոլորակում գոյություն ունեցող ամեն ինչն ունի:

Գալիս է այն պահը, երբ մարդկությունը պետք է դուրս գա երկրագնդի սահմաններից, Երկիր մոլորակի ընդգրկված սահմաններից: Տիեզերքի ընդհանրական հասարակությունը վաղուց պատրաստ է իր շարքերն ընդունելու երկրացիներին:

Կա ձեր ներսում ինչ-որ բան՝ մի մեխանիզմ, որն սկսում է գործել մարդկության զարգացման որոշակի փուլում: Այդ մեխանիզմը ձեր Էության ներսում գոյություն ունի որպես ներուժ, որպես աստվածային հնարավորություն:

Ձեզ հայտնի է, որ մարդն ունի էներգետիկական կենտրոններ՝ չակրաներ: Դուք գիտեք յոթ հիմնական չակրաների մասին, բայց էներգետիկական կենտրոններն անհամեմատ ավելի շատ են: Եվ ձեր բարեհաջող Էվոյուցիոն զարգացման ընթացքում դրանք մեկը մյուսի հետևից բացվում են, ինչպես վարդերը թփի վրա:

Այս պահի ձեր զարգացումը թույլ չի տալիս, որ բացվեն այդ կենտրոնները: Բույց դուք պետք է հասկանաք ու գիտակցեք, որ տիեզերական Էվոյուցիան չի սահմանափակվում ո՛չ ձեր ներկա կյանքով, ո՛չ էլ Երկիր մոլորակի վրա եղած կյանքով:

Ձեր գիտակցությամբ դուք պետք է նախապատրաստվեք ողջ տիեզերքի և այն բնակեցնող էակների հետ հաղորդակցության մեջ մտնելուն:

Ամբողջ բանը ձեր գիտակցության մեջ է. արդյո՞ք ունակ եք ձեր գիտակցության մեջ թույլ տալու նման հնարավորություն:

Կարմայական Վարչության անդամներից ես տեղեկացա, որ կան այնպիսի մարդիկ, որոնք չգիտեն, թե ինչով զբաղվեն: Նրանք անհաշիվ ժամեր ու տարիներ են անցկացնում՝ ինձ համար

կատարելապես անհասկանալի բաներով զբաղվելով, որոնք ոչ միայն չեն նպաստում զարգացմանը, այլ, ընդհակառակը, տանում են դեպի հետզարգացում:

Պարադոքսն այստեղ այն է, որ Վեհապետներից ոչ մեկը ձեզ չի ստիպում, որ նման գործերով զբաղվեք: Եվ եթե ուշադրությամբ ընթերցեք Համբարձյալ Դասերի կողմից ձեզ տրված թելադրությունները, ապա կտեսնեք, որ այնտեղ, ընդհակառակը, ասվում է, որ դուք պետք է հրաժարվեք վարվելակերպի ու զբաղմունքների ձեզ համար սովորական դարձած կարծրատիպերից:

Ձեր գիտակցության մակարդակը թույլ չի տալիս, որ հասկանաք մեր կողմից ասված ամենապարզ բաները: Ձեր հասկացած լինելու չափանիշն այն է մեզ համար, որ ստացած գիտելիքները կիրառեք ձեր կյանքում և հետևեք այն հանձնարարականներին, որոնք տրվում են ձեզ: Սակայն դա տեղի չի ունենում: Ես դիտում և տեսնում եմ, թե միևնույն ճշմարտությունը որքան շատ անգամ է ասվում ձեզ և ոչ միայն այս դեսպանորդի միջոցով: Հազարամյակներ առաջ այդ նույն ճշմարտությունները մենք տվել ենք ձեզ հայտնի ուրիշ պատմական անձնավորությունների միջոցով, որոնք ներկայումս ձեր կողմից պաշտվում են՝ որպես Երկրի վրա գոյություն ունեցող կրոնների հիմնադիրներ:

Ես հասկանում եմ, որ շատ դժվար է հավատալ մի բանի, որը մատչելի չէ տեսողությանն ու շոշափելիքին: Սակայն ձեր գիտությունն արդեն ձեռքի տակ ունի տվյալներ, որոնք լիովին գիտականորեն ապացուցում են ավելի նուրբ աշխարհների գոյությունը: Միայն թե կարելի էր մի փոքր ավելի կռահունակ և ներքմբռնողական լինել:

Մարդկությանը ես նայում եմ այնպես, ինչպես դուք նայում եք ձեր ծաղկանոցներին: Հիշեք, թե ինչ ապրումներ եք ունենում, երբ ձեր տնկած լավագույն տեսակի ծաղիկները հիվանդանում ու թառամում են: Դուք լցվում եք ամոսսանքով և կրկին ու կրկին փորձում եք ինչ-որ բան ձեռնարկել, որպեսզի ձեր սիրած ծաղիկները կենսունակ դառնան և ձեզ ուրախություն պատճառեն իրենց գույների ներդաշնակությամբ:

Ինձ համար դուք նույնպիսի ծաղիկներ եք: Եվ երբ իմ մակարդակից դիտում եմ մարդկանց, ես միայն ծաղիկներ եմ տեսնում՝ ձեր բացված չակրաները: Տեսնում եմ գույների գեղեցիկ համակցությունների խիստ սակավություն: Թեև կան այնպիսիք, որ ուրախացնում են ինձ, բայց միաժամանակ տեսնում եմ բազմաթիվ անհատականությունների, որոնք ընդամենը մեկ բացված չակրա ունեն: Որքան շատ անելիքներ ունեն նրանք իրենց ուղու վրա, որ հասնեն իրենց բոլոր չակրաների բացմանը, նաև այն չակրաների, որոնցով կդառնան ազատ տիեզերական էակներ:

Տեսնում եմ նաև այնպիսի անհատականությունների, որոնք անխնամ են թողել իրենց չակրաները, և դրա արդյունքում դրանք ամբողջովին փակվել են: Բնությունը դատարկություն չի սիրում, սիրելիներս: Եվ այն մարդիկ, որոնք կորցրել են կապն Աստծո Աշխարհի հետ, անմիջապես որս են դառնում բազում այնպիսի էությունների համար, որոնք բնակեցնում են աստեղային ոլորտը և այլևս ֆիզիկական ոլորտում մարմնավորվելու հնարավորություն չունեն:

Բոլորն ապրել են ուզում: Եվ ձեր ծաղկանոցում նույնպես ծաղիկների առաջնակարգ տեսակների կողքին երբեմն հայտնվում են մոլախոտեր, որոնք փորձում են թաքնվել ձեր սիրած ծաղիկների ստվերում այն հույսով, որ դուք իրենց չեք նկատի, և իրենք կկարողանան գոյատևել: Ինչպե՞ս եք վարվում նման մոլախոտերի հետ: Նույն բանն անում ենք նաև մենք: Հնարավոր չէ թաքնվել համայն տիեզերքի Մեծ Այգեպանի հայացքից: Վաղ թե ուշ ձեր մոլորակի վրա ևս կարգուկանոն կհաստատվի:

Եվ ձեր մոլորակը կվերածվի հրաշալի ծաղկանոցի, որում այլևս չեն լինի մոլախոտեր ու հիվանդ բույսեր:

Երկրի վրա ապրող ամեն մի էակ ներուժ ունի վերածվելու մեծ ու հզոր տիեզերական էակի: Դուք մշտապես այդ մասին պետք է հիշեք:

Ձեր կյանքում կան և՛ գեղեցիկ բաներ, և՛ այլանդակության նմուշներ: Ցավոք, գիտակցությունը երբեմն ունակ չի լինում զանազանելու և նախապատվություն տալու գեղեցիկին:

Բայց դա ժամանակավոր երևույթ է, սիրելիներս: Կանցնի որոշ ժամանակ, և ձեր հոգին կձգվի դեպի գեղեցիկը: Մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում կրկին նորաձև կդառնան հրաշագեղ, ներդաշնակ նմուշները:

Ես մեծ հույսեր ունեմ, որ դուք ունակ կդառնաք ինքնուրույն մղվելու դեպի գեղեցիկը՝ չսպասելով, որ դա ձեզ հուշեն այլազան արհավիրքները, հիվանդություններն ու դժբախտությունները: Մի՛ ծուլացեք: Ձեզ անհրաժեշտ է, որ ամեն ինչում ունենաք ներդաշնակ նմուշներ, հատկապես երաժշտության մեջ: Ոլորտների երաժշտությունն սպասում է իրեն նոտայագրող ահատներին: Հարկ է, որ ավելի զգայուն դառնաք կյանքի նուրբ դրսևորումների նկատմամբ: Մի՛ մտածեք անկատարի մասին: Զբաղվեք ստեղծարարությամբ:

Երբ մոլորակի թրթռանքները մի փոքր ևս բարձրանան, ներկայումս այլանդակ ու անհրապույր թվացող ամեն ինչը կհավվի ու կցնդի երազի նման:

Մենք ձեզ հետ միասին դեռ շատ ճանապարհ ունենք անցնելու Էվոյուցիայի աստիճաններով: Կարողացե՛ք հեռանկար տեսնել ձեր շարժման մեջ, կարողացե՛ք զգալ ձեր նկրտումների ուղղությունը:

ԵՄ ԵՄ Չորսվոր Տիեզերքը

Պաշտելի Ալֆա

29 դեկտեմբերի, 2009 թ.

**Հիերարխիայի հետ մեկտեղ դուք պատասխանատվություն եք կրում
այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա**

ԵՄ ԵՄ Ալֆան: ԵՄ եկա:

Այսօրվա իմ գալուստը շատ նշանակալից է: Ո՛չ այն պատճառով, որ ձեր արտաքին գիտակցությանը սնունդ կտամ խորհրդածությունների համար: Ես եկել եմ Լուսի լրացուցիչ չափաբաժին հատկացնելու Երկիր մոլորակին: Եվ այս ուղերձը տալուս ընթացքում Ես կառաքեմ այնքան Լուս, որքանին կարող են դիմանալ այս դեսպանորդի ֆիզիկական և ավելի նուրբ մարմինները:

Այո՛, մարդկությունը ոչ մի կերպ չի պթափվում: Եվ հարկ եղավ, որ Ինքս գամ անհրաժեշտ և բավարար քանակի էներգիա առաքելու, որպեսզի մոլորակի իրավիճակը համակշռվի:

Չավակներս, պթափվե՛ք: Ես այս օրով եկել ու դիմում եմ նրանց, ովքեր կարող են Ինձ լսել ու հասկանալ:

Մոլորակի իրավիճակը ձեր ձեռքերում է: Հիերարխիայի հետ դուք պատասխանատվություն եք կրում այն ամենի համար, ինչ տեղի է ունենում ձեր մոլորակի վրա: Դուք Հիերարխիայի մի մասն եք կազմում: Եվ նույնիսկ այնժամ, երբ մոռանում եք, որ տիեզերական շղթայի մի օղակն եք, այնուամենայնիվ մնում եք այդպիսին: Իսկ ամեն մի օղակ պետք է իր վրա կրի բեռնվածության իր բաժինը:

Երբ խուսափում եք ձեր պարտականությունները կատարելուց, մենք ստիպված ենք լինում վթարային նախագգուշական միջոցներ կիրառել: Ներկա դեպքում Ես օգտագործում եմ այս դեսպանորդի մարմինները, որպեսզի Երկրին փոխանցեմ բեկումնային այս ժամանակի համար այնքան անհրաժեշտ Լուսը:

Կա և այս գործընթացի հակառակ երեսը: Երբ մեկը մեծ քանակությամբ Լուս է փոխանցում իր միջով, նա ինքն իրեն հանձնում է մեզ հակադիր ուժերի հոշոտմանը: Ուստի այնժամ, երբ անհարգալից ձևով կմտածեք մեր դեսպանորդի մասին, երբ նրան կառաքեք ցածրակարգ մտքեր ու հույզեր, դա մի կողմից օրինաչափ գործողություն կլինի, քանի որ մեծ Լուսը խավարի մեծ ուժեր է գրգռում: Մյուս կողմից՝ մեր դեսպանորդի դեմ ցանկացած բացասական էներգիայի գրգռում հայտնվում է մեր զգոն տեսադաշտում, իսկ մենք միշտ համապատասխան միջոցներ ձեռնարկելու հնարավորություն ունենք:

Այսպես միշտ է եղել: Դա այն սկզբունքներից մեկն է, որով առաջնորդվում է Լուսի Ուժերի Հիերարխիան: Մեր ներկայացուցիչները դեպի ձեր թանձր աշխարհ Լուսի փոխանցիչներ են: Իրենց գործն անելիս նրանք մի կողմից կրում են բարձրագույն ուժերի ազդեցությամբ հարուցված դժվարությունները՝ փոխանցելով այդ ուժերի առաքած էներգիայի այն քանակները, որոնց ունակ են դիմանալու իրենց մարմինները, իսկ մյուս կողմից՝ նրանց բաժին են հասնում մարդկային բնույթին հատուկ ամենացածր, չարանենգ ու գազանային ազդեցությունները:

Մեր դեսպանորդներն այն առանցքն են, որով իրականացվում է աշխարհների միջև կապը: Եվ այդ առանցքի մի կողմում գործադրելով մեր ջանքերը՝ մենք պտտական շարժում ենք առաջացնում ձեր աշխարհում:

Նաև մենք ջանում ենք, որ այդ պտտական շարժումը վերանի այնպիսի պարույրի, որը դեպի վեր է ձգվում, այլ ոչ թե ուղղվում դեպի ցած:

Ուստի իմ այս ուղերձը կարդալու ընթացքում հետևեք, թե ինչ արձագանք է առաջացնում այն ձեր մեջ: Անկեղծ եղեք ինքներդ ձեզ հետ: Ձեր բոլոր արձագանքները հավերժորեն պահվում են ակաշիի գրառումներում, թեև ինքներդ որոշ ժամանակ անց իսպառ մոռանում եք, թե ինչ էիք մտածում կամ զգում:

Իսկ երբ ձեր նուրբ մարմիններով հայտնվում եք Կարմայական Վարչության նիստում, և ձեզ վերջին խոսքի իրավունք է տրվում, ձեզնից շատերը, զննելով ակաշիի գրառումների իրենց վերաբերող հատվածը, սարսափում են՝ իրենց արածները տեսնելով, քանի որ այդ գրառումները

ցույց են տալիս ոչ միայն ձեր ունեցած մտքերն ու վիճակները, այլ նաև այն ամենը, ինչին հանգեցրել են ձեր գիտակցության այդ ցածրակարգ վիճակները:

Մեկ ցածրորակ միտքը կամ հույզը, ըստ թրթռանքի, դեպի իր կողմն է գրավում իրեն հարևան մտքերն ու հույզեր: Դրանք ի վերջո բացասական էներգայի մրրիկ են ձևավորում, որը որոշ ժամանակ անցնելուց հետո ֆիզիկական ոլորտում դրսևորվում է իրական մրրիկների և այլ արհավիրքների տեսքով:

Սկզբում ընդամենը մի միտք էր ունեցել, և ահա այն ահավոր արհավիրքի պատճառ է դարձել... Եվ երբ, Կարմայական Վարչության առջև կանգնած, դուք տեսնում եք դա, սարսափահար եք լինում այն տեսարանից, թե որքա՛ն մարդկային կյանքեր խլվեցին ձեր այդ մի մտքի պատճառով:

Որպեսզի մարդկությունը խելամտանա և անցում կատարի հաջորդ էվոլյուցիոն աստիճանին, պետք է շա՛տ զգույշ լինի իր մտքերի և հույզերի դրսևորման հարցում: Քանզի հետագա էվոլյուցիան է՛լ ավելի շատ կախման մեջ կգտնվի ձեր ներքին վիճակներից:

Նույնիսկ այնժամ, երբ արտաքինապես որևէ բացասական արձագանք չեք դրսևորում, իսկ ներքուստ ունեք բացասական մտքեր ու զգացմունքներ, ապա դա նույնքան ավերիչ է աշխարհի համար, որքան եթե ատոմային ռումբ նետած լինեիք:

Որքան մոլորակը շատ է նրբանում, այնքան ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում ձեր մտքերն ու հույզերը, անհամեմատ ավելի մեծ, քան ձեր գործողություններն ու խոսքերը:

Խելամտություն և զգուշություն. ահա այն հատկանիշները, որոնք դուք պետք է ձեռք բերեք: Իսկ դրանք ինքնաբերաբար ձերը կդառնան, եթե ներքուստ նվիրված լինեք Աստծո Կամքին և ցանկություն դրսևորեք ծառայելու ձեր մերձավորներին՝ հենվելով անվերապահ Միոր զգացմունքի վրա:

Տգիտություն՝նն է այն գլխավոր հատկանիշը, որից պետք է ձերբազատվեք մոտակա ժամանակներում: Այն անհամատեղելի է էվոլյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի հետ, որի վրա մարդկությունը պետք է ոտք դնի՝ շնորհիվ ձեր մասին հոգացող հազարավոր Լույսի էակների գործադրած ջանքերի:

*ԵՄ ԵՄ Ալֆան, ձեզ այցի եկա,
որ կատարեմ Երկրի մարդկության հանդեպ ունեցած Իմ պարտքը*

Էլոհիմ Ապոլոն
30 դեկտեմբերի, 2009 թ.

Ձեր շրջակա տարածքը լցրեք կատարյալ կերպերով

ԵՄ ԵՄ Էլոհիմ Ապոլոնը: Ես ձեզ այցի եմ գալիս Երկիր մոլորակի համար դժվարին այս ժամանակներում, որպեսզի բարեկեցության, բերկրանքի և ոգեշնչման համապիտանի դեղատոմս տամ ձեզ...

ԵՄ ԵՄ պատասխանատու ֆիզիկական օկտավայում և ավելի նուրբ աշխարհներում հիասքանչի դրսևորման համար: ԵՄ ԵՄ պատասխանատու ոգեշնչման և պայծառացման համար:

Մարդիկ մոռացել են իմ գոյության մասին: Այլևս մարդիկ ինձ չեն կանչում, երբ ձեռնամուխ են լինում որևէ գործունեության:

Մարդկային ամբողջ գործունեությունը պետք է ուղեկցվի աստվածային ոգեշնչմամբ: Ձեր օկտավայում ինչ էլ անելիս լինեք, պետք է անեք բերկրանքով ու ոգևորությամբ:

Օ՛, դա շատ հեշտ է, սիրելիներս: Դուք բարձր զգացմունքներ չեք ունենում, քանի որ շրջապատված եք անկատար ձևերով, անկատար ձայներով:

Եվ, որպեսզի ձեր աշխարհի թրթռումները մոտեցնեք աստվածային թրթռանքին, հարկ է, որ ձեր աշխարհը լցնեք կատարյալ կերպերով, երբ զբաղվում եք որևէ բնագավառի գործունեությամբ և, առաջին հերթին, արվեստի բնագավառի:

Բայց նաև այն դեպքում, երբ նկարիչ, երգահան կամ երաժիշտ չեք և շատ հեռու եք արվեստներից, կարող եք օգնության կանչ հղել ինձ, և ես ձեր ցանկացած աշխատանքը կլցնեմ աստվածային ներշնչանքով: Եթե տոնական տոբո՞ք եք թխում կամ վերանորոգում եք ձեր բնակարանը, ապա ձեր այդ աշխատանքը նույնպես կհագեցնեմ բերկրանքով ու ոգևորությամբ: Արդյունքում այն ավելի կատարյալ տեսք կստանա: Համաձայնեք, որ եթե մարդիկ իրենց առօրյա գործերն անելին աստվածային ներշնչանքով, ապա նրանց աշխատանքն առավել ոգեշունչ կլինեք, իսկ դրա արդյունքն օժտված կլինեք կատարյալ թրթռանքով:

Ձեր կյանքում ձեզ պակասում են բերկրանքն ու ոգևորությունը: Եվ դրա միակ պատճառն այն է, որ ինքներդ ձեզ զրկել եք այդ բարիքներից՝ հրաժարվելով Աստծո Աշխարհի հետ

համագործակցելուց: Բոլոր ժանրերին պատկանող արվեստի հանրահայտ ստեղծագործությունները վերևից են ոգեշնչում ստացել, իսկ դրանց հեղինակները պարզապես Բարձրագույն ուժերին հնարավորություն են տվել արարելու իրենց միջոցով: Այդպես են ստեղծվել արվեստի բոլոր ամենալավ ստեղծագործությունները:

Միրելինե՛րս, ոչ ոք ձեզ չի գրկել Աստծո և աստվածային ուժերի հետ համագործակցելու ձեր իրավունքից: Տարրոգիները՝ որպես ձևերը պահպանող էակներ, հրեշտակները՝ որպես Բարձրագույն Աշխարհի ներկայացուցիչներ, միշտ պատրաստ են համագործակցության և միշտ պատրաստ են ձեզ օգնելու: Նմանապես նաև ես:

Դուք ինքներդ եք ձեր շուրջը ստեղծում այնպիսի անտանելի պայմաններ, որոնցում չեն կարող ներկա գտնվել Բարձրագույն աշխարհների ներկայացուցիչները:

Ձեզ հարկավոր է դուրս պրծնել այդ արատավոր շրջանից: Դուք պարտավոր եք ձեր կյանքը շրջապատել հիասքանչ կերպերով՝ մեղմ, կախարդիչ երաժշտությամբ, արվեստի նրբաճաշակ ձևերով:

Հարկավոր է նոր սերնդի մարդկանց, վաղ մանկությունից սկսած, ճաշակ ներարկել հիասքանչի նկատմամբ՝ գեղեցիկի զգացում, համաչափությունների իմացություն, նրբագագ հաղորդակցություն ոչ միայն ուրիշ մարդկանց, այլ նաև նուրբ աշխարհի ներկայացուցիչների հետ: Այդ ամենը նոր սերնդի մարդկանց պետք է ներարկվի մայրական կաթի հետ մեկտեղ: Այդ դեպքում հասունանալով մարդիկ կկարողանան այնպես դասավորել իրենց կենսական տարածությունը, որ հրեշտակներն ու տարրոգիները հնարավորություն ունենան ներկա գտնվելու իրենց կողքին: Եվ հնարավոր է, որ ինքս էլ կարողանամ ներկա գտնվել, որպեսզի ձեր աշխատանքի ընթացքում ուղղություն տամ ձեր ձեռքին: Եվ ձեր ձեռքը կքաշի այնպիսի գծեր, որոնց նրբագեղությամբ կհիանան մարդկանց շատ սերունդներ:

Ձեր կյանքում ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչ ուժեր եք հավաքել ձեր շուրջը, ինչին եք նախապատվություն տվել: Եվ եթե մշտապես սգավորի սև զգեստներ եք կրում, որոնց վրա պատկերված են մահվան ու դժոխքի նշանագրեր, լսում եք սխալ ռիթմ ունեցող բարձրագույն երաժշտություն, ապա կարող եմ հաստատ ասել, որ մի քանի կիլոմետր շառավղով ձեր շրջապատում չեն լինի ո՛չ հրեշտակներ, ո՛չ տարրոգիներ, ո՛չ էլ, առավել ևս, ինքս:

Ամեն ինչ ձեր իշխանության տակ է, սիրելիներս: Եվ շատ բաներ ուղղակի ոչ մի ծախս չեն պահանջում: Ամեն ինչ կախված է շրջակա տարածքում ձեր ունեցած բաների որակից: Կան բաներ, որոնք աստվածային թրթիռներ են պարունակում, բայց և կան բաներ, որոնք լրիվ հակառակ թրթիռներ ունեն: Հարկավոր է, որ կարողանաք դրանք զանազանել իրարից: Քանզի ձեզ շրջապատող բաների որակից է կախված, թե ո՛վ կներթափանցի ձեր կյանքի մեջ՝ Լույսի՞՝ էակ, թե՞ խավարի աշխարհի էակ:

Ձեզ շրջապատող իրեղենի և առարկաների նրբագեղությունը կգոյանա աստիճանաբար: Բայց ձեր առաջին և ամենակարևոր քայլն այն կլինի, որ ձեր ամեն մի գործից, ձեր ամեն մի նախաձեռնությունից առաջ կանչ հղեք լուսավոր ուժերին:

Հնարավոր է, որ դեռ Երկրի վրա մնացած լինեն մարդիկ, որոնք հիշում են ամեն գործից առաջ աղոթելու անհրաժեշտության մասին: Բայց հիմա այդպիսիները շատ քիչ են Երկրի վրա: Մարդկանց մեծ մասը խարխափում է խավարի մեջ՝ բոլոր գործերում հույսը դնելով միայն մկանի ուժի վրա: Եվ դեռ ավելի վատ՝ պատահում է, որ օգնության են կանչում խավարի ուժերին ու չար ոգիներին:

Ամենը շատ հոգիներ, գրկված լինելով ճշմարիտ գիտելիքներից և Աստծո Աշխարհի իմացությունից, որևէ գաղափար չունենալով աղոթքի ուժի մասին, ստիպված են լինում այլանդակ նմուշներ ծնել իրենց գործունեության բնագավառում:

Ձեր ամեն մի գործից առաջ, որն ամեն օր կամ օրվա մեջ մի քանի անգամ կատարում եք աշխատավայրում, տանը թե ուսման վայրում, նախ կանչ հղեք Լույսի ուժերին, և կտեսնեք, որ որոշ ժամանակ անցնելուց հետո ձեր կյանքն ամբողջովին փոխվել և լցվել է Լույսով ու ներքին իմաստով:

Դա հոգնեցուցիչ բան չէ, սիրելիներս, և ոչինչ չի պահանջվում, որ այդպես վարվեք: Միայն ձեր կամեցողությունն է պետք:

Ես շատ լավ հասկանում եմ, որ շատ մարդիկ, որոնք մշտական ճնշում են զգում իրենց վրա ձեր աշխարհի անաստված դրսևորումների կողմից, մշտապես գտնվում են գիտակցության ընկճված վիճակում: Դա բնական է, այլ կերպ չէր կարող լինել: Բայց դուք պետք է ինքներդ ձեզ ստիպեք տեղից շարժվել, պետք է ինքներդ ձեզ դուրս քաշեք ձեր աշխարհի ճահճատիղմից՝ աստիճանաբար ձեր աշխարհը լցնելով ավելի ու ավելի կատարյալ նմուշներով ու դրսևորումներով:

Ձեզ նոր Վերածննդի դարաշրջան է պետք: Ձեր հոգիները ծարավ են գեղեցկության: Նրանք հոգնել են ձեր աշխարհի այլանդակ ու աններդաշնակ դրսևորումներից:

Ձեր շրջակա տարածքը լցրե՛ք կատարյալ կերպերով, արե՛ք ձեզնից կախված ամեն ինչ:

Ի վերջո, կարելի է սկզբի համար օգտվել անցած դարաշրջանների այն նմուշօրինակներից, որոնք ժամանակի փորձություն են անցել: Կարող եք և կատարել Վերածննդի դարաշրջանի նկարների, քանդակների վերատպություն: Գործի՛ դրեք ձեր պրպտուն միտքը:

Միայն գեղեցկությունը, միայն կատարյալ, աստվածային նմուշները կարող են մարդկության գիտակցությունը դուրս հանել ճահճատիղմից:

Աստվածային նմուշների կատարյալ թրթիռներն ազդեցություն են գործում ամբողջ տարածության վրա: Նույն կերպ շատ աղոթքներ ընդունած սրբապատկերն ունակ է պաշտպանելու որոշակի տարածք: Այն կարող են պաշտպանել նաև արվեստի ցանկացած ժանրի մեջ ներառված աստվածային կերպերը:

Ես ձեզ իմ օգնությունն եմ առաջարկում ձեր շրջակա տարածքի ձևափոխության գործում: Դիմեք ինձ ահա այսպե՛ս.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ, Էրոհի՛մ Ապոլոն, ես խնդրում եմ, որ քո հսկողության տակ առնես իմ շրջակա տարածքը և միայն աստվածային դրսևորումներ մտցնես ամենուրեք, որտեղ ես գտնվելու կլինեմ՝ տանը, աշխատանավայրում թե հասարակական վայրերում»:

Բոլոր այն վայրերում, որտեղ կարող եմ ներկա գտնվել, ես կկատարեմ ձեր այդ խնդրանքը:

Եվ այսպես, գեղեցկություն և աստվածային կերպեր մարդկային գործունեության բոլոր բնագավառներում. ահա այն, ինչը ձեզ ներկայումս անհրաժեշտ է...

ԵՍ ԵՄ Էրոհի՛մ Ապոլոնը

Պաշտելի Հելիոս

31 դեկտեմբերի, 2009 թ.

Ես մաղթում եմ, որ սովորեք ձեր գիտակցությունը պահել այնպիսի մակարդակի վրա, որտեղ առկա է միայն Մեր, բերկրանք, անդորր ու ներդաշնակություն

ԵՍ ԵՄ Հելիոսը: Եկել եմ այս օրով և լի եմ բերկրանքով: Կուզենայի ձեզ հաղորդակից դարձնել իմ բերկրանքին, քանզի այն ամենը, ինչ տեղի է ունենում Երկրի վրա, ընդամենը ցավալի միջադեպի է նման, որը շուտով կանցնի:

Ես այսօր սուրիանդակի դեր եմ կատարում Կարմայական Վարչության համար, որի նիստը դեռ շարունակվում է: Պատիվ ունեմ ձեզ տեղեկացնելու, որ Երկրի վրա գտնվեցին անհատներ, որոնք մղումների և ինքնագոհաբերման անհրաժեշտ ներուժ դրսևորեցին: Եվ դա ամրագրված է Կարմայական Վարչությանը հղած իրենց նամակներում և ակաշիի գրառումներում:

Մենք հնարավորություն ունեցանք Մեծ Կենտրոնական Արևին ներկայացնելու Աստծո Կամքին նվիրվածության, անձնագոհության ու խիզախության այդ նմուշները: Եվ դա բավարար եղավ, որպեսզի հասկացվի Երկրին այնքան անհրաժեշտ էներգիան:

Թույլ տվեք ձեզ համար մի փոքրիկ գաղտնիք բացել. Կարմայական Վարչության նիստի ողջ ընթացքում սեփական նախաձեռնությամբ ես Միրո ճառագայթներ էի առաքում Երկրին: Եվ ձեզնից շատերը, որոնք հյուսիսային կիսագնդի ձմեռային կարճ ցերեկների ընթացքում իրենց հայացքները դեպի ինձ ուղղելու պահ էին գտնում, կարող էին զգալ իմ Մերը: Ես տառացիորեն արթնացնում էի ձեր հոգիներն իմ Միրով: Եվ հիմա ուրախ եմ, որ իմ հույսերը ևս իզուր չանցան:

Դե ինչ, լավ է, որ այս ուրախալի լուրը տեղ հասցրի նախքան այս բարդ տարվա ավարտը: Տարվա ողջ ընթացքում Վեհապետները շա՛տ ջանքեր գործադրեցին, որպեսզի համակշռեն մոլորակի իրավիճակը: Եվ ուրախալի է, որ Համբարձյալ Դասերի ջանքերն արձագանք գտան ձեր սրտերում, թեև սակավաթիվ, բայց անկեղծորեն նվիրված սրտերում...

Որքա՛ն մեծ երջանկություն է լավ կատարված աշխատանքից բավարարվածություն զգալը... Իմ բերկրանքը սահմաններ չունի... Իսկ եթե ինձ հաջողվեր իմ Մերը, բերկրանքն ու լավատեսությունը ներարկել գոնե նաև նրանց, ովքեր կարդում են իմ այս ուղերձը, ապա պատկերացրեք, թե որքա՛ն լուսավոր ու բերկրալից կդառնար Երկրի մթնոլորտը...

Իմ զարմանքն են հարուցում այն մարդիկ, որոնք փորձում են արտաքին ուրախություն գտնել հարբածների շրջապատում կամ ժամանցներում: Չարմանում եմ, քանի որ ճշմարիտ բերկրանքը սրտից է բխում: Այն տարբեր է լինում: Եվ երբեմն մարդու արտաքինից չի երևում, որ նա լի է ներքին բերկրանքով: Բայց բավական է նայեք նրա աչքերի մեջ, և ձեզ ամեն ինչ հասկանալի կդառնա:

Բերկրանքը գիտակցության վիճակ է, որը կապված չէ ֆիզիկական աշխարհի հետ: Դա գիտակցություն է, որում արտացոլվում են Բարձրագույն աշխարհները: Տա՛ Մատված, որ բոլորդ սովորեք վայելել այդ խաղաղ բերկրանքը, որը ձեր կյանքն իմաստավից է դարձնում, ստիպում ուղղել թևերը և թևածել երկրից վեր:

Դա հատուկ Իմաստություն է, որը լավագույնս համակցվում է Սիրո հետ: Բերկրանք և Սեր: Ձեզ համար բավարար կլինի, եթե ձեր ներսում աճեցնեք միայն այդ երկու որակները: Եվ կտեսնեք, որ ձեր կյանքն ամբողջովին կփոխվի: Հապա նայեք իմ այս նկարին. չէի՞ք ուզե՞նա արդյոք պատասխան ժպիտ առաքել ինձ...

նկար

Մշտապես, երբ թախիծը կամ վատ տրամադրությունն է համակում ձեզ, փնտրե՛ք ինձ երկնքում, որսացե՛ք դեպի ձեզ ուղղված իմ Սիրո ճառագայթը և հիշե՛ք իմ այս ուղերձը:

Խոստացեք, որ երբ ձեզ կճնշեն ծանր մտքերն ու կասկածները, կհիշեք ինձ:

Բավական է միայն, որ լագուր երկնքում մտովի տեսապատկերեք հսկայական, հրաբորբ արեգակի սկավառակ: Հենց միայն այդ մտապատկերն ունակ կլինի ձեր շուրջը եղած մարդկանց աչքի առաջ փոխելու ձեր այդ վիճակը:

Այո՛, ես կախարդ եմ և կարող եմ հրաշքներ գործել:

Ձեզնից յուրաքանչյուրը նույնպես կարող է սովորել հրաշքներ գործել: Դա հատուկ ողորմածություն է, որը ձեզ համար կարող է բացվել որպես շնորհ: Դա մարդկանց սրտերում հուր վառելու շնորհն է: Նման դեպքում ձեր շուրջը եղած մարդիկ կկարողանան զգալ ուժերի, էներգիայի հորդում, հոգու բարձրաթրթիռ վիճակ: Աղոթեք, որ ձեզ համար բացվի այդ շնորհը, որի գաղտնիքը շատ պարզ է. դուք դառնում եք Աստծո էներգիայի փոխանցիչ դեպի ձեր աշխարհ: Եվ այնժամ, երբ ձեր վաստակով ձեռք կբերեք այդ շնորհը, ձեր աշխարհի համար արևի պես կդառնաք: Ձեր ջերմությունն ու էներգիան կփոխանցեք ձեր շուրջը եղած անխտիր բոլորին՝ առանց որևէ մեկի համար որևէ սահմանափակում մտցնելու:

Իհարկե, նման վիճակի հասնելու համար տարիներ շարունակ պետք է վեր բարձրանաք դեպի գիտակցության այդ մակարդակը: Բայց կա ավելի կարճ ուղի, որը կարող է ակնթարթորեն ձեզ հասցնել այդ վիճակին: Եվ ձեզնից նրանք, ովքեր կարմայական Վարչությանը հղած իրենց նամակներում հանձն են առել ինքնագոհողության գնալ, որպեսզի աշխարհը շարունակի գոյատևել, կարող են նշված ուղով այդ մակարդակին հասնելու փորձ անել: Նրանց համար դա հեշտ կլինի:

Անհամեմատ ավելի դժվար կլինի գիտակցության ձեռք բերված մակարդակը երկար ժամանակով պահպանելը: Եվ այնժամ, երբ, ինքներդ ձեզ հաղթահարելով, ձեզնից վանելով ձեր և շրջապատի մարդկանց ցածրակարգ վիճակները, ձեր գիտակցությունն օր օրի կպահպանեք անվերապահ Սիրո և ներքին բերկրանքի վիճակում, դրանով իսկ կանցնեք ձեր ձեռնադրումները:

Ես մաղթում եմ, որ նոր տարվա ընթացքում սովորեք ձեր գիտակցությունը պահել այնպիսի մակարդակի վրա, որտեղ առկա է միայն Սեր, բերկրանք, անդորր ու ներդաշնակություն: Որքան մեծ լինի այնպիսի մարդկանց քանակը որոնք կարողանում են մշտապես լինել նման վիճակում, այնքան ավելի հեշտ կլինի մնացածների համար: Առաջատարների՝ համար է դժվար: Հետևից գնացողների համար հեշտ է:

ԵՍ ԵՄ Հելիոսը

Միասնականի Ներկայություն
1 հունվարի, 2010 թ.

Օրինանք

ԵՍ ԵՄ Միասնականի Ներկայությունը:

ԵՍ ԵՄ այսօր եկել ձեզ օրհնելու:

Ես օգտվում եմ այս հնարավորությունից, որպեսզի առաքեմ ձեզ Իմ Սիրո ճառագայթը այնպիսի ինտենսիվությամբ, որ այն ընկալելի լինի այս դեսպանորդի համար: Օ՛, մարդկային օրգանիզմն ունակ է ընկալելու Իմ ճշմարիտ Ներկայության սոսկ միլիոներորդական մասը...

Ես չեմ կարող Ինձ դրսևորել ամբողջապես: Ձեր աշխարհը չի կարող դիմանալ Իմ թրթռանքին: Ուստի Ես առաքում եմ Իմ Ներկայության միայն մի փոքր մասը՝ Իմ Սիրո ճառագայթը բեկելով

դեսպանորդի չակրաների միջով: Նաև դուք, որ կհաղորդվեք այս ուղերձին, ունակ կլինեք ընկալելու աշխարհին տված Իմ օրհնանքի մի փոքրիկ մասը միայն:

ԵՍ ԵՄ՝ լեցուն ուրախությամբ, որ հաղորդակցության հնարավորություն կա ձեր և Իմ աշխարհների միջև: Օ՛, դուք չեք պատկերացնում, թե որքան նշանակալից իրադարձություն է սա...

ԵՍ ԵՄ, Կարող եմ ներկա գտնվել ձեր աշխարհում: Իսկ դա նշանակում է, որ ձեր աշխարհը մեծագույն հնարավորություն է ստանում հետագա զարգացման համար: Եթե հանգամանքներն այնպես դասավորվեին, որ Ես չկարողանայի ներկա գտնվել դեսպանորդի չակրաներում, ապա ամեն ինչ այլ ընթացք կստանար:

Դուք սովոր եք ձեր աշխարհում առաջնորդվելու ամեն ինչի նկատմամբ ունեցած ձեր պատկերացումներով: Եվ ձեզ համար նշանակալից է այն, ինչ տեղի է ունենում ձեր աշխարհում: Եվ այնժամ, երբ ինչ-որ բան զգալու կամ շոշափելու հնարավորություն չեք ունենում, միայն հավատը կարող է ձեզ ստիպել, որ ընկալեք այդ ինչ-որ բանը:

Մեր աշխարհն այդպիսին չէ: Ինձ համար Իմ այսօրվա ուղերձ տալու փաստը շատ նշանակալից է և, հիրավի, նոր հնարավորությունների դուռ է բացում Երկրի մարդկության համար: Քանզի Ես եմ որոշում ձեր ապագան, և ամեն ինչ Ինձնից է կախված:

Ուստի նրանց համար, ովքեր անկարող են ընկալել ձեր աշխարհում Իմ այսօրվա Ներկայության փաստը, թող որ ամեն ինչ մնա առաջվա պես: Մի՛ անհանգստացեք որևէ բանի համար, ամեն ինչ ինքնըստինքյան տեղի կունենա Իմ Ներկայությամբ:

Շատերն են երագում, որ ամեն ինչ ինքնըստինքյան տեղի ունենա, իսկ իրենք այդ ընթացքում հանգստանան:

Սակայն, թե ինչ պետք է տեղի ունենա, Իմ ու ձեր ըմբռնումներն այդ առումով տարբեր են: Վերջին հաշվով ամեն ինչ կզարգանա այն ուղով, որը Ես եմ նախանշել, սակայն հազիվ թե դա դուր գա մարդկային անհատների մեծամասնությանը:

Արդ, իզուր ժամանակ մի՛ վատնեք: Վերակառուցե՛ք ձեր գիտակցությունը: Ներառե՛ք աստվածային սկզբունքներն ու աստվածային կերպերը սկզբում ձեր գիտակցության մեջ, որից հետո դրանք տարածեք ձեր աշխարհում: Քանզի ամեն ոք, ով ունակ կլինի իր ստեղծարարությամբ հաղորդակցվելու աստվածային կերպերին, կազատվի պատրանքի դյուրանքներից: Եվ դուք մեկը մյուսի հետևից կարթնանաք Հավերժական Կյանքի համար:

Ես ասացի:

Այս մասին դուք կարող եք կարդալ հինավուրց իմաստունների գրքերում, ովքեր կարողացել են որսալ Իմ ճառագայթը և Ինձ հետ գրուցել հուրհրատող ու անկեղ թփի միջով:

Ձեր աշխարհում Իմ Ներկայության միլիոներորդական մասը բավարար է, որպեսզի ամեն ինչ սկսի փոխվել:

Իսկ հիմա, երբ հիմնականն արդեն ասացի, Ես կուզենայի ամրապնդել ասվածը:

Մի՛ երկյուղեք այն ամենից, ինչ պետք է տեղի ունենա: Մաքուր սրտերի ու մաքրված գիտակցությունների համար ոչինչ սարսափելի չէ: Դուք արդեն վաստակել եք Հավերժական Կյանք մտնելու ձեր իրավունքը: Իսկ նրանք, ովքեր իրենց ազատ կամքով ընտրել են պատրանքային աշխարհը, դեռևս որոշ ժամանակ կմնան այդ աշխարհում, մինչև որ այն դադարի գոյություն ունենալուց:

Հետագա ուղու ողջ մեխանիզմը ձեր ներսում է դրված՝ ձեր սրտերում:

Հնարավոր չէ կապված մնալ ֆիզիկական աշխարհին և միաժամանակ մուտք գործել Աստծո Արքայություն: Խոսքս վերաբերում է ցանկացած և ամենափոքր իսկ կապվածությանը:

Բոլորին խնջույքի եմ հրավիրում: Ամեն ոք կարող է գալ: Բայց արդյո՞ք բոլորը կկարողանան մուտք գործել:

Աստվածային հնարավորության դռները լայնորեն բաց են, աննախադեպ լայնորեն:

Լքե՛ք ձեր ուռևանները, եկե՛ք Իմ հետևից, և Ես ձեզ մարդկային հոգիների որսորդներ կդարձնեմ: Եվ դուք կկարողանաք պատրանքի ծովից շատերին դուրս հանել, մինչև վրա հասնի նախանշված ժամկետը, որն արդեն հեռու չէ:

Ես բավականին շատ բաներ ասացի նրանց համար, ովքեր հասկանում են: Իսկ նրանց համար, ովքեր պարզապես կարդում կամ լսում են, բայց չեն հասկանում, նույնպես ասացի այն ամենը, ինչ անհրաժեշտ էր ասել:

ԵՍ ԵՄ Միասնականի Ներկայությունը: ՕՍ

Ընդունեք այս ուղերձի շնորհը ձեր սրտերի մեջ

ԵՄ ԵՄ Հառութամա Բուդդան: Այսօր եկել եմ, որպեսզի ձեր գիտակցության մեջ ամրապնդեմ այնպիսի ճշմարտությունները, որոնք, հուսով եմ, օգտակար կլինեն և՛ ձեր զարգացման համար, և ձեր առօրյա կյանքում:

Որքա՛ն երկար ժամանակ է, ինչ մենք ուղերձներ ենք տալիս: Եվ ես զարմանքով տեսնում եմ, որ շատ քիչ բան է փոխվել ինչպես ֆիզիկական ոլորտում, այնպես էլ ձեր գիտակցության մեջ:

Իսկ գիտե՞ք, թե ինչու է այդպես: Որովհետև պատրանքն ուժեղ է: Այնքան ուժեղ է, որ մեր տված ցանկացած գիտելիք և Ուսմունք, շփման մեջ մտնելով ձեր աշխարհի պատրանքի հետ, պարտության է մատնվում, և պատրանքը նորից գերիշխող է դառնում ձեր գիտակցության մեջ:

Դուք չեք կարողանում ճշմարտության կիզակետն ամրապնդել ձեր գիտակցության մեջ: Դուք չեք կարողանում հենակետ գտնել, որին հենվելով՝ ունակ կդառնայիք գործելու պատրանքում առաջնորդվելով լինելության բարձրագույն սկզբունքներով:

Ես հենվում եմ որպես արքայազն Սիդհարթհա իմ մարմնավորման ժամանակ ձեռք բերած փորձի վրա:

Այո՛, ես շա՛տ ժամանակ հատկացրի ճշմարտության որոնումներին: Ես պայծառացման հասա Աստծո ողորմածության շնորհիվ՝ համայն այս տիեզերքի Բարձրագույն ուժի շնորհիվ:

Ես շնորհ ստացա, որ տեսնեմ ու զանազանեմ իրականությունը պատրանքից: Ես գիտելիք ստացա, որի շնորհիվ ամեն ոք կարող է ընթանալ իմ ուղով և հասնել պայծառացման:

Դա տեղի ունեցավ ավելի քան 2500 տարի առաջ: Արդյոք հիմա դուք հաճա՞խ եք ձեր շրջապատում հանդիպում պայծառացած բուդդաների...

Ես գիտեմ, այո՛, որ բոլոր ժամանակներում Աստված Երկիր է ուղարկել իր Սրբերին ու Սպասավորներին: Սակայն նրանք եզակիներ են եղել: Ամեն հարյուրամյակում՝ ոչ ավելի, քան մեկ կամ մի քանի հոգի:

Միշտ չէ, որ այդպես է եղել: Երկիրն ապրել է ավելի լավ ժամանակներ: Եվ այժմ, երբ ես ունեմ Համբարձյալ Վեհապետի գիտակցության մակարդակ, շատ լավ եմ տեսնում այն պահը, երբ մարդկությունն սկսեց ներքև սահել՝ առաջնորդվելով իր բնույթի մթին դրսևորումներով:

Իսկ այժմ, երբ թվում է, թե մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում առաջընթացն անառարկելի է, միայն մի ասպարեզ է գերծ մնացել դրանից՝ մարդու հարաբերությունները Բարձրագույն աշխարհի հետ: Այդ ասպարեզն առաջվա պես հեղեղված է մարդկային ֆանտազիայի այլազան անհեթեթ դրսևորումներով: Եվ բազմաթիվ ցածրակարգ մարդիկ իրենց մասնագիտացումը կամ սիրած զբաղմունքն են դարձրել այն, որ կառավարում ու ձեռնածություն են անում ճշմարտության բազմաթիվ որոնողների հետ՝ նրանց ներքաշելով իրենց ցանցերի մեջ և, ըստ էության, կործանելով նրանց հոգիները:

Սակայն առանց այդ ասպարեզում կարգ ու կանոն մտցնելու՝ մյուս բոլոր ասպարեզներում հնարավոր չէ տիեզերական օրենքների որակյալ դրսևորումը: Մարդու գործունեության գլխավոր ոլորտը Բարձրագույնն է: Մյուս բոլոր ոլորտները կախված են դրանից և ենթարկվում են դրան:

Սա օրենք է, և այդպես միշտ է եղել: Ուստի և ձեր Հավատի աստիճանը, նվիրվածությունը, ներքին շարժառիթների մաքրությունն են, որ դեկավար դեր են կատարում ձեր կյանքի բոլոր կողմերում:

Լրատվության զանգվածային միջոցները միշտ հեղեղված կլինեն ցածրակարգ նմուշներով ու անսքող այլասերվածությամբ, քանի դեռ մարդկային գործունեության այդ բարձրագույն ոլորտում, մարդու և Աստծո, մարդու և Բարձրագույն աշխարհների փոխհարաբերության ոլորտում կարգուկանոն չի հաստատվի:

Ձեզ կարող է թվալ, թե ես կոչ եմ անում գնալ տաճարներն ու եկեղեցիները և դրանցում փնտրել ձեր փրկությունը: Իրականում Հավատը ձեր ներքին հատկանիշն է, և այն կախված չէ ձեր այցելած տաճարների քանակից:

Դեռևս այն ժամանակ, երբ ես իմ ամենահայտնի մարմնավորումն էի ապրում, հասկացա, որ մարդկանց համար շատ դժվար է շրջապատող պատրանքը հաղթահարելը: Եվ մի քանի հարյուրամյակի ընթացքում դա հաջողվում է միայնակ անել միայն եզակիներին:

Հատկապես դա՛ ստիպեց ինձ, որ իմ փորձը կիսեմ ուրիշ մարդկանց հետ: Շնորհիվ Երկնքի ողորմածության, իմ արքայական ծագման և այն հանգամանքի, որ ես ապրում էի Հնդկաստանում՝ մի երկրում, որտեղ հարգի են հոգևոր նվաճումները, ես շատ արագ հռչակ ձեռք բերեցի: Եվ

գործադրեցի իմ ողջ ազդեցությունը, որպեսզի իմ փորձը կիսեմ հնարավորինս շատ մարդկանց հետ: Ես հասկանում էի, որ նրանցից շատերն ունակ չեն ընկալելու իմ ուսուցանած ճշմարտությունները: Սակայն ես տեսնում էի նրանց նվիրվածությունը, նրանց ձգտումները և հասկանում, որ եթե այս մարմնավորման ընթացքում նրանք ի վիճակի չլինեն հասնելու պայծառացման, ապա այնուամենայնիվ նրանց ձեռք բերած փորձը չի կարող կորչել: Այն կմնա նրանց կառույցի մարմիններում և կդսևորվի, երբ դրա համար կընձեռվի տիեզերական հնարավորություն:

Ես այս ամենը ձեզ ասում եմ այն հույսով, որ իմ այս ուղերձը կկարդան նաև իմ աշակերտները: Առաջին հերթին ահա նրանց եմ դիմում. ընդունե՛ք իմ այս ուղերձի շնորհը ձեր սրտերի մեջ: Թող որ ձեր սրտերն ընկալեն իմ այս ուղերձը: Եվ հնարավոր է, որ կարողանաք հիշել ձեր աշակերտության ժամանակաշրջանը, երբ ես անձամբ ձեզ ուսուցանելու հնարավորություն ունեի:

Ես մեծ հավաքներ չեի սիրում: Երբ մեծ թվով մարդիկ են ներկա լինում, շատ դժվար է լինում բախել նրանց սրտերը: Քանզի նրանք կրում են իրենց կողքին նստածների աուրաների ազդեցությունը, որի արդյունքում Ուսմունքը բեկբեկվում է բազմաթիվ աուրաներում:

Դժվար է կանխատեսել նման ուսուցման արդյունքը:

Ես սիրում էի ուսուցանել այնպես աննկատ, որ աշակերտը նույնիսկ զլխի չէր ընկնում, որ ուսուցման գործընթաց է անցնում: Ուսուցանում էի առօրեական գործերի օրինակներով: Եվ միշտ ասում էի, թե ինչպես ուղղորդեն իրենց էներգիան, որպեսզի ցանկացած գործի արդյունք ոչ միայն ֆիզիկական ոլորտում կատարյալ երևա, այլ նաև արածի փորձառությունը հավերժորեն մնա գործն անողի բարձրագույն մարմնում:

Ուսուցման այդ գործընթացն անհամեմատ ավելի արդյունավետ է: Եվ իմ ստացած արդյունքները գերազանցեցին բոլոր սպասելիքները: Միակ պայմանն այն էր լինում, որ աշակերտներն ընկալեին իմ ցուցումները որպես Ուսուցչի ցուցումներ, որն ուզում է իրենց օգնել, և դրանք չընկալեին որպես հավակնությունների ու կամակորոշության արտահայտություն:

Միևնույն դիտողության նկատմամբ մարդու վերաբերմունքով որոշվում էր ուսուցման արդյունավետությունը: Եվ եթե մարդն իմ դիտողությունները սիրով էր ընդունում և կամենում դրանք ի կատար ածել լավագույն ձևով, ապա աչքի առաջ կատարելագործվում էր ու զարգանում:

Իսկ նրանք, ովքեր հրապարակավ այնպիսի տեսք էին ընդունում, որ իբր ընդունում են իմ դիտողությունները, բայց հոգու խորքում մտածում էին, թե ես ճիշտ չեմ, և չարժե մեծ նշանակություն տալ իմ խոսքերին ու դիտողություններին, որոշ ժամանակ անց դառնում էին դյուրագրգիռ ու անհավասարակշիռ, ապա լքում էին իմ համայնքը: Ես դա նրանց չեի արգելում: Քանզի հնարավոր չէ որևէ բան սովորեցնել մեկին, ով չի ուզում սովորել:

Ես ձեզ բերեցի մի օրինակ իմ երկրային կյանքից: Միայն մի օրինակ: Բայց համաձայնեք, որ ձեզնից շատերը հենց այն բանից են տուժում, որ չեն կարողանում հետևել այն ուսմունքին, որն իրենց հրամցնում է Կյանքը:

Ձեզնից յուրաքանչյուրի համար Կյանքն ուսուցչի դեր է կատարում: Եվ այն, թե ինչպես եք վերաբերվում ձեր կյանքում ծագած խնդիրներին ու իրավիճակներին, կա՛մ կարող է ձեզ առաջ մղել էվոլյուցիայի ուղով, կա՛մ էլ շատ հետ տանել:

Եվ ձեր կյանքի շատ խնդիրներ իրենց լուծումը կստանային, եթե հետևեիք ֆիզիկական ոլորտի ճշմարիտ Ուսուցչից ստացած խորհուրդներին: Ես լիառույս եմ, որ կգա այն ոսկե ժամանակը, երբ Շամբալայի Վեհապետները կկարողանան մարմնավորվել և անմիջականորեն ուսուցանել ձեզ:

Իսկ առայժմ մենք օգտվում ենք դեսպանորդության սահմանակարգից, որպեսզի պարզապես դուք կարողանաք ճիշտ կողմնորոշիչներ ունենալ ձեր կյանքերում: Շատերի համար այս թելադրությունները կողմնացույցի սլաքների դեր են կատարում, որոնցով կարող են ճշգրտել իրենց կյանքի ուղղությունը: Դե ինչ, դա էլ է շատ կարևոր աշխատանք: Եվ շատ հոգիներ օգտվում են կենսական կողմնորոշիչ ստանալու այդ հնարավորությունից:

ԵՍ այս օրով եղա ձեզ հետ:

ԵՍ ԵՄ Հաղթանա Բուդդան

Մովսես
3 հունվարի, 2010 թ.

**Առանց Երկրի վրա տիեզերական Հիերարխիայի վերականգնման,
առանց Աստծո Օրենքի նկատմամբ պատկառանք տածելու՝
Երկրի մարդկությունն ապագա չունի**

ԵՄ ԵՄ Մովսեսը: Այս օրով եկել եմ, որպեսզի ձեր սրտերում կրկին հաստատեմ Աստծո Օրենքի գերակայությունը:

Իմացեք, որ ձեր կյանքերում չկա ավելի կարևոր բան, քան Աստծո հետ ձեր փոխհարաբերությունն է, անձնական փոխհարաբերությունն Աստծո հետ:

Աստված չի պատկանում որևէ առանձին կրոնի, հավատամքի կամ ազգության: Աստված մե՞ծ է: Նա ձեր շրջապատի ամեն ինչն է՝ այն ամենը, ինչ տեսնում եք, և այն ամենը, ինչ չեք տեսնում:

Ուստի այժմ, երբ մարդկությունն իր հերթական ելքն է կատարում հինգերորդ արմատական ռասայից վեցերորդ արմատական ռասային, առաջնահերթ է դառնում Հավատի հարցը:

Ես եկել եմ, որ ձեզ ասեմ այդ մասին: Որովհետև ձեզնից շատերը հավատքի տակ բոլորովին այլ բան են հասկանում, որն Աստծո հետ որևէ առնչություն չունի: Եվ բոլոր այն մարդիկ, որոնք ինձ հետ քառասուն տարի քայլեցին անապատով, կարողացան ապրել ու դիմանալ այդ փորձությանը՝ միայն շնորհիվ այն բանի, որ իմ ներսում ես ունեի մի բան, որն ինձ թույլ էր տալիս հաղորդակցվել Աստծո հետ: Դա Երկնքի մեծագույն ողորմածությունն էր: Դա Աստծո շնորհ էր, որին, իմ կարծիքով, ես արժանի չեի: Բայց Աստված այլ կերպ տնօրինեց: Անկախ իմ բոլոր անձնական թերություններից ու անկատարություններից՝ Աստված որոշեց, որ իմ մեջ կա մի բան, որն ինձ արժանի է դարձնում Աստծո ողորմածությանը:

Մինչև իմ օրերի ավարտը ես կրեցի իմ սրտի մեջ Աստծո այդ շնորհը: Եվ շնորհիվ դրա՝ այն մարդիկ, որոնք վստահեցին ինձ, կարողացան աղջամուղջից դուրս գալ Ավետյաց երկիր:

Ուրիշ ոչ ոք չուներ այդ շնորհը: Եվ մարդիկ, որոնք համարում էին, որ հավատարիմ են ինձ ու Աստծուն, քառասուրյա իմ բացակայության ընթացքում, երբ ես լեռն էի ելել Աստծո հետ զրույցի համար, երես թեքեցին Աստծուց և սկսեցին ծառայել ոսկե հորթին:

Ես ստիպված էի մշտապես այդ մարդկանց կողքին լինել՝ չբացակայելով ոչ մի օր: Հենց հեռանում էի, մարդիկ կորցնում էին իրենց գիտակցության մակարդակը և նորից վերագտնում էին այն, երբ վերադառնում էի:

Աստված չի կարող Երկրի բոլոր մարդկանց գիտակցության մակարդակը պահպանել: Նա կարող է ներկա լինել միայն որոշակի քանակությամբ ընտրյալների մեջ:

Նա ներկա եղավ Հիսուսի մեջ: Բայց այդ ժամանակ արդեն մարդկության անկումն այնքան խորն էր, որ ամբողջ գոչում էր. «Խաչը հանել դրան»:

Աստված իմ... Դու տեսա՞ր այդ բոլորը... Որքա՞ն մեծ է Աստծո ողորմածությունն ու համբերությունը, որ մինչև օրս էլ այն մարդիկ, որոնք խաչեցին Հիսուսին և քառասուրյա իմ բացակայության ժամանակ էլ պարում էին ոսկե հորթի առաջ, դեռևս մարմնավորվում են Երկրի վրա: Եվ դեռ լկտիաբար տրտնջում են իրենց ճակատագրից:

Այժմ սկսվում է ռասաների փոխվելու ժամանակը: Այն ժամանակներն են գալիս, երբ պետք է վերջ տրվի ժողովուրդների ու կաստաների խառնվելուն: Ժողովուրդների այդ խառնուրդի միջից պետք է վեր հանվի աստվածային կարգուկանոն:

Այժմ Երկրի վրա ամեն ինչ գլխիվայր է շուռ տրված: Պարահանդեսը ղեկավարում են նրանք, ովքեր Աստծուց չեն, ովքեր իրենց սրտում չունեն Աստծուն: Միակ հնարավորությունը մարդկության համար այն է, որ վերականգնվի աստվածային կարգուկանոն:

Պետք է պատվի արժանաճան այն մարդիկ, որոնց սրտերում ապրում է Աստված: Իսկ ովքեր իրենց սրտերում Հավատ չունեն, պետք է գրավեն իրենց գիտակցության մակարդակին համապատասխանող դիրքեր: Առանց Երկրի վրա տիեզերական Հիերարխիայի վերականգնման, առանց Աստծո Օրենքի նկատմամբ պատկառանք տածելու՝ Երկրի մարդկությունն ապագա չունի:

Աստծո ողորմածությունն անսահման է: Եվ Երկրին մեկը մյուսի հետևից նոր հնարավորություններ են տրվում:

Ես տեսնում եմ, որ շատ հոգիներ խարխափում են տգիտության մեջ, շատերն էլ գիտելիքներ չունեն, որպեսզի ազատվեն պատրանքի խավար շղարշից: Նաև կան այնպիսիները, որոնք բացահայտ ծիծաղում են Աստծո և Նրա Օրենքների վրա: Աստծո ողորմածությունը նրանք ընկալում են որպես Աստծո թուլություն:

Դժվարին ու ծանր ժամանակներ է ապրում այժմ Երկիրը: Ամեն ինչ իրար է խառնված: Եվ անամոթությունն ու ստորությունը հասարակության մեջ գլխավոր դիրքերն են զբաղեցրել:

Ես կվերադառնամ Երկիր, երբ կգա դրա ժամանակը: Եվ նորից իմ հետևից կտանեն այն նվիրյալներին ու անեղծներին, որոնց վրա կարողացա հենվել, երբ ամբողջ ժողովուրդը պարում էր ոսկե հորթի առաջ: Եվ միայն այդ նվիրյալներն ու անեղծները կդիմանան այն ամենին, ինչ սպասվում է Երկրին:

Անամոթությանը, ստորությանը, խավարամոլությանն ու տգիտությանը վերջ կտրվի հնարավորինս կարճ ժամկետներում:

Հարկ չկա, որ դուք կանխագուշակեք Աստծո բոլոր պլանները: Եվ որքան էլ ձեր մարդկային գիտակցությամբ փորձեք կանխարգելել վրա հասնելիքը, որքան էլ խոր ապաստարաններ փորեք և մթերքներ կուտակեք, դրանք միայն խաղալիքային խոչընդոտներ կլինեն Աստծո ճանապարհին:

Աշխարհում այնպիսի վայր չկա, որտեղ կարողանաք թաքնվել և ձեզ ապահով զգալ ձեր այն կարմայի վերադարձից, որն այժմ զսպվում է Աստծո կողմից:

Միակ ելքը, որը ձեզ համար թողնում է Աստված, ամուր Հավատն է, Անվերապահ Մերը և Աստծո Իմաստությունը, որոնք ձեր սրտերից են բխում:

Ծանր կլինի ձեզ համար, քանի որ ամեն անկյունում ոսկե հորթեր են զարդարվում: Ձեզ ժամանակ է տրվում, որպեսզի ինքներդ պատվանդաններից ցած գցեք ձեր ոսկե հորթերին և վերաշինեք ձեր աշխարհում Աստծո Իրականության բուրգը:

Ժամկետը հայտնի է: Եվ նույնիսկ Աստծո ողորմածությունն է հասնում իր ավարտին, ինչը կանխորոշված է տիեզերական ժամկետներով:

ԵՍ ԵՄ Մովսեսը, եկա Երկրի մարդկությանը խելքի բերելու առաքելությանը

Էլոհիմ Խաղաղություն
4 հունվարի, 2010 թ.

Երկրի վրա խաղաղությունը կախված է գիտակցության այն մակարդակից, որը կարող են Երկրի վրա դրսևորել Աստծո լավագույն ուստրերն ու դուստրերը

ԵՍ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը:

Ես ձեզ այցի եմ եկել ձեր աշխարհում խաղաղություն հաստատելու ցանկությամբ: Ես գիտեմ, որ ձեր աշխարհն առաջվա պես կրում է գիտակցության այնպիսի անկատար դրսևորումների ազդեցությունը, ինչպիսիք են պատերազմները, բռնությունները: Գիտեմ, որ այդ ամենը տեղի է ունենում ձեր աշխարհում: Ուստի և տարեսկզբի այս օրով ձեզ այցի եմ եկել:

Ես բերում եմ ձեզ իմ հույսն ու վստահությունը, որ ձեր աշխարհում ամեն ինչ կփոխվի: Մարդկության պատմության մեջ պատերազմները ժամանակավոր երևույթ են: Իհարկե, դուք ուսումնասիրել եք պատմությունը և կարող եք ինձ առարկել, որ ամբողջ պատմությունը լիքն է պատերազմներով ու զավթումներով, բռնությամբ ու արյունահեղությամբ:

Ես դա գիտեմ, սիրելիներս: Բայց նաև գիտեմ, որ դրանք ժամանակավոր են և ընդամենը ձեր անկատար գիտակցության արտահայտությունն են:

Նաև գիտեմ, որ ձեզնից ամեն ոք, ով ապրում է Երկրի վրա, այնտեղ տեղի ունեցած ամեն մի արյունահեղության անմիջական մասնակիցն է: Դուք բոլորդ որոշակի մակարդակում միասնական էներգետիկական համակարգ եք ներկայացնում: Եվ այնտեղ, որտեղ ցասում ու ագրեսիա է իրականացվում որևէ անհատի կողմից, կազմավորվում է բացասական էներգիայի օջախ, որը համապատասխան տեղ է փնտրում երկրագնդի վրա, որպեսզի դրսևորվի:

Դուք չեք կարող ասել, որ պատերազմների, բռնությունների համար մեղավոր են միայն այն մարդիկ, որոնք անմիջականորեն մասնակցում են կռվին: Ո՛չ, պարզապես այդ եղանակով դրսևորվում է մարդկության ընդհանրական գիտակցության անկատարությունը:

Ուստի ես կոչ եմ անում, որ խաղաղություն հաստատեք ձեր սրտերում: Այն դեպքերում, եթե կարողանում եք լրիվ վերահսկել ինքներդ ձեզ, եթե կարողանում եք պահպանել լիակատար հավասարակշռության վիճակ, երբ ձեր շուրջն ամեն ինչ փլուզվում է, ապա անձամբ Ես և Համբարձյալ Վեհապետները ձեր միջոցով կարող ենք ոռոգել մոլորակի խաղաղության մշտադալար ոսկե եղևնին և հանգցնել ցանկացած լարվածության օջախ: Այդ ամենը հնարավոր է անել, սիրելիներս, և անել իրապես: Մեզ միայն ֆիզիկական ոլորտում գտնվող կատարյալ անոթ է պետք՝ մարմնավորված մեկը, որն ունակ է խաղաղության էներգիան փոխանցելու ձեր թանձր աշխարհին:

Այո՛, դա շատ հասարակ գործ է թվում, բայց իրականում ձեր աշխարհում շատ դժվար է հասնել գիտակցության այնպիսի մակարդակի, որ ձեր ողջ կյանքի ընթացքում կամ դրա մի որևէ

հատվածում կարողանաք խաղաղության կատարյալ աստվածային գիտակցությունը փոխանցել ձեր ֆիզիկական ողորտին:

Ուստի և պատերազմներն ու բռնությունները դեռևս շարունակվում են ձեր աշխարհում: Եվ ես կուզենայի, որ այսօր դուք մտորեիք այն մասին, թե ինքներդ անձամբ ինչ կարող եք անել խաղաղության համար:

Նորից կրկնում եմ, որ յուրաքանչյուրիդ մեջ կա մի բան, որը թույլ է տալիս, որաշխարհում ագրեսիան պահպանվի: Մենք չենք կարող մի ակնթարթում հասնել գիտակցության նոր մակարդակի, որը գերծ է ագրեսիվությունից ու պատժելու ցանկությունից: Ըստ էության, ներկա գիտակցության արմատները դարերի խորքից են սկիզբ առնում, երբ մարդկանց գիտակցության մեջ կորսվեցին աստվածային կերպերը: Եվ նրանց սկսեց թվալ, թե Աստված չափից դուրս շատ է դանդաղում պատժելու նրանց, ովքեր, ինչպես իրենք էին կարծում, արժանի են պատժի:

Պատրանքն այնքան թանձրացավ, որ մարդիկ կորցրին իրենց աստվածային տեսողությունն ու աստվածային կողմնորոշիչները: Եվ նրանք որոշեցին աստվածային արդարադատությունը փոխարինել իրենց գործողություններով:

Նրանք այսպես էին մտածում. չարը պետք է պատժվի, և եթե իրենք դա չանեն, ապա ո՞վ պետք է անի:

Հանուն Աստծո, հանուն արդարության ու բարու կատարված առաջին սպանության կարման անցած անհաշիվ հազարամյակների ընթացքում այնքան է խճճվել, որ հնարավոր չէ մի ակնթարթում կանգնեցնել այդ կարմայի էջքը: Ցանկացած կարմա, ցանկացած էներգիա պետք է աստիճանաբար սպառի ինքն իրեն:

Ուստի հնարավոր չէ հենց վաղվանից աշխարհում վերջ տալ բռնությանը: Այդ մասին կարելի է երագել, կարելի է ձգտել դրան, բայց բռնության կարման պետք է սպառի ինքն իրեն:

Սակայն ձեզ հայտնի է, որ կարմայի վերադարձը կարող է տեղի ունենալ տարբեր ուղիներով: Ձեզ համար բռնության կարման կարող է վերադառնալ երրորդ համաշխարհային պատերազմի տեսքով: Բայց դա կարող է և կանխարգելվել, եթե բավարար քանակությամբ մարդիկ որոշեն իրենց կյանքերում բռնություն չգործադրել և *մյուս այտն էլ դեմ տան, երբ մեկին խփում են*: Ահա եթե բավարար թվով մարդիկ ունակ լինեն դրսևորելու նման գիտակցության մակարդակ, ապա այդ մարդկանց սրտերով դրսևորված խաղաղարար հատկանիշները կմարեն բռնության ու պատերազմների կարման:

Խոսքս վերաբերում է Քրիստոսի և Բուդդայի գիտակցության մակարդակին: Միայն գիտակցության այդ մակարդակով է հնարավոր ներքին խաղաղության ու հանգստության հատկանիշի լիակատար տիրապետումը:

Ուստի ես ձեզ կոչ եմ անում, որ կատարելագործեք ձեր գիտակցությունը, որպեսզի աշխարհին ծառայեք այնպես, ինչպես Հիսուս ծառայեց՝ 2000 տարի առաջ մարմին առնելով:

Աշխարհը ձեր սպասավորության կարիքն ունի: Երկրի վրա խաղաղությունը կախված է գիտակցության այն մակարդակից, որը կարող են Երկրի վրա դրսևորել Աստծո լավագույն ուսուրերն ու դուստրերը:

Հիմա ձեր ժամանակն է հասել, երբ պետք է դա անեք: Այլևս հետաձգելու հնար չկա:

Ես այսօր այցելեցի ձեզ՝ Երկրի վրա խաղաղության բարի լուր բերելով: Իսկ այդ խաղաղությունն ամբողջովին ձեզնից է կախված՝ ձեր ներքին խաղաղությունից, որը դուք պետք է հյուսեք սեփական ջանքերով:

ԵՄ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը

Տեր Ծիվա

5 հունվարի, 2010 թ.

Դուք պետք է հիշեք, որ ձեր կյանքում ամենակարևորն Աստված է

ԵՄ ԵՄ Ծիվան...

Ես կրկին եկա... Ինչպես միշտ, Երկնային ողորմածությունը կրկին հնարավորություն է ընձեռնում մարդկությանը, որ նա արդարացնի իր հետ կապված հույսերը:

Բոլորս համակ ուշադրությամբ հետևում ենք, թե ներկայումս ինչ է կատարվում մոլորակի վրա: Իսկ գաղտնիքն այն է, որ Երկիրը ստացել է Աստծո էներգիայի նոր չափաբաժին: Եվ մենք ուշադիր հետևում ենք այն գործողություններին, որոնք կիրականացնի Երկիր մոլորակի մարդկությունը: Արդյոք մարդկությունը կշարունակի՞ ընթանալ ոչ մի տեղ չտանող ճանապարհով, թե՞ վերջապես

խելքի կգա և կսկսի հետևել մարդկության Մեծագույն Ուսուցիչների խորհուրդներին, որոնց շարքին պատիվ ունեմ պատկանելու նաև Ես:

Ես այնքան էլ հաճախ չեմ ունենում ուղերձ տալու հնարավորություն: Ուստի ամեն անգամ ձգտում եմ ուղերձիս մեջ ներառել հնարավորինս մեծ էներգետիկական լիցք, որը ձեզ արթնացման կրերի և կնպաստի Էվոյուցիայի վերընթաց պարույրով ձեր զարգացմանը:

Երևի նկատել եք, որ այս նոր շրջանի թելադրությունները, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով, առանձնապես շատ սնունդ չեն պարունակում խելքի՝ մարմնական խելքի համար: Մենք սկսել ենք գործել ավելի նրբորեն, որպեսզի արթնացնենք այն անհատներին, որոնք ունակ են արձագանքելու նոր էներգիաներին: Ավելի նու՛րբ Էներգիաներին:

Մեր ուղերձների առաջին համախումբն արթնացրեց անհատների որոշակի քանակության: Եվ հիմա ընթացքի մեջ են այլ էներգիաներ, որոնք նախատեսված են մարդկանց այլ մակարդակի համար:

Մենք զգում ենք մարմնավորված լավագույններիդ կարիքը: Անցած մարմնավորումների ընթացքում դուք արդեն ունեցել եք Սպասավորության փորձ, և նույնիսկ մի մարմնավորում չէ, որ ձեզնից շատերը հավատարմորեն ծառայել են Հիերարխիային: Փոխվել է ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհը, բայց հարկ է, որ դուք վերհիշեք ձեր առաքելությունը և, այս ուղերձներից ձեր սրտում խթան ստանալով, հաղթահարեք արտաքին հանգամանքները և ձեր ուսերից դեն նետեք այն ամենը, ինչ խանգարում է ձեր Սպասավորությանը:

Դժվար է ձեզ համար, և շատերդ այնպիսի ծանր կարմայական բեռ եք շալակել, որ ստիպված կլինեք այն կրել մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը: Բայց կան և այնպիսիները, որոնք իրենց չեն ծանրաբեռնել, այլ փորձում են շրջապատող պատրանքի միջից սնունդ քաղել իրենց հոգու համար: Այդ մարդիկ կա՛մ մի ուսմունքից մյուսն են վազում, կա՛մ փոխում են իրենց աշխատանքը՝ փորձելով որոշակի բավարարվածություն ստանալ արտաքին, աշխարհիկ գործունեությունից:

Այդ ամենը դատարկ բաներ են: Դուք արդեն աշխարհիկ գործերի փորձառություն անցել եք բազմաթիվ մարմնավորումների ընթացքում: Ձեզ հարկավոր է հիշել, որ ձեր կյանքում ամենակարևորն Աստված է: Եվ ձեր ողջ կյանքը անմնացորդ նվիրաբերեք Աստծո պլանների իրականացմանը:

Չի կարող այնպես լինել, որ միաժամանակ և՛ Աստծուն ծառայեք, և՛ արտաքին աշխարհում գործունեություն ծավալեք՝ փորձելով ձեռք բերել ինչ-որ նոր փորձ կամ հերթական խաղալիքը: Դա ձեզ համար մեծ հետընթաց քայլ կլինի: Ուշք մի՛ դարձրեք ձեզ շրջապատող մարդկանց: Ձեզ հետ համեմատած՝ նրանք մութրային խմբերում են գտնվում, այնինչ դուք արդեն համալսարան եք ավարտել: Դուք պետք է հասկանաք, որ ամենակարևորն ու վճռորոշը գիտակցության մակարդակն է, այլ ոչ թե ճանաչվածության կամ բարեկեցության այն արտաքին նշանները, որոնք ներկայումս հարգի են ձեր աշխարհում: Կան հավերժական արժեքներ, և կան վաղանցիկ պատրանքային գրավչություններ:

Դուք ինձ հիշեցնում եք այն տարեց քեռիներին ու մորքուրներին, որոնք, ավագակույտերի վրա նստած, փորձում են ավագային ամբոցներ ու տարբեր կառույցներ բստրել:

Ուշքի՛ եկեք: Կան իրական բաներ, որոնցով դուք պետք է զբաղվեք, և որոնք համապատասխանում են ձեր գիտակցության մակարդակին:

Որքան շատ ուշացնեք ձեր վերջնական որոշումը՝ փորձելով քողարկվել պատրանքային աշխարհի գործունեության զանազան տեսակներով, այնքան ձեզ համար ավելի ցավագին ու ծանր կլինի սթափվելը, երբ արթնությունից հետո կարողանաք զգալ հավերժության շունչը, ինչը կարող է տեղի ունենալ օրերից մի օր և նույնիսկ այս տարվա ընթացքում:

Դուք ձեր կյանքն ամբողջովին պետք է տրամադրեք Սպասավորությանը: Նրանք, ովքեր ունակ չեն դա անելու, դեռևս չեն հասել ձեր գիտակցության աստիճանին:

Ամեն ոք գտնվում է գիտակցության զարգացման իր աստիճանի վրա: Եվ եթե դուք չզբաղեցնեք ձեզ արժանի աստիճանը, ապա մյուսները ֆիզիկական ոլորտում չեն ունենա այն նմուշօրինակը, որին պետք է ընդօրինակեն:

Երկրագնդի վրա միլիարդավոր մարդիկ են ապրում: Սակայն միայն եզակիները կարող են նվաճել Ջոմոլունգման՝ աշխարհի բարձրագույն գագաթը: Մյուսները գերադասում են դիտել հեռուստատեսային զվարճալի ծրագրերը, որոնցով փոխարինում են իրենց իրական կյանքը:

Ձեր կյանքում միշտ էլ տեղ կա սխրանքի համար: Դուք սխրանք եք գործում այնժամ, երբ Երկրի վրա ամեն օր Աստծո գործերն եք անում՝ անկախ արտաքին հանգամանքներից, անկախ վատ ինքնազգացողությունից և անկախ հիվանդությունից:

Որպեսզի Աստծո գործերն անեք, հարկ չկա, որ մազցեք Ջոմոլունգմայի գագաթը: Պետք է ձեռնամուխ լինեք այն առաջին գործին, որը հենց ձեր աչքի առաջ է: Ամենահասարակ գործը: Ձեզ

կարող է թվալ, թե այդ գործն արժանի չէ, որ դրանով զբաղվեք: Այն կարող է թվալ շատ մանր ու աննշան:

Սակայն գիտցեք, որ երբ մանր գործերն անում եք մեծագույն սիրով, ապա դրանով իսկ դուք եք բացում մեծ Սպասավորության համար:

Վեհապետները չեն կարող ձեզ Եղբայրության գործ վստահել՝ առանց նախնական մանրագին ստուգման, որը կարող է տևել ոչ մեկ կամ երկու տարի: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ նախորդ մարմնավորումների ընթացքում նվաճել եք Եղբայրության վստահությունն ու կատարել նրա գործերը, ապա, միևնույնն է, այս մարմնավորման ընթացքում նույնպես պետք է վստահություն նվաճեք և ապացուցեք, որ արժանի եք այդ վստահությանը:

Շատերն են ձեզնից փնտրում այն գործը, որով կկարողանային զբաղվել: Շատերն են փնտրում այն մարդկանց, որոնց հետ կկարողանային ինչ-որ գործով զբաղվել: Հավատացե՛ք ինձ, այդ ամենը ձեզ պետք չէ: Դուք արդեն ունեք անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի սկսեք ձեր Սպասավորությունը: Աստված ամեն ինչի մասին արդեն հոգացել է: Ձեզ մնում է միայն բացել ձեր աչքերը և տեսնել այն գործը, որով պետք է զբաղվեք:

Մենք կրկին նետում ենք մեր ցանցերը: Եվ սպասում, թե ինչպիսին կլինի որսն այս անգամ:

ԵՄ ԵՄ Շիվան...

Տեր Հիսուս

6 հունվարի, 2010 թ.

Չրույց Վեհապետների մարմնավորման և դեսպանորդության սահմանակարգի շուրջ

ԵՄ ԵՄ Հիսուս:

Ես այցի եմ եկել ձեզ. ձեզ, որ սպասում եք իմ գալստյանը, որ սիրում եք ինձ: Ես գիտեմ, սիրելիներս, որ իմ Ուղին ընտրած մարդկանց շրջակա աշխարհը խավար ու թանձր է երևում: Գիտեմ, որ ամենուրեք ձեզ օտար եք զգում: Դուք այդ աշխարհից չեք: Քանզի դուք ընտրել եք Աստծո աշխարհը: Եվ ձեր Սպասավորությունն աշխարհին նման է այն Սպասավորությանը, որ ես ունեցա:

Այնժամ, երբ ունակ եք լինում համալարվելու ինձ հետ՝ իմ թրթռանքին, ձեր միջոցով ես կարողանում եմ գալ ձեր աշխարհ: Կարճ ժամանակով: Բայց ես երախտապարտ եմ Աստծուն ձեր աշխարհին հայացք նետելու այդ հնարավորության համար՝: Այդպես հազվադեպ է լինում: Իսկ դա անհրաժեշտություն է ինձ համար: Քանզի ձեր միջոցով, ինչպես ժամանակին իմ միջոցով, Աստված հնարավորություն է ունենում հայացք նետելու ձեր աշխարհին:

Ես խոսում եմ այնպես, կարծես դուք ինձ հասկանալիս լինեք: Սակայն մարդկանց մեծամասնության համար անհասկանալի է, թե ինչու հզորագոր Վեհապետները չեն կարողանում մուտք գործել ձեր աշխարհ:

Ցավոք, դա այդպես է, սիրելիներս: Շատ հազվադեպ ու շատ կարճ ժամանակով մենք կարող ենք ներկա գտնվել ձեր աշխարհում: Եվ դա տեղի է ունենում մասնավորապես այն դեպքում, երբ կա Սպասավորության պատրաստ անոթ, որն իրեն այնպես է նախապատրաստել, որ Վեհապետներից որևէ մեկը կարողանա որոշ ժամանակով ներկա գտնվել իր տաճարում:

Մնացած ժամանակ շղարշն այնքան թանձր է լինում, որ անմիջական ներկայության դույզն-ինչ հնարավորություն անգամ չի լինում:

Մենք կարող ենք ձեր աշխարհից տպավորություններ ստանալ ակաշիի գրառումներից կամ ձեր պատմածներից, երբ դուք ձեր գիշերային քնի ընթացքում կամ անցում կատարելուց հետո հայտնվում եք Եղբայրության եթերային սուրբ մենաստաններում:

Ես ձեզ ասում եմ այս ամենը, որպեսզի պատասխանատվություն զգաք ձեր աշխարհի նկատմամբ: Միայն մարմնավորված մարդը կարող է լիարժեք գործել ձեր աշխարհում: Իսկ մենք այդ մարդու միջոցով կարող ենք գործել միայն այնժամ, երբ նա ամբողջովին ենթարկվել է Աստծո Կամքին և կամովին իր կյանքը նվիրաբերել Սպասավորությանը:

Դա հեշտ է թվում, սիրելիներս, բայց իրականում ձեզնից յուրաքանչյուրի աուրայում առկա է շատ մեծ քանակի բացասական էներգիա, այսպես կոչված, կարմա: Եվ երբ ձեր սրտում անկեղծորեն ցանկություն եք դրսևորում հաստատապես Սպասավորելու Եղբայրությանը, դրանով իսկ կանգնում եք Ձեռնադրումների Ուղու վրա: Անցնում է ամենաքիչը յոթ տարի, մինչև որ դուք իրապես ունակ եք դառնում ի կատար ածելու Եղբայրության որոշակի հանձնարարություններ: Իսկ այդ յոթ և ավելի տարիների ընթացքում (ինչը կախված է Ուղու վրա

ձեր ունեցած դիրքից), դուք ամեն օր ապացուցում եք Երայրությանը Սպասավորելու ձեր ունակությունը: Ամեն օր ձեր ներսում գլուխ է բարձրացնում այս կամ այն կարմայական էներգիան, որպեսզի բեռնաթափվի ձեր կողմից: Եվ դուք պետք է ցուցադրեք ձեր ներսում առկա անկատար դրսևորումներից գլուխ հանելու հմտություն:

Սիրելիներս, մարմնավորված մարդկանց մեջ չկան կատարյալներ: Եթե դուք օժտված լինեիք նույնիսկ ոչ մեծ կատարելությամբ, ապա չէիք կարողանա մնալ ձեր աշխարհում: Որովհետև այժմ մոլորակի ամենախավար ժամն է: Եվ հիմա ոչ մի Վեհապետ չի կարող լինել մարմնավորման մեջ: Մենք միայն մասնակի մարմնավորումների փորձեր ենք անում: Սակայն, որպեսզի մեր ներկայությունը ձեր աշխարհում հնարավոր դառնա, մենք պետք է մեր թրթիռները հավասարեցնենք ձեր աշխարհի հետ: Ուստի սուգակի նման, որը քար է վերցնում իր հետ, որպեսզի հասնի ջրի հատակին, մենք կարմա ենք բեռնում մեր ուսերին, որպեսզի մեր թրթիռները ցածրանան և առավելագույն չափով հավասարվեն Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքին:

Տվյալ դեպքում մենք սուզվում ենք թանձր շղարշից այն կողմ, և մեր գիտակցությունն այլևս ունակ չի լինում բարձրագույնն ընկալելու:

Շատ հազվադեպ է լինում, որ Համբարձյալ Վեհապետի մասնակի մարմնավորումը հայտնվի Երկիր մոլորակի վրա այնպիսի պայմաններում, որոնցում ունակ լինի հիշելու իր Աստվածայնության մասին և դիմանալու կյանքի փորձություններին:

Հատկապես այդ պատճառով է, որ մենք օգտվում ենք դեսպանորդության սահմանակարգից: Նա, ով նախքան մարմնավորվելը պարտավորություն է վերցնում դառնալու մեր դեսպանորդը (ինչպես նաև ձեզնից ամեն ոք, ով ուզում է սպասավորել Երայրությանը), փորձություններ ու թեստեր է անցնում յոթ տարիների ընթացքում: Դրանից հետո նա երդման ձևով որոշակի պարտավորություններ է հանձն առնում: Ապա նորից է անցնում փորձությունների միջով՝ այս անգամ ավելի խիստ: Եվ միայն այն բանից հետո, երբ անհատը դիմանում է դեսպանորդի պաշտոնի փորձություններին, մենք նրան սպասավորելու հնարավորություն ենք տալիս: Այդ հնարավորությունը հաստատվում է, այսպես կոչված, դեսպանորդի պատմունճանով: Այլ կերպ ասած՝ մենք որոշակի քանակությամբ էներգիա ենք ծախսում, որպեսզի դեսպանորդի էներգետիկական զորությունը մշտապես պահենք որոշակի մակարդակի վրա:

Հատկապես հենց պատմունճանի շնորհիվ է դեսպանորդը կարողանում ձեր աշխարհի պայմաններում պահպանել ճշմարիտ կողմնորոշիչներ: Իսկ ձեզնից նրանք, ովքեր անկեղծորեն ընդունում են մեր դեսպանորդին և պատրաստ են լինում, հանձին նրա, սպասավորելու Երայրությանը, ինքնաբերաբար հայտնվում են մեր պաշտպանության ոլորտում:

Բայց հենց որ ձեզ այցելում են ցածրակարգ մտքեր, դեռ ավելին, մեր դեսպանորդի դեմ ուղղված քննադատական մտքեր, կամ եթե գործում ու խոսքեր եք արտաբերում ընդդեմ մեր դեսպանորդի, ապա պաշտպանությունը կորցնում է իր ազդեցությունը, և ողջ այն էներգիան, որը նախքան այդ մեր դեսպանորդի միջոցով պահվում էր ձեր գիտակցության մեջ, վերածվում է կարմայի:

Շատ իմաստուն պահվածք է, եթե ընդունում եք մեր դեսպանորդին ոչ թե որպես կատարելության դրսևորում, այլ որպես մարդու, որին վստահված է ֆիզիկական ոլորտում ներկայացնելու Երայրությանը:

Ինչպես ամեն ինչը ձեր աշխարհում, դեսպանորդի պատմունճանը նույնպես օժտված է երկակի ազդեցությամբ: Մի կողմից՝ այն նպաստում է մարդկանց գիտակցությունը բավականին բարձր մակարդակի վրա պահելուն, եթե նրանք անկեղծորեն նվիրված են դեսպանորդին, հարգում ու սիրում են նրան: Բայց և մյուս կողմից՝ ցանկացած գործողություն, քննադատական միտք կամ զգացմունք, որն ուղղված է մեր դեսպանորդի դեմ, վերադառնում է նրան, ով ընդդիմացել է դեսպանորդին և ստեղծել կարմա: Իսկ այդ կարման շատ ծանր տեսակի է և հավասարազոր է Աստծո դեմ գործելու կարմային:

Իմ այսօրվա գրույցը ձեզ որոշակի պարզաբանումներ տվեց Վեհապետների մարմնավորման հնարավորության և այն դեսպանորդության սահմանակարգի վերաբերյալ, որի շնորհիվ Վեհապետները շատ խնդիրներ են լուծում ձեր աշխարհում:

Ես կարծում եմ, որ իմ այսօրվա գրույցը շատերի համար ունեցավ օգտակար և ճանաչողական նշանակություն:

ԵՄ ԵՄ Հիսուս

Արթնացման կոչ

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Ես կրկին ձեզ այցի եմ եկել:

Այժմ, երբ տարեկան շրջանն արդեն սկսվել է, և Կարմայական Վարչության նիստն ավարտված է, ես նորից ձեզ հետ խոսելու նյութ ունեմ:

Ես ուզում եմ դիմել ձեզնից նրանց, ովքեր, չնայած կենսական դժվարություններին ու անհաջողություններին, ձգտում են պահպանել իրենց գիտակցության մղվածությունն առ Աստված:

Ցանկանում եմ դիմել ձեզնից նրանց, ովքեր ունակ են հաղթահարելու դժվարություններն ու դրա հետ մեկտեղ պահպանելու իրենց գիտակցության մակարդակը:

Դա շատ արժեքավոր հատկանիշ է: Ինչ-որ ժամանակ դուք ուսում եք ստացել մեր գաղտնի ծեսերի դպրոցներում: Եվ դա այն ժամանակ հատուկ կազմակերպված վարժանք է եղել, երբ ձեզ բերում էինք անհավասարակշռության ու աններդաշնակության վիճակի և հետևում, թե ինչպես կկարողանաք պահպանել ձեր ներքին համագտությունն ու Երկրի վրա Աստծո Կամքին հավատարիմ մնալու ձեր կարողությունը:

Դա հատուկ վարժանք էր ձեր այսօրվա մարմնավորումից առաջ: Հիմա այլևս հատուկ դժվարություններ կազմակերպելու կարիք չկա: Բավարար են և այն դժվարությունները, որոնք ձեզ շրջապատում են: Եվ այժմ ձեր մարմնավորման շատ կարևոր փուլն է սկսվել, երբ ոչ միայն պետք է պահեք ձեր գիտակցությունը ձեզ համար մատչելի ամենաբարձր մակարդակի վրա, այլ նաև աշխատանք կատարեք Եղբայրության համար:

Ձեզ հարկ չկա ասելու, թե ինչ աշխատանք պետք է կատարեք: Բավական է միայն ձեր շուրջը նայեք, և կտեսնեք, որ ներկա պահին ամբողջ աշխարհը վերակառուցման կարիք ունի: Չկա մարդկային գործունեության մի բնագավառ, որ համապատասխաներ աստվածային ձևաչափերին:

Եվ հավանաբար ձեզ թվում է, թե ես ձեզ կոչ եմ անում թևերը քշտել և գլուխ ջարդել Երկրի վրա հաստատված ամբողջ կարգը փոխելու համար:

Կարծում եմ, որ այդ դեպքում ձեզ խելագարի տեղ կդնեն: Թեև, մեր կարծիքով, հենց ամբողջ մարդկությունն է խելքը թոցրել և զբաղված է աներևակայելի բաներով: Սակայն ներկա փուլում մարդկությունն ունակ չէ դա հասկանալու:

Դուք կարող եք ուզածի չափ խոսել հասարակական կառույցի աստվածային սկզբունքների և աստվածային ձևաչափերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է ներդնել կյանքի բոլոր բնագավառներում: Բայց չեմ կարծում, թե ձեր շրջապատում կգտնվեն գոնե մի քանի մարդիկ, որոնք ձեզ կկարողանան հասկանալ կամ, առավել ևս, կսկսեն ինչ-որ բան իրապես անել:

Այդ դեպքում ի՞նչ անել, և ստեղծված իրավիճակից դուրս գալու ի՞նչ ելք են առաջարկում Համբարձյալ Վեհապետները:

Ես շատ անգամ եմ արդեն ասել և հիմա էլ կրկնում եմ մեր այն սկզբունքները, որոնցով մենք առաջնորդվում ենք միլիոնավոր տարիների ընթացքում:

Դուք պետք է սկսեք ինքներդ ձեզ փոխելուց: Ձեր ամբողջ շրջապատը կբողոքի դրա դեմ: Քանի որ ձեր թրթռանքը կփոխվի, ապա վաղ թե ուշ այն հակադրության մեջ կմտնի ձեզ շրջապատող աշխարհի թրթռանքների հետ: Եվ ահա հենց այդ ժամանակ դուք պետք է հիշեք գաղտնի ծեսերի դպրոցում անցածը: Ձեր խնդիրն է դիմանալ արտաքին անբարյացակամ վերաբերմունքին: Դրանով դուք հոգևոր մկաններ կաճեցնեք և կցուցադրեք Վեհապետների գործին ձեր հավատարմությունը՝ անկախ արտաքին պայմաններից:

Որքա՞ն ժամանակ պետք է դիմանաք: Պետք է աչքի առաջ ունենալ մինչև մարմնավորման ավարտն ընկած ժամանակը:

Բայց ձեր մեջ կան նաև այնպիսիները, որոնք մարմնավորվել են որոշակի առաքելությամբ: Եվ այդ առաքելությունն է ստեղծել նմուշօրինակ երկրագնդի ֆիզիկական ոլորտում ինչ-որ տեղ, որտեղ Վեհապետները կկարողանային ներդնել իրենց սկզբունքները:

Ներկա պահին ես չգիտեմ, թե երկրագնդի վրա որտե՞ղ հնարավոր կլինի նման վայրի ստեղծումը: Մենք փորձ արեցինք այդ վայրն ամրապնդել մեր դեսպանորդի Աշրամի հիմքի վրա: Բայց հիմա ես ձեզ ասում եմ, որ այդ խնդիրը մենք հանել ենք դեսպանորդի վրայից:

Մենք հանդիպեցինք չափազանց մեծ դիմադրության: Եվ այդ պատճառով մենք ներկայումս այլ վայր ենք փնտրում, որը կարող է մեզ համար ամրակետ ծառայել ֆիզիկական ոլորտում:

Դեսպանորդը չի կարող գործել նրանց փոխարեն, ովքեր մարմին են առել ու անվրդով պառկել բազմոցին:

Ամբողջ երկու տարի մենք դիտում էինք մեր դեսպանորդի հերոսական ջանքները: Եվ հիմա հստակ տեսնում ենք, որ այլևս չենք կարող չարաշահել նրա նվիրվածությունն ու ինքնագոհողությունը:

Դա սխալ կլիներ: Եվ եթե Երկրի ֆիզիկական ոլորտում չկա ոչ ոք, որ կարողանա հոգալ մեր դեսպանորդի մասին և պաշտպանել նրան, ապա ես ինքս կգրադվեմ այդ գործով: Որովհետև ես առանձնահատուկ կապ ունեմ այս դեսպանորդի հետ: Եվ ես եմ երաշխավոր կանգնել նրա մարմնավորումից առաջ: Ես այլևս չեմ կարող վտանգի ենթարկել իմ սիրելի աշակերտին:

Այժմ ձեզ կվիճակվի, որ ինքներդ անեք ամեն ինչ, եթե, իհարկե, կարողանաք դիմանալ այն ծանրաբեռնվածությանը, որը կընկնի ձեր ուսերի վրա, հենց որ սկսեք աշխատանք կատարել Եղբայրության համար: Իրական աշխատանք, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին դուք եք պատկերացնում:

Ես այսօր բավականին խիստ խոսեցի:

Շատ անգամ եմ եղել դեսպանորդի հետ, երբ նա հանդիպում էր բազմաթիվ մարդկանց հետ: Եվ ես շատ լավ եմ հասկանում, որ նա ձգտում էր միայն լավը մտածել բոլորի մասին, ինչպես մենք իրեն ուսուցանել էինք. բայց նաև հստակ տեսնում էի յուրաքանչյուրին, ով այս տարիների ընթացքում մոտենում էր մեր դեսպանորդին: Եվ քանի որ դուք արդեն հայտնվել եք իմ տեսադաշտում, ապա ես կանեմ ինձնից կախված ամեն ինչ, որպեսզի կա՛մ ձեզ խելքի բերեմ, կա՛մ էլ թողնեմ կարմայի հայեցողությանը:

Խոսքս չի վերաբերում նրանց, ովքեր մոտենում էին Լույս ճաշակելու համար: Բայց նրանց մեջ եղել են նաև այնպիսիները, որոնց վաղուց գիտեմ, և որոնք պետք է որ հանձն առնեին որոշակի գործառնությունների իրականացում: Հարգելիներա, չե՞ որ դուք հատուկ վարժանքներ էիք անցել ձեր մարմնավորումից առաջ. մենք խնամել ու փայփայել էինք ձեր հոգիները, արել էինք մեզնից կախված ամեն ինչ, որպեսզի արտաքին հանգամանքներն այնպես դասավորենք, որ մոտենաք մեր դեսպանորդին: Եվ հիմա արդյունքը ո՞րն է...

Դուք չեք կարող զգալ այն ամբողջ հուսախաբությունը, որ այժմ ես ապրում եմ: Ես հիմա կարող եմ միայն դիտել, թե ինչ է կատարվում: Ես չեմ կարող միջամտել, քանի որ դուք ունեք ձեր ազատ կամքը և կարող եք անել այն, ինչ ձեր խելքին կփչի:

Աստված չանի, որ երբևէ ապրեք իմ այս վիճակը, երբ տեսնում եմ, թե ինչպես են մարդիկ մեկը մյուսի հետևից նախընտրում պատրանքը: Մենք կորցնում ենք մեր ամենավերին, ամենանվիրյալներին: Լույսի ոչ մի առաքելություն հիմնված չի եղել միայն մեկ մարդու վրա: Մշտապես շատ հոգիներ են մարմին առել այդ առաքելությանն աջակցելու համար: Եղել են, որ կորսվել են հենց մարմնավորման սկզբում, ոմանք էլ անասելի ջանքերի գնով ի վերջո կարողացել են ընդհուպ մոտենալ իրենց առաքելության իրականացմանը: Իսկ այժմ ես տեսնում եմ, թե ինչպես է նրանցից ամեն մեկն իր համար մի խաղալիք ընտրում և ընկնում պատրանքային աշխարհի իր հրապուրանքի հետևից:

Մենք հասանք նոր թողության շնորհի՜ Աստծո նոր ողորմածության, որպեսզի այս նոր շրջանի ուղերձները փոխանցենք ձեր աշխարհ: Եվ ես դեռ էլի հույսեր եմ փայփայում, որ պատրանքում թափառողները կկարողանան լսել այս ուղերձներում հնչող իմ կոչը և իրենց գիտակցությունը կարթնացնեն ի գործ:

Այլապես այդպես աննպատակ ու միայնակ էլ կթափառեն մինչև իրենց ընթացիկ մարմնավորման ավարտը:

Մինչդեռ կա աստվածային հնարավորություն, որը դեռևս չի հասել իր ավարտին: Ու՛ր են այն լուսակիրները, որ կարողանանք նրանց ձեռքերով ու ոտքերով իրականություն դարձնել մեր Մտահղացումը...

ԵՄ ԵՄ Սամատ Կումարան: ՕՄ

Պաղմա Սամբավա
8 հունվարի, 2010 թ.

Զրույց դրամական էներգիայի և շատ այլ բաների շուրջ

ԵՄ ԵՄ Պաղմա Սամբավան: Ես էլի եմ եկել, և դուք երևի ճանաչեցիք ինձ:

Երբ ես մարմնավորվել էի Երկրի վրա, իմ առաքելությունն այն Ուսմունքը թարմացնելն էր, որն աշխարհին տվել էր Հաութամա Բուդդան:

Ցավոք, մարդկանց աշխարհում բանն այնպես է լինում, որ երբ կյանքից հեռանում է մեծ հոգևոր նվաճումներ ունեցող և Վերին ուժերի հովանավորյալ Ուսուցիչը, մարդիկ անմիջապես ձեռնամուխ են լինում աղավաղելու Նրա միջոցով տրված Ուսմունքը:

Ձեր ժամանակներն էլ բացառություն չեն: Ընդհակառակը, ամեն ինչ ավելի է բարդացել: Ամեն ոք ինքն իրեն ուսուցիչ է երևակայում և սկսում ուրիշներին հրամցնել իր սեփական ուսմունքը:

Անցյալ դարաշրջաններում նման բան հնարավոր չէր: Որովհետև մարդիկ շատ լավ իրազեկված էին կարմայի Օրենքի մասին: Դրանից զատ, գիտելիքն ու գրագիտությունը մատչելի էին միայն նրանց, ովքեր, իրենց ծագմանը համապատասխան, ունեին դրա հնարավորությունը:

Իսկ հիմա շատ բարդ ժամանակներ են: Բառացիորեն ամեն թփի տակ նստած է մեկը, որն իրեն գուրու է համարում և իր ուսմունքն է մատուցում: Շատ ցավալի է, որ նմաններին մանուկ հասակից չեն ուսուցանել կարմայի Օրենքը:

Ամեն մի խոսք, որը չի համապատասխանում Աստծո ճշմարտությանը և դուրս է եկնում նրանց շուրթերից, ովքեր իրենք իրենց հոգևոր ուսուցիչ են հռչակել, հետագայում կարմայական բեռնաթափում է պահանջում նրանցից:

Ձեր աշխարհում շատ բաներ այլ կերպ կդասավորվեն, եթե մարդիկ ավելի շատ տեղեկացված լինեին կարմայի կամ հատուցման Օրենքի մասին:

Դա համայն տիեզերքում գործող հիմնական Օրենքներից մեկն է: Եվ շա՛տ ափսոս, որ այդ Օրենքը չի ուսումնասիրվում ոչ մի աշխարհիկ դպրոցում, ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Ձեր աշխարհում գործերի վիճակը միանգամայն այլ կլիներ, եթե մարդիկ մշտապես հիշեին կարմայի կամ հատուցման Օրենքի մասին: Որքա՛ն բարդություններից կարելի կլիներ խուսափել, եթե մարդիկ այդքան տգետ չլինեին:

Երբ ես մարմնավորման մեջ էի, կարմայի Օրենքն ամենակարևոր առարկաներից մեկն էր, որ ես ուսուցանում էի: Այն ժամանակ ևս իմ վիճակը ծանրացնում էր այն, որ շատերն էին ի հայտ գալիս, որոնք համարում էին, որ իրենք մեծ հոգևոր նվաճումներ ունեն: Սակայն փորձը ցույց էր տալիս, որ նրանց այդ նվաճումները հիմնված են սեփական էգոյին ծառայելու ցանկության վրա, նաև այն բանի վրա, որ ուրիշներին ստիպեն ծառայելու իրենց էգոյին:

Որքա՛ն խաբուսիկ է ամեն ինչ ձեր աշխարհում: Եվ եթե ձեր ջանքերի գոնե մի մասը, որոնք կյանքից հաճույքներ ստանալուն եք հատկացնում, տրամադրեիք կարմայի Օրենքը յուրացնելու գործին, ապա ձեր կյանքը շատ արագ կփոխվեր դեպի լավը:

Օրինակ՝ ես գիտեմ, որ շատ մարդիկ իրենց համար ձեռքբերում են համարում այն, որ կարողանում են խաբել ուրիշ մարդկանց: Նրանք երջանկությունից շփում են ձեռքերը, երբ խաբում են իրենց մերձավորներին և մի քանի ավելորդ թղթադրամ խցկում իրենց գրպանները:

Նրանց թվում է, թե դրսևորեցին ճարպկություն և հնարամտություն: Բայց իրականում դրսևորում են խաբեություն և կծծիություն:

Եթե կարողանայիք հետևել այն բանին, թե ինչպիսի հետևանքների է հանգեցնում ձեր արարքը, ապա գլխապատառ կվազեիք գտնելու այն մարդուն, որին խաբել եք, և կփորձեիք ձեր գրպանից նրա գրպանը տեղափոխել ձեր ունեցած բոլոր փողերը:

Փողն Աստծո էներգիայի փոխարժեքն է ֆիզիկական ոլորտում: Եվ այն, թե ինչպես եք վերաբերվում փողին, ցույց է տալիս ձեր վերաբերմունքն Աստծո էներգիայի նկատմամբ:

Հոգևոր Ուսուցիչները (ճշմարիտ Ուսուցիչները, այլ ոչ թե նրանք, ովքեր իրենք են իրենց այդպես անվանում) հաճախ մի շատ տարածված հնարք են բանեցնում. դրամ են տալիս աշակերտին և դիտում վերջինիս վերաբերմունքը դրա նկատմամբ:

Այն բանից, թե ինչ վերաբերմունք է ցուցաբերում մարդը դրամի նկատմամբ, երևում է նրա համապատասխան վերաբերմունքն Աստծո էներգիայի նկատմամբ: Եվ եթե աշակերտը յուրացնում էր հատկացված դրամը կամ դրա մի մասը կամ ծախսում էր ոչ արդյունավետ, ապա անմիջապես հեռացվում էր աշակերտությունից:

Ուսուցիչը կրում է իր աշակերտների կարմայական բեռը: Այդ պատճառով մանրագին կերպով ստուգվում էր նրանց մոտ տարբեր բացասական հատկանիշների առկայությունը:

Երբեմն անհատը չէր կարողանում աշակերտ դառնալ, քանի դեռ որևէ կարմայական պարտք ուներ աշխարհում:

Ձեր լեզվով ասած՝ դա կարող է լինել դրամական փոխառությունը, վարկը, պարտավորությունը կողակցի նկատմամբ, զավակին դաստիարակելու և կրթություն տալու պարտքը և այլ պարտավորություններ հասարակության ու մերձավորների նկատմամբ:

Հասարակության կամ անհատ մարդկանց նկատմամբ ունեցած ձեր բոլոր պարտքերը պետք է լրիվ մարված լինեն, եթե լրջորեն ուզում եք առաջ ընթանալ հոգևոր ուղով:

Իմաստուն մարդիկ նույնիսկ սովորական կյանքով ապրելու դեպքում աշխատում են պարտքեր չունենալ: Ընդհակառակը, ձգտում են այնպես անել, որ ուրիշներն իրենց պարտք լինեն: Քանզի նրանք, թեկուզ ենթագիտակցական մակարդակով, շատ լավ են հասկանում կարմայի Օրենքը: Ձեր պարտապանը վաղ թե ուշ, այսպես թե այնպես ստիպված կլինի վերադարձնել ձեզ իր պարտքը: Եթե ոչ այս կյանքում, ապա որևէ հաջորդում: Կարմայի Օրենքը մշտապես անթերի է գործում:

Հավանաբար, երբեմն ձեր զարմանքն են հարուցում որոշ մարդիկ, որոնք, կարծես, նշանակալի ջանքեր չեն գործադրում, բայց փողերը հոսում են դեպի իրենց կողմը: Գաղտնիքը պարզ է. նախորդ կյանքերում նրանք ճիշտ վերաբերմունք են դրսևորել դրամական էներգիայի նկատմամբ: Կան և ուրիշ մարդիկ, որոնք շատ են ջանում փող վաստակել, բայց չի ստացվում: Իսկ ամբողջ բանն այն է, որ անցյալում նրանք չեն փակել իրենց պարտքերը կամ յուրացրել են ուրիշի փողերը:

Կա դրամական էներգիայի բնագավառի հետ կապված ևս մի հանգամանք, որի մասին գիտեին բոլոր դարերում. եթե փող եք ծախսում բարի գործի համար, ապա ձեր ծախսածի տասնապատիկից ավելին կվերադառնա ձեզ:

Շատ ափսոս, որ ակաշիի գրառումները մատչելի չեն ձեզ, որ հետևեիք, թե ինչպես է օրենքը գործում: Որովհետև միշտ չէ, որ փողը վերադառնում է մի մարմնավորման ընթացքում:

Ես պետք է հիշատակեմ նաև դրամական գոհաբերության ժամանակ ունեցած անշահախնդրության մասին: Բարեգործական հատկացումները շատ նման են աղոթքի: Որքան անշահախնդիր եք էներգիա գոհաբերում, այնքան ապագայում ավելի շատ շնորհներ եք ստանում:

Միշտ հիշեք. ոչ թե դուք եք ձեր աշխատանքով փող վաստակում, այլ Աստված է ձեզ փող տալիս: Ուստի անիմաստ է փող վաստակելու գործը կյանքի նպատակ դարձնելը: Ճիշտ այնպես, ինչպես անիմաստ է ձեր աշխարհում զանազան իրեր ձեռք բերելու հետևից ընկնելը:

Դուք փորձում եք ձեր հոգում Աստծո բացակայությունը փոխարինել իրեղենի հետևից ընկնելով ու զանազան հաճույքներ ստանալով:

Երբ ձեր սրտում ներկա է Աստված, ձեզ այլևս ոչինչ պետք չէ: Դուք լիակատար բավարարվածություն եք զգում, և Աստված հոգում է ձեր մասին:

Իմ այսօրվա գրույցում ես վաղուց հայտնի ու հասարակ բաներից խոսեցի, բայց նաև գիտակցում եմ, որ դրանք շատ բարդ են ձեր ընկալման համար, քանի որ աշխարհը շուտ է եկել, և պարզ ճշմարտություններն այլևս մատչելի չեն ձեր գիտակցությանը:

ԵՄ ԵՄ Պաղմա Սամբալան

Հովհաննես Սիրեցյալ
9 հունվարի, 2010 թ.

Զրույց Ճշմարիտ Խոսքի նկատմամբ ակնածալից վերաբերմունքը վերականգնելու վերաբերյալ

ԵՄ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը՝ ձեզ այցի եկածը:

Իմ այսօրվա ուղերձը նվիրված կլինի Աստծո Խոսքին: Կենսագիր եղածս ժամանակ որքան խորին ակնածանքով էի ես գրառում Հիսուսի կյանքի դրվագները: Ես շատ լավ գիտակցում էի, որ յուրաքանչյուր բառ ոչ միայն տեղեկատվական նշանակություն ունի, այլ նաև կրում է իր մեջ որոշակի թրթռանք: Եվ այն բանից կախված, թե ինչպիսի վիճակով էի սկսում գրառումները, որոշվում էր դրանց էներգետիկական մակարդակը: Ամենից առաջ ես ձգտում էի չաղավաղել դեպքերի իմաստն ու նշանակությունը և դրանք ներկայացնել հնարավորինս ավելի մանրամասն:

Իհարկե, յուրաքանչյուր մարդ ճշմարտությունն անց է կացնում իր միջով՝ իր սրտի միջով: Եվ եթե հավաքեք 10 մարդ և նրանց հաղորդեք միևնույն ճշմարտությունը, ապա նրանցից յուրաքանչյուրն իրենք կհասկանա, որից հետո այդ ճշմարտությունն արդեն կտարածվի այնպես, ինչպես բեկվել է այդ մարդկանց գիտակցության մեջ:

Մարդկանց բնորոշ է նման հատկություն, այդ պատճառով միշտ եղել են հատուկ մարդիկ, որոնց վստահվել է Աստծո Խոսքի փոխանցումը: Վաղեմի ժամանակներում Խոսքի նկատմամբ վերաբերմունքը և այն թղթին կամ այլ կրիչին հանձնելը կատարվում էր շատ խնամքով և ամենայն զգուշությամբ: Պատասխանատվության գիտակցում կար բովանդակությունը սխալ չփոխանցելու համար:

Ձեր ժամանակներում այդպես չէ: Դե, հիմա բոլորը գրագետ են և, դրանից գատ, տիրապետում են զանազան տեխնիկական միջոցների: Ամեն ոք կարող է, օրինակ, իր մտքերը հանձնել թղթին կամ համակարգչին: Սակայն այդ, կարծես, բարձր որակի հետևում, երբ մարդիկ կարող են ազատորեն արտահայտել այն ամենը, ինչ կամենում են, թաքնված է ձեր երկդիմի աշխարհի

գլխավոր վտանգը՝ անհարգալից վերաբերմունքը բառերով արտահայտված Խոսքի ու ճշմարտության նկատմամբ:

Ասված է. «...քո խօսքերով պիտի արդարանաս եւ քո խօսքերով պիտի դատապարտուես»*: Եվ եթե որևէ բան եք ասում մեկին կամ տասին, և ձեր խոսքը չի համապատասխանում ճշմարտությանը, ապա կարմա եք ստեղծում, որը բազմապատկվում է այն մարդկանց թվաքանակով, որոնք լսում են ձեզ:

Ներկայումս մարդկությունն իր տրամադրության տակ ունի զանգվածային լրատվության հզոր միջոցներ՝ թերթեր, ռադիո, հեռուստատեսություն, համացանց: Եվ մի մարդու արտաբերած կամ գրառած խոսքը կարող են լսել կամ կարդալ միլիոնավոր մարդիկ:

Մի կողմից՝ մեծ տեխնիկական նվաճումների եք հասել, որը ձեզ հնարավորություն է տալիս Խոսքը հասցնելու միլիոններին, իսկ մյուս կողմից՝ եթե տարածում եք ոչ թե ճշմարիտ Խոսք, այլ սուտ, ապա այդ դեպքում ձեր կարման բազմապատկվում է այնքան անգամ, որքան մարդ որ հնարավորություն ունի լսելու կամ կարդալու ձեր ներկայացրած սուտը:

Այնպիսի ժամանակներ են եկել, որ կարման թափ է հավաքում ամեն ինչով: Մարդկությունը չափազանց երկար մնաց այն աստիճանի վրա, որից արդեն պետք է վեր բարձրանար: Ուստի աշխարհում ամեն ինչ՝ բոլոր այն նվաճումները, որոնք, ինչպես դուք եք կարծում, մարդկային խելքի արդյունք են, մի կողմից՝ կարմայի շատ արագ բեռնաթափում են թույլ տալիս նրանց, որոնք արդարամիտ են և ընթանում են Աստծուն համաքայլ, իսկ մյուս կողմից՝ նրանք, ովքեր նախանշված ուղով չեն ուզում ընթանալ, շատ արագ բացասական կարմա են կուտակում: Եվ երբ այդ կարման գերազանցում է բոլոր թույլատրելի սահմանները, վրա է հասնում անէացում:

Այսպիսով ձեր աշխարհը հիմա նման է մի հսկայական գտարանի, որտեղ տեղի է ունենում հատիկը որոմից ջոկելու գործընթաց: Եվ այդ գործընթացը տարեցտարի արագանում է ու արագանում:

Ես այսօր եկել եմ, որպեսզի նրանց հոգիներում, որոնք ականջալուր են լինում Աստծո ճշմարտությանը, ցաննեմ Խոսքի նկատմամբ ակնածալից վերաբերմունք: Ճշմարիտ Աստծո Խոսքի, որն արտահայտվում է ձեր կյանքում ամեն ինչում:

Աստծո Խոսքը սովորական մարդկային խոսք չէ, այլ թրթռանք է, որը թույլ է տալիս մարդուն ձեռք բերել զանազանման կարողություն, ընկալունակություն և բարեշնորհանք:

Երբ թեկուզ կարճ ժամանակով ճշմարիտ աստվածային թրթռանքի մեջ եք հայտնվում՝ ասենք, երբ գտնվում եք բնության գրկում, դիտում եք երեխաների խաղը կամ ունկնդրում լավ երաժշտություն, ապա ճշմարտության այդ պահը դուք չեք կարող շփոթել որևէ ուրիշ բանի հետ: Դուք ներքին բավարարվածություն եք գգում, անդորր, երանություն: Եվ այդ պահին միանում եք Աստծո ճշմարտությանը և քարոզում Աստծո Խոսքը նույնիսկ այնժամ, երբ լուռ եք և ոչինչ չեք խոսում:

Միբեյինե՛րս, ահա այդպիսին է ձեր ժամանակը, որում ապրում եք: Ձեր աշխարհում շատ քիչ բան է մնացել այն ճշմարտից, որին իրապես արժե ականջ դնել: Մնացած ամեն ինչն ունայնություն է ունայնությանց, և այդ ունայնությունը ժամանակավոր բնույթ է կրում: Իսկ դուք պետք է մտածեք հավերժական Կյանքի մասին: Նշանակություն ունեն միայն ձեր նվիրվածությունն Աստծուն և ձեր անձնական փոխհարաբերություններն Աստծո հետ, որոնք առկա են ձեր սրտում:

Ես այս ուղերձն այն հույսով եմ տալիս, որ հետ կպահեն նրանց, ովքեր չափազանց շատ են տարվում բառախաղերով: Նրանց, ովքեր շատ կեղծ հասկացություններ են տարածում աջ ու ձախ: Պե՛տք չէ այդ ամենն անել, սիրելիներս:

Գայթակցությունը, որ շատերը կկարդան ձեր խոսքը, չպետք է գերակշռի այն բանի գիտակցական մտահոգությանը, թե դրանով որքան կարմա կստեղծեք: Բոլոր պարտամուրհակները հարկ կլինի մարել: Եվ ամեն խոսքի համար հարկ կլինի պատասխան տալ:

Ես ընտրեցի այս դեսպանորդին, որպեսզի պարզ ճշմարտություն հասցնեմ ձեզ և հետ պահեմ ձեզ սխալվելուց: Քանզի Աստծո Խոսք փոխանցելու համար պետք է Աստծո ընտրյալը լինել: Թե՛ չէ ձեր աշխարհում տիրող խառնաշփոթը երբեք չի պարզվի, և կարգուկանոն երբեք չի հաստատվի:

Ոչ բոլորին հավատացեք, ովքեր ուղերձ են գրում: Գրվածը ստուգե՛ք ձեր սրտով. արդյոք արձագանք կա՞:

Նաև նրանց կողմից, ովքեր կարդում են ուղերձները, պետք է հարգալից վերաբերմունք լինի Խոսքի նկատմամբ: Արտաքին ունայնության միջամտություն երբևէ չպետք է թույլ տալ, երբ կարդում եք մեր ուղերձները: Քանզի հաղորդակցվում եք Աստծո և Վեհապետների հետ, այլ ոչ թե կարդում ձեր լրատվական միջոցներում գետեղված որևէ գրավիչ հոդված:

Ձեր վիճակով է որոշվում այն արդյունքը, որին հասնում եք՝ ձեռնամուխ լինելով մեր ուղերձները կարդալու գործին:

Եվ մի՛ շտապեք հայհոյել այն, ինչ կարդում եք. ավելի լավ է հաշվի առնեք ձեր վիճակը, երբ սկսում եք կարդալ մեր ուղերձները:

Դուք չեք կարող մեզ լսել ու հասկանալ, եթե նախապես հոգ չեք տարել ձեր թրթիռների բարձրացման մասին, որպեսզի ունակ դառնաք բացելու ձեր սիրտը և համալարվելու այն Վեհապետի հետ, որն ուղերձ է տալիս:

Մենք այսքան ջանքեր ենք գործադրում, որ Ճշմարիտ Խոսքը հասցնենք ձեզ, իսկ դուք փռվում եք բազմոցին և, չդադարելով հեռուստացույց նայել, փորձում եք կարդալ մեր ուղերձները:

Եթե կամենում եք գրուցել Աստծո և Վեհապետների հետ, ապա նախ կարգի՛ բերեք ինքներդ ձեզ, ներդաշնակվե՛ք աղոթքով առ Աստված ու ներխուկումով, որպեսզի ձեր էությունն ունակ դառնա ականջալուր լինելու Ճշմարիտ Խոսքին՝ փոխանակ պարզապես լսեք կամ կարդաք:

Ես եկա, որ ձեր մեջ վերականգնեմ Խոսքի նկատմամբ ականաժալից վերաբերմունքը:

ԵՄ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը

*Մտթ. 12:36,37

Վեհապետ Սեն Ժերմեն
10 հունվարի, 2010 թ.

Չրույց Ոսկեդարի մասին

ԵՄ ԵՄ Սեն Ժերմենը: Ահա նորից ձեզ այցի եմ եկել, տիկնայք և պարոնայք... Եվ այսօր ես պատրաստ եմ գրույց վարելու մի թեմայի շուրջ, որն ինձ հոգեհարազատ է, և որի շուրջ ես կարող եմ անվերջ խոսել:

Շարժեցի՞ ձեր հետաքրքրասիրությունը...

Ես պատրաստ եմ այսօր խոսելու Ոսկեդարի մասին: Երկրի վրա դրա գալստյան մասին:

Հավանաբար լսել եք, որ տարբեր ժամանակներում տարբեր մարգարեների ու դեսպանորդների միջոցով տրվել են մարգարեություններ, և նաև եղել են սրբեր, որոնք ասել են, որ պետք է սկսվի Ոսկեդարը: Բայց միևնույն ժամանակ դուք ձեր շուրջն եք նայում ու տարակուսում, թե դա ինչպե՞ս է հնարավոր մի հասարակության մեջ, որը մեծապես կորցրել է իր բարոյական չափանիշները, և ընդհանուր անկում է տիրում հոգևոր ոլորտում: Քանզի Ոսկեդարը ենթադրում է գեղեցիկ արվեստների զարթոնք, որի նմուշներն առավելագույնս մոտ պետք է լինեն եթերային ոլորտում գոյություն ունեցող իրենց նմանակներին: Որտե՞ղ են այն մարդիկ, կհարցնեք դուք, որոնք պետք է ապահովեն այդ կատարյալ նմուշների առկայությունը:

Ես շատ լավ եմ հասկանում ձեր տարակուսանքը: Եվ ես ձեզ ոչ մեծ մի ուսմունք կտամ Ոսկեդարի մասին:

Ձեզնից շատերն այնքան էլ հստակ չեն պատկերացնում, թե ովքեր են Համբարձյալ Վեհապետները: Եվ թե ինչու նրանց շարքում կան իրարից այդքան տարբեր Վեհապետներ:

«Համբարձյալ Վեհապետներ» բառակապակցությունն այնքան էլ հաջող չէ: Քանզի դրա տակ հասկացվում են էակներ կամ անհատականություններ, որոնք կանգնած են Հիերարխիայի տարբեր աստիճանների վրա: Համբարձյալ Վեհապետների մեջ կան նաև այնպիսիները, որոնք օգնելու առաքելությամբ եկել են ուրիշ աշխարհահամակարգերից, բայց կան և այնպիսիները, որոնք մինչև այժմ ուսանում են երկրային դպրոցում:

Ես մի փոքր կխորանամ այս հարցում: Եվ այսպես, Երկրի մարդկությունն իր զարգացման ընթացքում որոշակի փուլերով է անցնում: Այդ փուլերը կարելի կոչել նաև արմատական ռասաներ և ենթառասաններ: Այժմ Երկրի վրա մարմնավորվել են չորրորդ և հինգերորդ ռասաների այն ներկայացուցիչները, որոնք հետ են մնացել իրենց այն եղբայրակիցներից, որոնք գտնվում են եթերային ոլորտում և սպասում են վեցերորդ արմատական ռասայի մեջ իրենց մարմին առնելուն:

Իրենց մարմնավորմանը սպասող այդ անհատականություններն իրենց թրթռանքներով բավականին առաջ են անցել ներկայումս մարմնավորված մարդկային ամբողջ համախմբությունից: Այդ պատճառով նրանք չեն կարող Երկրի վրա ձեր մեջ գտնվել: Ուստի անհամբերությամբ սպասում են, թե երբ Երկրի վրա հնարավորություն կստեղծվի, որպեսզի մարմին առնեն և շարունակեն իրենց Էվոլյուցիան: Նրանք այնքան շատ շնորհներ կարող էին տալ Երկրին և այնքան երջանիկ կլինեին՝ կիսելով իրենց շնորհները Երկրի մարդկության հետ...

Երկրի վրա մարմնավորվածների մեջ նույնպես կան որոշակի քանակությամբ անհատականություններ, որոնք մեծ շնորհներով են օժտված: Բայց Երկրի վրա այս պահին առկա պայմանները թույլ չեն տալիս, որ նրանք դրսևորեն իրենց կարողությունները: Եվ մեր ուղերձներն

այդ հոգիներին ուղղված կանչեր են, որպեսզի արթնանան: Նրանցից շատերի մեջ մեծագույն հոգիներ են բնակվում: Դրանք Վեհապետների մասնակի մարմնավորումներ են, որոնք այնքան են իրենց ծանրաբեռնել կարմայով, որ իրենց թրթռանքները համապատասխանացնեն Երկրի ընդհանուր թրթռանքի միջին մակարդակի հետ: Ուստի առկա այդ պայմաններում չեն կարողանում հիշել, թե ովքեր են իրենք և ինչու են հայտնվել Երկրի վրա:

Եվ միաժամանակ Երկրի վրա մարմնավորված անհատականությունների մեջ կան նաև այնպիսիները, որոնք ի սրտե պարտաստ են ծառայելու և հենց հիմա կանգնելու Համբարձյալ Վեհապետների դրոշի տակ, բայց Երկրի վրա չեն կարողանում գտնել իրենց հոգևոր եղբայրակիցների հավաքատեղին:

Շենց այդ նպատակով գոյություն ունի պլան, համաձայն որի Երկիր պետք է իջանի Ոսկեդարը՝ որպես հետագա դարաշրջանների նախազարդ:

Եվ այդ պայմաններում կկարողանային երկրային դպրոցն ավարտել նրանք, ովքեր ունակ են դրան: Այդ պայմաններում կկարողանային մարմնավորվել վեցերորդ ռասայի ներկայացուցիչները՝ առանց անհաջողության մատնվելու վտանգի:

Մենք պլանավորել էինք, որ Ոսկեդարի էջքը լինի Ամերիկայի տարածքում: Եվ ես շատ ջանքեր գործադրեցի, որպեսզի այդ պլանն ի կատար ածվի: Հավանաբար լսել եք, որ ներդրեցի իմ ողջ կառույցի մարմինը, որպեսզի Ամերիկան, որից հետո նաև ամբողջ աշխարհը, ստանա մանուշակագույն բոցի շնորհը: Դրանով հնարավոր կլինեի արագացնել այն կարմայի փոխակերպությունը, որը խանգարում է Ոսկեդարի գալստյանը:

Միաժամանակ մենք մեր հայացքներն ուղղում էինք դեպի Ռուսաստան՝ մի երկիր, որն ունի հսկայական հոգևոր ներուժ, բայց դեռևս այն չի կարողանում դրսևորել:

Վերջին հաշվով, Ոսկեդարի էջքը պարզապես էներգետիկական խնդիր է: Կհատկացվի՞ արդյոք Մեծ Կենտրոնական Արևի կողմից Աստծո բավարար քանակի էներգիա, որպեսզի Երկրի վրա Ոսկեդարն իրողություն դառնա:

Բայց, պաշտելիներս, երբ դուք բանկից ուզում եք վարկ վերցնել, բանկի աշխատակիցները նախքան դրամ հատկացնելը ձեզնից երաշխիքներ են պահանջում. գրավ են պահանջում՝ անշարժ գույքի, արժեթղթերի կամ ուրիշ այլ արժեքավոր բաների տեսքով:

Ճիշտ նույնպիսի օրենք գործում է նաև Աստծո Աշխարհում: Նախքան Ոսկեդարի էջքի համար անհրաժեշտ էներգիայի հատկացումը Մեծ Կենտրոնական Արևն ուզում է երաշխիքներ տեսնել, որ այդ էներգիան ջրի պես կույ չի գնա ավազին՝ ծախսվելով մարդկանց եասսիրական քմայքների վրա, այլ կծախսվի ըստ իր նշանակության և կվերադառնա Աստծո Աշխարհ՝ որպես մարդկային անհատների կառույցի մարմնագնդերի շողարձակում:

Ոսկեդարի գալստյան հարցն ամբողջովին որոշվում է ձեր մակարդակում: Կգտնվե՞ն արդյոք բավարար քանակի մարդկային անհատներ, որոնք ունակ կլինեն ընդունելու Աստծո էներգիան և այն տնօրինելու խելամտորեն: Առայժմ մենք փորձեր ենք անում, փողիարում ենք տարբեր դեսպանորդների միջոցով, բայց չենք կարողանում գտնել այդ անհատներին:

Մեր վերջին փորձերից մեկն էլ այս նոր թողության շնորհն է, որ ձեր աշխարհին ուղերձներ ենք տալիս այս դեսպանորդի միջոցով:

Հիմա արդեն մեր հույսերը չենք կապում մի որոշակի երկրի հետ: Վերջին հաշվով, մեզ համար կարևոր չէ՝ Ոսկեդարը սկզբում Ամերիկայում՞ կդրսևորվի, Ռուսաստանում՞, թե՞ որևէ այլ երկրում: Մեզ համար Երկրի մարդկությունը չի բաժանվում ազգությունների: Մեզ համար կարևոր է, որ բավարար քանակի պատասխանատու անհատներ գտնվեն, որոնք պատրաստ կլինեն ամբողջովին իրենց վրա վերցնելու կարմայական պատասխանատվություն Աստծո այն էներգիայի ծախսման համար, որը կհատկացվի նախ ֆիզիկական ոլորտում նմուշօրինակ ստեղծելու համար, ապա նաև ողջ այն երկրի համար, որը կսկսի ապրել աստվածային սկզբունքներին համապատասխան:

Այսպիսով, սիրելիներս, դուք տեսնում եք, որ այստեղ ոչ մի գաղտնիք չկա: Ամեն ինչ շատ պարզ է ու բացահայտ: Ոսկե սկուտեղի վրա մենք ձեր առջև դրել ենք աստվածային հնարավորություն, որը պետք է իրականություն դառնա Երկրի վրա: Ձեզնից ո՞վ կարող է մոտենալ և իր վրա վերցնել այդ աստվածային հնարավորությունը:

Մի՛ շտապեք: Նախքան այն, որ աստվածային հնարավորությունն իրապես տրվի ձեզ, հարկ կլինի, որ ապացուցեք ձեր նվիրվածությունն Աստծուն և Վեհապետներին: Ձեզ կվիճակվի անցնել թեստերով և կյանքի փորձություններով:

Չի հնարավոր չէ անցում կատարել հաջորդ էներգետիկական մակարդակին՝ չներբազատվելով անցյալի էներգիաներից: Իսկ դրանք երբեմն այնպես են միաձուլված լինում ձեզ հետ, որ արդեն չեք իմանում՝ որտե՞ղ է վերջանում ձեր անիրական մասն ու սկսվում Աստվածայինը:

Եվ այսպես, խիզախե՛ք: Բոլոր հնարավորությունները ձեր առջև են: Ո՞վ կարող է դրանք օգտագործել:

Վեհապետ Զավալ Կհուլ
11 հունվարի, 2010 թ.

Զրույց աշակերտելու Ուղու մասին

ԵՄ ԵՄ Զավալ Կհուլը: Ես կրկին եկել եմ, քանզի հասել է ձեզ խրատներ տալու իմ հերթը:

Չեմ կարծում, թե այն, ինչ պիտի ասեմ, նորություն կլինի ձեզ համար: Ամենայն հավանականությամբ, այս կամ այն չափով դուք արդեն ծանոթ եք այս Ուսմունքին: Սակայն, որպեսզի գիտելիքն ամրապնդվի, անհրաժեշտ է մշտապես նորացնել այն՝ ճշմարտությունը ցուցադրելով տարբեր տեսանկյուններից:

Ես եկել եմ Սիրո ճառագայթով: Եվ հենց իմ սրտի այդ հատկության շնորհիվ եմ ես իմ վերջին մարմնավորման ընթացքում նշանակալի առաջընթաց ունեցել իմ հոգևոր Ուղու վրա:

Ձեզ հայտնի է, որ կան մարդիկ, որոնք գերադասում են գիտելիք ստանալ մենտալային փաթեթավորմամբ, և դրանով իսկ համարում են, որ աստվածային իմաստություն ձեռք բերեցին: Կան նաև մարդիկ, որոնք կամենում են ամրապնդել իրենց Հավատը և մեծագույն ջանքերի գնով ստիպում են իրենք իրենց, որ ընթանան Ձեռնադրումների Ուղով:

Ես ընտրել եմ ամենակարճ ուղին՝ Սիրո Ուղին: Եվ չեմ ամստում, որ սպասավորում եմ այդ ճառագայթով: Քանզի Սերը բանալու դեր է կատարում, և միայն այդ հատկության դրսևորմամբ կարելի է հասնել Աստծո ճշմարտությանը և ամրապնդել սեփական Հավատը: Այդ Ուղով ընթանալով՝ դուք միայն Սեր եք ճաշակում և ձեր Ուղին անցնում եք բերկրանքով:

Իսկ հիմա՝ այն բանից հետո, երբ ձեզ իրագեկ դարձրի իմ Ուղուն, կուզենայի կանգ առնել Ուղով ձեր առաջընթացի մի այլ պահի վրա: Բառացիորեն ուղերձը տալուց առաջ ես հիշեցի, որ դեռևս չուսաբանված է մնացել ևս մի կարևոր թեմա, ուստի և հարկ եմ համարում ընձեռված աստվածային հնարավորության սահմաններում այն լուսաբանել: Խոսքը վերաբերում է Ուսուցչի նկատմամբ նվիրվածությանը:

Ձեր ժամանակներում և այն երկրներում, որտեղ տարածվում են այս ուղերձները, այնքան էլ հաճախ չի խոսվում աշակերտելու Ուղու մասին: Համարվում է, որ ավելի լավ ու ժամանակակից ուղիներ կան, որոնք թույլ են տալիս շատ արագ հասնել պայծառացման՝ չդիմելով կողմնակի օգնության:

Պաշտելիներս, Աստված չի ուզում սահմանափակել ձեր ազատությունը, և դուք կարող եք ձեր ճշմարտությունը փնտրել երկրագնդի ցանկացած կետում՝ ձեզ ենթարկելով, ինչպես մենք ենք կարծում, ամենատարօրինակ գործառնությունների ու հավատալիքների փորձառությանը: Դա ձեր նախընտրանքն է և ձեր ազատ կամքը:

Իսկ ես հիմնավոր ձևն եմ ուսուցանում՝ այն Ուղին, որով մարդկությունն ընթանում է միլիոնավոր տարիներ ի վեր: Եվ այդ ողջ ընթացքում այդ Ուղին երբեք ճաք չի տվել: Բացառություններ հնարավոր կլինեն միայն այն դեպքում, եթե հետևեք կեղծ գուրուի՝ կեղծ ուսուցչի:

Մնացած դեպքերում Եղբայրությունն այդ Ուղին կիրառել է բոլոր ժամանակներում: Եվ ձեր ժամանակներում նույնպես այդ Ուղին բաց է:

Նախկինում՝ վաղեմի ժամանակներում, շատ դժվար էր լինում Ուսուցիչ գտնելը: Դուք լսե՛լ եք երևի Թիլոպայի ու Նարոպայի պատմությունը: Հավանաբար շատ պատմություններ են ձեզ հայտնի գուրու-սան հարաբերությունների մասին: Իսկ ձեր ժամանակներում տեղեկատվական հոսքերն այնքան են ուժեղացել, որ դրանց ծովում շատ դժվար է կողմնորոշվելը: Ծատ նվիրյալ սպասավորներ ու ճշմարտություն որոնողներ, տրվելով հրապուրանքին, կուլ են տալիս խայծը և ընկնում այս կամ այն ինքնակոչ գուրուի ուռկանը:

Ես ձեզ կտամ մի հայտանիշ, որով առաջնորդվելով՝ կարող եք կատարել ձեր ընտրությունը: Աշխատեք պարզել, թե աշակերտման հետևողական ո՞ր շղթային է պատկանում այն գուրուն, որին պատրաստվում եք հետևել: Ի՞նչ ուսուցիչների է ինքը հետևում, ովքե՞ր են նրանք:

Սեր Ուղին՝ Իմաստության Տիրակալների Ուղին, ուսուցանել են ձեր աշխարհում լավ հայտնի անձնավորություններ՝ Հիսուսը, Մուհամեդ մարգարեն, Հաութամա Բուդդան, Լաո Ցզին, Կոնֆուցիոսը, Պյութագորասը: Այս շարքը կարող եմ էլի՝ շարունակել:

Մարդկությանը հայտնի Ուսուցիչներից որի՞ն է հետևում ձեր գուրուն, որին ուզում եք ինքներդ հետևել:

Հավատացե՛ք ինձ, կա փորձարկված ուղի, որով շատերն են գնացել: Սակայն ոչ ոք չի արգելում ձեզ, որ ընտրեք ձեր սեփական ուղին և ընթանաք դրանով: Բայց ես իմ պարտքն եմ համարում ձեզ զգուշացնել, որ չտրորված ճանապարհով ընթանալը վտանգավոր է: Ես ճանաչել եմ շատ ճշմարտություն որոնողների, որոնք գոռոզամտաբար ընթացել են սեփական ուղով: Տեսել եմ նաև նրանց զոջումը, երբ կանգնել են Կարմայական Վարչության առջև, որը նրանց տեղյակ է պահել իրենց կուտակած կարմայի մասին: Քանզի, երբ ընթանում եք չտրորված ճանապարհով, ապավինում եք միայն ձեր սեփական կարմային, ձեր փորձառությանն ու ձեր ընտրությանը: Բայց եթե ձեր հետևից ուրիշներին էլ եք տանում, ապա ձեր կարման բազմապատիկ մեծանում է:

Օրենքը շատ խիստ է նրանց նկատմամբ, ովքեր իրենք իրենց հռչակում են ուսուցիչ և իրենց հետևից տանում ուրիշներին: Արդյունքում ստացվում է կույրերի երթ, երբ կույրերից մեկը մյուսներին վստահեցնում է, թե տեսնում է, իսկ մյուսները հավատում և հետևում են նրան: Պարզ է, թե վերջում ինչ է ստացվում. երթը խափանվում է հենց առաջին պատահած առովով:

Ուստի մի՛ նմանվեք կույրերի: Ձեր կյանքում առաջնորդվեք հետևյալ իմաստուն կանոնով՝ երբեք չվստահել մեկին, որը գտել է դեպի Աստված տանող իր սեփական ուղին: Թող նախ նա ապացուցի, որ իր ուղին չի տանում դեպի անհայտություն:

Նորից եմ կրկնում, որ կա փորձարկված Ուղի: Եվ վստահորեն ասում եմ ձեզ, որ համաշխարհային կրոններից յուրաքանչյուրում կան դրույթներ, որոնք հենց այդ Ուղին են մատնանշում:

Իսկ այժմ, պատեհ առիթից օգտվելով, կուզենայի շոշափել ևս մեկ հարց: Այն վերաբերում է Աստծո նկատմամբ ձեր անձնական վերաբերմունքին: Ամենակարևորը ձեզ համար այն է, որ ներքին համահնչունություն ձեռք բերեք Աստծո Աշխարհի հետ: Երբ ձեր սրտի կողմնացույցը գործում է, պատրանքային աշխարհի ոչ մի հմայող չի կարող վտանգավոր լինել ձեզ համար: Ձեր սիրտը գիտե ճշմարտությունը: Եվ երբ պարուրվում եք ձեզ շրջապատող ամեն ինչի նկատմամբ անվերապահ Սիրով, ապա ունակ եք դառնում ճանաչելու ճշմարտությունը: Որսացե՛ք ձեր կյանքի այդ երջանիկ պահերը: Աստված ձեզ տալիս է նման պահեր: Եվ երբ ողջ կյանքի նկատմամբ անվերապահ Մերն առկա է ձեր մեջ, ապա կարող եք տալ ցանկացած հարց և պատասխան ստանալ ձեր Բարձրագույն Ես-ից:

Որքան ձեր աշխարհում շատ լինեն բազմազան տեղեկատվություններն ու նորահայտ գուրուները, այնքան ձեր կյանքում ավելի շատ պետք է առաջնորդվեք ձեր էության խորքից ստացած պատասխաններով: Ձեզ ուղղակի անհրաժեշտ է ունենալ նման հատկանիշ: Եվ Աստծուն ուղղված ձեր աղոթքներում դուք պետք է առաջին հերթին խնդրեք ոչ թե պատրանքային նպատակների ծառայող նյութական բարիքներ, այլ զանազանման շնորհ:

Մենք փորձում ենք պատրանքի օվկիանոսի միջից դուրս հանել հնարավորինս շատ հոգիների, իսկ մեզ հակադիր ուժերը ջանում են հետ որսալ նրանց ու հեռացնել Ուղուց:

Կուրորեն մի՛ տրամադրեք ինքներդ ձեզ խավարի ոգիների բզկտմանը: Կարողացե՛ք աստծո և սիրո մասին նրանց խոսքերի տակ տեսնել նրանց գիշատիչ բնույթն ու անձնական շահախնդրությունը:

Իմ այսօրվա գրույցն այնքան էլ ուրախ չստացվեց, բայց ես կարծում եմ, որ այն շատերի համար օգտակար կլինի:

ԵՍ ԵՄ Ջավադ Կհուլլը: Սիրով՝ ԵՍ ԵՄ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

12 հունվարի, 2010 թ.

Կա Ուղի, որը ձեր սրտերում է

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ:

ԵՍ ԵՄ պատճառն ու հիմնապունը Լինելիության: ԵՍ ԵՄ Լույսը, որ կա ամեն մարդու մեջ:

Այն ամենը, ինչ ԵՍ ԵՄ, ամեն ոք կարող է լինել:

Լինելիության Մեծ Սկզբնապատճառն արդեն հղել է իր կանչը: Այն կանչում է դեպի Տուն՝ դեպի հավերժական Լույս և դեպի հավերժական Կյանք:

Որքան շատ մարգարեներ են բառբառել պարզ ճշմարտություններ, սակայն մարդկային ընկալումը՝ պատրանքի շղարշը, խանգարում է, որ պարզ ու հասարակ բառերի հետևում նշմարվի ճշմարտությունը: Աստծո մեջ լինելը բնական բան է ձեր հոգիների համար: Եվ դա հենց այն է, ինչին անվերջ կարոտում եք և փնտրում ձեր աշխարհում:

Իսկ ձեր փնտրածը ձեր կողքին է հենց՝ ձեզնից մի քանի սանտիմետր հեռավորության վրա՝ ձեր ներսում ու ձեր սրտերում: Ձեր Լույսն է դա՝ ձեր Տունը: Ձեր իրական մասը:

Ճանաչել հավերժական Կյանքն ու աստիճանաբար իրենից անջատել այն ամենը, ինչը հավերժին չի պատկանում. ահա այն, ինչը ձեզ պետք է հուզի առաջին հերթին: Երբ մղվում եք դեպի Լույսը, երբ գիտակցում եք, որ անմահ եք և միայն ժամանակավոր եք հայտնվել այս մոլորակի վրա, ուրեմն շարժվում եք դեպի Աստված տանող Ուղով:

Իսկ եթե չեք կարողանում դուրս պրծնել պատրանքի տիղմից, եթե ձեզ տիրում են մարդկային հույզերն ու մտքերը, եթե փորձում եք նպատակ փնտրել պատրանքային աշխարհում և ընթանալ դեպի այն, ապա դուք ոչ մի տեղ չեք շարժվում: Դուք մնում եք ձեր գիտակցության անշարժ վիճակով:

Ձեր մեջ հավերժ է միայն ձեր գիտակցությունը և այն կենսափորձը, որն ունակ եք ձեռք բերելու: Ձեր աստվածային այնպիսի գծերի դրսևորումը, ինչպիսիք են ինքնագոհողությունը, անշահախնդրությունը, անվերապահ Սերը, կարեկցանքը, մնում են ձեզ հետ որպես ձեր ոգու ձեռքբերումները: Եվ այնժամ, երբ ձեր ջանքերի շնորհիվ ունակ եք դառնում հյուսելու ձեր անմահ մարմինը՝ կազմված ձեր աստվածային հատկանիշներից, միայն այդ դեպքում և ոչ ավել վաղ դուք ունակ եք դառնում մուտք գործելու այն աշխարհը, որտեղից հիմա Ես խոսում եմ ձեզ հետ:

Քանի դեռ ձեզ տիրում են կրքերը, ահեղը, անբավարարվածությունը, կասկածները, ունայն բաները, դուք չեք կարող նվիրվել Աստծո Լույսի անմահ մարմնի կերտման գործին: Հիմա դուք արդեն գիտեք, թե ձեզ ինչն է խանգարում, ուստի կարող եք ձգտել, որ ձերբազատվեք ձեզ խանգարող ամեն ինչից:

Պատրանքային աշխարհում գտնվելու հազարավոր և միլիոնավոր տարիների ընթացքում ինքներդ ձեզ դրել եք ծանր բեռի տակ, որը բաղկացած է մարմնավորումից մարմնավորում ձեզ ուղեկցող բացասական էներգիաներից: Ժամանակն է, որ մտածեք, թե ինչպես ձերբազատվեք ձեր այդ ավելորդ ուղեբեռից:

Երբ տեղափոխվում եք նոր բնակարան կամ նոր տուն, ձեր առջև հարց է ծառանում, թե ձեր կենցաղային իրերից ո՞րը պահեք և ո՞րը դեն նետեք որպես անպետքություն: Այժմ նույնը պետք է անեք ձեր ներսի հետ: Պետք է կարգ ու կանոն հաստատեք ձեր էության մեջ: Պետք է ամենայն ուշադրությամբ վերլուծեք ձեր այն կայունացած բացասական վիճակները, որոնք հաճախ են ձեզ այցելում, և ազատվեք դրանցից: Եթե արդեն գիտեք, թե դեպի ուր պետք է մղվեք, և գիտեք, թե դրան ինչն է խանգարում, ապա կարող եք սկսել ձեր ընթացքը դեպի հավերժական Կյանք տանող Ուղով:

Շա՛տ են այնպիսիները, որոնք չեն հասկանում հասարակ բառերով շարադրված այս պարզ ճշմարտությունը:

Եվ շատ ցավալի վիճակ է դա: Դուք բոլորդ պետք է վեր ելնեք Էվոյուցիոն ավելի բարձր աստիճանի վրա: Իսկ դրա համար հարկավոր է, որ սովորեք յուրացնել պարզ ճշմարտությունները:

Հարկ չկա ապացույցներ փնտրելու Աստծո գոյության վերաբերյալ, և հարկ չկա ուժ ու եռանդ ծախսելու, որ ինքներդ ձեզ ապացուցեք հավերժական Կյանքի գոյությունը: Կա Ուղի, որը հենց ձեր սրտերում է: Աստված հոգ է տարել, որպեսզի ձեզնից ամեն ոք ուղիղ ճանապարհ ունենա դեպի Աստծո Աշխարհ: Դա անձնական միստիկական փորձառությունն է՝ Հավերժի հետ անձնական հաղորդակցությունը:

Ուստի ձեզնից նրանք, ովքեր կարիք ունեն ապացույցներ ներկայացնելու իրենց իսկ մենտալային մարմնին, կարող են փնտրել դրանք: Իսկ Ես կոչ եմ անում ընթանալ այն ամենակարճ Ուղով, որը ձեր ներսում է՝ ձեր սրտերում: Հավատացե՛ք ինձ, ձեզնից ամեն ոք հնարավորություն ունի իր կյանքում գոնե մեկ անգամ բացելու Աստծո Աշխարհի դուռը և զգալու Հավերժի շնչառությունը:

Ձեզնից ոչ ոք չի կարող պնդել, որ իր կյանքում գոնե մեկ անգամ չի ապրել հանդարտ երանության թուլենք, երբ սրտից կարծես ճառագում են երանությունն ու խաղաղվածությունը: Եվ հենց դա է ճշմարիտ վիճակը: Դուք անցել եք այդ փորձառությունը: Իսկ հիմա ձեր կյանքում այն ամենը, ինչը խանգարում է, որ մշտապես գտնվեք գիտակցության այդ վիճակում, պետք է աստիճանաբար լքի ձեզ:

Երբ կարիք եք ունենում զննելու ձեր իրեղենը, որպեսզի որոշեք, թե ինչը ձեզ պետք կգա հետագայում, ապա դրա վրա որոշակի ժամանակ եք ծախսում: Ճիշտ այդպես էլ մարդկությունն այժմ պետք է որոշի, թե իր տրամադրության տակ եղած բաներից ինչն է, որ իրեն պետք կգա Էվոյուցիայի հաջորդ աստիճանի վրա, և ինչն է, որից պետք է հրաժարվի՝ համարելով անպետքություն:

Այդ կերպ, մեկը մյուսի հետևից ազատվելով ձեր բացասական հատկանիշներից ու սովորություններից, դուք ունակ կդառնաք ընթանալու Էվոյուցիոն զարգացման պարույրով դեպի վեր:

Կգա մի պահ, երբ ձեր ջանքերը հարյուրապատիկ կհատուցվեն, քանի որ կհասնեք ձեր Ուղու այն կետին, որտեղից բացվում է Աստծո Աշխարհի հեռանկարը:

Ես չգիտեմ, թե որքան ժամանակ կպահանջվի, մինչև որ այդ պահը գա: Բայց այդ պահն անպայման վրա կհասնի ձեր կյանքում, եթե ընդունեք իմ ասածները և պատրաստվեք ընթանալու իմ մատնանշած Ուղով:

Կա Աստծո Պլան, և այն պետք է ի կատար ածվի:

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

Վեհապետ Նիկոլայ Ռերիխ
13 հունվարի, 2010 թ.

Չրույց Ռուսաստանում աստվածային հնարավորությունը կյանքի կոչելու մասին

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը:

Այս օրով ես կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի ձեզ հետ զրուցեմ այն հարցերի մասին, որոնք ինձ հուզում էին իմ մարմնավորման ընթացքում և չեն դադարում հուզել նաև այժմ:

Ձեզ հայտնի է, թե որքան եմ ես սիրում Ռուսաստանը: Եվ ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ Երկնքից այդ երկրին հատկացված աստվածային հնարավորությունն անուշադրության է մատնվում:

Հասկացե՛ք, հարազատներս. որպեսզի աստվածային հնարավորության հոսքը շրջան կազմի, ձեր սրտերի հոսանքները պետք է համապատասխանեն դրան և լինեն հարկ եղած մակարդակի վրա: Ձեր սրտերում է գտնվում այն մեխանիզմը, որն աստվածային հնարավորությանը թույլ կտա դրսևորվելու ֆիզիկական աշխարհում:

Ոգու կրակներ, սրտի կրակներ. ահա թե ինչերը պետք է բոցավառեք: Արվեստի, գիտության տարբեր բնագավառների որքան շատ առաջադեմ մարդիկ են ջանք թափել, որպեսզի մարդկանց թրջի՞նքները բարձրանան: Որտե՞ղ են հիմա մարդկային գիտակցության այդ բարձրագույն ստեղծագործությունները:

Ինչու՞ ենք լավագույնը մոռացության մատնում: Ինչու՞ ենք մեր սրտերը լցնում արվեստի՝ երաժշտության, կինեմատոգրաֆիայի, կերպարվեստի ամենացածր նմուշներով: Ինչպե՞ս է ստացվել, որ երիտասարդությունը մնացել է առանց իր համար անհրաժեշտ կերակուրի: Նկատի ունեմ այն կերակուրը, որով հոգին է զարգանում:

Խավարամոլությունը Ռուսաստանում առաջ էլ էր շատ: Եվ մենք գիտեինք այդ մասին: Բայց հարգանքի էին արժանանում այն մարդիկ, ովքեր աստվածային կերպեր էին ներմուծում: Եվ կար մտավորականություն, որն ունակ էր ընկալելու դրանք:

Իմ ժամանակ խնդիր էր դրված աշխարհին տալ Վեհապետների ուղերձները, որպեսզի դրանք մարդկանց համար մատչելի դառնան և չմերժվեն: Ներկայումս համացանցը հնարավորություն է տալիս տեղեկատվությունը տարածել կայծակնային արագությամբ: Բայց մարդկանց առաջ մի այլ վտանգ է հայտնվել: Դա այն է, որ մարդկանց գլխին թափվեց ամենացածրորակ ու վատթարագույն տեղեկատվություն, և այդ տեղեկատվության օվկիանոսում կորչում են գիտելիքի այն հատիկները, որոնք մարդկության լավագույն ներկայացուցիչները տվել էին աշխարհին:

Այնուհանդերձ Ուղին հայտնի է, և ամեն ինչ դեռ կորած չէ: Դեռ ամեն ինչ կարելի է փոխել: Եվ ես շարունակում եմ իմ սրտում վստահություն պահպանել, որ ամեն ինչ դեռ կարելի է ետ բերել, և Ռուսաստանին մեծ ապագա է սպասվում: Ես չեմ կարող հանդուրժել այն պրոբլեմները, որոնք նորից կանգնում են լուսավոր օրվա ճանապարհին: Չգիտես ինչու, մարդկային ամենավատթարագույն դրսևորումները ոչ մի հակահարված չեն ստանում:

Արթնացնել է պետք, արթնացնել նրանց, ովքեր դեռ ի վիճակի են արթնանալու. դա՛ է այսօրվա առաջնափորձ խնդիրը: Միևնույն ժամանակ հարկավոր է ընթանալ այն ուղով, որով մենք ենք ընթացել: Հենվելով մեր կապերի և հեղինակության վրա՝ մենք փորձեցինք համոզել Ռուսաստանի իշխանական վերնախավին, որ այնտեղից ցուցում իջեցվի ներքև: Դա ամենագործուն ուղին կլիներ, որով դեռևս անցյալ դարի 20-ական թվականներին հնարավոր կլիներ փոխել Ռուսաստանի ապագան: Հիմա ես հասկանում եմ, որ մեր առաքելության բարեհաջող ընթացքի հավանականությունն ընդամենը մի քանի տոկոս էր կազմում: Այնուհանդերձ Վեհապետներն այդ հնարավորությունն օգտագործեցին:

Այժմ Ռուսաստանում ամեն ինչ փոխվել է, և հավանականությունն այն բանի, որ Իմաստության Վեհապետների տված համամարդասիրական Ուսմունքը լայնորեն կտարածվի

նախ Ռուսաստանում, ապա նաև մյուս երկրներում, անհամեմատ մեծացել է: Հարկավոր է միայն, որ ջանքեր գործադրեն այն անեղծ սրտերը, որոնք հենց այդ առաքելությամբ են մարմնավորվել: Ռուսաստանի բնակչության մեծ մասը նախկինի պես ապրում է հարյուրամյա վաղեմության պատկերացումներով: Դեռ հավատում է, որ կգա բարի հայր-ցարը՝ իր հետ բերելով երջանիկ ու անհոգ կյանք:

Երբեմն մեկ մարդը կարող է փոխել պատմության ողջ ընթացքը: Բայց այդ մարդը պետք է նախապես պատրաստվի իր առաքելությանը: Նա պետք է ունակ լինի դիմանալու աստվածային հնարավորության հոսանքին, որպեսզի հարկ եղած պահին այն անցկացնի իր միջով: Ազնի յոգայի այն գրքերը, որոնք Վեհապետները տվեցին իմ ու իմ կնոջ միջոցով, շատ անգամ են ընթերցվել ու վերընթերցվել: Արդյունքը ո՞րն է, եթե չկարողացաք նախապատրաստել ձեր սրտերն աստվածային հնարավորության հոսանքի համար: Մեր ամենօրյա նվիրապետական աշխատանքով մենք մեծ ապագա նախապատրաստեցինք Ռուսաստանի համար: Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ մենք երկար գիշերներով աչք չէինք փակում՝ աղոթելով ու աղաչելով Ռուսաստանի փրկությունը:

Ես իրավունք ունեի հուսալու, որ մեր գործը շարունակություն կստանա, այլ ոչ թե դանդաղորեն կհավի զանազան խմբակների ու «կլոր սեղանների» միջոցով:

Ես շատ եմ ավստում, որ վերջին ժամանակներում խավարը միայն ամրապնդեց իր դիրքերը:

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ աստվածային այն հնարավորությունը, որը նորից է տրվել Ռուսաստանին, իր ավարտին է հասնում, և այդպես էլ ի հայտ չեն գալիս ոգու այն հսկաները, որոնք կարող էին այդ հնարավորությունը կյանքի կոչել:

Ես շատ եմ ցավում, որ այս պահին մարմնավորման մեջ չեմ գտնվում: Թերևս կկարողանայի մտավորականության լավագույն ներկայացուցիչներից իմ շուրջը հավաքել շատ համախոհների: Միասին մենք հոգաբարձուական խորհուրդ կկազմենք, և դրա միջոցով հեռատեսիլների էկրաններից կարբեինք ցուցադրվող ամբողջ աղբը:

Մի՞թե Ռուսաստանում չեն մնացել մարդիկ, որոնք ի վիճակի են անշահախնդրորեն ծառայելու Ճշմարտությանը: Արդյոք այդքան գորե՞ղ է կավաշեն ոտքերով այն անդամ պատվանդանը, որը գործի է դնում բոլոր միջոցները, որպեսզի էլի մի քիչ դիմանա և շարունակի իր խրախճանքը: Ես նկատի ունեմ մարդկանց ընդհանրական ենթագիտակցությունը, որը, դեպի խավարն ուղղված լինելով, վախենում է լույսից, արևի տակ հայտնվելուց. ուստի գերադասում է վարագույրի հետևում թաքնվելով, ի կատար ածել իր մութ գործերը:

Ես անմիջականորեն դիմում եմ ձեզ, որ այսօր գտնվում եք մարմնավորման մեջ: Արդյոք ամեն ինչ արե՞լ եք ձեր կյանքում, որպեսզի մարդկության լավագույն իդեալները մոտեցնեք ֆիզիկական ոլորտին և իրականություն դարձնեք դրանք:

Ամենավաղ տարիքից սկսած՝ անհրաժեշտ է լուսավորել երիտասարդությանը: Հեռատեսիլների էկրաններն ու խանութների դարակներն անհրաժեշտ է լցնել լավագույն նմուշներով: Վեհապետներից ոչ ոք այդ գործը չի անի ձեր փոխարեն...

Միայն սրտի որակ, միայն ոգու կրակ է պետք ձեզ, որպեսզի ի կատար ածեք ձեր առաքելությունը: Եվ այդ աշխատանքն ու սխրանքն ավելի փոքր չեն լինի, քան այն սխրանքները, որոնք անցյալ ժամանակներում դրսևորվել են Ռուսաստանի լավագույն ուսուրերի և դուստրերի կողմից:

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

Վեհապետ Կուրթումի
14 հունվարի, 2010 թ.

Չրույց ուղերձների ազդեցության մասին

ԵՍ ԵՄ Կուրթումին: Ես կրկին ձեզ այցի եմ եկել: Եվ այսօր մենք կշարունակենք մեր զրույցը ձեզ խանգարող ներքին հատկանիշների հաղթահարման շուրջ:

Այո՛, պաշտելիներս, դուք գտնվում եք անկատար աշխարհում և, հետևաբար, ստիպված եք կիսելու այդ աշխարհի անկատարությունները: Ուստի և ձեզ համար անչափ դժվար է լինում մեր կողմից շարադրվող շատ պարզ բաները հասկանալը: Եվ ձեզնից շատերը նույնիսկ տարակուսանք

են հայտնում, թե ի՞նչ նոր բան կա դրանցում, և թե որքա՞ն կարելի է ամեն անգամ նույն բաները կրկնել:

Ձեր գիտակցությունն այնպես է կառուցված, որ, որպեսզի նրանում իրապես ինչ-որ բան փոխվի, դուք պետք է միևնույն ճշմարտությունը լսեք բազմաթիվ անգամ: Եվ նույնիսկ այնժամ, երբ ձեզ թվում է, թե արդեն հասու եք դարձել որևէ ճշմարտության, այնուամենայնիվ պետք է անձնական մեծ ջանքեր գործադրեք, որպեսզի ոչ միայն հասկանաք այդ ճշմարտությունը, այլ նաև այն կիրառեք ձեր կյանքում:

Հավատացե՛ք ինձ և Երկրի մարդկության հետ ունեցած աշխատանքի իմ փորձին. եթե նույնիսկ ձեզ թվում է, թե մեր ուղերձներից ոչ մի նոր բան չեք ստանում, ապա մի՛ շտապեք հետևություններ անել:

Մենք պարբերաբար կրկնում ենք մեր այն հանձնարարականները, որոնք վերաբերում են մեր ուղերձների հետ ձեր աշխատանքին: Եվ ես գիտեմ շատ մարդկանց, որոնք չեն հետևում մեր հանձնարարականներին: Շա՛տ անգամ ենք մենք ասել, որ զգույշ լինեք մեր ուղերձների հետ աշխատելիս. ասել ենք, որ ցանկալի չէ մի օրվա ընթացքում երկուսից ավելի ուղերձներ կարդալը: Օրինակ՝ մեկն առավոտյան, մյուսը՝ երեկոյան:

Ամեն մի ուղերձ իր մեջ պարունակում է այդ ուղերձը տվող Վեհապետի էներգիան: Երբեմն այդ էներգիան գալիս է ոչ այնքան բարձր ոլորտից, երբեմն էլ այն պատկանում է Լինելիության շատ բարձր ոլորտի: Եվ երբ դուք սկսում եք վրա-վրա մի քանի ուղերձ կարդալ, ապա ձեր օրգանիզմը ենթարկում եք շատ մեծ ծանրաբեռնվածության: Այդ վտանգը կարող է վրիպել ձեր արտաքին գիտակցությունից, քանի որ ձեր մարմնական խելքը սովոր է գործ ունենալ միայն տեղեկատվական բաղադրիչի հետ և հաշվի չառնել ուղերձների էներգետիկական բաղադրիչը:

Բերեմ այսպիսի օրինակ: Ձեր օրգանիզմը սննդի կարիք ունի: Մոված կամ ծարավ լինելու դեպքում դուք մի կտոր հաց եք ուտում կամ մի բաժակ մաքուր ջուր եք խմում, և ձեր օրգանիզմի պահանջը բավարարվում է: Իսկ հիմա պատկերացրեք, որ առանց որևէ ընտրության հսկայական քանակությամբ սնունդ եք կլանում և հետո էլ անսահմանափակ քանակությամբ ջրեղեն օգտագործում: Ես գիտեմ, որ ձեզնից շատերը կյանքում հենց այդպես էլ վարվում են՝ տրվելով խնջույքներին ու որկրամոլությանը: Արդյոք հաջորդ օրը վատ ինքնազգացողություն չե՞ք ունենում կերակուրի ու խմիչքի անգուսպ օգտագործման հետևանքով:

Կերակուրների մի մասն իրար հետ համատեղելի են, մի մասը՝ ոչ: Իմիջիայոց, մարդկության մեծագույն մասը գտնվում է այնպիսի ցածր էներգետիկական մակարդակի վրա, որ ունակ չէ հասկանալու այս պարզագույն ճշմարտությունները, որոնք հայտնի են եղել հազարավոր տարիներ առաջ, և դրանցով առաջնորդվել են բոլոր իմաստունները:

Այն դեպքում, երբ չափազանց շատ թելադրություններ եք կարդում, որոնք տրվել են տարբեր Վեհապետների կողմից, ձեր գիտակցության մեջ նույնպիսի դժվարամարսություն կառաջանա, ինչպիսին առաջանում է ձեր ստամոքսում կերակուրների անգուսպ չարաշահումից:

Դուք պետք է շատ զգուշորեն մոտենաք մեր ուղերձների ընթերցմանը, այլապես ձեր ներսում անհարմարություն, անբավարարվածություն կզգաք և, որ ավելի վատ է, ձեր դժգոհությունը կարտահայտեք՝ ուղղված մեր դեպանորդին և Վեհապետներին:

Դուք արտակարգ խնամքով պետք է նախապատրաստվեք ամեն մի ուղերձի ընթերցմանը: Պետք է համալարվեք այն Վեհապետի հետ, որն ուղերձ է տալիս՝ դիմելով երաժշտության, տվյալ Վեհապետի պատկերի օգնությանը, կամ աղոթեք ու մտասևեռմամբ զբաղվեք նախքան ուղերձի ընթերցումը: Նման դեպքում դուք հավասարակշռության եք բերում ձեր էներգիաները, վեր հանում ձեր գիտակցությունը, և արդյունքում ուղերձը ձեզ համար օգտակար է լինում:

Բերեմ ևս մեկ օրինակ: Արևն իր լույսն ու ջերմությունը տալիս է բոլոր մարդկանց և բոլոր կենդանի էակներին: Կան մարդիկ, որոնք խելամոռեն են օգտվում արևային էներգիայից. որոշակի ժամանակ արևի տակ գտնվելուց հետո նրանք դադար են տալիս և հետո նորից կանգնում արևի քնքուշ ճառագայթների ներքո:

Բայց կան նաև մարդիկ, որոնք առավոտից իրիկուն պառկում են ծովափնյա կիզիչ արևի տակ, իսկ հաջորդ օրը սկսում տրտնջալ արևայութից և բարձր ջերմությունից:

Ո՞վ է մեղավոր ձեր այրվածքների համար: Մի՞թե արևը: Կարծում եմ՝ ակնհայտ է, որ ո՛չ: Հենց ինքներդ եք մեղավոր, քանի որ ճիշտ չեք օգտվել արևային էներգիայից:

Մեր ուղերձներում պարփակված էներգիայի ազդեցությունն այդքան ակնհայտ ձևով չի դրսևորվում: Սակայն կան բավականաչափ շատ անհատներ, որոնք վրա-վրա մեր ուղերձներից մի տասը հատ կարդում են՝ առանձնապես չստիպարով դրանց էության մեջ և հարկ եղած չափով չտրամադրվելով ամեն ուղերձից առաջ: Արդյունքը երկար սպասեցնել չի տալիս: Որոշ ժամանակ անց նրանք սկսում են գրգռվածություն և նույնիսկ չարացածություն զգալ:

Ո՞վ է մեղավոր այդ զգացողությունների համար. Դեսպանո՞րդը: Վեհապետնե՞րը: Կարծում եմ, որ պատասխանն ակնհայտ է: Ձեզնից դուրս որևէ մեկը մեղավոր չէ այն բանում, որ դուք անտեսում եք Վեհապետների խորհուրդները:

Ինչպես ձեր աշխարհում ամեն ինչը, մեր ուղերձները ևս ունեն երկակի ազդեցություն: Եվ ոմանք մեր ուղերձները կարդալու շնորհիվ ողորկ են դարձնում իրենց աուրան, վերացնում աուրայի բոլոր բծերը, որոնք երկար տարիների ընթացքում ուղեկցում էին իրենց: Այդպիսիները դառնում են ավելի հավասարակշիռ, բարյացակամ: Բարելավվում են մերձավորների հետ ունեցած նրանց հարաբերությունները: Եվ անդորր է սկսում տիրել ինչպես իրենց հոգում, այնպես էլ տանը:

Բայց կան և այնպիսիները, որոնք, ընդհակառակը, մեր ուղերձները կարդալուց հետո զգում են չարացածություն, ատելություն, հակակրանք: Նրանց աուրան օր օրի մաշվում է, և նրանք պարզապես իրենք իրենց դատապարտում են ոչնչացման:

Պաշտելիներս, մենք ձեզ կամենում ենք բարիք, Սեր և ներդաշնակություն: Եվ այդ ամենը դուք կարող եք ձեռք բերել մեր ուղերձների շնորհիվ: Բայց ձեր ներսում շրջափական կա, որը մեր ուղերձներում առկա էներգիան ուղղորդում է կա՛մ դեպի բարին, կա՛մ դեպի չարը: Ձեր աշխարհում ամեն ինչը երկակի բնույթ ունի, պաշտելիներս: Եվ ձեր մեջ է գտնվում այն մեխանիզմը, որը կա՛մ ձեզ ստիպում է առույգորեն ընթանալ Էվոյուցիայի ուղով, կա՛մ էլ ձեզ դեն է նետում ճամփեզրից դուրս:

Այսօր ես ձեզ հետ կարևոր գրույց վարելու հնարավորություն ունեցա: Եվ լիահույս եմ, որ մեր ուղերձներն ընթերցող շատ մարդկանց համար այդ գրույցը կայացավ ճիշտ ժամանակին:

*ԵՄ ԵՄ Կույթումին՝
մշտապես պատրաստ օգնելու օգնության կարիք ունեցողներին և օգնություն խնդրողներին*

Հաութամա Բուդդա
15 հունվարի, 2010 թ.

Ուսմունք Համայնքի մասին

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան:

Այսօր ես եկել եմ, որպեսզի ավելի մանրամասն խոսեմ մի թեմայի շուրջ, որը գուցե ոչ բոլորի համար հետաքրքիր կլինի, սակայն ես կարծում եմ, որ այդ թեմայի շուրջ այնուամենայնիվ անհրաժեշտ է խոսել:

Եվ այսպես, այսօր ես եկել եմ, որպեսզի պարզաբանեմ որոշ հարցեր, որոնք վերաբերում են համայնքի և համայնքային շինարարության մասին ունեցած ձեր պատկերացումներին:

Մենք շա՛տ թելադրություններում ենք այս թեման շոշափել: Բայց և չենք ներկայացրել շատ խոր Ուսմունքի տեսքով: Ավելի շուտ միայն փորձել ենք ձեր մտքերն ուղղել դեպի այդ կողմը: Քանզի մարդկության Էվոյուցիոն զարգացման հաջորդ փուլը համայնքի փուլն է:

Սակայն բուն համայնքի հասկացությունն այնքան շատ է աղավաղված, որ ամեն անգամ այդ թեման շոշափելիս հարկ է լինում շատ խնամքով օգտագործել հասկացություններն ու տերմինները և մշտապես ստուգել, թե ինչպես են այդ հասկացություններն ընկալվում սովորական մարդկային մակարդակով:

Մենք արդեն բազմիցս ասել ենք, որ ձեր աշխարհում ամեն ինչ երկակի բնույթ է կրում. ինչն էլ որ վերցնելու լինենք, անպայման երկու երես ունի:

Եվ մենք որքան ավելի հստակ կարողանանք ձեր գիտակցությանը հասցնել համայնքի կերպարն այնպես, ինչպես դա նկատի ունեն Համբարձյալ Վեհապետները, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունը, որ հասարակության փոփոխման գործընթացը կընթանա հարկ եղած ուղղությամբ:

Մինչև այժմ համայնքի հասկացության ըմբռնման հարցում մարդկությունը վեր չի բարձրացել այն մակարդակից, որը նա ուներ Հաութամա Բուդդա եղած ժամանակ: Հենց այդ ժամանակ ֆիզիկական ոլորտում ինձ հաջողվեց ստեղծել համայնքի այն կերպը, որն առավելագույնս կարելի էր մոտ համարել Վեհապետների պատկերացրածին: Բայց հիմա ես տեսնում եմ, որ այդ կերպը շատ հեռու էր կատարյալ լինելուց: Քանզի ամեն ինչ հիմնված էր որպես Ուսուցիչ ինձ պաշտելու վրա, և շատերը կատարում էին իմ ցուցումները՝ առանձնապես չխորանալով դրանց էության մեջ: Իհարկե, եթե պաշտամունքն այն Ուսուցչի նկատմամբ, որը հասել է Բուդդայի գիտակցության մակարդակին, լիակատար է ու անվերապահ, ապա նրանց առաջընթացը, որոնք համայնքին են պատկանում և հետևում են Ուսուցչի ցուցումներին, տեղի է ունենում հսկայական տեմպերով: Եվ շատերը նրանցից, որոնք ինձ Ուսուցիչ էին ընտրել, իրենց այդ կամ հաջորդ մարմնավորման

ընթացքում հասան այնպիսի գիտակցության մակարդակի, որը չափազանց մոտ է Բուդդայի գիտակցությանը:

Այնուհանդերձ նման համայնքը մի թերություն ունի: Դա այն է, որ երբ Ուսուցիչն ավարտում է իր մարմնավորումը, որոշ ժամանակ անց ամենայն բան դադարում է համապատասխանել բարձր հոգևոր մակարդակին: Մարդիկ շարունակում են նույն արարողակարգերը, առաջնորդվում են կարծես թե նույն բարոյական սկզբունքներով, բայց, քանի որ բացակայում է այն հիմնարար հանգույցը, որի վրա համայնքը կանգուն էր մնում, ժամանակի ընթացքում ամեն ինչ թուլանում է և հասնում այն միջին մակարդակին, որը տվյալ ժամանակահատվածում գոյություն ունի Երկրի վրա:

Հայտնի է համայնքի մի ուրիշ տարբերակ, ինչպիսին ունեցան ռուսաստանաբնակները անցած՝ 20-րդ դարում: Ճիշտ է, համայնք էր, բայց, չգիտես ինչու, երբ խոսք է գնում այդ համայնքի մասին, մարդիկ կորցնում են հետաքրքրությունը: Քանզի լուսավորի կերպարն ու մարդկության երազանքը փորձեցին իրականացնել մարդիկ, որոնք իրենց մակարդակով սովորական մատերիական ոլորտում էին և դատում էին ֆիզիկական ոլորտի սովորական չափորոշիչներով:

Այդ տիպի համայնքը կարող է գոյատևել միայն այն դեպքում, եթե մարդիկ արտաքին հանգամանքների ճնշմամբ ստիպված են լինում ապրել նման համայնքում: Դրանք կարող են լինել սարսափը, հալածանքները կամ այլախոհների ուղղակի ոչնչացումը:

Ուստի նման համայնքը ոչ մի ընդհանուր բան չի կարող ունենալ այն համայնքի հետ, որի իրականացման մասին խոսում են Վեհապետները:

Իսկ ի՞նչ պետք է անել: Ինչպե՞ս է հնարավոր մարդկության համար ի կատար ածել Վեհապետների Մտահղացումը:

Կարող եմ ասել, որ հնարավոր չէ համայնք կառուցել վերին ցուցումով, նույնիսկ եթե այդ ցուցումը տալիս են Համբարձյալ Վեհապետները: Համայնքը առաջին հերթին մարդկանց այն գիտակցության մակարդակն է, որը համապատասխանում է վեցերորդ և յոթերորդ արմատական ռասաներին: Կարող եմ նաև ասել, որ այն անձնագոհ անհատները, որոնք պատկանում են այդ ռասաներին և աստվածային հնարավորություն են խնդրել մարմնավորվելու համար, ներկայումս կորցրել են իրենց ձեռք բերած ողջ փորձառությունը և իջել այն նույն միջին մակարդակին, որը գոյություն ունի Երկրի վրա:

Եվ այսպես, ի՞նչ էլք է մնում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար:

Համայնքը կարող բաղկացած լինել միայն այնպիսի մարդկանցից, որոնք հասել են Բուդդայի գիտակցության կամ Քրիստոս-Էակի մակարդակի: Նայեցե՛ք ձեր շուրջը և տեսեք. կա՛րողոք ձեր շրջապատում մեկը, որը հասել է այդպիսի մակարդակի:

Եթե նույնիսկ նման անհատներ կան, ապա նրանք գտնվում են ամեն մի բնակավայրից ամենաքիչը մեկ օրվա քայլի հեռավորության վրա: Որովհետև ձեր բնակավայրերի թրթռանքների պայմաններում ոչ մի Բուդդա մի քանի ժամից ավել չի կարող դիմանալ: Մեծագույն հորինվածք է այն, թե մեկը կարող է հանկարծ բարձր հոգևոր մակարդակի հասնել՝ ապրելով բարձր հոգևոր նվաճումներով աչքի չընկնող սովորական մարդկանց շրջապատում:

Հենց դրա համար ենք մենք ասում, որ անհրաժեշտ է ստեղծել ինքնավար բնակավայրեր, որոնց պայմանները թույլ կտան, որ այդ վայրեր մուտք գործեն այն անհատները, որոնք պատկանում են վեցերորդ և յոթերորդ ռասաներին. և, ինչու՞ ոչ, նաև որ այդ վայրերում մարմին առնեն Համբարձյալ Վեհապետները:

Մենք այդ միտքը բավարար պարզությամբ շարադրել ենք թելադրությունների բոլոր շրջանների ընթացքում, որոնք անց ենք կացրել մեր դեսպանորդի միջոցով: Եվ մենք նույնիսկ մի անհաջող փորձ ձեռնարկեցինք, որպեսզի բնակավայր կառուցենք մեր դեսպանորդի Աշրամի անմիջական հարևանությամբ: Հիմա պարզորոշ տեսնում ենք, որ մեր փորձը ձախողվեց այն պատճառով, որ բախվեց տեղաբնակների ու առանձին անհատների կատաղի դիմադրությանը, ինչպես նաև մենք օժանդակություն չստացանք այն լուսակիրներից, որոնց անմիջական մասնակցությունն այդ գործում մենք ակնկալում էինք:

Մեր դեսպանորդի Աշրամի հիմքի վրա համայնք ստեղծելու աստվածային հնարավորության պատուհանն այժմ փակված է: Եվ հիմա մենք ստիպված ենք նորից տալ երեք- և չորսամյա վաղեմության մեր դասերը, որպեսզի մարդկանց գիտակցությունը գոնե մի փոքր տեղաշարժ կատարի, բայց՝ հարկ եղած ուղղությամբ:

Դուք ստիպված եք նորից նստել դասասեղանի առաջ և անցնել ուսուցման նոր դասընթաց: Մի՛ ամաչեք, դա սովորական մի իրավիճակ է, որը բնորոշ է Երկրի մարդկությանը: Եվ Երկնքի ողորմածության շնորհիվ է, որ դեռևս պահպանվում է այն ֆիզիկական հարթակը, որի վրա դեռևս կարելի է իրականացնել Վեհապետների պլանները:

Մենք դեռևս լիահույս ենք, որ վաղ թե ուշ ընթերցված թելադրությունների քանակությունը ձեր գիտակցությունը կհանի նոր մակարդակի վրա, և դուք ունակ կդառնաք Վեհապետների Խոսքն ընկալելու ոչ թե որպես գիշերային ընթերցանության ժամանց, այլ որպես անմիջական ցուցում ձեր հետագա կյանքի համար:

ԵՄ ԵՄ Հառությամբ՝ ձեր ավագ եղբայրը

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
16 հունվարի, 2010 թ.

Փոխանցվող ուղերձների նպատակներից մի քանիսի մասին

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ կրկին ձեզ այցի եկածը: Ես ուրախ եմ այս ուղերձների փոխանցման հնարավորության առկայության համար, նաև ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ տեղեկություններ փոխանցելու Երկրի մարդկությանը:

Դուք հավանաբար նկատել եք, որ երկրորդ ամիսն է, ինչ ամեն օր այս դեսպանորդի միջոցով ուղերձներ ենք տալիս: Եվ ձեզնից ոմանք, հավանաբար, մտածել են այն մասին, որ այս շրջանի ուղերձներն աչքի են ընկնում ինչ-որ բացառիկությամբ և դուրս են սովորական չափանիշների շրջանակից:

Հենց այդպես է, որ կա: Ես չեմ կարող սպառիչ կերպով ձեզ հայտնի դարձնել բոլոր այն նպատակները, որոնք մենք հետապնդում ենք ֆիզիկական աշխարհին ուղերձներ փոխանցելու մեր աշխատանքով: Բայց այդ նպատակների մի որոշ մասը, որոնց այս կամ այն աստիճանով մենք արդեն հասել ենք, ես կարող եմ բացահայտել ձեզ համար:

Մենք երբեք չենք գործում այնպես, որ հասնենք ընդամենը մի նպատակի: Մեր գործողությունները մշտապես կրում են բազմապլանային բնույթ, և գործադրած միայն մեկ ջանքով լինում է այնպես, որ ֆիզիկական աշխարհում հասնում ենք տասնյակ նպատակների իրականացման:

Օրինակ՝ դուք գիտեք, որ ուղերձի փոխանցմանը համակցվում է էներգիայի փոխանցումը ձեր աշխարհ: Եվ կարող եմ ձեզ ասել, որ թելադրությունների այս շրջանում արձակվել է Լույսի աննախադեպ քանակություն: Եվ եթե նույնիսկ Մեծ Կենտրոնական Արևը մերժեր մեզ, որ այդ էներգիան հատկացվի Երկիր մոլորակի համակշռման գործին, այնուհանդերձ մենք կկարողանայինք որոշակի համակշռություն ապահովել՝ միայն այս ուղերձներով Լույս առաքելու շնորհիվ:

Ուղերձների փոխանցման համար մենք այնպիսի ժամանակահատված ընտրեցինք, որն իր մեջ ընդգրկում է ձմեռային արևադարձը և Ծննդյան տոնի ու նոր տարվա նշումը: Եվ դա նույնպես պատահական չէր, քանի որ մարդկությունը հենց այդ ժամանակ է ամենաշատ կարման ստեղծում:

Այս տարեսկզբին նաև աստղաբաշխական իրավիճակն էր անբարենպաստ, քանի որ լուսնի խավարումը համարյա համընկավ նոր տարվա տոնակատարության հետ, որին անմիջապես հետևեց նաև արևի խավարման գործուն ազդեցությունը: Դրանցով առավել անբարենպաստ դարձավ այն հետնապատկերը, որը տոնակատարության ընթացքում իր անգուսպ խրախճանքով ստեղծել էր մարդկությունը:

Հենց այդ պատճառով է, որ մեր դեսպանորդի միջոցով մենք դիմեցինք ձեզ՝ խնդրելով, որ ձեր աղոթքներով օգնեք մոլորակին. ինչպես նաև մեր ուղերձներով ձեզ նախազգուշացրինք, որ մոլորակի վրա ամեն ինչ չէ, որ բարվոք վիճակում է:

Քչերը ուշք դարձրին մեր զգուշացումներին: Բայց ընդհանուր առմամբ մենք կարողացանք որոշակի համակշռության ապահովել: Եվ այժմ ես կարող եմ հանգիստ տեղեկացնել ձեզ, որ մեզ հաջողվեց կանխել ավելի հզոր մի երկրաշարժ, քան տեղի ունեցավ Հայիթիում: Դրա էպիկենտրոնը պետք է գտնվեր արևմտյան կիսագնդի անհամեմատ ավելի խիտ բնակեցված շրջանում:

Դուք տեսնում եք, որ մոլորակի իրավիճակն իսկապես շատ ծանր է: Եվ Համբարձյալ Դասերից մշտական ճիգեր են պահանջվում, որպեսզի իրադարձություններն է՛լ ավելի վատ ընթացք չստանան:

Եթե վերադառնանք մեր ուղերձների փոխանցման հարցին, ապա կա մի շատ կարևոր նպատակ, որին փաստորեն մենք արդեն հասել ենք, ուստի կարող եմ այդ մասին նույնպես ասել: Դուք այնպիսի ժամանակում եք ապրում, երբ մարդկության գտման գործընթաց է ընթանում: Եվ յուրաքանչյուր անհատ ինքն է ընտրություն կատարում՝ ընթանա՞լ արդյոք այն ուղով, որը մատնանշում են Վեհապետները, և որը տանում է դեպի հավերժական Կյանք, թե՛ ընտրի անցողիկ

աշխարհը՝ կիսելով դրա ճակատագիրը, որը ոչնչացումն է, ինչպես դա ժամանակին եղել է Լուսնի քաղաքակրթության հետ:

Հավանաբար դուք տարակուսում եք, թե ի՞նչ կապ ունեն այստեղ ուղերձները: Իհարկե, դա այդպես է, բայց ամբողջ հարցը դրանց նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքն է: Մենք արդեն ասել ենք, և ես նորից կրկնեմ, որ ձեր աշխարհում ամեն ինչ երկակի բնույթ է կրում: Ոմանց համար մեր ուղերձներն անապատում մատուցված մի բաժակ ջրի պես եղան, ոմանք էլ, կարդալով ուղերձները, ստացած էներգիան օգտագործեցին այն բանի համար, որ վատաբանեն ինչպես դեսպանորդին, այնպես էլ մեզ: Դրանով իսկ նրանք ստիպված եղան դրսևորելու իրենց ներքին էությունը. իրենց արարմունքով, մտածածով կամ զգացածով նրանք կարմա ստեղծեցին:

Մենք ինչ-որ դաժան պատժիչներ չենք: Միլիոնավոր տարիների ընթացքում մենք նվիրվածությամբ ու հավատարմությամբ ծառայում ենք Երկրի մարդկությանը: Այո՛, այս տիեզերքի Օրենքն ասում է, որ Բարձրը ծառայում է ցածրին: Բայց ցածրը պետք է ենթարկվի Բարձրին և հետևի Բարձրագույն ուժերի ցուցումներին: Եթե դուք ձեր հույսը դնում եք մարդկային խելքի և մարմնական ուժի վրա, ապա ընդվզում եք Աստծո դեմ և Լուսնի Ուժերի Հիերարխիայի դեմ, որը ծառայում է Աստծուն:

Ի նկատի ունեցեք, որ դա ձե՛ր ընտրությունն է: Ոչ ոք ձեզ չի ստիպում, որ կուրորեն խոնարհվեք մեր առջև, չի ստիպում, որ ինչ-որ գործողություններ կատարեք: Մենք պարզապես Ուսմունք ենք տալիս և ձեզ պատմում ենք այն օրենքների մասին, որոնք գործում են այս տիեզերքում: Բայց ինչու՞ են ձեզնից ոմանք կատաղում մեր ուղերձներից: Ես ձեզ կասեմ, թե ինչու: Որովհետև նրանք իրենց ընտրությունն արդեն կատարել են: Լույսը նրանց վրդովում է, քանի որ իրենք խավարն են ընտրել:

Ես կուզենայի, որ այն մարդիկ, ովքեր կարդում են մեր ուղերձները, հասկանային, որ իրենց ընտրությունն ինչ-որ կարճ պահի չի եղել, այլ կատարվել է շատ ավելի վաղ: Պատահում է, որ ոմն մեկը հազարավոր տարիներով ծառայում է մեզ հակադիր ուժերին: Ես հիմա խոսում եմ այն մասին, որ եկել է այն ժամանակը, երբ Աստծո գթասրտությունն ու կարեկցանքն իրենց տեղը զիջում են Աստծո արդարադատությանը: Եվ դա վերաբերում է միայն այն անհատներին, ովքեր իրապես անցյալի ու ներկայի իրենց գործողություններով գործի են գցել Աստծո արդարադատության մեխանիզմը:

Հետևելով իմ եղբայրակիցներին, որոնք ձեզ նախագգուշացրել են Երկրի մոլորակի ոչ այնքան բարվոք վիճակի մասին, ես միայն կարող եմ ձեզ ևս մեկ անգամ նախագգուշացնել, որ շատ անհատների համար մոտենում է վերջնական ընտրություն կատարելու ժամանակը:

Իմ այսօրվա գրույցը ձեզ կարող է շատ խիստ և նույնիսկ դաժան թվալ: Բայց ես մտահոգ եմ այն միլիոնավոր հոգիների համար, որոնք փրկության կարիք ունեն և պետք է փրկվեն: Նրանք խճճվել են կարմայի ցանցում, և հարկ է լինում ծայրահեղ միջոցների դիմել, որպեսզի հատվեն կարմայի առավել խճճված հանգույցները, որպեսզի այդ հոգիները կարողանան մի փոքր ազատ շունչ քաշել, և Երկրի վրա գտնվող ամեն ոք կարողանա ազատ կատարել իր ընտրությունը:

Ուզում եմ ասել, որ մենք կատարում ենք մեր առաքելությունը և ձեռնարկում ենք բոլոր հնարավոր փորձերը, որպեսզի փրկենք առավելագույնս շատ հոգիների:

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղորդիչը

Վեհապետ Գողֆրի
17 հունվարի, 2010 թ

Ես ձեզ գործի եմ կոչում

ԵՄ ԵՄ Գողֆրին:

Թեև իմ վերջին մարմնավորումն անցավ Ամերիկայի տարածքում, այնուհանդերձ ես կարծում եմ, որ շատ են այն ընդհանրական հարցերը, որոնք հուզում են Երկրի ողջ մարդկությանը: Եվ հատկապես Երկրի ներկայիս ժամանակի համար որոշ հարցերի արդիականությունն ուղղակի ակնհայտ է:

Եվ այսպես, ես իմ պարտքն եմ համարում մի փոքր զրույց վարել, որը, հավանաբար, ձեզ կհետաքրքրի: Համենայն դեպս, երբ ես Ամերիկայում դեսպանորդի պաշտոն էի վարում, իմ այս զրույցը միշտ մեծ հետաքրքրությամբ էր ընդունվում:

Դրա հետ մեկտեղ ես կուզենայի շոշափել նաև հոգևոր մտքի տարբեր ուղղությունների առաջատարների փոխգործակցության հարցը:

Ակներև է, որ տարբեր հոգևոր գործառնությունների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մարդկանց թիվն աճում է: Եվ նրանց մեջ կան որոշակի ունակություններով օժտված բացահայտ առաջատարներ, որոնց օժտվածությունը սկզբնավորվել է հեռավոր դարերում՝ դեռևս Ատլանտիդայի ժամանակներում:

Շատ կան մարդիկ, որոնք խոսում են միասնության և միավորման մասին: Շատերն են կարծում, որ երկու կամ ավելի խմբերի մեխանիկական միավորումը կհանգեցնի հոգևոր միասնության աճին:

Իրականում, երբ դուք ձգտում եք միավորվել, ոչ միշտ է դա հանգեցնում դրական արդյունքի կամ, կարելի է ասել, երբեք չի հանգեցնում: Ո՞րն է դրա պատճառը:

Ես կաշխատեմ պատճառը բացատրել՝ ելնելով իմ գիտակցության համբարձյալ դիրքից: Ամբողջ բանն այն է, սիրելիներս, որ դուք միավորման եք ձգտում՝ առաջնորդվելով զուտ մարդկային շարժառիթներով: Եվ այն միավորումը, որի մասին երազում եք, խոսում կամ քննարկում, առավելապես մենտալային տիրույթին է պատկանում, նույնիսկ ավելի լավ կլինեք ասել՝ մարմնական խելքի տիրույթին: Իրավ է, որ դա այն մակարդակը չէ, որի վրա հնարավոր է ճշմարիտ միավորում: Քանզի մարմնական խելքը դատում է ֆիզիկական աշխարհի չափորոշիչներով: Արդյունքում հաճախ դուք կարող եք միավորվել, բայց միայն ֆիզիկական ոլորտի որոշակի խնդիրների լուծման և նպատակների հասնելու համար: Բայց հենց որ խնդիրն իր լուծումն է ստանում, և ուրիշ արժանավոր նպատակ չի երևում, մարդկանց մտքերում սկիզբ են առնում քայքայիչ պրոցեսներ: Անշուշտ, առաջատարների հոգևոր նվաճումներով պայմանավորված գիտակցության մակարդակը նշանակալի հետք է թողնում փոխհարաբերությունների գործընթացի վրա: Որոշ առաջատարներ կարողանում են իրար հետ համագործակցել, որոշներն էլ հրաժարվում են դա անել՝ ներկայացնելով պարզապես ծիծաղելի պատճառաբանություններ:

Դա խոսում է այն մասին, որ նույնիսկ ոգեղինության ձգտող մարդկանց գիտակցության մակարդակը չի բավարարում, որ կայանա այն ճշմարիտ Միասնությունը, որի մասին բոլորը երազում են ու խոսում, բայց մինչև այժմ չեն կարողանում դրան հասնել:

Ամբողջ բանը, սիրելիներս, գիտակցության մակարդակն է: Ճշմարիտ Միավորումը հնարավոր կլինի միայն այնժամ, երբ դուք կհասնեք Քրիստոսի գիտակցության մակարդակին, այլ կերպ ասած՝ Միավորումը հնարավոր է միայն ձեր Բարձրագույն Ես-ի մակարդակով: Հենց այդ պատճառով էլ ես իմ շարժումն անվանեցի «ԵՄ ԵՄ»: Քանզի միայն Բարձրագույն Ես-ի մակարդակով է հնարավոր դեպի Աստված ձգտող մարդկանց միավորվել:

Փորձը ցույց է տալիս, որ եթե ժամանակակից մարդիկ նույնիսկ ունակ են լինում համահնչունության հասնել իրենց Բարձրագույն մասի հետ, ապա դրա ժամանակահատվածը շատ կարճ է լինում: Իսկ դա բավարար չի լինում, որ այդ գիտակցության վիճակով ֆիզիկական ոլորտում վստահ քայլեր արվեն ճշմարիտ Միասնության ուղղությամբ:

Միայլ կլինի, եթե իմ այս զրույցից դուք եզրակացնեք, թե անիմաստ է ինչ-որ բան ձեռնարկելը, որովհետև, միևնույնն է, երազած արդյունքը չի ստացվի: Այդպես չէ, սիրելիներս, հարկ է, որ շարունակեք համագործացության ձեր փորձերը՝ թեկուզև հանուն ֆիզիկական ոլորտում որոշակի փոքր գործերի իրականացման: Եթե մանուկ հասակում քայլեր անելու երկու-երեք անհաջող փորձերից հետո դադարեցնեիք քայլելու բոլոր փորձերը, ապա երբեք քայլել չէիք սովորի:

Նույնը վերաբերում է նաև մարդկային գործունեության այս բնագավառին: Համագործակցության մշտական ու համառ փորձերն անհրաժեշտություն են: Միայն թե միշտ պետք է հաշվի առնել, որ հատկապես կարևոր է համատեղ գործերն ու միջոցառումները կյանք մտցնելը: Որովհետև, քանի որ միավորումը տեղի է ունենում մենտալային կամ զգացական մակարդակով, ապա որպեսզի այն կենսունակ լինի և հնարավորինս երկար գոյատևի, անհրաժեշտ է պահպանել մենտալային և զգացական մարմինների մշտական բեռնվածություն: Համատեղ գործողությունների ընթացքում՝ հատկապես այնժամ, երբ դրանք ի կատար են ածվում հնարավորի սահմանագծում, Բարձրագույն Ուժերն ավելի հեշտորեն կարող են կապվել ձեզ հետ և ձեր գործունեության միջոցով ի կատար ածել իրենց խնդիրները: Հատկապես այն ժամանակ, երբ գտնվում եք մշտական լարվածության մեջ, մշտապես գործում եք հանուն Ընդհանուր Բարիքի, ձեր չակրաները լրիվ չափով բացվում են, և Աստծո էներգիան մուտք է գործում ձեր մարմինների

մեջ. իսկ դրանից անմիջապես հետո աստվածային հնարավորությունը կարող է և իրականանալ ձեր աշխարհում:

Ուստի շարունակե՛ք ձեր փորձերը, գործե՛ք, նույնիսկ եթե ձեր ճիգերի արդյունքը չի դրսևորվում ձեր գիտակցության մակարդակի բարձրացման տեսքով: Մի՛ մոռացե՛ք, որ ձեր կարման առավել հաջող բեռնաթափվում է այնժամ, երբ կատարում եք համատեղ գործեր, որոնք հետապնդում են բարի նպատակներ:

Նայե՛ք ձեր շուրջը և տեսե՛ք, թե որքա՛ն գործեր կարելի է անել: Բոլորն անելու համար մի կյանքը չի բավականացնի: Որսացե՛ք աստվածային հնարավորության հոսքը: Սկսե՛ք անել առաջին գործը, որը հենց ուղիղ ձեր հայացքի դեմ է: Ձեր համատեղ գործողությունները, որոնք կանեք ֆիզիկական, մենտալային և աստեղային ոլորտներում, ունակ կլինեն վերափոխելու առաջին հերթին հենց ձեզ, և որպես դրա կողմնակի արդյունք՝ կվերափոխվի նաև ձեր շրջապատի ամեն ինչը:

Ձեր գործունեության ընթացքում ի չիք կդառնա ամեն մի անպետքություն՝ այն ամենը, ինչ խանգարում է ձեր առաջընթացին՝ բոլոր անկատարությունները, բացասական հատկանիշներն ու սովորությունները: Համա՛ռ եղե՛ք ձեր առաջադրած նպատակներին հասնելու գործում և միշտ հիշե՛ք, որ ֆիզիկական ոլորտում համատեղ կատարված ամեն մի գործ մոտեցնում է այն օրհնյալ օրերը, երբ Երկրի վրա հնարավոր կլինի Ոսկեդարի հաստատումը:

Ես ձեզ գործի՛ եմ կոչում: Հավատացե՛ք ինձ. ես գիտեմ, թե ինչ եմ ասում: Քանզի ֆիզիկական ոլորտում այնտեղ, որտեղ դրսևորվում է բավարար քանակի մարդկանց համատեղ աշխատանքի արդյունքը, շրջակա տարածությունը մաքրվում է ճիշտ այնպես, ինչպես եթե աղոթեիք առավոտից մինչև գիշեր:

Ես լիահույս եմ, որ այսօրվա իմ գրույցը ձեզ կհուշի այն ուղին, որով կկարողանաք սկսել ձեր վերելքը դեպի աստվածային գիտակցության գագաթ:

ԵՍ ԵՄ Գողթրին

Վեհապետ Հիլարիոն
18 հունվարի, 2010 թ.

Ուսմունք մոլորակի իրավիճակի մասին

ԵՍ ԵՄ Հիլարիոնը: Ես կրկին ձեզ այցի եմ եկել Ճշմարտության, գիտության և բուժարարության ճառագայթով: Եվ այսօր, օգտվելով ձեր աշխարհին ուղերձներ տալու այս աստվածային հնարավորությունից, ես ձեզ Ուսմունք կտամ այն մասին, թե ինչպես համալարվեք ընթացիկ իրադարձությունների հետ:

Եկե՛ք էլ այն պահը՝ այն շրջադարձային կետը, որից սկսած՝ ձեր աշխարհում ամեն ինչ կփոխվի: Ձեզնից նրանք, ովքեր ի սրտե նվիրված են Մեծ Սպիտակ Եղբայրությանը, արդեն հոգնել են սպասելուց, թե երբ Երկրի վրա տեղի կունենան այն փոփոխությունները, որոնց մասին իրենց ուղերձներում խոսում են Վեհապետները:

Միրելիներս, ամեն ինչ արդեն իսկ փոխվում է: Պարզապես ձեր գիտակցության մակարդակը թույլ չի տալիս, որ գիտակցեք Երկրի վրա տեղի ունեցող փոփոխությունների ողջ մասշտաբը: Փոփոխությունների ավելի արագ տեմպ ֆիզիկապես ուղղակի հնարավոր չէ: Քանզի մենք միաժամանակ ստիպված ենք և՛ պահպանել մոլորակի համակշռությունը, և՛ մաքրել մոլորակն ամբողջ հնից ու իր դարն ապրածից: Եվ Երկիր մոլորակի կենսահոսքերին մատուցվող մեր ծառայությունը երբեմն նմանվում է ածելու սայրի վրայով քայլելուն: Մենք պարտավոր ենք խստորեն պահպանել բոլոր համամասնությունները, որպեսզի չշեղվենք ո՛չ աջ, ո՛չ էլ ձախ:

Մի կողմից մոլորակի թրթռանքն է բարձրանում, և դա ակնհայտ է. նույնիսկ աշխարհիկ գիտությունն է փոփոխություններ գրանցում, որոնք կրում են Երկրի հիմնական հաճախությունն ու մագնիսական դաշտը: Այդ նոր պայմանները շատ դժվար են տանում այն անհատները, որոնք նախընտրել են ծառայել մեզ հակադիր ուժերին: Նրանք իրենց տեղը չեն գտնում: Եվ, որպեսզի զան նորմալ վիճակի, ստիպված ուժեղացնում են թրթռանքներ իջեցնող փորձված միջոցների ազդեցությունը՝ ալկոհոլ, նիկոտին, սեքս, ցածրաթթվային երաժշտություն, մոլի խաղեր, թմրանյութեր, բռնարարքներ: Այս ցուցակը դեռ էլի կարելի է շարունակել:

Իմ խնդիրն այն է, որ ձեր գիտակցությանը հասցնեմ տեղի ունեցող իրադարձությունների ըմբռնումը: Այսպիսով, մի կողմից՝ մարդկանց մի լայն զանգված շատ վատ է տանում մոլորակի թրթռանքի մակարդակի բարձրացումը, քանզի այդ մարդկանց գիտակցությունը պատրաստ չէ փոփոխությունների: Մյուս կողմից՝ այն մարդիկ, որոնք պատրաստ են բարեփոխումների և ի բնե

օժտված են բարձր թրթիռներով ու զգայնությամբ, գտնվելով դժոխային պայմաններում (քանզի հենց այդպես են ընկալում իրենց շրջապատող ամեն ինչը), նույնպես կորցնում են իրենց կողմնորոշիչները: Նրանք կարող էին և մեծ հաջողությամբ գոյատևել թրթռանքների այն նոր միջավայրում, որն այժմ հաստատվում է մոլորակի վրա: Բայց քանի որ նրանց կողքին ներկա են նաև անհատներ, որոնց համար թրթիռների բարձրացումը հավասարաթեք է մահվան, և փորձում են գործի դնել իրենց կենսակերպը հնարավորինս երկար պահպանելու ամեն մի հնարավորություն, ապա լուսակիրները տարակուսում են ու չեն կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարող են միևնույն գերքաղաքում միաժամանակ ապրել իրենց ներքին էություններով միանգամայն տարբեր անհատներ:

Այսօր ես եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս տամ Երկրի վրա տեղի ունեցող իրադարձությունների բացատրությունը: Եվ ձեզ համար հիմա հասկանալի կլինի, թե որքա՛ն բարդ խնդիր է կանգնած մեր առջև: Ստացվում է այնպես, որ եթե որևէ քաղաքի ամեն մի միլիոն բնակչի մեջ կան ընդամենը մեկ կամ մի քանի լուսակիրներ, իսկ մնացածներն ընտրել են անցողիկ աշխարհը, ապա մենք ստիպված ենք լինում զսպել տարերային աղետը, որպեսզի տվյալ քաղաքը չկործանվի՝ հանուն այդ մեկ կամ մի քանի հոգու:

Ձեզ համար անհասկանալի կլինեն մեր որոշ սկզբունքները, որոնցով մենք առաջնորդվում ենք: Սակայն մենք գործում ենք բացառապես Կարմայական Օրենքի շրջանակներում և, հավատացե՛ք ինձ, հոգիների փրկության բոլոր հնարավորություններն օգտագործվում են «1000 տոկոսով»: Եվ երբեմն մի հոգու փրկության համար հարկ է լինում փոխելու Երկրում սպասվող իրադարձությունների բնական ընթացքը:

Դուք, հավանաբար, մեր ուղերձներում կարդացել եք, որ որոշում է ընդունված մոլորակի թրթռանքների հետագա բարձրացման մասին*: Հավանաբար, նաև հետևում եք նորություններին, որոնցում ասվում է մոլորակի սեյսմիկական ակտիվության աճի մասին:

Այդ գործընթացները բացատրելի են: Երբ մոլորակի թրթռանքները բարձրանում են, իսկ մարդկանց գիտակցությունն արգելակում է դա, ապա Երկրի նուրբ դաշտում առաջանում են լարվածության օջախներ, որոնք ֆիզիկական ոլորտում դրսևորվում են սեյսմիկական ակտիվության, մրրկահողմների, տեխնածին աղետների տեսքով:

Գիտեք, որ մե՛նք չենք այդ բոլոր աղետների պատճառը: Բացառապես մարդկության ծնունդ տված բացասական էներգիաներն են առաջ բերում այդ բոլոր դժբախտությունները:

Եվ եթե այնպես լիներ, որ մոլորակի վրա բնակվող մարդկային անհատների թեկուզ 10 տոկոսն ընթանար մեր մատնանշած ուղով, ապա մոլորակի իրադրությունը կփոխվեր ավելի սահուն կերպով:

Փաստորեն, ներկայումս Համբարձյալ Դասերի գործունեությունը նպատակամղված է այն բանին, որ հնարավորինս մեղմացվեն այն հարվածները, որոնց վիճակված է թափվել Երկրի մարդկության գլխին: Եվ հենց դրա վրա ենք մենք ծախսում Մեծ Կենտրոնական Արևից մեզ հատկացվող էներգիայի առյուծի բաժինը:

Այժմ կուզենայի շոշափել ևս մեկ թեմա: Ես կամենում եմ օգնության ձեռք մեկնել այն անհատներին, որոնք Լույսն են ընտրել, բայց իրենց կարմայի պատճառով առայժմ չեն կարողանում դուրս պրծնել իրենց շրջապատող կենսական հանգամանքների կապանքներից: Ես շատ լավ եմ հասկանում, թե որքա՛ն դժվար է ձեզ համար: Սակայն նախ և առաջ կարմայական էներգիան պետք է ամբողջությամբ սպառի իրեն: Եվ դուք պետք է համակերպվեք այդ հանգամանքին: Երկրորդ՝ Աստված միշտ էլ ձեզ ավելի հեշտ ուղու հնարավորություն է տալիս, սակայն, ծանրաբեռնված լինելով կարմայով, դուք ոչ միշտ եք տեսնում այդ ուղին: Ուստի ավելի հաճախ օգնության խնդրանքով դիմեք Վեհապետներին: Դիմեք այն Վեհապետին, որին ձեզ ավելի սրտամոտ եք համարում: Ձեր խնդրանքը կարող եք գրավոր շարադրել, կամ քնից առաջ խնդրել, որ հասնեք մեր սրբազան մենաստանները, որպեսզի առավոտյան կողմ ձեր արտաքին գիտակցությանը տեղեկություն տրվի այն մասին, թե ինչպես հաղթահարեք ձեզ շրջապատող կարմայի պատնեշը: Մի՛ ամաչեք խնդրելուց, որ ձեզ ցույց տրվի կարմայական իրավիճակից դուրս գալու ելքը: Միայն թե գրի՛ առեք, թղթին հանձնեք ձեր խնդրանքները: Քանզի երբ մի քանի տարի հետո վերընթերցեք ձեր խնդրանքների գրառումները, ապա զարմանքով կնկատեք, որ ձեր խնդրանքները բավարարվել են: Իսկ դա ձեզ համար Մեծ Սպիտակ Եղբայրության գոյության ամենալավ ապացույցը կլինի, մի Եղբայրության, որը երբեք իր եղբայրակիցներին չի թողնում առանց պաշտպանության և օգնության:

Ես ջանացի ձեզ մատուցել մի լրատվություն, որը, հնարավոր է, ձեզ կքաջալերի և կձառայի որպես ավագ եղբոր կողմից ցուցաբերված օգնություն:

Տիկին Թեոսոֆիա
19 հունվարի, 2010 թ.

Լույսի երկու առաքելություն

ԵՄ ԵՄ տիկին Թեոսոֆիան:

Երևի ձեզ համար ավելի լավ կլիներ, եթե ես ներկայանայի իմ առավել հայտնի մարմնավորման անունով: Եվ այսպես, ԵՄ ԵՄ ԵՊԲ-ն՝ Ելենա Պետրովնա Բլավատսկայան: Եվ ուրախ եմ սույն հնարավորության համար, որն ինձ ընձեռվել է Երկրի ներկայիս մարդկությանն ուղերձներ տալու կապակցությամբ:

Ես գիտեմ, որ իմ անունն առ այսօր միանշանակ արձագանք չի առաջացնում տարբեր մարդկանց մոտ: Այնուհանդերձ իմ արտառոց ունակությունների երևույթը հարկ եղած ազդեցությունն ունեցավ մարդկության վրա. համենայն դեպս, շարունակում են տպագրել իմ գրքերը, իսկ որոշ համառ մարդիկ նույնիսկ փորձում են դրանք կարդալ...

Այդ փաստն ինձ ուրախացնում է, քանի որ Լույսի առանձնահատուկ առաքելություն էր դա, որ ես ծառայում էի որպես փոխանցիչ, իսկ կուլիսներից այն կողմ, առանց բազմաթիվ մարդկանց հետ հաղորդակցվելու, հանգիստ իրենց առաքելությունը կարողացան իրականացնել ձեզ արդեն հայտնի Վեհապետները՝ Մորիան, Կուր չումին, Ջավալ Կհուլը:

Գրքեր գրելու իմ արտակարգ բեղունությունը դեռևս հնարավոր չէ բացատրել սովորական մարդկային տրամաբանության դիրքերից: Դեռ ավելին, այն, ինչ գրված է այդ գրքերում, ցայսօր շատերը գնահատում են որպես մեծագույն կեղծարարություն:

Ինչ արած, ըստ մեր այն ժամանակվա հաշվարկների՝ մոտավորապես հարյուր տարի հետո Վեհապետների օգնությամբ գրված այդ գրքերը պետք է հասկանալի դառնային Երկրի մարդկությանը, և մենք վրիպեցինք այդ հարցում: Այդ գրքերում պարփակված անգին տեղեկատվությունը դեռևս չի ուսումնասիրվել ու չի հասկացվել՝ ի մեծագույն ամոթ մարդկությանը: Ծառերը նույնիսկ համարում են, որ այդ տեղեկատվությունն արդեն հնացած է, և իբրև հասարակության զարգացման օրենքները հիմա այլ են:

Ամեն ոք կարող է հավատալ այն բանին, ինչին ուզում է հավատալ: Սակայն ես հպարտ եմ լավ կատարված իմ աշխատանքով: Ձեզ դեռ լրիվ հայտնի չէ, թե իրականում ովքեր են եղել իմ կողմից գրի առնված գրքերի հեղինակները: Գիտեք միայն Վեհապետներ Մորիային, Կուր չումին, Ջավալ Կհուլին, Մահա Չոխանին: Բայց միաժամանակ դա Լույսի ուժերի վիթխարի առաքելություն էր: Ծատ բարձր ոգիներ էին կարողացել մարմին առնել, որպեսզի ի կատար ածեն այդ առաքելությունը: Եվ մինչև այդ դեռ չէր տրվել որևէ բան, որը հնարավոր լիներ նույն շարքում դնել այն գրքերի հետ, որոնք գրվեցին իմ՝ որպես Բլավատսկայա մարմնավորման ընթացքում:

Իհարկե, այդ տեղեկատվությունը գաղտնագրված է: Ծատ բաներ չէր կարելի բացահայտ ասել: Եվ շատ բաներ դեռ այսօր էլ վաղ է բացահայտելը: Բայց Ճշմարտության այն անեղծ որոնողներին, որոնք դժվարություններից չեն վախենում և իրենց սրտերը բաց են պահում Ճշմարտության առջև, կարող են տրվել բանալիներ, որոնցով շատ բաներ հասկանալի կդառնան: Ես ավելին կասեմ. դուք կարող եք պրոյեկտել Երկրի ու մարդկության անցյալի նկարագրությունը ներկա պահի վրա և լրիվ պատկերացում ստանալ այն մասին, թե ինչ է տեղի ունենալու հետագայում:

Ցավալի է, որ մարդկության լավագույն ներկայացուցիչների ուշքն ու միտքն այժմ շեղված են բազմաթիվ անհարկի գործերի վրա: Ծուրջբուրդը չափազանց շատ այլազան գործեր կան, որոնք շեղում ու հեռու են տանում այն առաքելությունների կատարումից, հանուն որի շատ անեղծ հոգիներ մարմին են առել: Կարող եմ նշել տասնյակ մարդկանց, որոնք այժմ մարմնավորման մեջ են և պետք է աշխատանք տանեին, որպեսզի մարդկությանը հասանելի դարձնեին «Գաղտնի Վարդապետության» գաղտնագրված դրույթները: Սակայն բոլորն էլ հիմա տարված են այնպիսի գործերով, որոնք այնքան էլ պատիվ չեն բերում իրենց: Կանխատեսում եմ նրանց վիճակը, երբ անցում կատարելուց հետո կտեսնեն, թե որքան աննպատակ են ապրել իրենց կյանքը:

Պատրանքային խնդիրներով ու նպատակներով տարվելը ժամանակակից մարդկանց հիմնական դժբախտությունն է: Դրանից զատ կա ևս մեկ դժվարություն: Ժամանակակից հաղորդակցության միջոցները հանգեցրել են այն բանին, որ մարդկանց գիտակցության մեջ կորսվել է ուշադրության կենտրոնացման ունակությունը, որն անհրաժեշտ պայման է Ճշմարտության ճանաչման համար և թույլ է տալիս գտնել Ճշմարտությունը տողերի արանքում հատկապես այն դեպքում, երբ դիտավորյալ կերպով այն ցրված է լինում ոչ միայն տարբեր էջերում, այլ նաև տարբեր հատորներում:

Ներկայիս դեսպանորդն աշխատելու հնարավորություն է ստացել այն բանի շնորհիվ, որ բավարարել է Վեհապետների կողմից իրեն առաջադրված պայմանին, այն է՝ մարդկային ընկալման մեջ բացահայտել Լյուցիֆերին և անկյալ հրեշտակներին վերաբերող մի փոքրիկ անճշտություն: Վեհապետները մի ամբողջ տարի տքնաջան աշխատեցին դեսպանորդի գիտակցության հետ, որպեսզի այդ ճշմարտությունն աստիճանաբար ընկալվի նրա կողմից: Բանն այն է, որ իմ կատարած աշխատանքն ու այս դեսպանորդի կողմից տարվող աշխատանքը մի փոքր իրարից տարբերվում են: Իմ կողմից փոխանցվող տեղեկատվությունը մարմնավորված Վեհապետներից ես ստանում էի ֆիզիկական ոլորտում, և արդյունքում գրառում էի նաև այնպիսի բաներ, որոնք չկային իմ գիտակցության մեջ: Իսկ այս դեսպանորդը գրառում է բաներ, որոնք իրեն են հասնում ավելի նուրբ ոլորտներից, ավելի ստույգ՝ եթերային ոլորտից: Ուստի և նրա գիտակցության մեջ շատ բաներ չեն կարող տեղավորվել: Ես ֆիզիկական ոլորտում էի ծառայում որպես փոխանցիչ: Ներկայիս դեսպանորդն ավելի նուրբ ոլորտի փոխանցիչ է: Եվ այն, ինչ դեսպանորդի գիտակցությունը չի ընդունում կամ մերժում է, չի կարող փոխանցման առարկա դառնալ: Ամեն ինչից զատ՝ Վեհապետները կարևորություն են տալիս անհատի գիտակցության բնական էվոլյուցիոն աճին:

Հենվելով իմ փորձի վրա և համեմատելով իմ աշխատանքը ներկայիս դեսպանորդի կողմից կատարվող աշխատանքի հետ, կարող եմ ասել, որ նախկինի պես բոլոր նվաճումները ձեռք են բերվում մեծագույն ծանրաբեռնվածության գնով, որն արտահայտվում է դեսպանորդի և՛ ֆիզիկական, և՛ ավելի նուրբ մարմիններում: Եվ այդ ծանրաբեռնվածությունը հնարավոր չէ համեմատել աշխարհում գոյություն ունեցող որևէ գործի հարուցած ծանրաբեռնվածության հետ:

Որքան փոխանցվող էներգիան ավելի շատ է, այնքան ավելի են ծանրաբեռնվում դեսպանորդի մարմինները: Եվ եթե էներգետիկական բաղադրիչին հավելվի նաև հիմնավորապես նոր տեղեկատվություն, ապա բոլորովին հնարավոր չի լինի դիմանալ նման ծանրաբեռնվածությանը:

Իմ առաքելությանը կողքից ապահովություն էին հաղորդում այն ժամանակ մարմին առած մի քանի Վեհապետներ: Իսկ հիմա բոլոր նրանք, ովքեր պետք է այս դեսպանորդի կողքին լինեին, իրենց պատրանքային նպատակների հետևից ընկած, ցրվ են եկել աշխարհով մեկ:

Այդ պատճառով առկա է մնում ֆիզիկական աշխարհի Լույս փոխանցելու խնդիրը: Եվ հենց այս դեպքում է, որ ժամանակակից հաղորդակցության միջոցները վերջապես արդարացնում են իրենց: Ջանգի ողջ այն էներգիան, որը պարունակվում է ուղերձում, նույն օրը հնարավոր է դառնում հասցնել Երկրի տարբեր ծագերում գտնվող բազմաազգար մարդկանց: Եվ եթե նույնիսկ հաշվի չառնենք նրանց, ովքեր կարող են ուղերձները միայն այն պատճառով, որ դա մոդայիկ է, ապա, միևնույն է, կան բավարար քանակի լուսակիրներ, որոնք ուղերձներն ընթերցելու պահին բոցավառվում են, և դրա շնորհիվ մենք հնարավորություն ենք ստանում ուղերձների հաղորդման շրջանում օր օրի, Լույսի հաստատուն մղումներով գործնականում պարուրել ամբողջ երկրագունդը:

Ինչ արած, եթե մարդկությունը հետ է վարժվել և չի ուզում առաջնորդվել 150 տարի առաջ իմ մարմնավորման ընթացքում իրեն տրված տեղեկատվությամբ, որը կանոնավոր ջանքերի գործադրում է պահանջում յուրացման համար, ապա մենք այլ կողմից կմոտենանք, այն է՝ մարդկային հանրությանը կհագեցնենք Լույսով ու էներգիայով:

Մեր առաջին ծանոթության համար, սիրելի՛ բարեկամներ, իմ ասածները բավական են:

Բայց և այնպես չեմ կարող ևս մեկ կարևոր փաստ չնշել: Իմ օրոք ես չէի կարողանա այնպես աշխատել Ռուսաստանում, ինչպես հնարավոր է դա անել ձեր ժամանակներում: Իսկ դա մեծ առավելություն է ձեզ համար: Սա ասում եմ նկատի ունենալով ոչ միայն Ռուսաստանը, այլև ողջ աշխարհի մարդկային հանրությունը:

ԵՄ ԵՄ տիկին Թեոսոֆիան

Վեհապետ Մերայիս Բեյ
20 հունվարի, 2010 թ.

Մեր խնդիրն է արթնացնել հնարավորինս շատ հոգիներ

ԵՄ ԵՄ Մերայիս Բեյը: Այսօր ես եկել եմ, որպեսզի վարեմ հերթական գրույցը. ամրապնդեմ անցած նյութն ու ձեզ փոխանցեմ գրույցի հիմնական տեքստի մեջ զետեղված ճշմարտության անգին հատիկներ:

Ռուք, հավանաբար, հնարավորություն եք ունեցել նկատելու, որ մենք շատ զգուշորեն ենք տալիս ձեր գիտակցության ընկալման համար նոր ամեն մի հասկացություն: Մենք հաշվի ենք

առնում այն մարդկանց միջին մակարդակը, որոնք հնարավորություն ունեն կարդալու մեր ուղերձները: Այն ամենը, ինչ չափազանց անսովոր է ձեր գիտակցության համար, դուք թեև ընթերցում եք, բայց ձեր գիտակցության մակարդակում դրանք դիմադրության են հանդիպում և նույնիսկ հետ մղվում: Այդ պատճառով մենք ձգտում ենք շատ զգուշորեն մատուցել մեր ուղերձները:

Դուք նկատել եք, որ ուղերձները տրվում են տարբեր մակարդակներից և տարբեր Վեհապետների կողմից: Ինչի՞ համար է պետք նման բազմաձայնությունը:

Ձեզնից յուրաքանչյուրն անկրկնելի անհատականություն է: Եվ այն, ինչ մեկի համար շատ հոգեհարազատ է և դիպչում է հոգու ամենանուրբ լարերին, մեկ ուրիշին կարող է անգամ նյարդայնացնել: Ուստի մենք ջանում ենք ընդգրկել մեր ուղերձներին առնչվող բոլոր հոգիների հետաքրքրությունների ու կարիքների բազմազանությունը:

Ընդհանուր առմամբ մենք տեսնում ենք, որ մեր տեղեկատվությունը պարարտ հող է գտնում և, դրանում ան ապրելով, բացում է նրանց չակրաներն, ովքեր երախտապարտությամբ են ընդունում յուրաքանչյուր ուղերձը: Իսկ դա հնարավորություն է տալիս ուժեղացնելու մեր ուղերձների արդյունավետությունը, որովհետև ձեզնից ամեն ոք, ով գուրգուրանքով և Սիրով է մոտենում մեր ամեն մի ուղերձի ընթերցմանը, միանում է Սպասավորության գործընթացին: Դուք յուրօրինակ փոքրիկ լուսատուներ եք. լույս եք սփռում ձեր թանձր աշխարհի խավարում և կարող եք դեպի Լույսը ձգել ձեր թրթռոններին համահունչ հոգիներին:

Ձեր ճրագները շատ թույլ են և կյանքի թոհուրոհի ազդեցության տակ մեկ հուրիրատում են, մեկ հանգչում: Ուստի մեր ուղերձները մենք տալիս ենք բավականին երկար ժամանակահատվածում, որպեսզի այդ ընթացքում կարողանաք ամրապնդել ձեր նկրտումները և ապա գործեք ինքնուրույն:

Միևնույն ժամանակ դուք կարիք ունեք արտաքին աջակցության: Այդ պատճառով մենք փորձում ենք ձեզ մեր հովանու տակ առնել ձեր քնի ժամանակ, երբ դուք գիտակցաբար մղվում եք դեպի նուրբ ոլորտում գտնվող մեր մենաստանները: Մարմնավորված շատ հոգիների համար նման հնարավորությունը միակն է, որով նրանք կարող են ուսում և գիտելիքներ ստանալ ամենաբարձր մակարդակով:

Դուք ձեր թրթռոններին համապատասխանող մենաստաններն եք ընկնում և ձգվում դեպի այն Վեհապետի կողմը, որի հետ ունեք ներքին առավել համահնչունություն:

Նուրբ ոլորտում այժմ գործող այդ դպրոցները կարող են նաև ֆիզիկական ոլորտում իրականություն դառնալ: Հարկ է, որ մենք ֆիզիկական ոլորտում ունենանք վստահելի, փորձված մի հաղորդիչ, որը ծառայեր որպես արագացուցիչ: Այդ դեպքում ֆիզիկական ոլորտում հնարավոր կլիներ կյանքի կոչել մեր դպրոցը, որտեղ մենք կկարողանայինք սկզբում ուսուցանել մարմնավորման մեջ գտնվող մեր առավել առաջադեմ աշակերտներին, որից հետո հնարավոր կդառնար նաև Վեհապետների անմիջական գալուստը ձեր աշխարհ:

Մենք այնպիսի մարդկանց մեծ կարիքն ունենք, որոնք ի գործ են մեր ծրագրերը ֆիզիկական ոլորտում իրագործելու: Մենք խիստ կարիք ունենք, որ ֆիզիկական ոլորտում ամրապնդվեն Մեծ Սպիտակ Եղբայրության կիզակետերը:

Եվ եթե այժմ այս ուղերձները ձեր աշխարհ փոխանցելու շնորհիվ մենք վկա ենք դառնում այս ու այնտեղ ծագող կայծերի բռնկմանը կամ ձեր սրտի կրակների անվստահ, ոչ հարատև առկայծումներին, ապա, ֆիզիկական ոլորտում ունենալով կիզակետ, մենք կկարողանայինք Լույսի հզոր փարոս դառնալ, որը կյանքի օվկիանոսի փոթորիկներում անսխալ ուղղություն ցույց կտար շատ հոգիներին:

Մեզ ընդամենը պետք է ֆիզիկական ոլորտում գտնվող հաղորդիչ ունենալ, որը կարողանա անադարտորեն փոխանցել մեր էներգիաները և միաժամանակ ունենա Երկրի ներկայիս պայմաններում աշխատելու հմտություն:

Մենք այնքան էլ շատ բան չենք պահանջում, սիրելիներս: Եվ եթե նայեք ձեր շուրջը, ապա կտեսնեք, թե որքան նյութական միջոցներ ու դրամական էներգիա է վատնվում, որպեսզի կառուցվեն առևտրի կենտրոններ, զվարճության օջախներ:

Եթե միայն այդ էներգիայի թեկուզ չնչին մասը ծախսվեր մեր դպրոցների ստեղծման վրա, որոնցում մենք կկարողանայինք ճիշտ տիպարներ ու գիտելիքներ ցուցադրել, ապա հաշված տասնամյակների ընթացքում մարդկանց գիտակցության մեջ մենք ահռելի թռիչք կապահովեինք:

Վեհապետ Մեն Ժերմենն ակնարկեց ոսկե սկուտեղով ձեզ մատուցվող աստվածային հնարավորության մասին: Ահա ասում եմ ձեզ, որ չգտնվեց մի արժանի անհատ, որ կարողանար օգտվել այդ հնարավորությունից: Ոմանց խանգարում են ներքին արգելապատնեղներն ու կարծրատիպերը, ոմանց էլ՝ հավատի ու հավատարմության պակասը կամ դրանց բացակայությունը:

Միևնույն է, մենք կիրազործենք մեր ծրագրերը: Եվ միևնույն է, կիրականացնենք Երկիր մոլորակի համար նախատեսված Աստծո Մտահղացումը: Չէի՞ք ցանկանա արդյոք մասնակցել մեր ծրագրերին...

Մի՛ նայեք դեսուդեն: Ես դիմում եմ ձեզնից յուրաքանչյուրին, ով կարդում է այսօրվա իմ ուղերձը: Ամեն ոք, ով գտել է այս ուղերձները համացանցում կամ խանութների դարակների վրա, հնարավորություն ունի կանգնելու մեր դրոշի տակ և իրազործելու մեր ծրագրերը:

Մենք առաջվա պես մեր կանչն ենք հղում ձեր աշխարհին, և հրեշտակների շեփորականչն է հնչում այն հոգիների համար, որոնք մարմնավորումից առաջ հանձն են առել ֆիզիկական ոլորտում Եղբայրության համար ձեռք ու ոտք ծառայել:

Ես շատ լավ եմ հասկանում, որ պատրանքն այժմ գտնվում է իր հզորության ծաղկման գագաթնակետում: Առավել մեծ ձեռքբերում կունենաք, եթե կարողանաք հաղթահարել պատրանքի ցանցերն ու դուրս գաք ազատ տարածություն, ուր ոչ թե ձեր աշխարհի դժնի էներգիաներն են առկա, այլ իշխում է եղբայրության, փոխօգնության ու Սիրո ոգին:

Նոր օրը վաղուց պետք է ծագած լիներ մոլորակի վրա: Ուստի մենք օգտվում են ուղերձների փոխանցման այս թողության շնորհից, որպեսզի ձեր աշխարհի փոխանցենք հնարավորինս մեծ էներգիա: Նաև որպեսզի դուք այլևս չկարողանաք խաբկանքի մեջ քաղցր քնել և կորցնեք ձեր հանգիստը՝ փորձելով գտնել ձեր աստվածային ծրագրի իրազործման հնարավորությունը:

Մեր խնդիրն է արթնացնել հնարավորինս շատ հոգիների, որ նրանք Երկիր մոլորակի ֆիզիկական ու ավելի նուրբ ոլորտների վերափոխման համար ակտիվ գործողությունների անցնեն: Ուստի և օգտվում ենք ուղերձների փոխանցման այս թողության շնորհից, որը Մեծ Կենտրոնական Արևի կողմից հատուկ տրված է Երկիր մոլորակի կենսահոսքերի առաջընթացի գործին աջակցելու համար:

Ես այսօր եկա, որպեսզի մարմնավորման մեջ գտնվող իմ աշակերտներին նոր թափ հաղորդեմ և միաժամանակ արթնացնեմ նրանց, որոնց սրտամոտ են իմ էներգիաները, իմ ճառագայթի էներգիաները:

ԵՍ ԵՄ Սերապիս Բեյր

Վեհապետ Մորիա
21 հունվարի, 2010 թ.

Ես կամենում եմ վստահություն սերմանել ձեր մեջ և փարատել ձեր վախերը

ԵՍ ԵՄ Էլ Մորիան: Եվ ես կանխագգում եմ իմ աշակերտների ուրախ գոյությունները. «Ահա, վերջապես...»:

Այո՛, սիրելիներս, ես եկա՛: Եվ պետք է ձեզ մի գաղտնիք հայտնեմ. ես հետևում էի այս ուղերձների ընդունման ու հաղորդման ողջ ընթացքին և կարող եմ ձեզ նույնիսկ ավելին ասել. հենց ե՛ս եմ Մեծ Կենտրոնական Արևում թողության շնորհ ձեռք բերել այս շրջանի ուղերձների հաղորդման համար:

Դե ինչ, սիրելիներս, գո՞հ եք արդյոք: Ստացա՞ք արդյոք այն մղումը, որը թույլ կտա ձեզ վերջապես հաղթահարել իրական կամ ձեր իսկ հնարած կարմայական խնդիրները, որպեսզի մի կողմ թողնեք ձեր սովորական կենսակերպը և ամբողջովին նվիրվեք Վեհապետների գործին:

Չէի՞ք սպասում այս հարցին... Ձեզ համար առավել հաճելի է առաջվա պես ապրել և, կարդալով Վեհապետների ուղերձները, մտածել այն մասին, թե ի՞նչ մեծ գործ եք կատարում դրանով:

Մի՛ միխթարեք ձեզ խաբկանքով: Վերջապես հարկավոր է, որ ձեզ վրա վերցնեք ողջ պատասխանատվությունն այն ամենի համար, ինչ տեղի է ունենում մոլորակի վրա: Անհրաժեշտ է, որ դուրս գաք մանկական հասակից:

Իմ բոլոր մարմնավորումների ժամանակ գլխավորն ու առաջնահերթն ինձ համար եղել է Տիրոջ Կամքի կատարումը: Որպես թագավոր Արթուր մարմնավորմանս ժամանակ ես առաջ էի քաշում եղբայրական փոխհարաբերությունների սկզբունքը: Դա այն ժամանակվա համար անսովոր բան էր: Այնուհանդերձ մենք փորձում էինք կյոթ սեղանի շուրջ լուծել ծագած բոլոր վեճերն ու անհամաձայնությունները: Ես գործում էի աստվածային սկզբունքներին համապատասխան և սովորեցնում էի այդ սկզբունքներն ուրիշներին:

Որպես Ավրար Մեծ իմ մարմնավորման ժամանակ ես ուրիշ մարդկանց և ժողովուրդների հավատալիքների հանդեպ հարգալից վերաբերմունքի քաղաքականություն էի վարում: Եվ այն

ժամանակ ևս այնպիսի մարդկանց պակաս չէր գգացվում, որոնք կուզենային երկիրը բաժան-բաժան անել և իշխանություն գավթել:

Սակայն ես գործի էի դնում իմ իշխող դիրքը, որպեսզի կյանքի կոչեի ղեկավարման աստվածային սկզբունքները:

Ռաջպուտական կայսր Մորիա եղածս ժամանակ ես կրկին ուժերիս ներածին չափ գործի էի դնում ամեն միջոց, որպեսզի բարձրացնեի մարդկանց գիտակցությունը դեպի է՛լ ավելի բարձր ճշմարտություններ, ցույց տայի մարդկային գիտակցության սահմանափակությունը և վեր մղեի այն անհատների գիտակցությունը, որոնք դրան պատրաստ էին:

Եվ այժմ էլ եմ նույն խնդիրը հետապնդում՝ աստվածային Կամք, աստվածային սկզբունքներ ներդնել ձեր աշխարհում:

Ոչ միշտ է դա հաջողվում: Փոխվում են ժամանակներն ու մարդկանց գիտակցության հետ աշխատելու եղանակները: Այնուամենայնիվ ես հույսս չեմ կորցնում, որ վաղ թե ուշ աստվածային սկզբունքները կտոնեն իրենց հաղթանակը մարդկային կյանքի բոլոր բնագավառներում...

Մեր նոր ուղերձները Ռուսաստանի տարածքում են ամենալայն տարածում գտել: Մարդկանց վերաբերմունքը միանշանակ չէ: Այնուամենայնիվ ավելի ու ավելի պարզորոշ է դառնում տրվող Ուսմունքը կյանքում կիրառելու հիմնական միտումը: Եվ նույնիսկ այնժամ, երբ իրապես ոչինչ չի արվում, այլ մարդիկ պարզապես լավ, դրական տրամադրվածությամբ վերընթերցում են մեր ուղերձները, դա իր ազդեցությունն է թողնում հասարակական կյանքի և նույնիսկ տնտեսության և քաղաքականության վրա: Այո՛, սիրելիներս, ուղերձներում առկա մեր էներգիաներն ազդում են՝ ի հեճուկս ձեր գիտակցության, ձեր մարմնական խելքի: Մենք Աստծո էներգիայի նեկտարով ենք լցնում ձեր սրտերը՝ նրանց սրտերն, ովքեր պատրաստ են դրան: Եվ, անցնելով ձեր ամենաստորին մարմիններով, Աստծո էներգիան ի վիճակի է լինում ազդելու այն ամենի վրա, ինչը շրջապատում է ձեզ:

Եվ ամենից առաջ փոխվում է ձեր գիտակցությունը: Դա հենց այն է, ինչի մասին մենք չենք հոգնում ասելուց և ինչին ձգտում ենք հասնել, որովհետև, գտնվելով գիտակցության է՛լ ավելի բարձր վիճակում, մարդիկ չեն կարող իրենց թույլ տալ շատ բաներ, որոնք թույլ էին տալիս անցյալում: Եվ սոսկ մեկը, ով ի վիճակի է պահելու իր գիտակցությունը բավարար չափով բարձր մակարդակի վրա, մի քանի կիլոմետր շառավղով համակշռություն է ապահովում այն վայրում, որտեղ ինքը բնակվում է:

Միևնույն է, մենք կհասնե՛նք մեր նպատակին: Եվ եթե նախկինում մենք հույս էինք կապում այն բանի հետ, որ այն անհատները, որոնք մարմնավորվել են որոշակի առաքելությամբ, վերջապես ոտքի կելնեն ու կկենսագործեն այն, հանուն ինչի իրենք մարմնավորվել են, ապա հիմա մենք գործում ենք ավելի լայն ճակատով: Մենք բարձրացնում ենք ողջ ֆիզիկական ոլորտի թրթիռները, և մարդիկ ստիպված կլինեն գործելու աստվածային կերպերին համապատասխան, քանի որ վարքի ցանկացած հին կարծրատիպ այլևս չի բերի նախկին արդյունքին:

Որպեսզի ժամանակի հետ համընթաց գնաք, դուք պետք է բաժանվեք ձեր հին բեռից, այլապես չեք կարողանա նույնիսկ մեկ քայլ առաջ գնալ: Համարձակորեն մի կո՛ղմ նետեք ձեր կապվածությունները, ձեր սովորություններն ու այն ամենը, ինչն իջեցնում է ձեր թրթիռները: Ընթացքում կողմնորոշվեք, թե ուր գնալ և ինչ անել: Այնժամ, երբ մեկը շտապում է վեր բարձրանալ և ճկուն է մտքով, մեզ համար հեշտ է լինում ուղորդել նրա գործողությունները և ղեկավարել նրան. հատկապես երբ իր կյանքում հենց ինքն է Աստվածառաջնորդության հայց ներկայացնում:

Մի՛ վախեցեք ձեր հնոտիները, իրերն ու կապվածությունները կորցնելուց: Որովհետև կշեռքի մի նժարին դրված է ձեր՝ որպես անհատականության, հետագա գոյության հնարավորությունը, իսկ մյուսին՝ բոլոր ձեզ համար հաճելի կապվածությունները:

Դրանք անհամատեղելի բաներ են: Ձեր հնոտիները ոչ մի գին չունեն, եթե դուք դրանց նայեք անկանխակալ կերպով և ամենաբարձր տեսանկյունից: Այդ ամենն արժեք ունի միայն ձեր մարմնական խելքի համար: Եվ գալիք փոփոխությունների հանդեպ ձեր ունեցած երկյուղները զուրկ են որևէ հիմքից: Քանզի եթե դուք համընթաց եք ընթանում Աստծո և Վեհապետների հետ, ապա ձեզ չի վախեցնի գալիք և ոչ մի փոփոխություն:

Մենք ավելի հեշտ ուղին էինք ակնկալում: Դուք ցանկացաք ընտրել ամենադժվարին: Ի՛նչ արած, դա ձեր ընտրությունն է. բայց նույնիսկ այդ ցածրագույն ուղո՛վ էլ, այնուամենայնիվ, հարկավոր է շարժվել: Ռուսական ասացվածք կա. «Տեղում լաված քարից ջուր չի հոսի»: Արդ, սկսե՛ք ձեր շարժումը և ընթացքի ժամանակ արդեն կկողմնորոշվեք ու կշտկեք ձեր ուղին:

Քանի դեռ ձեր սրտում առկա է Աստված, քանի դեռ ուրախ եք և սիրալիր, քանի դեռ հավատում եք և սիրում, ձեզ համար վտանգավոր ոչինչ չկա:

Ես կամեցա այսօրվա իմ ուղերձով ձեր մեջ վստահություն սերմանել և փարատել ձեր վախերը:

Թողե՛ք անցյալը: Ձեզ սպասվում է Նոր Օր և աստվածային նոր հնարավորություն...

ԵՄ ԵՄ Էլ Մորիսան

Ուղերձների տասներկուերորդ շրջան (հունիս, 2010 թ.)

Սանատ Կումարա
1 հունիսի, 2010 թ.

Ուսմունք պատասխանատվության մասին

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Այսօր ես եկել եմ, որպեսզի կրկին ձեզ հիշեցնեմ մոլորակի ընթացիկ իրավիճակի և Երկրի այդ իրավիճակի նկատմամբ ձեր պատասխանատվության մասին: Երբ մարդկությունն ունակ դառնա գիտակցելու Երկիր մոլորակի վրա տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ իր ողջ պատասխանատվությունը, մենք թեթևացած շունչ կքաշենք, քանի որ ամբողջ այն ընթացքում, քանի դեռ մարդկության գիտակցության մակարդակը համապատասխանում է մանկան գիտակցության մակարդակին, մենք ստիպված կլինենք խնամք տածել նրա նկատմամբ և հետևել, որ մարդիկ իրենց անմտությամբ մի այնպիսի աղետ չստեղծեն, որից հետո կյանքը մոլորակի վրա դառնա անհնարին:

Իսկ այժմ, երբ ձեզ փոքր-ինչ համալարեցի մոլորակի իրավիճակի իմ ըմբռնման ալիքի հետ, պատրաստ եմ տալ ոչ մեծ Ուսմունք, որը լսելը ձեզ համար օգտակար կլինի:

Քանի որ ձեր գիտակցությունն ի վիճակի չէ երկար ժամանակով կենտրոնանալու մի որոշակի նյութի վրա, մենք ստիպված ենք լինում գալու բազմաթիվ անգամներ և ձեզ հիշեցնելու շատ պարզ ճշմարտություններ, որոնց մասին հավանաբար գիտեք, բայց, չգիտես ինչու, մոռանում եք և՛ դրանք կիրառել գործնականում, և՛ պահել դրանք ձեր գիտակցության մեջ:

Ես եկել եմ մեր դեսպանորդի միջոցով Երկրի մարդկության հետ տարվող մեր աշխատանքի երկարատև ընդմիջումից հետո: Եվ ողջ այդ դադարի ընթացքում ես հնարավորություն ունեի նուրբ ոլորտից դիտելու մոլորակի իրադարձությունների զարգացման ընթացքը: Դուք նույնպես հնարավորություն ունեիք հետևելու իրադարձությունների ընթացքին, սակայն՝ միայն ֆիզիկական ոլորտից: Եվ այն մարդիկ, ովքեր վերլուծելու հակում ունեն ու խորհել գիտեն, կարող էին նկատել, որ մոլորակի իրադրությունն օր օրի շիկանում է: Եվ այդ իրադրության մասին տազնապ են հնչեցնում գործնականում չընդհատվող երկրաշարժերն ու հրաբուխների ժայթքումները, ռազմական ընդհարումներն ու ահաբեկչական գործողությունները, սոցիալական պայթյուններն ու հեղաշրջումները, որոնք մոլորակի վրա տեղի են ունենում այս ու այնտեղ:

Այդ ամենը ձեզ բնական է թվում, կարծես ոչ մի անսովոր բան չկա: Իրոք, մարդկային գիտակցության անկատարության այդ դրսևորումներն առաջ էլ գոյություն ունեին, հարյուր տարի առաջ, հարյուրավոր տարիներ առաջ: Բայց այդ բացասական երևույթների հաճախականությունն ու ընդգրկումը, ինչպես նաև այն բացասական ուժերը, որոնք կանգնած են այդ երևույթների հետևում, երբեք այսքան մեծ չէին եղել:

Սա ես եմ ձեզ ասում: Իմ հիշողությունն անհամեմատ ավելի լավն է, քան ունի ներկայումս մարմնավորված մարդկությունը: Ես հնարավորություն ունեմ զննելու ակաշայի

ժամանակագրությունները և ձեր իրադրությունը համեմատելու ցանկացած այլ ժամանակի իրադրության հետ: Համեմատության արդյունքն ի նպաստ ներկայիս իրադրության չէ: Մեզ՝ Համբարձյալ Դասերիս, ավելի ու ավելի շատ էներգիա է պետք գալիս, որպեսզի կարգավորենք մոլորակի իրադրությունը և թույլ չտանք ամենաահավորը մարդկության համար՝ ֆիզիկական հարթակի ոչնչացումը:

Ձեզ թվում է, թե ես այնպիսի բաներից եմ խոսում, որոնց հետ դուք անմիջական առնչություն չունեք: Դե՛, ինչ-որ տեղ ինչ-որ մեկի գործողությունների հետևանքով խախտվել է մոլորակի հավասարակշռությունը, որի հետևանքով էլ հրաբուխներ են ժայթքում ու մրրկահողմեր են առաջանում...

Պաշտելիներս, պե՛տք չէ դատել այդքան համոզված ու միանշանակ: Ներկայումս Երկրի վրա մարմնավորված անհատները կարմայորեն այնպես են իրար հետ միահյուսված, որ հնարավոր չէ վստահ ասել, թե հատկապես ով կամ ովքեր են իրենց գործողություններով համադետ առաջացնում մոլորակի վրա:

Մարդկության տեղեկատվական դաշտն ավելի ու ավելի է նմանվում այնպիսի մի ընդհանրական դաշտի, որից անհնարին է առանձնացնել որոշակի որևէ անհատի ներդրումը: Հաղորդակցության ժամանակակից միջոցների զարգացումը հանգեցրել է այն բանին, որ վայրկյանի մասերի ընթացքում լուրերը հասնում են երկրագնդի ամենահեռավոր անկյունները: Եվ յուրաքանչյուր ոք, ով արձագանքում է այդ լուրերին, իր ներդրումն է ունենում մոլորակի էներգետիկական իրադրության մեջ:

Ոչ բոլոր լուրերն են բավարար արձագանքի արժանանում: Տեղեկատվության մեծ մասը թաքցվում է մարդկությունից, քանզի եթե մարդկությունն իրագել դառնա ողջ տեղեկատվությանը, թե ինչ ավերիչ ազդեցություն ունեն ներկայումս մոլորակի վրա տեղի ունեցող բաները, ապա մարդկանց ուղեղներում դրանց նկատմամբ արձագանքը կստանա անկառավարելի բնույթ:

Ուղղակի բարեբախտություն է ձեզ համար, որ ձեր հիշողությունը կարճ է, և դուք ունակ չեք գիտակցելու մոլորակի վրա տիրող իրավիճակի ողջ ծանրությունը:

Շատ բարձր գիտակցություն է հարկավոր, որ իր մեջ տեղավորի մոլորակի ողջ անհամակշիռ վիճակը և այն համակշռի իր ներքին նվաճումների օգնությամբ: Չեմ թաքցնի ձեզանից, որ մարմնավորված որոշակի թվով անհատներ կան, որոնք իրենց վրա են վերցրել մոլորակի էներգիաների համակշռման գործը: Եվ հենց այդ անձնագոհ հոգիների շնորհիվ է, որ մոլորակը հնարավորություն ունի շարունակելու իր գոյությունը:

Մակայն դուք ևս, որ հիմա կարդում եք այս տողերը, պետք է ավելի շատ ժամանակ հատկացնեք ձեր ներքին աշխատանքին: Քանզի միայն ձեր ներքին նվաճումներով է հնարավոր համակշռել իրավիճակը մոլորակի այն կետում, որտեղ դուք ապրում եք:

Կան որոշ մարդիկ, որոնք իրենց անգիտության պատճառով շարունակում են ճոճել մակույկը: Դրանով էլ հենց վատնում են իրենց բարի կարմայի վերջին մնացորդները՝ էլ ավելի աղտոտելով մոլորակի տեղեկատվական դաշտը, որն առանց այդ էլ չափազանց աղտոտված է:

Ձեր յուրաքանչյուր անորակ միտքը բազմապատկվում է միլիոնավոր անգամ: Այդ գործընթացի մի նմանօրինակը կարող եք տեսնել համացանցում: Վիրտուալ այդ տարածությունում կան բազմաթիվ էջեր, որոնց օգտատերերից ոմանք կեղծ անվան տակ հորինում են որևէ անհեթեթություն կամ բացահայտ մի սուտ: Եվ տեսեք, թե ինչպե՛ս են դեպի այդ «լուրը» սլանում բազմաթիվ միամիտներ և այն տարածում ողջ համացանցով մեկ:

Ահա այդպես էլ դուք կարմա եք ստեղծում՝ ուշք չդարձնելով ու հաշիվ չտալով ձեր գործողությունների համար:

Հիմնարար ու անկյունաքարային Ուսմունքներից մեկը, որը տրվել է մեր դեսպանորդի միջոցով, վերաբերում է Աստծո էներգիայի խնայողական օգտագործմանը: Դուք պատասխանատու եք Աստծո աշխարհից ստացած էներգիայի ամեն մի էրգի համար: Եվ կախված այն բանից, թե ինչպես եք ծախսում Աստծո էներգիան, կա՛մ ձեզ համար Լույսի անմահ մարմին եք գործում, կա՛մ այնպիսի սարդոստայն, որով անդառնալիորեն ձեզ կապում եք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտին և խափանում ավելի նուրբ ու բարձրյալ աշխարհներում ձեր հետագա զարգացման հնարավորությունը:

Այսօր ես մի Ուսմունք տվեցի, որը կոչված էր ձեզ հիշեցնելու ձեր պատասխանատվության մասին: Եվ կարծում եմ, որ մոլորակի ընթացիկ իրադրության պայմաններում ձեզ համար ավելորդ չի լինի այս Ուսմունքը ևս մեկ անգամ լսելը:

ԵՍ ԵՄ Մանատ Կումարան: ՕՍ

Պաշտելի Ալֆա
2 հունիսի, 2010 թ.

Ժամանակն է պատրանքի աշխարհից ելնելու դեպի Աստծո իրական Աշխարհը

ԵՍ ԵՄ Ալֆան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Օրվա ունայնությունը ձեզնից ծածկում է Հավերժը: Եվ հենց այդ Հավերժն է, որ ես եկել եմ հաստատելու ձեր գիտակցության մեջ:

Իմաստ ունի միայն այն, որ Երկրի վրա ձեր լինելը նվիրաբերեք Հավերժին ու անանց արժեքներին, որոնք կմնան ձեզ հետ, երբ կթողնեք երկրային դայրոցն ու անցում կկատարեք Եվոյությունցիոն զարգացման նոր գալարին:

Իսկ հիմա դեռ ձեզ թվում է, թե այն, ինչ ես ասում եմ, ինչ-որ վերացական մի բան է, որին չգիտեք, թե ինչպես առնչվեք և ինչպես օգտագործեք այն ձեր առօրյա կյանքում:

Ձեր Հավատը Բարձրագույն աշխարհների և Արարչի նկատմամբ կատեղծի ձեզ համար բոլոր անհրաժեշտ պայմաններն ու նախադրյալները, որպեսզի ֆիզիկական աշխարհում ձեր գոյությունն ավելի մոտարկված լինի Բարձրագույն աշխարհներին: Ձեզ մնում է միայն, որ ձեր Էության ներսում գտնեք այն կետը, որը ձեզ համար հավերժական Կյանքի հեռանկար է բացում: Ձեզնից ոչ բոլորին է հասու մտքի նման խոյանքը: Շատերը չեն հասկանա և, որ ավելի վատ է, կմտածեն, թե խոսքը ինչ-որ երևակայական ու անիրական բանի մասին է: Սիրելիներս, դուք չեք կարողանա առնչվել հեռավոր աշխարհների հետ, քանի դեռ հավատ չեք ընծայում դրանց գոյությանը: Հարկավոր է ճեղք բացել ձեր գիտակցության մեջ՝ ձեր պաշտպանական գծի վրա, որով օրվա մեջ 24 ժամ դուք աչալուրջ պաշտպանվում եք մեր աշխարհից՝ չկամենալով ո՛չ հավատալ, ո՛չ էլ մուտք գործել այնտեղ: Ձեր աշխարհում շատ հնարամտություններ են մտածված, որոնք ձեզ մտցնում են պատրանքային աշխարհի մեջ և թույլ չեն տալիս, որ մտածեք Հավերժի մասին:

Ես մտադիր չեմ մրցակցել այն բանի հետ, ինչը ձեր գիտակցության մեջ այնքան բարձր արժեք ունի, որ իրենով ձեր մեջ ծածկում է Աստծուն: Ինձ վայել չէ ո՛չ ձեզ ստիպելը, ո՛չ էլ պնդելը, որ արթնանաք:

Լինում է այնպես, որ վարդի կոկոնն այդպես էլ չի բացվում ու թառամում է՝ առանց իր թերթիկները Հավատի, Հույսի ու Սիրո արևին ուղղելու: Դուք ինքներդ եք ընտրում, թե ինչ աստվածների պաշտեք և ինչ ուղով ընթանաք: Ես միայն ձեզ հիշեցնում եմ, որ ժամանակն է վերադառնալու Իրականությանը, ժամանակն է, որ դուրս ելնեք պատրանքի աշխարհից դեպի Աստծո իրական Աշխարհը: Ինքներդ սեփական ջանքերի գնով պետք է լարվեք այնպես, որ բացվեն ձեր հոգու թերթիկները և ձգվեն դեպի Բարձրագույն աշխարհներ: Երբեմն հնարավոր չի լինում, որ լսեք ձեր հոգու ցանկությունը, քանզի ձեր շուրջն ամեն ինչ դրան հակառակ է ուղղված: Բայց ես վստահ եմ, որ դուք դրանից գլուխ կհանեք:

Կան միայն երկու հիմնական հատկանիշներ, որոնք, ինչպես թելը, կարող են ձեզ դուրս հանել պատրանքի բավիղից: Դրանցից առաջինը Հավատն է, իսկ երկրորդը՝ Մերը:

Մեկի համար առաջին տեղում Մերը կլինի, իսկ երկրորդ տեղում՝ Հավատը: Իսկ մի ուրիշը կասի, որ տարբերություն չկա Հավատի ու Սիրո միջև, քանի որ ճշմարիտ Հավատը միշտ հիմնված է լինում Սիրո, Աստծո, մերձավորի, համայն Կյանքի նկատմամբ Սիրո վրա:

Հարկ է, որ ուշադրություն դարձնեք այն բաներին, որոնք խոչընդոտում են ձեր կյանքում այդ երկու հատկանիշների դրսևորմանը և աստիճանաբար վերացնեք այն ամենը, ինչը խանգարում է, որ հաղթահարեք պատրանքը և ելնեք աստվածային գիտակցության գագաթը:

Ձեզնից ամեն ոք մի քանի հիմնական խոչընդոտներ ունի, որոնք պետք է հաղթահարվեն ձեր կողմից: Եվ յուրաքանչյուրիդ կթվա, թե առանց ձեր այդ որակների չեք կարող գոյատևել ու զարգանալ: Բոլորովին այդպես չէ, սիրելիներս:

Ես հասկանում եմ, որ պատրանքն այնքան ուժեղ է, որ կախարդում է ձեզ իր գրավչությամբ ու մոգականությամբ: Բայց Աստծո Աշխարհն էլ կարող է ձեզ հմայել իր հրաշագեղությամբ ու գեղասքանչությամբ:

Դուք գտնվում եք երկու աշխարհների միջև ընտրություն կատարելու կետում: Եվ մոտակա ժամանակներում արդեն ձեզնից յուրաքանչյուրը պետք է կատարի իր վերջնական ընտրությունը՝ ընթանալ հետագա Եվոյությունայի ուղով, թե՛ շարունակել խաղալիքներով խաղալ այն պատրանքային աշխարհում, որը ձեզ իրական է թվում:

Ինչպես տեսնում եք, ձեզ շրջապատող կյանքի ողջ բազմազանությունը միայն այն բանի համար է, որպեսզի հանձնեք ձեր ավարտական քննությունը և պատրանքային աշխարհից անցում կատարեք Աստծո իրական Աշխարհին:

Պիսավորի մասին շատ է խոսվում: Խոսվում է շատ պարզ խոսքերով: Եվ ինքս էլ չեմ հոգնում զալուց և կրկնելուց այդ պարզ բաները՝ հուսալով, որ որևէ հոգի, ինձնից խթան ստանալով,

պատրանքի քնից կարթնանա հավերժական Կյանքի համար: Իմ խնդիրն է հնարավորինս շատ հոգիների արթնացնել, որպեսզի բարի հատիկների բերք հավաքեն երկնային շտեմարանում:

Ձեզ հարկավոր է միայն հավատալ ու ապրել ըստ այն սկզբունքների, որոնք պատգամվել են բոլոր ժամանակների մարգարեների կողմից:

Ամեն ինչ հայտնի է: Ամեն ինչ տրված է: Հարկավոր է վճիռ կայացնել և ընտրություն կատարել: Հենց հիմա: Հետո ուշ կլինի:

ԵՄ ԵՄ Ալֆան՝ ձեր հոգիների նկատմամբ հայրական Միտով

Տեր Սուրիա
3 հունիսի, 2010 թ.

Ժամանակն է, որ մարդկությունը մղվածություն դրսևորի և բարձրանա գիտակցության նոր մակարդակի վրա

ԵՄ ԵՄ Սուրիան՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Այսօր ես չեմ եկել որևէ նոր բան հաղորդելու համար, այլ եկել եմ հիշեցնելու այն, ինչը հրաշալի գիտեք: Բայց երբ ձեզ ծանոթ առարկաներին նայում եք նոր տեսանկյունով, ապա նոր ընկալման շնորհիվ ոչ միայն պարզապես իմանում եք, այլև գիտելիքը ձուլվում է ձեզ հետ և դառնում ձեր մի մասը: Եվ դուք ձեր գիտակցությամբ ունակ եք դառնում ոչ միայն իմանալու ու հասկանալու շատ բաներ, այլ նաև ձեր ներքին էությունն այնքան փոխելու, որ կարողանաք բարձրանալ գիտակցության նոր մակարդակի վրա, մոտենալու ձեզ վիճակված գիտակցության մակարդակին և վերջապես հասնելու դրան:

Ամեն անգամ, երբ ուղերձ տալու հնարավորություն եմ ունենում, իմ հոգևոր տեսողությամբ մտասնեմվում եմ ձեր աշխարհի վրա: Եվ ամեն անգամ համակվում եմ ուրախությամբ, որ հնարավորություն ունեմ կիսելու ձեզ հետ իմ Իմաստությունը և ձեզ հաղորդակից դարձնելու ողջ Կյանքին Սպասավորելու իմ ցանկությամբ:

Աստծո ողորմածությամբ համայն տիեզերքում Կյանքը կառուցված է զարմանահրաշ կերպով: Կյանքի յուրաքանչյուր շերտը հնարավորություն ունի զարգանալու իր օրենքներին համապատասխան, բայց միևնույն ժամանակ այն ենթարկվում է համայն տիեզերքի Արարչի ընդհանրական Մտահղացմանը: Ուստի լավ կլիներ, որ ձեր գիտակցության մակարդակով յուրացնեիք, թե որն է այս տիեզերքի Օրենքը և ընդունեիք, որ պետք է ենթարկվել դրան: Օրենքին ենթարկվելու ձեր չկամությունը պետք է փոխարինվի Արարչի կամքին հնազանդությամբ:

Այլ կերպ չի կարող լինել: Եվ այն խաղերը, որ հիմա խաղում եք, պետք է փոխարինվեն իրական գործողություններով՝ ուղղված Կյանքին օգնելուն: Այնժամ, երբ կգիտակցեք Կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ ձեր միասնությունը և ձեր ուշադրությունը կկենտրոնացնեք օգնության կարիք ունեցողներին օգնելու վրա, դուք կբարձրանաք գիտակցության այն մակարդակի վրա, որը ձեզ անհրաժեշտ է ունենալ ձեր էվոլյուցիայի ներկա փուլում:

Այն ամենը, ինչ չի համապատասխանում գիտակցության այդ մակարդակին, ձեր էգոյի՝ ձեր անիրական մասի բոլոր մզլապատ կապվածությունները, պետք է քշվեն բարեփոխումների քամիով և սրբվեն Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի երեսից:

Մղվածությամբ ունենալ դեպի բարեփոխումներ, դեպի Նոր Կյանք. ահա թե ինչ է ձեզ անհրաժեշտ ներկա փուլում: Պետք է վեր նայել, հայացքն ուղղել շրջապատող կյանքի ունայնությունից ավելի վեր՝ ձգտելով տեսնել այն ապագա աշխարհը, որն արդեն պատրաստ է ընդունելու ձեր հոգիները հետագա զարգացման համար:

Ձեզ թվում է, թե ես ինչ-որ վերացական բաների՞ց եմ խոսում, որոնք որևէ կերպ կապված չեն ձեր կյանքի հետ:

Ընդհակառակը, վստահեցնում եմ ձեզ, որ ես խոսում եմ հենց այն ամենագիտավոր բաների մասին, որոնք պետք է առաջնահերթ տեղ զբաղեցնեն ձեր գիտակցության մեջ: Միայն այն դեպքում, երբ հարկ եղած չափով կուղղորդեք ձեր մղումները, կկարողանաք շարունակել էվոլյուցիան ձեր մոլորակի վրա:

Ձեր գիտակցությունը ծաղկի չբացված կոկոն է հիշեցնում: Ավելի համարձակ շրջեք ձեր գլուխը դեպի արևը, և նա իր քնքուշ ճառագայթներով սիրով կկատարի գործը, որպեսզի բացի ձեր աստվածային գիտակցության լոտոսն այն Նոր Օրվա հանդեպ, որն ուր որ է կբացվի:

Ավելի համարձակ՝ ձերբազատվեք ձեր կապվածություններից: Մի՛ վախեցեք փոփոխություններից: Մի՛ վախեցեք ընկնելուց ու վնասվելուց: Նա, ով հավատ ունի, նվիրվածություն ու նկրտում, մշտապես գտնվում է մեր աննիչ հայացքի տակ: Եվ մենք հոգատար

կերպով կկանխենք ձեր բոլոր անգգույշ շարժումները, որպեսզի ձեր հոգու հատիկը պահպանվի էվոլյուցիոն զարգացման ողջ ընթացքում:

Չէ՞ որ դուք խնամք եք տածում ձեր բույսերի ու տնկիների նկատմամբ: Խնամում և ջրում եք դրանք: Նույն կերպ մենք էլ հոգում ձեր մասին, ձեր հոգու մասին ոչ միայն ձեր ուղու այն հատվածում, որն անցնում է մոլորակի վրա, այլ նաև այն ապագայի աշխարհներում, որտեղ անպայման մուտք կգործեք: Դուք պետք է մշտապես համահնչունություն պահպանեք Բարձրագույն աշխարհների հետ: Ձեր թրթիռները պետք է մշտապես պահեք արժանավայել մակարդակի վրա: Այն ամենը, ինչ խանգարում է, որ մշտապես կենտրոնանաք Աստծո, Բարձրագույն աշխարհների վրա, աստիճանաբար պետք է դուրս մղվի ձեր կյանքից:

Հարկ է, որ ավելի շատ ժամանակ հատկացնեք ձեր հոգուն, ձեր հոգու հետ զրույցին: Իհարկե, ձեզնից շատերի համար նույնիսկ կարճ ժամանակով դեմ առ դեմ ինքն իր հետ մնալը մեծ փորձություն է ու մեծ թեստ: Մի՛ վախեցեք միայնությունից: Մի՛ վախեցեք ինքներդ ձեզ հետ մենակ մնալուց: Հավատացե՛ք ինձ, դա թվացյալ մենակություն է: Հենց որ ձեր գիտակցության մեջ հաղթահարեք մենակության զգացողությունը, հանկարծ կբացահայտեք, որ ձեր շուրջը հազարավոր Լույսի էակներ կան: Եվ միայն ձեր խնդիրներին ու երկրային կապվածություններին հրաժեշտ տալ չկամենալն է, որ ձեզ բաժանում է Լույսի ողջ Հիերարխիայից: Մենք բոլորս կանգնած հետևում ենք ձեր գիտակցության աճին: Եվ մենք ամեն անգամ ցավ ենք զգում, երբ հետ եք դառնում ձեր հին կապվածություններին և ցուցադրում ձեր հին վարվելակերպերը:

Հասել է այն ժամանակը, երբ մարդությունը պետք է մղվածություն դրսևորի և դուրս գա գիտակցության նոր մակարդակի վրա: Դա անխուսափելի գործընթաց է:

Ձեր գիտության բոլոր նվաճումներն անհամեմատելի են այն հնարավորությունների հետ, որոնք ձեր առաջ կբացվեն գիտակցության նոր մակարդակին անցնելուց հետո: Բոլոր հնարավորությունները քնած են ձեր էության մեջ: Եվ շատ շուտով դուք կսկսեք զգալ այդ չդրսևորված ուժերի ու հնարավորությունների ներկայությունը ձեր էության ներսում: Միայն թե պետք է ձեր ներսում մաքրեք ուղին՝ հրաժարվելով ձեզ համար սովորական դարձած վարքի կարծրատիպերից:

Այն ամենը, ինչ խանգարում է գիտակցության նոր մակարդակի վրա բարձրանալուն, աստիճանաբար կսկսի մեռնել: Հավատացե՛ք ինձ, շատ ու շատ բաների ու վիճակների հետ ձեր կապվածությունը նման է անցած տարվա ձյունի ու խաշամի հետ ունեցած կապվածությանը:

Կծագի պայծառ գարնանային արևը և կհալեցնի ձեր անկատարության ձյունն ու սառույցը: Եվ արևի քնքուշ ճառագայթների ներքո կաճեն նոր խոտածածկույթն ու տերևները: Մի՛ վախեցեք հինի ու իր դարն ապրածին հրաժեշտ տալուց: Մղվեք առաջ՝ դեպի ամեն ինչում նորի ու Աստվածայինի դրսևորումը:

Քանի դեռ երեխան չի անի իր առաջին քայլը, չի սովորի քայլել: Եվ եթե նույնիսկ ձեր առաջին քայլն անհաջող լինի ու ձեզ ցավ պատճառի, ապա մի՛ վիստվեք: Եթե ձեր շարժառիթը մաքուր է և մղումն՝ ուժեղ, ապա դուք կհաղթահարեք ժամանակն ու տարածությունը և վստահորեն կշարունակեք ձեր ընթացքը տիեզերքի լայնարձակության մեջ:

Վեր ելեք: Դե՛ն նետեք վախն ու անվստահությունը:

Խիզախե՛ք:

Առաջ...

ԵՄ ԵՄ Սուրիան

Վեհապետ Էլ Մորիա
4 հունիսի, 2010 թ.

Հասավ լուրջ խոսակցության պահը

ԵՄ ԵՄ Էլ Մորիան... Այս օրով ես եկել եմ շատ լուրջ խոսակցություն սկսելու համար, որն արդեն վաղուց է հասունացել: Միայն Երկիր մոլորակի կենսահոսքերին Սպասավորելու մեր անսահման ցանկությունն ու Մերն են մինչև այժմ պատճառ հանդիսացել, որ մենք շարունակենք տալ մեր ուղերձները:

Սակայն ամեն ինչ իր վերջն ունի, և հնարավոր չէ անվերջ օգտվել մեր էներգիայից՝ փոխարենը ոչինչ չտալով:

Մենք պատասխանատու ենք այն Լույսի համար, որը տալիս ենք Երկրի մարդկությանը, ուստի և հասավ լուրջ խոսակցության պահը:

Իսկ հիմա, երբ ես արդեն ձեզ հայտնի դարձրի մեր այսօրվա գրույցի թեման, կուզենայի մի քանի տարով դեպի հետ նայել՝ դեպի այն ժամանակները, երբ մենք սկսեցինք մեր աշխատանքը մեր դեսպանորդի հետ: Հիշում եք, թե որքա՛ն շատ էր ուրախությունը, որքա՛ն շատ էին հույսերը: Համբարձյալ Դասերն ուղղակի ցնծում էին Աստծո նոր շնորհի դրսևորման առիթով... Եվ ահա անցել է որոշակի ժամանակ, և եկել է ամբողջ արվածի արդյունքներն ամփոփելու պահը:

Երբեք չի եղել այնպես, որ Լույսը մեր կողմից չկշռադատված ձևով շաղ տրվի աչ ու ձախ: Ուստի եկել է այն պահը, երբ պետք է փակեք ձեր հաշիվները և փոխհատուցեք ձեր նկատմամբ տաճած մեր վստահության քվեի համար:

Եվ այսպես, ինչպիսի՞ն է մեր դեսպանորդի միջոցով մեր կատարած հնգամյա աշխատանքի արդյունքը: Ի՞նչ նվաճումների ենք հասել ֆիզիկական ոլորտում: Մենք Ուսմունք տվեցինք այս տխուր ժամանակների համար հնարավոր ամենաբարձր մակարդակով: Մենք հույսեր էինք փայփայում, որ Ռուսաստանի և ողջ աշխարհի համար բացված աստվածային հնարավորությունն այս անգամ ի կատար կածվի:

Բայց ի՞նչ ունենք հիմա. ունենք անթաքույց ու չափը կորցրած հարձակումներ ընդդեմ մեր դեսպանորդի և նրա նկատմամբ հարուցված անվերջանալի դատական գործընթացներ ու քաղաքացիական հայցեր: Եվ որպես այդ ամենի արդյունք և պսակ՝ ունենք աննախադեպ մի իրավիճակ, երբ Աշրամին հատկացված հողերն անհետ կույ գնացին ու անհետացան Ռուսաստանի չինովնիկության ու բյուրոկրատական ապարատի որովայնում:

Հնգամյա աշխատանքի հրաշալի՝ արդյունք է...

Հավատացե՛ք Երկրի մարդկության հետ ունեցած իմ աշխատանքի փորձին. երբեք Լույսի մեր առաքելությունները հարթ չեն ընթացել՝ առանց փշերի ու խորդուրդությունների: Միշտ էլ մեր աշխատակիցների վրա հարձակվել են մույթ ուժերի ամբողջ զորախմբեր: Այնուհանդերձ ամեն անգամ, երբ Լույսի առաքելություն կրողին ուղարկում ենք մարմնավորման, և երբ նախապատրաստում ենք մեր դեսպանորդներին, մենք հույս ենք կապում, որ մարդկությունը խելքի կգա:

Լույսի առաքելությունները մեզ համար յուրահատուկ լակնուսի թղթեր են, որոնց օգնությամբ մենք դատում ենք այն մասին, թե որքանով է մարդկային միջավայրն ագրեսիվ տրամադրված Լույսի և այն ողջ Աստվածայինի նկատմամբ, որը Երկինքը պատրաստ է լինում մատուցելու ձեզ:

Ահա և մենք ունեցանք տխուր փորձի ևս մեկ արդյունք: Ունեցանք ևս մեկ դեպք, երբ մարդկությունը չհանձնեց թեստը և Ոսկեդար մուտք գործելու իրավունք ձեռք չբերեց:

Ձեզ հայտնի է, որ մոտավորապես հարյուր տարի առաջ Ռուսաստանի համար նախաձեռնվեց մեր Լույսի առաքելություններից մեկը: Այն ժամանակ մեր դեսպանորդը պատրաստ էր իր առաքելության իրականցմանը և մարմնավորվեց Ռոմանովների տան ցարական ընտանիքի կազմում: Ձեզ հայտնի է այն տխուր արդյունքը, որը եղավ անցյալ դարի սկզբում. ամբողջ ցարական ընտանիքը գնդակահարվեց: Եվ այն ապագան, որը պատրաստ էր բացվելու երկրի առաջ, փակվեց երկար հարյուրամյակով: Եվ ողջ այդ ընթացքում երկիրը մինչև ծնկները խրված էր արյան մեջ՝ առանց Աստծո և հավատի: Մինչև այժմ ռուսաստանաբնակները վայելում են այն անաստվածության ու կամայականությունների պտուղները, որոնք թույլ տրվեցին անցյալ դարի սկզբում:

Աստված ողորմած է ու համբերատար: Եվ մենք նորից հանդերձավորեցինք մեր դեսպանորդին, նորից դեպի Ռուսաստան: Իմանալով այդ երկրի վիթխարի ներուժի մասին, իմանալով նաև, թե ռուս ժողովուրդը որքա՛ն է կարոտ ճշմարիտ հավատի՝ մենք հույս կապեցինք, որ այս անգամ մեր առաքելությունը հաջողություն կունենա: Սակայն մեր հնգամյա ջանքերի արդյունքն այն եղավ, որ մեր դեսպանորդը չապաքինվող վերքեր ձեռք բերեց իր նուրբ մարմիններում:

Այո՛, փոխվել են մեզ հակադիր ուժերի գործունեության մեթոդները: Բայց, ըստ էության, ոչինչ չի փոխվել մարդկանց գիտակցության մեջ: Աստվածային հնարավորությանը հակադրվելու մեթոդները դարձել են ավելի նրբանեղ: Հիմա նրանց ձեռքի տակ են չինովնիկական-բյուրոկրատական ապարատը, դատարանը և նույնիսկ նոր գյուտը՝ համացանցը...

Տխուր է համընդհանուր քայքայման այդ պատկերը դիտելը:

Կան որոշակի մեթոդներ, որոնցով միլիոնավոր տարիների ընթացքում մենք աշխատում ենք Երկրի մարդկության հետ: Եվ դրանց մեջ հիմնականն այն է, որ մենք առաքում ենք մեր դեսպանորդներին ու մարգարեներին, և մեր ավետաբերների գործողությունների նկատմամբ մարդկանց ցուցաբերած արձագանքից ելնելով՝ դատում ենք այն մասին, թե ինչպիսի առաջխաղացում է ունեցել մարդկությունն իր զարգացման մեջ:

Ձեր ժամանակները ոչնչով չեն տարբերվում միջին դարերից: Միայն մեթոդներն են փոխվել: Ուստի մենք ուշադիր հետևում ենք այն իրադրությանը, որը հաստատվում է մեր դեսպանորդի

շուրջ: Ազգը հանձնում է իր թեստը: Ռուսաստանն անցնում է իր թեստով, որպեսզի իրավունք ձեռք բերի ժողովուրդների առաջատարը դառնալու: Երկիրը անցնում է իր թեստով՝ հանձինս իշխանական ընտրյալ խավի, բյուրոկրատական ապարատի, լրատվության զանգվածային միջոցների որոշակի ներկայացուցիչների: Եվ իր թեստն է հանձնում ազգի ընդհանրական ենթագիտակցականը՝ Ռուսաստանի էգրեգորը:

Ես վերջնական եզրակացություն անելու իրավասություն չունեմ: Ես միայն եկել եմ, որպեսզի նկարագրեմ այն իրավիճակը, որը մենք տեսնում ենք մեր գիտակցության համբարձյալ դիրքից:

Ցավալի է տեսնելը, թե ինչպես է Ռուսաստանի հսկայական ներուժը մնում չբացահայտված: Եվ դեռ ավելին, մեր ուղերձներից ստացված էներգիան աղավաղվում է՝ ստեղծելով կարմա: Նո՛ր կարմա: Իսկ ձեզ հայտնի է, որ կարմայական պարտքերը հարկ կլինի վճարել: Եվ մեր հաշիվը չի ուշանա, որ դրվի ձեր առջև: Ի՞նչ է այս անգամ սպասվում Ռուսաստանին...

Հիմա ես գերծ կմնամ կանխատեսումներ անելուց: Իմ էությունը ես լավատես եմ: Եվ, չնայած իմ որոշակի կոշտությանն ու հայրական խստությանը, ես հարյուր տոկոսով գործադրում եմ իմ բոլոր ջանքերը, որպեսզի փոխեմ իրավիճակը և նպաստեմ այն բանին, որ անդամալիորեն ջարդվի այն վայրի գազանի ողնաշարը, որը նստած է Ռուսաստանի մեջքին:

Ես ձեր օգնության կարիքն եմ զգում: Խնդրում եմ, օրվա մեջ 24 ժամ պահե՛ք ձեր գիտակցությունը ձեզ համար հնարավոր ամենաբարձր մակարդակի վրա: Այդ դեպքում ես և կապույտ բոցի հրեշտակները կկարողանանք ներկա լինել ձեր աշխարհում: Գիտակցության ցանկացած բացասական վիճակ, ցանկացած դատապարտում, որ դուք ունենում եք, հետ է մղում Ռուսաստանի և ամբողջ աշխարհի համար նախատեսված աստվածային հնարավորությունը: Մենք փորձում ենք պահպանել մեր դիրքերը: Եվ ձեզնից ամեն ոք, կախված մեր դեսպանորդի նկատմամբ իր ունեցած վերաբերմունքից, Արմագեդոնի ռազմադաշտում կանգնում է այս կամ այն ուժերի կողմում: Հնարավոր չէ խույս տալ դիրք գրավելուց: Ձեր թրթիռներով դուք ձգվում եք դեպի այն կողմը, որի սկզբունքները ձեզ ավելի մոտ են՝ ըստ ձեր ներքին էության:

Ոչ որի դեռևս չի հաջողվել խորամանկելով խաբել Աստծուն: Եվ այն աշխատանքը, որը մենք կատարում ենք Երկիր մոլորակի վրա, կոչված է ի հայտ բերելու բոլորին, ովքեր ընտրել են Աստծուն հակադրվելու ուղին:

Ես ներկայացա տխուր ուղերձով: Բայց ավելի երկար լռելու համար այլևս տիեզերական հնարավորություն չկար:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

Վեհապետ Էլ Մորիա
5 հունիսի, 2010 թ.

Մենք մեր օգնության ձեռքն ենք մեկնում յուրաքանչյուրին, ով մեզնից օգնություն է խնդրում

ԵՍ ԵՄ Էլ Մորիան: Եկել եմ, որպեսզի որոշ բացատրություններ տամ երեկվա իմ ուղերձի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնեմ իմ ու Համբարձյալ Դասերի վերաբերմունքը Երկրի վրա հաստատված իրադրության նկատմամբ:

Չարժե՛, պաշտելիներս, վիատության գիրկն ընկնել: Իրավիճակն իրոք ծանր է: Եվ մեծ աշխատանք է պահանջվում, որպեսզի այն շտկվի: Սակայն երբեք չեն լինում անելանելի իրավիճակներ: Եվ միշտ վերջին պահին Աստված փրկարար ճոպան և օղակ է նետում, որպեսզի մարդկությունը կարողանա շարունակել իր էվոյուցիան:

Ես չգիտեմ, թե ինչ կձեռնարկվի այս անգամ: Ձեզ հայտնի է, որ ամառային արևադարձից անմիջապես հետո կայանում է Կարմայական Վարչության նիստ, որտեղ քննարկվում է մոլորակի իրադրությունը և արվում են եզրահանգումներ, որոնք ներկայացվում են Մեծ Կենտրոնական Արևի հաստատմանը:

Հավատացե՛ք ինձ, հաշվի կառնվեն բոլոր ձեր դիտողություններն ու առաջարկները, որոնք տեղ կգտնեն Կարմայական Վարչությանը հղած ձեր նամակներում:

Երբեք չի եղել այնպես, որ Համբարձյալ Դասերը մարդկությանը միայնակ թողնեն իր բախտի հետ: Մարդկային գիտակցության մեծ պատրանքն է այն, թե մարդկությունն ունակ է զարգանալու իր սեփական օրենքներով, որոնք կտրված են համայն տիեզերքում գործող Օրենքից: Գոյություն ունի համայն տիեզերքում գործող միասնական Օրենք, և դրա մի դրույթն էլ վերաբերում է այն բանին, որ իրենց զարգացման մեջ մեծ հաջողությունների հասածները պետք է էվոյուցիայի ուղու վրա օգնեն հետ մնացողներին: Ուստի ես և մյուս Համբարձյալ Վեհապետները մոլորակի վրա

հաստատված ներկա իրավիճակի պայմաններում անում ենք մեզնից կախված հնարավոր ամեն ինչ: Եվ ձեզնից նրանք, ովքեր իրենց համարում են հոգևոր առումով զարգացած ու առաջադիմած, ինչու՞ չհետևեն մեր օրինակին: Ձեզ թվում է, թե կենսահոսքերին օգնելն անպայման ինչ-որ վերամբարձ և ուրախ բան է, որը ձեզ կկանգնեցնի պատվո պատվանդանին և դափնեպսալ կդնի ձեր գլխին...

Մխավում եք, պաշտելիներս: Առավել հաճախ՝ դեպքերի 99 տոկոսում, մենք և մեր մարմնավորված աշխատակիցները զբաղված ենք լինում սովորական, քրտնաթոր աշխատանքով: Սակայն տարբերություն կա նմանատիպ աշխատանք կատարող ու սովորական կյանքով ապրող մարդկանց և մեր աշխատակիցների միջև: Եվ գլխավոր տարբերիչ առանձնահատկությունն այն շարժառիթն է, որով դուք կատարում եք ձեր աշխատանքը: Հանուն ինչի՞ եք կատարում ձեր աշխատանքը:

«Իհարկե, որպեսզի փող վաստակենք», - կպատասխանեն մեր ուղերձները կարդացող մարդկանց 99 տոկոսը:

Եվ ընդամենը մեկ կամ ավելի քիչ տոկոսն է, որ իր գիտակցությամբ հասել է Էվոյուցիայի հաջորդ աստիճանին և կպատասխանի, որ կատարում է իր աշխատանքը հանուն Ընդհանուր Բարօրության, հանուն ամբողջ մարդկության և հանուն Կյանքի Սպասավորության:

Եվ այդ շարժառիթային տարբերությամբ է պայմանավորված այն, որ մարդկանց մեծամասնությունն զբաղված է կարմայաստեղծ գործունեությամբ այն դեպքում, երբ մեր աշխատակիցները բարի կարմա են ստեղծում ողջ մարդկության համար, որը կարող է օգտագործվել Երկրի Էվոյուցիոն գործընթացը կարգավորելու համար:

Ձեզնից շատերի համար իմ ասածները երևում են որպես կատարելապես աներևակայելի ու հանելուկային բաներ: Սակայն ձեր վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ սկզբունքային նշանակություն ունի: Ձեր աշխատանքի հիմքում դրված շարժառիթը փոխում է ձեր գործադրած ջանքերի արդյունքը:

Հենց դրանում է ասվածի* իմաստը, որ դաշտում *ցանքս անող երկուսից մեկը կվերցվի, մյուսը կթողնվի. այլուր աղացող երկուսից մեկը կվերցվի, մյուսը կթողնվի*: Քանզի եթե պատրաստ չեք ձեր գիտակցությամբ անցնելու Էվոյուցիոն զարգացման նոր գալարին, ապա ձեր աշխատանքն ուղղված կլինի պատրանքների բազմապատկմանը. իսկ եթե ձեր աշխատանքով հաստատում եք Նոր Կյանքն ու Էվոյուցիոն զարգացման նոր փուլը, որեմն ինքներդ էլ պատրաստ եք այդ փուլին: Ուրեմն ձեր գիտակցությունն արդեն հասունացել է Էվոյուցիոն զարգացման նոր փուլին անցնելու համար:

Նախ և առաջ փոխվում է ձեր գիտակցությունը և, մասնավորապես, ձեր վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ: Ուստի ես եկել եմ և հույս ունեմ, որ ապագայում դեռ էլի կգամ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հասցնեմ այս պարզ ճշմարտությունը, որն այնքան է ակնհայտ, որ հասկանալի է նույնիսկ երեխայի համար, բայց, չգիտես ինչու, մշտապես վրիպում է ձեր ուշադրությունից:

Եվ այսպես, աշխատանքի նկատմամբ ձեր վերաբերմունքը՝ ձեզ գործի դնող շարժառիթը, շատ կարևոր է: Ըստ էության, հենց դա՛ է որոշում ձեր հետագա զարգացման ուղղությունը: Եվ աստվածային հնարավորությունը, որը ձեզ է մատուցվում այս ուղերձների փոխանցմամբ, կոչված է նախ և առաջ այն բանին, որպեսզի ձեզ տրվեն ճշմարիտ ուղենիշներ և շարժման ճիշտ ուղղություն:

Ըստ այդմ՝ անցած տարի Մեծ Կենտրոնական Արևի վրա ես ձեռք բերեցի թողության շնորհ, որպեսզի այս դեսպանորդի միջոցով կատարվող աշխատանքը շարունակություն ունենա: Նաև ա՛յս տարվա ընթացքում կանեմ ինձնից կախված ամեն ինչ, սակայն ես չեմ վերջնական որոշում ընդունողը: Բոլոր հնարավորությունները մանրակրկիտ կերպով կշռվում են տիեզերական կշեռքով: Եվ փաստորեն դեր է խաղում մեր ուղերձների հետ առնչվող յուրաքանչյուր մարդու մտածածը՝ նրա վերաբերմունքը մեր Խոսքին, որը խնամքով, աշխարհների միջով անցնելով, մենք բերում-հասցնում ենք ուղիղ ձեր տուն:

Մեր Ուսմունքի նկատմամբ ձեր վերաբերմունքն այն կռվաններից մեկն է, որը որոշիչ դեր է խաղում հետագա Էվոյուցիայի համար: Այն բանից ելնելով, թե հասարակությունն ինչպես է վերաբերվում Աստծո կողմից տրված Խոսքին, միշտ էլ որոշվել է ինչպես հասարակության զարգացման մակարդակը, այնպես էլ հետագա Էվոյուցիային նրա ունակ լինելու կամ չլինելու հարցը:

Ուշադրություն դարձրեք այն մտքին, որ հիմա ծագել է ձեր գլխում: Եթե այն քննադատական բնույթ է կրում, ուրեմն դուք փաստորեն քվեարկեցիք ընդդեմ նոր աստվածային հնարավորության՝ ընդդեմ Երկիր մոլորակի մարդկության Էվոյուցիայի: Քանզի ձեր յուրաքանչյուր միտքը հավերժորեն գրանցվում է ակաշիի ժամանակագրություններում: Եվ հետո ինչ էլ որ ասեք, ինչպես

էլ արդարանաք, միևնույնն է, ձեր միտքն արդեն տպվել ու մշակում է անցել տիեզերական «համակարգչում»:

Մենք հնարավորություն ունենք հետևելու յուրաքանչյուրի արձագանքին, ով կարդում կամ լսում է մեր ուղերձները: Առայժմ մեր ուղերձները կարդացող մարդկանց մեծամասնությունը հակված չէ մեզ հավատալու և քննադատաբար է տրամադրված:

Մենք ձեզ կուրորեն հավատալու կոչ չենք անում: Մենք ձեզ կոչ ենք անում, որ բարձրանաք գիտակցության այնպիսի մակարդակի վրա, որտեղ ունակ կլինեք ճաշակելու ճշմարիտ Հավատ: Հավատ, որը ոչ թե դրսից է ձեր գլխին կապվում, այլ բխում է ձեր սրտերից: Միայն այդ դեպքում մենք կհասնենք այն նպատակին, որին ձգտում ենք: Քանզի ճշմարիտ հավատ ունեցող մարդն ունակ է դառնում անցնելու էվոլյուցիայի հաջորդ աստիճանին:

Ձեր աշխարհում ամեն ինչ իրար է միախառնված: Եվ ձեր կարմայական պարտքերը ձեզ հեռացնում են այնպիսի վիճակից, որում անհետանում են ձեր կասկածները, երկյուղներն ու անվստահությունը:

Մենք մեր օգնության ձեռքն ենք մեկնում յուրաքանչյուրին, ով մեզնից օգնություն է խնդրում և անկեղծ նկրտումներ ունի: Բայց հենց ինքներդ եք հրաժարվում մեր օգնության ձեռքից և գերադասում խորտակվել պատրանքների ծովում ձեր եսասիրության և Հավատի բացակայության պատճառով:

Ուստի միշտ իմացեք, որ ես կնետեմ իմ փրկարար ճոպանը յուրաքանչյուրին, ով անկեղծ խնդրանքով կղմի ինձ: Մի՛ երկնչեք խնդրելուց և օգնության ակնկալիքով դիմելուց, և մեր օգնությունն անպայման կհասնի ձեզ:

ԵՄ ԵՄ Էլ Մորիան

*Մտթ., 24: 40, 41

Սպիտամա Չրադաշտ

6 հունիսի, 2010 թ.

Պատիվ ու գովք ուղղահավատներին...

ԵՄ ԵՄ Չրադաշտը...

Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեր սրտերում բորբոքեմ Հուրը...

Ա՛խ, մարդկանց հիշողությունը որքան կարճ է: Թերևս ձեզնից շատ քչերն են հիմա հիշում, որ ես շատ անգամ եմ մարմին ամել Երկրի վրա, որպեսզի Երկրի մարդկությանը մատուցեմ իր աստվածային բնույթի մասին Ուսմունքը: Եվ Հուրն է, որ ամենից ավելի լավ է նշանավորում մարդու աստվածային բնույթը:

Դուք մոռացել եք ձեր աստվածային ծագման մասին: Ուստի մեզ՝ Մեծ Սպիտակ Եղբայրության Վեհապետներին, վիճակվում է կրկին ու կրկին ձեզ այցի գալ տարբեր դեսպանորդների միջոցով, որպեսզի ձեզ հիշեցնենք ձեր Աստվածայնության մասին:

Ես եղա իմ Ուսուցչի՝ Արամազդի մարգարեն: Հավանաբար հիմա ձեզ ավելի քաջածանոթ է իմ Ուսուցչի մի այլ անունը՝ Սանատ Կումարա...

Այո, այո՛, Սանատ Կումարա... Այդ Մեծ Ոգին շատ բան է արել Երկրի մարդկության համար և հիմա ևս շարունակում է Իր Գործը:

Եվ ձեզնից շատերը, շա՛տ շատերը կարող են հիշել իրենց վաղեմի կապը Սանատ Կումարայի հետ: Այդ հուշը ներքին մակարդակներով ամրապնդված է ձեր ներսում և հազիվհազ է դրսևորվում ձեր արտաքին գիտակցությամբ:

Ո՛վ, Սանատ Կումարայի ուղղահավատներ...

Ո՛վ, Սանատ Կումարայի մաքրակյացներ...

Ձեզնից շատերը հիմա կարդում են իմ այս Ուղերձը: Ձեզնից շատերն այժմ մարմնավորվել են մոլորակի վրա, որպեսզի համակշռություն պահպանեն, որպեսզի իրենց մարմիններով անցկացնեն Հուրը, արարչական Հուրը, որի նշանը ֆիզիկական ոլորտում կրակի բոցն է: Այն ձեզ հիշեցնում է ձեր էության մասին. քանզի նուրբ ոլորտից դուք երևում եք հենց կրակի բոցերի պես: Եվ ես բերկրանք եմ զգում, երբ մոլորակին տիրած խավարում այս ու այնտեղ հանկարծ բռնկվում է Սպասավորության ջահը: Եվ ձեր շուրջը լուսավորվում է Պայծառացման այն Լույսով, որով լեցուն է ձեր էությունը:

Ես մտաբերում եմ այն հեռավոր ժամանակները, երբ մարդկանց նվաճումները չէին գնահատվում ո՛չ քսակի հաստությամբ, ո՛չ էլ զբաղեցրած պաշտոնով: Հիշում եմ այն ժամանակները, երբ մարդիկ աշխարհում ամենից առավել բարձր էին դասում արարչական Հրի ի

հայտ գալը մարդու ներսից: Եվ այդ Հուրն անգն աչքով տեսանելի էր լինում: Հնարավոր չէր լինում ո՛չ թաքցնել սեփական նվաճումները, ո՛չ էլ մարդկանց մոլորեցնել կեղծ ձեռքբերումներով, որովհետև ամեն ինչ ակներև էր դառնում: Ասածո Հուրը միայն աչքերից չէր շողարձակում, այլ բառացիորեն պարուրում էր բոլոր մարմինները, ներառյալ նաև ֆիզիկականը:

Դրանք երանավետ, ոչնչի հետ չհամեմատվող ժամանակներ էին: Իսկ Սանատ Կումարան հնարավորություն ուներ տարին մեկ անգամ՝ Հրո տոնի ժամանակ, ներկա գտնվելու մեր մեջ: Եվ բոլորը հնարավորություն էին ստանում տեսնելու Իր պատկերն այն Հրի միջով, որով Ինքն իջնում էր:

Որքան բարձր էին լինում մարդու հոգևոր նվաճումները, այնքան նա ավելի շատ էր կարողանում մոտ գալ Արամագդին և խոնարհվել Նրա առաջ: Իսկ նրանք, որոնց աստվածային բանականությունը մթազնած էր լինում, նույնպես փորձում էին մոտենալ՝ հավակնելով ցուցադրել Ասածո հետ իրենց միասնությունը: Սակայն անմիջապես այրվում էին Արամագդի արարչական Հրում կամ շուտափույթ հեռու էին փախչում խանձված կատուների պես:

Ձեր օրոք այդպես չէ: Դուք պատվում եք ոչ թե բարեմասնությունը, այլ արատը: Եվ չունեք չափանիշ, որով կարողանայիք զանազանել մեկը մյուսից: Ամեն ինչը ձեզ նույնաբար գորշ ու անբարեկամ է երևում: Սակայն ես պնդում եմ, որ ձեր մեջ կա՛ն ուղղահավատներ: Եվ ես դեպի նրանց սրտերն եմ առաքում իմ Հուրը. այդ ճառագայթն այժմ կարող է Կրակ բորբոքել նրանց սրտերի գոհարանի վրա: Եվ մարմնող ճրագների միջավայրում նորից կբորբոքվի արարչական Հուրը:

Ձեր խնդիրն է ետ բերել այն օրհնյալ ժամանակները, երբ աստվածային Էակները կարողանում էին այցի գալ ձեզ: Թեկուզ կարճատև, թեկուզ տարին մեկ անգամ, բայց եթե դա հաջողվի, ապա դուք ի վիճակի կլինեք ամբողջ տարվա ընթացքում բարձր պահելու ձեր գիտակցությունը և թույլ չտալու այն պարսավելի անապատացումը, որն այժմ տիրում է ձեր աշխարհում:

Ձեր գիտակցության բոլոր մզապատ անկյունները, նրա վրա նստած ողջ վաղեմի փոշին անհրաժեշտ է այրել արարչական Հրով:

Թող որ հրե սալամանդրներն այժմ զբաղվեն Երկիր մոլորակի տարածքի մաքրման գործով:

Թող որ Երկիրը ստանա իր մկրտությունը Հրով և մաքրագերծվի խավարից ու քայքայումից:

Ես եկել եմ ձեր սրտերում կրկին բորբոքելու Հրի պաշտամունքը: Եկել եմ ձեր սրտերում հաստատելու հավատն ու նվիրվածությունը Արամագդի՝ Սանատ Կումարայի նկատմամբ:

Նոր դավանանքներ ի հայտ եկան այն կրոնի փոխարեն, որը ես հիմնադրեցի և որի մարգարեն եղա: Իրենց հիմքում այդ նոր դավանանքները ոչնչով չէին հակասում զրադաշտականությանը: Սակայն Հրի դրսևորումը նվազեց: Եվ մարդիկ կորցրին գիտակցության այն բարձր մակարդակը, որի շնորհիվ կարողանում էին արարչական Հուր իջեցնել Երկիր մոլորակի համար: Եվ ամեն ինչը ենթակա դարձավ ավելի ու ավելի շատ անապատացման: Մարդիկ դադարեցին տարբերել Լույսը խավարից:

Ձեր խնդիրն է վերականգնել Հրի անցումը ձեր աշխարհով: Դուք դա կարող եք անել ձեր չակրաների միջոցով:

Նվիրյալ ու ճշմարիտ Այրե՛ր Սանատ Կումարայի. 144 000 Քրիստոս-Էակնե՛ր, որ մշտապես մարմնավորվում և կրում եք ձեր Սպասավորության ջախը. ձեր ժամը հասել է: Արթնացե՛ք...

Ձեր հերոսական ջանքերի շնորհիվ է հենց, որ այս ողջ ժամանակի ընթացքում մոլորակը հարատևում է: Բայց այժմ հասել է այն պահը, երբ դուք պետք է սրընթաց առաջ անցնեք:

Պատիվ ու գո՛վք ուղղահավատ առաջամարտիկներին...

Ձեզ վիճակված է անխոնջ կերպով աստվածային սկզբունքներ հաստատել մոլորակի վրա: Գործունեության ամեն մի բնագավառում: Ամեն ինչում...

Եվ ձեր Էության խորքից վեր հառնող արաչական Հրից խանձված կատուների պես հեռու կփախչեն բոլոր նրանք, ովքեր կփորձեն մնալ հին գիտակցությանը և պահպանել իրենց եսակենտրոնությունն ու վատագույն վարվելակերպերը:

Մաքրակյացնե՛ր Սանատ Կումարայի, Ոգու մարտիկնե՛ր, առա՛ջ...

Հիմա ձե՛ր հերթն է...

ԵՍ ԵՄ Չրադաշտը՝ հանուն Երկրի մարդկության Սպասավորության Բոցում

Բարաջի
7 հունիսի, 2010 թ.

Ուսմունք աշխատանքի և դրամի նկատմամբ վերաբերմունքի մասին

ԵՍ ԵՄ Բարաջին: Ես կրկին ձեզ այցի եմ եկել:

Քանի դեռ կկարողանամ Ուսմունք տալ այս դեսպանորդի միջոցով, ես այցի կգամ ձեզ:

Իհարկե, զգալիորեն ավելի լավ կլինեք, եթե մարմնապես գայի ձեզ մոտ և, ինչպես այն ժամանակ, որ գտնվում էի Հեյրախանի իմ Աշրամում, իմ Ուսմունքը ձեզ տայի անմիջականորեն:

Բայց այդ ժամանակներն արդեն անցել են: Եվ նոր մարմնավորումը Համբարձյալ Դասերից նշանակալի ջանքեր կպահանջեր: Ուստի ես օգտվում եմ այն հնարավորությունից, որն այժմ առկա է: Քանզի այս հնարավորությունն էլ կարող է իր ավարտն ունենալ:

Մարդկությունը չի սովորում և չի ուզում սովորել: Ամբողջ բանը ձեր հոգիների ծուլությունն է՝ ուզում են հանգստանալ և չեն ուզում աշխատել:

Ինչպիսի՞ հիմարություն, որ պետք է հանգստանալ: Ինչի՞ց եք եզրակացրել, որ երջանիկ կլինեք, եթե հանգստանաք:

Ես Ուսմունք տվեցի Կարմա յոգայի մասին: Եվ հիմա՝ էլ եմ իմ գիտակցության համբարձյալ դիրքից պնդում, որ միայն Կարմա յոգան՝ հանուն Ընդհանուր Բարօրությանն ուղղված ստեղծագործ աշխատանքի ձեր ջանքերն են, որ ունակ կլինեն փոխելու և բեկելու այն իրադրությունը, որն այժմ տիրում է աշխարհում:

Հատկապես աշխատանքը, ճիշտ կազմակերպված աշխատանքը, կարող է ամեն ինչ փոխել:

Քանի դեռ աշխատում եք դրամ վաստակելու համար, դուք առաջ չեք շարժվի: Ինչպիսի՞ հիմարություն՝ աշխատանքը կապել ֆիզիկական ոլորտին պատկանող ինչ-որ արդյունքի հետ: Ինքնին աշխատանքն իրենից արդեն մեծագույն արժեք է ներկայացնում: Եվ ճշմարիտ աշխատանքը մեծագույն բարիք է մարդկային հոգու զարգացման համար:

Փոխեցե՛ք ձեր վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ: Հարց տվեք ինքներդ ձեզ, թե ինչու՞ աշխատանքն այլևս ձեզ ուրախություն չի պարգևում:

Ուղղակի զարմանա՛լ կարելի է... Աշխատանքի արդյունքը տեսնել ինչ-որ թղթի կտորներ ձեռք բերելու մե՛ջ: Իսկ ի՞նչ արժեք ունեն թղթի կտորներն Աստծո Աշխարհում: Դրանք ձե՛ր աշխարհին են պատկանում, պատրանքային աշխարհին: Աստծո Աշխարհում նշանակություն ունի ձեր աշխատանքի բոլորովին ուրիշ արդյունքը՝ այն հմտություններն ու անգին փորձը, որ անհրաժեշտ են ձեր անհատականության զարգացման համար:

Ձեր մարմնավորումից հետո կներկայանաք մենաստանները և զարմանքով կհայտնաբերեք, որ ձեր կյանքն անցել է կատարելապես անիմաստ և աննպատակ: Դուք ընկել եք դրամ կոչվող ինչ-որ թղթիկների հետևից, որպեսզի կյանքից անընդհատ հաճույքներ ստանաք: Բայց ինչ հաճույք էլ որ ստացել եք, որոշ ժամանակ անց դրանք ձեզ ձանձրացրել են, և դուք նորից եք վազել դրամի հետևից, որպեսզի դրանով ձեզ համար նոր հաճույքներ գնեք:

Իսկ ամենագլխավորը՝ աշխատանքի հաճույքը, որը նույնքան բնական է ձեզ համար, որքան շնչելը, չգիտես ինչու, ձեզ համար կորսված է: Չափազանց շա՛տ եք խորացել պատրանքի մեջ: Եվ ամենապարզ բաները, որոնք մատչելի են երեխայի համար, ձեզ համար դարձել են անհասկանալի: Երեխան աշխատում է առավոտից մինչև երեկո: Նա մշտապես ինչ-որ բանով զբաղված է: Նա ստեղծագործում է: Նա դեռ հիշում է Աստծո Աշխարհը և գիտե, թե ինչի համար է մարմնավորվել: Բայց անցնում է ընդամենը մի քանի տարի, և, շփվելով ձեր արժեհամակարգի հետ, երեխան արդեն կորցնում է հետաքրքրությունն աշխատանքի նկատմամբ: Որովհետև ինքնին աշխատանքը չի գնահատվում ձեր հասարակությունում: Ձեր հասարակությունն արժևորում է միայն դրամ վաստակելու կարողությունը:

Այն ընթացքում, երբ գտնվում էի մարմնավորման մեջ, ես վկա եղա դրամի նկատմամբ մարդկանց կապվածությանը: Եվ ես սիրում էի փորձության ենթարկել նրանց, ովքեր ձգտում էին մոտ լինել ինձ և գալիս էին Աշրամում ապրելու: Ես նրանց պարտավորեցնում էի որոշակի գումար հավաքել և ամբողջը տալ ինձ:

Այդ կերպ ես որոշում էի, թե որքանով է տվյալ մարդը նվիրված ինձ և իմ տված Ուսմունքին: Փաստորեն ես ստիպում էի նրանց, որ հրաժեշտ տային այն ամենագլխավորին, որի հետ ունեին ամենամեծ կապվածությունը՝ դրամին:

Նրանցից շատերը մտածում էին, որ այդ փողերն ինձ պետք են Աշրամ կառուցելու համար, կամ էլ մտածում էին, որ այդ կերպ ես փող եմ հավաքում իմ տված Ուսմունքի դիմաց:

Հիմարություն է կարծել, թե Ուսմունքը կարելի ձեռք բերել փողով:

Ոչ մի ճշմարիտ արժեք հնարավոր չէ ձեռք բերել դրամի օգնությամբ: Սերը հնարավոր չէ գնել փողով: Նվիրվածությունը՝ նույնպես: Սպասավորությունը՝ նույնպես:

Դրամի միջոցով դուք կարող եք ստանալ այդ աստվածային հատկանիշների սոսկ հեռավոր նմանակումը:

Հապա փորձեք սոխակին ստիպել, որ երգի փողի համար: Նույն արդյունքը կլինի, եթե փորձեք փողով Ուսմունք ստանալ:

Ինչպես դրամը, այնպես էլ մյուս բոլոր էներգիաները ձեզ Աստված է տալիս: Եվ միայն Աստծուն պետք է շնորհակալ լինեք ամեն ինչի համար՝ սննդի համար, որ ուտում եք, հագուստի համար, որ կրում եք, ծածկի համար, որ ունեք, Ուսմունքի համար, որ ստանում եք մեզնից:

Մտորե՛ք իմ խոսքերի շուրջ, երբ ժամանակ կունենաք: Երբ մի փոքր ազատված կլինեք ունայնությունից և փողի դիմաց հաճույքներ ստանալու մրցավազքից:

Կա և մյուս կողմն այն Ուսմունքի, որն այսօր տալիս եմ ձեզ: Դա հարգալից վերաբերմունքն է դրամի էներգիայի նկատմամբ, ինչպես և մյուս բոլոր էներգիաների նկատմամբ: Քանզի ամեն ինչ Աստծուց է բխում: Եվ քանի դեռ ձեր հասարակության անկատարությունն արտահայտվում է դրամի գոյությամբ, դուք պետք դրամի նկատմամբ ճիշտ վերաբերմունք մշակեք: Ձեր սրտի խորքից բխող այն ցանկությունը, որ դրամական նվիրատվություն անեք բարի գործերի համար, շատ խոր արմատներ ունի և լիովին արդարացված է: Որովհետև բարի գործերի համար հատկացված ձեր փողերն ունակ են բեռնաթափելու ձեր կարման: Այդ ձևով դուք մաքրվում եք կարմայից:

Բայց դա կարող է գործել միայն այն դեպքում, եթե ձեր գոհողությունն անում եք անկեղծորեն և չեք ափսոսում ձեր տված փողերը: Քանի դեռ հասարակության մեջ կա դրամաշրջանառություն, պետք է ուշադիր հետևեք, թե ինքներդ ինչպես եք վերաբերվում փողին, ինչպես եք այն ծախսում:

Ինչպես ձեր պատրանքային աշխարհում ամեն ինչը, դրամը ևս ունի երկակի բնույթ: Դուք կարող եք այն ծախսել ինչպես պատրանքների բազմապատկման, այնպես էլ պատրանքի հետ հավաքման համար: Առաջին դեպքում դուք կարմա եք ավելացնում, իսկ երկրորդ դեպքում բեռնաթափում եք այն:

Ես այօր եկա, որպեսզի Ուսմունք տամ աշխատանքի ու դրամի նկատմամբ վերաբերմունքի մասին: Հուսով եմ, որ այս Ուսմունքով կառաջնորդվեք ձեր կյանքում: Հակառակ դեպքում, եթե ստանում եք Ուսմունք և գործնականում չեք կիրառում այն, ապա նույնպիսի կարմա եք ստեղծում, ինչպիսին ստեղծում եք ձեր սխալ արարքներով:

ԵՄ ԵՄ Բարաջին

Վեհապետ Նիկողայ Ռերիխ
8 հունիսի, 2010 թ.

Խոսակցություն ռուսաստանաբնակների հետ

ԵՄ ԵՄ Նիկողայ Ռերիխը:

Ասօրվա մեր խոսակցությունը լուրջ բնույթ կկրի: Ուստի տրամադրվե՛ք դրան: Ո՛վ, եթե ոչ՝ ես, ձեզ ճշմարտացի տեղեկություն կհաղորդի մոլորակի նուրբ ոլորտի գործերի վիճակի մասին: Ո՛վ, եթե ոչ՝ ես, իրազեկ կդարձնի այն վտանգներին, որոնք այժմ ձեզ սպառնում են: Իհարկե, առաջին հերթին ես կուզենայի իմ խոսքն ուղղել Ռուսաստանի բնակիչներին: Քանզի այդ երկրի հետ ունեցած իմ կարմայական կապերը պարտավորեցնում են ինձ աշխատելու նրա բարօրության համար: Մարմնավորման մեջ գտնվող շատերի հետ եմ ես կապված կարմայորեն: Ուստի հույս ունեմ, որ նրանցից որևէ մեկը կկարդա իմ այս ուղերձը: Միայն ձեր շնորհիվ և ձեր միջոցով ես կարող եմ գործել: Որովհետև այլևս հնարավորություն չկա հետազային թողնելու այն, ինչը վաղուց հասունացել է և արդեն իսկ տեղի է ունենում: Եվ երկիրը հիմա կանգնած է ընտրության առաջ:

Դեպի ապագա տանող ճշգրիտ ուղենիշներ չկան: Գուցե թե կարելի էր միառժամանակ էլ փորձարկել արևմտյան նմուշիչապիկը սեփական մաշկի վրա: Սակայն արդեն իսկ ակնհայտ է, որ այդ շապիկը նեղ է գալիս ռուսական հոգուն:

Անհրաժեշտ է վերադառնալ Ռուսիայի ակունքներին: Անհրաժեշտ է վերհիշել ողջ այն հերոսականն ու լուսավորը, որը եղել է Ռուսիայի պատմության մեջ. ոչ միայն հեռավոր ժամանակներում, այլ նաև այն սերնդի հիշողության մեջ, որը դեռևս ապրում է՝ աստիճանաբար լքելով ֆիզիկական ոլորտը:

Շատ մույթ ու անհրապույր բաներ են եղել անցյալում: Բայց եղել են նաև ոչնչի հետ չհամեմատվող հերոսության, նվիրվածության, սիրո և հայրենասիրության դրսևորման դրվագներ: Հարկավոր է ընտրել դրանցից լավագույնը և այն անեցնել մարդկանց գիտակցության մեջ: Ոչ այն բանի համար, որ մենք ուզում ենք հաստատել ռուս ազգի առաջնայնությունը, այլ որովհետև մեզ

անհրաժեշտ է վերականգնել ազգային արժանապատվությունն ու ազգային հպարտությունը: Մենք ունենք հպարտանալու բաներ: Եվ Ռուսաստանի պատմությունն ամենաբարձր մակարդակով պետք է դասավանդվի երկրի բոլոր ուսումնական հաստատություններում:

Բնակչության բոլոր շերտերը գիտակցության ծայրահեղ ճնշված վիճակում են: Քանզի չկա մի ազգային գաղափար, որը միավորեր ու համախմբեր մարդկանց: Եվ մարդկանց ընդհանուր վիճակն այժմ շատ ավելի վատ է, քան սոցիալիզմի օրոք էր: Ամեն դեպքում, այն ժամանակ մարդկանց մեջ ներարկվում էր մղվածություն և նվիրվածություն գաղափարներին:

Ժողովուրդը, որը զուրկ է ազգային գաղափարներից, ժողովուրդը, որը չի հիշում իր հերոսական անցյալը, ապագա չունի:

Պետք է խորհել այս մասին, և նման վիճակը պետք է շտկվի: Ռուսաստանին նվիրված մարդիկ կան պետական իշխանության բոլոր մակարդակներում, հասարակության բոլոր շերտերում: Ուստի առաջնահերթ խնդիր պետք է դառնա այն ամեն լուսավորի հաստատումը, որը դեռևս առկա է հասարակության մեջ: Մարդկանց անհրաժեշտ են իդեալներ, դեպի որոնք նրանք պետք է մղվեն: Մարդիկ հոգնել են անհավատությունից ու կեղծավորությունից:

Առաջ էլ են եղել անբան ու ծույլ մարդիկ, որոնք նստել են պետության վզին: Սակայն այժմ ճրիակերությունն ու անբանությունը, փողը կուռք դարձնելն ու հաճույքամոլությունն աստվածացվում են զանգվածային լրատվության բոլոր միջոցներով:

Ինչպե՞ս եք պատրաստվում շարունակել ձեր երթը, և ինչպե՞ս պետք է Ռուսաստանն ի կատար ածի իր աստվածային առաքելությունը, եթե այլանդակությունն է դեռևս դեկլարում պարահանդեսը: Դեռ երբեք Ռուսաստանում այնպես չէր եղել, որ անբարոյականությունն ու ստորակարգությունը ձեռք բերեին համարյա պետական քաղաքականության կարգավիճակ:

Աշխարհիկ կյանքից և հեռատեսիլի էկրաններից այլանդակության ու ստորակարգության հեռացումը դիտվում է որպես դեմոկրատիայի հիմքերի խարխուլում:

Գիտակցությունը նախ և առաջ պետք է հասու լինի դեմոկրատիային: Այդ դեպքում կարելի կլիներ և քննարկման դնել դեմոկրատիայի թեման: Բայց այժմ հարկավոր է զարկել բոլոր զանգերը և փրկել այն, ինչը դեռևս հնարավոր է փրկել այն դիվային իշխանակազմի ձեռքից, որը դեկլարում է պարահանդեսը:

Լքջորեն մտորել է պետք Ռուսաստանի բնակիչներին: Ոչ մի ամենալավ կառավարություն ոչինչ չի կարող անել, եթե ժողովուրդն անհավատ է ու խավարամիտ:

Իհարկե, հեշտ է կառավարել ժողովրդին, եթե նրա գիտակցությունը ամենացածր մակարդակի վրա է: Ողջ կառավարումն ի կատար է ածվում կենդանական բնագոյների մակարդակով: Սակայն ու՞մ է պետք այն հասարակությունը, որի անդամները մտածում են միայն իրենց ֆիզիկական մարմնի մասին և խալառ մոռացել են Աստծո և հոգու մասին:

Ըստ այդմ՝ ես եկել եմ և դեռ էլի՝ կգամ ու կխոսեմ, քանի դեռ աստվածային հնարավորությունը չի ավարտված: Ժամանակն է լքջորեն խորհելու Ռուսաստանի ապագայի մասին և գործելու այն մտայնությամբ, որ թշնամին արդեն դռան առջև է: Պահանջվում է ժողովրդական համախմբում ընդդեմ անաստվածության ու այլանդակության: Երբեք չեմ հոգնի կրկնելուց, որ ապագա սերնդի կրթության պատասխանատվությունն ընկած է բոլոր նրանց վրա, ովքեր հիմա որոշումներ են ընդունում և որոնցից կախված է ինչ-որ բան:

Այժմ Ռուսաստանը հասել է բեկումնային կետի: Իսկ հակադիր ուժերը նշանակալիորեն գերակշռում են:

Ուստի դուք, որ հիմա կարդում եք այս տողերը, մի՛ կարծեք, թե դա ձեզ չի վերաբերում, թե դուք իշխանության մեջ չեք, և ձեզնից ոչինչ կախված չէ: Ազգի ընդհանուր ենթագիտակցականը ձևավորվում է ձեզնից յուրաքանչյուրով: Իսկ հերոսություն հնարավոր է դրսևորել ոչ միայն մարտի դաշտում:

Դեռևս ժամանակ կա: Բայց հնարավորության դռներն ուր որ է կփակվեն:

Ամեն անգամ գալիս եմ, և ամեն անգամ փորձում եմ ձեր հոգիներն արթնացնել քնից:

Արթուն հոգին չի հարցնի, թե ինչ անի, և չի սպասի հստակ ցուցումների: Արթուն հոգին գործում է ներքին ցուցումներով և պատրաստ է սխրանքի՝ որտեղ էլ այն դրսևորվելու լինի: Եվ երբեմն շատերիդ համար սխրանք է լինում հենց այն, որ հրաժարվեք այն ամենից, ինչը նպաստում է հասարակության բարոյական նորմերի անկմանը՝ ակոհոլից, թմրանյութերից, ծխախոտից, գիտակցությունը մթազնոդ երաժշտությունից, հեռուստատեսության ու ռադիոյի անճաշակ հաղորդումներից: Փող շինելու ողջ այդ «ինդուստրիան» գոյատևում է միայն այն բանի շնորհիվ, որ դուք նրան կերակրում եք ձեր փողերով ու ձեր էներգիայով:

Հասարակությունը հիվանդ է: Սակայն եթե բարեփոխման հնարավորությունը չլիներ, իմաստ չէր ունենա մեր գալն ու մեր ուղերձներ տալը:

Հավանականություն կա, որ ամեն ինչ կփոխվի և կփոխվի դեպի լավը: Հարկ է, որ այդ հավանականությունը գերազանցի 50 տոկոսը, իսկ դա տեղի կունենա միայն այն դեպքում, երբ դուք ոչ միայն կարդաք իմ խոսքերը, այլ նաև դրանք կիրառեք ձեր կյանքում:

Ռուսներ չեն պայթում, բայց մարդիկ կարծես մահանում են ռմբակոծությունից: Եվ, որ ավելի վատ է, մահանում են նրանց հոգիները: Մահանում են հանդարտ և անիմաստ: Երկիրը չի բռնազավթված, բայց մարդիկ ենթարկվում են ամենադաժան կոտանքների այն թշնամու կողմից, որը թաքնված է յուրաքանչյուրի տանը՝ մարդկային գիտակցության մութ անկյուններում:

Ես այսօր եկա Ռուսաստանի մարդկանց հետ լուրջ խոսակցություն վարելու համար: Եվ ես հավատում եմ այդ երկրի մեծ ապագային:

Միշտ էլ ամենամութ գիշերվան փոխարինել է լուսաբացը: Եվ ես հուսով եմ, որ աստվածային գիտակցության լուսաբացը դեռևս հասանելի կլինի Ռուսաստանի մարդկանց համար:

ԵՍ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

Վեհապետ Սեն Ժերմեն

9 հունիսի, 2010 թ.

Ոսկեդարը պետք է վեր հառնի նախ և առաջ ձեր էության խորքում

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը...

Մեր վերջին հանդիպումից հետո այնքան էլ քիչ ժամանակ չի անցել: Եվ, ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էի ես զբաղված ողջ այդ ընթացքում: Ուշադրությամբ հետևում էի, թե ձեզնից ո՞վ քաջություն կորսե՞ր, որպեսզի մոտենա և ոսկե սկուտեղի վրայից վերցնի ընձեռված աստվածային հնարավորությունը:

Հիշեցնեմ, որ մենք խոսում էինք Ոսկեդարի կառուցման մասին*: Եվ ասացինք, որ պահանջվում են խիզախ ու նպատակասլաց մարդիկ, ոպեսզի իրենց վրա վերցնեն Վեհապետների մտահղացման իրականացման գործը:

Եվ ես հիմա չեմ կարողանում ծիծաղս զսպել, երբ հիշում եմ, թե ինչե՞ր տեսա այս ընթացքում: Իրոք, ռուս մարդկանց մտածելակերպն ու մենտալիտետը շատ խիստ տարբերվում է ամերիկյանից: Ի՞նչ նախաձեռնեցին ռուսները. ձեռնամուխ եղան համայնքներ ստեղծելու գործին և այս ու այնտեղ սկսեցին շենքեր ու բնակատեղիներ կառուցել:

Արևմուտքում ոչ մեկը նման ձևով գործ չէր նախաձեռնի: Դուք նույնիսկ չմտածեցիք էլ, թե այդ ամենն ինչպե՞ս պետք է աշխատի: Պլան չկազմեցիք:

Եվ ինչպե՞ս եք մտադիր գործել Համբարձյալ Վեհապետների առաջնորդությամբ, որպեսզի ի կատար ածեք նրանց պլանները, եթե նույնիսկ հարկ չհամարեցիք ուշադրություն դարձնել այն գլխավոր պայմանին, որը դրված է ձեր և աստվածային հնարավորության միջև: Այն է՝ անցնել անհրաժեշտ թեստերով, որպեսզի վստահ լինեք, որ գործում եք Վեհապետների համար, ծառայում եք Վեհապետներին, այլ ոչ թե ձեր էգոյի ինչ-որ քմայքներին ու հետաքրքրություններին:

Ոչ ոք լրջորեն չմտածեց այն հարցի շուրջ, թե ինչպե՞ս է հնարավոր կյանքի կոչել Վեհապետների պլանները՝ առանց ունենալու Նրանց վստահության քվեն:

Հավատացե՛ք ինձ և իմ փորձին. դուք հաջողության չեք հասնի, քանի դեռ համահունչ չեք դառնա Աստծո Աշխարհի հետ: Հարկ չկա, որ Ոսկեդարը կառուցեք ձեզնից դուրս: Ոսկեդարը պետք է վեր հառնի նախ և առաջ ձեր ներսում՝ ձեր էության խորքում: Իսկ դրա համար հարկ է, որ փոխեք ձեր գիտակցությունը և ձեր ներքին էությունը: Եվ այն, ինչ արտաքին աշխարհում է՝ ձեզնից դուրս, հնազանդորեն կնմանվի ձեր ներսի եղածին:

Որքա՞ն ենք մենք Ուսմունք տվել այն մասին, որ աշխարհը պարզապես ձեր գիտակցության արտացոլանքն է: Եվ ամեն անգամ, երբ ինչ-որ բան եք նախաձեռնում, դուք իսպառ մոռանում եք այդ պարզ ճշմարտությունը:

Մեզ իրոք ոգու ասպետներ են պետք՝ գործիչներ, որոնք պատրաստ են իրենց կյանքը նվիրաբերելու Երկրի մարդկությանն ու Մեծ Սպիտակ Եղբայրությանը ծառայելուն: Բայց ինչի՞ց եզրակացրիք, որ հարկավոր է կառուցել որոշակի քանակությամբ շենքեր ու ավաններ: Մի՛ մտածեք արտաքինի մասին: Մտածեք ձեր հոգու որակների՝ մասին: Արտաքինն ինքն իրեն կլինի, եթե ձեր ներսում ոսկու բնակտորներ չողջողան՝ ձեր աուրան գունազարդելով ոսկեգույնի պայծառությամբ:

Մենք գալիս ենք Ուսմունք տալու, հետո ուշադիր հետևում ենք, թե ինչպես եք դուք այն կիրառում գործնական կյանքում: Եվ երբեմն այն տպավորությունն է ստեղծվում, թե ավելի լավ կլինե՞ր՝ ոչինչ չանել, քան թե անելը այնպես, ինչպես սովորաբար անում եք: Ներքին և արտաքին աշխատանքների միջև պետք է գտնվի ոսկե միջինը: Բայց ամեն դեպքում ներքին աշխատանքին պետք է նախապատվություն տրվի: Մի՞թե ձեզ համար հերիք չեղավ սոցիալիստական փորձը: Երևի որոշեցիք, որ հիմա՝ էլ է պետք այնպիսի բաներ կառուցել, ինչպես այն ժամանակներում էր՝ գետեր շուռ տալ հակառակ ուղղությամբ, բերնբերան լցնել պետական շտեմարանները կամ կառուցել արդյունաբերական հսկաներ:

Պետք չէ արժեզրկել մեծ գաղափարը: Կա՛նգ առեք և մտորե՛ք: Նախ և առաջ հարկ է, որ նստեք դասասեղանի առջև և սերտեք Աստծո Օրենքի հիմունքները: Հարկ է, որ մուտք գործեք Համբարձյալ Վեհապետների մենաստանները և անցնեք ողջ ուսուցման դասընթացը: Հարկ է, որ նախապես հրաժեշտ տաք ձեր տգիտությանը և հեշտ հաղթանակի հասնելու հավակնությանը:

Ոսկեդարը կառուցողները դուք չեք: Վեհապետներն են կառուցելու Ոսկեդարը: Իսկ դուք միայն ոտք ու ձեռք եք ծառայելու Վեհապետների համար: Եվ ձեր շինարարության արդյունքը նախ պետք է երևա այնպիսի բարեմասնությունների ձեռքբերման տեսքով, ինչպիսիք են հնագանդությունը, խոնարհությունը, նպատակապացությունը:

Ձեզ դու՛ր է գալիս առաջինը լինելու գաղափարը: Հրաշալի՛ է: Ապացուցեք, որ ներքուստ պատրաստ եք այդ դերի համար: Հեռու՛ վանեք ձեզնից զառամ եսասիրությունը: Համահուն՛չ եղեք Վեհապետների հետ: Դե, թեկուզ նախ պայմանավորվե՛ք մեր դեսպանորդի հետ: Հետաքրքիր է, որ հատկապես մեր անհաջողակ աշակերտներից շատերը նետվեցին զբաղվելու համայնքային շինարարության գործով: Ձեզ ոչ թե կառուցել է պետք, այլ նորից նստել առաջին դասարանցու դասասեղանի առջև, որովհետև դեռ չեք յուրացրել Համայնքի հիմունքները: Իսկ ձեր հասկացած համայնքը ոչ մի բանի պետք չէ: Ես ձեր աշխատանքը երկուսից հանած եմ գնահատում...

Սոցիալիստական ժամանակների շատ շինարարներ անհամեմատ ձեզնից առաջ էին իրենց գիտակցությամբ: Քանզի նրանք իրոք աշխատում էին ի շահ Ընդհանուր Բարօրության և ամբողջովին նվիրված էին գաղափարին: Իսկ դուք նվիրվել եք ձեր էգոյին և զբաղված եք նրա հետաքրքրությունները բավարարելով:

Ինչպես տեսնում եք, բոլոր ժամանակներում էլ եղել են հոգևոր նվաճումների հասած մարդիկ, նույնիսկ այն ժամանակներում, որոնք ընդունված է նույնացնել անաստվածության հետ:

Ցանկացած պայմաններ, ցանկացած հասարակարգ և ցանկացած հանգամանքներ Աստված օգտագործում է, որպեսզի դուք կարողանաք զարգանալ: Որպեսզի ձեր հոգիները կարողանան զարգանալ: Եվ ձեր օրերում նույնպես դուք կարող եք լիովին դրսևորել ասպետական հատկանիշներ: Ու՛ր են այն իսկական ասպետները, որոնք պատրաստ էին հանուն իրենց սիրեցյալի զոհաբերելու սեփական կյանքը: Միայն թե մի՛ ասեք ինձ, թե ժամանակները փոխվել են: Ասպետական ոգին՝ հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելու ունակությունը, երբեք չի վերացել: Արիություն, քաջություն, խիզախություն, անվեհերություն, հավատարմություն, պատիվ և արժանապատվություն. ինչու՞ եք մոռացության մատնում հոգու այս հատկանիշները:

Հարկ կլինի, որ մանրագնին կերպով քրքրեք և գտնեք ձեր հոգում այդ հատկանիշները, քանի որ դրանք ձեզ անպայման պետք կգան մոտակա ժամանակներում:

Իսկ անցյալի ասպետական մենամարտերը լիովին կարող են փոխարինվել մեծագույն ձեռնադրյալների աշխատանքների իմացության մրցումներով: Ո՛չ այն ձեռնադրյալների, որոնք իրենք են իրենց այդպիսին համարում և հանուն փողի սեմինարներ կազմակերպում, այլ Նրանց, որոնց անունները հավերժացված են պատմության մեջ՝ Պյութագորաս, Օրիգեն, Կոնֆուցիոս, Սոկրատես, Լաո Ցզի, Բլավատսկայա...

Առանց գիտելիքի սրին տիրապետելու, առանց ձեր էգոյի ձիուն սանձահարելու՝ դուք չեք կարողանա դառնալ բոլոր ժամանակների Խոսքի ասպետ:

Մի՛ վախեցեք անհաջողությունից, մի՛ վախեցեք սխալվելուց: Հետևե՛ք մեր ցուցումներին. բոլոր ուղենիշերն առկա են ուղու վրա, նշված են Ուղու բոլոր ոլորանները և վտանգավոր հատվածները:

Միայն կատարյալ անշնորհքներն ու ծուլերը չեն կարողանա հաղթահարել ակնկալվող խնդիրները:

Ո՛վ ոգու ասպետներ, զբաղվեք արժանավայել՝ գործերով, այլ ոչ թե պառկեք բազմոցին և հեռուստացույց դիտեք: Վեր կացեք ձեր տեղից և գոնե մի երկու քայլ արեք մեր մատնանշած ուղղությամբ...

*Տես՝ 2010 թ.-ի հունվարի 10-ի ուղերձը

Հառութամա Բուդդա
10 հունիսի, 2010 թ.

Չրույց բնավորության որոշ բացասական գծերի հաղթահարման անհրաժեշտության վերաբերյալ

ԵՄ ԵՄ Հառութամա Բուդդան:

Ուրախ եմ մեր նոր հանդիպման առիթով... Այսօր կուզենայի կանգ առնել ձեր հոգեբանության որոշ խնդիրների վրա, որոնք կարող են խոչընդոտել հոգևոր ուղով ձեր առաջընթացին: Եվ հատկապես ես կուզենայի իմ գրույցում հատուկ առանձնացնել Ռուսաստանի բնակիչների վարքի հոգեբանական որոշակի առանձնահատկությունները, քանզի, այնուամենայնիվ, ապագայի մեր հույսերը կապում ենք այդ երկրի հետ:

Եվ այսպես, կան ազգային բնավորության որոշ գծեր, որոնք խոչընդոտ են հանդիսանում հոգևոր ուղու վրա: Ահա դրանցից մեկը՝ ցանկացած հաջող սկիզբը ձախողելու անհաղթահարելի ցանկությունը: Կարծես դեն ամեն ինչ խառնշտորում է, երբ հանկարծ ինչ-որ լուսավոր բան է տեղի ունենում: Ամմիջապես հայտնվում են այդ լուսավորը սևացնելու և մթագնելու սիրահարները: Եվ նման բան մշտապես տեղի է ունենում ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև երկրագնդի այս կամ այն վայրում: Ձեզ ծանոթ է այն, ինչի մասին խոսում եմ: Եկե՛ք կյանքից կոնկրետ օրինակ բերենք: Ենթադրենք, թե ձեր ծանոթը կամ հարևանը հասարակական կարևորություն ունեցող ինչ-որ գործ է անում: Ասենք՝ բարեկարգում է տարածքը, ծառեր է տնկում, նստարաններ է տեղադրում: Կարծում եք՝ նրա գործն արժանանում է համընդհանուր հավանության: Բոլորովին ո՛չ: Ամմիջապես հայտնվում են նրանք, ովքեր տնկիները փչացնում են ու ջարդում նստարանները:

Նման արարքների պատճառները թաքնված են աուրայի էներգիաներում և մաքրագործում են պահանջում: Հենց այդ էներգիաներն են ենթագիտակցական խառնակիչների դեր կատարել ռուսական շատ խռովությունների ու հեղափոխությունների ժամանակ: Եվ այդ էներգիաներն այնպիսի խոր արմատներ են ձգել ազգի ենթագիտակցության մեջ, որ այդ կարմայական կծիկը հնարավոր է քանդել միայն ողջ աշխարհի ուժերով:

Եվ հիմա, երբ տարբերակում է ընթանում. հասարակությունը շերտավորվում է ունևորների և չունևորների, այդ էներգիան նորից սկսում է գլուխ բարձրացնել: Թեև խռովություններ չկան, բայց տնկիների ու նստարանների օրինակը շատ բնորոշ է ներկայի համար: Եվ դա ցույց է տալիս, որ ազգի այդ չբեռնաթափված էներգիաները շարունակում են իրենց ավերիչ գործողությունը: Մեծագույն մասով՝ մտքերի ու զգացմունքների ոլորտում: Այժմ խնդիրն այդ բացասական էներգիաների հաղթահարումն է:

Բերեմ կյանքից ևս մեկ օրինակ: Ձեր հարևանը նոր մեքենա է գնել կամ վերանորոգել է իր բնակարանը: 100-ից 90 տոկոսի դեպքում կողքից արձագանքը բացասական է լինում: Ձեր մեջ գլուխ է բարձրացնում նախանձը կամ որևէ այլ բացասական զգացմունք:

Հենց այդ չարացածությունն ու նախանձն են ընկած ձեր ու այն հրաշալի ապագայի միջև, որի մասին ասում են Վեհապետները. իրավիճակին հարմարվել չկամենալն ու ամեն մի լուսավոր ու դրական բանի ծիլերը ռոնատակ տալու ցանկությունը, որտեղ էլ դրանք երևալու լինեն: Դուք երբեք երջանիկ չեք լինի և կյանքից բավարարություն չեք ստանա, քանի դեռ ձեր հաշիվները չեք փակել այդ բացասական էներգիաների հետ: Դա մեկն է այն հիմնական Ուսմունքներից, որոնք ես տվել եմ Հառութամա Բուդդա եղածս ժամանակ: Դուք պետք է ուրախանաք ուրիշ մարդկանց ձեռքբերումներով: Պետք է անկեղծորեն ուրախանաք: Այդ դեպքում դուք կկարողանաք ձեռք բերել այն մարդկանց բարեմասնությունները, որոնք արարում են՝ ի հեճուկս պատրանքի դիմադրության: Եվ եթե մի արդար արարքը դրական արձագանք գտնի տասը մարդու սրտում, ապա այն տասնապատիկ կշատանա:

Իսկ ձեր դեպքում՝ դուք ձեր բացասական արձագանքով ի չիք եք դարձնում մարդկանց հոգու ամենահրաշալի պոռթկումները: Եվ ամենատարածված արտահայտությունը հետևյալն է լինում. «Դու, ի՞նչ է, բոլորից շա՛տ ես ուզում ունենալ»:

Իսկ ճիշտ արտահայտությունը, որը պետք է հնչի ձեր շուրթերից, հետևյալը պետք է լինի. «Ծնորհակալ եմ քո ջանքերի համար, որոնք ուղղված են բարիքը շատացնելուն»:

Շատերի լեզուն պարզապես չի պտտվի նման արտահայտություն արտաբերելու համար: Հիմա դուք համարյա թե ֆիզիկապես պետք է զգաք ձեր մեջ այդ էներգիայի առկայությունը, որն ամենից առաջ արգելակում է հենց Ուղով ձեր անձնական առաջընթացը:

Կա և այդ բացասական հատկանիշի մյուս կողմը, որը մոլորեցնում է մարդկանց և կաշկանդում նրանց ամենալուսավոր մղումները: Դա ձեռք բերվող փողերը ծախսելու անհագ ցանկությունն է: Դուք աջ ու ձախ փողեր եք շաղ տալիս, որպեսզի ստանաք ամենաանբնականայնի բաներն ու հաճույքները: Դրան Աստծո էներգիայի փոխարժեքն է ձեր աշխարհում: Եվ այն մարդիկ, որոնց տնօրինմանն է հանձնվում դրամական մեծ էներգիա, մեծ թեստ են անցնում՝ այդ էներգիան խելամիտ օգտագործելու առումով: Եվ եթե գոնե մի ակնթարթ մտորեք այն մասին, թե որքան կարմա եք ստեղծում դրամական էներգիայի անիմաստ ծախսումով, նաև այն մասին, որ այդ կարման անխուսափելիորեն այս կամ հաջորդ մարմնավորման ընթացքում վերադառնալու է ձեզ աղքատության, չքավորության և անօթևանության տեսքով, ապա հնարավոր է, որ ավելի մտածված ձևով վերաբերվեք Աստծո էներգիային ընդհանրապես և դրամական էներգիային՝ մասնավորապես:

Եթե թերահավատությամբ եք վերաբերվում վերամարմնավորումների ուսմունքին և քիչ եք մտահոգված հաջորդ մարմնավորմամբ, ապա գոնե մտածեք ձեր երեխաների ու թոռների մասին, որոնք իրենց վրա են վերցնում ձեր անգույս վատնումների կարմայի մի մասը և արդեն տառապում հենց այս կյանքում՝ կրելով զանազան տկարություններ ու կապվածություններ:

Եթե ձեր տրամադրության տակ հայտնվում են դրամական միջոցներ, ապա դրանից չի հետևում, որ դրանք պետք է ծախսեք հաճույքների ու ժամանցների վրա: Աստված ձեզ միաժամանակ հնարավորություն է տալիս ճիշտ տնօրինելու ձեր փողերը: Արդ, համակշռե՛ք ձեր կարման և ձերբազատվե՛ք անցյալի մարմնավորումների կարմայից: Այն է՝ ձեր դրամական էներգիան պետք է հատկացնեք Համընդհանուր Բարօրությանը: Քանզի դրամական փորձությունը հնարավոր է հաղթահարել՝ միայն խելամիտ ձևով ծախսելով դրամը: Այդ դեպքում հին կարման բեռնաթափվում է, և չի ստեղծվում նորը:

Նորից դիմում եմ այն մարդկանց, որոնք նախանձ կամ այլ բացասական հույզեր են ապրում ուրիշների ունեցածից: Որպեսզի հաղթահարվի այն պատենշը, որն ընկած է ընթացիկ պահի և ձեր հետագա լիառատ կյանքի միջև, պետք է հաղթահարեք ձեր մեջ առկա բացասական էներգիաները, համակերպվեք ստեղծված իրադրության հետ և կարողանաք ուրախանալ ուրիշի ձեռքբերումով:

Շատ լավ եմ հասկանում, որ խորհուրդ տալն ավելի հեշտ է, քան այն կյանքի կոչելը: Սակայն ձեր անցյալի կարմայի բեռնաթափման անհրաժեշտությունը որոշակի պայմաններ է թելադրում, որոնք պետք է պահապանեք, որպեսզի անցնեք կարմայի գազաթնակետից: Այլապես տեղի կունենա այն, ինչ տեղի է ունենում, երբ տիրապետող է դառնում անմտությունը. դուք անխուսափելիորեն ձեզ կմոտեցնեք հերթական արհավիրքը և կարման կրեռնաթափեք արագացված ռեժիմով:

Մենք ձեզ ուսուցանում ենք ավելի հեշտ և անվտանգ ուղին: Սակայն, չգիտես ինչու, դուք այն անընդունելի եք համարում: Եվ բնավորության որոշ գծեր չեք կարողանում հաղթահարել նույնիսկ համամոլորակային աղետի վտանգի առկայության դեպքում: Ձեզ թվում է, թե համենայն դեպս այս մարմնավորման ընթացքում դա ձեզ չի սպառնա:

Ես խորհուրդ կտայի, որ լայնացնեիք ձեր ընկալումների շրջանակները և ձեր գիտակցությամբ դուրս գայիք մեկ մարմնավորման սահմաններից: Այդ դեպքում ձեզ համար ավելի հեշտ կլինի կշռադատված որոշումներ կայացնելը, որպեսզի բեռնաթափեք հին կարման և չստեղծեք նորը:

Ես ուրախ կլինեմ, եթե այսօրվա իմ գրույցն օգտակար լինի ձեր հոգիների զարգացման համար:

ԵՄ ԵՄ Հատկաժամա Բուդդան

Մայր Մարիամ
11 հունիսի, 2010 թ.

Երջանիկ կյանքի ողջ մեխանիզմը դրված է ձեր ներսում

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը՝ այսօր կրկին ձեզ այցի եկածը:

Ձեզնից շատերն այսօրվա մեր հանդիպումը երկար կհիշեն: Քանզի ձեր արտաքին գիտակցության համար կասեմ մի բան, որը ձեզ հնարավորություն կտա հիշելու իմ Մենաստանում ինձ հետ ունեցած ձեր հանդիպումները:

Շատերը ձեզնից, հատկապես նրանք, ովքեր առանձնահատուկ հոգեհարազատություն են զգում իմ նկատմամբ և կարդում իմ Վարդարանները, գիշերային քնի ընթացքում այցելում են իմ Մենաստանը: Եվ ես հնարավորություն եմ ունենում գրուցելու ձեզ հետ: Թեև արթնանալուց հետո դուք մոռանում եք մեր գրույցները, այնուամենայնիվ դրանք այս դժվար ժամանակներում զգալիորեն օժանդակում են ձեր հոգուն:

Շատերիդ հոգիները չեն դիմանում այն ամենին, ինչ տեղի է ունենում ձեզ շրջապատող կյանքում: Եվ, գալով ինձ մոտ, դուք սովորաբար տրտնջում եք ձեր կյանքից և խնդրում, որ ձեզ հանեմ մարմնավորումից: Շատ ու շատ հոգիներ՝ ամենալուսավորներն ու մաքուրները, ոչ մի կերպ չեն կարողանում հարմարվել ֆիզիկական ոլորտում տիրող իրականությանը, և նրանց հոգիները նմանվում են ցեխի մեջ ոտատակ ընկած վարդերի: Եվ ամեն գիշեր, երբ ես հնարավորություն եմ ունենում հանդիպելու ձեզ, հարթեցնում եմ ձեր թերթիկները և լվանում դրանք իմ արցունքներով:

Ես շատ լավ եմ հասկանում ձեր դրությունը: Սակայն, սիրելիներս, ձեր աշխարհի վիճակն այժմ այնպիսին է, որ լավագույն հոգիներն այդտեղ իրենց ճնշված են զգում և չեն ուզում ապրել: Մինչդեռ այն մարդիկ, որոնք աչքի չեն ընկնում մեծ բարեմասնություններով, այդտեղ իրենց հրաշալի են զգում:

Պաշտելիներս, ձեր հոգիներն իրենց վրա ծանր բեռ են վերցրել՝ մարմին առնելով Երկրի համար այս բարդ ժամանակներում: Եվ ես միայն կարող եմ հիշեցնել ձեզ այդ մասին, մխիթարանքի խոսքեր ասել և սրբել ձեր արցունքները: Բայց ձեզ վիճակված է շարունակել ձեր առաքելությունները: Ձեզնից յուրաքանչյուրը շատ թանկ է իմ սրտին, և ինձ հետ ունեցած այդ հատուկ կապը միշտ ձեզ օգնության կհասնի այն պահերին, երբ ձեզ կթվա, թե այլևս ուժ ու հնարավորություն չունեք դիմանալու ձեր շուրջը տիրող կոպտությանն ու տգիտությանը:

Ձեր կյանքի ամենադժվար պահերին ձեր մեջ ուժ գտեք, որպեսզի մտնեք ինձ հետ մտավոր հաղորդակցության մեջ: Պարզապես մտածեք իմ մասին, և ես կկարողանամ ներկա լինել ձեր կողքին ու թեթևացնել ձեր բեռը: Եվ թեթևանալով դուք կկարողանաք շարունակել ձեր կյանքն ու մինչև վերջ իրականացնել ձեր Սպասավորությունը:

Ձեր Սպասավորության մեջ տեղ ունի և այն, որ լսեք շրջապատի մարդկանց քմիծաղը, դիմանաք ձեր շուրջը տիրող կոպտությանը: Սակայն, պաշտելիներս, չարժե, որ սկսեք դատապարտել: Ես և իմ քույր Գուան Ինը ձեզ ուսուցանում ենք, որ կարեկացանքով վերաբերվեք այն մարդկանց հոգիներին, որոնք գտնվում են պատրանքի իշխանության տակ: Գեղեցիկի նկատմամբ այն անհագ կարոտը, որն առկա է շատ մարդկանց հոգիներում, բայց համապատասխան նմուշներ չի գտնում շրջապատող աշխարհում, հանգեցնում է ներքին ավերածության և վերածվում խռովքի, որն արտահայտվում է վնասակար սովորություններով. և դա այլ բան չէ, քան ինքնակործանման ձգտում:

Ձեզ բոլորիդ չի հերիքում սերն ու ներդաշնակությունը: Ինչ-որ ժամանակ ձեր արարքներով դուք վատ կարմա եք ստեղծել և հիմա վայելում եք դրանց պտուղները: Պաշտելիներս, եթե դուք հիմա լսում եք ինձ, եթե իմ խոսքերը ձեր հոգում արձագանք են գտնում, ապա խնդրում եմ, հիշե՛ք, որ ձեզ բաժին հասած ողջ ծանրությունն ինքներդ եք ստեղծել անցյալի ձեր սխալ արարքներով: Ուստի ես չեմ հոգնում ձեզ հիշեցնելուց զոջման և այն մասին, որ ընդունեք անցյալի ձեր մեղքերն ու սխալ արարքները:

Հենց որ ներքուստ ընդունեք, որ ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչը ձեր իսկ ստեղծածն է, դուք կկանգնեք միակ ճշմարիտ ուղու վրա: Եվ եթե հաստատականորեն ընթանաք այդ ուղով, ապա այն ձեզ դուրս կհանի կյանքից դժգոհելու և ապրել չցանկանալու փակուղային վիճակից: Դուք կզգաք տարբերությունը ձեզ շրջապատող կյանքի և Աստծո պատգամած կյանքի միջև: Ձեր շրջապատում դուք կկարողանաք գտնել այն գեղեցիկը, որը կյանքում առկա է, բայց վրիպում է ձեր հայացքից, քանի որ մշտապես մղվում եք այն ուղղությամբ, որը ցուցանում են լրատվության զանգվածային միջոցները:

Մենք չենք կարող նույնքան բարձրագույն լինել, որքան ձեր լրատվության զանգվածային միջոցներն են: Մեր ձայները նման են խոտի սոսափյունի և առվի հանդարտ խոխոջյունի, ուստի անհրաժեշտ է, որ ձեր ներքին ընկալումը համալարեք մեր ալիքի հետ: Եվ այնժամ մենք կկարողանանք մեձենալ իրար: Եվ դուք կրկին ձեռք կբերեք կյանքի ուրախությունն ու ձեր գոյության իմաստը: Երբ ձեր հոգին լցված է լինում Աստծո էներգիայով, դուք ձեզ երջանիկ եք զգում, քանի որ Աստծո էներգիան ունակ է ձեր թրթիռները հասցնելու ձեզ համար հնարավոր ամենահրաշալի վիճակներին՝ հրճվանքի, սիրո, ներքին ներդաշնակության ու անդորրի:

Ցավոք, ձեր աշխարհի երևույթների մեծ մասն ուղղված են հատկապես այն բանին, որ իջեցնեն ձեր թրթիռները, որի հետևանքով դուք գրկվում եք Աստծո Աշխարհի հետ համահնչունությունից և դառնում ապերջանիկ:

Ես անում եմ ինձնից կախված ամեն ինչ, որ ձեզ հիշեցնեմ աշխարհի հրաշագեղության մասին: Աշխարհի ձեր ընկալումը փոխվում է՝ այն բանից կախված, թե համահու՞նչ եք արդյոք Աստծո Աշխարհի հետ, թե՛ կտրված եք Աստծո Աշխարհից:

Ձեր շրջապատում շատ բաներ կան, որ կարող են իջեցնել ձեր թրթիռները, և դուք ապերջանիկ եք դառնում միայն այն բանի պատճառով, որ ինքներդ ձեզ շրջապատել եք սխալ, ոչ աստվածային կերպերով:

Իհարկե, Աստծո Աշխարհի հետ ձեր համահնչունությունը դրսևորվում է ձեր ներսում՝ ձեր սրտերում: Սակայն դուք պետք է հոգ տանեք, որ ձեր այդ համահնչունությունը չխափանվի ձեր աշխարհի անորակ դրսևորումների պատճառով: Ես հասկանում եմ, որ շատ դժվար է ապրել աշխարհում և չկրել դրա ազդեցությունը: Բայց եթե ձեր սրտերում նախընտրում եք համահունչ մնալ Աստծո Աշխարհի հետ, ապա ունակ եք դառնում աստիճանաբար փոխելու ձեզ շրջապատող իրականությունը՝ քայլ առ քայլ, մեկը մյուսի հետևից վերացնելով ցածրորակ դրսևորումները:

Ամեն ինչը, պաշտելիներս, իր առանձնահատուկ թրթռանքն ունի: Ամենայն ինչ թրթռանք է: Ձեր սնունդն օժտված է որոշակի թրթռանքով, ձեր երաժշտությունն օժտված է որոշակի թրթռանքով: Որոշակի թրթռանքով են օժտված ձեր քաղաքների ճարտարապետությունը, ձեր ամենօրյա գործածության իրեղենն ու առարկաները: Իրերի մի մասը դրական թրթռանք ունեն, մյուսները՝ բացասական: Եվ երբեմն ընդամենը մեկ աններդաշնակ իրը կարող է ձեզ գրկել հոգեկան հանգստությունից ու ներդաշնակությունից:

Որքան առանձնահատուկ զգույշ պիտի լինեք, երբ ձեզ ենթարկում եք անընդհատ միացված հեռուստացույցի և ռադիոընդունիչի ազդեցությանը: Դուք մշտապես ձեզ ենթարկում եք կասկածելի բնույթ ունեցող նմուշների ազդեցությանը, որի հետևանքով երկար ժամանակով կորցնում եք գիտակցության աստվածային վիճակ ապրելու, Աստծո Աշխարհի հետ համահունչ լինելու հնարավորությունը: Իմ ասածներն այնքան բնական բաներ են, որ ես տարակուսում եմ, երբ տեսնում եմ, որ ինձ լսելուց, նույնիսկ ինձ հետ համաձայնելուց հետո, հենց որ ավարտում եք իմ ուղերձի ընթերցումը, անմիջապես նորից անցնում եք ձեր հին կենսակերպին:

Հարկ է, որ հավատարիմ մնաք մեր հանձնարարականներին, և այդ դեպքում ստիպված չեք լինի իմ Մենաստանում արցունքներ հեղելու և կյանքից դժգոհելու:

Երջանիկ կյանքի ողջ մեխանիզմը դրված է ձեր ներսում: Ինչու՞ չեք օգտվում դրանից:

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը, ձեզ հետ եղա այսօր

Վեհապետ Կուրծիումի

12 հունիսի, 2010 թ.

Ուսմունք թրթռանքների և այն ամենի փոխկապակցվածության մասին, ինչ գոյություն ունի Երկրի վրա

ԵՄ ԵՄ Կուրծիումին:

Հույս ունեմ, որ մեր այսօրվա գրույցը ճանաչողական նշանակություն կունենա ձեզ համար և կստիպի ձեզ այլ կերպ նայել այն բաներին, որոնք սովոր եք տեսնել ձեր շուրջը: Ես կաշխատեմ ձեզ տալ մի հայեցակետ, որն առավելագույնս մոտ կլինի Համբարձյալ Վեհապետների այն հայեցակետին, որը վերաբերում է ձեզ շրջապատող ամեն ինչին և աշխարհի ընթացիկ իրավիճակին:

Չգում եմ, որ շարժեցի ձեր հետաքրքրասիրությունը: Մեր շատ ուղերձներում մենք մշտապես խոսում ենք թրթռանքների և դրանց բարձրացման անհրաժեշտության մասին: Այդ վերացական հասկացությունն ունի իր լիովին կոնկրետ դրսևորումը ֆիզիկական աշխարհում: Եվ եթե ջանալիք աչքի ընկնել ավելի շատ հետաքրքրասիրությամբ, ապա կհայտնաբերեիք, որ ձեր աշխարհիկ գիտության տվյալներով արդեն իսկ բացահայտված է թրթռանքների բարձրացման երևույթը: Եվ եթե գիտական հետազոտությունների արդյունքները լայնորեն լուսաբանված լինեին, ապա դա անխուսափելիորեն պայթյուն կառաջացներ ձեր գիտակցության մեջ: Դե ի՞նչ, ավելի շատ շարժեցի ձեր հետաքրքրասիրությունը, այնպես չէ՞...

Ես պնդում եմ, որ աշխարհի շատ գիտնականներ արդեն իրենց տրամադրության տակ ունեն տվյալներ այն մասին, թե ինչպես են մարդու բջջի թրթռանքները փոխվում այն կենսակերպի ազդեցության տակ, որով ապրում է տվյալ մարդը: Նաև այն մասին, թե ինչպես են այդ թրթռանքներն ազդում մարդու առողջական վիճակի վրա, մասնավորապես՝ նրա հիմնական օրգանների և համակարգերի աշխատանքի վրա:

Ամեն ինչ կարելի է չափել: Եվ ամեն ինչն ունի իր գիտական բացատրությունը: Ես ինքս մասնակցություն եմ ունեցել շատ հայտնագործությունների առաքմանը ձեր աշխարհ՝ աշխատելով կենսաբանների ու կենսաֆիզիկոսների հետ:

Մարմնի բջջերի թրթռանքներն իրարից շատ տարբեր են՝ կախված այն բանից, թե մարդն ի՞նչ սնունդ է օգտագործում, ի՞նչ պայմաններում է ապրում, վնասակար սովորություններ ունի՞, թե՞ ոչ, և նույնիսկ այն բանից, թե հակված է արդյոք տվյալ մարդը լսելու այնպիսի երաժշտություն, որն իր մեջ պարունակում է աններդաշնակ թրթռանքներ: Հենց միայն խոշոր քաղաքում ապրելն արդեն

բերում է բջիջների թրթիռների կտրուկ իջեցման: Ուստի, որքան էլ, խոշոր քաղաքում ապրելով, ջանաք անցում կատարել էվոյուցիոն զարգացման նոր աստիճանի վրա, ձեզ դա չի հաջողվի անել: Քաղաքային ինֆրակառուցվածքն արձակում է ցածրհանախային գվկոց, որը հարյուրավոր կիլոմետրերով տարածվում է գերհսկա և խոշոր քաղաքների շուրջ, իսկ տասնյակ կիլոմետրերով՝ ավելի փոքր քաղաքների շուրջ:

Ուստի այն հոգևոր նվաճումները, որոնք, իբր դուք, ունեք՝ ապրելով խոշոր քաղաքներում, միայն մեր ժպիտն են շարժում: Պետք է լրիվ անգետ լինեք և հոգևոր գործընթացներից բոլորովին գլուխ չհանեք, որպեսզի համարձակություն ունենաք վկայակոչելու ձեր բարձր հոգևոր զարգացումը՝ միաժամանակ ապրելով որևէ քաղաքում:

Հենց միայն քաղաքում ձեր ապրելն անհնարին է դարձնում ձեր բջիջների թրթիռների աճը նույնիսկ այն դեպքում, եթե ճիշտ կենսակերպ ունեք. չեք ծխում, չեք օգտագործում ալկոհոլ և թմրանյութեր, մասկեր չեք և չեք լսում ռոք երաժշտություն: Ձեր աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է, և դուք ձեր շրջապատի հետ մեկ միասնական համակարգ եք կազմում: Ուստի ձեր բջիջների թրթիռները չեն կարող ավելի բարձր լինել քաղաքների համար մատչելի առավելագույն սահմանից: Եվ թրթիռների այդ մակարդակը կարելի է չափել:

Այն դեպքում, երբ տեղափոխվում եք բնակվելու ավելի մաքուր վայր, ձեր բջիջների թրթիռները բարձրանում են: Եվ դուք ստանում եք հոգևոր աճի ու առաջընթացի հնարավորություն: Ես նկատի ունեմ ճշմարիտ հոգևոր առաջընթացը:

Այսքանից հետո ձեզ կարող է թվալ, թե հոգևոր աճի հետ կապված ձեր բոլոր ջանքերը, որոնք ձեռնարկում եք՝ ապրելով քաղաքներում, անտեղի են: Անտեղի ոչինչ չի լինում: Իհարկե, դուք չեք կարող ակնթարթորեն հասնել այն թրթիռներին, որոնք բնորոշ են Տիբեթի ճգնալյացներին: Դրան ձեր օրգաններն ու համակարգերը չէին դիմանա: Սակայն աստիճանաբար առաջ ընթանալով հոգևոր ուղով՝ դուք կնկատեք, որ քաղաքում ապրելը ձեզ համար անհնարին է դառնում, և ավելի ու ավելի շատ եք նմանվում ափ նետած ձկան:

Ամեն ինչ կարելի է փոխել, բայց պետք է իմանալ, թե ինչին ձգտել և ինչպես հասնել դրան: Հասարակությունն իր ամբողջության մեջ դեռևս անպատրաստ է ընկալելու այն պարզ ճշմարտությունները, որոնց մասին հիմա խոսում եմ: Ուստի մեզ մնում է միայն սպասել, թե երբ կհասունանաք (կամ չեք հասունանա), որպեսզի անցում կատարեք էվոյուցիոն զարգացման հաջորդ փուլին:

Պետք է փոխեք ձեր կենսակերպը: Պետք է փոխեք ձեր սովորությունները: Պետք է փոխեք սպառողական վերաբերմունքը բնության նկատմամբ:

Ցածր թրթիռներ ունեցող մարդն իր ներսում ապրելու պայմաններ է ստեղծում միլիոնավոր մակաբույծների համար: Եվ համարյա երկրի ողջ բնակչությունը մարդագլուխ եռում է դրանցով: Հենց դրանից էլ ծագում է ձեր վատ զգացողությունը, ուժերի կորուստն ու ապրել չուզենալը:

Իսկ գիտե՞ք, թե ինչն է ձեր այդ վիճակի պատճառը. ձեր վերաբերմունքը բնության, ամբողջ Կյանքի և այն ամենի նկատմամբ, ինչը ձեզ հետ համատեղ գոյություն ունի Երկրի վրա: Օրենքն իմաստուն է գործում: Երկիր մոլորակի ու բնության նկատմամբ ձեր մակաբույծ վերաբերմունքը ծնունդ է տալիս ձեր օրգանիզմում մակաբույծների բուռն աճին: Եվ ճիշտ այնպես, ինչպես մաքրիչ գործողություններով կարելի է ազատվել ձեր ներսում բույն դրած մակաբույծներից, նույն կերպ էլ Երկիրը ժամանակի ընթացքում ստիպված է լինում զբաղվել մաքրիչ գործողություններով: Եվ չարժե տրտնջալ, երբ հերթական ջրհեղեղը Երկրի երեսից սրբում է այն անհատներին, որոնք չեն ուզում հրաժարվել իրենց գիտակցության մակաբույծ վիճակից:

Էվոյուցիայի հաջորդ փուլը ենթադրում է խելամիտ համագործակցություն Երկրի և նրա վրա եղած ամեն ինչի հետ: Բայց այն կարման, որը կուտակվել է բնության նկատմամբ ձեր ունեցած գիշատիչ ու բարբարոսական վերաբերմունքի հետևանքով, դուք ստիպված կլինեք բեռնաթափելու ձեր հիվանդությունների, արհավիրքների և տեխնածին համադետների օգնությամբ:

Կարմայի վերադարձի ծանրությունը կարելի է կարգավորել գիտակցության նոր մակարդակի վրա բարձրանալու միջոցով, որին մասնակից պետք է դառնան համայն Կյանքի հետ իրենց միասնությունը գիտակցելուն ունակ ավելի ու ավելի շատ անհատներ:

Այժմ դուք գտնվում եք կրիտիկական կետում: Եվ արդեն երկրորդ հարյուրամյակն է, ինչ մարդկությունը համակշռություն է պահպանում այդ կետի վրա: Ամեն անգամ մեր միջամտությունն է օգնել, որպեսզի կանխվի իրադարձությունների անբարենպաստ զարգացումը: Սակայն ես այսօր եկա՝ որոշակի նպատակ ունենալով ձեզ տալ բանալիներ, որպեսզի դուք հնարավորինս անցավ կերպով կարողանաք հաղթահարել ճգնաժամը առաջին հերթին ձեր գիտակցության մեջ:

Այլապես ձեզ կվիճակվի ավելի ու ավելի հաճախ նորություններով լսել այն մասին, որ այս ու այնտեղ տեղի է ունեցել հերթական արհավիրքը: Կամ թե այս ու այնտեղ Երկրի երեսից սրբվել են

քաղաքներ, իսկ հետո էլ՝ մայրցամաքներ: Ապա դա ձեզ համար սովորական կդառնա, և ձեզ կթվա, թե դա բնական բան է, և այդպես եղել է միշտ:

Մարդկության հիշողությունը շատ կարճ է: Շատերը չեն հիշում նույնիսկ այն, ինչ երեկ է եղել, ու՞ր մնաց, թե խոսենք ավելի երկար ժամանակահատվածների մասին:

Որպեսզի տխուր նոտայով չբաժանվենք իրարից, հնարավոր եմ համարում ձեզ տրամադրել այն բանին, որ հավանականություն կա, որ Երկրի իրադարձությունները բարենպաստ զարգացում կունենան: Բայց այդ հավանականությունը կարող է կյանքի կոչել հենց մարդկությունը:

ԵՄ ԵՄ Կոլոթումին

Տեր Մայտրեյա
13 հունիսի, 2010 թ.

Չրույց պատրանքի աշխարհից ելնելու և Աստծո Աշխարհ մուտք գործելու մասին

ԵՄ ԵՄ Մայտրեյան:

Ես կրկին եկել եմ: Առաջվա պես այսօր ես կուզենայի ձեզ որոշ իմացություն տալ և փոխանցել ձեզ իմ գիտակցության մի մասնիկը: Մենք էներգիաներ ենք փոխանակում, և դրա ընթացքում փոխադարձաբար իրար հարստացնում ենք:

Այդ պատճառով է, որ ես գալիս եմ նորից ու նորից: Եվ ամեն անգամ հայացք եմ նետում ձեր աշխարհին:

Երբ ձեր գիտակցությունն ունակ կլինի ընկալելու հավերժական ճշմարտություններ, մենք կկարողանանք հաղորդակցվել անմիջականորեն: Իսկ քանի դեռ ձեր գիտակցությունը զբաղված է պատրանքային բաներով, մենք կարող ենք միայն կարճ ժամանակով իրար ձեռք սեղմել՝ ձեռք մեկնելով աշխարհների միջով:

Ձեր՝ տպավորություններ և մատերիական էներգիաներ ստանալու կիրքը խանգարում է մեր հաղորդակցությանը: Ձեր գիտակցությունը մշտապես կլանված է ձեր աշխարհի այլազան առարկաներով: Չկա ազատություն: Եվ քանի որ ձեր գիտակցությունը գուրկ է ազատությունից, մեր հաղորդակցությունն անհնարին է դառնում: Դուք բանտի մեջ եք: Եվ այդ բանտը ձեր այն պատրանքն է, որով շրջապատված եք մատերիական աշխարհում: Ձեր գիտակցությունը մշտապես թափառում է պատրանքի թավուտներում: Անգամ մի րոպեով դուք չեք կարողանում կենտրոնանալ մեր աշխարհի վրա: Էլ ինչպե՞ս հասկանանք իրար:

Դուք ձեր գիտակցությամբ կարող եք ինձ մերձենալ միայն այն դեպքում, եթե ձեր չորս ստորին մարմիններից հեռացնեք պատրանքի շղարշները: Եվ դա հենց կնշանակի, որ կանգնել եք Ձեռնադրումների Ուղու վրա և ընթանում եք այդ Ուղով:

Աշխարհի վիճակը հիմա այնպիսին է, որ որպեսզի դուրս պրծնեք պատրանքի ցանցից, պետք է մեծ ջանքեր գործադրեք ձեր մարդկային գիտակցության՝ ձեր մարմնական խելքի, և ձեր ցանկությունների հաղթահարման ուղղությամբ: Ուստի և այդ Ուղին ներկա ժամանակահատվածում շատ ցավագին է դառնում ձեզ համար: Կարծես հարկ է լինում կտրվածք անել կենդանի մարմնի վրա, երբ փորձում եք ձերբազատվել այն ամենից, ինչը ձեր աշխարհում համարվում է պատվարժան ու անհրաժեշտ:

Հագի՛վ թե իմ այս ուղերձի խոսքերը հասկանալի լինեն ձեզնից շատերի համար, քանի որ մենք տարբեր լեզուներով ենք խոսում: Եվ մենք չենք կարողանա հասկանալ իրար, մինչև ձեր գիտակցությունը լուսոսի ծաղկի պես չբացվի Աստծո այն Ճշմարտության հանդեպ, որի մասին ես խոսում եմ, և որի մասին խոսում են մյուս Համբարձյալ Վեհապետները:

Այն միտքը, որ պետք է հրաժարվեք ձեզ շրջապատող ամեն ինչից, դուք որպես բռնություն եք ընկալում, որպես ինչ-որ անհասկանալի ու կասկածներ հարուցող մի բան:

Այո՛, անցյալում էլ էր այդպես: Մենք դիմում էինք քչերին, որոնք պատրաստ էին լինում իրենց գիտակցությունը ծովախեցու պես ուղղորդելու դեպի մեր կողմը: Բայց նույնիսկ այդ քչերն էլ դժվարությամբ էին ընկալում մեր ասածները:

Հասկացե՛ք, մենք ձեզ միայն Բարիք, միայն Մեր ենք կամենում՝ այն լավագույնը, որ կարող է լինել: Սակայն մեր ու ձեր բարիքի, սիրո և լավագույնի ընկալումները տարբեր են, որովհետև ձեր

աշխարհը շուտ տված աշխարհ է: Եվ այն, ինչ մեզ համար վեհ է ու աստվածային, ձեզ թվում է կասկածելի ու վիսացուցիչ:

Հենց դրանում է մեր աշխարհների փոխազդեցության դժվարությունը: Եվ գիտակցության փոփոխության հարցը՝ դրա բարձրացումն այնպիսի մակարդակի, որի վրա հնարավոր կդառնար նույն լեզվով խոսելը, ներկայումս հրատապ է ու կարևոր: Եվ դա հենց ձեր ժամանակի գլխավոր խնդիրն է:

Մի՞թե կարծում եք, թե Աստված չի կարողանա հոգալ ձեր մասին, եթե ձեզ լիովին հանձնեք Իրեն: Մի՞թե կարծում եք, թե հոգածու ձեռքերը չեն ապահովի ձեր անվտանգությունը, երբ դուք դեռևս անվտանգ քայլերով ընդառաջ գաք Նոր Աշխարհին:

Մարմնավորումից մարմնավորում դուք բախվում եք չափազանց շատ հուսախաբությունների և անհաջողությունների: Եվ այն սպիները, որ կրում եք ձեր հոգիներում, ոչ մի կերպ չեն ամրփվում ու անհետանում: Դա՛ է ձեր Հավատի բացակայության պատճառը: Եվ դրա պատճառով է, որ մեր խոսքերը չեն ընկալում որպես ճշմարտություն: Դուք չափազանց հաճախ եք վառվել: Եվ երբ եկել է այն ժամանակը, որ պետք է լսեք մեր ձայնը, որը նախկինում էլ եք լսել մեր մարգարեների միջոցով, դուք սկսում եք կասկածներ ունենալ: Դուք ունկնդրում եք, բայց չեք լսում: Կարդում եք ու չեք վստահում: Եվ դա ձեր իրավունքն է:

Կա մի օրենք, որը գործում է պատրանքային աշխարհում: Գործում է անթերի ու անխափան: Այդ օրենքն ասում է, որ ձեզ հետ տեղի է ունենում ճիշտ այն, ինչին հավատում եք և ինչին ձգտում եք: Ուստի և մենք խոսում ենք Հավատի որակի և Վեհապետների նկատմամբ նվիրվածության որակի մասին:

Երբ ձեր էության մեջ բռնկվում են Հավատն ու նվիրվածությունը, դուք կարծես յուրահատուկ մագնիսի եք վերածվում, որը ձգվում է մեր աշխարհի կողմը: Բայց քանի որ այսօր հավատում ու ձգվում եք, իսկ վաղը նորից մղվում դեպի ձեր աշխարհի որևէ առարկայի կողմը կամ կամենում նորից թաղվել պատրանքի մեջ, ապա մենք չենք կարողանում ձեզ դուրս կորզել պատրանքի միջից:

Մեզ պետք է, որ ձեր մղման, Հավատի ու նվիրվածության կրակը վառվի կայուն ու հավասարաչափ բոցով: Այդ դեպքում մենք կկարողանանք ճանաչել ձեզ և միջոցներ ձեռնարկել ձեզ ընդառաջ գալու համար:

Ուստի մենք խոսում ենք աստվածային հատկանիշներ մշակելու անհրաժեշտության մասին: Քանզի դրանք այն զանձերն են, որոնք մշտապես ձերը կլինեն: Իսկ ձեր պատրանքային հրապուրանքները կջրանան պատրանքի աշխարհի հետ մեկտեղ:

Ես գալիս եմ, որպեսզի ճիշտ ուղղություն տամ ձեր մղումներին: Քանի որ պատրանքն անընդհատ ամրապնդում է իր դիրքերը, ձեզնից պահանջվում է, որ կրկնակի և նույնիսկ բազմակի անգամ ուժեղացնեք ձեր աստվածային հատկանիշները:

Դեռ երբեք այնպես չի եղել, որ մեր աշակերտներն առանց ցավի ու տառապանքի ձերբազատվեն իրենց էգոյից: Պայծառացման գործընթացն անխուսափելիորեն ուղեկցվում է ողջ պատրանքայինից մաքրվելու գործընթացով: Իսկ քանի որ ձեր էզոն ձեր իսկ մի մասն է, դուք տառապանք եք կրում՝ կտոր առ կտոր ինքներդ ձեզնից հատելով ձեր էգոյի հատվածները և այրելով ձեր կապվածություններն ու ցանկությունները:

Դա շատ դժվարին ուղի է: Պահանջվում է ներքին բավարար պատճառաբանվածություն և անվերապահ Հավատ, որպեսզի դիմանաք այդ Ուղուն և ընթանաք մինչև վերջ: Միայն եզակիներն են դրան ընդունակ:

Մենք անում ենք ամեն ինչ, որպեսզի հեշտացնենք ձեր անցումը պատրանքի աշխարհից դեպի Աստծո իրական Աշխարհը: Մենք տիտանական ջանքեր ենք գործադրում: Սակայն ձեզ մոտիկ է ձեր աշխարհը, և դուք լսում եք նրա ձայները, զգում նրա ձգող ուժը: Որովհետև մեզ լսելու համար անհրաժեշտ է լռություն, առանձնացում և կարմայից որոշակի աստիճանի մաքրվածություն:

Ամեն ինչ այնքան վատ չէ, ինչպես թվում է: Քանզի ձեր աշխարհն ավելի ու ավելի անհրապույր է դառնում: Եվ այն հոգիները, որոնք հասունացել են մեր աշխարհ անցում կատարելու համար, ավելի ու ավելի ակնառու են դա գգում:

Ես այսօր խոսեցի ամենագլխավորի՝ պատրանքի աշխարհից դեպի Աստծո Աշխարհ ձեր ելքի մասին: Եվ դա ներկայումս ամենահրատապ բանն է ձեզ համար:

ԵՍ ԵՄ Մայրոթյան

**Մենք ձեզ ցույց ենք տալիս ուղին,
որը կոչված է փոխելու մոլորակի իրադրությունը**

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը:

Մեր վերջին հանդիպումից հետո որքա՛ն արագ անցավ ժամանակը: Եվ ահա նորից Կարմայական Վարչության նիստի նախօրյակն է:

Այդ նիստերը տեղի են ունենում տարեկան երկու անգամ և համապատասխանեցված են ամառային ու ձմեռային արևադարձերի օրերի հետ: Մենք դրանց ընթացքում ամփոփում ենք նախորդ նիստից հետո ընկած ժամանակի համար նախատեսված գործերի արդյունքները և որոշում ապագայի պլանները:

Այս անգամ մենք չենք շտապում ձեզ իրազեկ դարձնել մեր պլաններին: Քանզի որքան էլ փորձեցինք մարդկությանը նախապես հաղորդակից դարձնել փոխհարաբերության գործընթացին, ոչինչ չստացվեց: Ուստի և այսօր մեր պլանների մասին ես ոչինչ չեմ խոսի:

Շատ շուտով ինքներդ ամեն ինչ կտեսնեք: Եվ ես հուսով եմ, որ Մեծ Կենտրոնական Արևը հովանի կլինի մեր պլանների կենսագործմանը:

Մենք խաղաղությւ՜յր դրեցինք իրադարձությունների արագ զարգացման և գիտակցության կայծակնային աճի վրա: Եվ դա հնարավոր բան էր: Բայց այժմ աստեղային հնարավորությունը փոխվել է, և մեր գործողությունները ճշտորեն կհամապատասխանեցվեն նոր իրադրությանը:

Իսկ այժմ ես կցանկանայի անդրադառնալ այն գործերին, որոնք ձեզ համար ավելի հրատապ են ու հասկանալի: Այն է՝ կուզենայի ձեզ հետ քննարկել մեր համագործակցությունը մի բնագավառում, որն առնչվում է ձեզ շրջապատող բնական միջավայրի նկատմամբ հոգածությանը: Անհրաժեշտ է հրատապ կերպով փոխել մարդկության բռնած ուղղությունը, որն արտահայտվում է բնության նկատմամբ ցուցաբերվող անվերահսկելի ու գիշատիչ վերաբերմունքով: Բնության հետ հարաբերությունների ներդաշնակեցումն ունակ կլինի հանելու մարդկանց կյանքը նոր մակարդակի վրա: Քանզի այն էներգիան, որը գիշատիչ կերպով դուք խլում եք բնությունից, իրականում սփռված է ամենուրեք: Այն հոսում է նաև ձեր միջով: Եվ միայն ձեր գիտակցության ցածր մակարդակի պատճառով է, որ չեք կարողանում օգտվել այդ էներգիայի տեսակներից:

Երբ դուք գալիս եք ներդաշնակ վիճակի և համալարվում բնության ուժերի հետ, նրանք ձեզ հնազանդ են դառնում և կառավարվում ձեր կողմից:

Տեր Հիսուս ցուցադրեց մատերիայում էներգիայի կառավարման հնարավորությունը: Եվ նրա գործած հրաշքները հնարավոր դարձան իր ներքին նվաճումների շնորհիվ:

Իհարկե, ձեր կենսակերպը հեռու է կատարելությունից, և դուք չեք կարող տիրապետել չորս տիեզերական ուժերին, քանի դեռ կարգի չեք բերել ձեր ներսն ու ձեր ողջ շրջապատը:

Հավատացե՛ք ինձ, ձեր մեխանիզմների ու մեքենաների կարիքը չկա, որպեսզի բանական կյանք վարեք աշխարհում: Ամեն ինչը կարելի է կազմակերպել շատ ավելի խելամիտ, ներդաշնակ ու հեշտ:

Եթե բնության հետ փոխազդեցության մեջ մտնելիս չբռնանաք նրա վրա, ապա այն էներգիան, որը դուք ծախսում եք, որպեսզի հաղթահարեք բնական գործընթացները, կվերդառնա ձեզ այնպիսի հայտնագործությունների տեսքով, որոնք կհեշտացնեն ձեր կյանքը:

Անհրաժեշտ է ավելի նրբանկատ լինել այն կյանքի նկատմամբ, որը ձեզ հետ համատեղ գոյություն ունի Երկրի վրա, բայց չի արժանանում ձեր ուշադրությանը: Խոսքս տարրոգիների՝ բնության ոգիների, կյանքի մասին է:

Ձեր ողջ գործունեությամբ դուք խանգարում եք նրանց աշխատանքին: Այնինչ պետք է համագործակցելիք նրանց հետ: Եվ այդ դեպքում անտեսանելի աշխարհի հազարավոր էակներ կկարողանային օգնել ձեզ և հոգալ ձեր մասին: Իսկ հիմա նրանք տազնապահար փախչում են, հենց որ մարդ են տեսնում:

Ձեր ներքին ներդաշնակությունն ու Աստծո Աշխարհի հետ համահնչունությունը կարող են շտկել ստեղծված իրադրությունը:

Ես վստահ չեմ, որ բոլոր մարդկային անհատներն ունակ են համագործակցելու տարրոգիների հետ: Սակայն պետք է նպաստել այն բանին, որ երիտասարդ սերունդը սովորի լսել բնությանը և դիտել նրա անտեսանելի կյանքը:

Երբ զգալիորեն հեռանում եք բնակավայրերից, ապա, անկախ այն բանից, թե որտեղ եք գտնվում՝ լեռներում, դաշտերում թե անտառներում, ամենուրեք թփերի հետևից ձեզ դիտում են անտեսանելի էակներ: Որոշները դրանցից, որոնք երբեք մարդ չեն տեսել, շատ հետաքրքրասեր են և կարող են մոտենալ ու շոշափել ձեզ: Առանձնահատուկ զգայուն պետք է լինեք, որ զգաք տարրոգիների ներկայությունը: Այդ էակներն իրարից տարբերվում են տարերքներով, և նրանց

միջոցով դուք կարող եք կառավարել հրի, օդի, ջրի և հողի տարերքները: Միայն թե մի՛ կարծեք, թե այդ էակները կօգնեն ձեզ, որ կառուցեք ամբարտակներ ու հողմադացներ: Բնության ուժերի կառավարումն անհամեմատ ավելի նուրբ ոլորտների գործ է: Եվ մարդկության այն նրբացումը, որը մենք առաջադրում ենք, թույլ կտա կապ ստեղծել տարրոգիների կյանքի հետ և օգտվել այն էներգիայից, որն ամենուրեք սփռված է ձեր շուրջը: Ամենայն ինչ էներգիա է: Բայց այդ էներգիայից դուք կկարողանաք օգտվել միայն այնժամ, երբ հասնեք գիտակցության այնպիսի մակարդակի, որում ձեզ համար հնարավոր կդառնա բնության թագավորությունների հետ փոխազդեցությունը:

Առայժմ դեռ տարրոգիները փախուստի են դիմում, հենց որ որևէ տեղ մարդ է երևում: Նրանց կյանքը շատ է տուժում այն անհասկացողությունից, որը դուք դրսևորում եք իրենց նկատմամբ. այնպես, ինչպես փոքր երեխաներն են տարակուսում մեծահասակների այն վարքից, որով խախտվում են բնության օրենքներն ու ոտնահարվում աստվածային սկզբունքներն ու արժեքները:

Մարդկության այն նրբացումը, որի մասին ասացի, հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ մարդկությունը կբարձրանա իր էվոլյուցիոն զարգացման հաջորդ աստիճանին: Բայց առայժմ դուք տեղում դոփում եք պատրանքի մեջ՝ իրար հետևից փոխելով տեսարժան բաներն ու հաճույքները:

Ձեր աշխարհի ոչ մի տեսարժան բան կամ հաճույք չի կարող փոխարինել բնության, տարրոգիների և Աստծո հետ ունեցած ձեր հոգու համատեղ ստեղծարարությանը: Մարդը ծնված է ստեղծարարության համար և դրանով է նմանվում Աստծուն, այլ ոչ թե նրանով, որ անընդհատ հաճույքներ ստանա կյանքից:

Վիճակը բարդանում է և նրանով, որ մարդկության մեծագույն մասն ունակ չէ ընկալելու նույնիսկ այն պարզ բաները, որ մենք ասում ենք: Սակայն ստիպված կլինի: Ստիպված կլինի յուրացնել ամեն ինչի հետ հարաբերվելու նոր սկզբունքները: Մի՞թե ակնհայտ չէ ձեզ համար, որ ձեր քաղաքակրթությունը դեմ է առել փակուղու:

Արդեն երկրորդ հարյուրամյակն է, ինչ դուք տեղում դոփում եք և առաջ չեք շարժվում:

Մենք ցույց ենք տալիս ուղին, որը կոչված է փոխելու մոլորակի իրադրությունը: Սակայն, որպեսզի մարդկությունը կարողանա ընթանալ այդ ուղով, դուք պետք է փոխեք ձեր ներքին բնույթը. հաղթահարեք ձեր էգոյի ամենացայտուն դրսևորումները՝ նախանձը, ազահությունը, ատելությունը: Այդ դեպքում դուք ունակ կդառնաք դրսևորելու Սիրո, կարեկցանքի, բարեգթության, փոխօգնության և փոխօժանդակության աստվածային հատկանիշներ:

Այսօրվա իմ գրույցի նպատակն այն էր, որ ձեր միտքն ուղղեմ դեպի այն ուղին, որով ձեզ կվիճակվի ընթանալ, եթե ուզում եք զարգանալ, այլ ոչ թե անհետ կորչել պատրանքի թավուտներում:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը

Տիրուհի Կարա
15 հունիս, 2010 թ.

Բոլորդ էլ կհասնեք ձեր Հաղթանակին...

ԵՍ ԵՄ Կարան: Ես նորից կրում եմ Սուրբ Կարայի* ժամանակներում ունեցած իմ անունը: Սակայն ձեզնից շատերը հավանաբար ինձ ճանաչել են որպես Էլիզաբեթ Կարա Փրոֆեսոր:

Երևի գիտեք նաև, որ ամուսնուս հետ գլխավորում էի ամերիկյան «Սամմիթ Լայթհաուզ» կազմակերպությունը: Եվ հիմա իմ գիտակցության նոր մակարդակով ես հնարավորություն ունեմ շատ բաներ այլ կերպ դիտելու և ընկալելու:

Օ՛, ես չեմ խոսի այնպիսի բաներից, որոնք կարող են ստվեր գցել այդ կազմակերպության ու նրա մարդկանց վրա՝ մարդիկ, որոնք այդ կազմակերպության օժանդակել են իրենց էներգիայով, իրենց դրամական միջոցներով և իրենց Սպասավորությամբ:

Ինձ համար այդ ամենն արդեն անցյալում է, իսկ նրանց համար իմ ամեն մի բառը կարող է մեծ նշանակություն ունենալ: Իսկ ես չեի ուզենա նոր կարմա ստեղծել՝ գտնվելով իմ գիտակցության համբարձյալ վիճակում:

Որոշակի դժվարություն հարուցեց այն, որ երկար ժամանակ ինձ վիճակվեց մնալ Երկնքի ու երկրի միջև: Եվ հնարավոր է, որ ձեզնից շատերը տեղյակ էին այդ մասին: Իմ կյանքի վերջին 12 տարվա ընթացքում ես այնքան էլ երկրի վրա չեի: Իմ մարմինների մի մասն ինձ հետ չէր: Մարմինների բաժանելիության հատկությունը շատ օգտակար եղավ ինձ համար: Դա իմ հոգու կատարած ընտրությունն էր: Իմ հոգին որոշում էր ընդունել երկրային կյանքիս ողջ այդ տասներկուամյա շրջանն անցկացնել հիվանդության մեջ՝ կիսագիտակցական վիճակում, իսկ

կյանքիս վերջին տարիները՝ լրիվ անգիտակից վիճակում**։ Շատերը նրանցից, ում հետ ես համագործակցում էի Սամմիթ Լայթհաուզում, ամոթ էին զգում այդ վիճակիս համար և լռում էին իմ հիվանդության մասին։

Սակայն, ինչպես արդեն ասացի, դա իմ հոգու նախընտրանքն էր։ Ես որոշում էի ընդունել, որ Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդ եղածս ժամանակ իմ ստեղծած կարմայական էներգիաների որոշ տեսակների բեռնաթափման համար չգնամ մարմնավորման։ Սակայն կարմայի օրենքը պետք է բավարարվեր։ Ուստի, համակերպվելով հիվանդ վիճակիս հետ, բեռնաթափեցի իմ կարմայի նշանակալի մասը, ինչի շնորհիվ էլ ազատվեցի մարմնավորվելու անհրաժեշտությունից։

Այնուհանդերձ, այն մարդկանց, որոնց հետ համագործակցում էի, պետք է վստահեցնեմ, որ առաջվա պես պատրաստ եմ աշխատելու իրենց հետ և կատարելու Եղբայրության համար անհրաժեշտ ցանկացած աշխատանք։

Արդյո՞ք բոլորդ եք առաջվա պես համոզված, որ մենք կատարում ենք հենց այն աշխատանքը, որի կարիքն ունեն մոլորակն ու ողջ մարդկությունը։

Չե՞ք կորցրել արդյոք ձեր մարտական ոգին...

Սամմիթ Լայթհաուզի պատմության մեջ եղել են ճակատագրական պահեր, երբ իմ կատարած ընտրությունը ճիշտ չի եղել։ Այդ սխալ ընտրությունների կարման պետք է բեռնաթափվեր։ Օրենքը դա՛ է պահանջում։ Ես չեմ ասի, թե ինչ սխալ ընտրությունների մասին է խոսքս։ Որովհետև դա չէ իմ այսօրվա ուղերձի թեման։ Այսօր իմ հիմնական խնդիրն այն է, որ այս ուղերձի միջոցով կապ հաստատեմ նրանց հետ, ովքեր իմ հիվանդության 12 տարիների ընթացքում հավատարիմ մնացին ինձ՝ որպես Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդին։

Վիթխարի խնդիր էր նախաձեռնված մեր կողմից։ Եվ այն արձագանքը, որը մեր շարժման արդյունքում առաջացավ հասարակության մեջ, մեր շարքերը բերեց շատ մարդկանց, որոնք իրենց ներքին հատկանիշներով պատրաստ չէին այն Սպասավորությանը, որի մասին ասում են Վեհապետները։ Ուսմունքի որակը միշտ ընկնում է, երբ մի բուռն նվիրյալներին ու հավատարիմներին միախառնվում է նրանց ալիքը, որոնց ցանկությունը միայն իրենց հետաքրքրասիրությանը հագուրդ տալն է։ Սակայն երբեմն մարդիկ պարզապես պատրաստ չեն լինում բարձրանալու Եղբայրությանը անշահախնդիր ու հավատարմորեն Սպասավորելու աստիճանի վրա։ Եվ դրա դեմ ոչինչ հնարավոր չէ անել։ Հոգին ի՞նքը պետք է անցնի ուղու անհրաժեշտ հատվածները։ Այլապես, երբ մենք ստիպողական քայլեր ենք կիրառում էվոլյուցիան արագացնելու նպատակով, որին հոգիները դեռևս պատրաստ չեն, ապա, միևնույնն է, ճոճանակը վաղ թե ուշ կթեքվի դեպի հակառակ կողմը։ Բարի մտադրությունները ոչ միշտ են բերում լավ արդյունքի։

Միակ բանը, որ կարող եմ ասել, այն է, որ ընդհուպ մինչև Դեսպանորդի իմ պաշտոնավարման ավարտը ես հավատարիմ եմ եղել Եղբայրությանը։ Եվ դրա շնորհիվ է, որ բացառության կարգով ինձ թույլ տրվեց, առանց մարմնավորումից դուրս գալու, 12-ամյա հիվանդության ընթացքում բեռնաթափել իմ կարման։

Եվ ձեզ համար, որ առ այսօր նախկինի պես հավատարմորեն կապված եք ինձ հետ, դա մեծ հնարավորություններ բացեց։ Քանզի ես իմ գիտակցության համբարձյալ դիրքից ավելի շատ բան կարող եմ անել ձեր հոգիների համար. կարող եմ ձեզ ավելի շատ օգնել և օժանդակել։

Ես անհամբերությամբ սպասում եմ ինձ ուղղված ձեր բոցավառ կանչերին։ Ուժերիս ներածին չափ ամեն ինչ կանեմ, որպեսզի օգնեմ իմ սաներին, որոնք առաջվա պես ինձ իրենց Գուրուն են համարում։ Իմ Գուրուի պատմունքները գործում է, և իմ աշակերտները, եթե օգնության, խորհրդի կամ օժանդակության կարիք ունեն, կարող են կանչ հղել Գուրուի իմ պատմունքանին։

Ես չեմ կարող խորհուրդ տալ բառային տեսքով, բայց կարող եմ առաքել ձեզ իմ սիրո և օժանդակության ճառագայթը, որն ունակ կլինի ձեզ հաղորդելու հույսի, վստահության և հաստատականության խթան։ Ես նաև վստահ եմ ամեն ոք, ով իր սրտում հավատարմություն է պահպանել իմ՝ որպես Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդի նկատմամբ, կարող է օգնության և օժանդակության հույս ունենալ ամբողջ Մեծ Սպիտակ Եղբայրության կողմից։ Համբարձյալ Դասերը, որոնց կազմում նաև ես եմ հիմա, առաջվա պես սպասում են ձեր ցուցումներին և պատրաստ են ցուցաբերելու անհրաժեշտ օգնությունը։

Ահա Սանատ Կումարան ինձ է առաքում իր օժանդակիչ ճառագայթը։ Եվ ես ավարտում եմ իմ այս կարճ ուղերձը՝ Մուտակե Ճառագայթի խտացված Միքով տոգորված։

Բոլորդ կհասնե՞ք ձեր հաղթանակին...

Մի՛ վիատվեք հոգով և մի՛ հուսահատվեք...

Մշտապես Հաղթանակ, Մշտապես Հաղթանակ, Մշտապես Հաղթանակ...

*Էլիզաբեթ Փրոֆեթի նախորդ մարմնավորումներից մեկը եղել է Կլարա Ասիզացին (Կլարա Օֆրեդուչո, 1194-1253): Ֆրանցիսկ Ասիզացու միաբանության մեջ նա սկզբնավորել և ղեկավարել է միանձնուհիների ճյուղը (կլարուհիներ)

**Իր կյանքի վերջին 12 տարում Է. Փրոֆեթը տառապում էր Ալցհեյմերի հիվանդությամբ: Նա այս աշխարհից փոխվեց 2009 թ-ի հոկտեմբերի 15-ին

Վեհապետ Լանելլո

16 հունիսի, 2010 թ.

Մեր խնդիրն է՝ ճիշտ ուղղություն և կոշմնորոշիչներ տալ նրանց, ովքեր ի վիճակի են դրանցից օգտվելու

ԵՍ ԵՄ Լանելլոն: Այսօր ես կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի ուսուցանեմ ձեզ, քանի որ դրա կարիքը ձեր հոգիներն ունեն:

Ընդունված է համարել, որ Համբարձյալ Վեհապետների գիտակցության մակարդակն անհամեմատ ավելի բարձր է մարդկության գիտակցության մակարդակից: Մակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Իհարկե, մեր մեջ կան այնպիսի բարձր ոգիներ, որոնց ես ինքս երբեմն չեմ կարողանում մերձենալ, բայց և կան այնպիսիները, որ դեռ նոր են ավարտել Երկրի դպրոցը և սպասում են իրադարձությունների բարենպաստ ընթացքին, որպեսզի նորից մարմին առնեն Երկրի վրա:

Ուստի ձեզ համար հետաքրքիր կլինի, եթե նկարագրեմ իմ անձնական փորձը, թե ինչպես հասնել գիտակցության այնպիսի մակարդակի, որը թույլ է տալիս անցում կատարելուց հետո հայտնվել եթերային օկտավաներում:

Միայլ կլինի կարծել, թե հոգին անցում կատարելուց հետո անմիջապես հասնում է բարձրագույն օկտավաներ: Պահանջվում է որոշակի ժամանակ՝ սովորաբար ավելի քան 40 օր, որպեսզի հոգին պատրաստվի անցնելու ավելի բարձր մակարդակի վրա: Եվ այն ծեսը, որով հոգին անցնում է եթերային օկտավաներում, վեհագույններից մեկն է: Այն թույլ է տալիս համբարձման բոցով այրել այն ամենը, ինչը խանգարում է գիտակցության համբարձյալ վիճակին հասնելուն: Զեզնից շատերը, որ հիմա կարդում են այս տողերը, ժամանակի ընթացքում կկարողանան անցնել այդ ծեսով:

Իսկ հիմա, երբ Երկրի վրա մարմնավորման մեջ եք, պետք է կատարեք այն աշխատանքը, որի համար մարմին եք առել: Մի՛ կարծեք, թե առջևում դեռ շատ ժամանակ ունեք: Երկրի վրա գտնվելու ամեն բոլորն թանկ է: Օրինակ՝ անցում կատարելուց և համբարձվելուց հետո նոր միայն ես սկսեցի հասկանալ, թե որքան անտեղի ժամանակ եմ վատնել իմ մարմնավորման ընթացքում... Աստծո վեհությունն ու ողորմածությունը, հիրավի, սահմաններ չեն ճանաչում:

Ուստի, եթե դուք միայն հետաքրքրությունից դրված չեք կարդում մեր Ուսմունքները, այլ լուրջ եք տրամադրված, ապա մի՛ զլացեք վերահսկել ինքներդ ձեզ և նվազագույնի հասցնել այն ժամանակը, որը ծախսում եք ձեր մարմնի ֆիզիկական պահանջմունքների բավարարման վրա:

Ամենից առավել պետք է հոգ տանեք ձեր հոգուն, որպեսզի այն զարգանա և ձերբազատվի անցյալի կարմայի այն շերտանստվածքներից, որոնք միախառնվել են ձեր էության հետ և խանգարում են ձեր առաջընթացին:

Եվ ամենադժվարը կլինի այն, որ ձեր մեջ գտնեք այն բնավորության գծերը, սովորություններն ու կապվածությունները, որոնցից հարկ է ազատվել: Քանզի ձեր մարմնական խելքը շատ հմտորեն ձեզ կվստահեցնի, թե իբր արդեն Ուղու վրա հասել եք մեծ նվաճումների, և էլ բան չի մնացել, որից հարկավոր է ձերբազատվել:

Պատրանքը ներծծվել է ձեր ստորին մարմինների մեջ: Եվ միայն Աստծո օգնությամբ կարող եք ձերբազատվել ձեր շատ ոչ աստվածային հատկանիշներից ու դրսևորումներից:

Վերջին հաշվով, ամեն ինչ տեղի է ունենում Աստծո կամքով: Ուստի ձեր ամենագլխավոր քայլն այն կլինի, որ Աստծուց օգնություն խնդրեք, որպեսզի ձեր էությունն ազատեք բոլոր այդ ոչ աստվածային հատկանիշներից ու դրսևորումներից:

Սակայն նախքան այդ քայլն անելը դուք պետք է գիտակցեք և ընդունեք, որ այնքան էլ կատարյալ չեք, որքան ձեզ է թվում:

Կա ևս մի հանգամանք, որ պետք է հաշվի առնեք: Որպեսզի ձեր գիտակցությունը պահեք ներկայումս ձեր ունեցած մակարդակի վրա, մշտապես պետք է աշխատեք ինքներդ ձեզ վրա: Դա նման է այն բանին, երբ հեծանիվով սար եք բարձրանում: Եթե ոտնակները չպտտեք, ապա հետ կգնաք դեպի ստորոտ և ստիպված կլինեք նորից սկսել ձեր վերելքը:

Դուք մշտապես պետք է աշխատեք ձեր գիտակցության վրա: Ամեն օր և օր օրի: Միայն այդ դեպքում կարող եք հուսալ, որ անցում կատարելուց հետո կհասնեք համբարձման:

Ձեզնից յուրաքանչյուրն Ուղով իր վերելքը պետք է ինքնուրույն կատարի: Եվ դեպի աստվածային գիտակցության գագաթը տանող այդ վերելքի ընթացքում պետք է լսեք ինքներդ ձեզ՝ ձեր սրտին:

Ձեր Ուղու սկզբնական թեստերից մեկն այնպիսին է, որ արտաքին աշխարհից հայտնվում է ոմն անձնավորություն, որը ձեզ համոզում է վարվել իր ասած ձևով: Կամ պնդում է, որ դուք սխալ եք վարվում: Որպես կանոն, այդ մարդը ձեզ հեղինակավոր է թվում: Այդ թեստի իմաստն այն է, որ սովորեք գործել ձեր ներքին կողմնորոշիչներին համապատասխան և հենվեք միայն ներքին առաջնորդության վրա:

Շատերը, որոնք իրենց հոգևոր Ուղու առաջին քայլերն են անում, կմտածեն, որ այդ թեստը հենց իրենց է վերաբերում: Ուստի կսկսեն վարվել այնպես, ինչպես կամենում են՝ առանց հաշվի առնելու շրջապատի մարդկանց կարծիքը:

Պաշտելիներս, նախ պետք է համոզված լինեք, որ ձեր Բարձրագույն Ես-ից եք ներքին առաջնորդություն ստանում, այլ ոչ թե ձեր էգոյից:

Նորելուկները, որոնք ձեռնադրումների մասին ինչ-որ բան են լսել և առատորեն կասկածելի բնույթի գրականություն կարդացել, կարող են իրենք իրենց մեծ ձեռնադրյալներ համարել և գործել իրենց էգոյի թելադրանքով՝ հաշվի չառնելով և չստելով ոչ մեկին:

Իսկ ինչպե՞ս սովորեք զանազանել, թե ով է ձեզ առաջնորդում՝ ձեր Բարձրագույն Ե՛ս-ը, թե՞ էգոն: Ձեր փոխարեն ես չեի ձգտի այդ հարցը լուծել միանգամից ու վերջնականորեն: Նուրբ ոլորտի ձեր ամեն մի նվաճումը պետք է իր հաստատումը գտնի ֆիզիկական ոլորտում: Եվ այն բանով, թե ինչ է դրսևորվում ֆիզիկական ոլորտում և ինչպես, դուք կարող եք դատել ձեր նվաճումների մասին:

Եվ եթե ձեր շրջապատում ոչինչ չի փոխվում, դուք շարունակում եք ձեր սիրած կամայականություններն ալկոհոլի, նիկոտինի և թմրանյութերի առումով կամ շարունակում եք աղմկոտ երաժշտությամբ ու կերուխումով հագեցած ձեր հավաքույթները, ապա ես ձեզ խորհուրդ կտայի հիմնավորապես ու անմիջականորեն զբաղվել ձեր էգոյի հարցով:

Բայց նաև այն դեպքում, երբ ճիշտ կյանք եք վարում և վնասակար սովորություններ չունեք, Ուղու վրա ձեզ մի այլ վտանգ է սպառնում՝ հոգևոր սնապարծությունը: Ձեզ սկսում է թվալ, թե դուք շատ բանի եք հասել և ձեր շրջապատի մարդկանց հետ կիսելու շատ բան ունեք: Սակայն, եթե ոչ անմիջապես, ապա որոշ ժամանակ անց մարդիկ նկատում են ձեր սնապարծությունը և հեռանում ձեզնից: Եվ այդ դեպքում դուք մեծամտանում եք, թե ձեր հոգևոր նվաճումներն այնքան բարձր էին, որ մարդիկ չդիմացան ձեր բարձր թրթիռներին:

Ինչպես տեսնում եք, պատրանքների աշխարհում միշտ էլ հնարավոր է մոլորվել, եթե ձեր քայլերը մշտապես չճշգրտեք հուսալի կողմնորոշիչներով:

Մենք պնդում ենք, որ եթե դուք հետևեք Համբարձյալ Վեհապետների խորհուրդներին, որոնք առկա են մեր դեսպանորդի միջոցով տրված ուղերձներում, ապա ձեր ձեռքին կունենաք կողմնացույց ու քարտեզ, որոնք ձեզ դուրս կհանեն պատրանքի թավուտներից:

Սակայն, նույնիսկ կարդալով մեր ուղերձները, դուք էլի՝ հաջողեցնում եք ամեն անգամ կարմա ստեղծել, երբ ուղերձները կարդալիս ձեր մեջ արթնանում են քննադատական ոգին, մեղադրելու հակումն ու այլ բացասական դրսևորումներ: Եթե մեր ուղերձները ձեր մեջ այդպիսի բացասական բաներ են առաջացնում, ապա մի՛ կարդացեք դրանք: Գոնե այդտե՛ղ կարմա չեք ստեղծի...

Հնարավոր չէ ուսուցանել նրան, ով չի ուզում սովորել: Ուստի մեր խնդիրն է ճիշտ ուղղություն և կողմնորոշիչներ տալ նրանց, ովքեր ի վիճակի են դրանցից օգտվելու:

Իսկ հիմա ես ձեզ հրաժեշտ եմ տալիս՝ նոր հանդիպումների ակնկալիքով:

ԵՍ ԵՄ Լանդլոն

Հովհաննես Սիրեցյալ
17 հունիսի, 2010 թ.

Ուսմունք Խոսքի նկատմամբ հոգածու վերաբերմունքի մասին

ԵՍ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը: Եկել եմ շարունակելու Աստծո Խոսքի մասին մեր գրույցը*:

Այսօր կխոսենք Խոսքի աղճատումների մասին. ինչպե՞ս և ինչու՞ են դրանք առաջանում: Երբ դուք որևէ խոսք եք ասում, չեք մտորում այն մասին, որ ձեր յուրաքանչյուր բառը որոշակի թրթիռներ ունի և գունագարդվում է այդ պահին ձեր ունեցած գիտակցության մակարդակով:

Պահանջվում է օժտված լինել զգայունության որոշակի աստիճանով և բավարար չափով կտրված լինել աշխարհիկ ունայնությունից, որպեսզի ձեր արտաբերած բառերի հետևում նշմարվի ձեր ներքին էությունը: Փաստորեն, ելնելով այն բանից, թե ինչ եք խոսում և ինչպես եք խոսում, կարելի է իմանալ ձեր մասին ամեն ինչ: Եվ ձեր խոսքի թրթիռները լրիվ պատկերացում են տալիս ձեր գիտակցության զարգացման աստիճանի վերաբերյալ:

Ձեր խոսքը հնազանդորեն արտացոլում է ձեր ստորին չորս մարմինների վիճակը: Այդ իսկ պատճառով Աստծո Խոսքը փոխանցելու համար միշտ ընտրվել են հատուկ պատրաստված մարդիկ, որոնց մտքած աղավաղումներն Աստծո Խոսքի փոխանցման ընթացքում հասնում են նվազագույնի: Նաև տարբեր ժամանակներում տարբեր մեթոդներ են կիրառվել Խոսքի փոխանցման համար:

Օրինակ, երբ ես գրի էի առնում Սուրբ գրքի խոսքերը, գտնվում էի ներքին խորին անդորրության վիճակում: Ես միշտ հիշում էի ապրա՞ծս երանության այն պահերը, երբ իմ Ուսուցիչ Հիսուսն իմ կողքին էր լինում: Եվ այնպես էի ոգեկոչվում իմ Ուսուցչի մտապատկերով, որ բառերը հորդում էին իմ էության միջից և դրոշմվում թղթի վրա: Յուրաքանչյուր բառս գունագարդվում էր իմ սիրով և երանության վիճակով:

Հիրավի, դա Աստծո և բարձրագույն ուժերի հետ համատեղ արարչության մի գործընթաց էր: Եվ իմ այդ վիճակների շնորհիվ ես շատ գաղտնիքներ բացահայտեցի և դրանք հանձնեցի թղթին:

Ավելի ուշ ժամանակներում Սուրբ գրքի թարգմանության ու արտագման գործը վստահվում էր միայն շատ մաքուր վանականներին, որոնք ամբողջովին ու լիովին իրենք իրենց նվիրաբերում էին Աստծուն ու Սպասավորությանը:

Սակայն, քանի որ ոչ մի մարդ կատարյալ չէ, ապա նույնիսկ այդ սուրբ մարդիկ էին իրենց թրթիռները ներդնում տեքստի մեջ, և այն արդեն տարբերվում էր նախնականից:

Այժմ կուզենայի անդրադառնալ ձեր ժամանակներին: Ահավո՛ր ժամանակներում եք ապրում... Քանզի ունակ չեք գիտակցելու այն պատասխանատվությունը, որ պահանջում է Խոսքի փոխանցումը: Եվ առանձնապես չեք մտահոգվում, թե ի՞նչ թրթիռներ են աշխարհ մուտք գործում ձեր խոսքերով: Եվ քանի որ ժամանակակից միջոցները թույլ են տալիս հեշտորեն ու բազմակիորեն վերարտադրել դրանք, ապա խոսքի չարաշահման ձեր կարման դառնում է չափազանց ծանր: Ըստ էության, դուք ծանր ճակատագրի նախահիմքեր եք ստեղծում ինչպես ձեր, այնպես էլ ձեր մերձավորների համար:

Եթե հենց միայն աններդաշնակ մտքերը կարող են հրաբխի ժայթքման ու ժայռերի փլուզման պատճառ դառնալ, ապա կարելի է գուշակել, թե ինչ բաների են ընդունակ խոսքերը ձեր աշխարհում:

Ես կուզեի, որ ձեր աշխարհում դուք վերականգնեիք Խոսքի նկատմամբ գորովալից ու հարգալից վերաբերմունքը: Որովհետև Խոսքի աղճատումն ամենաժանր մեղքերից մեկն է:

Հոգածությամբ պետք է ապրել կյանքը: Նույնիսկ մրջյունի՛ն պետք է խնայեք, երբ քայլ եք փոխում: Եվ որքա՛ն ավելի ծանրանում է ձեր կարման, երբ Խոսքն եք ի չարը գործածում:

Շատերը հատուկ ծիսական լռություն են պահպանում: Եվ եթե այդ իմաստուն ծեսը ճիշտ կիրառվի, ապա շատ հոգիների կարելի կլինի փրկել: Ավելի լավ է ոչինչ չխոսել, քան խոսել այնպիսի բաներ, որպիսիք դուք անտեղի շաղ եք տալիս դեսուդեն:

Ամենաահավորն այն է, որ երբ վրա է հասնում ձեր անխոհեմ ասված խոսքերի կարմայական հատուցման ժամը, ամեն ինչի համար դուք Աստծուն եք մեղադրում, տրտնջում եք կյանքից՝ նույնիսկ չկասկածելով, որ հատուցման օրերը ձեզ է վերադարձրել այն, ինչ ինքներդ եք ցանկ:

Ուստի այսօր ես կուզենայի ձեզ հիշեցնել, որ ձեր մի բառը, հատկապես եթե այն ուղեկցվում է ուղղորդված էներգիայի առաքմամբ, բառացիորեն կարող է ավերածության մատնել մոլորակը:

Այդ պատճառով խելամոռորեն կրճատվել է այն էներգիայի հոսքը, որն Աստծո Աշխարհից գալիս և ողողում է ձեր մարմինները: Եվ այդ ստիպողական քայլն արդարացված է: Բայց և անհրաժեշտ է, որ Աստծո Խոսքը մուտք գործի ձեր աշխարհ: Այլապես դուք ձեր գիտակցությամբ չեք կարողանա պահպանել կողմնորոշչները և կկորցնեք շարժման ուղղությունը:

Խոսքը, որ կրում են մեր ուղերձները, փոխանցվում է հատուկ եղանակով: Ուղերձի փոխանցման պահին հատուկ լռություն է հաստատվում, և տարածությունը հնազանդորեն կրկնում է այն միտքը, որը մեր աշխարհից փոխանցվում է ձեր աշխարհին:

Խոսքի փոխանցման նման տեխնիկա նախկինում երբևէ մեր կողմից չի կիրառվել: Բայց հիմա Խոսքի առկայությունը ձեր աշխարհում ուղղակի անհրաժեշտություն է: Ուստի և մենք գործադրում ենք բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի բախենք ձեր սրտերի դռները:

Մեր ձայնն իր մեջ պարունակում է աստվածային թրթռոցներ: Մակայն ձեր ականջն ունակ չէ տարբերելու այդ թրթռոցները, քանի որ դրան խանգարում են այլազան տեղեկատվական աղբյուրները, որոնց ձայնն անհամեմատ ավելի բարձրագույն է:

Մակայն այն մարդիկ, որոնց ունկերը համալարված են մեր հաճախականություն հետ, ունակ են մեզ լսելու և ճաշակելու մեր աշխարհի քաղցրությունը:

Այն ժամանակ, երբ ես գրի էի առնում Աստծո Խոսքը, ես դրան ունակ էի դառնում իմ առանձնության անդորրում: Եվ այդքան շատ աղմուկ չկար, որքան հիմա կա ձեր աշխարհում: Այնուհանդերձ մենք գալիս և մեր ուղերձներն ենք տալիս աշխարհին:

Քանզի ձեր աշխարհը չի կարող հարատևել, եթե թրթռանքի բավարար մակարդակ չպահպանվի մարմնավորման մեջ գտնվող թեկուզև մի քանի մարդու սրտում: Այդ սրտերը նմանվում են փոքրիկ ռադիոհաղորդիչների, որոնք աշխատում են հատուկ ալիքի վրա: Եվ աստվածային ալիքի հետ համալարված շատ հոգիներ կարող են որսալ այդ թրթռոցները: Նրանցից շատերի համար դա պատրանքի աշխարհից դուրս գալու փրկարար ճոպան է դառնում: Եվ այդ ճոպանի շնորհիվ մենք պատրանքի ծովից դուրս ենք քաշում այն հոգիներին, որոնք մերն են:

Երբեք հույսներդ մի՛ կորցրեք: Եթե դուք անկեղծ եք և նվիրված Աստծուն, ապա միայն ժամանակի հարց է, թե երբ կլսեք մեր կանչը: Մեր կանչն ու մեր թրթռանքը լսելը ձեր աշխարհում հեշտ գործ չէ: Ուստի մշտապես պետք է պատրաստ պահեք ձեր ունկերը, որպեսզի ընկալեք մեր աշխարհի թրթռանքը և պաշտպանեք ձեր ունկերն այն ամենից, ինչով կարող է խլանալ աստվածային թրթռանքը: Այդքան մասով ինքներդ պետք է ջանք թափեք: Իսկ մենք մեր կողմից կանենք հնարավոր ամեն ինչ:

ԵՄ ԵՄ Հովհաննես Միրեցյալը՝ ձեր հոգիների նկատմամբ հոգածությամբ

*Տես՝ 2010 թ-ի հունվարի 9-ի թելադրությունը

Տիրուհի Պորցիա
18 հունիսի, 2010 թ.

Աստծո օգնությամբ ամեն ինչ հնարավոր է...

ԵՄ ԵՄ Պորցիան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Այսօր ես մտադիր եմ շարունակել ձեզ ուսուցանելու գործը և տալու ձեզ որոշ գործընթացների ըմբռնումը, որոնք հանրահայտ են մեր աշխարհում, սակայն ձեր աշխարհում այնքան էլ ընդունված չեն:

Ես Հնարավորության Աստվածուհին եմ: Եվ ահա հայտարարում եմ, որ ձեր առջև բացված են վիթխարի հնարավորություններ: Հենց ձեր քթի տակ: Եվ դրանցից դուք կարող եք օգտվել ցանկացած պահի: Մենք արդեն ձեզ համար բացահայտել ենք այն վիթխարի հեռանկարները, որոնք պատրաստ են դրսևորվելու Երկրի մարդկության առջև: Մենք պատմել ենք տեկեպորտացիայի, լիտացիայի մասին, պատմել ենք նաև Էներգիայի նոր աղբյուրների մասին, որոնք ձեզ հեքիաթային հրաշքներ են թվում:

Եվ ահա ես ասում եմ, որ այդ բոլորն այժմ ձեր քթի տակ են, և դուք կարող եք այդ ամենից օգտվել:

«Իսկ ինչու՞ մենք դրանք չենք տեսնում», - լիովին օրինական հարց է, որին ևս պատրաստ եմ պատասխանելու:

Նախ՝ ձեր արտաքին գիտակցությամբ դուք պատրաստ չեք այդ հնարավորություններն ու հրաշքները ներմուծելու ձեր կյանքի մեջ: Եվ երկրորդ՝ որպեսզի այդ ամենը դրսևորվի ձեր կյանքում, պետք է հրաժեշտ տաք ձեզ շրջապատող պատրանքին: Դուք այնպես եք խրվել շրջակա պատրանքի մեջ, այնպես է այն տիրել ձեր գիտակցությանն ու էությանը, որ այն նորը՝ պատրանքի ավելի նուրբ շղարշը, որով կարող եք մերձենալ Աստծո Աշխարհին, ձեր գիտակցության մեջ պարզապես տեղ չի կարող գտնել:

Միայն այդ երկու պատճառներն են ձեզ բաժանում այն վիթխարի հնարավորություններից, որոնք կարող են բացվել ձեր հայացքի դեմ:

Կան և ավելի մանր հնարավորություններ, որոնք ձեր կյանքում կարող են դրսևորվել հենց այս տարվա ընթացքում: Եվ դրանք վերաբերում են ձեր կյանքի որոշ աննշան բաների: Ասենք, դուք ուզում եք բուհ ընդունվել, բայց վախենում եք չհաղթահարել մրցույթը. կամ ուզում եք ճանապարհորդել դեպի որևէ երկիր, բայց չունեք անհրաժեշտ գումարը:

Շատ ցանկություններ կան, որոնք կապված են ձեր պատրաստված աշխարհի հետ: Եվ դուք ուզում եք դրանք իրականություն դարձնել:

Նախապես պայման դնեմ, որ ձեր ցանկությունները պետք է համապատասխանեն Աստծո Կամքին, որպեսզի իրականացվեն: Եթե այդպես լինի, ապա անպայման կիրականացվեն: Իսկ ի՞նչը կարող է խանգարել ձեր ցանկությունների բավարարմանը: Ձեր կարման՝ այն էներգիաները, որոնք առկա են ձեր աուրայում և թույլ չեն տալիս, որ աստվածային հնարավորությունները ձեր կյանքում դրսևորվեն:

Ուստի երբ նամակ եք հղում Կարմայական Վարչությանը և խնդրում, որ իրականացնեն ձեր որոշ ցանկությունները, ես հերթով դրանք դնում եմ կշեռքի մի նժարի վրա, իսկ մյուսին՝ ձեր կարման, որը խոչընդոտում է ձեր տվյալ ցանկության իրականացման հնարավորությունը: Արդյունքում դուք կա՛մ ստանում եք ձեր խնդրածը, կա՛մ ոչ:

Սակայն կարման ինչ-որ անփոփոխ բան չէ: Այն կարող է փոխվել կա՛մ դեպի լավը, կա՛մ դեպի վատը: Երբ նամակ եք գրում Կարմայական Վարչությանը, ապա ձեր խնդրանքի բավարարման դիմաց դուք պարտավորվում եք հաջորդ կիսամյակի ընթացքում որոշակի պարբերականությամբ և որոշակի քանակությամբ աղոթքներ ու Վարդարաններ կարդալ: Եվ եթե ձեր աղոթքների էներգիան հարկ եղած ուղղվածությունն է ունենում, ապա կարմայի նժարը թեթևանում է, որի արդյունքում աստվածային հնարավորությունը կարող է գերակշռել: Դա կարող է և՛ տեղի ունենալ, և՛ ոչ: Ամեն ինչ կախված է այն կարմայի ծանրությունից, որը դրված է կշեռքի մյուս նժարի վրա:

Այնուհանդերձ ցանկացած կարմա կարող է բեռնաթափվել, և ցանկացած խոչընդոտ կարող է վերացվել: Ամեն ինչ կախված է ձեր նկրտումից:

Օրինակ՝ ես գիտեմ մարդկանց, որոնք փորձել են վերջ տալ վատ սովորությանը՝ ծխելուն: Մի ամբողջ կիսամյակ նրանք ամեն օր Վարդարան են կարդացել, բայց այդպես էլ չեն թողել ծխելը:

Այդ վատ սովորությունը ձեր ենթագիտակցության մեջ արմատավորվել է տասնամյակների ընթացքում: Ուստի շատ հազվադեպ դեպքերում է հաջողվում դրանից ազատվել կես տարվա ընթացքում: Սակայն դուք մշտապես պետք է ամենօրյա ձգտում ցուցաբերեք, որպեսզի ազատվեք ձեր վնասակար սովորությունից:

Հասկանո՞ւմ եք, պետք է ամեն օր անկեղծորեն ցանկանաք ձերբազատվել վնասակար սովորությունից և խնդրեք Աստծուն, որպեսզի ձեզ օգնի:

Ես չգիտեմ, թե ձեզնից յուրաքանչյուրին ճշգրիտ որքա՞ն ժամանակ հարկ կլինի խնդրել Աստծուն, որպեսզի ձեր խնդրանքը բավարարվի, սակայն գիտեմ, որ դա անպայման տեղի կունենա, եթե ձեր խնդրանքը մշտապես ճնշում գործադրի աստվածային հնարավորության նժարի վրա՝ ի հակադրություն մյուս նժարի, որի վրա դրված է ձեր այն կարման, որը միջնորմ է ձեր և աստվածային հնարավորության իրականացման միջև:

Ձեր աշխարհում ահա այդպիսի՛ն է հնարավորության իրականացման մեխանիզմը:

Եվ եթե այն նույն նախանձախնդրությամբ, ինչպես երբեմն ձգտում եք իրականացնել ձեր ցանկությունները ֆիզիկական աշխարհում, ձգտում դրսևորեք այն աստվածային հնարավորությունների նկատմամբ, որոնք սպասվում են Ոսկեդարի մարդկությանը, և եթե նման ցանկություն դրսևորի Երկրի վրա մարմնավորված մարդկանց գոնե մի քանի տոկոսը, ապա Ոսկեդարն արդեն կսկսի աստիճանաբար իջանել ֆիզիկական աշխարհ:

Աստվածային կերպերը պատրաստ են էջքի: Դրանք միայն սպասում են, որ ձեր գիտակցությունը մի փոքր ազատվի շրջակա պատրանքի վրա մշտապես սևեռվելուց, որպեսզի աստվածային կերպերը ձեր գիտակցության միջով ներթափանցեն ֆիզիկական աշխարհ:

Հավատացե՛ք ինձ, ամեն ինչ տեղի կունենա կարծես ինքնաբերաբար: Միայն պահանջվում է, որ ձեր գիտակցությունը պատրաստ լինի անցում կատարելու Էվոլյուցիոն զարգացման նոր գալարի վրա:

Աստծո օգնությամբ ամեն ինչ հնարավոր է: Միայն ափսոս, որ մարդկությունն իր հիմնական մասով առաջվա պես Հավատի պակաս ունի: Այն Հավատի, որն անտեսանելիորեն ձեզ թույլ է տալիս ձեր գիտակցությամբ կառչելու ձեր հավատի առարկայից, որպեսզի այն ներքաշվի ձեր աշխարհ:

Այսօր ես ձեզ այցի եկա, որպեսզի ձեզ վստահություն ներարկեմ և ասեմ, որ դուք մենակ չեք, որ Լույսի էակների մի ամբողջ Հիերարխիա ջանք է թափում, որպեսզի կրիտիկական պահին օգնություն ցուցաբերի Երկրի մարդկությանը:

Մի՛ կորցրեք ձեր Հավատն ու Հույսը և պահպանե՛ք Սերը ձեր սրտերում: Վստահ եմ, որ ձեզ ամեն ինչ կհաջողվի...

ԵՍ ԵՄ Պորցիան՝ Հնարավորության Աստվածուհին

Գուան Ին
19 հունիսի, 2010 թ.

Նշանակալից գրույց ձեզ համար

ԵՍ ԵՄ Գուան Ինը: Ես եկել եմ ամառային արևադարձի և Կարմայական Վարչության նիստի նախօրյակին: Ուստի այսօրվա մեր գրույցը նշանակալից կլինի ձեզ համար, ձեր գիտակցության համար:

Նախ կուզենայի ձեր ուշադրությունը հրավիրել այն իրավիճակի վրա, որը ձևավորվել է մեր դեպանորդի Աշրամի շուրջ: Ձեզ հայտնի է, որ արդեն երեք տարի է անցել, ինչ նա հաստատվել է այդ վայրում:

Սակայն մենք մեր խորին ափսոսանքն ենք հայտնում, որ ռուս ժողովուրդը մեզ հարկ եղած չափով չաջակցեց: Չդրսևորեց այն աջակցությունը, որը մենք ակնկալում էինք: Քանզի շատ դատարկ ու հետաքրքրասեր մարդիկ փրփուրի պես վեր ելան, բայց այն անեղծներն ու նվիրյալները, որոնք Լույսի մեր առաքելությունը կյանքի կոչելու նպատակով մարմնավորվել էին, այդպես էլ ջրի երես չբարձրացան:

Այդ պատճառով մենք հիմա որոշում ենք փոխել մեր մարտավարությունը: Մենք չենք փոխի մեր նպատակները, բայց այլևս ժամանակ չենք հատկացնի, որ ի հայտ գան նրանք, ովքեր Լույսի այս առաքելությանն օժանդակելու նպատակով մարմին են առել:

Մենք ստիպված ենք նահանջել: Եվ ակտիվ գործողությունների ժամանակահատվածն այժմ կփոխվի: Իսկ ձեզ հնարավորություն կտրվի, որ մտասևեռվեք իմ խոսքերի և Ուսմունքի բոլոր այն տեքստերի վրա, որոնք մենք փոխանցել ենք մեր դեպանորդի միջոցով:

Մենք այսքան թանկ գին ենք վճարում ամեն մի ուղերձի համար ոչ այն նպատակով, որ դուք մատների արանքով նայեք դրան՝ առանց խորանալու էության մեջ և դեն նետեք այնպես, կարծես դրա մեջ ոչ մի նոր բան չեք գտել ձեզ համար:

Դուք այդպես էլ պատրանքի մեջ մի ուսմունքից մյուսին կանցնեք՝ փորձելով գտնել ինչ-որ զգայացուցց հայտնություններ, քանի դեռ կանգ չեք առնի այն միակ Ուղու վրա, որը ձեր աշխարհից իրական ելքի է տանում: Իսկ այդ Ուղին հենց ձեր ներսում է: Դա ոչ թե արտաքին, այլ ներքին Ուղի է: Դրանով են ընթացել անցյալի բոլոր դեսպանորդներն ու մարգարեները, այդ Ուղին են ուսուցանել ճշմարիտ Ուսուցիչները վերջին մի քանի հազարամյակների ընթացքում:

Մարդկությունը դաս չի առնում: Նա անվերջ շարունակում է վազել արտաքին ուսմունքի հետևից, ինչ-որ հրաշագործ գործառնություններ է փնտրում, որպեսզի դրանց միջոցով հրաշքի պես հայտնվի գիտակցության նոր աստիճանի վրա:

Ցավոք, առանց սեփական հոգու զորացման հնարավոր չէ բարձրանալ գիտակցության նոր մակարդակի վրա: Միայն անձնական ջանքերի ու անձնական նվաճումների շնորհիվ դուք կարող եք վեր բարձրանալ: Այլապես ստիպված կլինեք թափառել պատրանքի մեջ:

Ոչ մի արտաքին մեթոդ չի կարող ձեզ օգնել, որ բարձրանաք գիտակցության նոր մակարդակի վրա: Միայն ձեր էության մեջ կամերտոնի պես հնչող Աստվածայինի հետ համահնչունությունն է ունակ ձեզ դուրս հանելու էվոյուցիոն փակուղուց:

Ես եկա եմ ոչ այնքան ուրախ ուղերձով: Սակայն, որպեսզի ըմբռնեք պարզ ճշմարտությունները, երբեմն հարկ է լինում, որ դրանք լսեք բազմաթիվ անգամներ և այն էլ՝ ոչ ամենանուրբ մատուցմամբ:

Ես ունեմ այդ իրավունքը, որ ասեմ ձեզ այս ոչ այնքան հաճելի բաները: Քանզի հարյուր հազարավոր տարիներով ծառայում եմ Երկրի մարդկության կենսահոսքերին: Այդ ընթացքում շատ անգամ եմ մարմին առել: Բուդդայականները հիշում են իմ ոչ շատ վաղ անցյալի մարմնավորումները:

Մարդկությանը մատուցվող իմ ծառայությունը հիմնված է մարդկանց հոգիների նկատմամբ կարեկցանքի վրա: Ես տեսնում եմ, թե ձեզնից շատերն ինչպիսի՜ անտանելի տառապանքներ են կրում՝ ելք չգտնելով կարմայական իրավիճակի այն թակարդից, որի մեջ հենց իրենք են ընկել, բայց դրանում մեղադրում են իրենց ողջ շրջապատին: Մոռանում են Ուսմունքի տողերը, մոռանում են այն ճշմարտությունը, որը գրված է անցյալի բոլոր սուրբ գրքերում. «Ինչ որ ցանես, այն էլ կինձես»:

Դուրս գալ ձեզ շրջապատող իրադրության ընկալման մի այլ մակարդակի վրա՝ նշանակում է հասնել այն գիտակցությանը, որ այդ իրադրությունը հենց ինքներդ եք ստեղծել՝ այն խոսքերով, որ ասել եք, ձեզնից բխած այն հույզերով, որոնց ազդեցության տակ մեկը մյուսի հետևից չկշռադատված արարքներ եք գործել:

Եթե գիտակցեք, որ պատրանքն իր այն դեմքով է շուռ գալիս դեպի ձեզ, որը համահունչ է ձեր անցյալի արարքներին ու նախընտրանքներին, ապա դա կլինի այս փուլի ձեր ամենամեծ նվաճումը:

Ներքին աշխատանքը պետք է համակցվի հոգևոր գործառնությունների հետ: Դուք մշտապես՝ ամեն օր, պետք է անցկացնեք այն հոգևոր գործառնությունը, որը ձեզ հոգեհարազատ է և կատարման համար հանելի: Եթե ձեզ ամենահարմար ժամանակ, լավ է՝ օրվա սկզբին, թեկուզ կարճատև՝ 10-15 րոպեով, կարողանաք պահպանել ձեր գիտակցության վսեմ վիճակը, ապա կատանաք այն փրկարար օղակը, որով կկարողանաք լողալ պատրանքի ծովի երեսին՝ առանց գլխովին դրա մեջ սուզվելու:

Ցավոք, մարդկության ընդհանուր վիճակն այնպիսին է, որ ստիպված եք լինում միայնակ դեգերել պատրանքի ծովում: Բայց դա ձեր կատարած նախընտրանքն է: Իսկ այն աստվածային հնարավորությունը, որն այս երեք տարիների ընթացքում բաց էր ձեզ համար, արդեն ավարտված է:

Նոր աստվածային հնարավորություն կարող է բացվել միայն այն դեպքում, եթե բավարար թվով անհատներ ցուցաբերեն գիտակցության այնպիսի մակարդակ, ինչպիսին մենք ակնկալում ենք տեսնել:

Իսկ ամեն կորցրած աստվածային հնարավորությունից հետո ձեզ վիճակվում է ավելի վատ պայմաններում ամեն ինչ սկսել նորից:

Աշխարհը հակված չէ յուրացնելու այն պարզ ճշմարտությունները, որոնք մենք տալիս ենք հազարամյակների ընթացքում:

Բայց և այնպես, որպեսզի իմ այսօրվա ուղերձն ավարտեմ ուրախ նոտայով, պետք է ասեմ, որ Աստված մի փոքր կիսաբաց է թողնում դուռը, որպեսզի Լույսը ձեզ տեսանելի լինի, և դուք մղվեք դեպի այն:

Արդ, կրկնեմ, որ աստվածային նոր հնարավորություն կարող է բացվել, եթե բավարար թվով անհատներ ցուցաբերեն նոր գիտակցության մակարդակ:

Իսկ այժմ թույլ տվեք հրաժեշտ տալ ձեզ:

ԵՍ ԵՄ Գուան Ինը

Բաբաջի
20 հունիսի, 2010 թ.

**Դուք պետք է կողմնորոշվեք, թե որն է ձեզ համար ավելի կարևոր՝
ձե՛ր աշխարհը, թե՛ Աստծո Աշխարհը**

ԵՍ ԵՄ Բաբաջին: Ես կրկին ձեզ այցի եմ եկել:

Այսօր ես եկել եմ, որպեսզի լրջորեն խոսեմ ձեզ հետ: Մինչև ամառային արևադարձը հաշված ժամեր են մնացել: Եվ այն աստվածային հնարավորությունը, որը Լույսի այս առաքելությամբ մատուցվում էր մարդկությանը, արդեն հասնում է իր ավարտին:

Զգիտեմ դուք՝ ինչպես, բայց մենք տխուր ենք:

Երեք տարի է անցել այն օրից, երբ Վեհապետները հատուկ դիմեցին Ռուսաստանի ժողովրդին*: Մենք դիտում էինք, թե հետո ինչ է լինելու: Ես նույնպես դիտում էի: Քանզի մինչև հիմա աչքիս առաջ է իմ վերջին մարմնավորման իրողությունը: Ես Աստծո էներգիա փոխանցելու հնարավորություն ունեի: Եվ շնորհիվ այդ էներգիայի՝ իմ կողմը գրավեցի շատ մարդկանց, որոնք դեպի ինձ էին թռչում Լույս ճաշակելու համար: Ես տեսնում էի նրանցից յուրաքանչյուրի ողջ ներաշխարհը: Ես կարողում էի նրանց մտքերը և կարող էի նրանց հոգու մասին իմանալ նույնիսկ

այնպիսի բաներ, որոնց մասին հենց իրենք չգիտեին կամ ամաչում էին իրենք իրենց դա խոստովանել:

Բոլոր այդ մարդիկ, որոնք իմ Աշրամն էին գալիս զանազան երկրներից, հիմնականում ձգվում էին դեպի Լույսը: Նաև նրանց համար հետաքրքիր էր իմ կազմակերպած բազմաթիվ գեղեցիկ ծեսերին մասնակցելն ու համատեղ քաջաններ երգելը:

Իհարկե, շատ եվրոպացիների ինձ մոտ էր բերում Էկզոտիկայի ծարավը: Սակայն ես միշտ առաջնորդվում էի այն ուղղությամբ, որն իմ ներսում էր գտնվում: Եվ ես հանդուրժեցի բոլոր խոնարհումներն ու պաշտումները, քանի որ հասկանում էի, որ շատ մարդկանց համար արտաքինապես Գուրուին պաշտելն ուղղակի անհրաժեշտություն է: Քանզի այդպիսին է նրանց գիտակցության զարգացման մակարդակը:

Ամեն տարի մի քանի հարյուր մարդ այցի էր գալիս իմ Աշրամը: Եվ այդ հարյուրավոր մարդկանց մեջ միայն մի քանիսն էին, որոնք պաշտում էին ինձ որպես իրենց Ուսուցչի՝ իրենց վրա կրելով իմ առաքելության մի մասը:

Այժմ մենք տեղափոխվել ենք մի ուրիշ երկիր՝ Ռուսաստան: Եվ մեր կողմից կիրառվող մեթոդը հիմա այլ է: Մենք ուղերձներ ենք տալիս: Քանզի մարդկանց մեծամասնությունը, որոնք օգտվում են համացանցից կամ գրքեր կարդում, էներգիան ընկալում են խոսքի միջոցով: Եվ նրանց համար ավելի կարևոր է մեր ուղերձների էներգետիկական բաղադրիչը, քան մարմնական խելքին բաժին հասնող մենտալային սնունդը:

Եվ հիմա ոչ թե հարյուրավոր մարդիկ են ընկալում մեր Ուսմունքը, այլ, երկրագնդի մասշտաբով վերցրած, տասնյակ հազարավոր մարդիկ:

Եվ ահա իրավիճակը կրկնվում է: Շատ են նրանք, ովքեր ուզում են հրաշքի ականատես դառնալ, և շատ քիչ են նրանք, ովքեր իսկապես նվիրվում են այն գործին, որն ի կատար են ածում Վեհապետները, և է՛լ ավելի քիչ են նրանք, ովքեր հավատարիմ են մեր դեսպանորդին:

Հիերարխիայի արտաքին ներկայացուցիչն առանցքային դեր է խաղում այս գործընթացում: Եվ կախված այն բանից, թե մարդիկ ինչպես են ընկալում մեր ներկայացուցչին ու այն Ուսմունքը, որը նա փոխանցում է, ողջ մարդկության զարգացման համար կա՛մ բացվում է աստվածային հնարավորություն, կա՛մ այդ հնարավորությունը հետ է վերցվում:

Եվ այսպես, ժամկետ էր դրված՝ երեք տարի, որպեսզի ազգը հոգածություն դրսևորեր դեսպանորդի նկատմամբ: Իսկ ի՞նչ տեղի ունեցավ այդ ընթացքում:

Երկու տարի մեր դեսպանորդը զբաղվեց շինարարությամբ: Երրորդ տարին անցավ չընդհատվող դատական քաշքշուկների մեջ: Ընդմիջում եղած ժամանակ էլ խրվում էր տնտեսական հոգսերի մեջ. սանհանգույց էր նորոգում, մերձակա դաշտերն էր կարգի բերում՝ գործերի արանքում վերանորոգելով այն ամենը, ինչ հրատապ վերանորոգման պահանջ էր առաջացնում:

Կարելի է ասել, որ այդ գործերը, ինչպես ընհանրապես ամեն մի գործ, որն ուղղված է Համընդհանուր Բարիքի ավելացմանը, անօգուտ չէին և մեր դեսպանորդի համար անանց զանձերի վերածվեցին Երկնքում:

Իսկ ի՞նչ ասենք ազգի մասին... Ազգը գրկվեց ամենակարևոր բաներից՝ կենդանի Խոսքը ստանալուց, ուսուցումից ու սեմինարներից:

Այժմ մի պահ ձեզ դրեք Համբարձյալ Վեհապետների տեղը: Արդյոք կշարունակեի՞ք էներգիա ներդնել մի գործում, որը սպասվող եկամուտը չի տալիս: Իհարկե, եկամուտը մենք այլ կերպ ենք հասկանում, քան դուք: Չգիտես ինչու, դուք ամեն ինչ փողով եք չափում. փող որ եղավ, ամեն ինչ էլ կլինի: Իսկ մեր հասկացած եկամուտն ազգի գիտակցության աճն է: Եվ ունենք չափանիշներ, որոնցով դատում ենք ձեռք բերված գիտակցության մակարդակի մասին: Դրանցից գլխավորն այն վերաբերմունքն է, որը դրսևորվում է Խոսքը փոխանցող դեսպանորդի նկատմամբ:

Արդյո՞ք մեր ներկայացուցիչը Երկրի վրա արժանանում է հարկ եղած հարգանքին:

Կա՞ն արդյոք մարդիկ, որոնք իրենց կյանքը կառուցում են ըստ մեր տված Ուսմունքի:

Հնարավոր է, որ փորձեք ինձ համոզել, որ դուք գործում եք ստացած Ուսմունքին համապատասխան և անում եք այն ամենը, ինչ ասում են Վեհապետները. Վարդարաններ եք կարդում, բնության գրկում կացարաններ եք կառուցում, կրթում եք երեխաներին ու երիտասարդությանը:

Գուցե թե այդ ամենն իսկապես կատարվում է: Բայց կատարվում է գեղարվեստական ինքնագործունեության մակարդակով՝ այնպես, ինչպես դուք դա հասկանում եք ձեր գիտակցության մակարդակով: Իսկ մենք կուզենայինք, որ այդ ամենն արվեր այնպես, ինչպես մենք ենք ճիշտ համարում՝ ելնելով մեր գիտակցության համբարձյալ մակարդակից: Այն է՝ կան բազմաթիվ ստորջրյա խութեր ու ջրապտույտներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել: Ըստ էության, ամեն մի քայլը պետք է լավ կշռադատվի և համապատասխանեցվի աստվածային

ուղղությանն ու աստվածային կերպերին: Իսկ դրա փոխարեն դուք ամեն ինչում գործածում եք զուտ մարդկային չափանիշներ: Դե, ձեզ համար այդպես ավելի հեշտ է. համարում եք, որ ներքնապես ոչինչ հարկ չկա փոխելու: Եվ ես համոզված եմ, որ շատ շուտով չարի գործունյա ներկայացուցիչները «փակի տակ կդնեն» ձեր ստեղծած համայնքները կամ աշրամները:

Եվ հենց այդպես էլ կլինի, քանի դեռ չեք մտածում, թե ձեր ինչի՞ն է պետք այդ ամենն առանց ամենակարևորի՝ գիտակցության մակարդակի, որին պետք ձգտեք հասնել:

Իսկ ձեր գիտակցության պատշաճ մակարդակի հայտանիշն այն է, թե ինչպես եք վերաբերվում մեր դեսպանորդին: Անհնար է Ուսմունք ստանալ՝ միաժամանակ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով Ուսմունքի աղբյուրի նկատմամբ: Այլապես ինչ որ ստանաք, հենց ձեր աչքի առաջ ոսկուց կփոխակերպվի մոխրակույտի:

Բարձրագույն աղբյուրի նկատմամբ ականաճանքի պահպանումն անհրաժեշտ պայման է:

Երեք տարի մենք Ուսմունք տվեցինք՝ ուշք չդարձնելով այն խոչընդոտներին, որոնք կանգնում էին մեր առջև: Անկախ ընթացող շինարարությունից, անկախ դատավարություններից:

Սակայն կա՞րդյոք որևէ օգուտ նման ուսուցումից:

Օրենքն անխափան է գործում: Նոր գիտակցության մակարդակ կստանաք միայն այնժամ, երբ գիտելիք ստանալու ընթացքում անվերապահ սեր կտածեք Ուսուցչի նկատմամբ և կդրսևորեք ձեր նվիրվածությունը Վեհապետներին:

Եվ մեր պահանջների մակարդակը մենք չենք իջեցնի ի նպաստ այս կամ այն անհատի, որն ուզում է և՛ Աստծուն ծառայել, և՛ զուտ իր անձի հոգսերը հոգալ:

Դուք պետք է կողմնորոշվեք, թե որն է ձեզ համար ավելի կարևոր՝ ձե՞ր աշխարհը, թե՞ Աստծո Աշխարհը:

Եվ նախընտրանքների այն թվացյալ բազմազանությունը, որն ամեն օր կանգնում է ձեր առջև, ի վերջո գալիս ու հանգում է այդ ամենակարևոր նախընտրանքին:

Մենք աստվածային հնարավորության դուռը ողջ այս ընթացքում բաց էինք պահում: Իսկ հիմա արդեն բոլորաշրջանը փակվեց, և սկսվեց մի ուրիշ փուլ:

Կարմայական Վարչությունն արդեն մոտակա երկու շաբաթում կանի իր եզրակացությունները և համապատասխան որոշում կընդունի:

ԵՄ ԵՄ Բարաջին

* Դիմումի բովանդակությունը բերում ենք ստորև՝

* * *

**Վեհապետների դիմումը Ռուսաստանի ժողովրդին
(հատված Տ. Ն. Միկուշինայի ելույթից)**

Մոսկվա, 24 մարտի, 2007 թ.

Երեկ, երբ ես ներխուժման մեջ էի Տեր Մայրեյայի ներկայությամբ, Նա ինձ հետևյալն ասաց...

Բայց նախ՝ մի երկու խոսք: Ամեն անգամ, երբ ավարտվում է Վեհապետների կողմից նախաձեռնված որևէ միջոցառում, ես կանչ եմ հղում իմ Ուսուցչին, և Նա ինձ ասում է, թե հետո ինչին պետք է նախապատրաստվել:

Մոտ մեկ ամիս առաջ պետք է հարցում կատարեի Բուլղարիայի սեմինարի վերաբերյալ, և այն ժամանակ էլ այդ հարցը տվեցի: Եվ Տեր Մայրեյան ահա թե ինչ ասաց. «Այն սեմինարից հետո, որը «Ձեռնադրումների Ուղին» անունն է կրում, ամեն ինչ կարող է շատ խիստ փոխվել»:

Ես այն ժամանակ չհասկացա, թե դա ինչ է նշանակում: Եվ երեկ՝ ներխուժման ընթացքում, ես նորից կրկնեցի նույն հարցը. «Հետո՞ ինչ է լինելու...»

Քանի դեռ չես հասել փողոցի անկյունին, չի երևում, թե այն կողմում ինչ կա...

Այնուհետև մոտ մեկ ժամ շարունակ մտքերի հոսք տեղի ունեցավ, որը, սակայն, չձևավորվեց որպես թելադրություն. բայց դրանք այնպիսի մտքեր էին, որոնք ինձ չափազանց լուրջ երևացին: Եվ հիմա կարող եմ կրկնել այն ամենը, ինչ հասկացա...

Իրականում Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդի պատմունճանն ինձ տրվել է 2004 թ-ի մարտ ամսին: Այսպիսով, երեք տարի է անցել այն օրից, ինչ Մեծ Սպիտակ Եղբայրության Դեսպանորդն ու նրա Պատմունճանը հնարավորություն են ստացել ներկա գտնվելու Ռուսաստանում: Իսկ դա արդեն որոշակի ժամանակահատված է, որը հատկացվում է տվյալ ազգին, տվյալ երկրին:

Ձեզ հայտնի է, թե ինչ եղավ Հիսուսի դեպքում: Նախքան ավանակի վրա նստած Երուսաղեմ մտնելը նա արդեն երեք տարի քարոզել էր Իսրայելի ժողովրդին: Քաղաքում նրան դիմավորեցին արմավենու ճյուղերով և գոչում էին. «Օվսաննա, օվսաննա...» Իսկ հետո... Ուրբաթ օրը նրան խաչեցին: Դրանով իսկ հանձինս նրանց, ովքեր բռնեցին, տանջեցին ու մահապատժի ենթարկեցին, ազգը կատարեց իր ընտրությունը: Եվ Իսրայելի ժողովուրդը ցրիվ եկավ աշխարհով մեկ:

Ռուսաստանը շատ կարևոր երկիր է: Եվ հիմա պարզ է դառնում, թե ինչու: Որովհետև Ռուսաստանը 70 տարվա ընթացքում հնարավորություն է ունեցել բարձրացնելու իր գիտակցության մակարդակը՝ որպես ազգ կրելով իր փորձությունները... (Այսինքն՝ ոչ միայն առանձին անձերն են ձեռնադրումներ անցնում, այլ

ամբողջական ազգերը)... Եվ Ռուսաստանը հնարավորություն ուներ հասնելու գիտակցության այն մակարդակին, որի շնորհիվ հետագայում կկարողանար կարևոր ընտրություն կատարել:

Գիտեք նաև, որ Բլավատսկայան, ապա Ռեբիխները չկարողացան մնալ Ռուսաստանում: Նրանք իրենց Ուսմունքը տվեցին Ռուսաստանի սահմաններից դուրս: Եվ ողջ անցյալ 20-րդ դարում Մեծ Սպիտակ Եղբայրությունն իր Ուսմունքը տվեց Ամերիկայի տարածքում: Ապա, ինչպես գիտենք Վեհապետների թելադրություններից, Լույսի կիզակետն Ամերիկայից տեղափոխվեց Ռուսաստան: Լույսի կիզակետն այնպիսի ինչ-որ բան չէ, որ կարելի լինի շոշափել: Դա այն է, ինչ ներսում է գտնվում: Դա պարզապես մի հնարավորություն է, որով մեկը կարող է Աստծո Լույս փոխանցել մի ողջ ժողովրդի:

2004 թիվ... Երեք տարի... Եվ փոփոխությունները, որոնք այժմ տեղի են ունենում Ռուսաստանում, նկատելի են անգն աչքով: Աստծո Էներգիան ֆիզիկական ոլորտում դրսևորվում է որպես դրամական Էներգիա: Եվ Ռուսաստանին կվիճակվի հարուստ երկիր դառնալ, եթե նա անցնի իր Ձեռնադրումները:

Երբ Ուսմունքը տրվեց Ամերիկայի տարածքում, Ամերիկան վերածվեց հարուստ երկրի: Հարցն այն էր միայն, թե ազգն ինչպես կտնօրինի իր ստացած Լույսը: Եվ Ամերիկան գնաց ոսկե հորթին պաշտելու ճանապարհով: Այսինքն ողջ այն Լույսը, որն ամբողջ 20-րդ դարում Վեհապետները տվեցին Ամերիկային, հատկացվեց այն բանին, որ մարդիկ ընտրեն արտաքինը, ընտրեն այս աշխարհի ճոխությունները և ծառայեն դրանց:

Իսկ հիմա արդեն ժամանակ չի մնացել: Եվ այն, ինչ Ամերիկայում տասնյակ տարիներ է տևել, Ռուսաստանին տրվեց այս ընթացքում: 3 տարի, և երկիրն արդեն կանգնած է ընտրության առաջ: Եվ, ինչպես Ամերիկայի դեպքում էր, Ռուսաստանն էլ պետք է կատարի իր ընտրությունը: Ի՞նչը կընտրվի: Հոգևոր, աստվածային Ուղի՞ն, թե՞ ոսկե հորթին պաշտելը: Սա է այն երկրնորանքը, որն այժմ դրված է ազգի առջև:

Ես հարց տվեցի՝ ի՞նչ է լինելու հետո: Հունիս-հուլիս ամիսների համար պլանավորված էր թելադրությունների ամառային շրջան, պետք է նաև սեմինար տեղի ունենար: Բայց Մայտրեյան թույլ չի տալիս. Նրանք ինձ աշխատելու հնարավորություն չեն տալիս: Նրանք ասում են, որ... Ռուսաստանն այս ընթացքում ոչինչ չտվեց ինձ: Ես նույնիսկ տեղ չունեմ ապրելու համար: Թե ինչպես է ժողովուրդը վերաբերվում Վեհապետների Դեսպանորդին, շատ բան է ասում...

Բանը կոնկրետ իմ անձի մեջ չէ: Իրականում ինձ համար շատ ծանր է այս ամենի մասին հիմա խոսելը: Քանզի մարդկային մակարդակով թվում է, թե ես ինձ համար եմ ինչ-որ բան փնտրում: Այնինչ ինձ ոչինչ պետք չէ: Իսկ հարցը, իրոք, շատ լուրջ է դրված:

Եվ եթե Վեհապետները հետ վերցնեն Լույսի կիզակետը, ապա դա կնշանակի, որ Ռուսաստանը չի հանձնել իր թեստը: Սովորաբար ազգն իր ընտրությունը մարդկանց միջոցով է կատարում, այն մարդկանց միջոցով, որոնք ներկա էին Հիսուսի մահապատժին, և այն մարդկանց միջոցով, որոնք հնարավորություն ունեցան մասնակցելու սույն հանդիպմանը: Նշանակում է՝ Աստված խոսում է ձեզ համար:

Աստված խոսում է ձեզ համար...

Աստված խոսում է ձեզ համար...

Հնարավոր է, որ այս հանդիպումը վերջի՞նք լինի: Չգիտեմ...

Ահա սա՛ է այն ամենն, ինչ երեկ ես հասկացա Տեր Մայտրեյայի ներկայությամբ ունեցած իմ ներխուժման ընթացքում:

Տադյանա Միկուշինա

Վեհապետ Էլ Մորիա
21 հունիսի, 2010 թ.

Եզրափակիչ ուղերձ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան:

Վշտացած եմ տալիս այսօրվա իմ ուղերձը...

Ձեզ հայտնի է, որ հենց ես էի, որ Մեծ Կենտրոնական Արևից ձմեռային շրջանի ուղերձները տալու թողության շնորհի ձեռք բերեցի: Ես պայքարեցի նաև այս ամառային շրջանի թելադրությունները տալու հնարավորության համար:

Սակայն մեր ուղերձներն առաքելու աստվածային հնարավորությունն արդեն սպառված է:

Դուք հավանաբար կարծում էիք, թե մեր Էներգիան անվերջ կստանա՞ք ու կստանաք...

Բայց մի՛ մոռացեք, որ մենք, ինչպես և դուք, պատասխանատու ենք Աստծո Էներգիայի ծախսման հարցում: Եվ ամեն մի թողության շնորհ, Աստծո ամեն մի ողորմածություն նախքան շնորհվելը համաձայնեցման մանրագնին գործընթաց է անցնում Տիեզերական Հիերարխիայի բոլոր մակարդակներում:

Ձեզնից ոչ ոք չի կարող դժգոհել, որ այս վեց տարիների ընթացքում, երբ մենք տալիս էինք մեր ուղերձները, երբևէ նեղացված է եղել: Մենք լայնորեն տվեցինք մեր Ուսմունքն ամենամատչելի մակարդակով: Մենք բառացիորեն ձեզ գդալով կերակրեցինք, ինչպես մանուկների, և հիմա

իրավունք ունենք ակնկալելու որոշակի արդյունք մեր ջանքերի դիմաց: Քանզի, եթե մեր ջանքերն անտեղի են եղել, մեզնից կպահանջվի համապատասխան կարմայի բեռնաթափում:

Ուստի մենք անհամբերությամբ սպասում էինք մեր ջանքերի պտուղներին: Եվ այսօր ես պետք է նշեմ այն վշտալի փաստը, որ մենք սպասված արդյունքին չհասանք, և ռուս դեսպանորդի միջոցով ուղերձներ փոխանցելու աստվածային հնարավորությունը մոտեցավ իր ավարտին:

Թե ինչպես եք վերաբերվում մեր դեսպանորդին և մեր Ուսմունքին, դրանից նաև ձեզ կարմա է ավելանում: Եվ ողջ այն Լույսը, որը բխում էր մեզնից ու չէր օգտագործվում ըստ նշանակության, այն է՝ ձեր գիտակցության աճի համար, մարդկության համար հսկայական կարմա ստեղծեց:

Այդ իսկ պատճառով, որպեսզի փոքրացնենք մեր ուղերձներում պարունակվող էներգիայի սխալ դասակարգման հետ կապված մարդկության կարման, մենք այժմ ստիպված ենք դադարեցնել մեր ուղերձների փոխանցումը:

Թե ինչպես կգարգանան հետագա իրադարձությունները, կորոշեն Կարմայական Վարչությունն ու Բարձրագույն Տիեզերական Խորհուրդը:

Ես իմ կողմից պատրաստ եմ շարունակելու իմ Սպասավորությունը մարդկությանը, սակայն չեմ կարող դուրս գալ այն սահմանափակումների շրջանակներից, որոնք դուք ստեղծել եք Խոսքի նկատմամբ ձեր սխալ վերաբերմունքով:

Ֆիզիկապես ձեզ համար ոչինչ չի փոխվի: Որոշ ժամանակ դուք դեռ կշարունակեք ձեր գոյությունը: Բայց այն, ինչի մասին մենք շարունակ զգուշացնում էինք և փորձում մարդկությանը գերծ պահել դրանից, անխուսափելիորեն տեղի կունենա: Եվ այստեղ մենք չենք կարող ասել, թե ոչինչ չենք արել և չենք նախաձեռնել բոլոր հնարավոր և անհնարին միջոցները:

Ազատ կամքի օրենքը մեզ թույլ չի տալիս ձեզ կանգնեցնել, եթե որոշել եք սլանալ դեպի անդունդ: Իսկ մարդկությունը հիմա հենց դա է անում:

Ուստի այն հատիկները, որ այս ընթացքում մենք ցանեցինք մարդկանց հոգիներում, աճ կտան միայն այն դեպքում, եթե բարենպաստ պայմաններ ստեղծեք դրա համար:

Իսկ մենք ստիպված ենք մի կողմ քաշվել և լինել դիտորդների դերում:

Ամենացավալին այն է, որ Երկրի համար այս ամենադժվարին ժամանակներում մարմնավորվել են մարդկության լավագույն ներկայացուցիչները: Եվ որքան ծանր է մեզ համար դիտելը, թե ինչպես են նրանք հնազանդորեն, ինչպես օձերը սրինգի նվագի տակ, կատարում այն նույն շարժումները, որոնք ընդունված են հասարակության մեջ. կարծես կախարդված լինեն պատրանքի մոգական ուժով:

Պահանջվում է պոռթկում իրականացնել գիտակցության մեջ, քանզի առանց դրա մարդկությունը դատապարտված է:

Դուք կա՛մ կհետևեք այն ուղուն, որը համապատասխանում է Էվոյուցիայի պահանջներին, կա՛մ էլ ձեզնով կլրացնեք պատմության աղբաւոցը՝ որպես ևս մեկ քաղաքակրթություն, որը չի դիմացել պատրանքի կախարդիչ ուժին:

Այլևս դժվար թե հաջողվի ավելի պարզ ու մատչելի ձևով շարադրել մեր Ուսմունքի հիմնարար դրույթները:

Ես խնդրում եմ, որ ամենայն ուշադրությամբ վերաբերվեք իմ խոսքերին և մնացած ժամանակի ընթացքում մանրագին կերպով կշռադատեք դրանք:

Ես անհանգիստ եմ իմ այն սաների համար, որոնք մարմնավորման մեջ են, և որոնց համար ես կարմայական պատասխանատվություն եմ կրում: Հավանաբար սա իմ վերջին դիմումն է՝ ուղղված ձեզ, որը դուք կարող եք կարդալ ու ընկալել ձեր արտաքին գիտակցությամբ: Իսկ ինչ վերաբերում է Դարձիլինգյան սրբազան Մենաստանում տարվող աշխատանքին, ապա այնտեղ դուք կկարողանաք հանդիպել ինձ հետ և Ուսմունք ստանալ: Սակայն պատրանքի քողն այնքան թանձր է, որ հազի՛վ թե կարողանաք ձեր արտաքին գիտակցությամբ մտաբերել այն խոսքերը, որոնք ինձնից կլսեք իմ Մենաստանում:

Քանի որ, ինչպես երևում է, ձեզ ժամանակ է պետք, որպեսզի կշռադատեք և յուրացնեք մեր Ուսմունքը, ապա իմացե՛ք. հենց որ ձեր հոգին այնքան կհասունանա, որ ձեզ շրջապատող ամեն ինչը կտեսնեք ձեր Բարձրագույն Ես-ի աչքերով, ապա միշտ հիշեք, որ մենք հոգատար դայակների պես ձեր կողքին կանգնած կլինենք և կօժանդակենք անհրաժեշտ ամեն ինչով, որպեսզի դուրս գաք պատրանքից:

Իսկ եթե հույսեր եք կապում, թե մենք կծառայենք ձեր Էգոյին և կբավարարենք նրա բոլոր քմահաճույքները, ապա խորապես սխալվում եք: Մենք չենք կարող Աստծո էներգիայով անվերջ կերակրել ձեր Էգոյին:

Չէ՛-որ ասված է՝ *Մի՛ նետեք ձեր մարգարիտները խոզերի առաջ**:

Եվ այսպես, կատարե՛ք ձեր ընտրությունը և որոշում կայացրեք: Ձեր գիտակցության յուրաքանչյուր առողջ շիվը խնամքով կպահպանվի:

Իսկ մարդկային գիտակցության բոլոր մոլախոտերը կնետվեն տիեզերական աղբանոց:

ԵՄ ԵՄ Էլ Մորիսան

*Մտթ. 7:6

Ուղերձների տասներեքերորդ շրջան (դեկտեմբեր, 2010 թ. – հունվար, 2011 թ.)

Սանատ Կումարա
22 դեկտեմբերի 2010 թ.

Հասել է ձեր վերջնական ընտրություն կատարելու պահը

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Հիրավի, Երկնքի ողորմածությունն անսահման է:

Ամեն անգամ, երբ գալիս եմ ուղերձ տալու, սարսուռ եմ զգում և հրճվում բացված հնարավորությամբ:

Իսկ այժմ՝ ոչ մեծ նախաբանից հետո, ես պատրաստ եմ տալու հերթական ուղերձը: Կան շատ հոգիներ, որոնք լուրի են սպասում Երկնքից՝ այն ընկալելով որպես շնորհ և որպես նշան այն բանի, որ Երկնքն անտեր չի թողել Երկրի մարդկությանը:

Իհարկե, սիրելիներս, մենք չենք կարող մեր զավակին թողնել բախտի քմահաճությին:

Օ՛, բյուր հազար Լուսի Էակներ որքան են հոգ տանում ձեզ համար... Դրան դժվարությամբ են հավատում մարմնավորման մեջ գտնվողները, որովհետև չեն տեսնում մեզ: Բայց, հավատացե՛ք ինձ, մեր աշխարհներն իրարից զատող շղարշը բարակում է, որքան էլ ձեզնից շատերին դա տարօրինակ թվա: Եվ երբեմն բավական է մի փոքր փոխեք ձեր հայացքը տեղի ունեցողի նկատմամբ, և ձեզ համար կբացվի այն, ինչը թաքցված է մարդկանց աչքից: Ձեր առջև կբացվի հետագա զարգացման հեռանկարը: Բայց, իհարկե, այդ հեռանկարն ամենևին կապված չէ ձեր գիտության և տեխնիկայի նվաճումների հետ: Սակայն հենց գիտության և տեխնիկայի զարգացումն են նպաստում այն բանին, որ ձեր գիտակցությունը մղվի դեպի լինելիության ավելի նուրբ ոլորտները:

Ռժվացյալ հակասությունը լիովին բացատրելի է, իսկ մեր տեսակետից ոչ մի հակասություն էլ չկա: Երբ ձեր միտքը լարում էք այնպիսի բաների շուրջ, որոնք երբեմն հնարավոր չէ շոշափել, այլ հնարավոր է միայն պատկերացնել ձեր երևակայությամբ, դրանով իսկ դուք վարժվում եք փոխազդեցության մեջ մտնելուն ավելի նուրբ իրականության հետ, որը պատկանում է մենտալային ոլորտին: Եվ աստիճանաբար նոր տեխնոլոգիաները մարդկանց ստիպում են իրականության ընկալման իրենց կիզակետը տեղափոխելու ավելի նուրբ տիրույթներ:

Ձեզ թվում է, թե դուք մշտապես մնում եք ֆիզիկական մարմնի մեջ: Այո՛, դուք տեսնում եք շրջապատի առարկաները, կարող եք շոշափել դրանք, բայց օրվա մեծ մասի ընթացքում՝ ներառյալ գիշերային քունը, դուք հայտնվում եք լինելիության այլ ոլորտներում: Կբերեմ մի օրինակ, որպեսզի հասկանաք, թե ինչը նկատի ունեմ: Այնժամ, երբ մտածում եք մի մարդու մասին, որը գտնվում է ձեզնից հազարավոր կիլոմետրեր հեռու, դուք նրա հետ փոխազդեցության մեջ եք մտնում լինելիության ավելի նուրբ ոլորտում: Մտքերի ու զգացմունքների համար հեռավորությունը նշանակություն չունի:

Չուտ այն բանի պատճառով, որ դուք կոպտացրել եք ձեր հաղորդիչները, չեք կարողանում զգալ այն փոխազդեցությունները, որոնք տեղի են ունենում լինելիության նուրբ ոլորտում: Կան առանձին մարդիկ, ովքեր արդեն իսկ գիտակցաբար կիրառում են մտքի աշխատանք: Սակայն այն պատճառով, որ այդ մարդկանց շարժառիթները ոչ միշտ են մաքուր լինում, նման աշխատանքը ոչ միշտ է դրական արդյունքի բերում և հաճախ կարմա է ստեղծում: Միակ ճշմարիտ շարժառիթը, որով պետք է առաջնորդվեք լինելիության ցանկացած ոլորտի ձեր ցանկացած

գործողություններում, պետք է հիմնված լինի Բարեգթության, Կարեկցանքի, անշահախնդրության և հանուր Կյանքին օգնելու ցանկության վրա: Բոլոր մյուս շարժառիթները չեն լինի բավարար մաքուր և կհանգեցնեն սխալ արդյունքի կամ պտղի:

Ձեզ համար հասկանալի կդառնա, թե ինչի մասին եմ խոսում, եթե բերեմ ևս մեկ օրինակ: Պատկերացրեք, որ դուք օգտագործում եք հեղթական սեմինարի կամ պարապմունքի ժամանակ ձեզ տրված մեթոդիկան, որպեսզի մտային գործողությունների միջոցով երջանիկ ապագա կառուցեք ձեզ ու ձեր ընտանիքի համար: «Ի՞նչ մի վատ բան կա դրանում», - կհարցնեք դուք:

Չուտ մարդկային տեսակետից՝ երջանիկ ապրելու ձեր ցանկության մեջ ոչ մի վատ բան չկա: Սակայն ձեր գործողության հիմքում ցանկություն է դրված: Կոնկրետ այս դեպքում՝ երջանիկ ապրելու ցանկությունը: Ամեն մի ցանկություն ձեր համեմատաբար ստորին բնույթի դրսևորումն է: Ուստի և դուք հայտնվում եք ձեր ստորին բնույթի ազդեցության տակ: Եվ հետևաբար ձեր նախաձեռնած բոլոր գործողությունները կարմա կստեղծեն:

Ճշմարիտ Ուսմունքները, որոնք ուսուցանվում են ձեռնադրյալների կողմից, սովորեցնում են հրաժարվել ցանկություններից՝ որպես մարդու ստորին բնույթի դրսևորումներից:

Քանի դեռ ձեր գործողությունները ձեր ցանկություններն են կառավարում, դուք ձեզ ավելի ու ավելի եք կապում ֆիզիկական աշխարհին: Իսկ ձեզ արդեն հայտնի է, որ ֆիզիկական աշխարհը բոլոր աշխարհներից ցածրագույնն է: Ուստի, կապվելով դրա հետ, ինքներդ ձեզ դատապարտում եք հետագա մարմնավորումների: Իսկ ճշմարիտ Ուսմունքները ձեզ սովորեցնում են, թե ինչպես ազատվեք սանսարայի անիվից:

Պատրանքն ավելի ու ավելի է նրբացնում իր ձևերը, և քանի որ դուք օժտված եք բանականությամբ, ապա պետք է մշտապես վերլուծեք այն իրադրությունները, որոնցում հայտնվում եք, և գիտակցված ընտրություն կատարեք:

Ձեր ամեն մի որոշումը կա՛մ ձեզ տանում է դեպի Բարձրագույն աշխարհները, կա՛մ ձեզ ստիպում է ցած սահել հետընթաց պարույրով: Եվ այն շարժառիթը, որով առաջնորդվում եք որոշում կայացնելիս, փաստորեն ձեր շարժմանը հաղորդում է համապատասխան ուղղություն:

Մի կողմից՝ երբ հրաժարվում եք ձեր ցանկություններից և անձնական շարժառիթներից, գուտ մարդկային միջակ գիտակցության աչքին դուք կարող եք երևալ որպես անհաջողակ ու տարօրինակ մարդ: Բայց, հավատացե՛ք ինձ, մի այլ տեսանկյունից դուք վիթխարի քայլերով առաջ եք ընթանում Էվոյուցիայի ուղով այն դեպքում, երբ ձեր համեմատ հաջողակ համարվող և կյանքից բոլոր հնարավոր հաճույքները վայելող մարդիկ ավելի ու ավելի են հետ մնում Էվոյուցիոն զարգացման ուղու վրա:

Հենց դա՛ է ձեր ժամանակների հիմնական փորձաքարը: Մի կողմից ակներև ու բուռն պատրանքն է, որը տարածում է ձեր առջև իր՝ երևակայություն գրգռող և հրապուրիչ կողմերը, իսկ մյուս կողմից՝ կա հինավուրց Ուսմունքը, որն ուսուցանում է հրաժարվել պատրանքից և ձեռք բերել անանց արժեքներ:

Մարդկանց 90 տոկոսը գերադասում է այն, ինչն իրեն իրական է թվում, պատճառում քաղցր զգացմունքներ և տիրացման հաճույք: Եվ միայն 10 տոկոսն է մտորում, որ եթե հինավուրց Ուսմունքները պատրանքից հրաժարվել են ուսուցանում, ապա դրանցում հավանաբար ինչ-որ բան կա, որին հարկ է ականջալուր լինել: Եվ դեպի ճշմարիտ հոգևոր ուղին մղվողների մեջ միայն մի քանի տոկոսն է, որ ունակ է լինում ձեռք բերելու զանազանման կարողություն և իրավունք ստանալու, որ անցնի Էվոյուցիոն նոր գալարի վրա:

Այսօր ես ձեզ չասացի որևէ նոր բան, որն ասված չլինեք կա՛մ մեր դեսպանորդի միջոցով տրված նախորդ թելադրություններում, կա՛մ էլ այն ճշմարիտ Ուսմունքներում, որոնք տրվել են հինավուրց ժամանակներում:

Տարբերությունը միայն այն է, որ այլևս դուք չեք կարող այնպիսի տեսք ընդունել, որ իբր ձեր շուրջը ոչինչ տեղի չի ունենում, և առջևում դեռ շատ ժամանակ ունեք ձեր հոգևոր զարգացման համար:

Ժամանակ այլևս չի մնացել: Այժմ հասել է ձեր վերջնական ընտրության պահը: Նրանց, ովքեր ընտրել են այն Ուղին, որն ուսուցանում են Համբարձյալ Վեհապետները, ես պատրաստ եմ մեկնելու իմ օգնության ձեռքը և օգնելու:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Վեհապետ Էլ Մորիա
23 դեկտեմբերի, 2010 թ.

Ոչ թե լայնակի, այլ դեպի խորք ընթանալով դուք կհասնեք արդյունքի

ԵՍ ԵՄ Էլ Մորիան...

Հրատապություն՝ նմ է պայմաններ թելադրում մեր ուղերձների փոխանցման համար:
Ժամանակը սուղ է, և դեռ շատ բաներ կան ասելու: Ծատ բաներից զգուշացնելու:

Թվում է, թե աշխարհը նույնն է, ինչ որ կար: Առաջվա պես տեղի է ունենում եղանակի, օրվա ու գիշերվա հերթագայություն: Սակայն Երկիր մոլորակի վրա աննկատելիորեն փոխվում է իրադրությունը: Մենք եկել ենք, մենք զգուշացրել ենք:

Եվ առաջվա պես միակ համադարմանը, որը ձեզ անհրաժեշտ է ժամանակի պատմական այս պահին մարդկային բոլոր ախտերից ձերբազատվելու համար, ձեր գիտակցության փոփոխությունն է:

Հատկապես գիտակցության փոփոխությունը, և ոչ այնպիսի փոփոխությունը, ինչպիսին դուք երբեմն հասկանում եք դրա տակ:

Ձեզ թվում է, որ եթե կարդում եք Վեհապետների թելադրությունները, սուզվում եք աղոթքային արթնության մեջ կամ Վարդարաններ եք ընթերցում, ապա փոխում եք ձեր գիտակցությունը: Թույլ տվեք նկատել, որ դա ոչ միշտ է այդպես: Քանզի ո՛չ գործողությունների մեխանիկական հավաքածուն, ո՛չ էլ կարդացած աղոթքների ու գրքերի քանակը չեն կարող բավարար ապացույց ծառայել, որ դուք իրապես ընթանում եք Ուղով:

Ձեր ֆիզիկական աշխարհն օժտված է երկակիությամբ: Եվ նույն գործողությունները մի դեպքում կարող են էվոյուցիայի առումով դրական արդյունքի հանգեցնել, մի այլ դեպքում՝ բացասականի: Ֆիզիկական ոլորտի ցանկացած գործողություն երկակի բնույթ ունի:

Նույն գործողությունները կարող են հանգեցնել ինչպես բարի արդյունքի, այնպես էլ արհավիրքի:

Բերենք մի օրինակ: Ասենք, դուք աղոթք եք անում և ամեն օր դրան շատ ժամանակ եք հատկացնում: Մարդկանց մեծամասնության տեսակետից՝ դուք բարի գործ եք անում, որն անպայման օգտավետ կլինի աշխարհի համար: Սակայն ձեր գործողությունները կարող են ընթանալ նաև հակադիր հունով: Եվ նույնիսկ անկեղծ աղոթքով էլ կարող եք կարմա ստեղծել: Քանզի էներգիան շարժառիթով է դեկավարվում:

Ծատերի համար իմ ասածներն անհասկանալի կլինեն: Որովհետև նրանց համար աղոթքի արարչությունը դեռևս անհասանելի արգասիք է:

Իսկ մենք արդեն ավելի նուրբ բաներից ենք խոսում, որոնք հեռու են ամենքի համար հասանելի լինելուց: Մեր կողմից տրվող այս Ուսմունքը, թվացյալ պարզությամբ հանդերձ, ամենաբարդ Ուսմունքն է, որը ժամանակի այս պահին գոյություն ունի երկրագնդի վրա: Քանզի այն ձեր առջև դուռ է բացում դեպի Հավերժական Կյանք: Բայց դեպի Հավերժություն տանող այդ դռան բանալին կստանան միայն նրանք, ովքեր ունակ կլինեն այդ Ուսմունքը յուրացնելու ամբողջությամբ: Մյուսները, որոնք մեր Ուսմունքից վերցնում են միայն այն, ինչն իրենց հարմար է գալիս, իսկ մնացածը դեն են նետում որպես անպետքություն, ոչ միայն բանալի չեն ստանա, այլ նաև չեն գտնի այն դուռը, որը տանում է դեպի Հավերժություն:

Գոռոզություն, ինչպես և հոգևոր գոռոզություն. ահա այն, ինչը շարժման մեջ է դնում, այսպես կոչված, Ճշմարտություն որոնողներին: Նրանք կարծում են, թե օժտված են իմաստությամբ, որի շնորհիվ կկարողանան տարբեր ուսմունքներից ու դավանանքներից կազմավորել ինչ-որ բան, որն իրենց հնարավորություն կտա հոգևոր ուղով ընթանալու դեպի Ճշմարտությունը:

Մի՛ սփոփեք ձեզ պատրանքով... Դեռ երբեք տարբեր ուսմունքների անմիտ ու կույր համախմբումը որևէ դրական արդյունքի չի հասցրել:

Մարդկությունը կանգնած է էվոյուցիոն զարգացման այնպիսի աստիճանի վրա, երբ դեռևս ունակ չէ ճանաչելու Ճշմարտությունը, որը հենց իր քթի տակ է. բայց դրա փոխարեն վազում է ուրվականների հետևից, որոնք գտնվում են աշխարհի մյուս ծայրին և իբր կարող են համադարման ծառայել իրենց դժբախտությունների համար:

Ճշմարտությունը գտնվում է ձեր ձեռքից ընդամենը մի քանի սանտիմետր հեռավորության վրա, եթե այն դնեք ձեր կրծքին՝ սրտի մոտ: Եվ որքան ավելի շատ վազվզեք զանազան տեղեկատվությունների հետևից, որպեսզի տարբեր ուսմունքների համադրում ստանաք, այնքան ավելի ու ավելի կհեռանաք Ճշմարտությունից:

Ոչ թե լայնակի, այլ դեպի խորք գնալով դուք արդյունքի կհասնեք:

Դուք կարող եք ման գալ շատ ու շատ գեղեցիկ վայրերով, այցելել տաճարներ, լինել շատ քաղաքներում ու թանգարաններում: Կարող եք նույնիսկ դրա համար ծախսել ձեր ամբողջ կյանքը:

Բայց աստվածային գիտակցության գազաթը դուք կկարողանաք նվաճել միայն այնժամ, երբ ճանապարհ կրոնք դեպի այդ գազաթը:

Որքան էլ հսկայական ծավալներով տեղեկություններ կլանեք, դրանք ձեզ չեն մոտեցնի ճշմարտությանը:

Քանզի ճշմարտությունը պարզ է, և այն սովորական անգրագետ մարդիկ, որոնք լսում էին Հիսուսի քարոզները, ունակ էին ընկալելու ճշմարտությունը:

Իսկ դուք այդքան էներգիա և եռանդ եք ծախսում՝ այցելելով զանազան սեմինարների, կարդալով բազմահատոր գրականություն, բայց արդյունքում այդ ամբողջ տեղեկացվածությունն անանցանելի պատնեշ է ստեղծում ձեր և Աստծո ճշմարտության միջև: Քանզի դուք մոռանում եք գլխավորը. ինչի՞ համար է պետք այդ տեղեկատվությունը: Եվ եթե նույնիսկ ճանապարհի սկզբում դուք ճշմարիտ շարժառիթ եք ունենում, ապա, դեգերելով տեղեկատվական բավիղներում, արդեն մոռանում եք, թե ինչի համար էիք հասել այդտեղ:

Ձեզ թվում է, թե ինտելեկտն ու մարդկային իմաստությունը ձեզ կմոտեցնեն Աստծո Իմաստությանը: Սակայն լրիվ հակառակն է ստացվում. որքան մեծ է ձեր ինտելեկտը, այնքան ավելի եք հեռանում Աստծո Իմաստությունից: Եվ այն մարդկային իմաստությունը, որը հիմք է ծառայում երկրային երջանիկ ու երկար կյանքի համար, չի օգնի ձեզ, երբ ուժերի գերլարումով կփորձեք գրավել աստվածային գիտակցության գազաթը:

Հատկապես հրաժարում և ինքնագոհողություն: Հատկապես մերձավորին ծառայելու համար ձեր բոլոր ուժերի անշահախնդիր ներդրումը ձեզ կկարողանա դուրս բերել աստվածային Ուղու վրա: Սակայն մարդկության մեծամասնության տեսանկյունից այն, ինչ մենք ասում ենք, թվում է միայն գեղեցիկ լոգունգներ, որոնք իրենք պատրաստ են քամահրանքով կարդալու և նույնիսկ ծափահարելու:

Իրավիճակը շիկանում է: Եվ ամեն ինչ փոխվում է ո՛չ դեպի լավը: Հիմա այն փուլն է, երբ այս տողերը կարդացող ձեզնից յուրաքանչյուրը պետք է ռիսկի դիմի, իրենից թոթափի պատրանքային բարեկեցությունը և համարձակորեն մազլցի լերկ ժայռերը: Միայն ներքին արգելապատնեշներն են ձեզ բաժանում ճշմարտությունից:

Ես խոսում եմ այլաբանորեն: Բայց իրապես դուք պետք է հեղափոխական փոփոխություններ իրականացնեք հենց ձեր ներսում:

Իսկ այժմ ես կուզենայի ժամանակ հատկացնել ևս մեկ կարևոր թեմայի: Այսօր դեկտեմբերի 23-ն է: Ձեր փոխարեն ես կօգտվեի այն թողության շնորհից, որը վերևից է տրված: Եվ ճիշտ այնպես, ինչպես անհրաժեշտ եք համարում աղոթել ամեն մի գործ սկսելուց առաջ, այդպես էլ անհրաժեշտ է աղոթել աստղաբաշխական նոր ամսվա սկզբին: Իսկ, որպեսզի ձեր աղոթքն արդյունավետ լինի, աղոթեք այնպես, կարծես ձեր երեխան կրակների մեջ է, և միայն ձեր աղոթքից է կախված նրա փրկությունն ու կյանքը:

Ես ուրախ եղա մեր հանդիպման առիթով: Եվ լիահույս եմ, որ նոր հանդիպումներ էլի՜ կլինեն...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

Տեր Սուրիա

24 դեկտեմբերի, 2010 թ.

Մենք բարի բերք ենք ականկալում ձեր էության մեջ ծլարձակաժ Աստվածայնությունից

ԵՍ ԵՄ Սուրիան՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Ձմեռային արևադարձի արևն է ինձ ուղեկցում իմ գալստյան այս պահին: Եվ ճիշտ այդպես էլ ձեր աստվածային ԵՍ ԵՄ Ներկայության արևը պետք է մշտապես ուղեկցի ձեզ: Այդ դեպքում, եթե նույնիսկ թուխպեր հավաքվեն, ձնահողմը գալարվի, ամպրոպը ճայթի կամ մրրիկն արշավի, դուք իմանում եք, որ կա Արևը, և այն մշտապես ձեզ հետ է:

Նույնն էլ ձեր կյանքերում է: Անկախ ցանկացած դժվարությունից, տհաճությունից և նույնիսկ դժբախտությունից՝ դուք պետք է իմանաք, որ ձեր իսկ աստվածային մասը մշտապես ներկա է ձեր կողքին:

Եվ ձեր այդ աստվածային մասի տեսակետից ձեր բազմաթիվ մարմնավորումներն ու պատրանքի աշխարհում թափառումները թվում են այնպիսի մի ականթարթ, կարծես թեթև մի ամպ թեթևակի ծածկեց արևը:

Քանզի Աստծո Աշխարհը դուրս է ժամանակից ու տարածությունից: Ձեր աշխարհի այդ բնորոշիչները ժամանակի ընթացքում կքանան այնպես, ինչպես ամպրոպաբեր ամպերն են թաքնվում հորիզոնի հետևում:

Դուք մտորելու շատ բան ունեք: Քանզի հասել են այն ժամանակները, երբ պետք է խորհեք Հավերժական Կյանքի մասին: Պատրանքի աշխարհի բոլոր հրապուրանքները շուտով ձեզ կձանձրացնեն, և ձեզ կսկսի գրավել իսկական Իրականությունը: Ե՛րբ դա տեղի կունենա: Մենք չենք կարող ձեզ ճշգրիտ ժամկետներ ասել: Քանզի այնժամ, երբ դա իսկապես տեղի կունենա, մարդկությունը կանցնի այլ օրացույցի և տարեգրության նոր համակարգի:

Սակայն արդեն հիմնականից դուք խորհրդածելու բան ունեք, թե ինչի վրա աշխատեք: Քանզի ձեր աշխարհն է, որ գրգռում է ձեր զգացմունքներն ու ցանկությունները: Եվ քանի դեռ տրվում էր պատրանքային աշխարհի ճարպիկ հնարքներին, դուք չեք կարող ընթանալ դեպի աստվածային գիտակցության զագաթները:

Պետք է սանձահարել զգացմունքները: Պետք է սանձահարել մտքերը: Պետք է մշտապես վերահսկեք ինքներդ ձեզ: Պատկերացրեք մի սայլ, որը կառապան չունի: Ձիերը բարձիթողի վիճակում են և անում են այն, ինչ խելքներին փչում է. խոտ են պոկում, գնում են դեպի ջրափոսերը: Նման սայլը չի հասնի որևէ նպատակակետի, որովհետև կառավարող չունի:

Ձեր էությունները նմանվել են անկառապան սայլերի: Դուք դեգերում եք կյանքում, ինչ-որ հրապուրանքներ եք գտնում, վագում հաճույքների հետևից, սակայն իրականում ոչ մի տեղ չեք շարժվում: Քանզի գտնվում եք ձեր ստորին բնության՝ ձեր հույզերի ու ցանկությունների, ազդեցության տակ: Որպեսզի շարժվեք դեպի Աստծո Իրականություն, պետք է հոգ տանեք, որ ձեր կյանքը կառավարի կառապանը՝ ձեր Բարձրագույն Ես-ը. միայն նա կարող է ձեզ դուրս հանել պատրանքային աշխարհի թավուտներից:

Վերին կառավարում և ընթացքի ճշմարիտ ուղղության պահպանում. ահա թե ինչ է ձեզ անհրաժեշտ:

Իհարկե, ես հասկանում եմ, որ այս տողերը կարդալու պահից մինչև այն պահը, երբ որոշում կկայացնեք ձեր էությունը ենթարկելու բարձրագույն բնության, ինչպես և մինչև այն պահը, երբ դա իրապես տեղի կունենա, այնքան էլ քիչ ժամանակ չի պահանջվի:

Սակայն եթե որոշում չկայացնեք և առաջ չմղվեք, ապա երբեք չեք կարողանա դուրս պրծնել պատրանքի ոստայններից:

Իսկ ձեզնից ոմանք այնքա՛ն պինդ են տեղավորվել պատրանքի մեջ, որ կյանքում ինչ-որ բան փոխելու անհրաժեշտության ամեն մի հիշեցումը տառացիորեն ընկալում են որպես հարձակում հիմքերի վրա:

Մեկ անգամ ևս անդրադառնանք գիտակցության մեջ հեղափոխություն անելու հարցին: Ներկայումս ձեր գիտակցությունը գտնվում է այն կարծրատիպերի ազդեցության տակ, որոնք հաստատվել են հասարակության մեջ: Կարծրատիպերը հարկ կլինի փոխել: Դուք չեք կարող ոչինչ չանել: Ֆիզիկական ոլորտի թրթռանքները բարձրանում են: Եվ որպեսզի համապատասխանեք թրթռանքների նոր մակարդակին, ստիպված կլինեք փոխել ձեր կյանքն ու նրանում գերապատվությունների նոր սանդղակ հաստատել:

Ասվածին պետք է ավելացնել նաև այն, որ մարդիկ գտնվում են էվոլյուցիոն զարգացման տարբեր աստիճանների վրա: Եվ դա ևս շատ շուտով ստիպված կլինեք գիտակցել: Քանզի այն քառսին, որում հայտնվել է մարդկային հասարակությունը, պետք է վերջ տրվի:

Ձեր արժեհամակարգը պետք է փոխվի: Եվ նախ և առաջ պետք է փոխվի ձեր հոգևոր արժեհամակարգը: Պետք է հարգանքի արժանանան այն մարդիկ, որոնք իրապես օժտված են հոգևոր բարեմասնություններով, այլ ոչ թե նրանք, որոնք սոսկ խոսում են իբր իրենց ունեցած այդպիսի բարեմասնությունների մասին: Հասարակության զարգացման հոգևոր մակարդակն ունակ է հաշված տարիների ընթացքում փոխելու նաև կյանքի մնացած բոլոր ոլորտները: Աշխարհի բոլոր կրոններում նշված են ճշմարիտ հոգևոր արժեքները: Ուստի ինչ-որ նոր բան փնտրելու հարկ չկա: Հարկավոր է միայն ի կատար ածել այն, ինչ նշված է: Այդ դեպքում հասարակությունը կկարողանա մաքրվել ցածրորակ նմուշօրինակներից:

Պահանջվում են մարդիկ, որոնք ունակ են ինքնագոհողության գնալու՝ հանուն Նոր Կյանքի հաստատման: Պահանջվում են մարդիկ, որոնք պատրաստ են իրենց կյանքը նվիրաբերելու բարեկործանությանը և անձնագոհ կերպով կյանքում ամրապնդելու աստվածային սկզբունքները:

Նոր ժամանակներ են գալիս: Եվ մարդկային համակեցությունն այլ ուղի և ելք չունի ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, քան այն, որ ընթանա դեպի վեր՝ դեպի աստվածային գիտակցությունը:

Այն, ինչ ցածր է աստվածային կատարելությունից, պետք է անցյալին թողնվի ու մոռացվի:

Հասել է էվոլյուցիայի աստիճաններով առաջ շարժվելու ժամանակը:

Եվ մեր կողմից անմիտ ու անխելամիտ քայլ կլինեն այսքան ուժ ու եռանդ ծախսելը, որպեսզի ստեպ-ստեպ գանք ու տանք մեր Ուսմունքը, եթե վստահ չլինեինք, որ մեր ջանքերն ու հույսերը հարյուրապատիկ չեն արդարանալու:

Մենք բարի բերք ենք ակնկալում ձեր էության մեջ ծրարակաժ Աստվածայնությունից: Մենք ցանկ ենք Աստծո Իմաստության սերմեր և հիմա բերքի ենք սպասում:

ԵՄ ԵՄ Սուրխան՝ Երկրի մարդկության նկատմամբ հույսով լի

Տեր Ծիվա

25 դեկտեմբերի, 2010 թ.

**Ոչ թե Համբարձյալ Դասերի հետ աշխատանքն է ապահովում
Ուղով ձեր առաջխաղացումը, այլ ձեր գիտակցության որակը**

ԵՄ ԵՄ Ծիվան...

Ահա ես եկա...

Դուք կարծում եք, որ ամեն ոք կարող է ցանկության դեպքում լուրեր քաղել նուրբ աշխարհից:

Իրավացի՝ եք: Բայց դա հնարավոր է դառնում միայն որոշակի պայմանների առկայության դեպքում, որոնք պետք է ապահովվեն: Եվ կան նաև որոշակի պարտավորություններ, որոնք պետք է ունակ լինեք հանձն առնելու:

Ամեն ինչ շատ պարզ է. դուք պետք է ձեր ողջ կյանքը նվիրաբերեք Վեհապետներին ծառայելու գործին: Ոչ թե խոսքով, այլ գործով: Անմնացորդ ամբողջ կյանքը:

Պատրաստ եք արդյոք ընդունելու մեր բոլոր պահանջները:

Իհարկե, ձեզնից շատերը կասեն, որ պատրաստ եմ:

Նախ և առաջ հարկ համարեք ամեն օր ձեր գիտակցությունը պահել ձեզ համար հնարավոր ամենաբարձր մակարդակի վրա: Փորձարկե՛ք այդ պարզ գործառնությունը: Եվ երբ որոշեք դա անել, օրվա վերջում հանգիստ նստեք և հարց տվեք ինքներդ ձեզ. «Քանի՞ անգամ այսօր դատեցի մերձավորիս: Քանի՞ անգամ բորբոքվեցի: Քանի՞ անգամ դժգոհեցի աշխատավայրի ղեկավարից, հարևաններից, իմ երկրի կառավարությունից»:

Եվ եթե այս հանձնարարությունը կատարելը ձեզ չափազանց հեշտ թվա, և դուք պարծենալով ասեք, թե կատարեցիք բոլոր առաջադրված պայմանները, ապա պատասխանեք իմ հետևյալ պարզ հարցին. «Գո՞հ եք արդյոք ձեր կյանքից. երախտապարտ եք արդյոք Արարչին այն ամենի համար, ինչ կատարվում է ձեր կյանքում»:

Խոսքս ո՞ւր եմ ծռում ձեր կարծիքով: Ես փորձում եմ ձեր նորօրյա գիտակցությանը հասցնել այն հիմնավոր ճշմարտությունը, համաձայն որի՝ Ուղու վրա ունեցած ձեր քայլերի ու նվաճումների մեջ առաջնայիններից մեկը պետք է լինի այն, որ ունենաք ձեզ չքող բավարարվածության զգացում՝ գոհություն այն ամենից, ինչ տեղի է ունենում ձեր ներսում և ձեզնից դուրս:

Եվ ահա այժմ ձեզնից շատերի առջև կծագի այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք ներկայիս հասարակության պայմաններում լուծել առաջադրված խնդիրը: Ինչպե՞ս բավարարված լինել, եթե հասարակության մեջ գերակշռողը հակառակ զգացումն է՝ դժգոհությունը կյանքից, կառավարությունից, նախագահից, աշխատավայրի ղեկավարից... Բոլորից:

Վաղեմի ինչ-որ ժամանակներում ձեր հոգիներն ընտրել են Աստծո Օրենքի դեմ ընդվզելը: Դուք կտրվել եք Աստծո Իրականությունից և ընթացել ձեր էգոյի քմայքները բավարարելու ճանապարհով: Դա եղել է շատ վաղուց:

Բայց Աստված ողորմած է ու համբերատար: Եվ ձեր շատ ու շատ մարմնավորումների ընթացքում ձեզ հնարավորություն է տրվել հնազանդվելու Աստծո Օրենքին և վերադառնալու ճշմարտության ուղուն:

Բայց ամեն անգամ ձեր հոգիները, հոգիներն այն մարդկանց, որոնք այժմ գտնվում են մարմնավորման մեջ, հրաժարվել են ընձեռված հնարավորությունից և գերադասել յուրաքանչյուր կյանքն անցկացնել անհագորեն աճող ցանկությունների բավարարմամբ:

Մարմնավորումից մարմնավորում դուք հայտնվել եք ավելի ու ավելի խստացող արտաքին պայմանների մեջ:

Ուրեմն էլ ինչո՞ւ եք զարմանում: Բազմաթիվ մարմնավորումների ձեր նախընտրանքներով ինքներդ եք ստեղծել այն պայմանները, որոնք այսօր տեսնում եք ձեր շուրջը: Եվ հիմա արդեն աշակերտության ուղու վրա ամենասկզբնական կարողություններ ցուցաբերելը ձեզնից շատերին թվում է անիրականանալի պահանջ:

Մենք սպասել ենք բավարար չափով: Մենք հուսացել ենք, որ մարդկությունը կկարողանա օգտվել մատուցվող գիտելիքներից, որպեսզի սկսի իր երթը մեր մատնանշած Ուղով:

Եվ հիմա ի՞նչ ենք տեսնում. մարդկանց հոծ զանգված, որոնք փորձում են ուղերձներ ստանալ, ներկայանալ որպես գուրու, հավաքել իրենց շուրջ ուրիշ մարդկանց և նրանց հրամցնել ինչ-ինչ ճշմարտություններ:

Ուղերձներ տալու աստվածային ողորմածությունը շատ թանկ կնստի Համբարձյալ Դասերի վրա, եթե փորձեն միաժամանակ սպասարկել ավելի քան մեկ-երկու դեսպանորդի: Իսկ ձեր ժամանակներում, երբ մարդիկ ունակ չեն իրարից զանազանելու ամենատարրական բաներ, ուղերձներ տալը կապված է շատ մեծ վտանգի հետ:

Իհարկե, այդ վտանգը նախ և առաջ կապված է դեսպանորդի՝ մի մարդու հետ, որին հասնում են բազմաթիվ մեղադրանքներ, բայց է՛լ ավելի մեծ վտանգի կենթարկվեն այն մարդիկ, որոնք ուղղակիորեն հանդես են գալիս մեր դեսպանորդի դեմ: Նրանք դրանով այնքան ծանր կարմա ձեռք կբերեն, որ հազիվ թե կարողանան այն բեռնաթափել տեսանելի ապագայում:

Մենք խոսեցինք ձեր աշխարհի ուղերձներ փոխանցելու պայմանների մասին, խոսեցինք նաև բավարարվածության հատկանիշի մասին, որը պետք է ձեռք բերեք, որպեսզի անցում կատարեք էվոլյուցիայի հաջորդ աստիճանին:

Հավատացե՛ք, դուք և Համբարձյալ Դասերը տարբեր քաշային կատեգորիաների եք պատկանում:

Եվ ինչ քայլեր էլ որ ձեռնարկի ձեր էգոն, որպեսզի շրջանցի Աստծո Օրենքն ու համայն տիեզերքում հաստատված կարգը, ոչինչ չի ստացվի:

Միակ ուղին, որը պատգամված է ձեր ժամանակների համար, ինքնակատարելագործվելն է Աստծո մեջ: Եվ երբեք ամբոխային ձեռնադրումներ չեն եղել դեռ: Ձեռնադրումների Ուղին անհատական ուղի է: Եվ հախուռն խմբով դուք կարող եք ընթանալ միայն հակառակ ուղղությամբ, պարզ ասած, դժոխք:

Եվ այսպես, ամփոփելով մեր այսօրվա գրույցի արդյունքները, կուզենայի ձեր ուշադրությունը բևեռել այն բանի վրա, որ Ուղու վրա կան որոշակի ուղենիշներ և փուլեր, որոնցով անհատը շահում է Համբարձյալ Դասերի վստահությունը, որպեսզի իրականացնի իր Սպասավորությունը:

Դուք կարող եք կարծել, թե արդեն անցել եք բոլոր անհրաժեշտ ձեռնադրումները և վաղուց աշխատում եք Համբարձյալ Վեհապետների առաջնորդությամբ: Ձեր աշխարհի պատրանքայնությունն այնպիսին է, որ կարող եք պատրանքի մեջ ընկնել և այն բանի լիակատար զգացողությունն ունենալ, թե իբր դուք դեսպանորդ եք և աշխատում եք Համբարձյալ Վեհապետների առաջնորդությամբ: Ուստի մոտակա ժամանակներում ձեր խնդիրն այն կլինի, որ կողքից նայեք ինքներդ ձեզ և հասկանաք, թե իրապես ուղու ո՞ր կետում եք գտնվում: Եվ ժամանակը չէ՞ արդյոք, որ սկսեք խաղալ մի փոքր ավելի անվտանգ խաղալիքներով:

Ոչ թե Համբարձյալ Դասերի հետ աշխատելն է ապահովում Ուղով ձեր առաջխաղացումը, այլ ձեր գիտակցության որակը: Եվ հավատացե՛ք ինձ, ձեր աշխարհը հնարավորություն է տալիս առօրյա կյանքում ձեռք բերելու այն անհրաժեշտ որակները, որոնք համապատասխանում են բուրգի Գաղտնի Ծեսերի Դպրոցում ձեռնադրումներ անցնելու պահանջներին:

Մեր այսօրվա գրույցը վերաբերում էր այն հարցերին, որոնք հրատապ են ձեզնից շատերի համար: Մյուսներին նույնպես այս գրույցը օգտակար կլինի, քանի որ թույլ կտա ձեռք բերելու դատողությունների ավելի լայն շրջանակ ու հստակություն:

ԵՄ ԵՄ Շիվան...

Վեհապետ Նիկոլայ Ռերիխ
26 դեկտեմբերի, 2010 թ.

Նոր գիտակցությունն աճի հնարավորություն կտա նոր հասարակությանը

ԵՄ ԵՄ Նիկոլայ Ռերիխը:

Անցած իմ գալստյան ժամանակ ես խոսեցի Ռուսաստանի իրավիճակի մասին: Խոսեցի այն մասին, թե ինչն է ինձ անհանգստացնում:

Այսօր նույնպես ես փորձ կձեռնարկեմ իմ խոսքը հասցնելու ձեր սրտերին: Նրանց սրտերին, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ: Եվ նախ և առաջ նրանց սրտերին, ովքեր ապրում են Ռուսաստանում:

Շատ քիչ են իրոք նվիրվածներն ու անկեղծները: Եվ շատ են այնպիսիները, որոնք ուզում են օգուտ քաղել ամեն ինչից, այդ թվում նաև ինչպես երիտասարդության, այնպես էլ միջին սերնդի հոգևոր փնտրտուքի ձգտումներից:

Ես ունեմ ձեզ նախագգուշացնելու բան, և կա այն, որից կուզենայի ձեզ ետ պահել: Մշտապես այնտեղ, որտեղ Լույսն է, ազդավների երամ է հավաքվում, որպեսզի հագենա Գառան արյունով:

Ուստի զգոնությունն ու զգուշությունը մշտապես պետք է ուղեկցեն ձեզ:

Մարդկային ամբոխներ են կուտակվում: Մտածե՛ք՝ արժե՞, որ այդ կողմ գնաք:

Ժամանակներն այնպիսին են, որ յուրաքանչյուր պահի կարելի է պայթյունի սպասել: Եվ մի կա՛յծն իսկ բավարար է, որ պայթի պայթուցիկ նյութերով լի պահեստը:

Այժմ, քան երբևէ զգոնությունն ու զգուշությունն է անհրաժեշտ: Ամեն մի ճշմարիտ լուսակրի հազարներ են բաժին ընկնում, որոնք ուզում են Լույս փախցնել և դրանից օգուտ քաղել:

Դաժան ժամանակներ են: Վտանգավոր ժամանակներ: Վտանգավոր՝ ոչ նրանով, որ չեք դիմանա մինչև Լույսի Ուժերի Հաղթանակը, այլ նրանով, որ չեք կարողանա փրկել ձեր հոգին:

Շատ պարզ գործողություններ պետք է ձեռնարկել: Հոգ տանել մտքերի, մարմնի ու զգացմունքների մաքրության մասին: Շրջապատի ամեն ինչի մաքրության մասին: Պատենշ դնել ողջ այն ստորության առջև, որը սողոսկում է բոլոր անկյուններից, հեռատեսիլների էկրաններից:

Արգելել անտաղանդության ու ստորակարգության մուտքը ձեր աշխարհ:

Հարկավոր է ընդդիմադիր ուժերին հակադրել անեղծ սրտերի միաբանվածությունը:

Այնտեղ, որտեղ Ճշմարտությունն է, Վեհապետներն իրենց վահանով ու կաշտպանեն ձեզ:

Որքա՛ն ցավալի է, որ ռուսաստանաբնակների ընդհանրական անգիտակցական ընտրություն կատարեց ո՛չ Վեհապետների տված խորհուրդների ու հանձնարարականների օգտին: Շա՛տ ափսոս, որ Ռուսաստանը գնաց արևմտյան քաղաքակրթության հետքերով: Եվ այն մարդկանց հոգիները, որոնք արդեն դեպի Ճշմարտությունն էին ձգվում, Ուղուց շեղվեցին վառվռուն խաղալիքների ու հրապուրանքների միջոցով:

Դժվար է ընտրություն կատարել, երբ այդքան հրապուրանքներ կան: Սակայն հրապուրանքներից հրաժարումն ու փորձություններին դիմանալը միշտ Լուսավոր Ուղի են բացել: Թո՛ղ որ քչերն են դիմացել փորձությանը, թո՛ղ որ քչերն են մղվել դեպի Վեհապետների նախանշած Ուղին, սակայն այդ եզակիները դեռևս ունակ են հետ մղելու չափը կորցրած հրոսակներին, որոնք խորամանկությամբ ու հրապուրանքներով Ուղուց շեղում են շատ ու շատ լուսավոր հոգիների:

Որքա՛ն բազմակիորեն պետք է զգույշ լինել... Իսկ առջևում է՛լ ավելի դաժան ժամանակներ են սպասվում:

Ցանկություն է առաջանում սեփական փորձը փոխանցելու հնարավորինս շատ լուսակիրների... Ցանկություն է առաջանում բախելու նրանց սրտերը, որոնք հուսաբեկված են և ոչ մի լույս չեն տեսնում շրջապատող կյանքում:

Կգա՛ ձեր ժամանակը, անտարակույս, կգա՛: Դիմանա՛լ է պետք: Հարկավոր է միաբանվել և հակահարված տալ այն հրոսակներին, որոնք հարձակվում են բոլոր կողմերից:

Պատահում է՝ օձը լավագույն ընկերոջդ ներսից է խփում: Սրտիցդ արյուն է կաթում նման կորուստների համար: Բայց խուսափել հնարավոր չէ: Չի դաժան ժամանակներ են: Այնպիսի տպավորություն է, թե թշնամին գավթել է Ռուսաստանը:

Թանձրամուրժ հրոսակներ են վրա եկել...

Այնուամենայնիվ ես հավատում եմ, որ ոտքի կկանգնեն վաղեմի «բոգատիրները», կուղղեն իրենց ուսերը, կարթնանա հողը ռուսական և կշողա նոր ժամանակների հույսով:

Դեռ ամեն ինչ կարելի է փոխել, և դեռ կա Հաղթանակի հնարավորություն:

1812-ին Մոսկվան հանձնվեց ֆրանսիացիներին: Եվ հիմա նու՛յնպես ստիպված ենք թողնել մայրաքաղաքը, որպեսզի պահպանենք ուժերը: Չափազանց լայնարձակ է Ռուսաստանը, ամբողջությամբ հնարավոր չէ գավթել այն:

Ամեն մի գյուղակում, ամեն մի խուտորում անմեղ տեսքով նստած է մի պառավ կամ մի ծերուկ և իր մտմտանքով ու աղոթքներով բազում վերստերով մաքրում է իր շուրջը եղած տարածությունը:

Ավելի ծանր ժամանակներ էլ են եղել: Դիմացե՛լ ենք: Հիմա՛ էլ կդիմանաք...

Վտանգն այն է, որ թշնամին իր հետտոնական արդուզարդով պահ է մտել արհեստական լուսավորությամբ զարդարված խանութների ցուցափեղկերում, տեղափոխվել մտքերի ու զգացմունքների նուրբ ոլորտ, մտել ռադիո- և հեռուստատեսեր, թափանցել համացանցի վիրտուալ իրականություն:

Սակայն այդ նորացված արդուզարդը չի կարող քողարկել ներքին էությունը: Ամեն փայլող բան չէ, որ ոսկի է: Աստծո մասին բոլոր խոսողները չեն, որ հովիվ են: Շա՛տ են գառան մորթով գայլերը, հարկ կլինի բոլորին ճանաչել և կանգնեցնել Ճշմարտության Լույսի դեմ:

Ձեր ձեռքբերումները բազմակիորեն կշատացնեն, եթե կարողանաք բոլոր խորամանկությունների հետևում նշմարել դավաճանության օձին, աստվածուրացության կարիճին ու ստի բորենուն:

Այն բանից հետո, երբ կարևոր գործն ավարտին կհասնի, կտոնե՞նք Հաղթանակը: Իսկ հիմա դեռ հանգստանալու, աշխատանքից խուսափելու ժամանակը չէ: Ժամանակ շատ քիչ է մնացել, և ամեն մի ժամը պետք է օգտագործել աշխատանքի, Եղբայրության համար:

Նորը միշտ էլ դիմադրության է հանդիպել: Իսկ այն նորը, որը հիմա է գալիս, սովեր կզցի այն ամենի վրա, ինչ եղել է մինչև այժմ:

Նոր գիտակցությունն աճի հնարավորություն կտա նոր հասարակությանը: Ուստի ապրեք այնպես, կարծես դա ձեր վերջին օրն է, և պետք է հասցնել անել այն ամենը, ինչ մարմնավորվելուց առաջ խոստացել եք Վեհապետներին:

Շատերի՛ն կորցրինք: Ուստի ամենքդ պետք է մարտնչեք 10 հոգու փոխարեն: Հոգ տարեք անգամ ձեր հագուկապի մաքրության մասին, որպեսզի ոչ մի խոցելի տեղ չունենաք:

Մի՛ ենթարկվեք նրանց գայթակղությանը, որոնք ուզում են ձեզ ներքաշել երկարատև վեճերի, քննադատության ու դատափետումների մեջ: Դե՛ն նետեք ամեն մի ավելորդ բան և թեթևաթիռ քայլերով ընթացեք դեպի ապագա...

ԵՄ ԵՄ Նիկոլայ Ռեդիկս

Պաշտելի Լանելլո

(Մարկ Փրոֆեթ)

27 դեկտեմբերի, 2010 թ.

Նախորդ և այս դարասկիզբների իրադարձությունների փոխկապակցվածությունը Ռուսաստանում

ԵՄ ԵՄ Լանելլոն՝ կրկին ձեզ այցի եկածը:

Այսօր մենք կխոսենք շատ կարևոր բանի՝ ընթացիկ իրավիճակի մասին: Եվ մեծ մասամբ խոսքը կվերաբերի Ռուսաստանին: Ոչ այն պատճառով, որ մեր դեսպանորդը Ռուսաստանից է, այլ որովհետև Համբարձյալ Դասերը որոշակի հույսեր են կապում այդ երկրի հետ:

Ձեզ հայտնի է, որ Ամերիկայում մարմնավորվելուս նախորդել էր իմ մարմնավորվելը Ռուսաստանում: Եվ ըստ իմ ծննդյան պայմանների՝ իմ հոր մահից հետո ես պետք է գլխավորեի Ռուսաստանը: Նրանց համար, ովքեր իրազեկված չեն, ասեմ, որ ես արքայազն Ալեքսեյն էի: Իմ այդ մարմնավորմամբ Ռուսաստանը պետք է ստանար լուսավորչական կառավարում և բարեփոխումներ, որոնք այդ երկրին հնարավորություն կընձեռեն իրականացնելու իր հիմնական առաքելությունը, այն է՝ ցույց տալու քաղաքակրթության զարգացման այլընտրանքային ուղի, հատկապես հոգևոր ուղի:

նկար

Սակայն գիտեք, որ տեղի ունեցավ արյունալի հեղաշրջում, որին հետևեց ազգի ընտրյալ խավի նկատմամբ հաշվեհարդարը:

Ես այժմ չեմ խորանա տեղի ունեցածի քաղաքական մանրամասների մեջ: Կխոսեմ միայն այդ իրադարձությունների հոգևոր կողմի մասին:

Դուք հիշում եք Հիսուսի կյանքի դրվագները: Հիշում եք Հերովդես թագավորին, որը հրամայեց սրախողխող անել արական սեռի բոլոր մանուկներին, քանի որ գուշակություն էր լսել, թե պետք է ասպարեզ գա հուդայական նոր թագավոր:

Միշտ այդպես է եղել: Լինում են ուժեր, որոնք փոփոխություններ չեն ուզում, վախենում են դրանցից և պատրաստ են հաշվեհարդար տեսնելու նոր գիտակցություն կրող յուրաքանչյուրի հետ:

Բայց և լինում են նրանք, ովքեր են գնում են իքնագոհողության՝ հանուն նոր էներգիաների հաղթարշավի:

Նախքան որպես արքայազն Ալեքսեյ մարմնավորվելս ես լուրջ նախապատրաստություն էի անցել եթերային մենաստաններում: Ես քննություններ էի հանձնել, որպեսզի իրավունք ձեռք բերեմ ստանձնելու նրա դերը, ով կարող է անարյուն, Էվոյուցիոն եղանակով Ռուսաստանը դուրս

բերել հոգևոր ուղու վրա: Սակայն, ինչպես Հիսուսի դեպքում եղավ, հայտնվեցին ուժեր, որոնք աստվածային փոփոխություններ չէին ուզում: Եվ նրանք խռովություն բարձրացրին:

Հետագա տասնամյակների Ռուսաստանի ամբողջ պատմությունն այդ խռովության հետևանքն էր եղավ: Ցայսօր Ռուսաստանը և այն երկրները, որոնք միացել էին նրան, վայելում են այդ խռովության պտուղները:

Կարող է տարօրինակ թվալ, որ ես ձեր հայացքն ուղղում եմ դեպի անցյալ, ընդ որում դեպի անցյալի ոչ ամենալավ դրվագները՝ փոխանակ ձեր գիտակցությունն ուղղելու դեպի վեր:

Սակայն դուք պետք է լավ ըմբռնեք չարի գործողությունների ընթացքը, որպեսզի հնարավորություն ունենաք գործելու ներկայիս պայմաններում: Քսաներորդ դարասկզբի այդ դեպքերից արդեն հարյուր տարի է անցել: Եվ ներկայումս մարմին են առել այն անհատները, որոնք իրենց նախորդ մարմնավորման ժամանակ հենց այն կարմիրբանակայիններն ու նավաստիներն էին, որոնք տապալեցին ինքնակալությունը: Խռովություն, կռվազանություն և կյանքից դժգոհություն, ստեղծված արժեքներին տիրանալու անհագ ցանկություն, որի իրավունքը չունեն ըստ Կարմայի Օրենքի. ահա այն բնութագծերը, որոնցով օժտված է նոր ժողովված սերունդը: Նրա տարբերակիչ առանձնահատկություններից է նաև բարոյական իդեալների ու հոգևոր ձգտումների իսպառ բացակայությունը:

Ահա այդ սերունդն այժմ հասնում է իր հասուն տարիքին: Բայց երիտասարդության մեջ կան և այնպիսիները, որոնք այն ժամանակ պահպանում էին հավատի հիմքերը և մարտնչում ընդդիմադիր կողմի դիրքերից:

Որքան էլ ձեզ տարօրինակ թվա՝ և՛ այս, և՛ այն կողմում եղան այնպիսիները, որոնք կարմայի հսկայական մաս բեռնաթափեցին և հասան մեծ նվաճումների: Այո՛, խռովությունը, իդեալների բացակայությունը վատ բաներ են: Աստծո և Նրա սպասավորների դեմ գնալը՝ է՛լ ավելի վատ: Սակայն կարևոր է այն շարժառիթը, որով մարդ սկսում է գործել: Եվ եթե նա գործի է անցել ոչ թե ներքին ագրեսիայի կամ իշխանություն զավթելու մղումով, այլ հանուն պայծառ ու երջանիկ ապագայի ու դրա իդեալների, ապա նրա ձգտումները կարմայի Տիրակալները գնահատում են բոլորովին այլ չափանիշներով:

Եվ այսպես, ի՞նչպես է երկրի անցյալը կապված այսօրվա հետ: Շատ պարզ ձևով: Նոր սերունդը, որն այժմ իր աշխատունակ տարիքին է հասնում, կարմայորեն ստիպված է լինելու բեռնաթափել իր այն արարքների ու գործողությունների հետևանքները, որոնք իր կողմից կատարվել են անցյալում:

Հնարավոր է, որ ֆիզիկական ոլորտում բացահայտ դիմակայություն չլինի, ինչպես անցյալ դարասկզբում եղավ, թեև դա՛ էլ չի բացառվում: Սակայն անարժան կերպով արժեքներին, իշխանությանը և չգիտեմ է՛լ ինչին տիրանալու ցանկությունը և հանուն դրա ցանկացած հանցագործության դիմելու պատրաստակամությունը՝ ընդհուպ մինչև սպանություններն ու աստվածուրացությունը, պետք է ձեր մեջ սպառեն իրենց: Եվ Աստված այն մարդկանց հոգիներին, որոնք ժամանակին խռովություն են բարձրացրել Աստծո և Նրա Օրենքների դեմ, հնարավորություն է տալիս, որ դրսևորեն հնազանդության ու հավատի որակներ:

Ե՛վ հանցագործությունները, և՛ ինքնամոռաց սխրանքները՝ ընդհուպ մինչև անձնագոհություն, երկու իրար դեմ ելած կողմերում էլ եղան: Եվ հիմա ագրեսիվության հետ մեկտեղ, որը դուրս հորդելու ելք է փնտրում, մենք տեսնում ենք, որ նաև շատ երիտասարդներ ցուցաբերում են արժանապատիվ պահվածք:

Այսպիսով, մենք նորից բախվեցինք կարմայական պարտքերի մարման անհրաժեշտությանը: Անցյալ դարում ես ընդամենը դեռահաս էի և չկարողացա մասնակցել իրադարձություններին: Այս անգամ արդեն համբարձյալ վիճակում եմ և կարող եմ խրատներ տալ միայն կարճաժամկետ ուղերձների տեսքով:

Ամեն դեպքում, երբ մարդ հասկանում է, թե ինչ է կատարվում, նա կարող է գիտակից քայլեր ձեռնարկել նախ և առաջ ինքն իրեն փոխելու ուղղությամբ:

Ձեր ժամանակներում նույնպես, ինչպես այն ժամանակ էր, գոյություն ունեն բավականին շատ հրապուրանքներ, որոնք իրենց կողմն են քաշում երիտասարդ մարդկանց: Ես նույնիսկ կասեի, որ հրապուրանքների քանակն այժմ անհամեմատ մեծ է: Ի՛նչ արած, այդպես է գործում Աստծո Օրենքը: Եթե մի անգամ խախտել եք Աստծո Օրենքը, ապա ապագայում անհամեմատ ավելի ծանր պայմաններում պարտավոր եք ապացուցել Օրենքին ձեր հնազանդությունը:

Ուղերձիս միջոցով էներգիա մղելով դեպի ֆիզիկական աշխարհ՝ ուզում եմ հուսալ, որ այս ուղերձս արձագանք կգտնի նույնիսկ նրանց հոգիներում, ովքեր երբևէ չեն կարդա այն: Քանզի ամեն ինչ փոխկապակցված է ձեր աշխարհում, և յուրաքանչյուր ոք, ով կարդում է որևէ ուղերձ և համաձայնում դրա հետ, նուրբ աշխարհում նմանվում է աստվածային ալիքի հետ համալարված

յուրահատուկ ռադիոհաղորդչի, որն ի լուր ողջ մարդկության լրատվություն է տարածում ամբողջ երկրագնդով մեկ:

Այդպես ենք մենք գործում: Իսկ նախագգուշացումը լավագույն զենքն է:

ԵՍ ԵՄ Լանդլոն

Վեհապետ Կուրծիումի
28 դեկտեմբերի, 2010 թ.

Այսօրվա գրույցը կպարգաբանի Ուղու վրա կրած ձեր ձախողումների պատճառը

ԵՍ ԵՄ Կուրծիումին, կրկին եկել եմ ձեզ հետ գրույց վարելու նպատակով:

Հավանաբար ձեզ համար օգտակար կլինի այն, ինչի մասին այսօր ուզում եմ ձեզ իրազեկել: Համենայն դեպս օգտակար կլինի ձեր հոգիների համար:

Ինչպես բազմիցս նշել ենք մեր ուղերձներում, ամեն ոք իր ներսում ունի, հիրավի, իսկական գանձի պես մի բան, որը մարմնավորումից մարմնավորում կարող է անել կամ էլ բոլորովին անհետանալ, այսպես ասած, կողոպտվել: Համանմանությունն իրոք լիակատար է, միայն այն տարբերությամբ, որ ինքներդ եք ձեզ կողոպտում:

Իմ այս նախաբանը, երևի, հանելուկի նմանվեց և գաղտնագերծման կարիք ունի: Մեր նախորդ գրույցներից պետք է որ արդեն յուրացրած լինեք, որ մարդն ունի անմահ մաս և անցողիկ մաս: Եվ բազում մարմնավորումների փորձը շողարձակող գանձի պես կուտակվում է Երկնքում՝ ձեր կաուզալ մարմնում կամ ձեր իսկ անմահ մասում:

Սակայն երբ մարդը բյուրեղյա լարով իրեն հասնող Աստծո էներգիան մարմնավորումից մարմնավորում վատնում է ոչ թե Աստծո գործերի, այլ կյանքից հաճույքներ ստանալու և իր էգոյի քմայքները բավարարելու համար, ապա գանձ չի կուտակվում: Ընդհակառակը, փաստորեն տեղի է ունենում, այսպես ասած, ինքնակողոպուտ:

Մարմնավորման մեջ գտնվող յուրաքանչյուր մարդու տրվում է որոշակի քանակությամբ էներգիա: Ամեն ոք ինքն է տնօրինում իր ստացած էներգիան: Ուստի տիեզերական բոլորաշրջանի ավարտին, ըստ էության, ոչ մի Ահել Դատաստան էլ չի լինում: Պարզապես նրանք, ովքեր աստվածային տեսակետից սխալ են ծախսած լինում Աստծո կողմից իրենց հատկացված էներգիան, այլևս չեն կարողանում շարունակել իրենց գոյությունը. նրանց գանձից ոչինչ մնացած չի լինում, որ էվոլյուցիա ունենա:

Ահա այսպիսին է այն Ուսմունքը, որի հիմնական դրույթներն ու էությունը մենք փորձում ենք հասցնել մարդկային անհատների գիտակցությանը:

Բայց մարդիկ ամեն անգամ, կարդալով Ուսմունքի տողերը, կարծես ընդունում են դրանք, իսկ հաջորդ պահին արդեն վազում են հերթական հաճույքին կամ ցանկությամբ հագուրդ տալու հետևից:

Ահա մարդկանց գործողությունների այդ անհետևողականությունն ու մոռացկոտությունն են մեզ ստիպում, որ բազմիցս կրկնենք միևնույն ճշմարտությունները:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե մենք անիմաստ գործով ենք զբաղված: Սակայն եթե նույնիսկ մեր հերթական գրույցի ընթացքում գոնե մեկ մարդ արթնանա և ողջ խորությամբ գիտակցի ճշմարտությունը, ապա կհամարվի, որ ուղերձներ փոխանցելու համար հատկացված էներգիան իզուր չենք ծախսել:

Էվոլյուցիայի ուղով ընթանալուն գուզընթաց պատրանքի շղարշն ավելի ու ավելի է բարակում, և շատ բաներ, որոնք անցյալ դարերում աննկատ էին մնում, այժմ սկսում են դրսևորվել: Նաև աշակերտներն իրենց Ուղով առաջանալու ընթացքում ինչպես հենց իրենց ներսում, այնպես էլ դրսում բախվում են պատրանքի ավելի ու ավելի նուրբ դրսևորումների:

Որոշ մարդիկ բացահայտում և փորձում են հասկանալ այն բանի իմաստը, թե ինչպե՞ս է, որ նույնիսկ Եդրայրության համար աշխատելով և Եդրայրության հանձնարարությունները կատարելով էլ է հնարավոր կարմա կուտակել:

Շատերի տեսակետից դա կարող է անհեթեթ թվալ: Բայց եկեք փորձենք այդ գլուխկոտրուկը քննարկել կոնկրետ օրինակով:

Ասենք, մարդը հանձն է առնում որոշակի աշխատանք կատարել Եդրայրության համար՝ տարածել գրքեր, դասախոսություններ կարդալ, ուղերձները թարգմանել այլ լեզվի և այլն: Եվ նա տարիներով կատարում է այդ աշխատանքը: Թվում է, թե այդ դեպքում Կարմայի Օրենքը պետք է բավարարվի, և այդ ծառայության դիմաց անեն տվյալ մարդու կաուզալ մարմնի գանձերը:

Բայց արի ու տես, որ 90 տոկոսից ավելի դեպքերում այդ աճի փոխարեն կարմա է կուտակվում:

Երևի ընթերցողներից շատերը, հասնելով ուղերձի այս հատվածին, կմտածեն, որ տեքստում ինչ-որ բան խառնշտորված է:

Ոչինչ խառնշտորված չէ: Պարզապես մեր սաներից ոմանք որոշակի պարտավորություններ են վերցնում և մտածում, թե այդ պարտավորությունների դիմաց կյանքում պարզևի կարժանանան. ահա հենց դա էլ լրիվ հերիք, որ գործի Կարմայի Օրենքը: Եղբայրության համար աշխատանք կատարելն ինքնին նվաճում չէ, այլ նվաճում է աշխատանքի կատարման որակը: Դուք պետք է Եղբայրության գործերը կատարեք այնպես, որ մոռանաք ինքներդ ձեզ, մոռանաք աշխարհում ամեն ինչի մասին, քանի դեռ այդ գործերն ավարտին չեք հասցրել լավագույն ձևով: Նաև չեք կարող Եղբայրության գործերն անել այնպես չափած-ձևված ու պլանավորված, ինչպես կատարում եք ֆիզիկական աշխարհի ցանկացած այլ գործ: Քանզի եթե ձեր ջանքերի գործադրումը չունենա հարկ եղած ուղղվածությունն ու գիտակցական անհրաժեշտ որակը, ապա, ավա՛ղ, գործի արդյունքը ֆիզիկական ոլորտում կստանա փտած պտղի տեսք:

Եվ հաճախ ձեզ համար ավելի լավ կլինի, որ չանեք Եղբայրության գործերը, քան անեք դրանք ոչ հարկ եղած գիտակցական վիճակով ու ջանասիրությամբ:

Գուցե նախ պետք է վերադառնաք աղոթքային գործառնության ու ինքներդ ձեզ վրա աշխատեք այնքան, որ վերացնեք ձեր ունեցած թերություններն ու հոգեբանական խնդիրները: Քանզի, որպեսզի կատարեք Եղբայրության գործերը, անհրաժեշտ է, որ նախորդ կյանքերում արդեն որոշակի հոգևոր նվաճումների հասած լինեք: Միայն անցյալի մեծագույն սրբերը կարող են դառնալ Եղբայրության այնպիսի աշխատակիցներ, որոնք ի վիճակի են ֆիզիկական ոլորտում անթերի կատարելու Եղբայրության գործերը: Եվ չափազանց հազվադեպ է լինում, որ միայն մեկ մարմնավորման ընթացքում ձեզ հաջողվի Աստծուց Եղբայրության գործերն անելու հնարավորություն ստանալ:

Իսկ ձեր դեպքում այնպես է ստացվում, որ որքան փոքր հոգևոր նվաճումներ ու մեծ էգո ունեք, այնքան ավելի փութկոտ եք ձեռնամուխ լինում Եղբայրության գործերն անելուն: Այստեղից էլ ծագում են փոխադարձ մեղադրանքներն ու անբավարարվածությունը: Դուք պետք է քաջ գիտակցեք ձեր զարգացման մակարդակը: Պետք է սրտի թրթիռով մոտենաք Սպասավորման այն ամենաանշան հնարավորությանը, որ ձեզ ընձեռում են Վեհապետները:

Ես, իրոք, անհարմար եմ զգում, որ ստիպված եմ ձեզ բացատրել այնպիսի հասարակ ճշմարտություններ, որոնք չափազանց լավ հայտնի են արևելքում: Ցավոք, արևմտյան մարդու գիտակցությունը դժվարությամբ է դրանք ընկալում:

Հուսով եմ, որ այսօրվա գրույցով ձեզ համար պարզ կդառնա Ուղու վրա ունեցած ձեր անհաջողությունների պատճառը, և հերթում դուք կզբաղեցնեք ձեզ արժանի տեղը, որպեսզի Եղբայրության աշխատակիցը դառնալու իրավունք վաստակեք:

Մեր աշխատակիցների համար մենք բացում ենք Երկինք տանող ամենակարճ ճանապարհը, բայց համաձայնեք, որ փոխարենն ինչ-որ բան պետք է գոհաբերվի: Եվ դա, իհարկե, ձեր էգոն կլինի՝ ձեր կապվածությունները, սովորությունները, սիրած զվարճություններն ու այն հոգեբանական խնդիրները, որոնք ձեր հետևից քարշ եք տալիս հեռավոր անցյալից:

Սակայն բնույթով ես լավատես եմ և հուսով եմ, որ եթե ոչ այս տասնամյակում, ապա գոնե հաջորդում մեր ուղերձները ձեզ վրա հենց այն ազդեցությունը կունենան, որը մենք ակնկալում ենք:

ԵՄ ԵՄ Կույթումին՝ միշտ հույսով

Վեհապետ Սերապիս Բեյ
29 դեկտեմբերի, 2010 թ.

Տարեվերջյան որոշ ամփոփումներ

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը:

Իմ այցի այս օրը անցնող տարվա վերջին օրերից մեկն է: Ուստի բնական կլինեք անցնող տարվա որոշ արդյունքներ ամփոփելը:

Թեև մեզ համար Նոր տարին այն տոներից չէ, որ մենք նշում ենք, բայց, քանի որ ներկայումս Կարմայական Վարչության նիստն ընթացքի մեջ է, ամփոփվում են արդյունքները և պլաններ են կազմվում հաջորդ կիսամյակի համար, ինչու՞ մենք էլ ձեզ հետ միասին չզբաղվենք այդ գործով, թեկուզ արդյունքների ամփոփման մասով:

Եվ այսպես, ինչո՞վ առանձնացավ ընթացիկ տարին. ի՞նչն արժե հիշատակել ու նշել: Ցավոք, ուրախալի իրողություններ այնքան էլ չատ չեղան: Իսկ անուրախ իրողություններից ես կուզենայի հիշատակել այն, որ երկիրը, որտեղ հանգրվանել է մեր դեսպանորդը, չկարողացավ հաղթահարել հոգևոր առաջատար դառնալու իր թեստը:

Հավանաբար իմ այս պնդումը շատերի համար նորություն չէ: Ներըմբռնումով ինքներդ էլ վաղուց զգացել եք, որ արդյունքը հենց այդպիսին է: Ուստի ինձ մնում է միայն հաստատագրել այդ փաստը:

Այնուամենայնիվ ի՞նչ է լինելու հետո... Չէ՞ որ ամեն ինչ չի կարող ավարտված համարվել միայն այն պատճառով, որ մարմնավորման մեջ գտնվող որոշ անհատներ չկարողացան կամ չկամեցան իրագործել իրենց առաքելությունը:

Իրոք, կյանքը կշարունակվի, բայց այն դժվարությունները, որոնց մոտակա ժամանակներում կբախվի մարդկությունը, ցույց կտան, որ որոշակի քանակությամբ անհատների նախընտրանքն էվոլյուցիոն զարգացումը չի եղել: Եվ այսպես, ամեն ինչ կատարված է. ընտրությունն արված է: Եվ հիմա մնում է նվազագույնի հասցնել այն հետևանքները, որոնք կթափվեն մարդկության գլխին:

Ի՞նչ պետք է անել դրա համար: Աշխատել սեփական անձի վրա: Դուք հավանաբար նկատել եք, որ բոլոր լավագույն մարդկային հատկանիշները ներսից են բխում՝ Սեր, Բարեգթություն, Կարեկցանք, հոգածություն մերձավորների նկատմամբ, Բերկրանք: Բոլոր այդ հատկանիշները ձեր սրտերից են բխում: Ուստի բնական կլինեք, որ հաղթահարվեին այն ներքին արգելապատնեշները, որոնք խանգարում են ձեր ներսի աստվածային հատկանիշների դրսևորմանը:

Ցավոք, աշխարհի իրավիճակն այնպիսին է, որ լավագույն աստվածային հատկանիշների դրսևորումը շրջապատի մարդկանց զգուշավորության է դրդում: Այսպիսի փորձ կատարեք. ոգեշնչվեք աղոթքների ընթերցումով, հոգևոր գործառությամբ զբաղվեք, որից հետո դուրս եկեք փողոց և արտահայտեք ձեր լավագույն զգացմունքները ձեր հարևանների, աշխատակիցների կամ պարզապես անծանոթ մարդկանց ներկայությամբ: Կարծում եմ, կարելի է գուշակել նման փորձի արդյունքը. ամենից առաջ ձեզ տարօրինակ մարդու տեղ կդնեն կամ մի մարդու տեղ, որին ինչ-որ բան է պետք շրջապատի մարդկանցից: Հնարավոր է նաև, որ ձեզ մեղադրեն չարանենգ մտադրություններ ունենալու մեջ:

Չարմանալիորեն հասարակությունն ամեն ինչ գլխիվայր է շրջել: Լավագույն մարդկային հատկանիշները զգուշավորություն են հարուցում, իսկ կոպտությունն ու մռայլությունն ամենաստվորական հատկանիշներ են դարձել:

Շա՛տ զարմանալի է... Եվ, իհարկե, նման իրավիճակում շատ դժվար է ներքին անդորրն ու ներդաշնակությունը պահպանելը: Հարկ է լինում հարմարվել շրջապատի հետ, որպեսզի ավելորդ ուշադրություն չհարուցվի: Սակայն դուք չեք կարող թաքցնել ձեր թրթռումները: Ձեր ամեն մի բջիջը թրթռում է աստվածային հաճախականությամբ: Եվ եթե նույնիսկ դաժան ու մռայլ տեսք ընդունեք, ապա դա էլ չի օգնի: Ձեզ անհապաղ կդնեն մի մարդու տեղ, որն այս աշխարհից չէ:

Իսկ ո՞րն է ելքը: Այն նույնն է, ինչ միշտ է եղել՝ անկախ ամեն ինչից միաբանվել և Լույս ճառագել: Մի՛ վախեցեք տարօրինակ, անսովոր և ոչ այս աշխարհի մարդ երևալուց:

Ավելի խիստ ժամանակներ են մոտենում: Եվ ընդամենը մի քանի տասնյակ մարդկանց սխալ նախընտրանքների պատճառով ամբողջ մարդկությունն ստիպված կլինի ընթանալ ոչ ամենալավ ճանապարհով:

Դրանով է բացատրվում այն գաղտնիքը, թե ինչու մենք նորից սկսեցինք թելադրություններ տալ մեր դեսպանորդի միջոցով: Քանի դեռ մարմնավորված լուսակիրներ կան, մենք նրանց կցուցաբերենք հնարավոր ամբողջ օգնությունը, այդ թվում նաև մեր ուղերձային հոգևոր օժանդակությունը:

Մարմնավորվածների մեջ կան նաև այնպիսիները, որոնք չեն էլ կասկածում, որ իրենք լուսակիր են: Նրանք պարզապես բարիք են գործում՝ առանց պարզևներ ակնկալելու: Պարզապես բարի գործեր են անում, և իրենց մտքով անգամ չի անցնում, որ իրենց արածն արժանի է համընդհանուր ուշադրության:

Բայց կան և այնպիսիները, որոնք անգուսպ կերպով իրենք իրենց լուսակիր են հռչակում և ի լուր աշխարհի բարձրաձայնում իրենց պատկանելությունը Լույսի Հիերարխիային: Սակայն հիմնականում դրանք հենց այն մարդիկ են, որ պատկանում են մեզ հակադիր ուժերին: Հոգևոր նվաճումներ ունեցող իսկական լուսակիրներն այժի են ընկնում իրենց համեստությամբ: Եվ որքան մեծ են մարդու հոգևոր նվաճումները, այնքան նա ավելի քիչ է խոսում իր մասին: Քանի որ հասկանում է, որ իր նվաճումներն անհամեմատ փոքր են այն նվաճումներից, որ ունեն Համբարձյալ Վեհապետները՝ Ուղու իր ավագ եղբայրներն ու քույրերը:

Վրա է հասնում մի ժամանակ, երբ կվիճակվի բարի գործերը գաղտնի անել՝ ինքն իրեն չբացահայտելու նկատառումով: Եվ հենց դրան ենք մենք նախապատրաստել մեր աշակերտներին նախքան իրենց մարմնավորվելը: Հասարակությունը պետք է կուշտուկուռ հագնեա ցածրակարգ ու ապաշնորհ կերպերով, որից որոշ ժամանակ հետո ճոճանակի օրենքով մարդիկ նորից շուռ կգան դեպի լուսավոր ու հրաշալի կերպերը:

Այժմ ճոճանակը թերվել է դեպի ոչ աստվածային կերպերի կողմը: Սակայն դուք պետք է նկատի ունենաք, որ դա ժամանակավոր երևույթ է, և որ Համբարձյալ Դասերը ոչ մի պարագայում ձեզ չեն լքի:

Հարկավոր է դիմանալ: Եվ դրա համար հարկ կլինի, որ լարեք ձեր բոլոր ուժերը:

Ես տարեվերջին եկա ոչ այնքան ուրախ ուղերձով: Բայց աստվածային հնարավորության ճոպան թողեցի նրանց համար, ովքեր կուզենան մոտակա ժամանակներում դրանից օգտվել:

ԵՍ ԵՄ Մերասյիս Բեյր

Մեծն Աստվածային Ուղղորդիչ

30 դեկտեմբերի, 2010 թ.

Աստվածային գիտությունը բոլոր գիտություններից ամենաբարձրն է

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը: Դուք ինձ գիտեք որպես Կարմայական Վարչության անդամի և Սեն Ժերմենի Ուսուցչի:

Ես ոչ միշտ եմ ձգտում բեմ դուրս գալ և սովորաբար կարծես կուլիսների հետևից եմ ուղղորդում հասարակության հոգևոր զարգացումը:

Արդ, այս օրն իմ կանոններից բացառություն անելու երջանիկ դեպքերից մեկը կլինի, քանզի եկել եմ, որ տամ տարվա փաստորեն ավարտական ուղերձը: Կարմայական Վարչության նիստը մոտեցել է իր ավարտին, և հրատապ լուծում պահանջող բոլոր հարցերը հիմնականում արդեն քննարկված են:

Ուստի և ես մի փոքր ժամանակ ունեցա կուլիսների հետևից դուրս գալու համար: Չեմ կարծում, թե նրանցից շատերը, որոնք կարդում են այս ուղերձը, հավուր պատշաճի կգնահատեն իմ այս քայլը: Քանզի ինչպես այս, այնպես էլ այս շրջանի համարյա բոլոր ուղերձները նախատեսված են նրանց համար, ովքեր ամուր կանգնած են Ուղու վրա և զգում են միայն ոչ մեծ օժանդակության ու ճշգրտման կարիք: Իսկ այն շատերը, որոնք փնտրում են զգայացունց ինչ-որ «նորություններ», ուղղակի հիասթափություն կապրեն:

Մենք անցում ենք կատարում ավելի նուրբ իրականության: Եվ խոսում ենք նրանց համար, ովքեր ունակ են մեզ ընկալելու: Իսկ մյուսներին հնարավորություն է ընձեռված ուսումնասիրելու մեր նախորդ ուղերձները: Միայն հաշվի առեք, որ եթե առաջվա պես շարունակեք դեսուդեն ընկնել, որպեսզի հանկարծ ոչ մի նորություն բաց չթողնեք, որոնք կան համացանցում և գրադարակների վրա, ապա ավելի լավ կլինի, որ չկարդաք մեր ուղերձները, քանի որ իզուր ժամանակ կվատնեք:

Մենք մեր ուղերձներն այնպես ենք կազմել, որպեսզի մարդ աստիճանաբար մուտք գործի մեր աշխարհ՝ որոշումներ կայացնելու պարագայում ավելի ու ավելի շատ հենվելով իրականության ներքին ընկալման, քան արտաքին կողմի վրա: Իսկ դա հնարավոր է միայն այնժամ, երբ լրջորեն որոշել եք իրապես ընթանալ մեր մատնանշած Ուղով:

Իսկ եթե առաջվա պես իրար խառնեք տարբեր աղբյուրներ ու տարբեր հոգևոր ուղղություններ, ապա մեր ուղերձները ձեզ վրա հակառակ ազդեցությունը կունենան: Դուք ոչ թե կմերձենաք ֆիզիկական աշխարհի ձեր հոգևոր ճամփորդության նպատակակետին, այլ կհեռանաք դրանից:

Եվ դա լիովին բացատրելի է նույնիսկ ֆիզիկական տեսակետից: Երբ ինքներդ ձեզ ենթարկում եք տարբեր էներգիաների ազդեցությանը՝ առանց ձեզ հաշիվ տալու այն մասին, թե ձեր նուրբ մարմինների վրա ինչպիսի ազդեցություն է գործում այդ էներգիաներից յուրաքանչյուրը, ապա ստիպված եք լինում մշտապես գտնվել ագրեսիվ միջավայրի ազդեցության տակ: Այդ էներգիաները ձեր էությունը կքաշքշեն տարբեր կողմեր, և, փոխանակ առաջ ընթանալու, դուք կամ տեղում գամված կմնաք, կամ կսահեք դեպի ետ: Որպեսզի առաջ ընթանաք, դուք պետք է ընտրեք Ուղին և սկսեք շարժվել դրանով: Բայց եթե Ուղու որոշակի կետում հանկարծ որոշեք, թե միգուցե ավելի լավ կլինեք, եթե ընթանայիք մի այլ երթուղով, ապա ինքնաբերաբար կվերադառնաք ձեր Ուղու սկզբնակետին:

Հենց այդպես է վարվում մեր ուղերձները կարդացող մարդկանց մեծ մասը: Սկզբում նրանք առույգորեն երթի են ելնում մեր առաջնորդությամբ, բայց հետո ծանոթներից որևէ մեկն այլ աղբյուր է առաջարկում, և նրանք սկսում են շարժվել երբեմն լրիվ հակառակ ուղղությամբ:

Եթե դուք աստվածային աղբյուր եք գտել, և ձեր Բարձրագույն Ես-ն այն ճշմարտացի է համարում, ապա էլ ինչու՞ եք կասկածելի աղբյուրի ազդանշանով պոկվում և վազում հակառակ ուղղությամբ:

Ուսմունքի խորքը հասանելի է դառնում կյանքի փորձություններով և այդ փորձություններով անցնելու ընթացքում ստացված գիտելիքները կիրառելով: Հավատացե՛ք ինձ, եթե ընթանում եք մեր մատնանշած ուղղությամբ, ապա ձեր առջև բացահայտվում են պատրանքի ավելի ու ավելի նուրբ եզրաշերտեր, և դուք սովորում եք հաղթահարել ներքին ու արտաքին այնպիսի խոչընդոտներ, որոնց առկայության մասին նույնիսկ գլխի չէիք ընկնում Ուղու սկզբնամասում:

Իսկ նրանք, ովքեր այս ու այն կողմ են նետվում, ոչ միայն Ուղով առաջ չեն ընթանում, այլև անմիջական վնաս են հասցնում իրենց հոգուն, քանի որ, չունենալով զանազանման նրբին փորձառություն, ենթարկվում են բազմաթիվ բացասական ազդեցությունների, որոնք կարող են քայքայել ինչպես նուրբ մարմինները, այնպես էլ հենց հոգին:

Նորից կրկնում եմ, որ աստվածային գիտությունը բոլոր գիտություններից ամենաբարդն է, և դրա մակերեսային ուսումնասիրությունը որևէ արդյունքի չի հանգեցնի: Ուստի ես եկել և տալիս եմ իմ այս ուղերձը: Իմ հիմնական պարտականությունն է ճիշտ ուղղություն մատնանշել ժամանակի ցանկացած ընթացիկ պահի:

Իսկ այժմ, քանի որ մեր զրույցը մոտենում է իր ավարտին, կուզենայի զգուշացնել, որ մարդկությունն իր ամբողջության մեջ ընթանում է սխալ ճանապարհով: Ճշմարիտ Ուղին նշված է: Նշված է ոչ միայն այս ուղերձներում, այլ նաև անցյալի մեր շատ դեսպանորդների միջոցով: Եվ այդ Ուղին հոգևոր զարգացման Ուղին է:

Եվ եթե սրանից վեց տարի առաջ գտնվեին մարդիկ, որոնք պարզապես ի կատար ածեին մեր ուղերձներում առկա հանձնարարականները, ապա հիմա մենք ամուր հիմք կունենայինք, որի վրա կամրացնեինք հասարակության զարգացման նոր սկզբունքները: Իսկ այժմ հասարակությունը երես է թեքել մեր հանձնարարականներից, ուստի և մենք ձեզ իրավունք ենք վերապահում ընթանալու ձեր իսկ ընտրած ուղով, որը ոչ մի տեղ չի տանում: Յավոր, տիեզերքի ոչ մի բարձրագույն խորհուրդ կամ կարմայական վարչություն չի կարող ձեզ արգելել, որ շարժվեք ձեր ազատ կամքով:

Մենք կարող ենք միայն մի կողմ քաշվել ու դիտել՝ պարբերաբար ձեզ հիշեցնելով Կարմայի Օրենքի և դրա գործողության սկզբունքների մասին:

Մենք բազմաազգային աշխատանքի փորձ ունենք Երկրի մարդկության հետ և բազմադարյա փորձառություն, որպեսզի համակշռություն պահպանենք այն եզրագծի վրա, որի վրա մարդկությունը գերադասում է հայտնվել:

Հիրավի, Դուք ունե՛ք մտորելու բան, երբ ամփոփելիս կլինեք տարվա արդյունքները:

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղորդիչը

Տեր Մայտրեյա

31 դեկտեմբերի, 2010 թ.

Ես մաղթում եմ, որ հաջողությամբ դիմանաք ձեր բոլոր փորձություններին

ԵՍ ԵՄ Մայտրեյան: Շատերդ սպասում էիք ինձ: Շարունակում եք սպասել ինձ՝ Երկրի ժողովուրդների համար կանխորոշված ապագա Բուդդայիս:

Ինքս իմ հերթին մարդկությանը նախապատրաստում եմ իմ գալստյանը: Չբաղվում եմ նրանցով, ովքեր պատրաստ են անցնելու Գաղտնի Ծեսերի իմ Դպրոցը:

Ձեզնից շատերն արդեն ստացել են իմ հրավերը: Շատերիդ իմ օրհնանքն եմ տվել այս դեսպանորդի միջոցով: Եվ իմ ալմաստե ճառագայթն արդեն պատրաստ է արթնացնելու ձեր Աստվածայնությունը:

Իմ ղեկավարությամբ ձեռնադրումներ անցնելու որոշում ընդունածներից մի քանիսը միայն խիզախեցին անելու առաջին քայլերը:

Սակայն ոչ ոք ավելի առաջ չգնաց: Երկիր մոլորակի վրա ներկայումս մարմնավորված մարդկության համար թեստերը չափազանց դժվարանցանելի եղան:

Ես եկել եմ ձեզ ասելու, որ թեև ի սկզբանե առանձնապես շատ վստահ չէինք, թե ներկայիս մարդկությունն ունակ կլինի ընթանալու արագացված էվոլյուցիայի ուղով, Ձեռնադրումների Ուղով, այնուամենայնիվ հիմա կանգնած ենք հուսալքության առջև:

Մայայի ձգողությունը ձեզ համար ավելի ուժեղ դուրս եկավ, քան Համբարձյալ Դասերի կանչը: Մենք դեռ երբեք այսքան լայնամասշտաբ փորձ չէինք ձեռնարկել, որ միանգամից հազարավոր մարդկանց հնարավորություն ընձեռենք հավելու հավերժական Ճշմարտություններին և մեր ուղերձների շնորհիվ ակունքից ըմպելու Հավերժական Կյանքի ամրիտան:

Ավա՛ղ, մեր հաշվարկները սխալ դուրս եկան: Զանգի որքան ավելի մատչելի է լինում գիտելիքը, այնքան մարդկանց ներկայիս սերունդն այն ավելի է ժան է գնահատում: Եթե մենք գործեինք ավելի փակ, հավանաբար հետաքրքրությունն ավելի մեծ կլիներ: Այնուհանդերձ մենք մեր նպատակին հասանք: Մենք հնարավորություն ունեցանք զննելու յուրաքանչյուրին, ով առնչվեց մեր ուղերձներին: Հնարավորություն ունեցանք դիտելու ձեր արձագանքը: Եվ այն, ինչ քողարկված էր անթափանց բարեպաշտության ու քաղցր-մեղցր ժպիտի քողով, նուրբ ոլորտում իր ողջ շուքով բացվեց մեր առջև:

Եվ այսպես, համենայն դեպս, ես բավարարված եմ: Իսկ Վեհապետների նկատմամբ ձեր անհարգալից վերաբերմունքը և արհամարհական դատողություններն այն մասին, թե մեր ուղերձներում շարադրված բաները որքանով են համապատասխանում ճշմարտության ձեր ունեցած պատկերացումներին, մեզ ավելին ասացին, քան եթե իրապես ձեր կյանքի մեծ մասն անցկացնեիք Գաղտնածեսների Դպրոցում:

Ամեն ինչից վեր ես գնահատում եմ նվիրվածությունն ու անկեղծությունը: Բարձր եմ գնահատում նաև այն Հավատն ու Մերը, որ իմ աշակերտները տածում են իմ նկատմամբ: Այդ դեպքում ես նրանց ուշադրություն եմ հատկացնում և նրանց անխոնջ աշխատանքին պարգևում իմ ժպիտը: Եվ իսկական աշակերտներիս իմ այդ ժպիտը բավարար է լինում, որ ոգեշնչվեն և երկար տարիներ աշխատեն նույն ոգևորությամբ:

Ուստի ասված է՝ շատ են կանչվածները, բայց քիչ են ընտրվածները: Եվ ինչպես սերմերի դեպքում է, երբ դրանց մի մասն է միայն նոր կյանքի սկիզբ դառնում, այնպես էլ ներկայումս ապրող մարդկանց մի փոքր մասը միայն կկարողանա շարունակել էվոլյուցիան: Իսկ մեծամասնությունը միրաժը կընտրի՝ շրջանցելով ճշմարիտ աղբյուրը:

Իհարկե, դա միայն ձեր այս կյանքի արդյունքը չի լինի: Հարյուր հազարավոր տարիների ընթացքում՝ դեռևս երրորդ և չորրորդ արմատական ռասաների օրոք, դուք նախապատվությունը տվել եք ձեր էգոյին:

Ուստի մենք այժմ շատ մարդկանց հոգիներին գործնականում վերջին հնարավորությունն ենք տալիս, որ գոնե հարկ եղած հարգանքով հայացք նետեն մեր կողմը: Ավա՛ղ, դա տեղի չի ունենում...

Անուրախ ուղերձ եմ ձեզ տալիս անցնող տարվա վերջին: Եվ, ինչպես վստահեցնում է Կարմայական Վարչությունը, ամեն ինչ շատ ավելի վատ է...

Մնացել է վերջին հույսը, որ մարմնավորման մեջ գտնվող մի քանիսը կկարողանան համակշռություն պահպանել աշխարհի մեղքերի դիմաց:

Օրենքն այնպիսին է, որ անհատականությունը պետք է գտնվի ֆիզիկական ոլորտում, որպեսզի կարողանա պահպանել աշխարհի կարմայի համակշռությունը:

Իսկ ինչո՞վ կարող են օգտակար լինել մնացած մարդիկ: Կարծում եմ, ինչպես միշտ, նրանով, որ իրենց հայացքները հառեն դեպի Երկինք և ձգտեն եղածի վրա նոր կարմա չավելացնել:

Ապագայի ռասաների համար պայմանների ստեղծման գործն առայժմ հետաձգվում է: Նախ և առաջ պետք է կարգ ու կանոն հաստատվի պատրանքով չափազանց շատ կլանվածների ուղեղներում: Նրանք պետք է ճաշակեն իրենց կուտակված կարմայի բոլոր պտուղները:

Պատրանքն այս փուլում ավելի գորեղ գտնվեց: Թեև դա ժամանակավոր գերակշռություն է, բայց նրանց համար, ովքեր ներկայումս գտնվում են մարմնավորման մեջ, այդ գերակշռությունը կարող է տևել մինչև իրենց ընթացիկ մարմնավորման ավարտը:

Աստծո Հրաշք պետք է տեղի ունենա, որ պատրանքը շրջվի մյուս երեսի վրա: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ երկրագնդի բնակչության ընդամենը մեկ տոկոսը մղվի դեպի Հավերժական Կյանք և ձերբազատվի այդ պատրանքից:

Համաձայնեք, որ դա լիովին իրագործելի պահանջ է: Սակայն դեռևս մոլորակի վրա մեր մատնանշած Ուղով ընթացողները ոչ միայն այդ մեկ տոկոսը, այլ նույնիսկ դրա գոնե մի քանի հազարերորդական տոկոսը չեն կազմում:

Կա դյուրին ճանապարհ, և այն միշտ բաց է: Բավական է միայն, որ դրանով ընթանալու ցանկություն լինի: Կա և ավելի դժվարին ճանապարհը՝ տառապանքների, դժբախտությունների, հիվանդությունների, պատերազմների և արհավիրքների ճանապարհը: Եվ աստղաբաշխական բոլորաշրջանների շրջադարձային պահերին մարդկությունը նախանձելի համառությամբ ընտրում

է, մեր կարծիքով, ավելի խրթին ուղի: Ըստ երևույթին, մարդկությունը հեշտ ճանապարհներ չի փնտրում, և նրանք, ովքեր կկարողանան մինչև վերջ դիմանալ բոլոր փորձություններին, կարծում են, որ իրենց նվաճումների աստիճանով կգերազանցեն ինձ:

Ուստի ես մաղթում եմ, որ հաջողությամբ դիմանաք ձեր բոլոր փորձություններին և հնարավորինս ավելի շուտ հաղթահարեք ձեր անգիտությունը, կրքերն ու ցանկությունները...

ԵՍ ԵՄ Մայրուհյան

Հաութամա Բուդդա
1 հունվարի, 2011 թ.

Տարեսկզբի ավանդական ուղերձ

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան: Այս օրով եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս խոսեմ ամենակարևորի՝ այն մասին, թե ինչ է կատարվում Երկիր մոլորակում և ինչ է սպասվում նրան:

Մենք շատ անգամ ենք ասել, որ մոլորակի թրթռանքները բարձրանում են: Թրթռանքների այդ բարձրացումն անհրաժեշտ գործընթաց է և պլանավորվել է այս տիեզերքի կառավարման ամենաբարձր ատյանների կողմից:

Ցավոք, թրթռանքների բարձրացման այդ բարի իրադարձությունը մարմնավորման մեջ գտնվող սովորական, շարքային անհատների համար կարծես թե այնքան էլ հարմար և ուրախալի իրադարձություն չէ:

Մոլորակի թրթռանքի բարձրացումն իր անդրադարձն է ունենում ձեր բոլոր մարմինների վրա:

Ինչպես ֆիզիկական, այնպես էլ ավելի նուրբ մարմինները հայտնվում են իրենց համար անսովոր թրթռանքների տիրույթում: Երբ գտնվում եք ձեզ համար սովորական դարձած թրթռանքների տիրույթում, ապա հարմարավետություն եք զգում: Իսկ երբ թրթռանքի մակարդակը փոխվում է, ձեզ զգում եք անհարմարավետ վիճակում: Դա կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական մարմնի հիվանդությամբ, այնպես էլ ցածրորակ հոգեբանական վիճակներ ապրելով՝ վախ, ագրեսիվություն, ճնշվածություն, ապրելու ցանկության բացակայություն:

Գիտակցության անորակ վիճակները կարող են հանգեցնել զանգվածային հուզումների և տարբեր կարգի տեխնաժին համադետների, քանի որ ձեր տեխնոկրատական քաղաքակրթությունը չափազանց շատ է հենվում բազմաբնույթ տեխնիկական միջոցների վրա, որոնց սպասարկման համար որակյալ պատրաստվածություն և աշխատունակություն է պահանջվում: Ուստի և այժմ ամբողջ մոլորակը և հատկապես նրա այն տարածքները, որոնք աչքի են ընկնում այդպիսի քաղաքակրթության բարձր աստիճանով, հայտնվում են համապատասխան բարձր վտանգավորության գոտում:

Մարդկային գիտակցության ցածրակարգ վիճակները հանգեցնում են ոչ միայն տեխնաժին, այլ նաև բնական համադետների: Ձեզ հայտնի է, թե վերջին հարյուր տարում քանի անգամ է աճել զանազան տարերային աղետների՝ հրաբուխների, երկրաշարժերի, ցունամիների, քանակը: Եվ դա աստեղային ոլորտի այն լարվածության հետևանքն է, որը պայմանավորված է ձեր գիտակցության վիճակով:

Ուստի մենք ստեպ-ստեպ գալիս ենք, որպեսզի դեղատոմս առաջարկենք և հիշեցնենք անվտանգության այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն հանուն Երկիր մոլորակի վրա կյանքի շարունակման:

Մենք խնդրում ենք ձեզ, որ սահմանափակեք զանգվածային գիտակցության ազդեցությունը ձեր և ձեր երեխաների վրա: Խոսքս վերաբերում է հեռուստահաղորդումներին ու ռադիոհաղորդումներին, անորակ երաժշտությանը: Նաև խնդրում ենք, որ սահմանափակեք մսամթերքի օգտագործումը, հրաժարվեք ակոհոլից, թմրանյութերից, նիկոտինից, ագրեսիվ բնույթի համակարգչային խաղերից:

Մրանք շատ հասարակ պահանջներ են: Բացատրեմ, թե ինչու է անհրաժեշտ դրանց ենթարկվել: Թվարկածս բոլոր բաները նպաստում են ձեր թրթռանքների իջեցմանը: Եվ, հետևաբար, ձեր թրթռանքներով դուք հակադրվում եք մոլորակի թրթռանքի ընդհանուր հետնապատկերին, որը տարեցտարի բարձրանում է: Ուստի, եթե նախկինում այդ բոլոր բաները դուք կարող էիք ձեզ թույլ տալ, ապա այժմ դրանք վտանգավոր են դառնում: Եվ դրանց վտանգավորության աստիճանը տարեցտարի ավելի ու ավելի է աճում:

Շատերը փորձում են վերականգնել իրենց նախկին հարմարավետ վիճակը՝ մեծացնելով ակոհոլի կամ նիկոտինի չափաբաժինը կամ ունկնդրելով, այսպես կոչված, «երաժշտության»

նորանոր ձևեր: Սակայն դրանով ավելի ու ավելի խոր են ներքաշվում գիտակցության բացասական վիճակների մեջ:

Մենք ձեզ պարզ դեղատոմսեր ենք առաջարկում: Մենք առաջարկում ենք օգտագործել բոլոր մատչելի միջոցները, որպեսզի ձեր գիտակցությունը պահեք հնարավորինս բարձր մակարդակի վրա: Այդ դեպքում ձեր թրթիռները կհամապատասխանեն մոլորակի թրթռանքի հետնապատկերին, և դուք կկարողանաք մնալ էվոլյուցիոն զարգացման ուղու վրա:

Ցավոք, մեծ քաղաքները, լինելով զանգվածային գիտակցության հավաքատեղիներ, չեն դիմանա այն տեմպին, որով ընթանում է մոլորակի թրթռանքի մակարդակի բարձրացումը: Ժամանակի ընթացքում մեծ քաղաքներում ապրելը չափազանց վտանգավոր կդառնա: Մեր ուղերձներում մենք նաև խոսել ենք այն մասին, որ անհրաժեշտ է ապրել բնության հետ ներդաշնակ:

Կանցնի ևս մի քանի տարի, և դուք, ինչպես ամանորյա բլիթներ թխելու՝ տատիկից մնացած քաղադրատոմսն եք փնտրում, այնպես էլ կսկսեք փնտրել մեր այս թելադրությունները, որպեսզի առաջնորդվեք մեր ասածներով:

Բայց, ավա՛ղ, ինչպես հիմա վաճառքում չկան այն մթերքները, որոնցով տատիկն այնպիսի գաթա էր թխում, որի համը մանկությունից մնացել է ձեր բերաններում, այնպես էլ մի քանի տարի հետո մեր դեղատոմսերը ձեզ համար այլևս օգտակար չեն լինի:

Ճիշտ այնպես, ինչպես խանութների մթերքները, նախկին անունները կրելով հանդերձ, այլևս առաջվանը չեն, այլ արհեստական փոխնականներ են, այդպես էլ այն հոգևոր սնունդը, որը հրամցնում են լրատվության զանգվածային միջոցները, ոչ թե իսկական է, այլ փոխնակ, որը սովորության համաձայն կլանում եք, բայց բավարարվածություն չեք ստանում:

Ներկայիս քաղաքակրթությունը հասել է փակուղու: Եվ փակուղուց դուրս գալու միակ ելքը գլուխը վեր բարձրացնելն ու դեպի վեր՝ դեպի Աստծված, ձգտելն է: Դուք պետք է գիտակցված ընտրություն կատարեք և որոշեք, թե ձեր կյանքում ում եք ավելի շատ կարևորություն տալիս՝ ինքներդ ձե՛զ՝ ձեր բոլոր մարմնական ցանկություններով հանդերձ, թե՞ Աստծուն:

Այդ հարցի ձեր պատասխանը պետք է աշխատեք գտնել մինչև այս տարվա վերջը:

Մենք մեր ուղերձներն այն հույսով ենք հղում, որ գոնե մի քանի հարյուր կամ տասնյակ մարդիկ ունակ կդառնան արթնանալու շրջապատող աշխարհի պատրանքից, որպեսզի արթնացնեն նաև մյուսներին:

Կո՛իվ է գնում յուրաքանչյուր հոգու համար: Եվ ձեզնից յուրաքանչյուրը, որ կարդում է մեր ուղերձները, թանկ է մեզ համար: Հանուն ձեզ մենք պատրաստ ենք շատ բաներ անելու, բայց առաջին քայլն ինքներդ պետք է անեք՝ մեզնից օգնություն խնդրելով:

Միայն այնժամ, երբ կգիտակցեք, որ սիսալ ուղով եք ընթանում և կդիմեք մեր օգնությանը, մենք ուղեկցորդ կուղարկենք, որը ձեզ կհանի լուսավոր ուղու վրա:

Բայց քանի դեռ կասկածների մեջ եք և կարծում եք, թե մենք ձեզ պարզապես սարսափելի հեքիաթներ ենք պատմում, մենք ձեզ չենք կարող ցուցաբերել այն օգնությունը, որի կարիքը դուք իսկապես ունեք:

Ես եկա տարեսկզբյան ավանդական ուղերձով և ձեզ տվեցի բոլոր անհրաժեշտ հանձնարարականները:

ԵՍ ԵՄ Հատկաճանա Բողոքան

Վեհապետ Էլ Մորիա
2 հունվարի, 2011 թ.

Անուրախ ուղերձ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան:

Մեր նախորդ հանդիպումից հետո այնքան էլ շատ ժամանակ չի անցել, սակայն եթերային օկտավաներում, որտեղ Համբարձյալ Վեհապետներն են գտնվում, այդ ընթացքում շատ բաներ են տեղի ունեցել:

Մենք ամփոփել ենք արդյունքները և նախանշել հետագա քայլերը:

Ամենահետաքրքրասեր սաների համար ասեմ, որ ո՛չ այդ արդյունքների, ո՛չ էլ հետագա քայլերի մասին ներկայիս մարմնավորված մարդկությունն իրազեկ չի դառնա:

Նախորդ տարիների ընթացքում մենք շատ բան բացեցինք ձեզ համար: Եվ նրանք, ովքեր հարկ եղած չափով համալարված էին մեր ալիքի հետ, կարող էին դրանցից շատ բաներ քաղել իրենց հոգևոր զարգացման համար:

Առավել հետաքրքրասերներին, որոնք փորձում են մեզ հետ՝ Համբարձյալ Դասերիս, կամ մեր դեսպանորդի հետ մտնել անմիջական հարաբերությունների մեջ, կասեմ, որ դա այնքան էլ անվտանգ զբաղմունք չէ, ինչպես կարող է թվալ մեր որոշ թելադրություններից:

Օրինակ՝ այն անհատների համար, որոնք, հետաքրքրասիրությունից ելնելով կամ ներքին դրդմամբ, հնարավորություն են ունեցել մերձորեն շփվելու մեր դեսպանորդի հետ, ուժի մեջ է մտել ձեռնադրումների օրենքը: Եվ դեսպանորդի կողմից ձեզ հասցեագրված յուրաքանչյուր խնդրանքը, որը ձեզ խելամիտ թվացող պատճառաբանություններով դուք չեք բավարարել, նուրբ ոլորտում անհաղթահարելի խոչընդոտ է ստեղծել ձեր հոգևոր առաջընթացի ճանապարհին: Իհարկե, ձեզ համար ամեն ինչ չէ, որ կորած է, բայց խոչընդոտներն այնուամենայնիվ ստիպված կլինեք հաղթահարել: Եվ հնարավոր է, որ հարկ լինի դրան նվիրաբերել մի ամբողջ կյանք:

Յուրաքանչյուր ոք, ով հայտնվում է մեր դեսպանորդի տեսադաշտում, հայտնվում է նաև մեր տեսադաշտում: Եվ բոլորովին իզուր եք կարծում, թե ոչինչ տեղի չի ունենում: Մեր աշակերտության շատ թեկնածուներ նույնիսկ չեն էլ կռահում, որ իրենք թեստավորվում են. չեն էլ կռահում, որ մեկը մյուսի հետևից քննություն են տալալու:

Ճիշտ նույն կերպ Ռուսաստանը, որն այս տարիների ընթացքում պետք է թեստ հանձներ, որպեսզի հոգևոր առաքելություն իրականացնողի իրավունք նվաճեր, չկարողացավ հաղթահարել այդ թեստը: Եվ դա արդեն ակնհայտ է դարձել: Յուրաքանչյուր ոք, ով կարդացել է մեր ուղերձները, կարող էր նկատել մեր կողմից տրված հիմնական ուղենիշները, բայց դրանք չեն նկատվել նրանց կողմից, որոնց համար նախատեսված է եղել մեր առաջադրած թեստերից յուրաքանչյուրը:

Դուք ափսոսում և հավանաբար մտահոգվում եք, թե հետո՞ ինչ է լինելու... Հետո հարկ կլինի նստելու կյանքի դաժան դասերի դասաստեղանի առջև և նորից անցնելու ուսուցման ողջ դասընթացը: Բավական է միայն վերհիշել այդ ուսման դասընթացի հիմնական փուլերը: Դրա համար պետք է վերադառնալ դեպի անցյալ դարի սկիզբը: Համաշխարհային պատերազմ, հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, այլախոհության դաժան ճնշումների ռեժիմ, նորից պատերազմ, ավերածություններ, միջուկային զենքով հակամարտություն: Չեմ ասում, թե սցենարը նույնը կլինի: Էվոյուցիոն պարույրի նոր գալարում չի կարող կրկնվել նույն սցենարը՝ թեկուզ և այն պատճառով, որ ժամանակն ավելի սրընթաց է դարձել: Եվ նախորդ դարի բոլոր իրադարձությունները նոր սցենարում կարող են խտացվել ընդամենը մի քանի տարվա մեջ:

Իհարկե, այն ընթացքում, երբ երկրներից մեկի ժողովուրդն իրեն հատուկ անգալությամբ ու սանձարձակությամբ ջանքեր ձեռքին պարում է վառողի տակառի վրա, ոչ միայն մերձակա երկրները չեն կարողանա հանգիստ ապրել, այլ նաև մնացած բոլոր երկրները: Քանզի երկրների միջև չափազանց սերտացել են տեղեկատվական, տնտեսական և այլ տիպի կապերը:

Ահա այդ վտանգավոր սցենարն է, որ մենք քայլեր ենք ձեռնարկում, որ հանգուցալուծվի ամենաանվտանգ ձևով, որպեսզի մի քանի տարի հետո մոլորակի վրա մնացած լինեն էվոյուցիան շարունակողներ:

Նորից եմ հիշեցնում, որ մոլորակի այս իրադրությունը մեր կողմից չի հաստատվել: Այն մարդկության համայնական գիտակցության պտուղն է: Ուստի ձեզ կվիճակվի հանգուցալուծել բոլոր այն կարմայական հանգույցները, որոնք մարդկությունը ստեղծել է իր ոչ շատ վաղ անցյալի պատմության ընթացքում:

Աշխարհի մեղքերի քավումը հնարավոր է, բայց սպասվող Մեսիան չի կարող մարմին առնել այն պայմաններում, որոնցում աշխարհն այժմ գտնվում է: Ֆիզիկական ոլորտի թրթռանքները չափազանց ցածր են:

Մենք շարունակում ենք մարդկության համար մատնանշել ամենախաղաղ և ամենաանվտանգ ուղին: Վառողի տակառի վրա պար գալու կարիք չկա: Ուսումնասիրե՛ք Կարմայի Օրենքը և գործեք դրան համապատասխան:

Քանի՜ անգամ է ասվել... Եվ եթե վեց տարի առաջվա 13-14 տարեկան երեխաները դպրոցում լսած լինեին Կարմայի Օրենքի մասին, որքան ավելի հեշտ կլինեին նրանց ներկայիս ագրեսիվության սանձահարումն ու կյանքից դժգոհությունը փարատելը: Յուրաքանչյուր գործողություն կամ անգործություն համապատասխան կարմա է ստեղծում: Եվ կարմա միայն նրա՛նք չեն ստեղծում, ովքեր թելադրություններ են կարդում. դա համընդանուր Օրենք է:

Երկրի ղեկավար այրերն առաջի՛նք պետք է նստեն դասաստեղանի առաջ և ուսումնասիրեն համայն տիեզերքի հիմնական Օրենքը:

Ապագան մեզ հույս է ներշնչում, և մենք կանխատեսում ենք, որ կգա այն ժամանակը, երբ պետությունները, քաղաքներն ու տարածաշրջանները կգլխավորեն այնպիսի լուսավորյալ այրեր, որոնք ձեռնադրումների գոնե մի քանի աստիճան են անցել: Այդժամ կմտաբերվեն հին, բարի խոսքերը՝ պատիվ, արժանապատվություն, առաքինություն, մշակույթ, հավատ: Եվ կհասնի այն

Ժամանակը, երբ նոր ռասան կկարողանա մարմնավորվել՝ իր հետ բերելով Ոսկեդարյան գիտակցություն:

Իսկ այժմ մարմնավորման մեջ են գտնվում չորրորդ և հինգերորդ ռասաների վերջապահները, որոնք միլիոնավոր տարիների ընթացքում անընդհատ ձախողում են էվոլյուցիան շարունակելու իրենց իրավունքի քննությունը: Իհարկե, նրանց ժամանակը մոտենում է իր ավարտին: Կարևորն այն է, որ այն լուսավոր հոգիները, որոնք ներկայումս մարմնավորվել են՝ իրենց մեջ կրելով ապագա ռասայի սերմերը, նրանց հետ միասին չհայտնվեն էվոլյուցիայի աղբանոցում:

Ուղերձս կրկին տխուր ստացվեց: Սակայն հույս դեռևս կա... Բավական է միայն ձեր վրայից թողափեք «տոնական կյանքի» պատրանքը և ձեռնամուխ լինեք իրական գործողությունների՝ հանուն Երկիր մոլորակի կենսահոսքերի բարօրության:

ԵՄ ԵՄ Էլ Մորիսան

Ուղերձների տասնչորսերորդ շրջան (հունիս, 2011 թ.)

Սանատ Կումարա
14 հունիսի, 2011 թ.

Ձեր գիտակցությունը պահեք այնպիսի մակարդակով, որ այն անխոցելի լինի պատրանքի հրապուրանքների նկատմամբ

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան:

Այս օրով կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի խոսեմ կարևոր բաների շուրջ: Այն մասին, թե ինչն է ձեզ հետաքրքրում, և ինչն է, որ ժամանակի ներկա պահին մենք կամենում ենք հասցնել ձեր գիտակցությանը:

Այս նախաբանին կուզենայի հավելել նաև այն, որ ներկա պահին մեզ՝ Համբարձյալ Դասերիս համար ավելի կարևոր խնդիր չկա, քան մարմնավորման մեջ գտնվող մարդկության լավագույն ներկայացուցիչներին բազմադարյա քնից արթնացնելն է: Ես անձնական պատասխանատվություն եմ կրում ձեզնից շատերի համար: Քանզի մեր այն սերտ կապերը, որոնք հեռավոր անցյալին են պատկանում, ինձ պարտավորեցնում են ձեր հոգիներին ցուցաբերել հնարավոր ամբողջ օգնությունը: Եվ առաջին հերթին դա այն օգնությունն է, որը նպատակաուղղված է ձեր հոգիների արթնացմանը:

Երբ ձեր հոգին արթնանում է Բարձրագույն Իրականության մեջ, դուք նմանվում եք մարդու, որ նոր է քնից զարթնել և պատրաստ է տրվելու Նոր Օրվա հոգսերին: Ձեր գիտակցությունը սկսում է ընկալել ճշմարտություններ, որոնք դեռևս երեկ հասու չէին իրեն: Քանզի շղարշը բարակում է կարծես կախարդական փայտիկի մի շարժումով:

Հիմա էլ նույնն է կատարվում: Մենք որսում ենք տիեզերական այն պահը, երբ կարող ենք զգուշորեն, թեթևաբար, հազիվ նկատելի հպումներով քնից հանել ձեր հոգիներին:

Անընդմեջ ու անխոնջ մենք արթնություն բերող մեր էներգիաներն առաքում ենք դեպի տարածություն: Այժմ էլ ահա ես կենտրոնացնում եմ իմ էներգիաները նրանց համար, ովքեր պատրաստ են արթնացման:

Ձեր ֆիզիկական աշխարհում ձեզ շրջապատող իրականության ողջ բազմազանությունը ձեզնից պահանջում է ուշադրության անընդհատ կենտրոնացում: Իմ էներգիաների դեպքում բանն

այլ է: Դրանք ստիպում են ձեզ, որ բևեռեք ձեր ուշադրությունը մի աշխարհի վրա, որը մատչելի չէ ձեր ֆիզիկական զգայարաններին. դուք միայն կռահում եք այդ աշխարհի գոյությունը: Եվ գիտեք, որ վաղ թե ուշ այդ աշխարհը կդառնա ձեզ նույնքան ծանոթ, մոտ ու հարազատ, ինչպիսին հիմա ֆիզիկական աշխարհն է:

Սակայն մի՛ շտապեք, որ հնարավորինս շուտ հայտնվեք այդ աշխարհում: Քանզի, որպեսզի զոյատևեք այլ գիտակցության մակարդակով, հարկ կլինի նախ շատ բաներ սովորել: Ուստի անարդյունավետ մի՛ վատնեք ձեր մարմնավորման ժամանակը: Ձեռք բերեք այնպիսի որակներ ու հմտություններ, որոնք ձեզ պետք կգան մեր աշխարհում, Նոր աշխարհում, ուր անխուսափելիորեն պետք է անցնեք:

Ձեր մարմինները նախապատրաստեք ավելի նուրբ իրականության ընկալմանը: Եվ մշտապես հիշեք, որ հենց որ սկսեք մղվել դեպի ավելի բարձր աշխարհ, ձեր ֆիզիկական իրականությունն ամեն կերպ կփորձի հետ պահել ձեզ: Այդպիսին է մատերիայի օրենքը: Այդպիսին է այս տիեզերքի օրենքը: Ողջ այն հինն ու իր դարն ապրածը, որը պետք է իր տեղը գիշի նորին, դիմադրություն է ցուցաբերում: Եվ մատերիայի այդ դիմադրությունը գնալով ուժեղանում է, հենց որ թևակոխում են Նոր Ժամանակները: Դուք դա զգում եք ձեզ վրա, ձեր շրջապատի վրա: Երբեմն թվում է, թե իրավիճակը հասել է անհերթելիության աստիճանի, և բոլորի համար պարզ է դարձել, որ այլևս այդպես չի կարող շարունակվել: Էվոյուցիոն զարգացման ուղու վրա չի կարող փակուղի լինել: Անպայման պետք է ելք գտնվի...

Սիրելիներս, բավական է, որ մի փոքր փոխեք ձեր տեսանկյունը, որպեսզի բոլոր բացասական դրսևորումների հետևում, որոնցով լեվի-լեցուն է ձեր աշխարհը, նկատեք Նոր Աշխարհի, նոր գիտակցության ու նոր հարաբերությունների ծիլերը:

Այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեր հետագա զարգացմանը, արդեն գոյություն ունի ձեր աշխարհում: Սակայն պատրանքը, համաձայն անկասելի օրենքի, նորանոր պատնեշներ է նետում ձեր Ուղու վրա: Եվ հիմա հիմնական արգելապատնեշը տեղեկատվական այն բազմազանությունն է, որով ողողված են ողջ համացանցն ու զանգվածային տեղեկատվական միջոցները: Եվ տեղեկատվական այդ ծովում պահանջվում է գտնել ճշմարտության հատիկները, այն հատիկները, որոնք ի մի գալով պետք է կազմեն ձեր աշխարհընկալման համակարգը:

Ես շատ լավ եմ հասկանում ձեզ ու ձեր դժվարությունները: Սակայն կա հայտանիշ, որից օգտվելով՝ կարող եք գտնել տեղեկատվական այն հատիկները, որոնք ներկա փուլում անհրաժեշտ են ձեզ: Որպեզի գտնեք դրանք, բոլորովին կարիք չկա, որ փորփրեք այն ամբողջ աղբը, որը սփռված է գրախանութների դարակներում, Երկրի ռադիո- և հեռուստատարածքներում, համացանցում:

Դուք պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեք ձեր ներքին աշխարհին և ձեր ներքին զգացողություններին: Եթե ներքուստ համահունչ եք Աստծո ճշմարտության հետ, ապա ձեր հոգում հնչող կամերտոնային ձայնը տարածությունից դեպի ձեզ կքաշի անհրաժեշտ տեղեկատվությունը: Իսկ այն տեղեկատվական փոխնակները, որոնցով լեցուն է ձեր աշխարհը, չեն գրավի ձեր ուշադրությունը և չեն շեղի ձեզ Ուղուց:

Չկա, սիրելիներս, ավելի կարևոր խնդիր, քան տեղեկատվական աղբից ձերբազատվելն է:

Անգորությունից դրդված՝ մայան նորանոր հրապուրանքներ է ստեղծում ձեզ համար: Եվ հարկ է, որ կարողանաք լավ զանազանել պատրանքի այդ հրապուրանքներն Աստծո Աշխարհի իրական դրսևորումներից:

Չանագանման բանալին այն կլինի, որ համահունչ լինեք մեզ՝ Համբարձյալ Դասերիս և Աստծո Աշխարհի հետ:

Ուստի ձեր գիտակցությունը միշտ պահեք այնպիսի մակարդակով, որ այն անխոցելի լինի պատրանքի ցանկացած հրապուրանքի և Մարայի գորքի նետերի նկատմամբ:

Ձեր գիտակցության հարցը շատ կարևոր է, ուստի և մենք այսքան շատ ուշադրություն ենք հատկացնում ձեր ուսուցմանը:

Աստվածային հնարավորության ճոպանը, որը ձեզ է մեկնվում այս ուղերձների տեսքով, ի վիճակի է ձեզ դուրս հանելու պատրանքի ծովից: Սակայն դուք էլ պետք է սեփական ջանքեր գործադրեք, որ գոնե կարողանաք բռնել ճոպանի ծայրը և այն ամուր պահել ձեր ձեռքերում:

Իսկ եթե շեղվեք և հրապուրվեք հերթական պատրանքով, ապա երկար ժամանակով վտանգի կենթարկեք Ուղով ձեր առաջընթացը կամ էլ բոլորովին կկորչեք պատրանքային աշխարհում: Ուստի պահպանեք ձեր նկրտումը և ձեր գիտակցությունը մշտապես կենտրոնացրեք լավագույն, աստվածային կերպերի վրա:

Ուզում եմ նաև զգուշացնել, որ զանգվածային լրատվության միջոցները ձեզ հատկապես այնպիսի նյութեր են մատուցում, որ ձեզ գրկեն երկար ժամանակով մի առարկայի վրա ուշադրություն կենտրոնացնելու հնարավորությունից: Իսկ առանց կենտրոնանալու հմտության՝

ներկա պատմական պահին ձեզ համար անհնարին կլինի պատրանքի դիմադրության հաղթահարումը:

Ես այսօր եկա, որպեսզի խրատեմ ձեր հոգիներին, որոնք կապված են ինձ հետ կարմայական կապով: Եվ ես անձնական պատասխանատվություն եմ կրում, որ պատրանքի գերությունից ձեզ դուրս հանեմ դեպի տիեզերական լայնարձակություն:

ԵՍ ԵՄ Սանատ Կունարան: ՕՄ

Տեր Սուրիա
15 հունիսի, 2011 թ.

Ուղին ձեր ներսում է

ԵՍ ԵՄ Սուրիան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Թելադրությունների ձմեռային շրջանից հետո մեր հանդիպմանը երկար սպասելն այսօր ես կաշխատեմ փոխհատուցել իմ այս ուղերձը տալով, որը լի է Երկրի մարդկության նկատմամբ Միրով ու հոգածությամբ:

Ինչպես գիտեք, ամառային արևադարձի այս շրջանում ձեզնից յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում նամակով դիմելու Կարմայական Վարչությանը: Եվ այսօր հենց այնպիսի օր է, երբ բոլորդ դա կարող եք անել:

Ձեզ, հավանաբար, թվում է, թե դա ինչ-որ աննշան մի բան է և չի կարող ձեզ համար օգտակար լինել: Սակայն, խնդրում եմ ձեզ, մի՛ անտեսեք Աստծո կողմից ձեզ տրված այդ հնարավորությունը:

Այսօր ամեն անգամվա պես ես եկել եմ, որպեսզի օգտվեմ ևս մեկ տիեզերական հնարավորությունից և ուղերձ հղեմ ձեզ: Այս ուղերձով ես ուզում եմ ձեզ որոշակի գիտելիք տալ և ձեզ հասու դարձնել ևս մեկ տիեզերական Օրենքի, որը գործում է համայն տիեզերքում: Մենք արդեն խոսել ենք կարմայի կամ հատուցման Օրենքի մասին: Եվ այն, հիբավի, գլխավոր և անկյունաքարային տեղ է զբաղեցնում համայն տիեզերքում: Բայց կա ևս մեկ կարևոր Օրենք: Դա Բարեգթության և Կարեկցանքի Օրենքն է, որը նույնպես գործում է համայն տիեզերքում: Այդ Օրենքը թույլ է տալիս, որ Մեծ տիեզերական Էակներն օգնություն ցուցաբերեն այն կենսահոսքերին, որոնք խճճվել են պատրանքի ցանցում և այլևս ո'չ իրենց գոյության իմաստն են տեսնում, ո'չ էլ պատրանքային աշխարհում իրենց դեգերումների նպատակը: Այդ Օրենքն ինչպես մյուսներին, այնպես էլ ինձ թույլ է տալիս, որ տարեկան երկու անգամ այցի գամ ձեզ և տամ իմ ուղերձները: Ուստի այնժամ, երբ ձեր սրտերը բաց են իմ առջև, և ձեր գիտակցությունը պատրաստ է Ուսմունք ընկալելու, ես կարող եմ գալ և տալ իմ ուղերձը: Իսկ ձեր կողմից Ուսմունքն ընկալելու հաջողության աստիճանն այդ դեպքում ուղիղ համեմատական է լինում ձեր անկեղծությանն ու ճշմարտությունը ճանաչելու ձեր ձգտմանը:

Այսպիսով, համաձայն Բարեգթության ու Կարեկցանքի Օրենքի, ձեզ կարող է օգնություն ցուցաբերվել, և այն մշտապես ցուցաբերվում է: Միակ խոչընդոտը, որը խանգարում է ձեզ, որ ընդունեք մեր օգնությունը, ձեր գիտակցությունն է: Եվ եթե ձեր էության մեջ բավականաչափ հավատ, սեր և անկեղծություն չկա, ապա մեր ամբողջ բարի մտադրությունն ու հոգածությունը կբախվեն ձեր անհասկացողության սառույցին և մյուս խոչընդոտներին, որոնք առկա են ձեր գիտակցության մեջ:

Ես շատ լավ հասկանում եմ, որ ժամանակակից մարդկության կենսաոճն ու մոլորակի վրա եղած գոյատևման պայմաններն այնպիսին են, որ շատ փոքր է հավանականությունն այն բանի, որ մարմնավորված մարդկանցից որևէ մեկն այնքան վեր կհանի իր գիտակցությունը, որ կկարողանա հաղթահարել պատրանքային ուժերի ձգողականությունը և իր գիտակցությունը հասցնել Աստծո Իրականության ճանաչման մակարդակին: Սակայն ես պնդում եմ, որ այնուամենայնիվ կա՝ հավանականություն թեկուզ մեկ կյանքի ընթացքում գիտակցությունը հասցնելու այնպիսի մակարդակի, որից հետո ֆիզիկական ոլորտում հետագա մարմնավորումների կարիք այլևս չգազգվի:

Եվ այսօր ես ձեզ հանձնարարական կտամ, թե ինչպես հասնեք դրան: Հարկավոր է, որ ձեր ամբողջ կյանքը՝ Երկրի վրա գտնվելու ձեր ամեն մի վայրկյանն, օգտագործեք միայն այն բանի համար, որ կենտրոնանաք Բարձրագույնի վրա: Ամեն օր դուք ձեր բոլոր մտքերն ու զգացմունքները պետք է նվիրաբերեք Աստծո գործերին: Դուք պետք է մշտապես հոգ տանեք, որ ոչ մի հետին միտք ու ցանկություն մի վայրկյան անգամ չտիրի ձեր գիտակցությանը: Պետք է ամբողջ կառուցեք ձեր շուրջը, որպեսզի անմատչելի դառնաք այն ամբողջ ստորակարգի ու անաստվածայինի նկատմամբ, որը գոյություն ունի ձեր աշխարհում, ձեր մոլորակի վրա:

Սա շատ դժվարին խնդիր է, բայց հաղթահարելի է: Կա հավանականություն, որ, լարելով ձեր ողջ կամքի ուժը, ձգտումն ու կենտրոնացումը, կկարողանաք ճեղքել ֆիզիկական և աստեղային ցածրագույն շերտերը, նույնիսկ մենտալային շերտերը, և հայտնվել Լուսի եթերային օկտավաներում:

Խիզախե՛ք... Ահա ասում եմ ձեզ, որ միայն ձեզնից է կախված՝ կկարողանա՞ք արդյոք մեկ մարմնավորման ընթացքում հասնել Լուսի եթերային օկտավաներին: Հենց դրա համար ենք մենք այցելում ձեզ. գալիս ենք, որ օժանդակենք ձեր ձգտմանը և նորից ու նորից ձեզ ցույց տանք Ուղին, որով անցյալում ընթացել են մարդկության լավագույն ներկայացուցիչները: Արդեն կա այդ փորձված ճանապարհը, և դրանով դուք կարող եք առաջ շարժվել հենց հիմա...

Եվ որքան էլ ձեզ տարօրինակ թվա, ձեզ պետք չէ որևէ տեղ գնալ, մղվել դեպի ձեզնից դուրս գտնվող որևէ բանի կողմը: Այդ Ուղին ձեր ներսում է: Եվ այնժամ, երբ ձգտում եք ցուցաբերում, հրաժարվում ձեր ներսի ոչ աստվածային հատկանիշներից և ձեռք բերում աստվածային հատկանիշներ, առաջ եք ընթանում այդ Ուղով, որը ձեզ հետ է բերում Աստծո մոտ՝ մի Աշխարհ, որից դուրս են եկել ձեր հոգիները և այնտեղ էլ պետք է վերադառնան:

Այդ աշխարհի դուռը գտնվում է ձեր էության խորքում: Ուստի աշխարհը փրկելու կարիք չկա, կարիք չկա ման գալու աշխարհեաշխարհ՝ մարդկության փրկության համադարմանը գտնելու ակնկալությամբ: Վերջին հաշվով դուք կարող եք փրկել միայն ձեզ՝ դառնալով Ուղի, որով կարող է ընթանալ մնացած մարդկությունը:

Յուրաքանչյուր հարյուրամյակում բավական է, որ լինի մեկը, որը հաղթահարի ինքն իրեն և դեպի Լուսյը համբարձվելու ծիսակարգով հասնի Լուսի եթերային օկտավաներին, որպեսզի համայն մարդկությունը բավարար էներգետիկական խթան ստանա իր հետագա առաջընթացի համար:

Ուշադրություն դարձրեք այն հանգամանքի վրա, որ դուք գտնում եք Ուղին, ընթանում եք դրանով, և գալիս է մի պահ, երբ հենց ինքներդ եք դառնում այդ Ուղին, որով կարող են ձեզնից հետո ընթանալ հազարավոր ու միլիոնավոր կենդանի էակներ:

Բայց սկզբում՝ ամենասկզբնական փուլում, պետք է դրսևորեք աշակերտի կարգապահություն, մղվածություն, կայունություն և նվիրվածություն:

Եվ միայն դրանից հետո է, որ ձեզ օգնություն և օժանդակություն կցուցաբերվի: Սկզբում դուք դրսևորում եք անհրաժեշտ հատկանիշներ, հետո նոր միայն ստանում օգնություն և օժանդակություն:

Եթե պատրաստ եք և ցուցաբերում եք ձեր պատրաստ լինելը նշանակալի ժամանակահատվածի՝ ամենաքիչը յոթ տարվա ընթացքում, ապա ձեզ ցույց է տրվում Ուղին:

Միրելինե՛րս, պահանջվում է ընդամենը յոթ տարվա մղվածություն, նվիրվածություն ու հնազանդություն: Հո դա ձեզ շատ չի՞ թվում... Բայց ի՞նչ է յոթ տարին այն հազարամյա մարմնավորումների հետ համեմատած, երբ ձեր հոգին խաբխափում էր խավարի մեջ՝ առանց փրկության որևէ հույսի: Ահա դուք հաղորդակցվեցիք մեր թրթռանքին, հարազատություն զգացիք ձեր ներքին էության հետ, և ի՞նչ. հիմա պետք է լքեք մեզ, որպեսզի վազեք ձեր աշխարհի հերթական պատրանքի հետևից...

Ծա՛տ շատերն են հեռանում մեր պատգամած Ուղուց և փնտրում ուրիշ, ավելի դյուրին ճանապարհներ: Երբ ձեր գլխում սկզբում նման միտք է ծագում, այն լինում է հպանցիկ, բայց ձեր ճամփորդության նպատակի վրա կենտրոնացումն արդեն խախտվում է: Հետո ցանկություն է առաջանում պարզապես փորձելու, «մի հատ նայելու», աչքի անցկացնելով կարդալու... Եվ ահա դուք ա՛յլ ուղղությամբ եք գնում, իսկ երբ փորձում եք վերադառնալ Ուղուն, արդեն չեք կարողանում այն գտնել: Եվ շատ ու շատ մարմնավորումներ եք ունենում միայն այն բանի համար, որպեսզի նորից գտնեք Ուղին: Ահա ցնծուն է ձեր հոգին. վերջապես գտել եք այն, ինչը փնտրում էիք շատ ու շատ մարմնավորումների ընթացքում: Բայց անցնում է ընդամենը մի քանի տարի, որոնք չնչին բան են Երկրի վրա մարմնավորվելու միլիոնավոր տարիների հետ համեմատած, և դուք արդեն հիասթափվում եք, կորցնում ոգևորությունը, մղումը և դուրս սահում փորձված Ուղու վրայից:

Մտածե՛ք հապա... ամեն հարյուրամյակում միայն մեկը կարող է նվաճել աստվածային գիտակցության գագաթը:

Եվ եթե նույնիսկ միայն մեկն է նվաճում գագաթը, մենք պատրաստ ենք լինում հսկայական քանակությամբ Աստծո անգին էներգիա ծախսել, որպեսզի ցույց տանք Ուղին և այդ մեկին պահենք Ուղու վրա:

Ուստի ես լիափույս եմ, որ նրանց միջից, ովքեր գտել են այս Ուսմունքը և կարդում են մեր ուղերձները, կգտնվի զոհն մեկը, որը կավարտի իր երկրային ուղին և մյուսներին ցույց կտա Ուղին: Ծիշտ այնպես, ինչպես ժամանակին Ուղին ցույց են տվել Բուդդան և Քրիստոսը:

Տեր Մայտրեյա
16 հունիսի, 2011 թ.

Ձեռնադրումների Ուղու Ուսմունքի եզրաշերտերը

ԵՄ ԵՄ Մայտրեյան:

Կրկին եկել եմ, որպեսզի գրույց վարեմ, որն օգտակար կլինի ձեր հոգիների զարգացման համար: Գիտե՞ք արդյոք, որ մեր ամեն գալստյանը մեծապես սպասում են մարմնավորման մեջ գտնվող շատ հոգիներ: Թանկագին Խոսքի փոխանցմանն են սպասում նրանք: Եվ արտաքին աշխարհի ոչ մի զվարճանք չի կարող խաթարել այն ներքին անդորրը, որը հաստատվում է մեր հաղորդակցության ժամանակ:

Ինչպես կռահում եք, կրկին խոսք կգնա Ձեռնադրումների Ուղու, այն Ուղու մասին, որով ձեզ խրատում են Համբարձյալ Վեհապետները: Դուք կարող եք փնտրել և գտնել այլ ուղիներ, բայց մենք երաշխավորում ենք միայն այն Ուղին, որով միլիոնավոր տարիների ընթացքում առաջնորդում ենք մարդկությանը՝ այն պահից սկսած, երբ նա բանականություն ձեռք բերեց: Ուստի ես այժմ կտամ իմ այն խրատները, որոնց ժամանակն արդեն հասել է: Եվ մեր հաղորդակցությունը, ինչպես կարծում եմ, օգտակար կլինի ձեր հոգևոր աճի և Ուղով ձեր առաջընթացի համար:

Եվ այսպես, մենք շատ անգամ ենք գրուցել Ձեռնադրումների Ուղու մասին, և ամեն անգամվա հետ բացել ենք մեր Ուսմունքի այս կամ այն եզրաշերտը: Այնուհանդերձ շատերիդ համար շարունակում է հանելուկ մնալ Ձեռնադրումների Ուղու մեր Ուսմունքը: Դուք կապ չեք տեսնում մեր կողմից տրվող շատ թելադրությունների միջև: Երբեմն տարակուսանքով դիտարկում եք այս կամ այն թելադրությունը և հակասություններ գտնում առանձին թելադրությունների դրույթների միջև:

Պաշտելիներս, առաջին անգամն է, որ մենք նախաձեռնել ենք այսպիսի մեծ լսարանի մեր գաղտնի, սրբազան Ուսմունքը հրամցնելու փորձ: Եվ մարդիկ, որոնք կարդում են մեր ուղերձները, գտնվում են զարգացման տարբեր աստիճանների վրա: Այդ պատճառով մեր ուղերձներում տեղեկատվություն կա և՛ նրանց համար, ովքեր դեռ նոր են մերձենում մեր Ուսմունքին, և՛ նրանց համար, ովքեր Ուղով առաջին քայլերն են անում, և՛ նրանց համար, ովքեր արդեն վստահորեն ընթանում են Ձեռնադրումների Ուղով: Ամեն մեկին տրվում է իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը: Եվ երբ երկրորդ կամ երրորդ անգամ եք կարդում մեր թելադրությունները, նոր իմաստ եք գտնում, որը չէիք նկատել առաջին ընթերցման ժամանակ կամ վրայից թեղ-անցել էիք: Բանն այն է, որ ձեր գիտակցությունը փոխվում է, և դուք ունակ եք դառնում ճշմարտությունն ընկալելու մի այլ տեսանկյունից:

Ըստ հինավուրց ճշմարտության՝ նա, ով իր որևէ կյանքում առաջին անգամ հաղորդակցվում է Ուսմունքին, որպես կանոն, իր հաջորդ յոթ կյանքերի ընթացքում պետք է շարունակի Ուղով առաջ շարժվել: Եվ նա, ով այս կյանքում առաջին անգամ շփվել է մեր Ուսմունքի հետ (իսկ մեր ուղերձներն ընթերցողների մեջ այդպիսիները մեծամասնություն են կազմում), հաջորդ վեց կամ յոթ կյանքերի ընթացքում կշարունակեն Ուղով իրենց առաջընթացը: Յուրաքանչյուր կյանքում ձեզ հնարավորություն է տրվում ձերբազատվելու մի քանի հատկանիշներից, որոնք Ուղու վրա խոչընդոտում են ձեզ, և փոխարենը ձեռք բերելու մի քանի աստվածային հատկանիշներ, որոնց կարիքն ունեք:

Այսպիսով, մեր ուղերձներն ընթերցողների մեծ մասի առջև բացվում է Ուղին, որը նախատեսված է յոթ մարմնավորման համար: Եվ միայն այնժամ, երբ հասնում եք Ուղու եզրափակիչ փուլին, հենց ինքներդ եք դառնում Ուղի: Ունակ եք լինում ցուցաբերելու Արարչի հետ ձեր Միասնությունը և ամբողջովին ներկայանալու որպես ձեր իսկ Բարձրագույն մասը:

Այսպիսին է Ուսմունքը: Եվ որքան էլ ձեզ երկարատև թվա Ուղով առաջ գնալու այս գործընթացը, համեմատած այն բազմաթիվ մարմնավորումների հետ, որոնք դուք արդեն ունեցել եք Երկրի վրա՝ այն ընդամենը մի կարճ ակնթարթ է: Եվ եթե մեր աշակերտները երբևէ չշեղվեն Ուղուց, ապա ողջ մարդկությունն ընդհանրական ձեռնադրում կանցնեն և կհայտնվեն իր հաջորդ էվոլյուցիոն աստիճանի վրա ընդամենը հաջորդ մի քանի հազար տարվա ընթացքում: Սակայն, ինչպես կարող եք նկատել, դա տեղի չի ունենում:

Ձեզ համար դա տեղի չի ունենում, եթե նայեք ձեր ոչ համբարձյալ տեսանկյունից: Իսկ մեր համբարձյալ տեսադաշտից մենք նկատում ենք, թե ինչպես են առանձին խիզախներ արշավում

դեպի աստվածային գիտակցության Գագաթը: Եվ երբ որևէ մեկը նվաճում է Գագաթը, Երկնոյորտները ծափահարում են նրան:

Ուստի ձեզնից նրանք, ովքեր, առաջին անգամ բախվելով մեր Ուսմունքին, կարդում են մեր ուղերձները, կարող են վիատվել ժամկետների երկարատևության մտքից: Սակայն մեր ուղերձներն ընթերցողների մեջ կան մի քանի տասնյակ մարդիկ, որոնք արդեն մեկից ավելի կյանքեր է, ինչ ընթանում են Ձեռնադրումների Ուղով: Եվ մեզ համար այդ մարդիկ առանձնահատուկ արժեք ունեն: Ամեն մի նման անհատ գտնվում է մեր անխոնջ հսկողության ու խնամքի տակ: Նրանց համար մենք պատրաստ ենք տալու ավելի շատ գիտելիքներ ու տեղեկություններ, քան կան այս թելադրություններում: Իրենց գիտակցության մակարդակով նրանք ունակ են կարդալու տողատակերը, տեսնելու և զգալու անհամեմատ ավելի շատ բան, քան գրված է սույն ուղերձներում:

Թեև ես բոլորի համար նույն բառերով եմ խոսում, այնուհանդերձ ամենքը կկարդան հենց այն, ինչը ժամանակի տվյալ պահին իրենց անհրաժեշտ է:

Եվ ես ինքս կարող եմ գալ, որպեսզի ուսուցանեմ ու խրատեմ նրան, ում համար դա իսկապես անհրաժեշտ է: Իմ յուրաքանչյուր աշակերտ անընդհատ գտնվում է իմ անխոնջ հայացքի ներքո:

Աշակերտներիս մասին հոգալը մարդկությանը սպասավորելուս գլխավոր մասն է կազմում: Քանզի աշակերտներիս միջոցով է, որ ինքս կարող եմ գալ մարդկանց աշխարհը: Եվ ժամանակի ներկա պահի համար դա շատ կարևոր է, որովհետև ֆիզիկական ոլորտի թրթռանքները ոչ մի բարձր Վեհապետի թույլ չեն տալիս, որ նա իր կառուցալ մարմնի ողջ կարողությամբ մարմին առնի մարդկանց մեջ: Իսկ մարդկությունն առաջնորդության կարիք ունի: Այդ պատճառով, ձեզնից ամեն ոք կարող է օգնություն ցուցաբերել Երկրի մարդկությանը, եթե մաքրի իր տաճարները և դրանով իսկ հնարավորություն տա ինձ կամ մեկ ուրիշ Վեհապետի գոնե կարճ ժամանակով ներկա գտնվելու Երկրի վրա:

Մենք օգտվում ենք ձեր աչքերից, ձեր ձեռքերից ու ոտքերից, որպեսզի հոգա՞ծությամբ ու նրբորեն առաջնորդենք և ճշգրտենք այն ուղղությունը, որով ընթանում է մարդկությունը: Ուստի չկան անկարևոր մարդիկ, ամեն մարդ կարևոր է, եթե կատարում է հենց այն դերը, որն իր այս մարմնավորման հենց այս պահին ինքը պետք է կատարի: Եվ եթե նույնիսկ ձեզ թվում է, թե ձեր արածը կարևոր չէ, ապա մի՛ շտապեք եզրահանգումներ անել: Քանզի մեր համբարձյալ վիճակի գիտակցության դիրքերից երևում է, որ ձեր փոքր գործողությունները դուրս չեն այն պլանից, որը մենք իրականացնում ենք մոլորակի վրա:

Մի՛ կարծեք, թե դուք ինչ-որ շատ կարևոր աշխատանք պետք է կատարեք աշխարհի մյուս ծայրին: Առավել հաճախ դուք հենց այնտեղ եք, որտեղ կարող եք կատարել ձեր ամենապետքական աշխատանքը: Եվ պարտադիր չէ, որ այն կրի մարդկային հոգիներ փրկելու հերոսական բնույթ: Այն կարող է լինել ձեր զավակի դաստիարակությունը, կարիքավոր մերձավորին օգնություն ցուցաբերելը: Յուրաքանչյուր ոք, ով հայտնվել է ձեր շրջապատում և օգնության կարիք ունի, հայտնվել է կարմայական պատճառներով: Եվ, նրան օգնելով, դուք կարող եք մաշեցնել կարմայի այն կուտակը, որը խոչընդոտում է Ուղով ձեր առաջընթացը:

Կյանքից կյանք ձեզ հնարավորություն է տրվում բեռնաթափելու ձեր կարմայի այն բաժնեմասերը, որոնք այլ հոգիների հետ անխոհեմաբար կուտակել եք ձեր անցած մարմնավորումների ընթացքում: Ուստի ուշադիր վերաբերվեք ձեր ներկայիս կյանքի հանգամանքներին: Քանզի եթե ձեր շրջապատում տեսնում եք մեկին, ով խանգարում է ձեզ, ապա դա հենց այն անհատն է, որի հետ ունեցած ձեր կարման պետք է բեռնաթափեք առաջնահերթ կերպով: Մի՛ վիատվեք, եթե ձեր ջանքերը դրական արդյունքի չհանգեցնեն: Ուղղակի շարունակե՛ք ձեր ջանքերը, որպեսզի առավելագույնս ներդաշնակեցնեք ձեր փոխհարաբերությունները: Տիեզերական արդարադատությունը կգնահատի ձեր իսկ անիրական մասը հաղթահարելու և նախորդ մարմնավորումների կարման բեռնաթափելու ձեր բոլոր ջանքերը:

Այսօրվա իմ խրատներն այսքանն էին:

ԵՄ ԵՄ Մայրոնեյան

Վեհապետ Կուրթումի
17 հունիսի, 2011 թ.

**Ինչպես ձեր, այնպես էլ ամբողջ մոլորակի ապագան դուք կերտում եք
ձեր երեխայի սաղմնավորման պահին**

ԵՍ ԵՄ Կուրթումին, ձեզ այցի եմ եկել, որպեսզի ձեր հոգիների համար օգտակար զրույց վարեմ:

Այսօր մենք կխոսենք այն մասին, ինչը մոտ ու հասկանալի է յուրաքանչյուրին: Այն է՝ կգրուցենք ձեր ապագայի, ձեր երեխաների մասին: Այն սերնդի մասին, որը կփոխարինի ձեզ:

Մարդկային չափանիշներով այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, և նոր սերունդը կփոխարինի ներկայումս ապրողներին: Եվ ամեն նոր սերունդ պետք է ավելի լավը լինի նախորդից: Սակայն ոչ միշտ է այդպես լինում: Ինչու՞: Երևի ձեզնից շատերն են այս հարցն իրենց տվել՝ ինչու՞ մեր երեխաները նման չեն մեզ, ինչու՞ են ըմբոստ ու անհնազանդ և կյանքում առաջնորդվում են բոլորովին այլ սկզբունքներով, քան մենք՝ մեր ժամանակներում: Ո՞րն է դրա պատճառը:

Իմ մոտեցումն այդ հարցին հավանաբար անսպասելի կլինի ձեզ համար: Կխնդրեմ, որ մտաբերեք այն ժամանակները, որոնք նախորդում են ձեր երեխայի ծննդին: Հարկ չկա, որ ձեր հիշողությունները կիսեք որևէ մեկի հետ, պարզապես հիշեք, թե ինչպես եղավ, որ դուք երեխա ունեցաք:

Հավանաբար կմտաբերեք, որ պատահաբար իմացաք շուտով երեխա ունենալու մասին: Գուցե նույնիսկ տխրել ու գլուխներդ կորցրել եք այդ փաստից:

Հնարավոր է, որ դուք չէիք պլանավորել երեխա ունենալ, իսկ նա, այնուամենայնիվ, հայտնվել է:

Ինչի՞ մասին էիք մտածում, երբ սիրային խաղերով էիք տարվում ձեր կողակցի հետ: Կարծում եմ, որ ձեզնից շատերը չեն մտածել նոր մարդ ծնելու մասին, որը պետք է աշխարհի գա և դառնա ձեր աշխարհի նոր արարողը:

Ուր ուղղված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Մտածում էիք սեռական հաճույքներ ստանալ ձեր կողակցի հետ. ահա և Աստծո թանկարժեք էներգիան ուղղորդել եք հաճույքներ ստանալու կողմը:

Բայց Աստծո Կամքը ձեզ հետ կատակ է արել, և արդյունքում երեխա է ծնվել: Իսկ ի՞նչ է ստացել երեխան ձեզնից. Աստծո էներգիայի ո՞ր մասը:

Ինքներդ եք տնօրինել Աստծո էներգիան և այն ուղղորդել եք հաճույքներ ստանալու կողմը: Իսկ այդ թանկարժեք էներգիայի ո՞ր մասն է հասել այն նոր էակին, որն այդքան ձգտում էր հայտնվել ձեր աշխարհում:

Աստծո էներգիայով ձեր երեխային դուք “ֆինանսավորել եք” մնացորդային սկզբունքով: Այսինքն՝ Աստծո էներգիայի այն ամբողջ լիցքը, որը պետք է ուղեկցեր ձեր երեխային իր ողջ կյանքի ընթացքում, մնացել է ձեր շուրջը եղած առարկաների վրա, երբ դուք ձգտում էիք ստանալ ձեր հաճույքը:

Կարծում եմ՝ հիշեցիք այդ պահը...

Ձեզնից որոշները կարող են ասել, որ սպասում էին երեխային և աղոթում էին նրա ծննդյան համար: Եվ իրոք, երեխան երկար սպասված էր և լավ ընդունվեց ձեր կողմից: Բայց հիշե՛ք ձեր այն երիտասարդ տարիները, որոնք նախորդել են ձեր երեխայի ծննդյանը: Դուք ձգտում էիք սեռական հաճույքներ ստանալ, փորձարարություն էիք անում սեռական էներգիայով: Ծա՛տ բաներ եք արել, որոնց մասին ամաչում եք նույնիսկ հիշել: Եվ ամեն անգամ հաճույք ստանալով՝ դուք վատնել եք ձեր այն սեռական կարողությունը, որն անհրաժեշտ էր ձեր մանկան ծննդյան համար, որպեսզի նա լինի ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես առողջ: Իսկ երբ հետ եք քաշվել և սկսել անհամբերությամբ սպասել ձեր առաջնեկի սաղմնավորմանը, ապա, ի՞նչ եք կարծում, արդյոք Աստծո շա՛տ էներգիա է բաժին հասել նրան: Արդյոք չե՞ք “ֆինանսավորել” նրան մնացորդային սկզբունքով...

Եվ եթե ձեր սեռական կրքերը բուռն ու անվայել են եղել, ապա, ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ հոգի եք ներքաշել ձեր երեխայի մեջ: Ամենայն ինչ իրար է ձգում ըստ թրթռանքի: Չէ՞ որ այն հոգին, որը պետք է ձեր առաջնեկը դառնար, դեպի ձեզ է ձգվել այն բանից հետո, երբ արդեն բավականաչափ կարմա էիք կուտակել, ձեր ցանկություններին հագուրդ տալու ճանապարհով:

Մտորումներից հետո արդյոք չհանգեցի՞ք այն եզրակացությանը, որ հենց ինքներդ եք մեղավոր Երկիր մոլորակը բնակեցնող հաջորդ սերնդի առջև ծառացած բոլոր պրոբլեմների համար:

Չեք կարող ասել, թե անմասն եք այն բանից, որ ամեն նոր սերունդ ավելի ու ավելի անկենսունակ է դառնում, քան իր նախորդները: Ուստի, որպեսզի փոխվի մոլորակի այդ

իրավիճակը, մենք գալիս և տալիս ենք մեր Ուսմունքը: Դուք պետք է հստակ գիտակցեք ձեր գործողությունների և դրանց հետևանքների միջև եղած կապը:

Միայն այնժամ, երբ կկարողանաք վերահսկել ձեր ցանկությունները, մտքերն ու զգացմունքները, կկարողանաք նաև աստիճանաբար հաղթահարել անցյալի ձեր սխալ նախընտրանքների և արարքների կարմայի ազդեցությունը:

Սակայն ես պետք է ձեզ հետ պահեմ ևս մեկ սխալից: Ձեզնից շատերը հակված են անընդհատ իրենք իրենց մեղադրելու այն անհաճո արարքների համար, որոնք գործել են երիտասարդ տարիքում: Եվ այդ մեղքի զգացումը երբեմն ծնում է հոգեբանական խնդիրների մի ողջ համախումբ: Այա, փոխանակ համակ ուշադրությամբ հետևեք ձեր երեխային ու ընտանիքին և դրանով իսկ շտկեք անցյալի ձեր սխալները, դուք ընկնում եք ընկճախտի վիճակի մեջ և նույնիսկ սկսում եք սարսափել Աստծո դատաստանից:

Միրելիներս, Աստված չի ուզում ձեզ պատժել: Նա կամենում է, որ դուք գիտակցեք ձեր սխալները և այլևս չկրկնեք դրանք: Չկա մի մեղսագործ, որ ապագա չունենա: Եվ հաճախ մեկը, որ գիտակցել է իր սխալներն ու զղջացել դրանց համար, մարդկության համար ավելին կարող է անել, քան մի ուրիշը, որը, Աստծո պատժից վախենալով, ոչ մի անհաճո արարք թույլ չի տալիս իրեն:

Ձեր էներգիան ուղղորդեք դրականի՝ հունով... Կրկին ու կրկին մի՛ վերապրեք անցյալի ձեր մեղքերի ու սխալների հուշապատկերները: Դրանով դուք ավելի եք բարդացնում ձեր վիճակը՝ ձեր էներգիան ուղղորդելով նախկին սխալ հունով: Աստծո էներգիայի գետը, որը հոսում է ձեր միջով, պետք է նոր հուն գտնի իր համար և քիչ-տանի անցյալի ձեր գիտակցության սխալ վիճակների հետևանքները:

Դրականի և շրջապատի էականերին օգնելու ցանկության վրա մշտական կենտրոնացումն ունակ է վերափոխելու անցյալի սխալների էներգիան և ստեղծելու նոր հնարավորություն ձեր երեխաների ապագայի համար:

Անցյալի սխալների լիակատար գիտակցումն ու դրանք այլևս չկրկնելու վճռական ցանկությունը լիովին բավարար են, որ փոխեք կարմայական հետևանքները և լուսավոր ապագա կերտեք ձեր երեխաների համար:

Մի՛ մոռացեք այն մասին, որ կարմայով ինքներդ ձեզ կապում եք ձեր երեխաների հետ: Եվ մեծ է հավանականությունը, որ հաջորդ մարմնավորումներում դուք երեխաները կլինեք այն անհատների, որոնք հիմա ձեր երեխաներն են: Եվ, որպեսզի ապագայում ձեր կարման թեթև լինի, դուք այժմ իսկ պետք է հոգ տանեք ձեր երեխաների հոգիների համար:

Աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է, ուստի անհրաժեշտ է, որ շատ հոգաձու և գիտակից ձևով վերաբերվեք այն ամենին, ինչ անում եք:

Այսօրվա իմ գրույցի նպատակը ձեզ գիտելիք տալն էր այն մասին, թե որքան խոհեմ պետք է լինել մանկան ծնունդը պլանավորելու հարցում: Փաստորեն դուք ձեր և ձեր մոլորակի ապագան եք կերտում ձեր երեխայի սաղմնավորման պահին:

Մտածե՛ք այդ մասին հաջորդ անգամ, երբ բավարարելիս կլինեք ձեր սեռական ցանկությունը:

*ԵՍ ԵՄ Կույթումին՝
ձեր և բոլոր կենդանի էակների հոգիների նկատմամբ հոգածությամբ*

Վեհապետ Սեն Ժերմեն
18 հունիսի, 2011 թ.

Ոսկեդարն անխուսափելի է ձեզ համար

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը...

Այս օրով ես եկել եմ, տիկնայ՛ք և պարոնայ՛ք, որպեսզի մեկ անգամ ևս վկայեմ Համբարձյալ Դասերի նվիրվածությունը Ճշմարտությանը և Երկիր մոլորակի կենսահոսքերին Սպասավորելուն:

Եվ մեր այդ Սպասավորությունը մենք մտադիր ենք կյանքի կոչել... Մտադիր ենք գործունե կերպով կյանք տալ այն հիմնարար սկզբունքներին, որոնց հիման վրա պետք է կազմավորվի Ոսկեդարի հասարակությունը, որի գաղափարը ես շարունակաբար առաջ եմ մղում ձեր գիտակցության մեջ: Եվ այն բանին զուգընթաց, որ ավելի ու ավելի կհամակվեք Ոսկեդարի իդեալներով, այն կսկսի իջանել ֆիզիկական ոլորտ:

Ոսկեդարն անխուսափելի է ձեզ համար, որովհետև ներկայումս դա՛ է Աստծո Կամքը, և այդպիսին է Համբարձյալ Դասերի ցանկությունը...

Եվ, որքան էլ ձեզ տարօրինակ թվա, մենք համակված ենք լավատեսությամբ և կրկին Ոսկեդարի վերածնունդը կապում ենք Ռուսաստանի հետ: Եվ որքան ավելի մեծ դիմադրության

այժմ հանդիպեն մեր բոլոր սկզբունքներն ու գաղափարներն այդ երկրի բնակչության շրջանում, այնքան ավելի արագ ճոճանակը կթեքվի հակառակ կողմը: Եվ այն, ինչ անիրականանալի երազանք էր թվում, այժմ ամբողջովին ա՛յլ կողմով կերևա: Իսկ այն հատկանիշները, որոնք ներկայումս խանգարում են բարեփոխումներին, Աստված կշռի իր օգտին: Մի՛ կասկածեք, փոփոխություններն ու բարեփոխություններն անպայման տեղի կունենան: Աստղերը, տիեզերական հնարավորությունն ու բոլոր Երկնային Դասերն արդեն պատրաստ են Ոսկեդարի գալստյանը: Քիչ բան է մնացել՝ ընդամենը այն, թե անհրաժեշտ բարեփոխումներն ինչպես կընթանան ֆիզիկական ոլորտում: Եվ նույնիսկ այն դեպքում, եթե դրանք ներկայումս ապրող սերնդի կյանքում չընթանան մեր ակնկալած ձևով, ապա, միևնույնն է, այն տեղի կունենա ոչ հեռավոր ապագայում:

Համբարձյալ Դասերին մի՛ ստիպեք սպասել... Ավելի համարձակորե՛ն միացեք նոր գիտակցության, նոր մտածողության կազմավորման գործընթացին: Հատկապես այնժամ, երբ ձեր գիտակցությամբ կընդունեք, որ ամեն ինչ կարող է փոխվել, փոխվել՝ Աստծո Օրենքին համապատասխան, այդ փոփոխությունները տեղի կունենան:

Միրելինե՛րս, ձեզ վիթխարի աշխատանք է սպասվում ձեր գիտակցությունը փոխելու ուղղությամբ: Եվ գաղտնիքի կարգով ձեզ պետք է ասեմ, որ հիմնական աշխատանքը մենք արդեն իսկ կատարել ենք: Մենք փոփոխությունների համար անհաժեշտ Աստծո Էներգիայի բավարար քանակություն ենք փոխանցել ձեր աշխարհ: Եվ հիմա այդ Էներգիան փրփուր է վեր հանել այն ամբողջ հնից ու իր դարն ապրածից, որը ժամանակի ընթացքում կարբվի-կտարվի Էվոլյուցիոն փոփոխությունների քամիով:

Ուստի չարժե՛ չափազանց շատ թեւաթափ լինել, թե ամեն ինչ վատ է: Ձեր գիտակցությամբ ձգտեք աստվածային տպավորությունների: Ներքուստ մանկան հավատ պահպանեք հրաշքի նկատմամբ: Եվ հրաշքն անպայման տեղի կունենա...

Արժե, որ ներքուստ զարգացնեք ու աճեցնեք ձեզնից դուրս և ձեր ներսում տեղի ունեցող ամեն ինչի նշանակալիության զգացումը: Հատկապես այն պահին է դրամատիկ ապրումներ առաջացնում, երբ շրջադարձ է կատարվում հնից նորին: Մի՛ երկյուղեք սպասվող փոփոխություններից, այլ մտածեք բացվող վիթխարի հնարավորությունների մասին...

Ձեր միտքը զբաղեցրեք նրանով, որ նոր հնարավորությունները բոլորովին այլ կյանքի հեռակարներ կբացեն ձեր առջև, եթե վստահությամբ նայեք ապագային, եթե չքանան վախն ու անվստահությունը, եթե ժողովրդին բնորոշ դարավոր սովորույթներն ու կապվածությունները հալվեն ու ցնդեն ամպերի պես: Այդ դեպքում աստվածային հնարավորության արևը կլուսավորի այն հեռակարները, որոնք կբացվեն ձեր հայացքի դեմ:

Մի՛ սևեռեք ձեր ուշադրությունն առկա բացասական բաների վրա: Ձեր գիտակցությամբ հնարավոր համարեք, որ ամեն ինչ կարող է փոխվել, և այդ դեպքում անպայման ամեն ինչ կընթանա դեպի լավը:

Նորից եմ կրկնում. տիեզերական հնարավորությունը Ռուսաստանի, այնուհետև նաև ամբողջ մոլորակի համար դեռևս պահպանվում է: Ինքս էլ պատրաստ եմ մարմին առնելու և դեկավարելու Ոսկեդարի կառավարությունը, եթե Երկրի վրա պայմաններ ստեղծվեն իմ մարմնավորման համար:

Երկիր մոլորակի նուրբ ոլորտում ես ինքս եմ նախապատրաստում անհրաժեշտ նախադրյալները: Եվ ողջունում եմ յուրաքանչյուրին, ով իր գիտակցության բացասական վիճակները պատրաստ է փոխարինելու բարեփոխումներին սպասելու վիճակով:

Ամբողջ բանը, սիրելիներս, ձեր գիտակցության մեջ է: Եվ, աճեցնելով ճիշտ տրամադրվածություն, ճիշտ վարվելակերպեր, կարգավորելով հասարակության մեջ տիրող բարոյական նորմերը, հաշված տարիների ընթացքում կարելի է հասնել շատ մեծ փոփոխությունների:

Իհարկե, այն ուժերի դիմադրությունը, որոնք կառչած են մնում հինին, հսկայական է: Բայց հենց այդ հսկայական դիմադրության շնորհիվ մենք հնարավորություն ենք ստանում դրան հակադրելու հավասարաթեք բարեփոխումների ուժ: Վաղ թե ուշ մենք կճեղքենք զրահը, և բարեփոխումներն ու փոփոխությունները ամբարտակի պատնեշը խորտակած ջրերի նման կհեղեղեն ֆիզիկական ոլորտը:

Մենք հավատում ենք, որ ձեր շարքերում կգտնվեն բավարար թվով անհատներ, որոնք պատրաստ են ծառայելու առաջապահ ջոկատներում, և որոնք հարվածներն իրենց վրա կվերցնեն ու պատվով կդիմանան դրանց:

Իմ խոսքը վերաբերում է այն անխուսափելի գործընթացին, երբ նոր գիտակցությունը գալիս է փոխարինելու հինին: Սկզբում այն իր աճն է ստանում շատ քիչ թվով խիզախների մեջ, որոնք համարձակվում են հին մտածողությամբ հակադրել նորը: Հին վարվելակերպերին՝ նոր վարվելակերպեր: Եվ սկզբնական շրջանում մեր ներկայացուցիչները նմանվում են սպիտակ

ագռավների: Սակայն մենք կգորեղացնենք նրանց յուրաքանչյուր գործողությունը՝ խոսքն ու գործը: Չէ՞ որ յուրաքանչյուր ոք, ով վառվում է Երկիր մոլորակին Ոսկեդար բերելու գաղափարներով, ունակ է դառնում բոցավառելու իր կողքին եղածներից շատերի սրտերը:

Մեզ լուսակիրներ են պետք, որոնք պատրաստ են ինքնագոհողության, պատրաստ են գոհաբերելու այն ամենը, ինչ ունեն, որպեսզի առաջ քաշեն նոր գաղափարներ և այն նոր կենսակերպերը, որոնք անխուսափելիորեն կգան փոխարինելու հին կենսակերպերին:

Միացե՛ք Երկիր մոլորակի կյանքի վերափոխման գործին՝ հիմք ընդունելով աստվածային սկզբունքներն ու Աստվածառաջնորդությունը:

Չէ՞ որ շատ հեշտ է դա անելը, սիրելիներս...

Պարզապես ցանկություն դրսևորեք, և մենք կլրացնենք ձեր վճռականության պակասը:

Մի փոքր ձգտում դրսևորեք, և մենք կլրացնենք ձեր էներգիան ու գործությունը:

Դրսևորեք սեր և կարեկցանք այն մարդկանց նկատմամբ, որոնք դրանց կարիքն ունեն, և մենք ձեզ կտանք հասարակությունը վերափոխելու աստվածային հնարավորություն:

Կա՞ն ձեր մեջ խիզախներ ու համարձակներ...

Ձեր սրտերին հասա՞վ իմ այսօրվա ուղերձը...

Եվ եթե պատրաստ եք մեր առաջապահ ջոկատների կամավորները դառնալ, ապա նամակ գրեք ինձ, և ես անձամբ կգբաղվեմ ձեզ ուսուցանելու և անհրաժեշտ խրատները տալու գործով:

Հուսով եմ, որ այս գիշեր իմ Մենաստանի առջև մեծ հերթ կառաջացնեն նրանք, ովքեր վառվում են Երկիր մոլորակի կենսահոսքերին օգնելու ցանկությամբ...

Ես սպասում եմ ձեզ...

ԵՄ ԵՄ Սեն Տեղունը

Վեհապետ Լանտո

19 հունիսի, 2011 թ.

Ուսմունք զանազանման կարևորության մասին, թե Ուղու որ հատվածում եք գտնվում

ԵՄ ԵՄ Լանտոն. եկել եմ, որպեսզի տամ մեր Ուսմունքը:

Ես հազվադեպ եմ այցի գալիս, այնուամենայնիվ հույս ունեմ, որ դուք հիշում եք ինձ: Մեր հանդիպումներն ամեն անգամ կրում են իմ ճառագայթի, գիտելիքի և պայծառացման ճառագայթի ազդեցությունը: Այն ճառագայթի, որի ազդեցությամբ ավելի լավ է յուրացվում մեր աշխարհից ձեզ հասնող տեղեկատվությունը: Ուստի այսօր մենք պետք է լցնենք նրանց անոթները, ովքեր իրենց տաճարները նախապատրաստել են մեր տեղեկատվությունն ընկալելուն:

Մոտեցեք և լսե՛ք: Այս օրով ես կկամենայի ձեզ իրազեկ դարձնել հինավուրց մի Ուսմունքի, որը ոչ շատ վաղ ժամանակներում դասավանդվել է մեր արտաքին դպրոցներից մեկում: Դա Ուսմունք է այն Ուղու մասին, որով արտաքին աշխարհում ընթանում են մեր աշակերտները: Երբ մենք ձեզ կոչ ենք անում փոխելու ձեր գիտակցությունն ու կատարելու ներքին աշխատանք, ձեր շրջապատի պատրանքը ձգտում է ամեն ինչ անել, որպեսզի ձեզ պահի գիտակցության նախկին մակարդակի վրա, այն մակարդակի, որը ներկա պահին բնորոշ է մոլորակի բնակչության մեծամասնությանը: Սակայն դժվար չէ կռահել, որ զանգվածային գիտակցության մակարդակը չէ այն նշաձողը, որին պետք է ձգտեք հասնել: Ուստի և ամեն մի հոգևոր փնտրող վաղ թե ուշ բախվում է այն խնդրին, որ արտաքին հանգամանքներն ավելի ու ավելի են խոչընդոտում Ուղով իր առաջընթացը: Իսկ դա միշտ է տեղի ունենում, քանի որ այդպիսին է մատերիայի օրենքը: Մատերիան դիմադրում է և փորձում ձեզ պահել գիտակցության նախկին մակարդակի վրա: Ահա հենց այստեղ՝ Ուղու հենց այս կետում է, որ վրա է հասնում լրջագույն նախընտրանքի պահը: Կա՞մ շարունակում եք ձեր առաջխաղացումը, կա՞մ համակերպվում եք ձեր այն դիրքի հետ, որը զբաղեցնում եք պատրանքային աշխարհում և դրանով իսկ դուրս սահում Ուղուց: Ամեն մեկիդ առջև կկանգնի իր նախընտրանքը, բայց այդ նախընտրանքի էությունը միշտ նույնին է հանգում. կա՞մ դուք ընտրում եք պատրանքային աշխարհը՝ ֆիզիկական աշխարհում ձեզ շրջապատող պատրանքը, կա՞մ ընտրում եք Իրական, անանց Աշխարհը:

Կախված կարմայական հանգամանքներից՝ այդ հարցը տարբեր կերպ կարող է հառնել ձեր առջև: Օրինակ՝ մեկի համար որպես չհարթված հատկանիշ կարող է լինել «կարիերան»՝ հաջողակությունը, նյութական բարեկեցությունն ու անկախությունը: Այդ դեպքում նա կկանգնի հետևյալ երկրնտրանքի առջև՝ կա՞մ հրաժարվել եկամտաբեր աթոռից, կա՞մ փորձել համատեղել Աստծուն ու մամոնային ծառայելը: Իհարկե, երբ կանգնած եք լինում այդ հարցը լուծելու առջև,

որպես կանոն, ձեր գիտակցությունը չի ընկալում դա որպես նախընտրանքի հարց, և այն է՝ Ուղու շատ լուրջ նախընտրանքի: Ձեզ թվում է, թե ոչ մի սարսափելի բան չկա այն բանում, որ շարունակեք ծառայել արտաքին աշխարհին՝ զուգահեռաբար ընթանալով Ուղով: Եվ հենց ձեր այդ նախընտրանքն էլ այդ դեպքում ձեզ հանում է Ուղուց:

Այսօր ես դիմում եմ ոչ մեծ լսարանի՝ բաղկացած մեր այն աշակերտներից, որոնք վաղուց ընթանում են Ձեռնադրումների Ուղով: Ուստի, եթե դուք այս տեղեկատվությունն ստանաք ու կիրառեք Ուղու այն հատվածում, երբ դեռ նոր եք կանգնել Ուղու վրա, ապա սխալ վարված կլինեք:

Մարդկանց սովորաբար հատուկ է լինում իրենց հոգևոր նվաճումներն ուռնացնելը՝ հատկապես Ուղու սկզբնամասում: Եվ շատ շատերը թողնում են իրենց աշխատանքը, սկսում գրադվել հոգևոր գործառնություններով՝ հուսալով, որ Աստված ու Վեհապետները նյութապես կօժանդակեն ֆիզիկական աշխարհում իրենց գոյատևման գործում: Սակայն դա նույնպես սխալ նախընտրանք է Ուղու այն հատվածում, որում դուք գտնվում եք: Քանզի Ուղու ձեր հատվածը հենց այն է պահանջում, որ աշխարհում ձեր լինելու ընթացքում շարունակեք համատեղել երկու բան՝ կատարեք հասարակության հանդեպ ունեցած ձեր պարտավորություններն ու միաժամանակ աշխատեք ինքներդ ձեզ վրա, ձեր գիտակցության վրա՝ օգտվելով տարբեր հոգևոր գործիքներից:

Ուստի հնարավոր չէ նույն հանձնարարականները տալ տարբեր մարդկանց, որոնք գտնվում են Ուղու տարբեր հատվածներում:

Եվ դուք հավանաբար նկատել եք, որ մեր շատ խրատներում հնարավոր է գտնել հսկասական հանձնարարականներ: Դրա պատճառն այն է, որ մենք Ուսմունք ենք տալիս գիտակցության տարբեր մակարդակների համար: Ուստի ձեզ համար կարևոր է իմանալ, թե ուղու ո՞ր հատվածում եք դուք գտնվում, որպեսզի կա՛մ ընդունեք մեր հանձնարարականը, կա՛մ որոշակի ժամկետով հետաձգեք դրա ընդունումը:

Քանի որ մեր ուղերձներն ընթերցողներից շատերը գտնվում են Ուղու սկզբնամասում, ապա նրանց համար դեռևս չի հասել այն նախընտրանքի պահը, որի մասին ես խոսեցի մեր գրույցի սկզբում: Եվ միայն մեր այն աշակերտների առջև է ծառացած ում և ինչպես ծառայելու հարցը, որոնք մի կյանք չէ արդեն, ինչ ընթանում են Ձեռնադրումների Ուղով:

Ինչպես արդեն նշեցի, այդ հարցը տարբեր կերպ է դրվում մարդու առջև՝ կախված կարմայական հանգամանքներից: Օրինակ՝ մեկի համար այն կարող է լինել ամուսնանալ-չամուսնանալու հարց, մյուսի համար՝ երեխա ունենալ-չունենալու:

Մեր ուղերձները կարդացողների 99 տոկոսի համար նման մարդկային ցանկություններն իրենց մեջ ոչ մի վատ բան չեն պարունակում: Ընդհակառակը, նման առողջ ցանկություններ ունենալու համար ողջունվում են հասարակության բոլոր առողջ անդամները: Բայց ոչ այն դեպքում, եթե երկար ժամանակով արդեն ընթանում եք Ձեռնադրումների Ուղով: Ձեզ համար այդ պարզ ու հասարակ մարդկային ցանկություններն Ուղու այն փորձություններն են հենց, որոնք կա՛մ պետք է հաղթահարեք, կա՛մ հագուրդ տաք դրանց:

Չգիտեմ՝ կարողացա՞ք արդյոք ձեր գիտակցությանը հասցնել այսօրվա Ուսմունքը...

Ուղու բարձրադիր հատվածներում դուք պետք է հրաժարվեք բոլոր մարդկային ցանկություններից ու բոլոր կապվածություններից: Այս ճշմարտությունը մշտապես չի ըմբռնվել և նույնիսկ թշնամանք է առաջացրել հասարակության անդամների մեծ մասի մոտ: Ուստի նման հայտնությունները չեն դրվել մեծ լսարանների առջև: Չուտ այն նկատառումով, որ մոլորության մեջ չընկնեն այն անհատները, որոնք դեռևս չեն հասել իրենց կյանքի ճանապարհի այն խաչմերուկին, որտեղից այն կողմ պետք է իրենց կյանքը նվիրաբերեն Աստծո մեջ կատարելագործվելուն:

Այնուամենայնիվ ես համարձակվեցի այսօրվա իմ գրույցում շոշափել այս կարևոր թեման, որպեսզի իմ դատողություններից ձեզ համար կարողանաք չափորոշիչներ քաղել, որոնցով կառաջնորդվեք, երբ հարկ լինի որոշելու այն անձի մակարդակը, որը ներկայանում է որպես դեսպանորդ, մարգարե կամ հոգևոր ուսուցիչ:

Ձեզնից շատերը զարգացման ներկա փուլում չեն կարող շրջանցել հոգևոր Ուսուցչի անհրաժեշտությունը: Եվ քանի որ ենթագիտակցական մակարդակով այդ մասին գիտեք, ապա Ուսուցիչ գտնելու պահանջ եք ունենում: Պահանջարկն առաջարկ է ծնում, ուստի և տեսնում եք գուրությունների ու դեսպանորդների նման բազմազանություն:

Եթե հաստատ որոշել եք ընթանալ հոգևոր Ուղով, ապա առանց դժվարության կգտնեք այն Ուսուցչին, որը ձեզ ճիշտ պատկերացում կտա Ուղու մասին:

Եվ եթե ուսուցիչը ձեզ խրատներ տա այն մասին, թե ինչպես հարմարավետ դասավորեք ձեր կյանքը կամ ինչպես լուծեք ընտանիքում ու աշխատավայրում ծագած ֆինանսական խնդիրները, ապա մեծագույն հավանականությամբ կարելի է ասել, որ այդ ուսուցիչը հոգում է ձեր երկրային մասի բարեկեցության, այլ ոչ թե ձեր անմահ մասի խնդիրների մասին: Եվ նման ուսուցիչը

պահանջարկ ունի մարդկանց մոտ, քանի որ հասկանալի բաներ է ուսուցանում՝ ինչպե՞ս բարեկեցիկ դարձնել երկրային կյանքը:

Ուսուցչի մյուս տեսակը հասարակությունում պահանջարկ չունի: Քանզի մարդկանց մեծամասնության տեսակետից նա վերացական բաներ է ուսուցանում, որոնք որևէ կերպ կապված չեն առօրեական հոգսերի ու խնդիրների հետ: Նման Ուսուցիչն առաջին հերթին հոգ է տանում ձեր անմահ մասի համար: Եվ այն մարդկանց, որոնք ամբողջովին խորասուզված են մատերիական աշխարհի մեջ, այդ հոգածությունն անհասկանալի է լինում, կարող է առաջացնել զգուշավորություն և, վերջին հաշվով, վախ: Քանզի անհասկանալի բաները միշտ էլ վախեցրել են մարդկանց:

Այսօր ես փորձեցի ձեր գիտակցությանը հասցնել զանազանման անհրաժեշտության ու կարևորության մասին տեղեկատվությունը, որպեսզի կարողանաք պարզել, թե Ուղու որ հատվածում եք դուք գտնվում: Քանզի դեպի հոգևորն ուղղված ձեր մղումներով հանդերձ՝ պետք է հասկանաք հետևյալը. որպեսզի լրջորեն շարժվեք հոգևոր Ուղով, պետք է, որպես անհատականություն, մատերիական աշխարհում անցած լինեք զարգացման բոլոր փուլերը: Պետք է նախ անհրաժեշտ փորձառություն անցնեք Լինելիության բոլոր ոլորտներում, որից հետո պատրաստ կլինեք Ձեռնադրումների Ուղուն: Ո՛չ ավելի վաղ: Քանզի եթե երևակայեք, թե արդեն պատրաստ եք ոտք դնելու Ուղու վրա՝ ձեր ներքին որակներով իրականում դեռ շատ հեռու լինելով դրանից, ապա կեղծ առաջընթացը կարող է մեծապես վնասել ձեր հոգուն:

ԵՄ ԵՄ Լանտոն՝ մշտապես ձեր հոգիների նկատմամբ հոգածությամբ

Վեհապետ Գողթրի
20 հունիսի, 2011 թ.

Մենք լիահույս ենք, որ Ոգու մեր ցանած սերմերը ծիլեր կտան մարդկանց հոգիներում

ԵՄ ԵՄ Գողթրին՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Քանի որ այս օրը համարյա ամբողջապես համընկնում է ամառային արևադարձի հետ, ապա այդ հանգամանքը կնպաստի, որ առավել լիարժեք ձևով ընկալեք մեր Ուսմունքը, որը մենք ձգտում ենք ձեզ մատուցել հնարավորինս ամբողջական:

Եվ այսպես, քանի որ մեր Ուսմունքը մենք տալիս ենք Ռուսաստանում, ապա, իհարկե, ինքնին եզրակացություն է ծագում, որ դա ինչ-որ բանի համար պետք է և կապված է ինչ-որ բանի հետ:

Այո՛, սիրելիներս, մենք հետաքրքրություն ենք դրսևորում այդ երկրի նկատմամբ՝ կապված այն բանի հետ, որ սկսվող դարաշրջանում հատկապես այստեղ պետք է դասավորվեն վիթխարի հնարավորություններ՝ կյանքի կոչելու համար անհրաժեշտ հանգամանքները: Մենք այժմ այդ հնարավորությունների ծագմանն ենք սպասում: Թեև դեռևս այնքան էլ ակնհայտ չէ, որ այդ երկրում կարող է իրապես ինչ-որ բան փոխվել և փոխվել դեպի լավը, այնուամենայնիվ այդ երկրի համար իջեցվում է Աստծո էներգիայի վարկ:

Հենց այդ ակնկալվող հնարավորությունների հետ է կապված և այն, որ այժմ մեր այս ուղերձները ձեզ փոխանցելու հնարավորություն է բացված:

Մշտապես, երբ տիեզերական հնարավորությունը պետք է մտնի իր իրավասությունների մեջ, մենք մեր էներգիայով լիովին լցնում ենք նրանց անոթները, ովքեր այն կարող են ընդունել: Հաշվարկը պարզ է. երբ մարդկանց բավարար քանակություն ունակ է դառնում ընդունելու և յուրացնելու մեր էներգիաները, մենք կարող ենք այդ մարդկանց և նրանց գործունեության միջոցով ֆիզիկական ոլորտում իրագործել մեր պլանները:

Երբ դուք որոշում եք ինչ-որ բույս անեցնել ձեր հողամասում, ապա նախապես մշակում եք հողը. պարարտացնում եք, փխրեցնում, որ հետո ցանեք սերմերը կամ տնկիները: Այնուհետև խնամում եք ձեր բույսերը ընդհուպ մինչև դրանց բերք տալու ժամանակը:

Մենք նու՛յնպես այդպես ենք գործում: Սկզբում հող ենք նախապատրաստում այն մարդկանց հոգիներում, ովքեր ունակ են ընկալելու մեր Ուսմունքը, որից հետո նրանց սրտերում ցանում ենք Ոգու սերմերը: Այնուհետև սպասում ենք ծլարձակմանը՝ աստվածային գիտակցության աճի տեսքով:

Ամեն ինչ ենթակա է որոշակի տիեզերական բոլորաշրջանների, ուստի վերջին մի քանի տարիների ընթացքում մենք հույսով սպասում ենք, որ մեր ցանած սերմերը ծիլեր կտան, որից հետո կերևան նոր գիտակցության ու նոր մտածողության դալար շիվերը:

Անխոնջ է մեր հոգածությունը, առաջին հերթին՝ նրանց նկատմամբ, ովքեր ռուս դեսպանորդի միջոցով մեր Ուսմունքը տալու այս տարիների ընթացքում կարողացան հող նախապատրաստել իրենց էության խորքում, որպեսզի Ոգու սերմերի ծլարձակումը հաջող ընթանա:

Մենք միշտ նման ձևով ենք գործում: Տեսեք Ամերիկայի օրինակը՝ այն երկրի, որի հետ ես կապված եմ կարմայորեն և անմիջական մասնակցություն եմ ունեցել նրա հիմքերի հաստատման գործում*: Երկար ժամանակ՝ համարյա ամբողջ 20-րդ դարի ընթացքում, տարբեր դեսպանորդների միջոցով մենք Ամերիկայի հողը ռոտացեցինք Աստծո էներգիայով: Եվ ես ինքս էլ իմ վերջին մարմնավորման ընթացքում հավատով ու ճշտով այդ երկրում ծառայեցի Վեհապետներին: Թվում էր՝ ամեն ինչ լավ կլինի, բայց մեր հույսերը չարդարացան: Պատճառն այն էր, որ գոյատևման նյութական կողմը չափից շատ կարևորություն ունի Ամերիկայի հողում բնակվողների աչքին: Մենք այնտեղ ոգեղեն ծիլերի ան չունեցանք, այլ ունեցանք միայն նյութական բարեկեցության ան: Հատկապես հենց այդ պատճառով մենք մեր հայացքն ուղղեցինք դեպի երկրագնդի հակառակ կողմը: Բայց հենց որ աստվածային հնարավորությունը շողարձակեց Ռուսաստանում, այդ երկիրը բնակեցնող ազգերի ու ժողովուրդների ընդհանրական ենթագիտակցականը սկսեց մղվել ֆիզիկական ոլորտում բարիքներ ստանալու կողմը: Ոգեղինության անի համար արձակված Աստծո էներգիան կրկին տրորված ճանապարհով սկսեց հոսել դեպի նյութականության հուն:

Ուստի այսօր ես եկել եմ ուղերձ-նախագգուշացումով: Բարձրագույն ուժերը պատրաստ են այսուհետև ևս շարունակելու իրենց աշխատանքը Ռուսաստանում: Սակայն մենք պետք է վստահ լինենք, որ մեր էներգիան ու մեր ջանքերը կստանան ճիշտ ուղղվածություն: Այդ իսկ պատճառով մեզ համար թանկ է ամեն մեկի օրինակը, ով իր կյանքում ներդնում է Վեհապետների ուսուցանած աստվածային սկզբունքները:

Հոգևոր, բարոյական արժեքների նկատմամբ նախապատվությունը պետք է անկյունաքարային լինի: Հատկապես այն դեպքում, երբ մարդը պատրաստ է ինչ-որ մատերիական բան գոհելու՝ հանուն ֆիզիկական զգայարանների համար անմատչելի հոգևորի և բարոյականի, մենք դա ընկալում ենք որպես նշան, որ մեր Ուսմունքը հասկացվել է և կիրառվում է գործնականում:

Դուք այլևս չեք կարողանա կլանել ու կլանել տեղեկատվություն: Դուք պետք է ստացած Ուսմունքը կիրառեք գործնականում: Կիրառեք հարկ եղած ձևով, այն է՝ ոչ թե նյութական բարեկեցության, այլ հոգևոր անի ու առաջնության համար:

Դա շատ դժվար գործ է, քանի որ բավարար քանակի ճշմարիտ նմուշօրինակներ աշխարհում չկան: Հենց այդ պատճառով էլ ձեր ամեն մի մղումը թանկ է գնահատվում և կստանա անհրաժեշտ օժանդակություն:

Մենք հուսով ենք, որ Ոգու մեր ցանած սերմերը ծիլեր կտան մարդկանց հոգիներում: Եվ այդ դեպքում մարդկությունը կկարողանա կանգնել զարգացման այն ուղու վրա, որը նախապես կանխորոշված է իր համար: Յավոք, ներկայումս մարդկությունը շարժվում է մի ճանապարհով, որը տանում է դեպի Էվոյուցիոն փակուղի: Էվոյուցիայի հետագա փուլերը հոգևոր արժեքների գերապատվություն են ենթադրում մարդկանց կողմից: Հոգևոր արժեքների գերապատվությունը պետք է ելնի առաջին պլան:

Դրա համար մարդիկ իրենց գիտակցության վեկտորը պետք է ուղղեն դեպի անանց արժեքները: Յավոք, ներկայումս մարդկային գործունեության ոչ մի ոլորտ չի համապատասխանում այն պահանջներին, որոնք առաջադրվում են Էվոյուցիայի օրենքով:

Թեև կան նոր գիտակցության ծիլեր, բայց սխալ մղումների մոլախոտերը սքողում են են այդ ճիշտ նմուշօրինակները:

Արժեհամակարգի վերանայում, գիտակցության վերաուղղորդում անվերջանալի ցանկություններին ու գուտ կենդանական բնագոյով պայմանավորված ձգտումներին հազուրդ տալուց դեպի անանց արժեքներ. ահա թե ինչ է հարկավոր անել ներկա փուլում:

Եվ մարդկության զարգացման այս շրջադարձային կետն այնքան բեկումնային է, որ գրավել է համայն տիեզերքի շատ բանական էակների ուշադրությունը: Այն բանից թե որքան արագ ու վճռականորեն մարդկությունը կկարողանա հաղթահարել վարքի հին կարծրատիպերն ու ձգտել նոր՝ աստվածային կերպերին, կախված է այն, թե որքան անվտանգ կլինի մերձավոր ապագան և որքանով հնարավոր կլինի նվազագույնի հասցնել բնական համադետների ու տեխնածին աղետների թիվը:

Աշխարհը համակշռություն է պահպանում եզրագծի վրա: Եվ մարդկության Էվոյուցիայի անվտանգ հունին անցնելն ամբողջովին կախված է ձեր գիտակցության փոփոխությունից՝ այն բանից, թե որքանով ձեր գիտակցության մեջ անցողիկ արժեքներն իրենց տեղը կգիշեն անանց

արժեքներին: Չուտ նյութական պահանջներ բավարարելու ուղղվածությունը պետք է փոխարինվի ավելի բարձր նպատակներով:

Որպեսզի էվոյուցիան շարունակվի, հասարակությունը պետք է փոխվի: Ուստի և մենք ձեզ այցի ենք գալիս և ձեզ համար նորանոր բարեշնորհանքներ ենք խնդրում Մեծ Կենտրոնական Արևից: Եվ այդ բարեշնորհանքները, հիրավի, անսահման են:

Ուստի և մեր ջանքերն, անտարակույս, կհանգեցնեն դրական արդյունքի... Այս անգամ՝ երկրագնդի այս հատվածում:

Ես լիահույս եմ և ողջ հոգով հավատում եմ դրան:

ԵՄ ԵՄ Գողթրին

*Այստեղ Գողթրին նկատի ունի որպես Ջորջ Վաշինգտոն իր մարմնավորումը (1732-1799)

Տեր Շիվա

21 հունիսի, 2011 թ.

Միակ բանը, որով այժմ կարող է փրկվել մարդկությունը՝ վստահությունն է Բարձրագույն Իրականության գոյության նկատմամբ

ԵՄ ԵՄ Շիվան...

ԵՄ ԵՄ եկել...

Շիվան ԵՄ ԵՄ:

Այսօր մենք կխոսենք ամենակարևորի մասին... Այն մասին, թե ինչն է, որ հավերժ է ու անանց: Եվ Աստծո Իրականության հենց այդ կողմով պետք է պարուրվի ձեր գիտակցությունը:

Քանզի ձեր գոյության մնացած կողմերը ենթակա են փոփոխության և կփոփոխվեն: Եվ յուրաքանչյուրիդ առջև այն հարցը կհաննի, թե դեպի ու՞ր մղվեք. ո՞ր աշխարհին նախապատվություն տաք:

Դուք մնում եք անցողիկ, պատրանքային աշխարհում, քանի դեռ այդպես եք կամենում: Եվ Երկրի վրա ապրող շատ անհատներ նույնիսկ իրենց մտքով չեն էլ անցկացնում, որ գոյություն ունի մի այլ իրականություն՝ մի աշխարհ, որը մատչելի չէ իրենց զգայարանների համար:

Սակայն հենց այդ իրականությունն է կարևորն ու վճռորոշը, որքան էլ ձեզ համար դժվար լինի Աստծո ճշմարիտ Իրականությանը հավատ ընծայելը: Ուստի ամենակարևոր հարցը, որին պետք է լուծում տաք, այն է, թե արդեն իսկ հիմա ո՞ր իրականությանն եք կամենում նախապատվություն տալ: Շատերը կմտածեն, թե այդ հարցին պատասխան տալու ժամանակը դեռևս չի հասել, և որ իրենք դեռ բավական ժամանակ ունեն, որ քաղցր քուն մտնեն պատրանքի գրկում:

Ո՛չ, սիրելիներս: Արդեն իսկ եկել է այն ժամանակը, երբ պետք է կողմնորոշվեք ձեր գիտակցությամբ և ընտրություն կատարեք: Եվ հենց այդ վերացական թվացող ընտրությունից է կախված Երկիր մոլորակի հետագա էվոյուցիայի ողջ ընթացքը:

Մի պահ պատկերացրեք, որ աշխատակցում եք ինչ-որ ֆիրմայի: Եվ այդ ֆիրման ունի իր որոշակի պլաններն ու նպատակները: Երբ սկսում եք աշխատել այդ ֆիրմայում, ապա պետք է մասնակից դառնաք նրա պլանների ու նպատակների իրականացմանը: Այդ դեպքում ձեր գործունեությունն օգտավետ է դառնում ֆիրմայի խնդիրների ու նպատակների իրականացման գործում: Իսկ եթե սկսեք առաջնորդվել այլ նպատակներով, որոնք չեն համընկնում տվյալ ֆիրմայի ընդհանուր նպատակների հետ, ապա դրանով ձեզ կենթարկեք գործից ազատված լինելու վտանգին:

Աշխարհում ներկայիս ձեր դրությունը հար և նման է այդ իրավիճակին: Ես և մյուս Լույսի Էակները գալիս և կանոնավորապես հիշեցնում ենք ձեզ այն մասին, որ դուք ապրում եք մի տիեզերքում, որը հարատևում է իրեն բնորոշ Օրենքներին համապատասխան: Իսկ այս տիեզերքի հիմնական Օրենքը մերձավորներին Սպասավորելն է, Կարեկցանքը և Բարեգթությունը՝ հիմնված անվերապահ Սիրո և անշահախնդրության վրա:

Այդպիսին է դրվածքը՝ այն պայմանները, որոնք նախապես որոշվել են այն ժամանակ, երբ այս տիեզերքը սկսել է իր գոյության բոլորաշրջանը:

Դուք՝ որպես Էակներ, որոնք օժտված են ազատ կամքով, որոշեցիք ուղղումներ մտցնել այս տիեզերքի զարգացման ընդհանուր պլանի մեջ: Դուք չափազանց շատ կենտրոնացաք ձեր էգոյի և նրա ցանկություններն ու քմայքները բավարարելու վրա: Եվ որքան շատ ձեզ հաճույքներ պատճառեցիք, այնքան ավելի կտրվեցիք այս տիեզերքի Արարչի ընդհանուր Մտահղացումից: Եվ

ժամանակի ընթացքում այնքան խորացաք ձեր իսկ խելքով ստեղծված պատրանքի մեջ, որ նույնիսկ հավատներդ չի գալիս, որ կարող է լինել մի այլ իրականություն՝ հիմնված Միրո և անշահախնդրության Օրենքի վրա:

Դուք կարծում եք, թե ձեր հասարակության խնդիրները կապված են ահաբեկչության, հանցավորության, թմրանյութերի, կաշառակերության և նման այլ բաների հետ, որոնք հատուկ են ձեր հասարակությանը և բուռն քննարկումներ ու վեճեր են հարուցում:

Ո՛չ, սիրելիներս, կա միայն մեկ խնդիր, որը ծառացած է ձեր առջև ու հրատապ լուծում է պահանջում: Դա Բարձրագույն աշխարհից ձեր կտրվածության խնդիրն է և այն, որ չեք կամենում հաղթահարել ձեզ ու ողջ մարդկային հասարակությանը խանգարող այն խոչընդոտները, որոնք արգելում են ձեզ, որ վերադառնաք այս տիեզերքի Արարչի կողմից նախասահմանված էվոլյուցիոն զարգացման ուղուն:

Ձեզ թվում է, թե ես վերացական բաներից եմ խոսում: Քանզի չեք հավատում այն ամենին, ինչը չեք կարողանում զգալ և տեսնել սեփական աչքերով: Բայց ահա ես ասում եմ ձեզ, որ ներկայիս դրությունից հասարակությանը կարող է փրկել հատկապես հենց Հավատն այն բանի նկատմամբ, ինչը տեսանելի չէ: Եվ միակ բանը, որով հիմա կարող է փրկվել մարդկությունը, ձեր վստահությունն է Բարձրագույն Իրականության գոյության նկատմամբ և մղվելը դեպի այդ Իրականությունը: Հենց որ հավատաք և մղվեք, կկարողանաք հասարակության առջև ծառացած խնդիրները լուծել այդ Բարձրագույն Իրականության դիրքերից: Եվ երբ այդ մոտեցումը կիրառվի մարդու գործունեության բոլոր ոլորտներում, հասարակության մեջ ի հայտ կգան դրական փոփոխություններ:

Պետք է սկսել սեփական անձից՝ ձեր անձնական հարաբերություններից այն Աստծո հետ, որ ձեր ներսում է գտնվում: Երբ ձեր ներսի Աստծո հետ անձնական հարաբերություններ հաստատեք, ձեր կյանքը կսկսի փոխվել: Դա է այն նախընտրանքը, որը պետք է անհապաղ կատարեք: Ուժով հնարավոր չէ ձեզ ստիպել, որ դա անեք: Հնարավոր է միայն զգուշացնել, որ գործող Օրենքը ձեր աշխարհի հանգամանքների փոփոխման շնորհիվ վաղ թե ուշ ձեզ կստիպի, որ վերադառնաք Իրական Աշխարհ:

Սա շատ պարզ ճշմարտություն է: Այնքան հասարակ ճշմարտություն է, որ ձեր աշխարհում գոյություն ունեցող քաղաքական ոչ մի ուժ կամ կազմակերպություն այն լուրջ չի ընդունում: Հատկապես հենց այն, ինչն ամենակարճ ժամանակում կարող է փոխել մոլորակի իրավիճակը, մարդկանց կողմից լուրջ չի ընդունվում: Դեռ ավելին, այդ հասարակ ճշմարտությունն առաջացնում է վախ ու ագրեսիա: Դրա պատճառն այն ցավալի հանգամանքն է, որ մարդկությունը թաղված է տգիտության մեջ՝ անկախ ձեր տեխնոկրատական քաղաքակրթության ժամանակակից հայտնագործություններից:

Ահա ասում եմ ձեզ, որ տեխնոկրատական քաղաքակրթությունն այլևս չի կարող գոյատևել մոլորակի վրա: Մոլորակի պահուստային միջոցներն ու նրա նուրբ մարմինների վիճակն այլևս սպառել են ձեր փորձարարությանը դիմանալու հնարավորությունը: Իսկ, կորցնելով իր գոյության ֆիզիկական հարթակը, մարդկությունն իր էվոլյուցիան միլիոնավոր տարիներով հետ կշարժի:

Ահա սա է այն հիմնական պատճառը, որ Լուսիի Էակներն այցի են գալիս ձեզ և տալիս իրենց խրատները: Մենք դա անում ենք՝ ձեր հոգիների նկատմամբ Կարեկցանքից դրդված:

Իսկ այժմ ես հրաժեշտ եմ տալիս ձեզ:

ԵՄ ԵՄ Շխվան...

Հաութամա Բուդդա
22 հունիսի, 2011 թ.

Ես ձեզ կանչում եմ ճամփորդելու Իրական Աշխարհում

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան:

ԵՄ եկել եմ ամառային արևադարձի այս օրերից մեկում, երբ բնությունն ու աստղերի դասավորությունը նպաստում են մեր ուղերձների փոխանցմանը: Եվ, ինչպիսի արգելքների էլ հանդիպենք մարդկանց մտքերի մեջ, մենք նախ և առաջ դիմում ենք նրանց սրտերին՝ ձեր Էության այն մասին, որը հիշում է իր աստվածային ծագման մասին և ձգտում պատրանքի գերությունից դուրս գալ դեպի հավերժ գոյության լայնարձակություն:

Հնարավոր չէ այլևս, որ ընթանաք այն ուղով, որով վերջին տասնամյակների ընթացքում իր ազատ կամքով փորձում է ընթանալ մարդկությունը: Ֆիզիկական աշխարհում ձեր գոյությունը զնդանում փակված լինելու պես է: Եվ իրոք, դա հոգու զնդանն է: Եվ միակ կամքը, որ ունեք,

Աստծո Կամքին չենթարկվելն է: Իսկ ձեր կյանքերի ընթացքում օր օրի ձեր արածները ոչ այլ ինչ են, քան Աստծո Օրենքի ոտնահարում:

Աստված այնքան ողորմած է, գթասիրտ ու համբերատար, որ թույլ է տալիս ձեզ խախտել Օրենքը: Սակայն սահման է դրված՝ մի միջանցք, որի շրջանակներից դուք չեք կարող դուրս գալ: Ներկայումս դուք գտնվում եք աստվածային հնարավորությամբ թույլ տրված միջանցքի սահմանագծի վրա:

Ժամանակն է գիտակցելու այն փաստը, որ առանց Աստվածառաջնորդության, առանց Օրենքին հետևելու՝ մարդկության հետագա գոյատևումը հնարավոր չէ: Եվ յուրաքանչյուր անհատականություն ինքն է ընտրում, թե ինչին նախապատվություն տա: Եվ եթե պնդում է, համառորեն պնդում է, որ մնա պատրանքային աշխարհում, եթե այնպես է գամված շրջապատող պատրանքին իր բազմահազարամյա նախընտրանքներով, որ այլևս չի ուզում զարգանալ, ապա Աստված կբավարարի նրա ցանկությունը: Մանրամասների մեջ չխորանալով՝ միայն ասեն, որ նման մարդու հոգին կշարունակի իր էվոլյուցիան, բայց ավելի ստորակարգ աշխարհներում և ավելի ցածր էներգետիկական մակարդակներում:

Իսկ ձեզ, որ հոգնել եք պատրանքի գերության մեջ մնալուց, ես կոչ եմ անում այսուհետև ևս ընթանալու էվոլյուցիոն Ուղով՝ դեպի աստվածային գիտակցության լեռնագագաթները:

Ձեզ կվիճակվի դառնալ աստվածային գիտակցության փոխանցողներ դեպի թանձր աշխարհները: Եվ սկզբի համար ես ձեզ առաջարկում եմ, որ դառնաք աստվածային գիտակցության փոխանցիչ ձեր իսկ թանձր աշխարհի համար: Հեշտ է դա անելը: Պետք է ընտրություն կատարել Աստծո օգտին և օր օրի հավատարիմ մնալ այդ ընտրությանը: Հրաժարվել այն ցանկություններից, որոնք ձեզ կապում են պատրանքային աշխարհի հետ:

Ձեր ամեն մի ցանկությունն ու կապվածությունը, համաձայն Օրենքի, կարմա է ստեղծում, որն արտահայտվում է տառապանքով: Ուստի և ֆիզիկական աշխարհը տառապանքների աշխարհ է կոչվում:

Պատճառները հետևանքներ են ծնում: Հեռացրե՛ք պատճառները ձեր կյանքից, և դուք այլևս հետևանքներ չեք ստանա:

Օրենքը պետք է հարգվի: Եվ սանսարայի անփվից՝ մարմնավորումների հերթագայությունից, դուրս գալու միակ ճանապարհն այն է, որ դադարեք պատճառներ ծնել՝ թե՛ բարու, և թե՛ չարի: Դա նշանակում է սեփական ճակատագրի տերը լինել: Նշանակում է Աստված դառնալ՝ աստվածամարդ, և անցում կատարել էվոլյուցիոն զարգացման հաջորդ աստիճանի վրա:

Ներկայումս դա անելը հեշտ է: Չնայած պատրանքի կատաղի հակազդեցությանը՝ Երկինքը ձեզ բազմակի ուժեղացված օգնություն է ցուցաբերում, որ կանգնեք էվոլյուցիոն զարգացման Ուղու վրա: Այնժամ, երբ շրջապատի աշխարհն ավելի ու ավելի քիչ է վերահսկողության ենթարկվում և շատ բաներ ուղղակի անհեթեթության աստիճանի են հասնում՝ ավելի ու ավելի շատ մարդկանց աչքին, ի վերջո ականհայտ է դառնում, որ պետք է լինի մարդկության զարգացման մի այլ ուղի: Այդ Ուղին պատրաստ է, և այն ձեզ է սպասում: Այդ Ուղին գտնվում է ձեր էության ներսում:

Հաղթահարելով ինքներդ ձեզ՝ ձեր ցանկություններն ու անկատարությունները՝ դուք ազատվում եք պատրանքից և անցյալի կարմայից: Դրանով իսկ դուք հետադարձ ճանապարհով շարժվում եք դեպի այն աշխարհը, որտեղից ինչ-որ ժամանակ ձեր հոգիները դուրս են եկել և սկսել ճամփորդել պատրանքային աշխարհում:

Առաջին հերթին հենց ձեզ համար ենք մենք տալիս մեր ուղերձները: Եվ դեպի ձեզ է ուղղված իմ նվաճումների ամբողջ պաշարը: Ես պատրաստ եմ օգնություն ցուցաբերելու յուրաքանչյուրին, ով կանգնած է Ուղու սկզբնամասում, և պատրաստ եմ առաջնորդելու նրա հետագա առաջընթացը: Թիչ բան է պահանջվում՝ ձեր ազատ կամքի և մղվածության դրսևորումը:

Առանց կարգապահության և մղվածության հնարավոր չէ հաղթահարել Ուղու այն հատվածները, որոնք կապված են դեպի աստվածային գիտակցության գագաթ տանող վերելքի հետ:

Երբ մագլցում եք լեռները, դուք հաղթահարում եք ինքներդ ձեզ՝ դիմանում եք ոտքերի ու ոտնաթաթերի ցավերին: Դուք զգում եք ձեր բոլոր ուժերի անասելի լարում: Դեպի աստվածային գագաթ տանող վերելքի վրա նույնպես կզգաք ձեր բոլոր ուժերի լարում: Ձեզնից կպահանջվի, որ հաղթահարեք պատրանքի ձգողականության ուժը: Իսկ դրա համար կպահանջվի, որ ձեր ողջ կյանքը ենթարկեք մի նպատակի՝ ելքին պատրանքից դեպի գիտակցության նոր մակարդակ:

Լեռնագագաթ բարձրանալը դժվար է, բայց երբ կանգ եք առնում սարահարթի վրա, որպեսզի հանգստանաք, ձեր առջև բացվում է ներքևում փոխված դաշտավայրերի և մոտակա լեռների հոգեզմայլ տեսարանը: Դեպի աստվածային գիտակցության գագաթ տանող ձեր վերելքի ճանապարհին շատ կլինեն այնպիսի պահեր, երբ ներքին զմայլանք և ոգևորություն կզգաք:

Սակայն միշտ պետք է հիշեք ձեր ճամփորդության նպատակի մասին: Պետք է մշտապես հիշեք, որ անհրաժեշտ է առաջ ընթանալ: Այլապես ձեր զարգացումը կանգ կառնի:

Պատրանքի շղարշն աստիճանաբար կբարակի: Հարկ է, որ ամեն փուլում մերժեք պատրանքի գայթակղությունը և ձգտեք դեպի իրականություն: Հենց դա է ողջ բարդությունը: Եվ նրանք, ովքեր մղվում են ավելի նուրբ հաճույքներ վայելելու կողմը, ընկնում են աստեղային ոլորտի ցանցերի մեջ և երկար մարմնավորումներով մնում դրանցում:

Ուստի ձեր նկրտումները պետք է բարձր լինեն ցանկացած պատրանքային ոլորտից, աստեղային ոլորտի ցանկացած գայթակղիչ տեսարանից:

Ձեզ համար քարտեզ ու կողմնացույց կծառայեն ձեր սրտի թրթիռները և ձեր մղվածությունը դեպի անանց, ավելի բարձր աշխարհները:

Ուստի երբևէ կանգ մի՛ առեք ձեր Ուղու վրա: Ավելի համարձակ ձեր էությանը ընդառաջ ելեք փոփոխությունների ու բարեփոխումների քամիներին: Ոչնչից մի՛ վախեցեք: Ձեր բոլոր երկյուղները հոդս կցնդեն ձեր մարդկային գիտակցության աղջամուղջի հետ, երբ կկանգնեք ձեր Բարձրագույն Ես-ի արևի ներքո:

Ավելի համարձակ Ուղի դուրս եկեք: Ես ձեզ կանչում եմ ճամփորդելու Իրական Աշխարհում: Եվ դա՛ է այն գլխավոր խնդիրը, հանուն որի պատրանքային աշխարհում անցաք միլիոնավոր տարիներ տևած ձեր ուղին:

ԵՍ ԵՄ Հաուլթամա Բուդդան, եկա, որ ամրապնդեմ ձեր հավատն ու մղումը

Մայր Մարիամ
23 հունիսի, 2011 թ.

Մենք միասին կարող ենք գործել այն հրաշքը, որն սպասվում է Ռուսաստանին

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը:

Ես այս օրով եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս զրուցեմ ձեզ հետ, իմ սիրելիներ: Եկել եմ մի մտադրությամբ՝ ամրապնդել ձեր Սպասավորության գործը: Հատկապես հիմա է ժամանակը, որ այն քչերը, որոնք նվիրվածություն են պահպանում Աստծուն և ինձ՝ որպես Նրա Հավատարիմ Սպասուհու, կարող են ցուցադրել իրենց հավատն ու նվիրվածությունը:

Աստծո նոր ողորմածությամբ շարունակվեց Ռուսաստանին հատկացված հնարավորությամբ: Եվ ձեզ հայտնի է, որ ես հատուկ վերաբերմունք ունեմ այդ երկրի նկատմամբ: Այդ երկրին ես հովանավորում եմ արդեն շատ հարյուրամյակների ընթացքում: Եվ այժմ հասել են այն ժամանակները, երբ ձեր Սպասավորությամբ կարող եք անգնահատելի օգնություն ցույց տալ Համբարձյալ Դասերին:

Սիրելիներս, խնդրում եմ լրջորեն վերաբերվել իմ խոսքերին: Ես կամենում եմ, որ իմ խոսքերը մուտք գործեն ձեր սրտերը և այնտեղ մնան, քանի դեռ գտնվում եք մարմնավորման մեջ:

Եվ այսպես, սիրելիներս, ես եկել եմ խնդրանքով: Այն վերաբերում է ձեր աղոթքներին: Դրանք հենց այն օգնությունն են, որը կարող եք ներկա ժամանակում ցուցաբերել:

Շատ քիչ հավատարիմ ու անեղծ սրտեր կան այժմ մարմնավորված: Չափազանց ծանր է բեռը նրանց ուսերին: Սակայն ի մի բերեք ձեր ուժերը: Շատ քիչ մնած սպասելուն, սիրելիներս:

Մենք սպասում ենք Նոր Օրվա լուսաբացին Ռուսաստանի վրա, որից հետո էլ՝ մնացյալ ողջ աշխարհի վրա:

Պատմական ոչ վաղ անցյալում ես երևացել եմ ռուսաց երկրի շատ Սրբերի: Եվ ես նրանցից օգնություն եմ խնդրել այն պահերին, երբ սև ամպեր են կուտակվել ռուսաց հողի վրա: Օտարաբնակների արշավանքներից և ահեղ ժամանակներից առաջ:

Դուք հիշում եք միայն Սերգեյ Ռադոնեժսկուն և Սերաֆիմ Սարովսկուն: Բայց չեք հիշում հարյուրավոր այլ Սրբերի, որոնք իմ խնդրանքով աղոթում էին, որպեսզի այդ ծանր ժամանակներում իրենց աղոթքների էներգիան հատկացնեն իմ խնամարկությանը:

Ռուսաստանը չունի այլևս այն վերերկրյա պաշտպանությունը, որը պաղատվել էր այն փառավոր ժամանակներում, երբ ոգու մարտիկները հեռանում էին դեպի անապատներն ու անտառները, որպեսզի ինձ առաքեն իրենց աղոթքների էներգիան:

Աղոթքներով չպաշտպանված տարածք են ներխուժում ամեն տեսակի ավերիչ այլանդակություններ: Ահա դուք դրանք տեսնում եք ձեր շուրջը: Եվ չգիտեք, թե ինչպես շրջանցեք դրանք: Դուք խնամարկություն եք որոնում և խնդրում եք խնամարկություն: Բայց, սիրելիներս, Երկինքը ձեզ օգնություն կցուցաբերի, եթե երևա, որ ինքներդ նոյնպես ջանքեր եք գործադրում և ձեր ողջ ազատ ժամանակը հատկացնում եք աղոթքներին ու աղոթքային արթնությանը:

Վերադառնալուստանյան տարածքը պաշտպանության կարիք ունի: Եվ երկնային զորախմբերը չեն կարող ձեզ պաշտպանել, եթե ձեր կողմից չկա ազատ կամքի և մղման դրսևորում, եթե ձեր կողմից ոչ մի ջանք չի գործադրվում:

Մենք ձեր կանչով ենք գալիս, մենք արձագանքում ենք ձեր աղոթքներին: Բայց հիմա հասել է այն ժամանակը, երբ դուք պետք է արձագանքեք իմ կանչին: Պետք է դրսևորեք ձեր ազատ կամքն ու ջանասիրությունը:

Երկնային ողորմածության հոսքը չի կարող անվերջ լինել, եթե Երկինքը չի տեսնում ձեր ջանքերը:

Շատերը չգիտեն, թե ինչով զբաղվեն և ինչպես օգտակար լինեն այն ծանր իրավիճակում, որն այժմ առկա է մոլորակի վրա: Ահա ասում եմ ձեզ, որ ամենահասարակ օգնությունը ձեր աղոթքը կլինի: Աղոթքի համար չկա և չի կարող լինել որևէ սահմանափակում: Դեր չունի և այն կրոնական համավատամքը, որին պատկանում եք: Ազգությունը նույնպես դեր չի խաղում:

Եթե աղոթքն անկեղծ է, ապա նույնիսկ աղոթքի բառերը կարևոր չեն: Քանզի այդ դեպքում դուք ձեր գիտակցությունը վեր եք հանում Համբարձյալ Դասերի մակարդակին, և Լինելիության մեր ոլորտների միջև տեղի է ունենում էներգիաների անմիջական փոխանակություն: Եվ այդ ժամ անհնարինը կարող է հնարավոր դառնալ: Կարող է իրականանալ այն հրաշքը, որին միշտ սպասել է Ռուսիո ժողովուրդը:

Ձեր հողը պաշտպանության կարիք ունի: Ձեր մոլորակը պաշտպանության կարիք ունի: Ձեզնից ամեն ոք պաշտպանության կարիք ունի այն ուժերից, որոնք կատաղի մոլուցքի մեջ են ընկել, քանի որ իրենց ժամանակը սպառվելու վրա է: Եվ արդեն քիչ է մնում, որ վրա հասնեն ավելի ուրախ ժամանակներ:

Ինչպես վաղեմի ժամանակներում էին Սրբերն աղոթքներով ոռոգում իմ հողը և այն պաշտպանում հրոսակներից, այնպես էլ ձեր ժամանակներում է աղոթք պահանջվում:

Շատ քչերն են ձեզնից, որ ունակ են օրվա մեջ գոնե մեկ ժամ հատկացնելու աղոթքին: Մի ձեռքի մատների վրա կարող եմ հաշվել նրանց, ովքեր իրենց ամբողջ ազատ ժամանակը հատկացնում են աղոթքին և իմ պատկերի վրա մտասնեռվելուն:

Սիրելիներս, Աստված ձեզ տալիս է հնարավորություն: Եվ ձեզնից շատ քիչ բան է պահանջվում, որպեսզի ձեր ամենօրյա ջանքերով պատասխանեք իմ խնդրանքին:

Աղոթքի ուժն այն գենքն է, որը դուք կարող եք հակադրել ցանկացած բռնության, արյունահեղության և ցանկացած անարդարության, որը գոյություն ունի ձեր աշխարհում:

Ձեն կարող լինել հրաշքներ, որոնք ամրապնդված չեն Երկնքի օգնությամբ: Նաև ձե՛ր ժամանակներում կա հրաշք գործելու հնարավորություն: Եվ այդ հրաշքը դուք կարող եք նախապատրաստել ձեր սրտերի ջանքներով:

Եղեք անդորրի ու երանության մեջ: Կենտրոնացրեք ձեր աղոթքային ջանքերը նրանց համար, որոնք խոհեմ չեն և ծածկված են տգիտության քողով: Աղոթեք, որ լուսավորվեն ձեր կառավարիչների մտքերը:

Նույնիսկ ամենավերջին մեղսագործը կարող է մեղա գալ և բոլոր իր ունակություններն ու տաղանդները, որոնք առաջ ծախսում էր մեղքեր գործելու վրա, ուղղել Տիրոջը ծառայելուն:

Աղոթեք, որ լուսավորվեն այն մարդիկ, որոնցից կախված է կրթության, առողջապահության բնագավառներում որոշումներ կայացնելը: Աղոթեք այն հոգիների փրկության համար, որոնք, ամոթը կորցրած, թալանում են իմ երկրի անգին գանձերը:

Մեղքն ու տգիտությունը մի ակնթարթում կարող են փոխարինվել սրբությամբ ու պայծառացմամբ: Եվ ձայնն Աստծո կկանգնեցնի նրանց, ինչպես ժամանակին Պողոսին կանգնեցրեց, ասելով. «Դժվար է քեզ խթանին քացի տալ...»:

Հնարավոր չէ դեմ գնալ Աստծուն: Աստծո և նրա սպասավորների դեմ կատարած ձեր ամեն մի քայլը շատ ծանր կարմա է առաջացնում, որից ազատվել հնարավոր է միայն տառապանքով: Արյունով ու քրտինքով:

Արդեն բավականաչափ տառապանքներ են կրել Ռուսաստանի հողն ու նրա մարդիկ:

Առջևում լուսավորի հնարավորությունն է, որը կարող է և իր դրսևորումն ունենալ:

Ես խնդրում եմ, որ վիստությունը փոխարինեք հավատով ու մղվածությամբ:
Ես խնդրում եմ, որ ձեր սրտերում գտնեք անվերապահ Սիրո զգացում, որն այս ծանր ժամանակներում կարող է փրկության խարխիս դառնալ մոլորյալ շատ հոգիների համար:
Ես կոչ եմ անում, որ ձեր գիտակցությունը հասցնեք հնարավոր ամենաբարձր վիճակին:
Աղոթեք ձեր լեզվով ու ձեր բառերով:
Մղվեք դեպի ինձ, և ես կհայտնվեմ այնտեղ, որտեղ աղոթում եք:
Միասին մենք կարող ենք գործել այն հրաշքը, որը կանխորոշված է Ռուսաստանի համար:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը, այս օրով եղա ձեզ հետ

Գուան Ին
24 հունիսի, 2011 թ.

Ինքներդ ձեզ փրկելով գիտակցության ցածրորակ վիճակներից՝ դուք փրկում եք ողջ աշխարհը

ԵՍ ԵՄ Գուան Ինը:
Այսօր ես եկել եմ անսովոր ուղերձով, որը թելադրված է ժամանակով ու անհրաժեշտությամբ:
Տարեցտարի մոլորակի իրավիճակն ավելի ու ավելի անկանխատեսելի է դառնում: Եվ մենք չենք կարողանում կանխատեսումներ անել նույնիսկ կես տարվա կտրվածքով: Այդ պատճառով Կարմայական Վարչության նիստերը ներկայումս տեղի են ունենում ոչ թե տարին երկու անգամ, ինչպես առաջ էր, այլ տարեկան չորս անգամ: Թեև Կարմայական Վարչությանը նամակ հղելու թողության շնորհիվ առայժմ նույնն է մնացել՝ տարեկան երկու անգամ՝ ձմեռային և ամառային արևադարձների օրերին:

Ներկա Կարմայական Վարչության նիստին մենք քննարկեցինք մոլորակի իրավիճակի համակշռման հնարավորության հարցը: Վերջին մի քանի տարում հենց սա է եղել մեր անխոնջ հոգածության առարկան. ինչպե՞ս հասնել Երկրի մոլորակի համակշռված ու կայուն զարգացմանը:

Համադետները, ագրեսիայի դրսևորումը՝ ահաբեկչության, պատերազմների ու հեղափոխությունների տեսքով, այդ ամենը Երկրի մարդկանց անհավասարակշիռ վիճակի արդյունք են: Դա ձեզ հայտնի է, և բազմիցս ձեզ Ուսմունք է տրվել այն մասին, թե ինչպես խուսափեք մոլորակային արհավիրքներից:

Անմիջական և մշտական կապ գոյություն ունի մարդկանց գիտակցության վիճակի և մոլորակի վրա տեղի ունեցող զանազան դժբախտությունների միջև: Երբ մարդկանց գիտակցությունն անկում է ապրում, արհավիրքների քանակն ավելանում է: Դա համայն կյանքի փոխկապակցվածության մասնակի արտահայտությունն է: Ուստի ինչպես Համբարձյալ Դասերի, այնպիս էլ իմ Բարեգթության և Կարեկցանքի Աստվածուհու խնդիրն այն է, որ նվազագույնի հասցնենք այն անխուսափելի հետևանքները, որոնք մարդկանց անկատար գիտակցության ծնունդ են:

Վիճակագրությունից կարելի նկատել, որ տարեցտարի ավելանում է բնական աղետների՝ հրաբուխների, երկրաշարժերի, ինչպես նաև տեխնածին աղետների ու եղանակային անսովոր շեղումների թիվը: Եվ քանի որ ներկայումս տեղի ունեցող արհավիրքներն արդյունքն են գիտակցության այն մակարդակի, որն ունեն մարդկությունը մի քանի տարի առաջ, նույնիսկ տասնյակ տարիներ առաջ, ապա դժվար չէ կանխատեսել, որ ապագայում նույնպես կշարունակվի համադետների, արհավիրքների, այլազան դժբախտությունների ու հիվանդությունների աճը:

Այս փակուղային ու վիստեցուցիչ վիճակից դուրս գալու միակ ելքն այն է, որ արագորեն փոխվի մարմնավորված մարդկության գիտակցությունը: Պետք է տեղի ունենա գիտակցության արագ, որակյալ ու դրական թռիչք՝ մարդկության հիմնական զանգվածի գիտակցության անցում նոր մակարդակի վրա:

Դա շատ ցանկալի և լիովին հասանելի նպատակ է: Եվ եթե հաշվի առնենք մարդկության զարգացման բոլորաշրջանային օրենքը, ապա վաղ թե ուշ ճոճանակն իր թեքված վիճակից կսկսի շեղվել դեպի հակառակ կողմը: Մեր խնդիրն է նվազագույնի հասցնել Էվոլյուցիոն զարգացման ուղուց մարդկության չափից դուրս շատ շեղվելու հնարավոր հետևանքները:

Գործի է դրվել ողջ գինանոցը, որ ձեռքի տակ ունեն Համբարձյալ Դասերը: Եվ եթե մեր ջանքերին գումարվեին նաև ձեր ջանքերը, ապա մենք միասին անհամեմատ ավելի արագ ու հաջող կվերացնեինք մարդկության սխալ նախընտրանքների հետևանքները:

Ավելի համակշռված ու հաջող զարգացումը՝ Ոսկեդարի շերտուղու մեջ մտնելը, ապահովվում է դրական մղվածություն ունեցող անհատների գիտակցության վեկտորների շնորհիվ: Որքան մեծ

լինի մարդկային այնպիսի անհատների քանակը, որոնք ունակ են հավասարակշիռ վիճակի բերելու իրենք իրենց, շրջապատի մարդկանց ու շրջակա հանգամանքները, որքան զորեղ լինեն նրանց ջանքերն ու մղումները, այնքան ավելի արագ մարդկությունը մուտք կգործի համակշռված ու կայուն զարգացման միջանցքի մեջ:

Այս պարզ միտքն է, որ տարբեր եղանակներով փորձում ենք հասցնել այն մարդկանց, որոնք ունակ են ընկալելու մեր Ուսմունքը: Եղանակներից մեկն էլ այս ուղերձներն են: Կայուն զարգացման անցուղու մեջ մտնելու հույս միշտ կա, բայց նաև կա այն բանի հավանականությունը, որ իրավիճակը կդառնա անվերահսկելի: Ուստի ձեզ շատ քիչ ժամանակ է մնացել մտորումների համար:

Այն ամենը, ինչ դուք կարող եք իրապես անել, ձեր վերաբերմունքը փոխելն է շրջապատող ամեն ինչի նկատմամբ: Քանզի մարդկային գործունեության բոլոր բնագավառներում նկատելի է խիստ շեղում զարգացման աստվածային Ուղուց:

Կրթական համակարգը ոչ այնքան կրթություն է տալիս, որքան ապագա սերնդին զրկում է կրթվելու և Աստծո մեջ կատարելագործվելու ցանկությունից:

Առողջապահական համակարգը խլում է մարդկանցից առողջության վերջին նշույլները:

Ֆինանսական համակարգն ավելի շատ կապված է ոչ թե ստեղծարար աշխատանքային գործունեության արդյունքների հետ, այլ այն մարդկանց մենտալային ու զգացական վայրկյալներումնեղի հետ, որոնք տնօրինում են կապիտալն ու խաղում բորսաներում:

Քաղաքական համակարգն ամբողջովին կտրված է մարդկանց կարիքներից, հասարակության թույլ և ընչազուրկ անդամներին ծառայելուց և դրա փոխարեն ծառայում է առանձին մարդկանց անձնական հետաքրքրություններին ու շահերին:

Տեղեկատվության զանգվածային միջոցները տարածում են ինչ ասես, բացի տեղեկատվությունից (ասեկոսեներ, բանբասանքներ, աղմկահարույց ու քրեական պատմություններ):

Մարդկանց գործունեության բոլոր ոլորտները պետք է վերակառուցվեն ըստ Աստծո Օրենքների, այլապես նրանք ուղղակի չեն կարողանա գոյատևել:

Մարդկությունն ընդհուպ մոտեցել է իր զարգացման այն եզրագծին, որից անդին պարզորոշ երևում է չգոյության հեռանկարը:

Մեկը մյուսի հետևից մենք փորձեր ենք ձեռնարկում, որպեսզի փոխենք իրավիճակը: Եվ այս ուղերձների միջոցով մեր խրատատվությունը շարունակվում է Աստծո ողորմածության շնորհիվ: Մենք փրկարար օղակ ենք նետում նրանց, ովքեր դեռևս ունակ են դուրս լողալու պատրանքի ջրերից՝ ամուր կառչելով Երկնքի ընձեռած փաստորեն վերջին հնարավորությունից:

Մարդկության գիտակցության ներկայիս մակարդակում միայն քչերը կարող են շարունակել իրենց Էվոյուցիան առանց ֆիզիկական հարթակի: Մյուսների համար ֆիզիկական հարթակն անհրաժեշտություն է: Ուստի մեր հաշվարկն այն քչերի վրա է, որոնց մենք փորձում ենք օգնել:

Եթե նույնիսկ մեր ուղերձներն ընթերցելու արդյունքում գիտակցության նոր մակարդակի անցնի ընդամենը մի քանի մարդ, այնուամենայնիվ մենք կպնդենք, որ ստեղծվի մեր ուղերձները տալու հնարավորություն: Կրկին ու կրկին կգանք մեր խրատներով ու գրույցներով:

Իսկ այսօրվա իմ ուղերձի վերջում ես կուզենայի ցանկություն հայտնել, որ դուք գիտակցեք մոլորակի վիճակի համար ձեր պատասխանատվության չափը: Եվ եթե թեկուզ մի քանի վայրկյանով կարողանայիք հասու լինել իմ գիտակցության մակարդակին և իմ աչքերով նայեիք ձեր սեփական գործերին, ապա կարծում եմ, որ ձեր գիտակցությունը շատ արագ կփոխվեր:

Դուք նման եք այն մարդկանց, որոնք շարունակում են խնջույքը այն դեպքում, երբ Երկիր մոլորակը վերջին ջանքերով փորձում է ավերումից փրկել իր ֆիզիկական հարթակը:

Տոնական կյանքը մոտենում է ավարտին: Վրա է հասնում ինքներդ ձեզ վրա եռանդուն աշխատելու ժամանակը: Ինքներդ ձեզ փրկելով գիտակցության ցածրորակ վիճակներից՝ դուք կփրկեք ողջ աշխարհը: Քանզի աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է: Թիթեռի թևի թափահարումը դրդյուն է առաջացնում նուրբ աշխարհներում: Մտածեք, թե այդ դեպքում ինչպիսի՞ն կլինի ձեր արարքների, մտքերի ու զգացմունքների ազդեցությունը...

ԵՄ ԵՄ Գուան Ինը

Բարաջի
25 հունիսի, 2011 թ.

Հասել է ձեր գիտակցության մեջ հեղափոխություն իրականացնելու ժամանակը

ԵՍ ԵՄ Բարաջին:

Այսօր ես եկել եմ վճռական գրույց վարելու համար: Եվ իմ վճռականությունը կփոխանցվի ձեզնից նրանց, ովքեր համահունչ են փոփոխման իմ թրջոսանքի հետ:

Երբ ես մարմնավորման մեջ էի, ասում էի, որ հեղափոխություն է սպասվում: Իսկ հեղափոխության սկզբի համար նախատեսված բոլոր ժամկետներն արդեն վաղուց անցել են: Ուստի պատրաստվեք փոփոխությունների, որոնք, հիրավի, հեղափոխական կլինեն: Դրանք պետք է տեղի ունենան ձեր գիտակցության մեջ: Եվ հենց որ ձեր գիտակցության մեջ դրանք տեղի կունենան, ակնթարթորեն ձեր շուրջն ամեն ինչ հեղափոխության բոցերի ճարակ կդառնա: Քանզի ի չիք կդառնա այն ամենը, ինչը ներկայումս պարահանդես վարողի դերում է՝ ձեր սովորական շրջապատը, այն ամենը, ինչին սովոր եք, ձեր բոլոր սովորություններն ու կապվածությունները:

Եվ դա անխուսափելիորեն տեղի կունենա, քանզի համապատասխանում է ինչպես Աստծո Պլանին, այնպես էլ մարդկության զարգացման էվոյուցիոն ուղուն:

Երբ հորդորները չեն ազդում, և մարդը համառորեն չի ենթարկվում օրենքներին, ապա ուժ է կիրառվում: Երբ մարդկությունը չի ենթարկվում Աստծո Օրենքին, և ուշքի գալու համար նախատեսված բոլոր ժամկետներն սպառվում են, ապա հարկ է լինում դիմելու կողմնակի մեթոդների ազդեցությանը:

Այն, ինչին սովոր եք և ինչն ընկալվում է ձեր կողմից որպես ձեր գոյության անբաժան մաս, իրականում և մեծ մասամբ չի համապատասխանում այն ամենին, ինչ պետք է լինի էվոյուցիոն զարգացման ներկա փուլում: Ուստի և մարդկային գործունեության շատ բնագավառներ պետք է կրեն հիրավի հեղափոխական փոփոխություններ:

Դուք սովոր եք ձեր սննդի մեջ օգտագործել միս ու մսամթերքներ: Ստիպված կլինեք հրաժարվել դրանցից, քանի որ ֆիզիկական ոլորտի թրջոսանքները բարձրանում են, և, որպեսզի ձեր ֆիզիկական մարմինը համապատասխանի այդ թրջոսանքներին, հարկ կլինի, որ անցնեք բուսական ծագման ավելի բարձրաթրթիռ սննդի:

Դուք սովոր եք ալկոհոլային խմիչքներ օգտագործել: Ստիպված կլինեք ընդմիշտ հրաժեշտ տալ դրանց: Նույնը վերաբերում է ծխախոտին, թմրանյութերին:

Դուք սովոր եք սեռական էներգիայի անխնա օգտագործմանը: Ստիպված կլինեք անցնել կուսակրոնության: Քանզի այն բանից, թե որքանով կկարողանաք պահպանել ձեր սեռական կարողությունը, այնքան ավելի կենսունակ կլինի մարդկանց հաջորդ սերունդը: Նոր աշխարհում անկենսունակ ոչինչ չի կարող գոյատևել:

Դուք սովոր եք հաճույք ստանալ հեռուստադիտումից: Ստիպված կլինեք հրաժարվել և այդ սովորությունից: Քանզի ձեզնից կպահանջվի Բարձրագույն իրականության վրա կենտրոնանալու հատկություն ունենալ, իսկ այն ամենը, ինչով լցված են ձեր հեռուստա- և ռադիոթերթերը, ձեզ խանգարում են, որ կենտրոնանաք Բարձրագույն իրականության վրա:

Ինչպես տեսնում եք, սպասվող փոփոխություններն ի չիք կդարձնեն ձեր արդյունաբերության ամենաքիչը կեսը՝ զանգվածային զվարճությունները, թմրանյութերի արտադրությունը, անորակ սննդարտադրությունը:

Դրանք իրապես հեղափոխական փոփոխություններ կլինեն: Եվ այդ ամենը տեղի կունենա: Միայն այդ դեպքում մարդկությունը կկարողանա ապացուցել հետագա էվոյուցիոն ուղով ընթանալու իր ունակությունը:

Կշեռքի մի նժարին ձեր քաղաքակրթության «բարիքներն» են, որոնք վերը թվարկեցի, և որոնց մարդկությունը խիստ կապված է ու դեռևս չի ուզում դրանց հրաժեշտ տալ: Իսկ մյուս նժարին Երկիր մոլորակի գոյության հարցն է, Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի գոյության հարցը:

Դուք պետք է կողմնորոշվեք խիստ սեղմ պատմական ժամկետի ընթացքում: Որքան շատ ժամանակ կորցնեք խորհրդածությունների վրա, այնքան ավելի փոքր կլինի սահուն անցման հնարավորությունը, այնքան ավելի մեծ կլինի համամոլորակային աղետի հավանականությունը, որը վերջ կտա ևս մեկ ձախողված քաղաքակրթության:

Եվ այդ ամենի մեղավորը ձեր փոխվել չուզենալը կլինի՝ Աստծո Օրենքին հետևել չկամենալը:

Աստծո Օրենքը ենթադրում է, որ հասարակությունը պետք է կառուցված լինի բոլորովին այլ սկզբունքների վրա, որոնք մարդուն ունակ են դարձնում ավելի ու ավելի դրսևորելու իր աստվածային բնույթը: Ձեր քաղաքակրթությունը նպաստում է հակառակին՝ սատանայական բնույթի դրսևորմանը: Ուստի և հասունացել է ընտրության հարցը: Իսկ ընտրությունը վերջին

հաշվով վերաբերում է այն բանին, թե կամենում եք արդյոք ընթանալ էվոլյուցիոն ուղով, թե՞ ուզում եք լրացնել անցյալի ձախողված քաղաքակրթությունների թափոնակույտը:

Ձեզնից նրանց համար, ովքեր ներքուստ ճշմարտապես կրնա՞ն Աստվածայինը և կհետևեն դրան, անկախ այն բանից, որ ողջ շրջապատը կշարունակի ընթանալ Աստծուց և Աստվածառաջնորդությունից կտրված նախկին ուղով, ուղին բաց է: Եվ եթե նույնիսկ ինչ-որ բան պատահի մոլորակի հետ, ապա դուք մուտքի իրավունք կստանաք այլ աշխարհներ, որոնք կհամապատասխանեն ձեր թրթռանքին:

Ուստի հաշվի մեջ է յուրաքանչյուր ոք, ով ունակ կլինի ցուցադրելու հաջորդ էվոլյուցիոն աստիճանին անցնելու իր իրավունքը:

Ձեզ ասվել է այն վիթխարի հնարավորության մասին, որը բացվում է: Ձեզ ասվել է, որ ձեզ համար հիմա հեշտ է փոխվելը, քանի որ Երկինքը ձեզ օգնում և օժանդակում է: Եվ, հիրավի, օրհնյալ ժամանակներ են, որոնցում դուք հիմա ապրում եք: Ոմանք արագ քայլերով դեպի վեր են գնում: Ոմանք էլ նույնպիսի արագությամբ դեպի ցած են սահում:

Յուրաքանչյուրին կենդանի մնալու հնարավորություն է տրվում:

Յուրաքանչյուրին օգնության ձեռք է մեկնվում:

Սակայն ազատ կամքի Օրենքը թույլ չի տալիս միջամտել, եթե ձեր կողմից օգնության կանչ չի լսվում:

Եվ նույնիսկ այն դեպքում, երբ դրությունը լիովին անհուսալի է ձեր կուտակած կարմայի պատճառով, նաև այնժամ, երբ ամենավերջին պահին ամենահետին մեղսագործը Երկնքից օգնություն է խնդրում, մենք մերժելու իրավունք չունենք:

Ուստի օգնություն խնդրեք, և այն կստանաք:

Աղոթե՛ք փրկության համար, և փրկությունը կգա:

Հու՛յս կապեք Աստծո հետ, և Աստված հովանի կլինի ձեզ ու կառաջնորդի...

Ձեզնից միայն փոխվելու ցանկություն է պահանջվում:

Պահանջվում է ձեր ցանկությունը, որ ծառայեք Երկիր մոլորակի կենսահոսքերին:

Ձեռքից բաց մի՛ թողեք հնարավորությունը, որն այժմ բացված է...

Դժվար է գիտակից լինել այնժամ, երբ ամեն ինչ լավ է: Գիտակցումն անհամեմատ ավելի արագ է կայանում, երբ իրավիճակն այնքան ասեղնաձև է դառնում, որ նույնիսկ կույրն ու խուլն են սկսում հասկանալ, որ ինչ-որ բան այնպես չի ընթանում:

Ուստի և ես չեմ հոգնում գալուց և գոռալուց ձեր ականջին. «Ժամը հասել է...»:

Հասել է ժամը, որ հեղափոխություն իրականացվի ձեր գիտակցության մեջ...

ԵՄ ԵՄ Բարաջին

Վեհապետ Մորիա

26 հունիսի, 2011 թ.

Ընդունելու ունակություն

ԵՄ ԵՄ Մորիան:

Ահա կրկին եկել եմ մեր դեսպանորդի միջոցով...

Սիրելիներս, ես այսօր եկել եմ, որպեսզի ձեր սրտերում և մտքերում հաստատեն Աստվածառաջնորդության սկզբունքը: Քանզի ձեր կյանքերում չկա ավելի կարևոր բան, քան Աստծո Կամքին հետևելն ու Աստծո Կամքին ենթարկվելն է:

Եթե այս պարզ ճշմարտությունը պարուրում է մարդու էությունը, ապա նա ունակ է դառնում հրաշքներ գործելու Լինելիության բոլոր ոլորտներում:

Ձեզ սահմանափակում են մատերիայի շրջանակները և նրանում գործող օրենքները, քանի դեռ վեր չեք հանում ձեր գիտակցությունը և չեք անցնում աստվածային գիտակցության մակարդակին: Այդ մակարդակում վերանում են նյութական աշխարհի բոլոր սահմանափակումները, և դուք հայտնվում եք տիեզերական լայնարձակությունում:

Ես և մյուս Համբարձյալ Վեհապետները հենց այս պարզ ճշմարտությունն ենք ուզում հասցնել ձեր գիտակցությանը: Քանզի Աստծո Ճշմարտությանը հասու դառնալու այդ գործընթացն ամենակարևորն է: Հենց որ ձեր գիտակցությունն ընդունի, որ կա մի այլ աշխարհ, որ այն բաց է ձեր պրպտուն մտքի համար, անմիջապես ձեր կյանքում կծագեն այնպիսի հնարավորություններ, որոնք ձեզ կմղեն դեպի Նոր Աշխարհ, դեպի նոր փորձառություն:

Մի՛ երկյուղեք այն ամենից ինչ սպասվում է ձեզ: Քանզի այն, ինչ սպասվում է ձեզ, ավելի բերկրալի ու ոգևորիչ կլինի, քան այն, ինչով շրջապատված եք ֆիզիկական աշխարհում:

Հատկապես հենց ձեր էությամբ նոր կյանքի հեռանկարն ընդունելու ունակությունն է, որ հնարավոր կդարձնի, որ հաղթահարեք ներկայումս ձեզ հատուկ շատ անկատարություններ, սովորություններ ու կապվածություններ:

Ձեր նկրտումն ու Աստծո Իրականությանը համապատասխանող գիտակցության մակարդակին անցնելու կամեցողությունն ունակ են հրաշքներ գործելու ձեր կյանքում:

Ուստի խիզախե՛ք... Ուղին բա՛ց է... Եվ ձեզնից միայն մի բան է պահանջվում՝ անել առաջին քայլը և առանց կանգ առնելու առաջ մղվել:

Եվ այնժամ, երբ ձեր միտքը կխոչընդոտի ձեզ՝ մատնացույց անելով անհնարինությունն ու առկա հանգամանքները, իմացեք, որ բոլոր խոչընդոտներն ու հանգամանքներն Աստծո և Համբարձյալ Դասերի օգնությամբ հաղթահարելի են:

Ուստի Հավատ, Հավատ և Սեր. ահա թե ինչը պետք է մշտապես ձեզ հետ լինի: Ահա դրանցով պետք է ղեկավարվեն ձեր արարքներն ու գործողությունները ֆիզիկական ոլորտում:

Խելքն ու ինտելեկտն առաջնորդվում են մարդկային տրամաբանությամբ: Ըստ այդ տրամաբանության՝ շատ բաներ, որոնց մասին մենք խոսում ենք կամ ձեզ կանչում դրանց կողմը, տրամաբանական չեն: Սակայն մենք ձեզ կոչ ենք անում առաջնորդվելու աստվածային տրամաբանությամբ: Իսկ այդ տրամաբանության դիրքերից ֆիզիկական աշխարհում սահմանափակումներ և խոչընդոտներ գոյություն չունեն:

Դուք պատկերացնում եք, որ ջուրը քարի պես պինդ է, և քայլում եք ջրի վրայով:

Պատկերացնում եք, որ օդից թեթև եք, և թռչում եք:

Պատկերացնում եք, որ ելնում եք գիտակցության նոր մակարդակի վրա, և ահա հայտնվում եք այդ մակարդակի վրա:

Եթե Աստծո հետ եք, ամեն ինչ հաղթահարելի է ու հնարավոր...

Ուստի Հավատի, նկրտման և կայունության որակները ձեր զարգացման ներկա փուլում անփոխարինելի են ձեզ համար:

Եվ այն, ինչ չի կարող անել մարդը, կարող է անել Աստված: Նույնիսկ այն, ինչը մարդկային տրամաբանության տեսակետից անհնարին է թվում:

Ուղղակի թույլ տվեք, որ Աստված մուտք գործի ձեր գիտակցության մեջ: Մնացածը Նա Ինքը կանի:

Անհարմար է այս պարզ ճշմարտությունները կրկնելը: Սակայն սին կյանքն ու դրա հանգամանքները մշտապես ձեզնից ծածկում են այն հեռանկարները, որոնք մենք բացում ենք մեր ուղերձներով: Ուստի ամեն օր պետք է բառացիորեն ինքներդ ձեզ դուրս քաշեք զանգվածային գիտակցության ճահճից և մղվեք դեպի աստվածային գիտակցության գագաթները: Բաց թողնված մեկ օրը ձեզ հետ է գցում մի ամբողջ շաբաթով:

Միայն ինքներդ ձեզ հետ տարվող ամենօրյա շիստա՛նքը, միայն ամենօրյա ջանքե՛րը կարող են փոխել ձեզ ու ձեզ շրջապատող պատրանքը:

Մի՛ կարծեք, թե հնարավոր է ամեն ինչ փոխել արագորեն: Ձեզնից յուրաքանչյուրը գտնվում է Ուղու իր հատվածում: Մեկը չնչին ջանքերով կարող է հաղթահարել լեռնանցքը, որպեսզի դրանից այն կողմ տեսնի աստվածային գիտակցության գագաթը, իսկ մյուսը դրա համար պետք է անցնի անցյալի իր կարմայական սխալների ու մոլորությունների թավ անտառի միջով:

Ուստի ոչ մի բույս մի՛ թուլացեք: Մարմնավորման ընթացքում ամեն օր գործադրած ձեր ամեն ջանքը փոխարինում է հազարավոր տարիների այն ջանքերին, որոնք մարմնավորումների միջև ընկած ժամանակահատվածում գործադրում եք նուրբ աշխարհում:

Անտեղի մի՛ կորցրեք թանձր աշխարհում լինելու ձեր ոչ մի բույս: Հավատացե՛ք ինձ, հենց հիմա է այն ժամանակը, երբ ջանքեր գործադրելու ձեր ամեն մի օրը յոթմղոնանոց քայլերով ձեզ առաջ է տանում դեպի Նոր Օրվա ապագան:

Ուշադրություն մի՛ դարձրեք շրջապատի մարդկանց վրա: Նրանցից յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր ապագան: Եվ ոչ ոքի հնարավոր չէ ստիպել, որ մղվի դեպի Աստված: Իսկ մեր Ուսմունքի Լույսին ժամանակից շուտ առնչվելը պատրանքում գտնվողների համար նույն ազդեցությունը կարող է ունենալ, ինչպես լինում է, երբ մութ գնդանից դուր եկողի աչքերին օրվա պայծառ լույս է ընկնում:

Աչքերը նախ պետք է վարժվեն Լույսին: Հոգին պետք է խորապես կարոտի Իրական Աշխարհին, որպեսզի սկսի ընթանալ Ուղով: Այդ դեպքում պատրանքային աշխարհի ոչ մի հրապուրանք կամ խոչընդոտ ի վիճակի չի լինի կոտրելու այն մարդու ոգին, որը դուրս է պրծել թանձր աշխարհի գնդանից և մղվում է դեպի այն Լույսը, որն արդեն տեսնում է իր էության խորքում:

Ձեր մոլորակը նորացման նորանոր էներգիաներ է ընդունում, նոր թրթռանքների էներգիաները: Եվ այդ էներգիաները նորանոր հոգիների են արթնացնում, ստիպում նրանց քաղցր հորանջով արթնանալ ու վեր ձգվել Նոր Օրվա կանխագագացությամբ:

Նոր Օրվա և նոր գիտակցության գալուստը, ինչպես նաև դեպի նոր իրականություն անցում կատարելն անխուսափելի են նրանց համար, ովքեր ունակ են արթնանալու, ովքեր դեռ ապրում են:

Մարդու հոգին վաղ թե ուշ կստիպի նրան վեր կենալ տեղից և բռնել դեպի Իրական Աշխարհ տանող հետադարձ ճանապարհը:

Այսօր ես եկա, որպեսզի խթանեմ ձեզ իմ էներգիայով, ճիշտ ուղղություն տամ ձեր շարժմանը և ձեր էության մեջ ներարկեմ Նոր Օրվա հույսը...

ԵՄ ԵՄ Էլ Մոդիան